ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԳՈՐԾԵՐՈՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ARMENIAN NATIONAL COMMISSION FOR UNESCO





ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
«Gitutiun» Publishing House of NAS RA

9(47·925)
Հ-24
հշ
3823

ARMENIA AND CHRISTIAN ORIENT

YEREVAN – 2000

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔԸ

ԵՐԵՎԱՆ 2000

ԳՏՀ 9-41(479.25)
ԳՄԴ -63.3(2Հ)
Հ -2-47

Տպագրվում է «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» միջազգային գիտաժողովի կազմկոմիտեի հանձնարարությամբ

Պատ. խմբագիր՝ *Պ.Մ.Մուրադյան*

Հ -2-47 Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը. – Եր.: ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000. – 440 էջ:

Ժողովածուն ամփոփում է 1998 թ. սեպտեմբերին Երևանում կայացած «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» միջազգային գիտաժողովի նյութերը: Տարածաշրջանի մշակույթների ու մատենագրությունների հետ Հայոց եկեղեցու և հայկական քաղաքակրթության աղերսներն առավել ընդգրկուն արծարծելու համար ժողովածուն ներառվել որոշ լրացուցիչ հոդվածներ ու հրապարակումներ: Գիտական տարբեր դպրոցներ ներկայացնող հայագետների աշխատությունների սույն ամփոփումը խնդիրներ լուծելուց ոչ պակաս հայագիտական անելիքներ է ուրվագծում:

Գիրքը հասցեագրված է հայկական քաղաքակրթությամբ և Քրիստոնյա Արևելքով զբաղվող մասնագետներին:

ԳՄԴ 63.3(2Հ)

Հ 4400000000
703(02)-2000

ISBN 5-8080-0435-7

© ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2000

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պարույր Մուրադյան
Ներածական երկու խոսք 3

Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց
Հայրապետական ողջոյնի խոսք «Հայաստանը եւ Քրիստոնեայ Արեւելքը» գիտաժողովին 7

Մաղաքիա արք. Օրմանեան
Հայոց եկեղեցւոյ ազգային ընկարագիրը և ազդեցութիւնը 13

Սեն Արնչատյան
Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը 18

ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՏ

Հայկ Հակոբյան
Գրիգոր Լուսավորչի լեգենդի հիմնարևեյան և միջերկրածովյան զուգահեռները 27

Ջեյմս Ռասսել (Քեմբրիջ-Մասսաչուսեթս)
Առաքելական առասպելաբանութիւն 44

Էդուարդ Դանիելյան
Ս.Թադեոս առաքյալի ավանդության արտացոլումը հայ պատմագրության մեջ 49

Վալենտինա Կալցոլարի (Ժնև)
Սուրբ Թեկղի աւանդութիւնը Հայաստանի մէջ 55

Феликс Тер-Мартиросов
Преддверие христианства в Армении 62

Հակոբ Սիմոնյան
Քրիստոնեության տարածումը և հնագույն եկեղեցաշինությունը Հայաստանում (նախնական հարցադրում) 70

Սյուզ Քալանթարյան, Նյուրա Հակոբյան
Կաթողիկոսանիստ Դվինը 75

Ազատ Բոգոյան
«Կաթողիկոս Հայոց» տիտղոսի նոյռվի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո 80

Կառլեն Միրումյան
Քրիստոնեության ընդունումը Հայաստանում և ազգային-քաղաքական խնդրակարգը 86

Վրեժ Վարդանյան
Տրդատ Մեծի ավանդը Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետական համակարգի ձևավորման գործում 93

Պողոս Լեւոն Զէքիեան (Վենետիկ)
Ինքնուրոյն գիծեր ու եզակի մեծութիւններ հայ աստուածաբանական մտքի զարգացման մէջ 101

ՀԵՌՈՒ ԵՎ ՄՈՏԻԿ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Արմինե Ջոհրաբյան
Հայ Բագրատունիների դրամների բացակայության առեղծվածը 111

Արամ Քալանթարյան
Հայաստանը բյուզանդական դրամակշռային համակարգում V-VII դարերում (ըստ Դվինի նյութերի) 115

Գրիգոր Գրիգորյան
Սյունիքի թագավորությունը (X-XII դարեր) 120

Պավել Չոբանյան
Հռոմում գրված հայերեն ձեռագրերի հիշատակարանները (XIII դար) 127

Լավրենտի Հովհաննիսյան
Գրաբարի բառարաններում չգրանցված բառերի քննություն (ըստ V դարի մատենագրական տվյալների) 133

Սուսաննա Գրիգորյան
Բառերի այլաբանական արժեքը միջնադարյան մեկնություններում 138

Համլիկ Մկրտչյան
Հայերի և մելքիտների փոխհարաբերությունները միջնադարում 142

Antonio Carile (Bologna)
Greci, orientali e armeni nell'alto Adriatico 151

Maria Adélaide Lala Comneno (Rome)
L'Arménie et l'Asie Centrale 157

Michel van Esbroeck (München)
Le dialogue fictif entre le Pape Célestin et Barsauma 163

Jean Richard (Paris)
Les Arméniens dans les États Latins d'Orient: les lendemains de la Croisade 169

Zaza Alexidze (Tbilisi)
New Collection of Mount Sinai and its Importance for the History of Christian Caucasus 175

Viada Harutiounova-Fidanian (Moscow)
The Contact Zone – the Term and the Conception 181

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ

Համլետ Պետրոսյան
Խաչելության այգային ընկալումն ու պատկերագրությունը վաղմիջնադարյան Հայաստանում 187

Մուրադ Հասրաթյան
Խաչքարային արվեստի Ջուղայի ստեղծագործական դպրոցը 193

Վիգեն Ղազարյան
Միջավայրը կիլիկյան մանրանկարներում 197

Սվետա Արևշատյան
Հայ միջնադարյան «Չայնից» մեկնությունները և Մովսես Սյունեցու «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գրվածքը 203

Լիլիթ Երիցյակյան
Հայ հոգևոր մոնոդիաների և արևելյան դասական մեղեդիների փոխառնչությունները 211

Տիրան Մարության
Գառնիի բոլորակ տաճարի ճարտարապետության առանձնահատկությունները 217

Анатолий Высоцкий (Москва)
Два памятника раннесредневековой христианской архитектуры из Средней Азии 226

Армен Казарян
Архитектура Армении V-VI веков и раннехристианское зодчество Каппадокии, Киликии и Исаврии 239

Алексей Лидов (Москва)
Плиндзаханк – Ахтала, история монастыря, ктитор и датировка росписи 266

Ирина Дрампян
К вопросу о художественном языке живописи Тороса Рослина 279

Виген Казарян
Отражение символики "Толкований хоранов" в некоторых иллюстрированных рукописях 295

Николай Котанджян
Цугрутское Евангелие 303

Сейрануш Манукян
Евангелие N 96 Григора Татеваци из Эчмиадзинского собрания 324

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Քնարիկ Տեր-Դավթյան
Հիսուսի տղայության ավետարանների արտացոլքը հայ միջնադարյան գրականության մեջ 333

Գաբրիէլյա Ոլոմոճեան (Բոլոնիա)
Եղիշէի «Խրատ յաղագս միանձանց»-ը և նրա առնչութիւնները շրջակայ մշակոյթի հետ (մեկնաբանութեան փորձ) 341

Պավել Չորանյան
Անաստաս վարդապետ Հերապոլսեցու «Վասն վանորէից, որ ի սուրբ քաղաքն Յերուսաղէմ» երկը և նրա պատմական նշանակությունը 347

Համլետ Պետրոսյան
Անանիա Շիրակացու «Խրախճանականքը» և միջնադարյան խնջույքը 356

Հակոբ Քյոսեյան
Նորահայտ ձյխարներ Ստեփանոս Սյունեցու Մատենոսի Ավետարանի մեկնությունից 362

Майя Рапава (Тбилиси)
Полемические сочинения из "Догматикона" Арсена Икалтоели относительно обрядовой практики армянской церкви 370

Лусик Степанян
Агиографический памятник "История Рипсимянских святых" 374

Елена Джагацпанян
Завещание Саввы Освященного 392

Ольга Вартазарян
Легенда о Филоне-христианине в армянских источниках 396

Peter Halfter (Marbach – Neckar)
Die Beschreibung des Armenischen Königreiches Kilikien durch den Hildesheimer Domherren Wilbrand von Oldenburg 402

Giancarlo Bolognesi (Milan)
Sur l'ancienne traduction arménienne de la "Chronique" d'Eusèbe de Césarée 422

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԳՈՐԾԵՐՈՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ARMENIAN NATIONAL COMMISSION FOR UNESCO





ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
«Gitutiun» Publishing House of NAS RA

ARMENIA
AND
CHRISTIAN ORIENT

YEREVAN – 2000

ՀԱՅԱՍՏԱՆԸ
ԵՎ
ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔԸ

ԵՐԵՎԱՆ 2000

ԳՏՀ 9-41(479.25)
ԳՄԴ -63.3(2Հ)
Հ -2-47

Տպագրվում է «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» միջազգային գիտաժողովի կազմկոմիտեի հանձնարարությամբ

Պատ. խմբագիր՝ *Պ.Մ.Մուրադյան*

Հ -2-47 Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը. – Եր.: ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000. – 440 էջ:

Ժողովածուն ամփոփում է 1998 թ. սեպտեմբերին Երևանում կայացած «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» միջազգային գիտաժողովի նյութերը: Տարածաշրջանի մշակույթների ու մատենագրությունների հետ Հայոց եկեղեցու և հայկական քաղաքակրթության աղերսները առավել ընդգրկուն արծարծելու համար ժողովածու են ներառվել որոշ լրացուցիչ հոդվածներ ու հրապարակումներ: Գիտական տարբեր դպրոցներ ներկայացնող հայագետների աշխատությունների սույն ամփոփումը խնդիրներ լուծելուց ոչ պակաս հայագիտական անելիքներ է ուրվագծում:

Գիրքը հասցեագրված է հայկական քաղաքակրթությամբ և Քրիստոնյա Արևելքով զբաղվող մասնագետներին:

ԳՄԴ 63.3(2Հ)

Հ 4400000000
703(02)-2000

ISBN 5-8080-0435-7

© ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2000

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պարույր Մուրադյան
Ներածական երկու խոսք 3

Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց
Հայրապետական ողջույնի խոսք «Հայաստանը եւ Քրիստոնեայ Արեւելքը» գիտաժողովին 7

Մաղաքիա արք. Օրմանեան
Հայոց եկեղեցւոյ ազգային նկարագիրը և ազդեցութիւնը 13

Սեն Արևշատյան
Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը 18

ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՏ

Հայկ Հակոբյան
Գրիգոր Լուսավորչի լեգենդի հինարևելյան և միջերկրածովյան զուգահեռները 27

Ջեյմս Ռասել (Քեմբրիջ-Մասսաչուսեթս)
Առաքելական առասպելաբանութիւն 44

Էդուարդ Դանիելյան
Ս.Թադեոս առաքյալի ավանդության արտացոլումը հայ պատմագրության մեջ 49

Վարենտինա Կալցոլարի (Ժնեւ)
Սուրբ Թեկղի աւանդութիւնը Հայաստանի մէջ 55

Феликс Тер-Мартиросов
Преддверие христианства в Армении 62

Հակոբ Սիմոնյան
Քրիստոնեության տարածումը և հնագույն եկեղեցաշինությունը Հայաստանում (նախնական հարցադրում) 70

Արամ Քալանթարյան, Նյուրա Հակոբյան
Կաթողիկոսանիստ Դվինը 75

Ազատ Բոգոյան
«Կաթողիկոս Հայոց» տիտղոսի ճորմի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո 80

Կառլեն Միրումյան
Քրիստոնեության ընդունումը Հայաստանում և ազգային-քաղաքական խնդրակարգը 86

Վրեժ Վարդանյան
Տրդատ Մեծի ավանդը Հայ Առաքելական եկեղեցու ավիրապետական համակարգի ձևավորման գործում 93

Պօղոս Լեւոն Զէքիեան (Վենետիկ)
Ինքնուրոյն գիծեր ու եզակի մեծութիւններ հայ աստուածաբանական մտքի զարգացման մէջ 101

ՀԵՌՈՒ ԵՎ ՄՈՏԻԿ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Արմինե Զոհրաբյան
Հայ Բագրատունիների դրամների բացակայության առեղծվածը 111

Արամ Քալանթարյան
Հայաստանը բյուզանդական դրամակշռային համակարգում V-VII դարերում (ըստ Դվինի նյութերի) 115

Գրիգոր Գրիգորյան
Սյունիքի թագավորությունը (X-XII դարեր) 120

Պավել Չորանյան
Հռոմում գրված հայերեն ձեռագրերի հիշատակարանները (XIII դար) 127

Լավրենտի Հովհաննիսյան
Գրաբարի բառարաններում չգրանցված բառերի քննություն (ըստ V դարի մատենագրական տվյալների) 133

Սուսաննա Գրիգորյան
Բառերի այլաբանական արժեքը միջնադարյան մեկնություններում 138

Համլիկ Մկրտչյան
Հայերի և մելքիտների փոխհարաբերությունները միջնադարում 142

Antonio Carile (Bologna)
Greci, orientali e armeni nell'alto Adriatico 151

Maria Adélaide Lala Comneno (Rome)
L'Arménie et l'Asie Centrale 157

Michel van Esbroeck (München)
Le dialogue fictif entre le Pape Célestin et Barsauma 163

Jean Richard (Paris)
Les Arméniens dans les États Latins d'Orient: les lendemains de la Croisade 169

Zaza Alexidze (Tbilisi)
New Collection of Mount Sinai and its Importance for the History of Christian Caucasus 175

Vinda Harutiounova-Fidanian (Moscow)
The Contact Zone – the Term and the Conception 181

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ

Համլետ Պետրոսյան
Խաչելության այգային ընկալումն ու պատկերագրությունը վաղմիջնադարյան Հայաստանում 187

Մարտա Հասրաթյան
Խաչքարային արվեստի Ջուղայի ստեղծագործական դպրոցը 193

Վիգեն Ղազարյան
Միջավայրը կիլիկյան մանրանկարներում 197

Սմբատ Արևշատյան
Հայ միջնադարյան «Ձայնից» մեկնությունները և Մովսես Սյունեցու «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գրվածքը 203

Լիլիթ Երիցակյան
Հայ հոգևոր մոնողիաների և արևելյան դասական մեղեդիների փոխառնչությունները 211

Տիրան Մարության
Գառնիի բոլորակ տաճարի ճարտարապետության առանձնահատկությունները 217

Анатолий Высоцкий (Москва)
Два памятника раннесредневековой христианской архитектуры из Средней Азии 226

Армен Казарян
Архитектура Армении V-VI веков и раннехристианское зодчество Каппадокии, Киликии и Исаврии 239

Алексей Лидов (Москва)
Плиндзаханк – Ахтала, история монастыря, ктитор и датировка росписи 266

Ирина Дрампян
К вопросу о художественном языке живописи Тороса Рослина 279

Виген Казарян
Отражение символики "Толкований хоранов" в некоторых иллюстрированных рукописях 295

Николай Котанджян
Цугрутское Евангелие 303

Сейрануш Манукян
Евангелие N 96 Григора Татеваци из Эчмиадзинского собрания 324

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Քնարիկ Տեր-Դավթյան
Հիսուսի տղայության ավետարանների արտացոլքը հայ միջնադարյան գրականության մեջ 333

Գաբրիէլյա Ոլսոնեան (Բոլոնիա)
Եղիշէի «Խրատ յաղագս միանձանց»-ը և նրա առնչութիւնները շրջակայ մշակոյթի հետ (մեկնաբանութեան փորձ) 341

Պավել Չորանյան
Անաստաս վարդապետ Հերապոլսեցու «Վասն վանորէից, որ ի սուրբ քաղաքն Յերուսաղէմ» երկը և նրա պատմական նշանակությունը 347

Համլետ Պետրոսյան
Անանիա Շիրակացու «Խրախճանականքը» և միջնադարյան խնջույքը 356

Հակոբ Քյոսեյան
Նորահայտ նշխարներ Ստեփանոս Սյունեցու Մատթեոսի Ավետարանի մեկնությունից 362

Майя Рапава (Тбилиси)
Полемические сочинения из "Догматикона" Арсена Икалтоели относительно обрядовой практики армянской церкви 370


Лусик Степанян
Агиографический памятник "История Рипсимянских святых" 374

Елена Джагацпанян
Завещание Саввы Освященного 392

Ольга Вартазарян
Легенда о Филоне-христианине в армянских источниках 396

Peter Halfter (Marbach – Neckar)
Die Beschreibung des Armenischen Königreiches Kilikien durch den Hildesheimer Domherren Wilbrand von Oldenburg 402

Giancarlo Bolognesi (Milan)
Sur l'ancienne traduction arménienne de la "Chronique" d'Eusèbe de Césarée 422



Վարդան Բաղիշեցի, Գրիգոր Լուսավորիչ, Սեղբեստրոս Ա, Տրդատ Մեծ և Կոստանդին կայսր, Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց, Ժողովածու 1569 թ. (Մատենադարան, ձեռ. 1920):



Գրիգոր Լուսավորչի կենաց պատմությունը, XVIII դ.
(գեղանկար, գործվածք) (Վիեննայի Մխիթարյանների թանգարան):

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» գիտաժողովը ծրագրելիս կազմակերպիչները՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովը, Մ.Մաշտոցի անվ. Մատենադարանն ու Երևանի պետական համալսարանը, նպատակ ունեին գիտելիքների այսօրվա հանրագումարով վերարժարժել այն նշանակալի վերաբերումներն ու առնչությունները, որոնք հատկորոշ են Հայոց պատմությանը և մշակույթի անցյալին և պատկանում են նրանց ինքնատիպությունը պայմանավորող պարագաների կարգին: «Քրիստոնյա Արևելք» պատմամշակութային հասկացությունը աշխարհագրական առումով բավականաչափ ընդարձակ տարածք ու էթնիկապես տարազգի կազմավորումներ է ընդգրկում (հայեր, վրացիներ, ասորիներ, ղպտիներ, հաբեշներ): Այս իրողությունը հիմնականում արդյունք է նախնական եկեղեցու ունեցած ազգային կազմվածքի: Եվ քանի որ «Քրիստոնյա Արևելքը» ներկայացնող ժողովուրդներն ու երկրները տնականորեն կորցրել էին իրենց պետական-վարչական կառույցները, *Ազգային եկեղեցին* ձեռք էր բերել պաշտամունքային շրջանակները, զուտ դավանական խնդիրները լուծ ամենայնի գերազանցող դեր: Ուստի, Բերբրան Բարեյլի արդարացի դիտարկմամբ՝ *«Հայոց եկեղեցին կազմակերպության և պահպանության զարմանալի մի սկզբունք է ունեցել. իր եկեղեցում ապավինելով՝ Հայը ոչ միայն միավորության և կապակցության կենտրոն է գտել նրա մեջ, այլև՝ փրկության տապան, որի մեջ նա ազատեց ու պահեց այն, ինչ իրեն կապում էր անցյալի հետ՝ ավանդություններ ու սովորություններ, լեզու և գրականություն: Աներկբայորեն այդ չափերի սերտ կապակցության ու նույնության, աշխարհագրական տարրի հետ զգացումների համաձայնության շնորհիվ է, որ Հայ եկեղեցին պահել է ներողամտության և ազատամտության սկզբունքները»:*

Անցյալի հիշատակները ներկայացնելն ու էթնիկ առանձնահատկությունը պայմանավորելը շատ ավելին է նշանակում, քան դավանության շրջանակներն են ենթադրում, ուստի գիտնականը իրավունք ունի ասելու, թե *«Հայը, եթե հավատալուց էլ դադարի, հավատացյալ լինելուց չի դադարի: Նա ներքնապես զգում է, որ եթե իր եկեղեցու նշանակությունը վերացվի, իր բոլոր զգացումների շենքը կկործանվի»*: Խոսքը բոլորանվեր կրոնականության մասին չէ, այլ ազգային մնացած արժեքների շարքում եկեղեցին իբրև ազգային ինստիտուտ ճանաչելու, մանավանդ որ՝ ընդհանրական եկեղեցու տրոհման շրջանում հայոց վարդապետարաններն ստանձնեցին դավանակիցների պաշտպանության, դավանության եկակետային տարբերության հիմնավորման, մեկնաբանության ոչ դյուրին առաքելությունը: *«Ջ-Ը դարուց նյութերեն հիշատակարանների և բանաստեղծական արտադրությունների մասին խոսելով,* – ամփոփում է ակադ. Ն.Մառը, – *մենք չպիտի մոռանանք այս շրջանի ամենախոշոր և ամենավերացական կոթողը, Հայոց ազգի՝ իբրև անհատական ստեղծագործության ամենաերևելի վկան. խոսքս վերաբերում է առաքելի կրոնքի, սեփական դավանության ստեղծմանը: Մենք կանգ չենք առնի այն բոլոր ամենաանուրջ և մանրակրկիտ գիտելիքների և ճշգրտագույն եղանակների վրա, որոնք անհրաժեշտ և հարկավոր էին այս վեհագույն շինությունը և՛ կառուցանելու, և՛ հազար ու մեկ արտաքին և ներքին հարձակումներից*

պաշտպանելու համար. ի՞նչ իմաստասիրական խորաստւզումն Աստծո գաղափարի յուրովսանն ըմբռնման և այս նպատակին հասնելու համար նրբագույն մտածողություն, ի՞նչ ապշեցնող քաջագործություն՝ ամենակնճռոտ գաղափարների վերահաստմը և խոսքերի բախտավոր գյուտը...»:

Հանգամանքների բերումով, սակայն, «Հայոց ազգի՝ իբրև անհատական ստեղծագործության ամենաերևելի» այդ իրողությունը հայաստանյան ակադեմիական հայագիտության տեսադաշտից գրեթե դուրս մնաց, իսկ արտերկրի որոշ կենտրոններում հետազոտության կարոտ շատ հարցեր դավանական-քաղաքական նկատառումներով փոխարինվեցին: Թե մեկնաբանությունների ծայրահեղացումը դավանականությունը որքան կարող էին մթագնել ազգային պատմության այդ էջը, կարելի է հավաստիանալ Հայոց եկեղեցու կոթողային պատմության՝ Մաղաքիա արք. Օրմանյանի «Ազգապատում» և նրան ընդդիմախոսող Հ. Ս.Կոգյանի «Հայոց եկեղեցին» գրքերի եզրակացությունների համեմատությամբ: «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» գիտաժողովը նպատակ ուներ պատմամշակութային քննության ճանապարհով հարցը տեղափոխել գիտական հարթություն, այն դիտարկել հայոց մնայուն արժեքների շարքում, ամենևին չկտրելով մշակութաբանական և ընդհանուր քրիստոնեական ակունքներից:

«Քրիստոնյա Արևելք» հասկացությունը միայն «Մահմեդական Արևելք»-ից տարբերելու համար չէ. այն քրիստոնեության պատմության որոշակի շրջափուլ և նույնքան որոշակի աշխարհագրական միջավայր ու դավանական ուղղվածություն է ներկայացնում:

Դասական իմաստով «Արևմտյան» է Բյուզանդական (կայսերական) ուղղափառ (հունադավան) եկեղեցին: Կաթողիկե եկեղեցու առանձնացումից հետո «Արևմտյան» – «Արևելյան» որակումը ձեռք է բերում նոր, ինչ-որ չափով տեխնիկական իմաստ, ուստի բյուզանդա-սլավոնական ուղղափառությունը սկսում է դիտվել իբրև «Արևելյան եկեղեցի»: Եթե փորձենք թվարկել «Արևելյան քրիստոնեության» հիմնական առանձնահատկությունները, ապա կունենանք.

1. Բուն Արևելյան եկեղեցու շրջանակներում *ազգային* և *կրոնական* պատկանելությունները սերտաճել են. *ազգային* նկատվող եկեղեցուն չպատկանելը հավասարազոր է *այլազգի* լինելուն: Այդպիսին է հայերի, ասորիների, ղպտիների, հաբեշների էքումենականական ընկալումը:

2. Արևելյան եկեղեցին գերազանցապես հայեցողական է, աստվածաբանությունը՝ առավելաբար խորհողական, ուր դավանաբանությունն ու փիլիսոփայությունը լրացնում ու բացատրում են միմյանց: Արևմտյան եկեղեցու կարգապահական կեցվածքն ու օրենսգիտական աստվածաբանությունը խորթ չեն, բայց և բնորոշ չեն Արևելյան եկեղեցուն:

3. Տարբեր են Արևելյան և Արևմտյան եկեղեցիների նվիրապետական ընկալումները: Տիեզերական քահանայության գաղափարը Արևելյան եկեղեցին չի առնչում նվիրապետական առանձնությանը, որի բարձրագույն հեղինակությունը եպիսկոպոսական ժողովն է:

4. Հայաստանյայց եկեղեցին, երկրի քաղաքական-վարչական կացության թելադրանքով, նախապատվությունը տալիս է Ազգային եկեղեցական ժողովին, ժողովըրդյան ընտրյալների վճռական մասնակցությամբ:

5. Խորհուրդների կատարումը Արևելյան եկեղեցին լիարժեք ու ընդունելի է նկատում, պատարագողից բացի, ժողովրդյան մասնակցությամբ, ուստի մերժում է *թիվ* կամ *անձայն* պատարագի գաղափարը: Պատարագը միասնական գործողություն է և ոչ մտերմիկ հանգամանք:

6. Արևելյան եկեղեցու ընկալմամբ խորհուրդների վավերականությունն ապահով է, երբ պատարագը եկեղեցու մեջ է մատուցվում, քանի որ այն է Աստծո տունն ու Սուրբ հոգու անկաշկանդ գործելատեղին: Շնորհաց փոխանցումը կատարվում է միայն խորհուրդների կատարմամբ, սակայն կորսված չէ այն անձը, որ զրկված է շնորհներ ստանալու կարելիությունից:

7. Հացի և գինու մեջ Արևելյան եկեղեցին Քրիստոսի իրական, բայց անբացատրելի, ներկայություն է տեսնում, ուստի մերժում է գոյացափոխության գաղափարը: Վերջին պարագայի հետ է կապված մարդեղության և չարչարանաց մեկնաբանության տարբերությունը Արևելքի և Արևմուտքի եկեղեցիներում:

8. Արևելքի եկեղեցիները հետևորդ են 431 թ. Եփեսոսի ժողովում ընդունված Կյուրեղ Աղեքսանդրացու բանաձևումին՝ «*Մի բնութիւն բանին մարմնացելոյ*»: Ըստ այդմ՝ Քրիստոսի անձը անջատ էությունների միասնություն չէ, այլ *ներդաշնակ ամբողջություն:*

9. Եկեղեցու տիեզերականությունից հետո առաջ եկած վարդապետությունները (բավարան, ներողություն, պապական իշխանություն) ընդունելի չեն Արևելյան եկեղեցիների համար: Մասնակիորեն տարբեր է նաև Երկրորդ գալստյան մեկնաբանությունը:

10. Առավել շոշափելի են ծիսական կարգի տարբերությունները (Ծնունդ և Սկրտություն միասնաբար, Առաջավորաց տոն, Վարդավառ և Վերափոխում, Բաղարջ հաց և Անջուր գինի և այլն):

11. Արևելյան եկեղեցին փրկության հույսը չի կապում նվիրապետական պատկանելության հետ: Հանդուրժելի է համարում խորհուրդների կատարման զանազանությունը և վավերական է նկատում այն:

12. Հայաստանյայց եկեղեցին ձեռնպահ է իր ընկալումները թելադրելուց, ծիսական տարբերությունը զանազանում է դավանականից, ազգային նկարագիրն ու ոգին արգելք չի համարում *«միութիւն ի կարևորս»* նշանաբանով գործելու համար:

* * *

Գիտաժողովի կազմակերպիչները, առավել ևս գործող աշխատանքային խումբը (Գ.Սարգսյան, Պ.Մուրադյան, Ա.Բոզոյան, Գ.Էվոյան, Հ.Քոչարյան) ջանացին մասնակցության հրավիրել «Հայոց եկեղեցին և Քրիստոնյա Արևելքը» թեմայի շրջանակներում աշխատած և հրապարակումներ ունեցող գրեթե բոլոր մասնագետներին: Անշուշտ՝ եղան նաև վրիպումներ, բայց, ինչպես ցույց տվեցին աշխատանքային քննարկումները, զեկուցումներից շատերը նկատառելի նորույթներ էին բովանդակում և հարստացնում հայագիտության արծարծվող բնագավառը: Այդ իսկ պարագան թելադրեց չգոհանալ լույս տեսած «Զեկուցումների դրույթներով» և ձեռնամուխ լինել սույն ժողովածուի պատրաստմանը: Քանի որ գիտաժողովի ոչ բոլոր մասնակիցները կամեցան կամ հնարավորություն ունեցան հայտարարված ժամկետներում ու պարագաներով ներկայացնել իրենց կարդացած բնագրերը, հարմար նկատեցինք ժողովածուն լրացնել ակադ. Հովսեփ Օրբելու հիշատակին նվիրված «Հայոց միջնադարը» գիտաժողովի տակավին անտիպ նյութերով: (Այդ պատճառով է, որ մի քանի հեղինակ երկուական հրապարկումով են ներկայացված): Միաժամանակ՝ խմբագրի պահանջով որոշ նյութեր մերժվեցին, ինչպես նաև ժողովածու մուծվեցին «կողմնակի» հոդվածներ:

Չենք կասկածում, որ գիտաժողովն ու նրա նյութերն ամփոփող սույն «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» ժողովածուն մեծապես շահած կլինեին՝ եթե իրենց գլուխ ունենային նախապատրաստական աշխատանքի ողջ ծանրությունը կրած և իր

գիտական եզակի պատրաստությունը գործի դրած ակադ. Գագիկ Սարգսյանը: Նա վախճանվեց նիստերն սկսելուց ճիշտ քսան օր առաջ՝ 1998 թ. օգոստոսի 25-ին: Բուժման մեկնելուց առաջ Գագիկ Սարգսյանը գումարեց աշխատանքային վերջին խորհրդակցությունը, իսկ ավարտին մի քանի տեսական թելադրություններ կատարեց քննարկելիք խնդիրների կարևորության վերաբերյալ: Ավա՜ղ և ափսո՜ս, դա նրա գիտական «մնաս բարովն» էր, որին չէինք ուզում հավատալ:

Գիտաժողովի օրերին բազմիցս հիշատակվեց գիտությունն այս վաստակավորի երախտիքը, ուստի թող սույն ժողովածուն ևս ընկալվի իբրև Գագիկ Սարգսյանի հիշատակին ձոնված օրինաբանություն:

Ժողովածուի տպագրությունը գլուխ բերելու համար մեր հաճելի պարտքն ենք համարում շնորհակալություն հայտնել ՀՀԳԱԱ պրեզիդենտ ակադեմիկոս Ֆաղեյ Սարգսյանին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի գլխավոր քարտուղար տիկին Վարդուհի Ասատուրյանին:

Պարույր Մուրադյան

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՐԵՒԵԼՔԸ» ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ
(Երեւան, 15 սեպտեմբեր, 1998)

Սրտի խոր գոհունակութեամբ եւ սիրոյ ու գնահատանքի զգացումներով կ՚ողջունենք այս գիտաժողովը, «Հայաստանը եւ Քրիստոնեայ Արեւելքը» ընդհանուր բանաձեւին տակ, կազմակերպուած քրիստոնէութեան՝ որպէս պետական կրօն ճանաչման 1700-ամեակին առիթով Հայաստանի Հանրապետութեան կողմէ նշանակուած Յանձնաժողովի նախաձեռնութեամբ:

Մենք անձնապէս աւելի երջանիկ պիտի զգայինք, եթէ գիտաժողովի երեք օրերու ընթացքին կարենայինք նստիլ ձեր՝ մասնակցողներուդ կողքին եւ հետեւիլ ձեր ներկայացնելիք ուսումնասիրական զեկոյցներուն եւ անոնց հետեւող խօսակցութիւններուն, որոնց մէջէն վստահաբար նոր լոյսի շողեր պիտի իջնէին հայ ժողովուրդի անցնող աւելի քան 1700 տարիներու քրիստոնէական պատմութեան, գրականութեան, մշակոյթի եւ արուեստի առաւել եւս լուսաբանման եւ աւելի խոր ու հարազատ հասկացման համար: Դժբախտաբար մեր ընդհանրական եւ ծանրաբեռն պարտաւորութիւնները, նաեւ մեր առողջական վիճակը մեզի կը զրկեն այդ երջանկութիւնը: Չեզմէ ոմանք անձամբ ծանօթ անձինք են ինծ համար: Քաջ գիտեմ, որ ես անձնապէս գիտական որոնումներու, հետազօտութիւններու սէրը եւ փորձը միշտ ունեցած եմ, բայց եկեղեցական կեանքի մեր անմիջական պարտաւորութիւնները թոյլ չեն տուած անոնց ընթացք տալ միշտ, գործնականապէս եւ ամբողջականօրէն: Բայց սէրն ու ճաշակը հայոց պատմութեան, յատկապէս հայ քրիստոնէական մտածողութեան եւ մշակոյթի ու աստուածաբանական գրականութեան հանդէպ՝ երբեք չեն մարած իմ մէջ: Եւ այսօր, խոստովանիմ, որոշ նախանձով է, որ կը նայիմ գիտնականի իրենց կոչումը եւ առաքելութիւնը լիովին արժեցուցած եւ արժեցնող իմ եղբայրներուն եւ քոյրերուն, որոնք համալսարաններու ամպիոններէն, մատենադարաններու խորշերէն, մագաղաթներու մութ ու խոնաւ էջերէն, հողի ընդերքէն, աւերակներու կտորներէն, արխիւային փոշոտ անկիւններէն նոր յայտնաբերումներ կը կատարեն Հայոց Եկեղեցւոյ եւ ազգի պատմութեան եւ մշակոյթի ալյագան բնագաւառներուն մէջ: Ջերմօրէն պիտի փափաքէի, որ ձեր զեկոյցները մատչելի դառնային նաեւ ինծի, որպէսզի ես ալ կարենայի գէթ մասամբ վայելել բարիքները ձեր շարունակուող ուսումնասիրական պրպտումներուն:

Բացման այս նիստին իմ ցանկութիւնն է մէկ-երկու իրողութեանց անդրադառնալ այս գիտաժողովի դերին եւ անոր կապուած սպասումներու մասին:

Ա

Բարձրօրէն կը գնահատենք այն երեւոյթը, որ նշուած է գիտաժողովի ընդհանուր թեմայի բանաձեւումին իսկ մէջ՝ «Հայաստանը եւ Քրիստոնեայ Արեւելքը»: Հայ ժողովուրդի պատմութիւնը, անցեալ դարերու վրայ իրագործուած ինքնաարտայայտութեան ընթացքը, առհասարակ *մշակոյթ* բառով տարազուած, հարկ է որ դիտուի իր

ընդհանուր շրջագիծին մէջ, որ եղած է *Արեւելեան Քրիստոնէութիւնը* (Eastern Christian tradition): Ճիշդ է, որ այս օրերուն Արեւելք եւ Արեւմուտք հասկացողութիւնները չեն այն, ինչ որ եղած էին անցեալին: Այսօր Արեւելքը ներկայ է Արեւմուտքին մէջ, եւ՝ փոխադարձաբար: Բայց նոյնքան ճիշդ է, որ Հայց. Եկեղեցին եւ հայ մշակոյթը իրենց հոլովոյթը ապրած են առաւելաբար՝ ի հաղորդութեան ըլլալով Քրիստոնեայ Արեւելքին հետ, յատկապէս Յունական, Ասորական, Վրացական աւանդութեանց եւ ստեղծագործութեանց հետ: Աւելի ուշ շրջանին էր, Խաչակրաց շարժումէն ետք, որ Հայց. Եկեղեցին եւ հայ ժողովուրդը Արեւմուտքի հետ մշակեցին սերտ յարաբերութիւններ: Բայց իր կազմաւորման շրջանին (normative period), IV, V, VI դարերուն Քրիստոնեայ Հայաստանը ինքզինք իրագործեց՝ գլխաւորաբար *Արեւելեան Քրիստոնեայ մշակոյթի* հետ անմիջական եւ սերտ յարաբերութիւններ մշակելով: Այդ կնիքը մնաց անաղարտ Հայց. Եկեղեցւոյ ծէսին, դաւանաբանական ըմբռնումներուն, հոգեւոր կեանքին (spirituality), կանոնական դրութեան եւ արուեստի իրագործումներուն մէջ: Հայ քրիստոնէական մշակոյթը, հետեւաբար, չէ եղած արդիւնքը կղզիացեալ գոյավիճակի, այլ յարաբերական ուժեղ ընթացքի: Վկայ թարգմանական գործունեայն հայ գրականութեան մանաւանդ սկզբնական ձեւաւորման շրջանին եւ բոլոր վերածննդեան յատուկ շրջաններուն:

Բ

Պատմութիւնը, անցեալի ժառանգութիւնը, չէ կարելի ըմբռնել սոսկ կայական (static) մօտեցումով: Աւելի ուժական բան մը (dynamic) կայ պատմութեան մէջ, քան ինչ որ ընդհանրապէս կ'երեւակայուի: Պատմութիւնը, իմ պարզ հասկացողութեամբ, անցեալի դէմքերու եւ դէպքերու ցուցահանդէս մը չէ, պարզապէս բանգարանային պահպանութեան եւ անցեալի ճանաչման նուիրուած գործօնութիւն մը: Պատմութիւնը ճշմարտութեան որոնումն է, որ այժ ունի ներգործելու մեր ներկային վրայ: Աւետարանի խօսքը շատ աւելի խորունկ է, քան այն, ինչ որ երբեմն սովորական քարոզիչներ կը պատկերացնեն: Յիսուս ըսաւ. *«Եւ ծանիջիք զճշմարտութիւնն, եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ»* (Յովհ. Ը 32):

Ճշմարտութիւնը մարդ էակին եւ ազգին կուտայ իր ինքնութեան յստակ իմացումը: Մեզ կը փրկէ կամայական, պարագայական, մասնակի, մակերեսային ինքնըմբռնումներէ, որոնք յաճախ մեր կորստեան պատճառ կը դառնան: Ուրիշ տեղ ըսած եմ, որ պատմութիւնը, ճիշդ ըմբռնուած, ցոյց կուտայ աշխարհի մէջ մեր կտրած ճամբան, որուն մէջէն կրնանք աւելի յստակ ըմբռնել, տեսնել եւ գծել մեր գալիք ճանապարհորդութիւնը: Զգացական, ինքնասիրական, ինքնահպարտական եղանակներով չէ կարելի յստակ տեսնել մենք զմեզ: Պատմաբանին, բանասէրին, գիտնականին ակնոցը գոյն չի կրնար ունենալ: Պարզ, ջինջ եւ ուղիղ պէտք է ըլլայ անոր նայուածքը: Եզնիկ Կողբացին ըսած է աստուածաշունչին, գերբնական, անտեսանելի, իմանալի իրականութեանց համար, թէ «Յորժամ զաներեւութէն եւ զնորին զմշտնջենաւոր գործութիւնէն ճառիցէ ոք, բանզի մարմնաւոր լեալ է, պարտի զմիտս յստակել եւ զիմորիութիւնս սրբել, գյոյզս շարժմանց պարզել, զի յայն զոր առաջի եդ՝ հասանել կարասցէ: Նա եւ որ ընդ ճառագայթս արեգականն հայել կամիցի, պարտի զպղտորութիւն աչացն՝ զաղտն եւ զգիժն ի բաց պարզել, զի մի մթարքն՝ որ զբոբ շողայցեն, արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին»: Որքա՜ն ճշմարիտ են այս խօսքերը նաեւ աշխարհի եւ կեանքի տեսանելի երեւոյթներուն համար...

Մենք կը սպասենք, որ այս գիտաժողովը բերէ նոր լոյս ճշմարտութեան վրայ, ապրուած կեանքի եւ ստեղծագործութեանց վրայ, որպէսզի աւելի յստակ եւ վճիտ

տեսնենք 1700-ամեայ քրիստոնէական ժառանգութիւնը հայ ժողովուրդին:

Գ

Հայց. Եկեղեցին խոր ու բազմախաւ անցեալ ունի, բայց ինք անցեալի չէ վերածուած: Այսօր շնչող, ապրող, գործող կեանք է այն ողջ Հայութեան կեանքին մէջ ի Մայր Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի: Հայ ժողովուրդի կեանքը ներկայ ժամանակներուն, քրիստոնէական պատմութեան այս երկրորդ հազարամեակի վերջին տասնամեակին նոր ընթացքի մը, նոր ուղիի մը մէջ մտած է Հայաստանի Անկախ Հանրապետութեան հռչակումով: Եթէ անցեալին, շատ յաճախակիօրէն, հայ ժողովուրդի եւ Հայց. Եկեղեցւոյ կեանքի ընթացքը կ'իրագործուէր գլխաւորաբար օտար ոյժերու եւ պետութիւններու կամ կայսրութիւններու տիրապետողական ազդեցութեան տակ, այսօր այդ ընթացքը դարձած է ազատ արտայայտութիւնը հայ ժողովուրդի կամքին: Պարսկական մազդեզական կայսրութիւնը, կամ Բիւզանդական քրիստոնեայ կայսրութիւնը, կամ Օսմանեան Թուրքիան, կամ Ցարական Ռուսիան եւ կամ Սովետական Միութիւնը չեն այլեւս, որ իրենց կամքը կը պարտադրեն հայ ժողովուրդին: Այսօր Հայաստանը եւ Հայց. Եկեղեցին անմիջական պատասխանատուութիւնն են հայ ժողովուրդին: Բազում դարեր այդ անկախութիւնը կորսնցուցած, բայց զայն միշտ երազած ու անոր համար պայքարած հայ ժողովուրդի այսօրուան ապրող եւ պատասխանատուութիւն ստանձնել գիտցող զաւակներուն համար խանդավառութեան, ոգեւորութեան, ցնծութեան սկզբնական օրերը անցան: Եօթնամեայ կեանք ունեցող Հանրապետութիւն է արդէն մեր նոր Հանրապետութիւնը, որուն որդեգրած ազատութեան պայմաններուն տակ նոր պատասխանատուութեան է կոչուած Հայց. Առաքելական Ս.Եկեղեցին իր Մայր Աթոռով, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեամբ, Ս. Էջմիածնով եւ բոլոր միւս Նուիրապետական Աթոռներով:

1700-ամեակի բոլոր ձեռնարկները՝ ուխտագնացութիւններ, ցուցահանդէսներ, հրատարկութիւններ, գիտաժողովներ, վերաւորոգչական եւ նոր շինարարական աշխատանքներ, ունին մէկ նպատակ – կարելի եւ բարձրագոյն աստիճանի յստակութեամբ տեսնել, ըմբռնել մեր ինքնութիւնը որպէս քրիստոնեայ ազգ, անցեալի իրագործումներու, դրական ու ժխտական երեւոյթներու, յաջողութիւններու ու ձախողութիւններու անաչառ, համարձակ ճանաչմամբ, դէպի ապագայ երթալու մեր ճանապարհին վրայ: Մեր ինքնաճանաչման բիւրեղացումի ժամանակն է այս ժամանակը, մանաւանդ մեր Մայր Հայաստանի մէջ անցնող եօթանասուն տարիներու Խորհրդային բռնատիրական իշխանութեան թողած հետքերէն ձերբազատուելով եւ ազատ ու անկաշկանդ մտածողութեամբ մեր ինքնութիւնը պարզելով, ամրացնելով եւ զարգացնելով: Որովհետեւ այդ բռնական իշխանութիւնը ոչ թէ սոսկ քաղաքական եւ կամ վարչական բնագաւառներու մէջ գործեց իր աւերը, այլ նաեւ ու մանաւանդ հոգեւոր արժէքներու, ազգային առողջ ըմբռնումներու, մեր անցեալի արուեստակեալ, դիտումնաւորական (tendenciական) մեկնաբանութեան բնագաւառներուն մէջ:

Հետեւաբար, ճշմարտութեան որոնումը պէտք է դառնայ մեր իմացական, հոգեւոր, բարոյական, ազգային կեանքի մայրուղին: 1700-ամեակը սքանչելի, բացառիկ պահ մըն է թէ՛ եկեղեցիին, թէ՛ պետութեան եւ թէ՛ ժողովուրդին համար՝ վերագտնելու այդ մայրուղին եւ չտարածուելու համար խաբուսիկ արահետներու մէջ: Ահա թէ ի'նչ մտածումով եւ ի'նչ ակնկալութեամբ կը նայինք այս եւ նման այլ գիտաժողովներու, որոնք վստահաբար մեծ նպաստ պիտի բերեն այդ ինքնաճանաչման, «*Ծանիջ զՔեզ*»-ի շարունակական ընթացքին մէջ, մանաւանդ մեր պատմութեան այս բախտորոշ հանգրուանին:


Գ

Վերջին մտածում մը եւս կ՛ուզէի ձեզ հետ բաժնել այս բեմէն իջնելէ առաջ: Հայց. Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան կամ քրիստոնէութեան՝ որպէս ազգային կրօն պետական ճանաչման 1700-ամեակը զուտ հայկական շրջանակներու մէջ նշուելիք տարեդարձ մը չէ: Հայ ժողովուրդի 1700-ամեայ քրիստոնէական վկայութիւնը կը պատկանի համայն քրիստոնէական Եկեղեցւոյ եւ նաեւ մարդկութեան պատմութեան: Մասնաւորաբար միջեկեղեցական (էկիւմենական) այս դարաշրջանին՝ չէ կարելի կղզիանալ, մեկուսանալ եւ մեր ազգային շրջանակներու մէջ ինքնապարփակուիլ, «մենք մեր եղով տապկուիլ» ինչպէս կ՛ըսէ ժողովրդական առածը: Ահա թէ ինչո՛ւ բարձրագոյն աստիճանի գնահատանքով կ՛ողջունեմ այս գիտաժողովին մասնակցող եւ ազգութեամբ ոչ հայ մեր սիրելի գիտնականները, որոնք կուգան ուրիշ մշակութային ժառանգութիւններէ եւ իրենց կեանքին ու գործին մաս եւ բաժին են դարձուցած հայ ժողովուրդի, եկեղեցւոյ, լեզուի, մշակոյթի պատմութեան ուսումնասիրութիւնը: Մեր ցանկութիւնն է, որ Հայաստանէն դուրս, արտասահմանի այլ գիտական, ակադեմիական եւ գեղարուեստական կեդրոններու, համալսարաններու եւ գիտական հաստատութիւններու կողմէ եւս ձեռնարկուին նման կամ այլ կարգի մեծ ու փոքր գիտաժողովներ, որպէսզի մինչեւ 2001 թուականը մեր ժողովուրդը կարենայ վայելել ճշմարտութեան բարիքները ինք իր մասին եւ շարունակէ իր յառաջադիմական կեանքը ընդ հաղորդութեամբ այլ ազգերու, եկեղեցիներու եւ մշակոյթներու:

Յաջողութի՛ւն ձեզ, բարի երթ գիտաժողովին:

Գարեգին Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց

15 Սեպտեմբեր 1998
ի Ս.Էջմիածին



Գրիգոր Լուսաւորչի հարթաքանդակը Աղթամարի Ս.Խաչ եկեղեցու որմին:



Գրիգոր Լուսավորիչ (որմնանկար), XIV դ.,
Սիստրայի Ս.Աստվածածին եկեղեցի:



Գրիգոր Լուսավորիչը կնքում է Տրդատ Մեծին,
Մեռոնի սափոր (դրվագ), 1815 թ.(արծաթ)
(Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հավաքածու):



Գրիգոր Լուսավորիչ (խճանկար), IX դ.,
Կ.Պոլսի Ս.Սոֆիայի տաճար:

Մաղաքիա արք. Օրմանեան

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ*

Ամէն ուղեւորներ, որոնք Արեւելքը մօտէն ուսումնասիրած են, Հայուն նկարագիրին նկատմամբ ամենանպաստաւոր տեսութիւններ եւ դատողութիւններ յայտնած են: Ամէնքն ալ միաձայնութեամբ կը բարձրացնեն անոր մտաւորական կարողութիւնները եւ գործնական յաջողակութիւնները: Այս ձիրքերուն մէջէն, այն որ առանձնայատուկ կերպով Հայուն նկարագիրը կը բնորոշէ, արթուն եւ ձեռներէց հոգին է, որ իրեն օգնած է, քայքայիչ եւ կործանիչ պարագաներուն մէջէն, առանց վերջնական կորստեան անցնելու: Հայոց պատմութիւնը քանի մը նախադասութիւններու վերածել ուզած ատեննիս կրնանք ըսել, որ իր սկզբնաւորութիւնը մթին է, իր բարօրութիւնը վաղանցուկ եղած է, եւ մնացեալ միջոցը, որ է ըսել գրեթէ միշտ, երբեք դժնդակ եւ եղերական արկածներէ ազատ եղած չէ: Արշաւանքներ, աւարառութիւններ, կոտորածներ, հարստահարութիւններ՝ իրարու յաջորդելով Հայուն ամբողջ պատմութիւնը մարտիրոսական վկայաբանութեան դարձուցած են: Այս ամէն դժբախտութեանց մէջ Հայը երբեք յուսահատութեամբ ընկճուած չէ, եւ ոչ ալ իր վրայ իշխած է՝ արեւելեան քուլա-մորթութիւն կոչուած անհոգ անգործութիւնը: Նա ամէն ատեն գիտցած է յօգուտ գործածել որեւէ պարագայ կամ առիթ որ իրեն առջեւ ելած է. եւ այդ գործունէութեամբ օգտակար ըրած է իր թէ բնական եւ թէ ստացական ընդունակութիւնները:

Արգելքներու եւ խոչընդոտներու շարունակաբար հանած դժուարութիւնները անարգելով, Հայը գործունեայ դիրք եւ օգտակար դեր մը վարած է իր տիրապետողներուն մօտ, եւ գաղթականութեամբ գտնուած ցրիւ տեղերուն մէջ ալ՝ կենցաղական եւ վարչական բարձրագոյն աստիճաններու հասած է: Նա միօրինակ եւ հաւասար արդիւնաւորութեամբ կրցած է մշակել մարդկային գործունէութեան ամէն ճիւղերը: Թէ վաճառականութեանց եւ ճարտարութեանց, եւ թէ արուեստից ու գիտութեանց մէջ, միշտ գերազանց կերպով յաջողած է: Ամէնէն հին ժամանակներու մէջ ալ Ասիոյ առեւտուրը Հայոց ձեռքն էր, եւ անոնց ճարտարութեանց արդիւնքները կը փայլէին Տիւրոսի եւ Բաբելոնի վաճառներուն եւ հրապարակներուն վրայ: Միջին դարու մէջ ալ, Լեհաստանի եւ Մաճառաստանի ազատ Հայաքաղաքները՝ գործունէութեան եւ յառաջադիմութեան լաւագոյն կեդրոններն են եղած: Պէտք չէ ետս մոռնալ որ Անգլիացւոց Հնդկական ընկերութիւնը, պարզապէս շարունակութիւն մըն էր Հայերուն կազմած Հնդկական ընկերութեան, որ քաղաքական եւ զինուորական իշխանութիւններով ալ ճոխացած էր:

Նմանապէս վկայուած եւ պատմութեամբ հաստատուած կէտ մըն է, թէ ա'յն Հայ գաղթականները, որ զանազան առիթներու մէջ իրենց բնավայրէն հանուելով Թուրքիոյ եւ Ռուսիոյ զանազան կողմերը փոխադրուեցան, երկու կայսրութիւններուն ալ բարօրութեանց եւ բարւոքմանց զարկ տուողներն եղան: Օսմանեան կայսրութեան ամէնէն

* Քաղում ենք հեղինակի «Հայոց եկեղեցին» գրքից (երկրորդ տպագրություն), Կ.Պոլիս, 1912, էջ 187-195:

հոյակապ ճարտարապետական շինութիւնները, եւ պետութեան ու հանրութեան աւելի օգտակար հաստատութիւնները, ամէնն ալ Հայերու գործերն են: Յիշենք ելեւմտական մատակարարութիւնը, փողերահանոցի հաստատութիւնը, վառօդի գործարանը, բանակներուն պէտքի նիւթերը պատրաստելու հիմնարկութիւնները: Այն որ ընդհանուր եւ անորոշ կերպով *Արեւելեան արիեստ* կը կոչուի եւ նուրբ ու ճարտար ու հրապուրիչ գործուածներ կ'արտադրէ, գլխաւորապէս Հայ երեւակայութեան ու հանճարի, եւ Հայ բազուկներու ու մատերու կը պարտի այդ արդիւնքները:

Շատ են Հայեր, որոնք վարչական ու դիւանագիտական ու զինուորական պաշտօններու մէջ փայլեցան: Ռուսական բանակներու նշանաւորագոյն յաղթութիւնները Հայազգի զօրավարներու հրամանատարութեամբ կատարուեցան: Անձերկբայապէս՝ Հայազգի դիւանագէտի մըն ալ կը պարտի Եգիպտոս իր վերածնութիւնը: Ազատութեան գաղափարին Արեւելքի մէջ զարթնումը՝ Հայ ազգին յառաջընթացութեամբ սկսաւ, որ մեծամեծ զոհողութիւններու ալ ենթարկուեցաւ այդ նպատակին համար, եւ համարձակ կրնանք աւելցնել, թէ տակաւին ալ չէ դադարած իր զոհողութիւններով ազատութեան փրկանքը վճարել:

Շատ երկար մանրամասնութեանց պէտք էր մտնայինք, եթէ ուզէինք ամբողջաբար առաջ բերել Արեւելքին օգտին համար Հայ ազգին ըրած աշխատութիւնները եւ ձեռք ձգած արդիւնաւորութիւնները: Այն ատեն լաւ պիտի տեսնուի, թէ ի՞նչ տեսակ նախանձայուզութեամբ եւ ի՞նչ անկաշկանդ անձնուիրութեամբ ջանացած են Հայերը պինդ կառչիլ արդիւնաւորութեան գործերուն, թէեւ ուղղակի իրենց ազգին համար ալ չըլլան, բաւական սեպելով որ գերազանցապէս յայտնեն իրենց անդրդուելի հաւատարմութիւնը, եւ միւս կողմէն գոհունակութիւն ընծայեն գործունէութեան եւ յառաջադիմութեան իղձերուն, որք իրենց բնական զգացումներուն պահանջը կը կազմեն:

Դժբախտաբար այդ գեղեցիկ պատկերը կերպարանափոխ կ'ըլլայ, երբոր ուզենք Հայութիւնը նկատել իր հանրութեան հանդէպ եւ սկսինք հետազօտել ինչ որ Հայութիւնը ինքն իրեն համար ըրած է՝ իբր ազգ եւ իբր ժողովուրդ նկատուած ատենը: Ցաւալի տպատորութիւն եւ ողեւտալի սրտաբեկութիւն մը պիտի ըլլայ այդ ուսումնասիրութեան հետեւանքը: Անուրանալի է, որ իր տարաբախտ արկածներուն առաջին եւ գլխաւոր պատճառը՝ իր հայրենական երկրին եւ իր ազգային բնաշխարհին տեղագրական դիրքն է: Հայաստան, ծովային դուռերէ եւ գետային ճանապարհէ զրկուած, շրջակայ ժողովուրդներու արշաւանքներուն ենթակայ, եւ բուռն ոյժերու դէմ դնելու միջոցներէ զուրկ, միշտ հզօրագոյններուն բռնութեանց եւ տիրապետողներու հարստահարութեանց ներքեւ մնալու պարտաւորուեցաւ: Բայց այդ պարագաները բաւակա՞ն են արդեօք արդարացնել՝ իր ազգային ու հանրային տեսակէտէն ունեցած պակասութիւնները: Ապարդիւն աշխատանք մըն է, Հայութիւնը իբր ազգ առնուած ատեն անոր վրայ փնտռել այն փայլուն ձիրքերը եւ անզուգական արդիւնքները, որոնք տեսնուած են նոյն Հայութեան վրայ, իբր անհատ առնուած ատեն: Անհատին ունեցած անհամեմատ առաւելութիւնները՝ չեզոքացած եւ ջնջուած կ'երեւին, երբ հանրութեան գործերը զննուին: Վայրկենական կիրքեր, անխորհուրդ նախանձներ եւ փառամոլական ձգտումներ առաջ կ'անցնին անոր գործունէութեան առաջնորդելու: Հայոց պատմութեան մէջ բազմաթիւ եւ յաճախ են այս բանին օրինակները, իրաւցնէ ցաւալի եւ յուսահատական, որ վատթար իղձերու դուռ բացած եւ վնասակար երկպառակութեանց պատճառ են եղած, ասոնք ալ առաջնորդած են անվրէպ կործանմանց: Բաւական ըլլայ միտք բերել՝ Արշակունեաց վախճանը, Աւարայրի ճակատամարտը, եւ Անիի անկումը:

Հոգեկան բուռն ձգտումներ, եւ գործի մէջ յանդուգն ձեռնարկներ, որոնք քաջառաբար կրնան թերեւս յաջողութեան պատճառ ըլլալ, վնասակար կը դառնան եւ ամէն ընտիր ծրագիրներն ալ վիժել կու տան, երբոր խոհականութեան եւ խորագիտութեան օրէնքներուն չեն հպատակիր: Ահա Հայ ազգին գլուխը եկած արկածներուն մեծ մասին իսկական պատճառը: Ազգը պարտաւորուած է միշտ, իր վնասով անոր դժբախտ հետեւանքները կրել:

Հայ ազգին թշուառութիւններուն եւ վնասներուն պատճառ եղող պարագաները՝ յայտնի չէ թէ ո՞րը աւելի ազդեցութիւն ունեցած է դժպիհ հետեւանքներուն մէջ. իր տեղագրական դիրքին բնական պատճա՞ռը, թէ՞ իր անխորհուրդ ձգտումներուն բարոյական պատճառը: Բնական պատճառը աներկբայաբար իր վատ դերը ունեցած է այդ գործին մէջ, բայց ի՞նչ պէտք էր ընէին Հայերը բնական դժբախտ կացութեան հանդէպ: Պէտք չէ՞ր միթէ որ խոհականութեամբ ու չափաւորութեամբ իրենց կացութիւնը բարւոքէին եւ միութեամբ ու համերաշխութեամբ իրենց զօրութիւնը շատցնէին: Անշուշտ պարտաւոր էին: Պէտք էր որ ջանքերու գործակցութեամբ եւ ոյժերու միաւորութեամբ իրենց տրամադրելի ոյժերը ամրացնէին, իրենց կարողութիւնը զօրացնէին, եւ այս կերպով յաջողէին առջեւն առնել այն ամէն աղետալի արկածներուն, որոնք հազիւ թէ ուրիշ մէկ ազգի մը հանդիպած են, կամ ժողովուրդի մը բախտին վրայ ծանրացած են:

* * *

Մեր նիւթին սահմանին մէջ մնալու եւ մեր նպատակին հաւատարիմ ըլլալու համար, պէտք է որ իբր մեր խօսքից կնիք, ընդհանուր ակնարկ մը նետենք եւ բացատրենք թէ Հայ Եկեղեցին ինչ ազդեցութիւն ունեցած է Հայ ազգին բախտին վրայ: Մեր օրերը նորածեւութեան պահանջ մը դարձած է *ի ճահ* կամ *յանճահ*, նախ եկեղեցւոյ պաշտօնեաներուն դէմ յարձակիլ, եւ պաշտօնեաներէն հաստատութեան բարձրանալով, եկեղեցւոյ դէմ մաքառիլ: Բայց եկեղեցին անարգողներ անգիտակ կ'ուզեն ձեւանալ, որ ինչ կենցաղական եւ ընկերական առաւելութիւններ որ կան, եւ որոնցմով ներկայ դարը կը պարծենայ, ամէնքն ալ քրիստոնէական հանճարին արդիւնքն են. թէ ազատութեան սկզբունքները՝ առաջին անգամ քրիստոնէութիւնը հռչակեց. թէ աշխարհիս մէջ տեղի ունեցած ամէն բարւոքումներ եւ զարգացումներ իրենց սկիզբը քրիստոնէութենէն ստացան. եւ թէ անոր մէջ արմատանալով զօրացան: Այդ ճշմարտութիւնները, որ անուրանալի են ընդհանուր քրիստոնէութեան նկատմամբ, յայտնի եւ հաստատուն կերպով ճշմարտուած են մասնաւորապէս Հայ քրիստոնէութեան՝ կամ որ նոյն է Հայ Եկեղեցւոյ վրայ ալ:

Ոմանք երեւակայեցին Հայաստանի անկումը՝ անոր քրիստոնէութիւն ընդունելուն վերագրել, եւ ժամանակակցական պարագայ մը յառաջ կը բերեն՝ իբր փաստ: Բայց կը մոռնան թէ Հայոց քրիստոնէութեան եւ թագաւորութեան վերջանալուն մէջտեղ՝ ամբողջ մէկուկէս դար միջոց մը անցած է, որ ժամանակակից եղած ըլլալու փաստը կը ջնջէ: Միւս կողմէն ամէնէն թեթեւ պատմական զննութիւնն ալ բաւական է ցուցնելու, որ Հայոց քաղաքական անկման նախասկիզբները չորրորդ դարէն ալ առաջ են, եւ իրենց ծագումը կ'առնեն Հռոմայեցւոց եւ Պարթեւաց մէջ մղուած պատերազմներէն: Այս է պատմական ստուգութիւնը: Հետեւաբար պէտք է ընդունիլ, թէ Հայաստանի քրիստոնէութիւն ընդունիլը, ոչ միայն անոր անկման պատճառ չեղաւ, այլ ընդհակառակն այդ վտանգը մէկուկէս դար յետաձգելու արդիւնքը յառաջ բերաւ: Այս ալ շատ բնական հետեւանք մըն էր: Որովհետեւ եթէ հակառակը ընդունիլ հարկ ըլլար, պէտք էր միանգամայն ընդունիլ, թէ բարբարոս եւ անկիրթ վիճակը ամէնէն օգտակար միջոցն է՝ ազգերու քաղաքական դիրքերը զօրացնելու:

Ուրիշներ ալ կարծեցին թէ հաւատոյ պաշտպանութեան համար հինգերորդ դարու մէջ մղուած պատերազմները ազգային տեսակէտէն սխալ մը եղած են, եւ թէ ազ-

գին ապագայն ապահովուած կ՚ըլլար, եթէ Պարսիկներուն դէնի-մազդէզը ընդունուած ըլլար: Այս ըսողներն ալ անգիտակ կ՚ուզեն ձեւանալ, թէ երբ Պարսիկները իրենց կրօնքը բռնութեամբ պարտադրիչ կ՚ընէին, ներքին նպատակնին ուրիշ բան չէր, բայց եթէ զանազան ազգութիւնները ջնջել. եւ բոլոր տարբեր ցեղերը իրենցին մէջ ձուլել եւ ընկղմել: Եթէ Հայերն ալ այդ պայմանին հպատակէին, իրենք ալ ուրիշ դէնի-մազդէզը ընդունող ազգութեանց պէս, այսօր Պարսիկ տարրին մէջ խառնուած եւ իրենց իսկութիւնը կորսնցուցած պիտի ըլլային: Պարսիկներուն հետ կրօնքով միացող ազգութիւններուն՝ այսօր բնաւ հետքը չկայ, եւ ոչ իսկ անունին կը յիշուի, թող իրենց անքաղաքակիրթ վիճակն ալ:

Եղան այնպիսիներ ալ, որոնք ըսին թէ Հայութիւնը այսօր լաւագոյն դիրք մը ունեցած կ՚ըլլար, եթէ ազգովին իսլամական կրօնքը ընդունած ըլլար: Սակայն չեն պարզեր թէ ի՞նչ պիտի ըլլար այդ լաւագոյն դիրքը, զոր Հայութիւնը ունեցած պիտի ըլլար: Արաբական տիրապետութենէն ասդին Հայ տարրին մէջէն նշանաւոր մաս մը մահմետականութիւն ընդունած է, ըլլայ շահի տեսակէտով, ըլլայ բռնադատութեան ներքեւ: Ո՞ւր են ասոնք, ի՞նչ եղան. ամէնքն ալ ձուլուեցան եւ կորսուեցան այն մեծ տարրին մէջ որ Թուրք անունը կը կրէ, եւ որուն մէջն է Քուրդ կոչուածն ալ՝ կրթութենէ եւ դպրութենէ զուրկ: Ամէն քաշկռտուք պատճառաբանութեանց վրայ՝ փորձառական իրականութիւնն է որ կը տիրէ: Այսօր Հայ անունը պահող ուրիշ տարր մը չկայ, բայց եթէ այն որ իւր քրիստոնէութեան վրայ հաւատարիմ մնացած է:

Հայերը դատափետողներուն կարգին խումբ մըն ալ կայ, որ Հայերուն անկման պատճառ կը նկատէ իրենց ազգային եկեղեցւոյն ամուր կապուած մնալնին. իբր թէ իրենց վիճակնին շատ աւելի բարւոքուած պիտի ըլլար, եթէ Հռոմէադաւան կաթոլիկութիւնը ընդունած ըլլային, որով Եւրոպիոյ կաթոլիկ տէրութեանց պաշտպանութիւնը կը վայելէին: Բայց այդ ենթադրութեան ալ անհիմն՝ եւ մեղադրանքին անիրաւ ըլլալը հաստատելու համար, բաւական է միտք բերել Կիլիկիոյ Հայ թագաւորութեան վերջին եղելութիւնները, եւ այդ եղելութեանց հետեւանք եղող սպառսպուռ կործանումը: Այն եղելութիւնները յայտնապէս կը հաստատեն, թէ կործանումը ուղղակի հետեւանք եղաւ Լատիններու հետ հաստատուած մերձաւորութեանց: Նմանապէս դժուար չէ անցելոյն մէջէն երեւան հանել, որ այն ամէն Հայեր, որոնք անպայման կերպով հռոմէադաւան կաթոլիկութեան յարեցան, հետզհետէ կորսուեցան, մինչեւ իսկ անունին ալ չմնաց: Եթէ Թուրքիոյ Հայ կաթոլիկներն ալ նկատի առնենք, որոնք ինքնուրոյն հասարակութեան դիրք ալ ստացան Օսմանեան կառավարութեան շնորհիւ, անոնք ալ շարունակ պապութեան հետ վէճեր եւ հակառակութիւններ ունեցան եւ ունին, Հռոմի կողմէն եղած լատինական ձուլման ձգտումները հեռացնելու եւ ինքզինքնին Հայ պահելու համար: Այս օրեր ալ իրենց ազգային կերպարանը պահպանելու համար պարտաւորուած են բուռն հետապնդումներու դէմ մաքառիլ:

Այդ ամէն եղելութիւնները բացարձակ կերպով կը հաստատեն, որ Հայոց ազգային Եկեղեցին եղած է այն միակ յօդակապը, որ Հայկայ սերունդին ցրուած մնացորդները կրցած է իրարմէ անքակտելի պահել, եւ իբրեւ մէկ ազգ պահպանել: Եկեղեցին եղած է, որ անվիճելի կերպով ներարկած է անոր մէջ ներքին կենսականութեան տարրները, եւ պատրաստած է արտաքին միջոցներ եւ գործնական եղանակներ եւ գործառնական ձեռնարկներ՝ Հայ ազգութեան գոյութիւնը ապահովելու: Եկեղեցւոյ շնորհիւ է, որ Հայութիւնը մնացած է իբր յատուկ եւ ինքնուրոյն մարմին մը, որ դարերու այլայլութեանց եւ արկածներու բռնութեանց ներքեւ ալ, ինքն իր մէջ շարունակուելով միշտ նոյն մնացած է:

Հայը, դարերէ իվեր քաղաքական միջոցէն զրկուած, սերտ փարած է եկեղեցական կեանքին, եւ զայն ճանչցած է իբր փրկութեան խարիսխ մը իւր ալեկոծ կեանքին

մէջ: Անոր շնորհիւն է, որ թէպէտ վտանգուած ու տկարացած, բայց վերջնապէս կրցած է իւր գոյութիւնը պահել, եւ մահացու արկածներուն մէջ կեանքը ապահովել: Այդ մեծ գոյութիւնը, որ Հայուն անցեալին վրայ գործունեայ եւ արդիւնաւոր ազդեցութիւն ունեցաւ, չէ դադարած տակաւին իւր կենսական ոգին ներշնչել, եւ պիտի շարունակէ ալ ասյագային միեւնոյն փրկարար դերը պահել, քանի որ նոյն կը մնայ քաղաքական եւ կենցաղական կացութեան պահանջը: Փորձառական ճշմարտութիւն է, որ ուր քաղաքական կապակցութեան կապը կը պակսի, եկեղեցական կապակցութեան կապն է որ գայն կը փոխանակէ, եւ միութեան ու գոյութեան պէտք եղած ոյժը կ՚ընծեռէ: Այս կերպով Ազգային Եկեղեցին կը լինի դադարեալ հայրենիքին հոգին ներկայացնող երեւելի նշանը, եւ սիրտի գերազանց ձգտումներուն ոգեւորութիւն բաշխողը:

Վերջին տարիներու միջոցին զանազան կողմերէ զրոյցներ հրապարակ նետուեցան, իբրեւ թէ Հայերը քաղաքական անկախ ազատութիւն ձեռք ձգելու նպատակով խլրտումներու ձեռնարկած ըլլան: Երկու դրացի կայսրութիւններ, որոնց մէջ Հայերը մեծագոյն մասամբ ցրուած կը գտնուին, այդ զրոյցներէ առիթ առին Հայերու նկատմամբ անողոք խստութիւններ գործածել: Մենք չենք փնտռեր թէ հնար է՞ր արդեօք Հայերը բացարձակապէս դատապարտել, եթէ այդպիսի գաղափարներ ալ ունեցած ըլլային: Միթէ բարւոքման փափաքը՝ ամէն անհատի բնական եւ անբռնաբարելի իրաւունքը չէ՞: Սակայն եթէ փափաքը ինքնաբերաբար կը բղխի սիրտէն, անոր ընթացքը կը կառավարուի միտքէն: Հայերը իրականութեանց մասին շատ յստակ ու որոշ գաղափար ունին, որ մտացածին եղջերուաքաղերու վտանգաւոր բաւիղներու մէջ չմոլորին: Անոնք չեն կրնար չտեսնել, թէ իրենց հայրենական բնաշխարհին տարածութիւնը երեք հզօր պետութեանց բաժնուած է. թէ իրենք սփռուած ու ցրուած են աշխարհի ամէն անկիւնները. թէ իրենց մտաւորական եւ նիւթական կարողութեանց լաւագոյն կեդրոնները օտար հորիզոններու վրայ են. թէ իրենց ձեռնարկներուն նպաստող միջոցները բնաշխարհէն դուրս տեղեր են, եւ չեն կրնար օգտակար կերպով կարծեցեալ նպատակին գործածուիլ: Արդ քանի որ այդպիսի ու այսչափ արգելքներ ունին իրենց դէմ, կրնա՞ն արդեօք որեւիցէ կերպով քաղաքական նպատակ մը յաջողցնելու երազներով ինքզինքնին խաբել: Այդպիսի ենթադրութիւն մը ընել հնար չէ, առանց Հայ ազգին ողջմտութեան դէմ նախատինք արձակելու: Հայը կրնայ հանդուրժել, որ իրեն դէմ ազատասիրական նոյն իսկ հայրենասիրական ձգտումներ ունենալու ամբաստանութիւններ վերագրուին, որչափ ալ այդ ամբաստանութիւնները անհիմն եւ սուտ ըլլան. բայց նա չկրնար ներել, որ իրեն վրայ տխմարութեան միտքեր եւ ապուշութեան գործեր եռթադրուին:

Ճշմարտութիւնն այն է, որ ամէն բարեմիտ Հայ՝ ուրիշ փափաք չունի, բայց եթէ իւր դրացիներուն հետ խաղաղ ու հաշտ ապրիլ: Հայուն պահանջն է, որ վնաս չհասնի իր կեանքին, իր պատիւին, իր ստացութեան, իր աշխատութեան: Հայը կը պահանջէ, որ ինչպէս ուրիշներ, ինքն ալ խաղաղութեամբ վայելէ իւր գործունէութեան պտուղը. եւ իւր բնական ձիրքերուն արդիւնքները ինչպէս կը վայելեն միւս ազգեր, որոնց մէջ կ՚ապրի: Այս օրինաւոր պահանջներուն հետ կը փափաքի՛ ալ, որ հաստատուն պահէ իւր ազգային ինքնութիւնը, իր լեզուն ու իր գրականութիւնը: Իւր նախնիքներէն նուիրական ժառանգութիւն մնացած՝ այս բարիքներուն ստացութիւնը պահպանելու համար, ինքն ապահինած է իւր Ազգային Եկեղեցւոյն ծոցը, եւ կ՚ուզէ որ անձեռնմխելի մնայ այն իւր կանոններով ու աւանդութիւններով, իւր հաստատութիւններով, եւ իւր ստացած իրաւանց եւ առանձնաշնորհութեանց ամբողջութեամբ:

Հայն այն համոզումն ունի, թէ իւր Ազգային Եկեղեցին, որ զինքն անցեալին մէջ պաշտպանեց, ապագային մէջ ալ պիտի պաշտպանէ:

Սեն Արևշատյան

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մի ժողովրդի կյանքում լինում են պատմական պահեր, իրադարձություններ, որոնք վճռական նշանակություն են ունենում նրա հետագա կյանքի ամբողջ ընթացքի համար: Հայ ժողովրդի համար այդպիսի բախտորոշ իրադարձություններից մեկը, եթե ոչ ամենանշանակալիցը, 1700 տարի առաջ, IV դ. սկզբում քրիստոնեության ընդունումն էր, դարակազմիկ մի շրջադարձ, որը ուրվագծեց նրա հետագա ընթացքը՝ քաղաքական, հասարակական և հոգևոր-մշակութային կյանքի բոլոր ոլորտներում: Քրիստոնեության, որպես ժամանակի ամենակատարյալ կրոնի, ընդունումը և նրա տարածումը Հայաստանով մեկ՝ առանց ժողովրդի և քրմական դասի կողմից շոշափելի դիմադրության, վկայում է այն մասին, որ երկիրը ներքուստ պատրաստ էր նոր կրոնի ընկալմանը:

Գրիգոր Լուսավորչի քարոզչական գործունեությունից շատ առաջ Հայաստանի տարբեր մասերում կային քրիստոնեական համայնքներ, կային նոր հավատքի համար իրենց կյանքը տված քրիստոնյաներ՝ Ոսկեանք, Սուքիասեանք, Հռիփսիմեանք, և այլ բազմաթիվ անանուն նահատակներ, որոնց արյունով արդեն ներծծված էր հայոց հողը: II-III դդ. նոր հավատքի բազմաթիվ հետևորդներ հալածանքի զոհ են դարձել հեթանոս հռոմեացի, հայ և պարսից իշխանավորների ձեռքից: Քրիստոնյա համայնքները շփումներ ունեին հարևան երկրների, հատկապես Միջագետքի, Ասորիքի և Կապադովկիայի հավատակիցների հետ, Եղեսիայի, Սամոսատի, Անտիոքի, Կեսարիայի ավելի մարդաշատ համայնքների հետ:

Այդ պայմաններում Հայաստանի պետական, ազգային շահերից ելնելով՝ Տըր դատ թագավորը և Գրիգոր Լուսավորիչը մնում էր որ վճռականություն ցուցաբերեին երկրի համար բախտորոշ քայլը կատարելու համար: Պատմության մեջ առաջին անգամ քրիստոնեությունը 301 թ. հալածված և հետապնդվող հավատքից դառնում է պետական կրոն, պետության կողմից հովանավորվող, ժողովրդի հեթանոս մեծամասնության համար պարտադրվող մի հավատք:

Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի պատմական դերն այն է, որ քրիստոնեության ընդունման ակտով նրանք մի անգամից արմատապես փոխեցին այդ հալածված կրոնի կարգավիճակը, այն դարձնելով երկրի ողջ տարածքում սփռված, եկեղեցական կազմակերպված կառուցվածքով ապահովված մի համակարգ, որը դարձավ հայոց պետության ոչ միայն դաշնակիցը, ոչ միայն խորհրդատուն ու բարեկամը, այլև բաղկացուցիչ մասը:

Ինչու քրիստոնեությո՞ւնը, ինչո՞ւ մի որևէ այլ կրոնի վրա իրենց ուշադրությունը չդարձրին Տրդատը, թագավորական ընտանիքը, հայոց ավագանին և Գրիգոր Լուսավորիչը, եթե պետք է հրաժարվեին իրենց հին աստվածներից, իրենց ներուժը սպառած, ժողովրդի և պետության համախմբմանն արդեն չնպաստող բազմաթիվ կուռքերից: Ինչո՞ւ հանուն նոր կրոնի, հանուն Քրիստոսի պետք է մերժվեին Արամազդն ու

Անահիտը, Նանեն ու Տիրը, Աստղիկն ու Վահագնը: Պատասխանը հստակ է: Մի երկրում, ուր դեպքերի բերումով, քաղաքական հանգամանքների բարենպաստ պայմանների հետևանքով իր հայրական գահի վրա էր հաստատվել Արշակունի Տրդատը, վաստտրեն վերահաստատվել էր ազգային պետականությունը, բայց չէին վերացել Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության անթեղված սպառնալիքները, անհրաժեշտ էր առանց տատամսելու վճռասպրդել տարբեր քաղաքական ձգտումներ ունեցող ներքին պառակտիչ ուժերը, հոգեպես և բարոյապես միաձուլել երկիրը, աստծու հավատքով հաշտեցնել հասարակության հակընդդեմ խավերը և բոլորին դարձնել հայոց գահի նեցուկ: Այդ խորքային գործընթացն առավել ևս սրվեց, երբ Սասանյանների և հայոց Արշակունիների հակամարտությունն ավելի սաստկացավ, երբ 270-ական թթ. զրադաշտականությունը դարձավ Պարսկաստանի պետական կրոն: Հայաստանում Զրադաշտի հետևորդները սկսեցին ամրացնել իրենց դիրքերը, խարխլել հայոց պանթեոնը, հետևորդներ գտնելով ինչպես շահամոլ վերնախավում, այնպես և միամիտ ռամիկների միջավայրում: Հայաստան թափանցեց և որոշ տարածում գտավ նաև մանիքեությունը: Ոչ պակաս վտանգ էր ներկայացնում Հռոմեական կայսրության մեջ տարածված հեթանոսական կրոնը, բազմաստվածության այն հավակնոտ և հարձակողական գաղափարախոսությունը, որը ծառայում էր կայսրերի զավթողական ախորժակներին. որոշ տարածում ուներ նաև միթրաիզմը, Միհրի պաշտամունքը: Ֆեդերալացման ուղին բռնած, վերահաստատված Արշակունյաց միապետական Հայաստանի համար քրիստոնեությունը, որպես գաղափարախոսություն, եղավ ամենանպաստավոր կրոնը, վաղ միջնադարյան հայ հասարակության հոգևոր կյանքի և սոցիալական հարաբերությունները իմաստավորող ու ամրացնող ուսմունքը:

Կրոնա-քաղաքական այդ մթնոլորտով էր պայմանավորված քրիստոնեության ընդունումը Հայաստանում: Այդ մթնոլորտում, միայն որպես պետական կրոն, քրիստոնեությո՛ւնը կարող էր առաջին հերթին վճռասպրդել հարձակողական գրադաշտականության հեռամետ նպատակները և դառնալ հայոց ինքնուրույնության գործող պատվարը, իսկ մյուս կողմից, հռոմեական կայսրերից անկախանալու, նրանց ձեռքից թագ ստանալու, հեթանոսական ավանդույթով կրոնա-քաղաքական ենթակայությունից ձերբազատվելու պահանջը մարմնավորվեցին նոր կրոնի ընդունման մտածված քաղաքականության մեջ: Տրդատ թագավորն իր իմաստուն քայլով, Գրիգոր Լուսավորչի ջերմեռանդ աջակցությամբ հռչակեցին քրիստոնեությունը միակ ճշմարիտ կրոն, մերժելով բոլոր այլ դավանանքները և կրոնները որպես մոլորություն:

Պատմության մեջ քրիստոնեությունն առաջին անգամ դարձավ պետական կրոն, որը փրկության ճանապարհ էր բացում հայ ժողովրդի համար՝ երկու հզոր անհաշտ պետությունների աչքի առաջ: Դա հոգևոր, բարոյական և քաղաքական մի սքիզբանք էր, որն իր շարունակությունը պետք է ունենար նաև հաջորդ դարերում, լավ օրերի երազանքով ու հույսով, լավատեսությամբ համախմբեր ու զիներ մարդկանց դարեր շարունակ:

Հայոց դարձը չամփոփվեց, չսահմանափակվեց էթնիկական շրջանակով:

Իր աշխարհագրական և պետական-քաղաքական դերի թելադրանքով Հայաստանը դարձավ կենտրոնատեղի՝ խթանելով քրիստոնեության տարածումը Անդրկովկասում, հարևան Վրաստանում, Աղվանքում, Հյուսիսային Կովկասում: Հայոց դարձը նշանակալիորեն ազդեց նաև խոշորագույն պետությունների՝ Պարսկաստանի և Հռոմեական կայսրության, հետագայում Բյուզանդիայի քաղաքական և կրոնա-մշակութային հարաբերությունների վրա: Այդ ժամանակաշրջանից է սկսվում քրիստոնեության հաղթարշավը Արևելքում: Տեղի է ունենում եկեղեցական կառուցվածքների ամրապնդումը և նրանց եռանդուն գործունեությունը ղեռևս կիսահեթանոսական

շրջապատում: Առաջանում է Քրիստոնյա Արևելքը, որի կարևոր բաղկացուցիչ մասն է դառնում Հայաստանը, հոգևոր թռիչքի պատրաստ մի երկիր, որը կրոնական-հոգևոր սերտ կապեր էր հաստատել մյուս երկրների, հատկապես Ասորիքի, հունական Փոքր Ասիայի և Պաղեստինի կազմավորվող եկեղեցիների հետ:

Հայաստանում պետականորեն ճանաչումով քրիստոնեությունը դարձավ ոչ միայն կարևոր գործոն պետությունների ու ժողովուրդների հարաբերություններում, այլև նրանց ներքին, հոգևոր բովանդակությունը կազմավորող նոր մշակույթի ստեղծման գործոն, հասարակական կյանքի և մտավոր ու նյութական նոր ստեղծագործության մշտական խթան:

Քրիստոնեությունը վճռական դեր խաղաց հայ ֆեոդալական մշակույթի ձևավորման գործում, եղավ ազգային գրի և դպրության ստեղծման պատճառը: Ազգային գրերի պահանջը, անշուշտ, չի կարելի սահմանափակել միայն Հայոց եկեղեցու կարիքներով: Առաջին հերթին այն պայմանավորված էր ազգային գիտակցության աճով, որն իր հերթին վկայում էր, որ IV դ. ընթացքում զգալիորեն առաջ էր գնացել ազգային ինքնագիտակցության ձևավորման գործընթացը: Սակայն նույն՝ IV դ., երբ նախապարսների պառակտիչ գործողությունների հետևանքով ի դերև ելան Արշակունիների ջանքերը՝ կենտրոնացնելու պետական իշխանությունը, իսկ մեծ տերությունների զավթողական քաղաքականության հետևանքով 387 թ. Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Արևելյան-Հռոմեական կայսրության միջև, կտրուկ բարձրացավ եկեղեցու դերը երկրի կյանքում: Հայոց եկեղեցին, որը դարձել էր ավատատիրական արդեն հաղթանակած կարգերի հզոր հենարանը և հանդես էր գալիս որպես հոգևոր, տնտեսական ու քաղաքական գործոն, հոգեվարք ապրող հայ պետականության անշեղորեն թուլացման պայմաններում գլխավորում է պառակտված հայ հասարակության համախմբման գործը: Ժողովրդի վրա իր գաղափարական ազդեցությունն ուժեղացնելու նպատակով հոգևորականության առաջավոր ներկայացուցիչները, քաջ գիտակցելով ժամանակի պահանջը, ձգտում են հրաժարվել եկեղեցում ընդունված, բայց ժողովրդի համար անհասկանալի հունարենից և ասորերենից, դրանով իսկ միաժամանակ ցանկանալով փակել երկիր թափանցած օտար հոգևորականության առջև այդ հարմար ճանապարհները, օտարալեզու հոգևորականության առջև, որը դարձել էր և քաղաքական վնասակար ազդեցությունների տարածողը: Այդ ամենի առաջն առնելու նպատակով անհրաժեշտ էր հայերենը դարձնել եկեղեցու պաշտոնական լեզու: Դրա համար անհրաժեշտ էր մայրենի լեզվով ունենալ Աստվածաշունչը և մյուս պաշտոնական գրքերը: Միայն սեփական, ազգային գրերն ունենալու դեպքում կարելի էր հասնել այդ նպատակին: Եկեղեցու դերի ուժեղացման, հասարակական զարգացման ընթացքի առաջ մղած այդ խնդրի լուծումն անհրաժեշտորեն դրեց հայոց գրերի ստեղծման հարցը, առանց որի հնարավոր չէր նույնիսկ մտածել հունարենը և ասորերենը պաշտոնական գործածությունից դուրս մղելու մասին:

Այդ հասունացած հասարակական պահանջին արձագանքելով՝ Մեսրոպ Մաշտոցը, քրիստոնեության ընդունման շուրջ մեկդարյա միջոցից հետո, ստեղծեց հայոց գրերը, դրանով իսկ մեծ հեռանկարներ բացելով հայոց լեզվի, գրականության և առհասարակ հոգևոր մշակույթի առաջ: Որպես իր ժամանակի զավակ՝ Մաշտոցը, անտարակույս, ձգտում էր իր նպատակը բերել քրիստոնեության տարածման և եկեղեցու ամրապնդման գործին:

Գրերի ստեղծումն անմիջականորեն կապված էր քրիստոնեության ուսմունքի՝ մայրենի լեզվով լայն քարոզչության հետ, պայմանավորված այդ ուսմունքը ժողովրդի գիտակցության մեջ ներարկելու պահանջով, ժողովրդի լայն զանգվածների, որոնք

պետության ճնշման տակ հարկադրված էին հրաժարվել իրենց հին աստվածներից և ընդունել նոր հավատքը՝ չմերժելով նրա բովանդակությունը:

Հայոց պետականության անկասելի թուլացման պայմաններում Հայոց եկեղեցին, ազգի կենսունակ ուժերի համախմբման նպատակով, ձգտում էր հենվել միակ հուսալի ուժի՝ ժողովրդական զանգվածների վրա: Աշխարհաքաղաքական իրավիճակի և ներքին դեպքերի բերումով Հայոց եկեղեցին դառնում էր երկրի հեղինակավոր քաղաքական ներկայացուցիչը, որի հետ ստիպված էին հաշվի նստել և՛ զավթիչները, և՛ հարևան պետությունները ու քրմապետերը: Եկեղեցին իր ձեռքում էր կենտրոնացնում երկրի ողջ գաղափարական, հոգևոր կյանքի ղեկավարման գործը: Սեփական գրի և գրականության կարիքը բոլորից շատ և առաջին հերթին զգում էր հայ հասարակության այն խավը, որը հետզհետե ձեռք էր բերել գաղափարական գործի մենաշնորհը, այն է՝ հոգևորականությունը: Եվ եթե գրերի ստեղծումով ավելանում էր Հայոց եկեղեցու ուժը և ինքնուրույնությունը, չեզոքացվում էր հունական և ասորական եկեղեցիների ազդեցությունը, վերջնական պայքար էր ծավալվում հին հավատալիքների և գրադպրշտականության դեմ՝ հանուն ազգի հոգևոր միասնության, ապա դրանով լուծվում էր ազգային անկախության պահպանման համար մղվող գոտեմարտի կարևորագույն հարցերից մեկը:

Հայաստանը, որն իր ազգային գիրն ու գրականությունը ստացավ քրիստոնեության՝ որպես պետական կրոն հռչակելուց շուրջ մեկ դար հետո, պետք է ամենակարճ ժամկետում անցներ այն ուղին, որը դանդաղորեն ու համաչափ անցել էին հարևան հին դպրություններն, ստեղծել իր հայրաբանությունը և ջատագովությունը, մանավանդ որ՝ գնալով նրան ավելի ուժեղ էր սկսել սպառնալ զրադաշտական Պարսկաստանից եկող վտանգը: Մյուս կողմից, անհրաժեշտ էր ապացուցել, ցուցադրել մյուս, հարևան եկեղեցիներին իրենց հնությունը, ուղղափառությունը և ինքնուրույնության իրավունքը: Այդ նկատառումներով միայն կարելի է բացատրել V դ. առաջին կեսին, Աստվածաշնչի հայացումից հետո, անհրաժեշտ պաշտոնական գրքերի թարգմանությունները կատարելուց հետո, հայալեզու ջատագովական երկերի ծնունդը, երբ քրիստոնեությունը մեկ դարից ավելի է, ինչ երկրի պետական կրոնն էր, և այն հանգամանքը, որ այդ երկերից առաջինները՝ «Հաճախսպատում ճառերը», հրապարակել են Գրիգոր Լուսավորչի անունով:

Պատմական դեպքերի տրամաբանությամբ, Գրիգոր Լուսավորիչը պետք է հոգ տաներ նաև հայոց գրերի ստեղծման համար, ինչպես դա տեղի ունեցավ մի շարք երկրներում, որտեղ նոր կրոնի քարոզիչները Սուրբ Գրքի թարգմանության, հավատի նաև գրավոր քարոզչության և եկեղեցու պաշտոնական ծիսակատարությունների իրականացման նպատակով դառնում էին նաև գրերի ստեղծողներ, ինչպես, օրինակ, Կիրիլն ու Մեթոդիոսը՝ սլավոնների համար, Վուլֆիլան՝ գոթերի համար և այլն: Սակայն Հայաստանում դա չկատարվեց այն պատճառով, որ հայոց դարձը նախ իրագործվեց վերնախավում. թագավորական ընտանիքը, ավագանին և հոգևորականությունը ստանում էին հունական և ասորական կրթություն, և կրոնական գրքերի ընթերցումը և ունկնդրումը այդ լեզուներով նրանց համար դժվարություն չէր հարուցում, իսկ ժողովրդի համար բանավոր ձևով ավանդվում էին նոր կրոնի տարրական հիմնադրույթները: Սակայն այդպես երկար չէր կարող շարունակվել. հայոց պետականության ճգնաժամի պայմաններում, ինչպես նշվեց, Հայոց եկեղեցին ժողովրդի լայն զանգվածների մեջ ամուր հենարան գտնելու միտումով պետք է անցներ քրիստոնեական ուսմունքի ամենալայն քարոզչական աշխատանքի՝ ժողովրդին հասկանալի լեզվով, որի համար անհրաժեշտ էր ունենալ սեփական, ազգային գրեր: Փաստորեն Մաշտոցը և նրա գինակիցները շարունակեցին Գրիգոր Լուսավորչի անավարտ գործը: Այդ ժամա-

նակ է, որ Հայոց եկեղեցին դարձավ իր բնույթով ազգային, մնալով միաժամանակ ընդհանուր եկեղեցու անդամը:

Գրերի գյուտը, քրիստոնեության ընդունումից հետո, երկրորդ հեղաշրջիչ իրադարձությունն էր ժողովրդի կյանքում, որը լիովին փոխեց երկրի մշակութային պատկերը և հոգևոր մթնոլորտը: Ազգային գիրը հիմք հանդիսացավ հայկական նոր մշակույթի ստեղծման համար, կանխեց ուծացման և հարևան տերությունների կողմից կլանման վտանգը: Հզոր լուսավորական շարժումը՝ Մաշտոցի և Սահակ Մեծի գլխավորությամբ, իր շարքերում համախմբելով ժողովրդի բոլոր խավերի տաղանդավոր գավակներին, պատմական ամենակարճ, անհավատալի սեղմ ժամանակամիջոցում առաջ բերեց մայրենի լեզվով բազմաբովանդակ մի գրականություն՝ ինքնուրույն ու թարգմանական, որը լեզվի ճոխությամբ ու մաքրությամբ, մտքի խորությամբ ու հարրուստությամբ ըստ արժանվույն դարձավ հետագա դարերի համար դասական մի ժառանգություն՝ «ոսկեդարյան գրականություն»: Մաշտոցյան դպրոցին հաջորդեց «հունաբան» ուղղության եռանդուն գործունեությունը: V-VI դդ. ստեղծված հայ գրականությունը՝ իր բազմատեսակ սեռերով /ճառագրություն, վարքագրություն, հայրախոսություն, ջատագովություն, մեկնություն և այլն/, իսկ այնուհետև պատմագրությունը, փիլիսոփայությունը, բերականությունը, ճարտասանությունը դարձան այն հիմնաքարերը, որոնց վրա բարձրացավ հայ միջնադարյան հոգևոր մշակույթի շենքը: Այդ բազմաբովանդակ գրականությունը դուրս եկավ ազգային շրջանակներից և ձեռք բերեց համամարդկային պատմամշակութային նշանակություն: Սա քրիստոնեության ընդունման ակնառու հետևանքն էր, իր պետականությունը նոր կորցրած, բայց եկեղեցու շուրջը համախմբված, իր հավատքին ապավինած ժողովրդի ջանքերի պտուղը: Այդ մատենագրության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում պատմագրությունը: V դ. հեղինակներ Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Խորենացու, Փարպեցու երկերը անգնահատելի են ոչ միայն Հայաստանի պատմության, նրա քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի ուսումնասիրման, այլև կարևոր սկզբնաղբյուրներ են նաև հարևան ժողովուրդների պատմությունը հետազոտելու առումով, քանի որ հարուստ տեղեկություններ են պարունակում Վրաստանի, Աղվանքի, ամբողջ Կովկասի, ինչպես նաև Պարսկաստանի, Միջին Ասիայի, Բյուզանդիայի և Ասորիքի վերաբերյալ: Նույն արժանիքներով են օժտված նաև հաջորդ դարերի՝ Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի, Ղևոնդի, Մովսես Կաղանկատվացու, Թովմա Արծրունու և այլոց երկերը:

Գիտական մեծ արժեք են ներկայացնում վաղ միջնադարյան հայ փիլիսոփայական, տիեզերագիտական, մաթեմատիկական, բերականական-ճարտասանական մտքի հուշարձանները: Դրանց շարքում իրենց յայն հնչեղությամբ, ժամանակի գաղափարական կյանքի ճշգրիտ արտացոլքով և համաշխարհային գիտական մտքի պատմությանը բերած ավանդով առանձնանում են ականավոր փիլիսոփաներ և գիտնականներ Եզնիկ Կողբացին, Դավիթ Անհաղթը և Անանիա Շիրակացին: Նրանց երկերում արտացոլված են ոչ միայն հայ իրականության գաղափարական երևույթները և բնագիտական մտքի նվաճումները, այլև անտիկ աշխարհից վաղ միջնադարի քրիստոնեական մշակույթին անցած փիլիսոփայական և բնագիտական տարբեր տեսություններն ու գաղափարները:

Այդ շրջանի հայ մատենագրության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հարուստ թարգմանական գրականությունը, որը բարերար ազդեցություն է ունեցել հայ գիտական, աստվածաբանական, փիլիսոփայական մտքի ձևավորման վրա: Անտիկ փիլիսոփաների և վաղ քրիստոնեական շրջանի հեղինակների գործերը, թարգմանվելով, դարձան հայ դպրության հարազատ, անբաժանելի մասը: Եվսեբիոս Կեսարացու,

Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստվածաբանի, Հովհան Ոսկերերանի, Աբանաս Ալեքսանդրացու, Եպիփան Կիպրացու, Եփրեմ Ասորու և եկեղեցու հայրերի բազմաթիվ այլ երկերի թարգմանություններով հայ դպրությունը մեծ ծառայություն է մատուցել նաև համաշխարհային գրականությանը, փրկելով կորստից ոչ սակավ երկեր, որոնց բնագրերը չեն հասել մեզ: Նույնը վերաբերում է նաև անտիկ գիտության և փիլիսոփայության ներկայացուցիչների՝ Արիստոտելի, Պլատոնի, Փիլոն Ալեքսանդրացու, Դիոնիսիոս Թրակացու, Պորփյուր Փյունիկեցու, Թեոն Ճարտասանի և այլոց երկերի հմուտ թարգմանություններին, որոնք առանձնանում են իրենց ճշգրտությամբ և հայ տերմինաբանությանը բերած գիտական բառապաշարի ստեղծման մեծ ծառայությամբ:

Քրիստոնեության մուտքից հետո և նրա՝ աշխարհընկալման նոր սկզբունքների արմատավորման հատևանքով մեծ շրջադարձեր են կատարվել նաև հայ ճարտարապետության, քանդակի, որմնանկարչության, գրչության արվեստի և մանրանկարչության, երաժշտության և կիրառական արվեստի զարգացման ասպարեզում: Հոգևոր և նյութական մշակույթի այս բնագավառներում ևս ստեղծվել են դարակազմիկ արժեքներ, որոնք ազգային արվեստի զարգացման համար խաղացել են վճռական դեր, չափանիշ և ուղենիշ դարձել ամբողջ միջնադարի համար: Անշուշտ, լայնորեն օգտագործվել են ժողովրդական հնամենի ավանդույթները, անտիկ շրջանից եկող շինարարական արվեստի, քանահյուսության, երգարվեստի, կերպարվեստի ավանդական որոշ ձևերն ու եղանակները, սակայն այդ ավանդույթները վերամշակվել են նոր պայմաններին, նոր կրոնի և եկեղեցական մտայնության պահանջներին համապատասխան: Տեղական ճարտարապետության ավանդույթները, համադրվելով Ասորիքի, Փոքր Ասիայի և Միջագետքի վաղ քրիստոնեական պաշտամունքային կառույցների տարրերի հետ, V-VII դդ. ստանալով նոր ընթացք, առաջացրին տարբեր տիպի կառույցներ՝ բազիլիկ, նաև՝ գմբեթավոր բազիլիկ տաճարներ, ի վերջո մարմնավորվեցին խաչաձև-կենտրոնագմբեթ ուրույն մի կառույցի տիպի մեջ, որն այնուհետև տարածվեց Հայաստանով մեկ և Անդրկովկասի հարևան քրիստոնեական երկրներում:

Ճարտարապետության, կիրառական արվեստների և երաժշտության մեջ ցայտուն դրսևորվել է պայքարը հեթանոսական մշակույթի, գաղափարների և սիմվոլիկայի դեմ և շեշտված միտումը՝ ծառայել եկեղեցու կարիքներին, նրա գաղափարական ազդեցության հաստատման գործին: Այս բոլոր փոփոխություններն ու շրջադարձերը նոր էջ բացեցին հայ արվեստի և ճարտարապետության պատմության մեջ, հիմք հանդիսացան ամբողջ միջնադարի համար: Բնականոն զարգացման հետևանքով ճարտարապետությունն ու արվեստը՝ քանդակը, երաժշտությունը, մանրանկարչությունը, իրենց ուրույն ոճով և ձևերով նոր վերելք ու ծաղկում ապրեցին զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, համընդհանուր մշակույթի մեջ մտնելով որպես հայ ժողովրդի գեղարվեստական հանճարի ավանդ:


Քրիստոնեության ընդունումով արմատական, բովանդակային խոր փոփոխություններ են կատարվել հայ ժողովրդի կյանքում և նրան շրջապատող ընդարձակ աշխարհագրական տարածքում: Քրիստոնեությունը, որպես կրոն և գաղափարախոսություն, նպաստել է հայ հոգևոր մշակույթի անհնախաղեպ վերելքին ու հետագա զարգացմանը, ազգային ինքնագիտակցության զարթոնքին, մայրենի լեզվի և գրականության պահպանմանն ու ծաղկմանը, երկար դարեր համախմբել ժողովրդին, նկեղեցու շնորհիվ կապել ազգի տրոհված հատվածները:

Քրիստոնեության ընդունումով ոչ միայն բացվել է հայ ժողովրդի ստեղծագործական ուժերի անթեղված եռանդը, այլև ժողովրդական զանգվածներին տրվել է մի դրոշ, որի շուրջ համախմբվելով, սերունդներն անդուլ պայքար են մղել իրենց հայրե-

նիքի, պետության, լեզվի ու հոգևոր մշակույթի փրկության, պահպանման և զարգացման համար:

Դարեր շարունակ քաղաքական անբարենպաստ պայմաններում քրիստոնեական կրոնը և Հայոց եկեղեցին ծառայել են համազգային կյանքի կայունացմանն ու արտաքուստ միշտ սպառնացող վտանգի դիմագրավմանը: Այդ հավատի շնորհիվ, չնայած մեծ զոհերի, հայ ժողովուրդը դարեր շարունակ ապրել ու մաքառել է, ստեղծագործել և համամարդկային մշակույթի գանձարան մուծել իր անկրկնելի ավանդը:

ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՏ



Վարդան Բաղիշեցի, Գրիգոր Լուսավորչի աստվածուսույց խրատը , Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, ժողովածու 1569 թ. (Մատենադարան, ձեռ. 1920):

Հայկ Հակոբյան


ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԼԵԳԵՆԴԻ ՀԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ՄԻՋԵՐԿԱԾՈՎՅԱՆ ՋՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ

Ագաթանգեղոսի Պատմությունն ավելի քան մեկ դար գտնվում է ուսումնասիրության դաշտում: Հայագիտության շատ երախտավորներ ծանրակշիռ ներդրում են կատարել այս արժեքավոր գրական-պատմական հուշարձանի աղբյուրագիտական հիմքերն ու կառուցվածքը բացահայտելու համար: Պատմականն ու առասպելականը տարանջատելու, հեռավոր ժամանակների ճշմարտացի պատկերը վերականգնելու հիմնական եղանակը XIX դ. վերջին և XX դ. սկզբին՝ «Պատմության» ղրվագները որոշակի սկզբնաղբյուրներից բխեցնելու օրինաչափ գործընթացն էր: Խնդրի առաջին լուսաբանողներից էր նշանավոր հայագետ Հ.Տաշյանը[1]: Ա. վոն Գուտշմիդը եզրահանգել է, որ Պատմության հեղինակն այլ սկզբնաղբյուրներից բացի օգտվել է նաև ժողովրդական բանավոր զրույցներից[2]: Գ.Տեր-Մկրտչյանը առարկայորեն ցույց է տվել, որ Ագաթանգեղոսն օգտվել է Գորիա և Շմոնի վկայաբանությունից[3]: Մ.Աբեղյանը Պատմությունը քննել է հայ ժողովրդական վեպի համատեքստում[4]: Ն.Մառը ենթադրել է, որ Գրիգոր Լուսավորչի լեգենդի հնագույն մշակողը եղել է Մեսրոպ Մաշտոցը կամ նրա շրջապատի որևէ հեղինակ[5]: Լուրջ նպաստ բերին հարցի ուսումնասիրությանը Ագաթանգեղոսի նախնական տարբերակին մասամբ ավելի մոտ կանգնած արաբերեն և հունարեն վարքերի հայտնաբերումն ու հրատարակությունները[6]: Ավելի հեռուն գնալով, Ն.Ադոնցը ակնթարթ զուգահեռներ է բերել փոքրասիական ու իրանական համեմատական դիցաբանությունից, կապելով, մասնավորապես, Լուսավորչի կերպարը մեռնող ու հարություն առնող աստվածության հետ[7]: Ի մի բերելով Ագաթանգեղոսի Պատմության առնչվող բանահյուսական սկզբնաղբյուրները, Կ.Մելիք-Օհանջանյանը եզրակացրել է, որ դրանք նախապես կազմել են չորս իրարից անկախ վիպական շարքեր[8]: Ագաթանգեղոսի Պատմության շուրջ ստեղծված հարուստ փաստական նյութն իր հերթին առաջադրում է նորանոր խնդիրներ, որոնց մի մասն անցյալում կամ քիչ ավելի այժմեական հնչեղություն ուներ, կամ էլ կարիք էր զգում նոր համեմատական նյութի: Նշված հեղինակներով ամենևին չի սպառվում հարցի մատենագիտությունը[9], և օրակարգի մեջ է Ագաթանգեղոսի Պատմության քննական նոր հրատարակությունը՝ հիմք ընդունելով հայտնի բնագրերը, հինարևելյան և հելլենիստական փիլիսոփայական, դիցաբանական ու պատկերագրական ժառանգությունը, քրիստոնեական դարաշրջանի վաղ աստվածաբանական գործերը, դրանց հարող պարականոն գրվածքները, հայերի ու հարևան հին ժողովուրդների աշխարհայացքին առնչվող տեղեկատու և տեսական բնույթի աշխատանքները: Մեր խնդիրը շատ ավելի որոշակի է. փորձել սահմանափակ թվով ղրվագների քննությամբ բացահայտել կառուցվածքի ու բովանդակության մասնակի և ընդհանուր առանձնահատկությունները:

Լուսավորչի լեգենդն ընդհանուր գծերով՝ նրա և Տրդատի հակադրման ու միության պատմությունն է, որ զարգանում է մեկի համար զոհումով, մաքրագործմամբ ու դարձով, իսկ մյուսի համար՝ վեհ գաղափարների համար կրած տառապանքներով,

ինքնազոհողությամբ ու դրան հաջորդած արժանի հատուցմամբ, պսակվելով քրիստոնեական գաղափարի հաղթարշավով Հայոց աշխարհով և հարևան երկրներով: Գրիգորի կենսագրության առանձին հատվածներ բավական նման են հին Աստվածաշնչյան սյուժեների[10], և նման ակնառու օրինակները բնականոն են. ընտրելով նոր գաղափարախոսության տարածման համար իրենց դժվարին ուղին՝ շատ նվիրյալներ կամա թե ակամա կրկնում էին իրենց սրբացած նախորդներին թե՛ տառապանքների և թե՛ հատուցման պահին: Ինչպես քրիստոնեության տարածման, անպես էլ նրան դիմակայելու հանգամանքներն ու եղանակները տարբեր միջավայրերում հաճախ նման էին հենց իրերի բերումով, թեև, անշուշտ, մեզ հասած հին վկայաբանությունները անմասն չեն մնացել Աստվածաշնչյան սյուժեները վերապրելու միջոցով քրիստոնեական բարոյականության հիմքերի կառուցմանը մասնակից լինելու վեհ մղումներից: Ինչքան էլ վարքերը նպատակաուղղված լինեին գալիք սերունդներին, նախատեսված էին նախ և առաջ ժամանակակիցների համար: Եվ քանի դեռ նոր գաղափարախոսությունն ու նրա հուշարձանները առաջին ինքնուրույն քայլերն էին կատարում՝ հեղինակների ու նրանց ունկնդիրների ներգործման ու ներշնչման առարկան պետք է բխեր ավանդական արժեքների հարթությունից: Հարուստ պատմական, բանահյուսական ու ազգագրական նյութը հնարավորություն է տալիս Աստվածաշնչյան որոշ սյուժեների և նրանց արձագանք երևացող անցքերի մեջ տեսնել ավելի հին՝ հիմնարար շերտեր, որոնք էլ կարող էին ավելի ուժեղ ազդակ ծառայել մի կողմից՝ Աստվածաշնչի առանձին մասերի, իսկ մյուս կողմից էլ՝ Ագաթանգեղոսի սյուժեների համար:

Գրիգոր Լուսավորչի լեգենդում նախ և առաջ ցայտուն է կերպարների ու սյուժեի երկփեղկվածությունը: Ջանազան կենցաղային պատկերների ու պնծանց բախման միջոցով է, որ դրսևորվում է գաղափարի դեմքն ու խորությունը: Գաղափարը մատուցվում է իրերի, մարդկանց, վիճակների զուգորդումով: Քրիստոնեության վեհությունը, հզորությունը, հանդուրժողականությունն ավելի շատ հիմնավորված են բևեռային պատկերներով, քան պաթետիկ (մասամբ, թերևս, հարատև մշակումների ու հավելումների արդյունք հանդիսացող) մենախոսություններով: Մարմնական ցավերն ու հոգու հաղթանակը տրված են դեռևս հին մտածողությանը բնորոշ գունային, կերպարային, բանականական, տարածական ու ժամանակային հակադրությունների միջոցով: Նյութի մատուցման՝ առաջին հայացքից պարզունակ և երբեմն անտրամաբանական թվացող ատաղձը Ագաթանգեղոսի Պատմության առավել հետաքրքիր հանելուկներից է: Դրվագներից մեկում, օրինակ, Գրիգոր Լուսավորիչը բացատրում է հին խորհրդանիշների ունայնությունը[11]: Հիմնավորելու համար «*զհրամանս Աստուծոյ, դարձուցանել զձեզ ի ստուգութիւն, ի ճշմարտութեան ճանապարհին*» Լուսավորիչը երկրային կռոտերին հակադրում է երկնային ուժը, բայց ինքնին հետաքրքիր է խոսքի մատուցման եղանակը. ունայնությունից «*դառնալ առ Աստուած կենդանի, որ արար զերկինս և զերկիր և զծով և զամենայն որ է ի նոսա...*»[12]: Հեղինակն աշխարհը դիտում է հեթանոսի աչքերով՝ այնքան սիրված Վահագնի ծնունդի կաղապարներով և երևույթներով[13]: Կարծել կարելի է, որ սա ժամանակի ու հեղինակի մտածողության եղանակն է կամ տուրք ավանդությանը: Հաջորդ՝ «*Եւ ետ կապել զնա ձեռս յետս, և արկանել գայլ ի բերան նորա...*» /69/ նկարագրության մեջ հարկավոր է զուգահեռներ տեսնել Նոր կտակարանին՝ «*Միաւսիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց... եղերուք այսուհետեւ խորագէտք իբրեւ օձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս: Զգոյշ լինիջք ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ յատեանս, եւ ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ...*» /Մատթ. Ժ 16-17/: Բառացի հասկանալիս գուցե անտեղի լիներ շեշտադրել գայլերին մատնված անգեն էակի ապրումները: Սակայն Աստվածաշունչն ունկնդրող առաջին քրիստոնյաների համար մոտիվն ուներ առնվազն երեք նշանակություն՝ բառացի (մարմնական), բարոյական (հոգեկան) և միստիկական (հոգևոր)[14]: Հետևաբար, զույգ սյուժեներում ներկայացված գայլերն ու գոհերը պետք է հին միջավայրում վերապրած ավանդական մակդիրներ լինեին: Ավազը հավասարապես վերաբերում է հաջորդ հատվածին, ուր Լուսավորչին



Գրիգոր Լուսավորիչը «կապեալ ոտիւք» (որմնանկար), Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ (Տ.Հոռենցի) եկեղեցի (գծապատկերային վերարտադրությունը՝ Ն.Թիեերիի)

«*կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք և կապեալ պարանոցաւ,* – նետելով, – *ի միրապն ներքին*»: Ի տարբերություն Նոր կտակարանի հիշյալ տողերի՝ այստեղ երիցս շեշտված է մարդուն արգելելը՝ ոտքից գլուխ, վարից վեր, ապա ներկայացված է Վաղարշապատ ձմեռելու մեկնող Տրդատ արքան /122/: Մարմնական մակարդակի վրա հակադրված են ոչ միայն կապվածն ու ազատը, այլև երկուսին հասած բաժինը. մի դեպքում՝ մոտալուտ մահը, մյուսում՝ երկրային հանգիստը: Հակադրության մեջ են նաև գույները ու ջերմությունը՝ մութ և այրող վիրապը և լուսավոր ու սառը ձմեռը[15]: Հաջորդ դրվագներում կայուն շարունակվում է հակադրությունների զուգակշիռը, միայն այն տարբերությամբ, որ հերոսն այժմ հաղթողի դիրքում է: Ժամանակ անց Գրիգորին հանեցին վիրապից «*և անդէն հանդերձս մատուցեալ զգեցուցին նմա*»: Սրա կողքին՝ «*Յայնմ ժամանակի... ելեալ թագաւորն յերամէ խոզից՝ դիւին առեալ ածէր ընդ առաջ նորա մերկ խայտառակ: Եւ նախարարքն արտաքոյ քաղաքին սպասէին նոցա*» /219/: Մի դեպքում՝ մերկ, հանդերձավորվող Գրիգորն է, մյուսում՝ «*մերկ խայտառակ*» Տրդատը: Առաջինը ելնում է մութ վիրապից, երկրորդը՝ «*ելեալ... յերամէ խոզից*»: Ջույգ կերպարները մի պահ հավասարակշռված են, բայց կրկին ուղիները հակադիր ընթացք են ստանում: Գրիգորին «*խնդրութեամբ առին գնացին յԱրտաշատ քաղաքէ, տանել ի Վաղարշապատ քաղաք*» հաղթված արքայի նստավայրը: Իսկ ինքը՝ արքան, այս ուրախ հենքի վրա կրկին խավարն ընկղմվելու սարսափով՝ «*առ վտանգի տարակոյսի ցատղն*»: Նրբորեն հակադրված են վիճակներն ու շարժման տրամագծորեն փոխված ուղղությունները: Սրա ականատեսներն ու դատավորներն են նախ՝ Տրդատը, ապա՝ նախարարները և հետո՝ նրանց թիկունքում կանգնած քաղաքը: Նույն ինքը, որ մոռացված էր, տեսանելի է, իսկ արքան, ընդհակառակը, խառնված է եղեգներին ու վայրի գազաններին:


Մթից ու մահվանից Լուսավորչի վերելքի ուղին հաջորդաբար անցնում է արքայից դեպի հեթանոսների ամբոխը: Մի անգամ ևս Գրիգորն անցնում է նույն ուղին, բայց շրջված հաջորդականությամբ ու հաղթական երթով: Այստեղ էլ անվնաս կանգնած Գրիգորն է՝ շրջապատված մոլեգին ամբոխով, ազատն ու անազատները, անհատն ու ոհմակը /220, 246/: Շուտով մեռածներից վերադարձած Գրիգոր Լուսավորիչը կշտամբում է արքային մեղսակից ամբոխին[16]: Նույն բառին տարբեր, նաև հակադիր, երանգավորում տալով՝ Լուսավորիչը շարունակում է. «*...և դուք զի մեռեալ էիք ի մեղս ձեր՝ անաւաղիկ մեռեալքդ ի ձեռն մեռելոյս կենդանանայք*» /251/: Ողջերը կենդանանում են

մեռածի կողմից[17]: Վիճակների, դիրքերի, միջավայրերի, բանակների ու գույների դուալիզմով է առանձնապես հարուստ հետևյալ հատվածը, որ խորապես ազդված է ինչպես Հովհաննի հայտնության դրվագներից, այնպես էլ տեղական հին արմատներից[18]: Սև այծերին բանականապես հակադրված են սպիտակ գառները, իսկ ելակետային նույն այս սևին՝ կրկին ջուրն անցած լուսագեղմ հոսանքը: Սրան էլ հաջորդում են թուխ գայլերը, որ քշվում տարվում են թևավոր լուսեղեն հեղեղով: Կարմիրը ծառայում է որպես սահմանային գույն մահվան ու կյանքի, սև և լուսավոր ափերի միջև[19]: Ագաթանգեղոսի Պատմությունում կիրառվող մյուս կառուցվածքային առանձնահատկությունը երևույթների պատկերավոր նույնացումն է. «*Եւ բղխեաց աղբիւր յորդաբուղխ, և հոսեցաւ ծաւալեցաւ ընդ դաշտս ամենայն, և ելից առ հասարակ՝ որպէս ակն բաւեաց: Եւ եղև ծով լի և կապուտակագոյն, և երկնագոյն երևեցաւ դաշտք առ հասարակ...*» /739/: Աղբյուրն ու աչքը ստանում են այլաբանական ընդհանրություն[20]: Հակադիր տարածական ոլորտները՝ երկիրն ու երկինքը, նրբորեն նույնանում են երկնային դաշտերի պատկերով: Կարծես մեր հեղինակը մտովի վերադառնում է նախնական տիեզերական վիճակին, երբ երկինքն ու երկիրը դեռևս անբաժան միասնության մեջ էին:

Նյութի կառուցվածքային առանձնահատկությունները և բովանդակության շերտերը մատուցելու Ագաթանգեղոսյան ոճը ճիշտ հասկանալու համար հարկ է ի նկատի առնել, որ վաղ միջնադարում ստեղծվող և սովորաբար բանավոր մշակույթից սնվող վարքաբանական բնույթի հուշարձանները գրական մշակման ենթարկված ու, հետևաբար, նոր որակի բանահյուսական գործեր էին: Դրանք շրջապատող իրերից ու երևույթներից դեռևս չէին առանձնացած ու դիտվում էին վերջիններիս հետ մի բնական ընդհանրության մեջ: Ուստի այս կարգի գրավոր գործերը տրված էին ոչ թե ուղղակի ընթերցանության համար, այլ որպես ուղենիշ, գլխավոր մոտիվ՝ քարոզչի ու կենդանի լսարանի կողմից ծավալելու, մեկնելու, վերապրելու, անցյալին առնչվելու նպատակով[21]:


Ագաթանգեղոսի Պատմության այս դրվագները՝ հագեցած բովանդակությամբ, հարուստ ներկապնակով ու դինամիզմով հանդերձ, ընդամենը արտաքին շղարշ են հիմնավոր շերտերի համար: Կենցաղային ձևավորում ունեցող մոտիվները հանկարծ լուսավորվում են զանազան դիցաբանական մանրամասներով կամ էլ ամբողջական հիմքով: Այս ներքին՝ թաքնված բանահյուսությունը երկակի արժեք ունի. այն, ինչ բանավոր վիճակում կազմում էր իմաստային բովանդակությունը, գրավոր հուշարձանում ընդունում է կառուցվածքային բնույթ, և այս կենտրոնական դիցաբանական կերպարը, աներևույթ լինելով հանդերձ, ապրում է փոխաբերությունների զանազան կաղապարների մեջ. այն կարելի է վերծանել, լույս աշխարհ դուրս հանել միայն արհեստականորեն[22]: Այս ներքին կառուցվածքը պարտադրված է հեղինակին այնքանով, որքանով նա մտածում է հին կերպարներով, բայց վերջիններս չեն կաշկանդում ստեղծագործական միտքը, այլ նպատակաուղղում են այն: Գայլ(եր)ի երախը նետված Գրիգոր Լուսավորիչը[23] և զուգահեռ ավետարանական սյուժեն ստանում են նոր խորհուրդ ու հնչեղություն: Դրանք կենդանանում են Ագաթանգեղոսյան մյուս դրվագում /740/ և համաշխարհային ծառի մասին հին պատկերացումների մեջ: Վերջիններիս համածայն, համաշխարհային ծառը բաժանված էր երեք հորիզոնների՝ արմատներ, բուն, սաղարթ: Դրանցից միջինի տարբեր հարկերը հատկացված էին առանձին սմբակավոր ու գիշատիչ կենդանիների՝ աստվածային գազանների[24]: Սև այծը գրավում էր բնի ստորին հատվածը, իսկ դրան համարժեք գեղմը կամ բուդդ Աստծու առաջ փռված զոհ ծածկոց էր[25]: Գայլի ու այծի զույգը սերտորեն կապված էր կյանքի ու մահվան շրջափուլի հետ[26] ու խորհրդանշում էր հերոսի ծնունդը[27]: Քանի որ գայլը գրավում էր ծառի միջին հատվածի բարձրագույն կետը՝ այն մյուս կենդանիների առնչությամբ ցուցադրում էր

հոգու վերընթաց շարժումը ծառի արմատներից դեպի սաղարթ (անդրաշխարհից՝ երկինք ու կյանք), օրինակ, օձ – եղջերու – այծ – գառ – գայլ – արծիվ հաջորդականությամբ: Ագաթանգեղոսյան տեսիլի գետը բաժանում է մեռածների ու ողջերի՝ սև այծերի – թուխ գայլերի ու սպիտակ գառների աշխարհները՝ սահմանազատելով արյան կարմրով: Այս վարագուրված սյուժեն նոր ուժ է հաղորդում տեսածին՝ ակնարկելով Գրիգորի շուրջ խմբվող մարդկային հոտի վերածնունդը: Դրա կողքին տեսիլի հեղինակային մեկնությունը /753-754/, որ գուցե ավելի ուշ հավելում է բուն գործին, պարզունակ ու միակողմանի է[28]: Այստեղ ակնարկվող երեք հորիզոնները մեկ այլ դրվատորում են ստանում «*կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք և կապեալ պարանոցաւ... և իջուցանել ի վիրապն ներքին*» /122/ տողերում. մարդը համադրվում է հավերժ կենդանի բույսի, իսկ նրա մարմինը՝ արմատների, բնի ու սաղարթի (*ոտիւք, ձեռօք, պարանոցաւ*) հետ: Սակայն սա չէ դրվագի հիմնական միտքը: Հնագույն ծեսը մահը ներկայացնում է աստատազրկման միջոցով: Գրիգորը զոհ էր՝ մատուցված հենց մշտադալար բույսին: Հին խեթական մի ծեսում «վայրի ոչխարը հավերժ կանաչ ծառի տակ արծակվեց, ընծառյուծը կարևոր տեղում արծակվեց, գայլն (էլ) վերևում արծակվեց, առյուծը ծառի հիմքի մոտ արծակվեց»[29]: Էյա համաշխարհային ծառի մոտ արծակված, ուստի և կենդանացած էակներին ծեսի նախորդ փուլում նույն տեղերում և նույն հերթականությամբ կապում էին: Գրիգոր Լուսավորչի իջեցումը վիրապ շատ ավելի ուժեղ տպավորություն է գործում հենց երիցս կապելու պատճառով: Մարդուն ոչ թե իջեցնում են ուղղակի ֆիզիկական վախճանի, այլ կանխավ դատապարտում են ծիսական մահվան (*կապեալ... և իջուցանել*)[30]: Քիչ անց /122/ տրված է կյանքի ու անդրաշխարհի (վիրապի) տարածական հակադրությունը. «*...խաղացուցանել զնա յԱյրարատ գաւառ, և տալ զնա ի դղեակ բերդին Արտաշատ քաղաքի, և իջուցանել ի վիրապն ներքին, որ անհնարին էր խորութեամբ, մինչև անդէն մեռցի: ...Եւ ինքն իսկ բազատորն խաղայր գնայր ի ձմերոց յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, ի Հայոց աշխարհ յարևելս*»: Թեև Վաղարշապատը Արտաշատից արևմուտք է տեղադրված, սակայն, հենց թաքնված բովանդակությանը տուրք տալով, Ագաթանգեղոսն ընտրում է միանգամայն օրինաչափ լուծում՝ Արտաշատի մութ վիրապին հակադրելով Վաղարշապատը «*յարևելս*»: «Սև» և «լուսավոր» քաղաքների ծիսական դիալեկտիկական կապն ավելի տեսանելի է Ագաթանգեղոսի հետևյալ տողերում, ուր Օտա նախարարն առաքված է դեպի վիրապ. «*Վասն կապելոյն Գրիգորի եկեալ եմ, տանել զնա*» /217/: Հյուծված Գրիգորը չի պատասխանում վերը կանգնած նախարարի գոչյունին «*ի ձայն մեծ*» /218/: «Մեռածը» և վերևում կանգնած ողջերը միմյանց չեն լսում ու չեն տեսնում: Պարանի մի ծայրը մահվան աշխարհում է, մյուսը՝ լույս: Այն



Գրիգոր Լուսավորչին «իջուցանել ի վիրապն ներքին» (որմնանկար), Անիի Ս.Գրիգոր Լուսավորիչ (Տ.Հոնենցի) եկեղեցի (գծապատկերային վերարտադրությունը՝ Ն.Թիերիի)

կտրված ու վերստին միացված է («*Եւ եկին բերին կարս պարանաց երկայնս և ստուարս, և կցեցին ի իջուցին ի ներքս ...*») /218/: Գրիգորը պինդ կառչելով այս կյանքի թելից, «*վաղվաղակի շարժեաց զպարանն, և բոմն հարեալ ունէր*» վեր է հանվում: Իրական վերելքը շեշտված է ծիսական՝ երկրորդ ծննդյամբ. «*և անդէն հաղերձս մատուցեալ զգեցուցին նմա*», միևչդեռ նույն համատեքստում թագավորի հանդերձազրկումը՝ «*նորա մերկ խայտառակ*» վիճակը, թագավորական նշաններից զրկում (հմմտ. 190) և հրաժեշտ է այս կյանքին /219/[31]: Այս զգեստավորումը հիմնավորում է հերոսի տեղաշարժը մութ Արտաշատ քաղաքից լուսավոր Վաղարշապատ: Նշված Ագաթանգեղոսյան սյուժեն աղերսներ ունի էպիկական զույգ հերոսների՝ մի քաղաքից հեռանալու (կամ արտաքսվելու), նորը կառուցելու և ապա ելակետը հաղթանակով վերադառնալու կաղապարի հետ[32] և նախորդում է հայկական էպոսի համարժեք գաղափարին[33]: Նույն միտքը քիչ անց /251/ ակնարկվում է Գրիգորի կողմից ծիսականորեն մեռածների կենդանացումով («*մեռեալդ ի ձեռն մեռելոյս կենդանանայք*»): Ներքին կառուցվածքի համար սա լիովին ընդունելի է, քանի որ կենդանի մարդիկ կույր են մեռածների, իսկ մեռածները՝ ողջերի նկատմամբ, ու շփումը նրանց միջև անհնարին է[34]: Ուշագրավ է ուղղաձիգ միջնորդված գործողությունների հաջորդականությունը. նախ՝ Աստված Գրիգորին «*ապրեցոյց ի մահուանէ, որ յաչս ձեր մեռեալ համարեալ էի, որպէս և*» Գրիգորը մեղավորներին կյանքի կոչի՝ «*ի ձեռն մեռելոյս* (հանձին Գրիգորի – Հ.Հ.) *կենդանանայք*» /251/:



Գրիգոր Լուսավորչին Խոր վիրապից հանելը (որմնանկար), Անիի Ս.Գրիգոր Լուսավորիչ (Տ.Հոնենցի) եկեղեցի (գծապատկերային վերարտադրությունը՝ Ն.Թիերիի)

Ագաթանգեղոսը բազմիցս շեշտում է խտոնիկ միջավայրը՝ թե՛ վիրապի և թե՛ եղեգնուտի առնչությամբ. «*վասն դժնդակ չարաշունչ դառնութեան տեղւոյն, վասն կարակուռ տղմին, օձախառն բնակութեան և խորութեանն*» /124/: Սա եռամաս տիեզերքի ստորին տիրույթն է («*... զերկնաւորս և զերկրաւորս, և զանդարամետականսն...*») /490/: Սա «*ի սանդարամետս անդնդոց*» է /735/, որտեղից մահկանացուն չի վերադառնում. «*...յօձիցն իսկ տեսեալքն նոյնժամայն սատակեալ իցէ*» /215/: Ուշագրավ է, ինչպես նկատել է Ն.Ադոնցը, որ Հին կտակարանի հունարեն բնագրի Դիոնիսոսը հայերենում թարգմանված է Սպանդարամետ[35]:

Բաքոսյան բնույթի աստվածություններին Գրիգորն ու Տրդատը մերձենում են նախ իրենց ծիսական մահվամբ ու կերպարանափոխվելու ունակությամբ: Դիոնիսյան տոների մասնակիցների նմանությամբ՝ բոլոր քաղաքացիները «*դիւահարեալք մոլեգնէին*» /213/: Ջանգվածային այս քաոսի մեջ անվնաս կանգնած Գրիգոր Լուսավորիչը շրջապատված է ինքնախոշտանգող մարդկանցով, որ «*դիւահարէին և փրփրէին առաջի նորա*» /220/, «*իջեալ ի գետին ընդ մոխիր բազալեալ*» /243/: Ինչպես Քաքոսը՝ Տրդատը ևս կենդանակերպ է, «*բայց... ի մարդկապէսն խօսելոյ*» /763/: Գրիգորին շրջապատած տառապյալ ամբոխը կարծես պաշտպանված է սրբազան շրջանով՝ աներևույթ ցանկապատված տեմենոսով: Այս սրբազան գոտին լքող մարդիկ դևերի ճնշմամբ ինքնախոշտանգվում էին /246/: Նույն լուսավորված դաշտն է առկա նաև Գրիգորի տեսիլում

/735/: Լույս աշխարհ ելնելուց հետո Գրիգորի խտոնիկ էությունը շարունակվում է նոր հանգամանքներում՝ մարդկանցից մեկուսանալով, մենակ չենք մտնելով /760/ ու հնձանում մի քանի օր միայնակ աղոթելով /224/: Ոչ պակաս տպավորիչ պետք է լիներ վաղմիջնադարյան ընթերցողի համար արքայի ծպտյալ վիճակը, որ սոսկ ֆիզիկական արատների բողարկում չէր. «*Այլ կայր պատեալ զերեսան գլխովն հանդերձ՝ արկեալ գիրեսս բոյծ, և կայր երևոյթ տեսլեամբ ի մէջ ժողովրդոցն*» /763/: Այն կարծես տեսանելի է դարձնում հին միաստեղիաները, սրբազան գոհարերության տեսարանները, որ կենդանու մորթուն փոխարինող գլխաշորով աշխարհիկ միջավայրից մի պահ մեկուսացած անձր գոհաբերության է կատարում: Միևչդեռ Պատմության մի հատվածում /744/ տեսիլի մեջ իջած երեք փոքր ու կենտրոնական ահռելի սյուները համեմատվում են հոգևոր հաստատության մասերի հետ, համատեքստը նախ երևույթը տանում է «պյատոնական» գաղափարների ոլորտը: Մեծ այան խարիսխը՝ բլրի մեծությամբ, ոսկուց էր, բոնը՝ հրեղեն, խոյակը՝ ամպեղեն, այն պսակող խաչը՝ լուսեղեն /736/[36]: Նյութերենը անցում է կատարում գաղափարների, ժամանակավորը՝ հավերժի: Հին ժողովուրդների, մասնավորապես, հույների պատկերացումներում դրանց համարժեք էին արտաքնապես միանման մարդիկ ու ոգիները, որոնց էական տարբերությունը ներքին խտության մեջ էր. մարդիկ նյութական էին, իսկ ոգիները՝ երերային կամ լուսեղեն[37]: Ուշագրավ է Ագաթանգեղոսի տված նյութական վիճակների սանդղակը. պինդ (ոսկի), հեղուկ (արյուն), պլազմա (հուր), լույս (հմմտ. կարմիր, ամպեղեն, հրեղեն, լուսեղեն /737/):

Վերը բերված դրվագների քննությունը պարզում է Ագաթանգեղոսի Պատմության բազմաձևանակ էությունը, մակերևույթին տարածված գրավիչ բովանդակության խորքում հիմնավորված հնագույն առասպելական շերտի առկայությունը: Վերջինս րոն սյուժեի հետ դաշինքի մեջ էր և օժանդակում, բազմակողմանի լուսավորում էր այն: Ավանդականի ու նորի այս ներդաշնակ համակեցությունն ավելի է կարևորում Պատմության ընդհանուր հորինվածքի կառուցվածքային սկզբունքների քննությունը: Միևնույն ժամանակ այն հնարավորություն է տալիս հիմնական իրադարձությունները քննել ոչ միայն վերջիններիս, անշուշտ, ներգործած բիբլիական ու վարքաբանական նյութի, այլև ընդհանուր դիցաբանական «թափառող» սյուժեների տեսանկյունից: Ջնով՝ կենցաղային դեպքերին աստվածաբանական արժեքավորում ու մեկնություն տալով հանդերձ, Ագաթանգեղոսի վեպում հավաքված զանազան մոտիվներն այնքան ներդրեն են միահյուսված ընդհանուր հենքին, որ ենթադրել են տալիս նրան նախորդած՝ հին ու հեղենիստական Հայաստանի լայնածավալ մշակութային դաշտում, Առաջավոր Ասիայի և Միջերկրածովի ավազանի ժողովուրդների միջավայրում ընդացած բանավոր ու գրավոր գործուն մշակումների փաստի գոյությունը[38]: Ստորև ներկայացվող զուգահեռ սյուժեներից մեր համար հիմնականի՝ Ագաթանգեղոսի Պատմության առանցքն ունի զարգացման հետևյալ ընթացքը: Տրդատ արքան տեղեկանում է, որ իր զինակից Գրիգորի հայրը արքայասպան Անակն էր (հանցանքի մոտիվ): Ջանգազան ծանր փորձություններից հետո Գրիգորը չի հրաժարվում իր հավատից: Նրան կապելով տանում են Արտաշատ և նետում դրյակի խոր վիրապը: 13 (15) տարի նա մոռացության է ենթարկված[39]: Երազ տեսնելով՝ *կին ոմն այրի* հանճն է առնում օրական մեկ հաց՝ «*ամենն ընկանակ մի արարեալ պատրաստական ընկենուլ ի ներքս ի խոր վիրապն*» /124/: Տրդատ արքան իր մեղքերի համար ոչ պակաս ծանր դատաստանի է ենթարկվում: Նրա քույրը՝ Խոսրովիդուխտը, երազ է տեսնում /214/, և այսպես մտաբերում են արքային ապաքինելու ընդունակ միակ մարդուն՝ բանտարկված հերոսին: Հետևում են նոր, ավելի սպառնալից տեսիլներ /216/: Արտաշատ ուղարկած մի նախարար ձայն է տալիս Աստծու ողորմությամբ ողջ մնացած Գրիգորին /218/: Լույս աշխարհ հանած

հերոսն այլակերպված է՝ սաստիկ հյուծված. «*...և տեսին զի թխացեալ էր մարմին նորա իբրև զածուղ սևացեալ...*» /219/[40]: Գրիգորին խնդությամբ տանում են Նոր քաղաք, և ճանապարհին նրան ընդառաջ է ելնում կենդանակերպ ու ցավերից տանջվող Տրդատը: Գրիգորն իր Տիրոջն ընդունելու պայմանով և երկնային օգնությամբ ապաքինում ու մարդկային կերպարանքի է բերում մոլագար քաղաքացիներին ու Տրդատ թագավորին: Նոր հավատը տարածվում ու հաղթանակում է:



Դանիելը առյուծների գրում

Հռչակավոր Զրադաշտը, նույնպես թագավորի հրամանով, փակվում է Zendani gah-ում, ուր մի բարեպաշտ ամեն օր հաց էր ձգում[41]: Աքեմենյան Արևելքի բնությանն ու պատմական դեպքերին հարմարեցված հայտնի սյուժեում զորավար ու կուսակալ Դանիելին կեղծ մեղադրանքով (մոտիվ) կանգնեցնում են թագավորի դատաստանի առաջ: Դարեհ արքայի հրամանով Դանիելին նետում են առյուծներով հորը: Մեղադրանքն այն է, որ Դանիելը փոխարեն արքայի, երկրպագել է իր աստծուն: Տերը փրկում է Դանիելին, իսկ արքան հրաժարվում է ընթրելուց ու խորտիկներից: Նույն Դարեհը, մտահոգված մոտենալով հորին, առավոտյան ուրախությամբ այնտեղից դուրս հանել է տալիս Դանիելին և ապա պատժում մեղավորներին: Արքան հրահանգում է հարգել ու պաշտել «*Աստուծոյն Դանիէլի*» /Դանիէլ Զ/: Դանիելը մեկնում է իր տեսիլքը /Է-Ժ/: Բուն՝ կենցաղային սյուժեի համար արհեստական ու պարտադրված են հետևյալ հանգամանքները. Դարեհը հրաժարվում է ընթրել, ուրախ է Դանիելին հորից հանելու համար, կոչ է անում պաշտել նրա Տիրոջը:

Նյութին առնչվող, բայց ավելի հին Աստվածաշնչյան մի այլ սյուժեում արտահայտված են վերոհիշյալ հիմնական մոտիվները. կոնֆլիկտը ծավալված է դեռ անհատի ու տարբեր անձանց ու խմբերի միջև: Ընդդիմադիր կողմերը չեն բնեռացված հակամարտ զույգի, իսկ հերոսին փորձությունների ենթարկող անձանց կողքին ակնարկված է նաև գազան: Չափազանց հարուստ, հավաքական այս պատմության հիմնական անցքերի համաձայն՝ Հովսեփը իր հոր՝ Հակոբի ամենասիրելի որդին է ու երազներում պայծառատես, հետևաբար՝ ատելի եղբայրներին (հանցանքի մոտիվ) (Ծննդ. ԼԷ 1-11): Վրայից հանելով ծաղկազարդ պատմուճանը, եղբայրները Հովսեփին նետում են անապատի հորերից մեկը: Սրանով եղբայրներից Ռուբենը կանխում է արյունահեղությունը: Հորը ջրազուրկ է: Եղբայրները նստում են հաց ուտելու: Հովսեփին հորից քաշել-հանելով, եղբայրները նրան վաճառում (գոհում) են: Եղբորը կորցրած Ռուբենը վշտից պատառոտում է իր հագուստները: Թաթախելով պատմուճանը զոհած ուլի արյան մեջ՝ եղբայրներն այն ուղարկում են հորը: Հակորը կարծելով, թե որդուն գազան է հոշոտել, պատառոտում է իր հագուստները, քուրձ կապում մեջքին ու սգում /ԼԷ 23-34/: Դահճապետի կինը օտար երկրում փորձում է գայթակղել Հովսեփին, վերջինիս շորերը կեղծ պատճառ են նրան բանտ նետելու համար. Աստված նրա հետ է /ԼԹ/: Հովսեփը մեկնում է երազներ /Խ, ԽԱ/, մարդկանց փրկում սովից ու տեղավոխում Եգիպտոս /ԽՋ-ԽԼ/:


Հերոդոտոսը մ.թ.ա. V դ. գրում է, որ գոթերը չեն մեռնում, այլ գնում են Սալմոքսիս աստծու մոտ: Սակայն ավելացնում է, որ Հելլեսպոնտոսի և Պոնտական հույներից

ինքը լսել է, որ այս Սալմոքսիսը եղել է մարդ և Պյութագորասի ստրուկը Սամոս կղզում: Ժամանակ անց՝ վերադառնալով հայրենիք, «Սալմոքսիսը հրամայեց կառուցել իր համար **ստորգետնյա հանգստարան**: Երբ այս հանգստարանը պատրաստ էր, Սալմոքսիսը **կորավ** թրակիացիների միջից, **հջավ ստորերկրյայք** ու այնտեղ ապրում էր երեք տարի: Թրակիացիներն էլ խիստ կարոտում էին նրան և ողբում՝ որպես մեռածի: Չորրորդ տարին, սակայն, Սալմոքսիսը նորից հայտնվեց թրակիացիներին, և նրանք այսպիսով հավատ ընծայեցին նրա **ուսմունքի** նկատմամբ»: Հերոդոտոսը լրացնում է, որ ինքը չի հերքում «նրա և ստորերկրյայքի պատմությունը, բայց և շատ էլ չի հավատում», այնուամենայնիվ ենթադրելով, «որ այդ Սալմոքսիսն ապրել է Պյութագորասից շատ տարիներ առաջ»[42]:

Սրանից չորս հարյուրամյակ հետո էլ հավատում էին, թե «ինչ-որ մի գոք՝ Զամոլքսիոս անունով, եղել է Պյութագորասի ստրուկը: Նա փիլիսոփայից ստացել էր որոշ տեղեկություններ երկնային երևույթների մասին, իսկ այլ տվյալներ էլ՝ եգիպտացիներից... Հայրենիք վերադառնալով, Զամոլքսիոսը իշխանների ու ժողովրդի մեջ պատվի արժանացավ՝ որպես երկնային երևույթների մեկնիչ: Վերջիվերջո նրան հաջողվեց թագավորին համոզել իրեն դարձնել գահակից, որպես մարդու, որն ընդունակ է **բացահայտել աստվածների կամքը**: Սկզբում նրան տվին միայն իրենց մոտ **ամենից պաշտելի** աստծու **քրմի պաշտոնը**, իսկ հետո՝ հենց իրեն հայտարարեցին աստված: Զամոլքսիոսն իր համար ընտրեց (քանակվայր) ինչ-որ բարանճավային տեղ, անմատույց ուրիշ մարդկանց համար, և այնտեղ էր անցկացնում կյանքը, հազվադեպ հանդիպելով մարդկանց, բացառությամբ թագավորի ու իր սպասավորների: Թագավորը նրան օժանդակում էր, տեսնելով, որ ժողովուրդն ավելի հոժար, քան առաջ, ենթարկվում է իրեն, համոզված, որ ինքը հրահանգները տալիս է աստվածների խորհրդով...»[43]: Անառարկելի ընդհանրություններ կան Գրիգոր Լուսավորչի ու այս վերջին երկու սյուժեների միջև[44]: Բերված օրինակներում դեպքերը զարգանում են արքայի և քրմի կամ էլ ճանաչված անձի շուրջ: Վերջինիս լավագույնս համապատասխանում է մի հունական լեգենդի հերոս՝ ոմն Արիստեոս, որը կորչում, ապա հայտնվում է Պրոկոնեսոսում, հետո էլ սրա ուրվականը հայտնվում է Ապոլոնի անունից՝ Մետապոնտոսում և, աստծու պատգամը հաղորդելով, չքանում կամ ընդունում ապոլոնյան ագռավի կերպարանք[45]: Թրակիական-հունական լեգենդներն, ինչպես տեսնում ենք, հիշատակում են Պյութագորասին, նրա ստրուկ Սալմոքսիսին և ապոլոնյան տիպի աստվածության: Իր՝ Պյութագորասի կենսագիրները պատմում են, թե նրա հոգին վերարձակվում էր տարբեր մարդկանց մեջ. նա հիշում էր նախորդ կյանքերի անցքերը, որով պարտական էր Հերմեսին: Սակայն ամենահետաքրքիրը մեր առարկայի համար՝ Դիոգենես Լաերտացու տեղեկությունն է. «...հայտնվելով Իտալիայում... Պյութագորասն իր համար **գետնի տակ** սարքեց բնակարան, իսկ **մորը** կարգադրեց գրի առնել տախտակների վրա այն ամենը, ինչ և երբ տեղի ունենա, իսկ **տախտակները գցել** իրեն, մինչև որ ինքն /այնտեղից/ դուրս գա: Մայրն այդպես էլ անում էր, իսկ Պյութագորասը, որոշ ժամանակ սնվելով, **դուրս եկավ**, դալկացած՝ ինչպես կմախք, ներկայացավ ժողովրդական հավաքին և հայտարարեց, թե իբր եկել է Հադեսից, ընդ որում՝ կարդաց այն ամենի մասին, ինչ որ կատարվել էր նրանց հետ: Կարդացածից բոլորը ցնցված էին, լալիս, հեկեկում էին, իսկ Պյութագորասին ընդունեցին որպես աստված...»[46]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մ.թ.ա. VI դ. ապրած կիսալեգենդար Պյութագորասի ժառանգության ճնշող մասը, բացառությամբ որոշ անունների ու անձնական զարտփարների, ստեղծված է ավելի ուշ՝ Պլատոնի և նորպյութագորականների կողմից[47]: Սա անխուսափելիորեն բերում է արևելյան միստիկական ակունքներին: Ա.Մատիկյանը իրավացիորեն նշում է, որ եթե ոչ իր փիլիսոփայական կառույցներով, ապա տեսություններում հին առասպելներ հա-

մադրելիս Պլատոնը, անկասկած, որոշ չափով ազդված է նաև Արևելքից[48]: «Պետության» մեջ՝ «Անդրշիրիմյան հատուցման մասին առասպել»-ին նվիրված գլխում բերված հետևյալ պատմությունը չափազանց ուշագրավ է: Պլատոնը գրում է, թե կիաղորդի «մի քաջ մարդու՝ ծնունդով պամփյուլացի Արմենիոսի որդի Էրի պատմությունը: Պատահում է այնպես, որ նա սպանվում է պատերազմում. երբ 10 օր անց սկսեցին հավաքել մեռածների արդեն բայքայված դիակները, նրան գտան դեռևս չքայքայված, բերին տուն, և երբ տասներկուերորդ օրը ձեռնամուխ եղան թաղման՝ նա, արդեն խարույկի վրա, հանկարծ լցվեց կենդանությամբ, իսկ վերակենդանանալով՝ պատմեց, թե ինչ էր տեսել այնտեղ...»[49]:

Թերևս հար և նման խորհրդավոր մի էրր է շոշափված շումերա-աքքադական դիցաբանության մեջ. անդրաշխարհի տիրակալ Էրեշկիգալի ամուսին Ներգալը հանդես է գալիս մի շարք էպիտետներով, իսկ մի դեպքում նա հայտնի է որպես Էրրայի ամուսին, բայց ավելի հատկանշական է, որ ինքը՝ Ներգալը, երկատված անդրաշխարհ գնալով, ստանում է Էրրա անունը, միևչդեռ, դուրս գալով, կրկին դառնում է Ներգալ[50]:



Գրիգոր Լուսավորչի տեսիլը (որմնանկար). Անիի Ս.Գրիգոր Լուսավորիչ (Տ.Հոնենցի) եկեղեցի (գծապատկերային վերարտադրությունը՝ Ն.Թիերիի)

Բերված սյուժեների ընդարձակ ընտրանին ցույց է տալիս, որ Առաջավոր Ասիայի ու Միջերկրածովի ավազանի ժողովուրդները քրիստոնեության շեմին ճանաչում էին խորհրդավոր հերոսի, որը աստվածային հրեշտակ-սուրհանդակ էր, սպանվում, բայց երկնքի հովանավորությամբ կրկին վերադառնում էր՝ մարդկանց հաղորդելու Աստծու կամքը: Վերոհիշյալ բոլոր սյուժեներում գործողությունների կիզակետը մի ստորգետնյա կառույց է (կամ ջրհոր)՝ դա ուղիղ կամ անուղղակի շոշափում է հաց և ջուր[51], հերոսը մարգարե է, աստվածների կամքի մեկնիչ ու պայծառատես, նա մերժված է կամ ավելի հաճախ՝ զոհ, մոռացված, բայց վերջում՝ ճանաչված վերնախավի ու ժողովրդի կողմից: Շատ հետաքրքիր է բանտարկված հերոսի գլխավերևում կանգնած պաշտոնյան կամ կինը, որը յուրահատուկ միջնորդ անձ է ողջերի աշխարհի և նրա միջև: Նրա կողմից ցած իջեցված սնունդը բազմանշանակ է, բայց որոշակիորեն կապված է կյանքի՝ նրա սերմի իջեցման հետ անդրաշխարհ և նրա մոտակա վերածնունդով: Խորհրդավոր հերոսի այս տարածված պատմություններում բնակության տեղը, կապված աշխարհագրական միջավայրի հետ, տարբերակված է հորերի ու ստորգետնյա կառույցների (Առաջավոր Ասիայի հյուսիս), ջրհորի (Հովսեփ, Դանիել), սակայն Միջերկրածովի առնչությամբ (Եգիպտոս, Հունաստան) դրսևորվում է բազմազանություն (ջրհոր, արհեստանոց, հոր): Հետաքրքիր է դրանց բազմանշանակությունը Վանի՝ Տոթքունիր կոչվող բուժիչ հատկություններով օժտված ջրհորի օրինակով[52]: Միջնորդ անձը շատ է հիշեցնում դեռևս հին խեթական ծիսակարգում բազմիցս հիշատակվող գերագույն քրմուհուն[53]: Կարևոր է Լուսավորչի տեսիլի համեմատությունը առաջին հայացքից բոլորովին այլ զարգացում ունեցող

սյուժեների հետ: Այս առումով Ագաթանգեղոսի հաջորդ դրվագը թվում է՝ ավելի հեռացած է բուն բովանդակությունից և տուրք է Հովհաննի հայտնության պատկերավոր կերպարանափոխություններին: Գրիգորը լսում է սաստիկ ձայն ու դղրդյուն, երկնքից իջնում է մի լուսավոր այր /733/: Լուսավորիչը տեսնում է երկնային դրախտը, Տիրոջ սպասավորին /734-735/, մեծ և երեք ավելի փոքր հրեղեն սյուներ /736-737/, աստվածային գահը /738/, զոհասեղաններ /739/, գետի երկու ափերին արածող կենդանիներ ու գայլեր /տե՛ս վերը և 740/, լսում է այս պատկերների մեկնությունը հրեշտակի կողմից /741-754/, ընդունում է Տիրոջ պատգամները /755/, և տեսիլը ցնցումներից հետո լուսաբացին ծածկվում է[54]:

Հունական աշխարհում՝ Թեբե քաղաքում Պենթևս արքան անտեսում է գուշակ Տիրեսիոսի նախազգուշացումը և խոչընդոտում դիոնիսյան ծեսերի իրականացմանը: Ապա եղևնու ծայրին ծպտված արքան իջեցվում ու հոշոտվում է ցնորված թափորի, նաև իր մոր կողմից[55]: Գրկին կա մռռիվ (Դիոնիսոսը անկարգություններ է սարքում թագավորի նստավայրում): Կա պատիժ՝ աստվածությունը կալանված է ստորգետնյա չինության մեջ: Արքան առնչվում է գուշակության հետ (Տիրեսիոս): Արգելված է օտար ծեսերի իրականացումը: Արքան ծպտված է: Նա խոշտանգվում է: Դիոնիսոսը ննջում չդրայականպ է, մեկ արձակված, մեկ էլ այլափոխվում է զոհ կենդանու: Մինչև այստեղ սյուժեն իմաստաբանորեն լիովին համարժեք է Գրիգոր Լուսավորչի առանցքային պատումին: Թվում է՝ որևէ մեկի օգնության կարիք Դիոնիսոսը չի զգում, սակայն ներմուծված Սեմելեի կերպարով սյուժեն ընդհանրություններ է ստանում Գրիգորի ու բիբլիական նահապետ Հակոբի տեսիլների հետ. երկիրը ցնցվում է, Սեմելեի շիրմի վրա գոյանում է վիթխարի հրեղեն սյուն, լուսավորում է պալատը: Քաղաքի շենքերն ավերվում են, մեռած, քնած, արգելափակված Սեմելեի ստորգետնյա կառույցը՝ գերեզմանը և նրանից վեր տարածված քաղաքը դառնում են Դիոնիսյան նոր ծեսերի կենտրոն: Բավական հին ծագում ունեցող այս սյուժեն օրգանապես միահյուսում է Գրիգորի և Տրդատի առանցքային սյուժեն Լուսավորչի տեսիլի հետ: Այն, ինչ Ագաթանգեղոսի տեքստում կառուցվածքային՝ սյուժետային մակարդակի վրա տրոհված ու ցրված է, բայց ունի հզոր ներքին կապ՝ իմաստաբանորեն նույնանական, հունական տեքստում միանգամից շաղկապված է: Ագաթանգեղոսյան և բիբլիական սյուժեները շատ ավելի հին ու հարազատ են ելակետային նյութին, քան Օվիդիոսի միածույլ սյուժեն:

Նույն այս առանձնահատկությունները նկատելի են առաջին հայացքից վերոհիշյալ նյութից բավական հեռու Ավետարանական մի հատվածի մանրապատումում /Յովհ. Դ 6-19/: Դեպքերը կատարվում են Հակոբի ջրհորի մոտ: Սամարացի կինը հրաժարվում է Քրիստոսին ջուր տալ: Ակնարկվում է ջրհորի խորությունը: Ջրհորի մոտ երկուսն են: Հիսուսը ծարավ է, բայց դույլ չունի: Հանցանքը կնոջ վարքի մեջ է (նա վոխել է հինգ տղամարդ): Ջրուցակիցը գուշակ ու մարգարե է, նոր կրոն տարածող: Սյուժեում կան հաց և ջուր: Մանրամասներով և իմաստաբանորեն հիշյալ լեգենդներից ամենասերտ առնչություն ունեն Լուսավորչի և Պյութագորասի սյուժեները, իսկ սամարացի կնոջ պատմությունը՝ սրանց արձագանքն է: Հարցն՝ ուղղված ընդերք, նկանակը գցած հորը, հաց և ջուր են, տրված երկնքից՝ վերահմաստավորելու և վերադարձնելու նպատակով: Սա լավագույնս բացահայտված է Քրիստոսի խոսքերով[56]: Մի պահ վերացարկելով բիբլիական շերտից և դիմելով ավելի ընդհանուր ու չեզոք տիպաբանական ոլորտին, կարելի է համաձայնել, որ Ագաթանգեղոսի Պատմության առանցքը հմտորեն հյուսված է լայնորեն տարածված երեք սյուժեներից: Դրանք են. ա) աստվածների կողմից ուղարկված ոգիների կամ գիշատիչների միջոցով փորձության ենթարկվող Կուլտուրական հերոսը, բ) մերթ ձեռք-ձեռքի տված, մերթ ընդդիմադիր գործող Երկվորյակները, գ) մեռնող ու հարություն առնող Աստվածությունը: Հին աշխար-

հում սրանք այնչափ էին սերտաճած ու ճյուղավորված, որ շատ էպիկական կամ չափածո բնույթի ստեղծագործություններում, հեքիաթներում արդեն իսկ միավորված են գործող կերպարներում (Սեթ-Օսիրիս, Գիլգամեշ-Էնկիդու, Արա-Շամիրամ և այլն): Ունենալով ընտրության լայն հնարավորություններ, Ագաթանգեղոսը, դատելով վեպից, տրոհում, հղկում ու ապա նորից վերախմբավորում է նշված սյուժեները: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված էր թե՛ ժամանակի հրամայականով, թե՛ պատմականին ներածին չափ մոտեցնելու պարտավորվածությամբ և թե՛ ազգային ավանդություններով, բարոյահոգեբանական ու սոցիալական զանազան գործոններով:

Որոշակիորեն վեպում առկա է նախնիների անեծքից հետապնդման ենթարկվող հերոսը[57], նրա փորձությունները, հայտնվելը խտոնիկ միջավայրում, ապա վերադարձը լույս աշխարհ: Գրիգորը միջնորդ է աշխարհների միջև և գործում է Տիրոջ նախաձեռնությամբ[58]: Գրիգորը իսկական կուլտուրական հերոս է և ունի վերջինիս բնորոշ բազում հատկանիշներ[60]. ժողովրդին ուսուցանում է ծեսեր, պարտադրում նոր հավատ, պայքարում դիվական կերպարանք ընդունող բնության խտոնիկ ուժերի դեմ (վիրապ, օձեր, կենդանակերպ Տրդատ, մոլագար ամբոխ, տաճարների դիվային պաշտպանները) և Աստծու կամակատարն է: Լուսավորիչը նաև մարմնավորում է մեռնող ու հառնող աստվածությանը բնորոշ գծեր[60]. թշնամացած է խավարի ուժերին, կրում է ժամանակավոր պարտություն, կորչում, նրան որոնելու է գնում հարազատ կամ օտար մի կին (Խոսրովիդուխտ, կին ոմն այրի), փրկում, վերածնում[61]: Գրիգորը հաղթում է իր հակառակորդին, հետո հեռանում մարդկանցից: Տրդատ թագավորի կերպարը, որոշ վերապահումներով, ևս հերոսական է և ընդհանրություններ ունի մեռնող ու հառնող աստվածության լեգենդների ընդհանուր հենքի հետ: Հատկանշական է, որ ստորադասված լինելով Գրիգորի կերպարին, նա վեր է հանում նույն կաղապարների ավելի հին շերտեր՝ աղերսներ ցուցաբերում մեռնող ու հարություն առնող գազանի հետ: Լուսավորչի լեգենդում մի հետաքրքիր միտում գոյություն ունի՝ միավորել գազանի մոտիվը լիտուրգիայի գաղափարի հետ: Անլիարժեք մարդը չէր համարվում ծիսական առումով մաքուր և զրկված էր լիտուրգիային մասնակցելու իրավունքից: Արքայական պարտականությունները նա լիտուրգիա են, և հանրահայտ պատմական դրվագում պարթևական գահի թեկնածուներից մեկը, մյուսի ականջը կծոտելով, նրան դարձնում է անլիարժեք, գահին հավակնելու անընդունակ: Ագաթանգեղոսի Տրդատը խնդրում է իրեն գոնե մասնակի ետ բերել նախնական տեսքի հենց այս իմաստով՝ ծիսական մաքրության ձգտումով /763, 767/: Արքան Մասիսից վեմեր է իջեցնում իր մեղքը քավելու համար: Մարդը փոխարինվում է գազանով՝ կրկին մարդակերպ դառնալու նպատակով: Այս շարքին է վերաբերում Միդաս արքան, որը Ապոլոնից, որպես պատիժ, ստանում է էշի ականջներ (տես նրանց կապը պատգամախոսի և անդրաշխարհի հետ՝ շշնջացող եղեգների առնչությամբ[62]): Շատ ավելի պարզաբանված է այս հանդերձափոխումը Կուխուլինի առասպելում. սպանելով շանը՝ սրա փոխարեն ինքը դառնում է պահապան, ստանձնում սպանվածի գործառույթները[63]: Անշուշտ, այս թեման Ագաթանգեղոսը շոշափել ու խմբագրել է, դուրս թողնելով Կուխուլինին զուգահեռ մի ուշագրավ լեգենդ, որը պահպանված է Գանձակեցու շնորհիվ[64]: Այստեղ Հովհան Մայրավանեցին, վերը հիշված շատ կերպարների նման, վիրավորված հեռանում է մարդկանցից. նրան ծառայող էշը սպանվում է արջի կողմից, իսկ վերջինս զոհի փոխարեն ծառայության է անցնում Հովհանի մոտ: Սա էլ որսորդներից է սպանվում ու թաղվում մի փոսի մեջ: Արջի և Հովհանի գերեզմաններից վերցված հողը բուժիչ էր: Շատ իրար նման են հայկական ավանդապատումների արջերը, որոնք ծանր վեմերով եկեղեցիներ են կառուցում, և Տրդատը, որը նույն նպատակով Մասիսից վեմեր է իջեցնում: Իր հերթին, գազանի ու երկրագործական մոգության հետ է առնչվում կախարդ-թագավորի


սպանության ծեսը, որ Պատմության մեջ դրսևորվում է եղեգների մեջ նետված կենդանակերպ արքայի մոտիվով: Վերջինս ծիսական զոհ է և աստվածային գործիք՝ ուղարկված երկիր, փորձելու համար Գրիգորին ու ժողովրդին: Նա անդրաշխարհի մարմնավորումն է վարազի կերպարով[65] և աստվածային կենդանի է[66]: Եթե հին դիցաբանական հերոսը վարազին սպանելուց կամ նրան հետապնդելիս սպանվելուց հետո է հայտնվում անդրաշխարհում[67], ապա Ագաթանգեղոսի սյուժեն դա ներկայացնում է շրջված տեսքով, և Գրիգորի փորձությունը նախորդում է վարազ դարձած արքայի խայտառակությանն ու ցավերին: Երկուսի հակադրությունը վեպում բազմանշանակ է: Հեղինակը կարեկցում է երկուսին էլ: Նրանց միավորում է ոչ միայն հայելային կապը, այլև կյանքի ընդհանուր առմամբ միանման ընթացքը. նրանք դատապարտված են մեղքերի համար զոհ են ու վերածնվող կերպարներ: Երկուսի կերպարների անջատումով ու զուգորդումով հեղինակը մի պատմության մեջ վարպետորեն միավորում է վերածնվող հերոսին և «երկվորյակներին»: Կառուցվածքային առումով Պատմությունը երկու առանձին վերցրած հերոսների զուգահեռ զարգացող շարադրանք է: «Երկվորյակների» Հայաստանում տարածված սյուժեն չափազանց կարևոր էր և ուներ դուալիստական հասարակարգով ապրող երկրի համար գաղափարախոսական նշանակություն: Կարելի է մեջբերել Մովսես Խորենացու հիշած Երվանդի և Երվազի զույգը[68]: Նույնությամբ Տրդատն ու Գրիգորը դուալիստական կառավարողներ էին, և Խորենացու Պատմության մեջ ձեռք-ձեռքի տված մաքառում, հեռանում են այրերը և, մեկուսանալով մարդկանցից՝ հեռանում կյանքից[69]: Ագաթանգեղոսի գործում նման ողբերգական ավարտը, այն էլ երկուսի մասնակցությամբ, չէր համապատասխանում գործի պահանջներին: Ուստի, հարգելով ավանդական մշակույթի կանոնները և օգտվելով նրա բոլոր սիրված մոտիվներից, Ագաթանգեղոսը մեկը դարձնում է մեռնող ու հառնող աստվածությունը, որը երկակի ազդեցություն ուներ լսարանի վրա: Մի կողմից՝ դա լիովին ազգային երևույթ էր, խորհրդավոր արևելցին կամ հայը ընդունված էին մի ընդարձակ տարածքի վրա՝ Առաջավոր Ասիայում և Միջերկրածովում, մյուս կողմից՝ այն հիմնավորում էր Հիսուս Քրիստոսի կերպարը և զուգորդվում նրա հետ:



Գրիգոր Լուսավորիչը և վարազի կերպարանքով Տրդատ Մեծը:

Ագաթանգեղոսի Պատմության հերոսը, արքան, գազանը ներկայացնում են ժամանակագրական շերտեր, զուգահեռ տրվող համարժեք այլաբանություններն են, որոնցով հիմնավորված է Պատմության ընդհանուր բովանդակությունը: Վերին մակարդակում (մեռնող ու հարություն առնող աստված) նույնացված են Գրիգոր Լուսավորիչը, մասամբ Տրդատը և խորհրդավոր արևելցին՝ հիմնավորելու համար Քրիստոսի տեղական ծագումը: Հերոսի շերտում Գրիգորի, Խոսրովիդուխտի և նկանակներ ձգող կնոջ կերպարները, անկասկած, արտացոլված են Վահագն-Աստղիկ-Անահիտ՝ Աշտիշատում միասին պաշտվող եռյակից: Ավելի ներքև թաքնված գազանի ու եղեգնուտի միջոցով կաղապարված է նույն Վահագնը: Վերջապես, Ագաթանգեղոսի և (հատկապես Խորենացու մոտ բացահայտված) այրեր հեռացած հերոս(ներ)ը դրսևորում են տիպիկ միհրական ժայռեր մտնող կերպարի գծեր՝ նախապատրաստելով Սասնա Միհրին: Ագաթանգեղոսի գործի պարադոքսն այն է, որ նոր գաղափարը և ավետարանական սյուժեները մատուցված են լիովին ազգային արժեքների միջոցով: Ուստի այն, ինչ վերագրված է Լուսավորչի բոնի գործունեությանը, չի համապատասխանում խոշոր

գործչի իրական կերպարին: Պատմության և՛ ներքին բազմաշերտ բովանդակությունը, և՛ նույնքան միաձույլ ընդհանուր կառուցվածքը լիովին ավանդական նկարագիր ունեն: Լայնածավալ տարածքներում ժողովուրդները լի էին փրկչի գալստյան, չարչարանքների ու հարության սպասումներով: Յուրաքանչյուր ժողովուրդ, այդ թվում և հայերը,



Գրիգոր Լուսավորիչը այլում (որմնանկար), Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ (Տ.Հոռենցի) եկեղեցի (գծապատկերային վերարտադրությունը՝ Ն.Թիերիի)

նրան վերագրում էր տեղական պատկանելություն, հիմնավորելով դա իր ավանդությամբ. Գրիգոր Լուսավորիչը, եթե նույնիսկ մասամբ նրա կյանքը նմանվում է ազատագրկված ու հաղթանակած կերպարի (իսկ դրանում առայժմ մեծ կասկածներ չկան), անխուսափելիորեն պետք է հայտնվեր այս մշակութային կաղապարի մեջ, դառնալով մարդ-լեգենդ:

Ծանոթագրություններ

1 Տե՛ս Հ. Յակովբոս Տաշեան, Ագաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին և ուսումնասիրութիւն Ագաթանգեղեայ գրոց, Վիեննա, 1891:

2 Տե՛ս **A. von Gutschmid**, Agathangelos, "Kleine Schriften", B.III, Leipzig, 1892, SS. 339-420

3 Տե՛ս Գ.Տէր-Մկրտչեան, Յիշատակ Դատակնքած Գորիա և Շմոնի վկայից, «Արարատ», 1896, 8, էջ 385-392, 9, էջ 425-440: Նույնի՝ Յիշատակ Դատակնքած Գորիա և Շմոնի վկայից որք վկայեցին Յուտիա, «Հայագիտական ուսումնասիրություններ», Ա, կազմ. և խմբ. Պ.Հ.Հակոբյան, Է.Ա.Պիվազյան, Երևան, 1979, էջ 298-339:

4 Տե՛ս Մ.Աբեղեան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908: Նույնի՝ Հայոց հին գրականության պատմություն, Ա, Երևան, 1944:

5 Տե՛ս **Н.Я.Марр**, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (Арабская версия), СПб, 1905, с. 158.

6 Տե՛ս անդ: **G.Garitte**, Documents pour l'Etude du Livre d'Agathange, Vaticano, 1946.

7 Տե՛ս Ն.Ադոնց, Հին հայոց աշխարհայեացքը, "Պատմական ուսումնասիրութիւններ", Փարիզ, 1948, էջ 223-293:

8 Տե՛ս Կ.Մելիք-Օհանջանյան, Ագաթանգեղոսի պատմությունն ու նրա ժողովրդական բանավոր սկզբնաղբյուրները, «Մառը և հայագիտության հարցերը», Երևան, 1968, էջ 107:

9 Տե՛ս Հ. Պօղոս Անանեան, Քրիստոնէութեան հետքեր Հայաստանի մէջ Ս.Գրիգոր Լուսաւորչի քարոզութենէն առաջ (պատմական ուսումնասիրութիւն), (Հայագիտական մատենաշար «Բազմավէպ», 14), Վենետիկ, 1979:

10 Օրինակ, Դանիելին առյուծներով լի հորը գցելը /Դանիէլ, Ջ 16-18/ և Տրդատի կալաքը, /Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ.Տէր-Մկրտչեան եւ Ստ.Կանայեանց, Թիֆլիս, 1914, 69/:

11 *«...և ի բաց լինել ձեզ յումայնութեան պաշտամանց անտի, ի քարեղէն, ի փայտեղէն, յարծաթագործ, ի պղծագործ պատկերաց այտի, որ ոչ ինչ իսկ են և ոչ ու մեք պիտանացու...»* /Ագաթանգեղոս, 261/:

12 Աճդ /այսուհետև՝ տեքստում/:

13 Տե՛ս **Т.Б.Гамкрелидзе, В.В.Иванов**. Индоевропейский язык и индоевропейцы, II, Тбилиси, 1984, с. 503; **C.Watkins,** The Indo-European family of Greek orkhis: Linguistics, poetics and mythology, "Indo-European Studies", II, Cambridge, MA. 1975, p. 518; **G.Dumézil,** Heur et malheur du guérier. Aspects mythiques de la fonction guerrière chez les Indo-Européens, Paris, 1969.

14 Տե՛ս С.С.Аверинцев, Поэтика ранневизантийской литературы, М., 1977, с. 96.

15 Պարադոքսալ միջոցով դրական տարր և բացասական սառը փոխատեղված են:

16 *«Չի և ձեր իսկ արկեալ զիս ի խոր վիրապն, ...և եկեալ անտի ողջանդամ կամօքն Աստուծոյ: ...Վասն զի զիս ապրեցոյց ի մահուանէ, որ յաչս ձեր մեռեալ համարեալ էի, որպէս և դուք իսկ ձեզէն վկայէք ինձ»* /251/:

17 Համմտ. *«Աստծու որդին դառնում է մարդու որդի, որպեսզի մարդու որդին դառնա Աստծու որդի»*, Իրինեոս, Ավետարան ըստ Մատթէոսի, 18,9. Տե՛ս С.С.Аверинцев, ук. соч., с. 78:

18 *«Եւ տեսի հոտս անթիւս այծեաց ի գոյն սևութեան, որք անցեալք ընդ ջուրն՝ յոյիս դարձան. և զգոյնս իւրեանց ի կերպարանս սպիտակութեան շրջեցին, և լուսակիզն ասրճ փայլէր առ հասարակ, մինչև ճառագայթք հատանէին ի նոցանէն: Եւ մինչ դեռ նայէի ևս՝ յանկարծակի ծնան հոտքն և բազմացան, և ծնունդքն լցին զվայրսն. և ծնեալ զառինքն ամենայն լուսակիզն էին: Իսկ յանկարծ այլ ծնունդք յաճախեցին բազմացան, և կէսքն անկեալ ելին յայնկոյս ջրոյն: Եւ զառինքն գայլք եղեն բուխք, և յարձակեցան ելին ի մէջ հօտիցն, և սկսան կոտորել, և եղեն արեան ճապաղիք: Եւ մինչ դեռ նայէի՝ և տեսի, և բուսան թևք հօտիցն, և եղեն թևաւորք, և վերացան խառնեցան ի գօրս լուսեղէնս: Եւ յարեաւ հեղեղ հրեղէն, և արկեալ տարաւ զգայլսն»* /740/:

19 Կարծես Ագաթանգեղոսին քաջ հայտնի են պյութագորյան տաս հիմնական հակադրությունները (վերջավորն ու անվերջը, կենտն ու զույգը, մեկն ու բազմությունը, աջն ու ձախը, արականն ու իգականը, անշարժն ու շարժվողը, ուղիղն ու ծուռը, լույսն ու խավարը, բարին ու չարը, քառակուսին ու երկայնածիգ քառանկյունը), և մեր հեղինակը առատորեն շաղ է տալիս սրանց օրինակները, հասնելով դրանով իսկ հակադրությունների միասնության, այն է՝ ներդաշնակության (տե՛ս А.Ф.Лосев, История античной эстетики: поздний эллинизм, М, 1980, с. 16): Բավական է հաշվի առնել սա՝ Պատմությունը բաղդատելու համար հելլենական ու անտիկ հռետորական արվեստի ու դրանց անմիջական ժառանգորդ բյուզանդական, այդ թվում նաև արևելաքրիստոնեական բանավոր խոսքի բովանդակության ու ձևի: Դրան բառացիորեն անդրադառնում է Խորենացին՝ իր Պատմության II գրքում:

20 Աստվածային (օրինակ Օդինի) եզակի աչքը հաճախ ներկայացվում է աղյուրի տեսքով, արտացոլելով հնդեվրոպական ու սեմական լեզուներում աչքն ու աղբյուրը միասնման (ակն) կոչելու սովորությունը (տե՛ս В.В.Иванов, Глаз, "Мифы народов мира", т.1, 1982, М., 1982, с.306-307):

21 Տե՛ս И.С.Свенцицкая, Апокрифические евангелия новозаветной традиции, "Апокрифы древних христиан", М., 1989, с. 10-11.
22 Տե՛ս О.М.Фрейденберг, Миф и литература древности, М., 1978, с. 16,49.
23 *«Եւ ետ կապել զնա ձեռս յետս, և արկանել գայլ ի բերան նորա...»* /69/:
24 Տե՛ս Т.В.Гамкрелидзе, В.В.Иванов, ук. соч., с. 490.
25 Տե՛ս В.В.Иванов, В.Н.Топоров, Исследования в области славянских древностей, М., 1974, с. 5, 31-34, 138.
26 Տե՛ս В.Г.Ардзинба, Ритуалы и мифы древней Анатолии, М., 1982, с. 67.
27 Տե՛ս Г.Арешян, Индоевропейский сюжет в мифологии населения междуречья Куры и Аракса II тысячелетия до н.э., "Вестник древней истории", 1990, 4, с. 95.
28 Միմչդեռ Ագաթանգեղոսն ու Ավետարանիչը հենց հին աչքերով են տեսնում *«...առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց... եղերուք այսուհետեւ խորագետք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս...»* (Մատթ. Ժ 16) տողերի ներքին շարժումը:
29 Т.В.Гамкрелидзе, В.В.Иванов, ук. соч., с. 487.
30 Համմտ. *«իսկ Արդիեսին և մյուսներին կապեցին ձեռքերից ու ոտքերից, նրանց վզերին օղակ հագցրին, գլորեցին գետին, ...ասում էին թե կգցեն Տարտարոս»* (Платон, Государство, Сочинения в трех томах т.3, ч.1, М., 1971, X, 616a).
31 Թագավորի ու մյուսների ձեռքով բերած *«հանդերձս սուրբս պատանաց»* Գրիգորը հրաժարվում է ընդունել, և նահատակներին հանդերձավորում է իրենց պատառոտած հանդերձներով /224/: Երևույթն ունի ծիսական իմաստ. մարմնին համեմատված հագուստը առաջինիս հետ միասին զոհ էր երկնքին՝ ընդունակ վերակենդանացման: Թագավորը, նախարարներն ու մյուսները, ձեռքով օձիքները բռնելով, պատռում էին պատմուճանները, թավալվում մոխրի մեջ. *«...զձեռս զօձիսք արկեալ՝ զպատմուճանսն պատառէին...»* /243/՝ կարծես սպասելով վերահանդերձավորման ու վերակենդանացման:
32 Տե՛ս **G.Dumézil**, Archaic Roman Religion, I-II, Baltimore, L, 1970, p. 207; Ա.Պետրոսյան, Հայ էպոսի հնագույն ակունքները, Երևան, 1979, էջ 24-28:
33 Համմտ. Սասնա լեռներում՝ «Սև սարում» երկվորյակների կառուցած քաղաքի հետ /Մ.Աբեղյան, Երկեր, Ա, Երևան, 1966, էջ 333/: Տե՛ս նաև Հռիփսիմյանների առնչությամբ՝ Ագաթանգեղոս, 150 *«զային հասանէին... ի Վաղարշապատ քաղաք ... Նորաքաղաքն»*, ուր բնակավայրն ընկալվում է բառացի և անուղղակի:
34 Տե՛ս В.Я.Пропп, Исторические корни волшебной сказки, Л., 1946, с. 59-61; В.В.Иванов, В.Н. Топоров, ук. соч., с. 126-130.
35 Տե՛ս Ն.Ադոնց, նշվ. աշխ., էջ 260, *«Իբրեւ տօն հասանէր սպանդարամետական պաշտամանն, տագնապէին զնոսա՝ պահանջս բաւ վոտոր Սպանդարամետին կաթուղ»* (Մակաբ. Բ, 6, 7):
36 Երեք ավելի փոքր սյուները վարից վեր բաղկացած էին արյունից, ամպից, հրից և լույսից (խաչ):
37 Տե՛ս А.Ф.Лосев, Греческая мифология, "Мифы народов мира", т.1, с. 328-329.
38 Հայ բանահյուսական նյութն այստեղ ունի իր պատվավոր տեղը, և դրա մանրամասների վերհանումը, որ առջևում է, կարող է շահեկանորեն հենվել հայագիտության տեսական կառույցների վրա (տե՛ս Մ.Աբեղյանի, Կ.Մելիք-Օհանջանյանի, Գ.Տեր-Սկրտչյանի և այլոց նշված աշխատությունները):
39 Ըստ Ն.Ադոնցի՝ 13 կամ 15 ամ պետք է վերախմբագրել ամիս (տե՛ս Ն.Ադոնց, նշվ. աշխ., էջ 272-273):
40 Աձուխն ու սևանալը կապված են անդրաշխարհի և Աստիսին համարժեք երկաթյա թոնրի հետ, ուր վերջինս մնաց 13 ամիս, (տե՛ս անդ, էջ 272):
41 Տե՛ս **F.Rosenberg**, Le Livre de Zoroastre. Zaratustnama, 1904, p. 49 (հղվում է ըստ՝ Ն.Ադոնց, նշվ. աշխ., էջ 272):
42 Геродот, История в девяти книгах, М., 1970, IV, 94-96.
43 Страбон, География в 17 книгах, пер., статья и комм. Г.А.Стратановского, М., 1964, VII, 3, 5.
44 Տե՛ս Ն.Ադոնց, նշվ. աշխ., էջ 268-271:
45 Տե՛ս Геродот, IV, 14-15.
46 Диоген Лаэртский, О жизни, учениях и изречениях знаменитых философов, М., 1986, с. 317.
47 Տե՛ս **W.E.Frank**, Plato und die sogenannten Pythagoreer, Halle, 1923; А.Ф.Лосев, История античной эстетики, поздний эллинизм, с. 10.
48 Տե՛ս Հ. Աղեքսանդր վ. Մատիկեան, Արայ Գեղեցիկ, համեմատական-քննական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1930, էջ 267:
49 Платон, Государство, X, 614b. Խնդրին առաջինը հայագիտության մեջ անդրադարձել է Մ.Էմինը /տե՛ս Մ.Էմին, Վէպք հնոյն Հայաստանի, Մոսկվա, 1850, էջ 85-88/: Հիմնական մատենագիտությունն ու զուգահեռները տե՛ս Ա.Մատիկեան, նշվ. աշխ., էջ 255, 256-276: Ղուկասի Ավետարանում Էրը հյուսն Հովսեփի նախնին է /Գ 28/, Կլեմենտես Ալեքսանդրացին Էրին նույնացնում է Զորոաստրես (Զրադաշտ)-ի հետ /տե՛ս Ա.Մատիկեան, նշվ. աշխ., էջ 258/: Պրոկլը նշում է. «Բայց գիտեմ, որ մարդիկ էլ կան, որ Էրին հայ են համարում. սակայն սրանց հարկ է հարցնել, թե ինչպե՞ս կարող է պատահել, որ ծնունդով հայը պամփիլյացի լինի: Մեր մոտ այս կարծիքին են նաև նշանավոր մարդիկ» /տե՛ս անդ,

էջ 262/: Պլութարքոսը նույն անունը շրջում է (Հ)Արմոնիոս /տե՛ս անդ, էջ 272/: Վաղ քրիստոնեական հեղինակներ Օրիգենեսն ու Մակրոբիուսը նույն պատմության միջոցով թերահավատների առաջ փաստարկում են Քրիստոսի հարությունը /տե՛ս Платон, Государство, с. 644, прим. 20/:
50 Տե՛ս В.К.Афанасьева, Нергал, "Мифы народов мира", т.2, М., 1982, с. 212.
51 Հունական ավանդության մեջ էլ՝ ջրի և հողի պահանջով հույների մոտ առաքված Քսերքսեսի դեսպանները սպարտացիները նետում են ջրհորը՝ պահանջելով այնտեղից բերել հող և ջուր /տե՛ս Геродот, V, 17; VI, 48-49; VII, 133/:
52 Տե՛ս Ն.Ադոնց, նշվ. աշխ., էջ 246-247:
53 Տե՛ս Б.Г.Ардзинба, ук.соч., с. 13.
54 Սա մեծ աղերսներ ունի նաև Ծննդոց գրքի՝ Հակոբի երազի հետ: Այստեղ էլ Հակոբը քնած ժամանակ տեսավ իր Տիրոջը, լսեց նրա պատգամները, որը ընդունելով, նահապետը դառնում էր նշված երկրի տերը, արթնացավ ու վերափոխվեց, իր գլխի տակ եղած քարը դարձրեց զոհասեղան ու նվիրեց Տիրոջը /ԻԸ 10-18/:
55 Տե՛ս Овидий, Метаморфозы, М., 1977, III, 511-733; А.А.Тахо-Годи, Пенфей, "Мифы народов мира", т.2, с. 300; Ն.Կուն, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Երևան, 1979, էջ 88:
56 Հիսուսը կնոջը պատասխանում է, թե ով որ այս ջրից խմի՝ նա կծարավի, *«բայց որ ըմպէ ի ջրոյն զոր ես տաց նմա, մի ծարաւեսցէ յաւիտենական. այլ ջուրն... եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխելոյ ի կեանսն յաւիտենականս...»* /Յովհ. Դ 13-14/: Ինչ վերաբերում է հացին, որ աշակերտները մատուցում են Քրիստոսին և աղաչում, որ նա ուտի, այն ստանում է հետևյալ իմաստը. *«Ես կերակուր ունիմ ուտել, զոր դուք ոչ գիտէք ... Իմ կերակուր այն է՝ զի արարից զկամս այնորիկ որ առաքեացն զիս, եւ կատարեցից զգործն նորա»* /31-34/:
57 Տե՛ս А.А.Тахо-Годи, Герой, "Мифы народов мира", т.1, с. 294-296.
58 Տե՛ս Е.М.Мелетинский, Герой, там же, с. 296-297
59 Его же, Культурный герой, там же, т.2, с. 25-28.
60 Տե՛ս П.А.Гринцер, Умирающий и воскресающий Бог, там же, с. 547-548.
61 Կորած կամ մեռած աստվածության սյուժեներում հայտնի կնոջ տեղական արտահայտությունն է Շամիրամը՝ նկանակներ գցող կնոջ մի նախատիպ: Նա կախարդ է, իսկ Արայի հարությունը՝ վիկություն /տե՛ս Ն.Ադոնց, նշվ. աշխ., էջ 232/:
62 Տե՛ս Овидий, XI, 85-193; М.Н.Ботвинник, Мидас, "Мифы народов мира", т.2, с. 149- 150.
63 Տե՛ս С.В.Шкунаев, Кухулин, там же, с. 31.
64 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխ. Կ.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, I, 55-56:
65 Տե՛ս Дж. Мелларт, Древнейшие цивилизации Ближнего Востока, М., 1982, с. 92.
66 Տե՛ս В.В.Иванов, Вепрь, "Мифы народов мира", т.1, с. 232-233.
67 Տիպիկ հնդեվրոպական հերոսի և ընդդիմադիր վարազի սյուժեները գրված են Միջերկրածովից մինչև Հնդկաստան. Տրիտան /տե՛ս В.В.Иванов, ук. соч., с. 232-233/, Աղոնիսը /տե՛ս **Macrobius**, Sat. I, 21. Ա.Մատիկեան, նշվ. աշխ., էջ 226/, Աստիսը /տե՛ս Ն.Կուն, նշվ. աշխ., էջ 256-259; Геродот, I, 43/, Մելեագրոսը /տե՛ս А.Я.Гуревич, Сигурд, "Мифы народов мира", т.2, с. 432-433/, կելտական հերոսը /տե՛ս С.В.Шкунаев, Кельтская мифология, там же, т.1, с. 633-637/, Դիրմայդը /տե՛ս Исландские саги. Ирландский эпос, М., 1973, с. 576-583/, Խարիշչանդրան /տե՛ս П.А. Гринцер, Харишчандра, "Мифы народов мира", т.2, с. 583-584/, Պիկը /տե՛ս Овидий, XIV, 360/, Դևերի փախուստը մարդկանցից խոզերի մեջ /Մատթ. Ը 28-33: Ղուկ. Ը 27-33/:
68 Տե՛ս Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ.Աբեղեան և Ս.Յարութիւնեան, Տփղիս, 1913, II, Խ, ԽԸ:
69 Տե՛ս անդ, II, ՂԱ, ՂԲ:

Ջեյմս Ռասսել
(Քեմբրիջ-Մասսաչուսեթս)

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մովսէս Խորենացիին, ըստ երևոյթին և ընդհանուր գիտական համոզման, Ստեփանոսի Սիւնեցւոյ շարադրութիւնն օգտագործելիս հետևեալ պատմութիւնն է հաղորդում. Թադէոս առաքեալը մկրտեց Սանատրուկ թագաւորին Հայոց, որի քեռին էր Աբգարը՝ թագաւորն Ասորւոց քաղաքին Եդեսիոյ, նոյնը, որ Փրկչի երեսով դրոշմած հրաշալի թաշկինակ ստացաւ, նոյնը, որի մասին Ղեբուբևայ Եդեսիացին այդ առասպելն է գրի առել ասորերէնով, նոյնը, որին Հայոց Պատմահայրը հայ է համարում: Թէև Աբգարը, ամենայն հաւանականութեամբ, արաբացի ծագումով ասորախօս էր, Ուռհայ քաղաքը հայահոծ վայր էր՝ իբրև կրթական և տնտեսական կենտրոն, իսկ յետագայում, խաչակիրների շրջանում, իրապէս հայ իշխանանիստ էր լինելու. այնպէս որ՝ Պատմահօր սխալ կարծիքը իրական կեանքի հանգամանքների վրայ հիմնաւորուած է: Նոյնիսկ եթէ Աբգարը հայ չէր, հայերը նրա փոքր պետութեան մէջ բնակւում էին և քրիստոնէական քարոզմանը, թերևս, ունկնդիր են եղել:

Վերադառնալով Սանատրուկին, արքան, նախասարարների ոխակալութիւնից վախենալով, երկար քրիստոնեայ չի մնում՝ որոշում է կռապաշտութեան հայրենի սովորոյթները չլքել: Սուրբ Թադէոս առաքեալը զայրացած հեթանոսների կողմից սպանւում է՝ իր կեանքը աւարտում նահատակութեամբ Շաւարշան նահանգում, որ յետագայում և ցայժմ Արտազ է կոչւում՝ ի Պարսկահայս: Այս առաջին սերմն հաւատոյ արգաւանդ հողի վրայ է ընկել, քանի որ Սանդուխտը, արքայադուստրը (անունը միջին իրաներէնով պարզապէս նշանակում է Սանատրկի դուստր, ինչպէս Սուրբ Գրիգոր Լուսաւորչի դայեակի անունը՝ Ռուրդար, համապատասխանօրէն Տանող է նշանակում, անկասկած գործ ունենք հեքիաթի որոշ տարրերի հետ), հաւատարիմ է մնում քրիստոնէութեան, և կատաղի ալագանին սատակում է նրան: Այսպէս մի հաւասարակշիռ հաշիւ է ստացւում՝ մէկը Քրիստոսամերձ, Փրկչով օծուած սերմնացան հաւատքի, և մէկը՝ բնիկ, ազնուարիւն հայուհի, հաւատոյ սերմը ստացող: Մէկը ծագումով հրեայ է, մէկը՝ հայ, չմոռանանք, թէ ինչպէս Խորենացին իր Բագրատունի մեկենասի համար Դաւթեան ծննդաբերութիւն է հայթայթում, չնայելով, որ նոյն *բագա-դատա*, այսինքն՝ աստուածատուր տան նախահայրն էր, ըստ Անանունի՝ Տորք Անգեղ դիւցազնը[1]: Եւս կտեսնենք, թէ ինչպէս այս տիպիկական ծննդաբանական հոգեբանութիւնը առաքելական միւս մի առասպել է բնորոշում:

Իսկ Բարդուղիմէոսը, ըստ նոյն Մովսիսի Խորենացւոյ, իր իսկ առաքելական կոչումն ի Հայս կատարելով, մեռնում է *Արեբանում* կոչուած մի տեղում: Վերջինս մեզ անյայտ է մնացել, թէև հայկական մի աւանդոյթ նոյնացնում է զայն այժմեան Բաշկալէի հետ (Վանայ ծովից դէպի հարաւ-արևելք, պատմական Հայաստանի Աղրակ նահանգում), որտեղ Սրբին գերեզմանն է պաշտւում: Հայ հնամենի պատումները Առաքեալի գործունէութիւնը կապում են *Կանգուար* աւանի հետ՝ Բաշկալէից ոչ հեռու[2]: Իսկ Սունդերմանը տրամաբանօրէն համարում է տեղը Մախոզէ Դը Արևան (ասորաբնակ

մի վայր Քէթ Գարմայ նահանգում): Հիմա երկու առաքելոց վերաբերեալ այս երկու պատումները շաղախենք ի մի և կրօնքերը փոխենք, որպէսզի քրիստոնէութիւնը նախկին հաւատքի դերը խաղայ՝ հեթանոսութեան տեղ, իսկ բոլորովին նոր կրօնից քարոզչի պատումի հերոսը դառնայ՝ քրիստոնեայ սրբի փոխարէն: Սա բաւական տարածուած մի մօտեցում է կրօնից պատմութեան մէջ, երբ նորեկը հնի տեղը ձգտում է գրաւել (մարդկանց երևակայութիւնը սահմանափակ է, գերբնական հեքիաթներում ծանօթ տարրեր է որոնում): Այսպէս անելով, ուրեմն, ստացւում է ճիշտ հետևեալ *մանիքէական* պատմութիւնը, որ մեզ է հասել արևմտեան Չինաստանում յայտնաբերուած սոգդերէն լեզուով գրուած մի ձեռագրի մէջ: Մանիի առաքեալը՝ Մար Գաբրեաբը (անունը արամէական է, նշանակում է Զօրաւորից պարգևեալ, իսկ մարդը այլ բնագրերից յայտնի է իբրև Մանիի սերնդակից ու աշակերտ, Միջագետքում) իր տիրոջ աւետիքը բարոզելիս ժամանում է մի տեղ, որ *Ռևան* է կոչում: Այդ երկրի (աւելի ճիշտ, քաղաքի՝ յիշենք Ուռհայ) թագաւորն ու նախարարները հիմա քրիստոնեայ են, բայց Մար Գաբրեաբը իբր թէ իր հաւատքի ուժով՝ մանիքէական կրօնքի կարողութեամբ, ծանր հիւանդութիւնից բուժում է արքայի աղջկան (յիշենք Սանդուխտին): Երախտապարտ թագաւորը, որ դժբախտաբար հանդէս է գալիս առանց անձնանուան, իր բոլոր հպատակների հետ, Քրիստոսի *կռապաշտ* կոչուած օրէնքը (ներողամիտ եղէք, ես միայն գրուածն եմ մէջբերում) լքում է, մանիքեացի է դառնում: Նախարարները դժգոհութիւն են յայտնում, թագաւորը զղջում է և Սուրբ Ջատկուայ տօնի առթիւ առօքփառօք վերստին մկրտւում է: Մար Գաբրեաբն այդ բօքը լսելիս ետ է շտապում և... վերջ: Այստեղ տեքստը կտրւում է, և չենք իմանար՝ ինչ պատահեց: Սպանուե՞ց: Աղջիկը նո՞յնպէս: Մազապո՞ւրծ եղաւ: Ինչևիցէ, մեզ հերիք է այսքան:

Ջանացել եմ վերջերս[3] մի հետազոտութեան մէջ ապացուցել, որ այդ պատմութիւնը պէտք է շինուած լինէր հայ քրիստոնեայ աւանդական պատմութեան հիման վրայ: Այսինքն՝ արդէն գոյութիւն ունեցող քրիստոնէական, առաքելական մի պատում մանիքէական վերամշակման է ենթարկուել: Ի հաշիւ պիտի առնենք, որ ցայժմ պատմական որևէ անձ յայտնի չէ, կամ՝ առնուազն որևէ մի թագաւոր, որ այս ձևով կրօնափոխ լինէր քրիստոնէութիւնից դէպի մանիքէական դեղը: Յայտնի է ուրիշ աղբիւրներից, որ Մանին ինքը մի առաքելական թուղթ յղեց առ Հայս, և իր ամենամտերիմ ընկերներից մէկը՝ Բաթը, գուցէ հայ էր: Մանին Կամսարական տոհմի սաւ էր իր մօր կողմից, այսու՝ ընտանեկան կապ ունենալով Հայոց մէջ բնակութիւն հաստատած նախարարական տան հետ, կարելի է ենթադրել, որ իր նոր աղանդը զգալիօրէն տարածում վայելեց Հայաստանում: Այսինքն՝ Հայոց մէջ զետեղուած նման պատմութիւնը թէև անշուշտ պատմական հիմք չունի, սակայն արտառոց պիտի չհնչէր ժամանակցի ականջին, ասենք՝ V դարում: Կարելի է վարկանել նոյնիսկ, որ մանիքէական մշակոյթը իր դերը կատարեց Հայաստանում: Մաշտոցի գրերի գիւտը, օրինակի համար, աննախընթաց երևոյթ չէր, ընդհակառակը, ինձ թւում է, թէ մանիքէական այբուբենի յօրինումի ազդեցութեան տակ է ստեղծուել: Բայց դա ուրիշ խնդիր է, որի մասին գրել եմ այլուր, և միւս անգամ դրա մասին կվիճարկենք[4]:

Մար Գաբրեաբը գալիս է *Ռևան*: Այս տեղանունն իրանական մի շարք լեզուներում ոչ այլ ինչ է, քան Երևանը, և հաւանաբար ժողովրդական ստուգաբանական փորձ է եղել, ըստ որին Ռևանը կապակցութիւն պիտի ունենար Զրադաշտական սրբազան պատմութեան հետ: Ռևանն իր գետն ունի (ի միտս չունեմ օտարալեզուեան Զանգու, այլ Հրազդանը, որ ոչ այլ է, եթէ Աւեստական *Թրազդանու*, որի գետափին Զրադաշտ Մարգարէն առաջին անգամ Վեհդենը քարոզեց Վիշտասպ արքային): Ռևան անուան ստուգաբանական հիմքը Էրեբունի չէ. այդ Ուրարտական տեղանուան պատմական բնոյթը հաւանաբար վաղուց մոռացման էր տրուել, այլ *ռէվանդ*, այսինքն՝ *առատ*,

մեծաշուք ածականը, որ գրադաշտական գրականութեան մէջ յաճախ կիրառուում է գլխաւոր դիցն՝ Արամազդայ նկատմամբ[5]: Թարգմանաբար հանդիպում ենք այդ գովական հասկացողութիւնը Ագաթանգեղոսի քով, ուր Տրդատը պնդում է, որ Արամազդ պարարտութիւն է բաշխում Հայոց աշխարհին: Վերջերս կատարուած պեղումները Երևանի շրջակայքում յայտնաբերել են հելլենիստական շրջանի պատկանող բաւական մեծ քաղաքի հետքեր: Գուցէ Երևան անուանակոչում կրող մի աւան Արշակունեաց դարաշրջանում կարևոր պատմական դեր էր խաղում: Էբլայի յայտնաբերումը մեր ըմբռնումները յեղափոխեց՝ նման իրադարձութիւններ լինում են: Բայց գրավոր աղբիւրների համաձայն, Երևանը նշանաւոր տեղ չէր այն ատեն, ըստ երևոյթին, և, որ աւելի էական է մեզ համար, երբեք թագաւորանիստ չի եղել: Առ նուազն կարող ենք վստահ լինել, որ Արեբանոս և սոգդիական Բևան քաղաքը նոյն են: Այդ քաղաքը Հայոց աշխարհին է պատկանում, բայց ճիշտ ո՞ւր էր՝ չգիտենք: Կարևոր է, որ քրիստոնէական և մանիքէական պատումները նոյն տեղանունն են գործածում. մեր նպատակների համար այդ մանրամասնութիւնը բաւարար է առայժմ: Սոգդիական տեքստը չշարադրուեց Միջին Ասիայում, այլ թարգմանուեց աւելի վաղ գրուած ասորերէն կորսուած բնագրից, այսպիսով՝ աւելի ուշ, քան III դ. կէսը (Մանին գլխատուեց 276 թ., և իր առաքեալները, Մար Գարբեաբն այդ թուում, իր ժամանակակիցներն էին): Քանի որ հայ ժողովուրդը քրիստոնէութիւնն ընդունեց IV դ., ասորերէն բնագիրը կթարգմանուէր մօտ V դ., այսինքն՝ երբ որ քրիստոնէութիւնը արմատացած էր Հայոց մէջ, և ժամանակ կար նաև, որպէսզի հայածուած մանիքէացիները ապաստան գտնէին Սոգդիայում և իրենց գլխաւոր գրութիւնները վերածէին տեղական լեզուի (աղօթում էին միջին պարսկերէնով. առ նուազն մէկ սերունդ պիտի տևէր, մինչև սոգդիախօս բնակչութիւնը թարգմանական նման գործերի կարիք զգար): Ինչ վերաբերում է Թադէոսի և Ադդէի ավանդութեանց նոյնացման և զարգացմանը, Վերբութայի տեքստն ու Բարդուղիմէական աւանդութիւնները պէտք է հայացուէին նոյնպէս, ինչպէս յետագայ մանիքէական աւանդոյթն է սպեղծում: Թեև Ստեփանոս Սիւնեցին իր տեքստը զոյգ առաքեալների մասին 712 թ. աւարտեց, նոր սոգդիական տուեալները ստիպում են մեզ վերանայել Մ. վան Էսբրուկի կարծիքը, թէ առաքելական աւանդը Հայոց մէջ, նրա ընդունած ձևով, VIII դարին է պատկանում: Այդ ուշ թուականը թոյլ չի տալիս, որ աւանդոյթը արմատանայ Հայոց մէջ, խեղաթիւրուի մանիքէացիների կողմից, նրանց էլ արտառոց չերևալով (այսինքն՝ հնութեան շղարշն է ծածկում պատկերացած դէպքերը), տարուի Սասանեան սահմաններից դուրս և թարգմանուի սոգդերէն:

Ի դէպ է նշել նաև, որ սոգդիական տեքստը քրիստոնեաներին կոապաշտ է կոչում (*պատկարէ* բառը գործածելով, հմմտ. փոխառեալ հայ. *պատկեր*): Կասկածից դուրս է, որ Հայոց մի թագաւոր կռապաշտ լինելով հանդերձ՝ հալածեց քրիստոնեայ մի քարոզիչ (ի միտս ունենք, ի հարկէ, Տրդատն ու Գրիգորը): Հայոց դարձի պատմութիւնը նա, որ պատկանում է IV դ. սկզբին, ատաղձ կհանդիսանար աւանդի ստեղծման խնդրին: Իսկ Պատմահայրը շատ աւելի հին բերանացի տուեալներ կունենար իր տրամադրութեան տակ:

Հայ առաքելական եկեղեցւոյ առաքելական աւանդութիւնները, այսպիսով, երկու-երեք դար աւելի հին են, քան ընդունում է արևմտեան գիտնականների մօտ:

Անդրադառնալով աւանդութեանց հնութեանը՝ ոչ նուազ հետաքրքիր է քննել, թէ ինչպէս դարերի ընթացքում նրանք բուն հայկական դիւցազնական-առասպելական երանգաւորում են ստանում: Դա բնական երևոյթ է՝ ամէն երկիր իր ինքնուրոյն կնիքն է դնում օտար ազգի կողմից ստացած վարդապետութեան վրայ: Միջնադարեան մի հայրէն, զոր Տնկացը հրատարակեց հարիւրից աւելի տարի առաջ, Հայր Մեր հանրածանօթ աղօթքի ժողովրդական մի տարբերակ է (ըստ ինքնին դա լրիւ սովորական երևոյթ է

Հայոց մէջ), սակայն աղօթքի բովանդակութիւնը բարդ և անակնկալ է և մանրամասն վերլուծման արժանի:

Հայր մեր, որ յերկինս ես դու,
Բարձրութիւն քեզ կու վայելէ.
Եւ սուրբ եղիցի անուն,
Առաքեալ և բանն ի Հօրէ.
Ջինչ զԱհարոնի գլուխն,
Որ ծաղկանց իւղովն օծեալ է.
Կամ ցօղ Աերմոնն լերինն,
Որ Սինայ քաղցր ցօղեալ է,
Կամ գհամասփիւռ ծաղիկ՝
Սուկաւէտ լեառն բուսեալ է,
Ոչ գարունն ջուր կուզէ, ոչ աշունն թոռմելու է.
Հանցկուն ծաղիկ ո՞վ տեսեր զարարածս չէն կու պահէ.
Նորա ծաղիկ ո՞վ ասէ, երբ նորա անունն Յիսուս է:

Այստեղ Աստուծոյ բարձրութեան գաղափարը անյայտ բանաստեղծին թելադրել է սրբազան սարերի մասին խորհելու, ուստի անմիջապէս մէջբերում է 133-րդ Սաղմոսը, ուր ցօղը իջնում է յերկինից՝ Աստուծոյ անտես կողմից, Հերմոնի գագաթին նիւթական սպիտակափայլ ձիւն է դառնում, հալւում է, իբրև առու ցած է վազում և ծաղիկներ առոգում: Դրանցից քամուած խունկ են բերում սուրբ քաղաքը Երուսաղէմ՝ քահանայի ձեռնադրութեան ծիսակատարութեան համար: Կերպարը հէնց այստեղ փոփոխում է, աւելի ճիշտ, հայացնում է, և երկնային ցօղը թռիչք է կատարում Իսրայէլից դէպի Արարատեան երկիրը, Հայոց գողտրիկ Սուկաւէտ լեռն է հասնում, ուր Ոսկեանք և Սուրիասեանք սուրբերը նահատակուեցին: Իրենց թափուած արիւնից բուժիչ ծաղիկներ են բուսնում լերան վրայ, հաւաստում է իրենց Վարքը: Հին Կտակարանի օծման կերպարը, այսպիսով, միանում է ոչ միայն Աւետարանի փրկչական արեան և նորոգուած քահանայութեան բարդ կերպարին, այլ նաև խառնւում է Հայոց քրիստոնէացման պատմութեանը:

Աղօթքի մէջ յիշուած ծաղիկը հեքիաթային համասփիւռն է, որի բուժիչ ուժերի մասին բազմաթիւ ժողովրդական հաւատալիքներ կան: Արդ, ովքե՞ր են Սուկաւէտ լերան մարտիրոսները: Ոսկեանք Սուրբ Թադէոսի ընկերներն են հանդիսանում, մկրտուած յոյներ: Մենակեաց են լինում, իսկ Թադէոսի մահուանից քառասուն տարի անց երևում են Հայոց արքունիքի շեմին: Աւանդութիւնն այստեղ շփոթում է երկու անձ. Խորենացին և Լեոնտի Մրովելին Արտաշէս կոչուած Արշակունի մի թագաւոր յիշում են Սանատրուկից յետոյ, այսինքն՝ մօտ 100 թ., իսկ նրան նոյնացնում են այն միւս, հռչակաւոր, դիւցազնական Արտաշիսի հետ, որ ապրել է II դ. սկզբին Քրիստոսից առաջ և Արտաշիսեան հարստութեան կէս պատմական, կէս առասպելական հիմնադիրն է՝ նա, որ Ալանաց օրիորդ Սաթինկան յափշտակեց և այլն: (Իրապէս, Քրիստոսից յետոյ 72 թ. հայերի արշաւանք Ալանաց վրայ տեղի է ունեցել, որ ևս հիմք կրնծէր պատմիչների շփոթման համար): Արտաշէսը բացակայելով, Սաթենիկը ընդունում է տարօրինակ մենաւորներին՝ Ոսկեանց, որոնք սկսում են քարոզել: Թագուհու Ալան հարազատներից մի քանիսը՝ Սուքիասն իրենց գլխին (այսինքն, Հեսիւքիոս՝ խաղաղականը, որը իր նախկին բարբարոս անունով չի ուզում այլևս կոչուել), մկրտւում են և Սուկաւէտ լեռան վրայ՝ մայրաքաղաքից վերև՝ վանական բնակութիւն են հաստատում, այնտեղ ապրում վայրի և քաջերի նման, մինչև անխուսափելի իրենց մարտիրոսութիւնը: Իրենց վառ արիւնը երկիր թափուելով, հրաշքով ծաղիկներ է բերում, որոնք բուժելու կարողութիւն ունեն: Մրովելին Արտաշիսի որդիներից մէկը Վրոյն է կոչում՝ դա Վարքի Վրոյն է, որ

հալածում է իր նոր մկրտուած ալանազգի հարազատներին:

Ազգային աւանդութիւնը Սուքիաս անունից ստուգաբանում է սարի անունը, բայց իրականութեան մէջ պարթևական է՝ Աեստական Սառկա դից անունից է առաջացել, աւէտ մակդիրով (որը նոյնպէս աւեստական հիմք ունի) և նշանակում է *առատ, բարիք* բաշխող: Լեռն ունի միւս անուն ևս, *Ջրաբաշխ*, որ հաւանաբար հին և ճշգրիտ բարգմանածն է: Եւ իրապէս անունը պատշաճ է, թէև, ըստ երևոյթին, քրիստոնէական պատումն այս ժառանգել է գրադաշտականութիւնից: Յերկնից տեղում է ցօղը, հասփիւռը բացում է, և մարդիկ 365 հիւանդութիւններից ապաքինւում են: Փորձել եմ ուսումնասիրել այս պատմութիւնը մի յօդուածում[6], որում կարծիք առաջարկեցի, որ Ոսկեանց և Սուքիասեանց պատմութեան նպատակներից մէկն էր Արտաշիսեան ազնուական ճիւղին հետ կապ ստեղծել հայ քրիստոնէական սկիզբների հետ, ինչպէս որ Արշակունեաց տոհմն իր կապն ունի պարթև Սուրբ Գրիգոր Լուսաւորչի գործունէութեան հետ: Իսկ երկուսն էլ, այսպիսով, ոչ միայն պատմական, այլ ընտանեկան կապ կվայելեն, որը, ինչպէս յայտնի է, հիմնական խնդիր է միշտ նախարարական հասարակարգերի գաղափարախօսութեան մէջ:

Այսպիսով, հայ առասպելաբանութիւնն առաքելական բաւական կանուխ գոյութիւն ունեցող պատումներն օգտագործում է՝ ի շահ հասարակական կարեւոր հաւասարակշռութեան ազնուական տոհմերի միջև և ազգի աւանդապատմական շարունակութեան: Արեգակն արդարութեան ի Հայաստան ծագել ունեցաւ երկարատև այգալոյս, նահատակների կարմիր արեան վաղ աւանդները միաշաղախուելով երկրի հին հաւատալիքների հետ, մինչև որ V դարին հասաւ իւր պայծառ միջօրէի, իւր վառ կարմիր Վարդանին՝ փայլուն այդ արևը, Ոսկեանց-ոսկեղէն, դառել էր հարազատ, շողշողալէն, ամբողջովին և առ յաւէտ՝ հայրենի:

Ծանօթագրութիւններ

1 Տե՛ս **J.R.Russell,** Iran and Israel in the Armenian Epic of Sasun, "*Irano-Judaica*", IV, ed. S.Shaked, Jerusalem, 1998 (in press).

2 Տե՛ս **Idem**, Bad Day at Burzēn Mihr: Notes on an Armenian legend of St.Bartholomew, «*Բազմավէպ*», 1986, էջ 254-267:

3 Տե՛ս **Idem**, Manichaean Apostolic Mission to Armenia?, in N. Sims-Williams, ed., *Proceedings of the Third European Conference of Iranian Studies*, Wiesbaden, 1998, pp. 21-26.

4 Տե՛ս **Idem**, On the Origins and Invention of the Armenian Script, "*Le Muséon*", 1994.

5 Տե՛ս **Idem**, Armeno-Iranica, Studies in Honour of Professor Mary Boyce, *Acta Iranica* 25, 1985.

6 Տե՛ս **Idem**, Scythians and Avesta in an Armenian Vernacular Paternoster, and a Zok Paternoster, "*Le Muséon*", 1997.

Էդուարդ Դանիելյան

ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔԵՅԱԼԻ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ առաքելական եկեղեցու՝ Ս.Թադեոս առաքյալի քարոզությամբ հիմնադրման ավանդությունը, գտնվելով քրիստոնեական վարքաբանության ակունքներում, արտացոլվել է հայ պատմագրության մեջ: Ավանդության պատմական հիմքի մասին են վկայում Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի եւ Ագաթանգեղոսի հաղորդումները:

Ս.Թադեոսի քարոզությանը նախորդած պատմական անցքերի հաջորդականությունը, ըստ Խորենացու, սկսվում է Փյունիկիայի, Պաղեստինի, Ասորիքի եւ Միջագետքի հռոմեական հազարապետ Մարինոսի մոտ՝ Բեթքուբին, Եղեսիայի Հայոց թագավոր Աբգարի ուղարկած Աղձնիքի բդեշխի եւ Ապահունյաց տոհմապետի ժամանումով Երուսաղեմ (իրենց գործերը կարգավորելուց հետո) «տեսանել զՔրիկիչն մեր Քրիստոս վասն լրոյ համբաւուց սքանչելագործութեանցն. որում եւ ականատես եղեալ՝ պատմեցին Աբգարու: Ընդ որ զարմացեալ Աբգարու՝ հաւատաց ճշմարտապէս իբր արդարեւ յորդի Աստուծոյ, եւ ասէ. "Այն գօրութիւնք ոչ մարդոյ են, այլ Աստուծոյ"», «...Բայց յետ համբառնալոյ Փրկչին մերոյ՝ Թովմաս առաքեալ, մի յերկոտասանից, առաքեաց զմի յեօթանասնից անտի զԹադէոս ի քաղաքն Եդեսիայ՝ բժշկել զԱբգար եւ աւետարանել ըստ բանին Տեառն»[1]:

Մովսես Խորենացու երկում Ս.Թադեոսի ավանդության առնչությամբ պահպանված տեղեկությունների աղբյուրագիտական հիմքի գնահատականները պատմագիտության մեջ (հատկապես վերջին հարյուրամյակի ընթացքում) պայմանավորված են եղել Պատմահոր երկի հանդեպ հետազոտողների դրսեւորած պատմաքննական մոտեցումներով՝ ինչպես ժամանակագրական եւ պատմա-քաղաքական, այնպես էլ դավանաբանական առումով: Խորենացու օգտագործած սկզբնաղբյուրները, որոնց մի մասը նույնիսկ չի պահպանվել, կարող էին իրոք Հայոց պատմության մասին այնպիսի տեղեկություններ պարունակել, որոնց բացակայության պայմաններում Պատմահոր երկի աղբյուրագիտական արժեքը բազմապատկվում է:

Մովսես Խորենացուն VIII դարից ոչ շուտ ապրած հեղինակ համարող Գ.Խալաթյանցը եւ Մ.Կարիերը թերահավատ մոտեցում են ցուցաբերել Ս.Թադեոսի մասին եղած նրա հաղորդումներին՝ դրանք համարելով ոչ հավաստի, որպես այլ աղբյուրներից քաղված տեղեկությունների աղավաղման հետեւանք[2]: Լ.Տիքսերոնը այն կարծիքին էր, որ Խորենացին Աղդէի Արեւելք կատարած ճամփորդությունը փոխել է մի քարոզության դեպի Հայաստան, եւ «ուրիշ մանր մասերն, որոնք առաւել կամ նուազ Հայաստանի հետ կապ ունին, կերեւա թէ Մովսիսի գիտուն են»[3]: Ըստ Ռ.Թոմսոնի, «Մովսեսը Աբգարին Հայոց թագավոր է դարձրել, եւ նրա համար դժվար չէր այդ խաբեությունը մի փոքր առաջ շարժել եւ պնդել, որ դիվանները հայկական նյութեր են պարունակել»[4]:

Մովսես Խորենացին գրել է, որ Եւսեբիոս Կեսարացին (260-339) իր «Պատմութիւն եկեղեցւոյ» երկում «վկայէ յեղեսիայ դիւանին լինել ամենայն գործոց առաջնոց

թագաւորացն մերոց մինչեւ ցԱբգար, եւ զկնի Աբգարու մինչեւ ցԵրուանդ»[5]: Եւսեբիոս Կեսարացին իր երկում շեշտել է Եդեսիայի դիվանում Աբգար թագավորի ժամանակներին վերաբերող նյութերի առկայության հանգամանքը[6], ինչ վերաբերում է Խորենացու տեղեկությանը Աբգարի՝ Հայոց արքա լինելու մասին, ապա անհրաժեշտ էր, մինչ Պատմահոր հանդեպ քննադատական խոսք ասելը, աղբյուրագիտական տեսանկյունից համակողմանի ուսումնասիրել Աբգարի տոհմի՝ Հայոց արքայական ծագումնաբանության հարցը[7]:

Գ.Սարգսյանը, որը Խորենացուն անվերապահորեն համարում է V դ. հեղինակ, անդրադառնալով Ռ.Թոմսոնի քննադատությանը, նշել է, որ հետազոտողին լրիվ չվոխեցրել է դիվաններին վերաբերող հարցը, որոնց վրա է հղում Մովսես Խորենացին "Հայոց պատմության" մեջ[8]: Քանի որ Ռ.Թոմսոնը ընդունել է Եդեսիայի դիվանի գոյության փաստը թեկուզ եւ այնքանով, որքանով այդ տեղեկությունը Խորենացին քաղել է Եւսեբիոսից, ուստի Գ.Սարգսյանի քննադատությունը վերաբերում է Սինոպի, Մծբինի եւ Եդեսիայի դիվաններում Հայոց թագավորներին առնչվող նյութերի մասին եղած հաղորդմանը Ռ.Թոմսոնի տված բացասական գնահատականին: Իսկ դա հետեւանք էր նրա կողմից Խորենացուն որպես իր ժամանակից, այսինքն՝ V դարից ուշ ապրած հեղինակ դիտելու եւ, դրանով իսկ, այս առնչությամբ Պատմահոր երկի աղբյուրագիտական հիմքի պատմականության ժխտման:

Պատմագիտության եւ բանասիրության մեջ Մովսես Խորենացու խնդրո առարկա հաղորդման հիմքում ընկած ավանդության սկզբնաղբյուրը ասորական համարելը որոշ հետազոտողների խոչընդոտել է Հայաստանում առաքելական քարոզության մասին նրա շարադրանքը դիտել որպես իրական պատմության արտացոլում: Այնինչ, ավանդությունը կարող էր սկզբնավորվել գրի առնվելուց ավելի վաղ: Հայկական միջավայրում սկզբնավորված ավանդության մեջ հետագայում կարող էին ավելանալ օտառածին շերտեր՝ Հայաստանից դուրս գաղափարական եւ դավանաբանական նպատակներից բխող մշակումների ենթարկվելու հետեւանքով: Ուստի ավանդության սկզբնավորման ժամանակաշրջանին վերաբերող քննարկումները հանգեցրել են այն խնդրին, թե ե՞րբ է այն գրի առնվել ասորերեն եւ, ըստ այնմ էլ, որոշվել ավանդությունում հաղորդվող նյութի արժանահավատության աստիճանը: Եթե նույնիսկ խոսք է եղել բուն հայկական ավանդության մասին, ապա եզրակացվել է, որ «այդ վկայաբանությունների նպատակն է եղել լոկ Հայոց եկեղեցու սկզբնավորության հնացումը..., որ Գրիգորի քարոզությունից առաջ, ինչպես հայտնի է, քրիստոնեությունը որոշ չափով տարածված է եղել Հայաստանում»[9]: Այս կապակցությամբ Ե.Տեր-Մինասյանը գրել է, որ Մ.Աբեղյանը նույնպես համարում է, որ «Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների մասին պատմվող զրույցները շատ ավելի հին են, քան կարծում է Ս.Մալխասյանցը, եւ հատուկ նպատակ ունեին ցույց տալ Հայոց Եկեղեցու սկզբնավորությունը, կամ, ինչպես մենք ասել ենք բազմաթիվ անգամներ՝ հաստատել Հայոց Եկեղեցու առաքելական սկզբնավորությունը, մի սովորություն, որ հատուկ է ընդհանրապես գրեթե բոլոր քրիստոնեական եկեղեցիներին»[10]:

Մ.Աբեղյանը համաձայն չէր Ս.Մալխասյանցի այն կարծիքին, թե «...այս երկու վկայաբանությունները (Թադեոսի եւ Բարդուղիմեոսի) նույն խոհանոցի թխվածք են...: Գրիգոր Լուսավորչին նսեմացնելու նպատակը ես չեմ վերագրում Փավստոսին, այլ այն ասորական խմբակին, որ խարդախել է Լաբուբնայի հայերեն թարգմանությունը, Եդեսիայում մեռած Թադեոս առաքյալին բերել տալով Հայաստան եւ ստեղծելով Թադեոս առաքյալի չեղած վկայաբանությունը...: Հայոց եկեղեցին վաստակեց սին փառք՝ առաքելական եկեղեցի կոչվելու, թեկուզ անհիմն ավանդության հիման վրա: Մեր եկեղեցու այս մտայնությունը պարզ արտահայտել է Օրմանյանը»[11]: Այնինչ, Մ.

Օրմանյանը, քննելով սկզբնաղբյուրների հաղորդումները, եզրակացրել է. «Հայաստան առաքելական քարոզութեամբ քրիստոնէութիւնը ճանչցած եւ հովուական աթոռ ալ ունեցած էր»[12]:

Պ.Անանյանը, անդրադառնալով Աղդէի վկայաբանության ասորական բնագրի հարցին, համամիտ է այն կարծիքին, ըստ որի՝ այնտեղ խոսքը Աբգար Ը-ի և նրա որդու ժամանակների մասին է: Ս.Թադեոս առաքյալի վկայաբանության հայերեն թարգմանությանը Պ.Անանյանը հպանցիկ է անդրադարձել՝ գրաբարից աշխարհաբար թարգմանված Փավստոս Բուզանդի երկի համար Ս.Մալխասյանցի գրած ներածության միջոցով: Պ.Անանյանը եզրակացրել է, որ V դ. եկեղեցական շրջանակներում արդեն հաստատ համոզում էր ձեւավորված, թե Գրիգոր Լուսավորչի եւ նրա հաջորդների "Առաքելական աթոռը" հենց Թադեոս առաքյալի հիմնած աթոռն է[13]: Կարելի է նկատել, որ վերջին հարյուրամյակում պատմագիտության մեջ առավել հստակ Մ.Օրմանյանն է խոսել Ս.Թադեոսի ավանդության՝ նախքան ասորերեն գրի առնվելը գոյություն ունենալու մասին: Հ.Աճառյանը[14] նույնպես այն տեսակետին էր, որ հայոց մեջ կար այդպիսի մի ավանդություն, որի վրա առաջացել է "Վկայաբանութիւն եւ գիւտ նշխարաց Ս.Թադէի Առաքելոյ եւ Սանդխտոյ կուսի" երկը[15]:

Ս.Թադեոս առաքյալի ավանդությունը բովանդակող Լաբուբնիայի (Ղեբուբնա) հեղինակությամբ հայտնի ասորերեն (III-IV դդ.) եւ հայերեն (V դ.)[16] տեքստերի պատմա-բանասիրական հետազոտությունը արգասաբեր արդյունք է տալիս, երբ կատարվում է Եւսեբիոս Կեսարացու եւ Մովսես Խորենացու երկերի ավանդությանը նվիրված բաժինների ընդգրկմամբ:

Եւսեբիոս Կեսարացին իր «Պատմութիւն եկեղեցւոյ» երկում նշել է, որ Ս.Թադեոսի մասին ավանդությունը բովանդակող նյութը ասորերենից է թարգմանել հունարեն: Ավանդության տարբեր տեքստերի համեմատությունը թույլ է տալիս ասելու, որ Եւսեբիոսի պահպանած նյութը ներկայացնում է ավանդության համառոտ տարբերակը: Մովսես Խորենացու խնդրո առարկա շարադրանքը, ի տարբերություն ավանդության ընդարձակ խմբագրության, պարունակում է սկզբնաղբյուրային բնույթի մանրամասնություններ, չնայած այն հանգամանքի, որ Պատմահայրը նշել է Ղեբուբնային որպես սկզբնաղբյուրի հեղինակ[17]: Դա, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր ինչպես ձեռագրական խմբագրություններով, այնպես էլ ավանդության հայկական բանավոր հիմքից ծագումով եւ օտար՝ ասորական միջավայրում մշակումով:

Ասորական համառոտ բնագրից, որից թարգմանել է Եւսեբիոսը, ամենեւին չէր հետեւում, թէ Ս.Թադեոսը մահացել է Եդեսիայում: Միեւնույն ժամանակ, ըստ հայերենով պահպանված տարբերակի, «Աղդէ (Ս.Թադեոս) ...առաքեալ ելեալ գնաց ընդ Արեւելս... քարոզել զաւետարանն Քրիստոսի»[18]: Այսինքն՝ ասորերեն համառոտ բնագիրն իր նախնական բովանդակությամբ ամենեւին հակասության մեջ չի եղել Խորենացու շարադրանքի սկզբնաղբյուրի հետ, որի պարունակած այլ մանրամասնություններ բնագրային բնույթի են:

Մովսես Խորենացու երկում այս կարգի մանրամասնությունները կարող են բացատրվել հետեւյալ հանգամանքներով. ա/ Եդեսիայի դիվանից նաեւ այլ նյութերի օգտագործում, բ/ հայ բանահյուսության միջոցով՝ Առաքելական քարոզության ժամանակներում ձեւավորված զրույցների իմացություն, որոնք, հիմք հանդիսանալով Հայ առաքելական եկեղեցու ավանդության համար, իրենց վառ դրսեւորումը գտան վկայաբանական, վարքագրական եւ հայրախոսական երկերում[19]:

Այն, որ Հայոց աշխարհում գոյություն է ունեցել Ս.Թադեոս առաքյալի հետ կապված պատմական ավանդություն իր սկզբնավորման ժամանակներից, վկայում են նաեւ Փավստոս Բուզանդը եւ Ագաթանգեղոսը: Փավստոս Բուզանդը իր երկի սկզբում

գրել է. «Ի քարոզութենէն Թադէոսի Առաքելոյ...»: Այնուհետեւ Հայոց հայրապետական աթոռի եւ Հայ եկեղեցու մասին գրելիս, նշել է. «...յաթոռոն Առաքելոյն Թադէոսի», «...զվիճակին Թադէոսի առաքելոյն»[20]:

Ըստ Ագաթանգեղոսի երկի ասորական նորահայտ թարգմանությամբ մեզ հասած տեքստի, որին հատուկ հոդվածով անդրադարձել է Մ. վան Էսբրուկը, Լեբեն, որը անվանված է Թադէ, այսինքն՝ Ադդէ, գալիս է Հայաստան՝ քարոզելու նպատակով[21]: Ինչպես տեսնում ենք, սկզբնաղբյուրի այս տարբերակում, Տասներկուսից Ղեբեոս-Թադեոսը նույնացվել է Ադդէոսի հետ, ինչը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ ավելի հին բանավոր եւ գրավոր տեղեկությունների միահյուսում է տեղի ունեցել, եւ, դրանով իսկ, շաղկապվել են ավանդության տարբերակներում հիշատակվող երկու անձանց՝ Տասներկու առաքյալներից Ս.Թադեոսի եւ «յեօթանասուներկուսից» Ադդեոսի (Ադէ) անունները. վերջինիս անունը Եւսեբիոսի սկզբնաղբյուրում նույնպես ընթերցվել է «Թադեոս» և այդպիսի խմբագրված ընկալումով անցել Խորենացու երկը:


Կարելի է ասել, որ Ս.Թադեոս առաքյալի ավանդության շուրջ՝ պատմագիտության մեջ եղած կարծիքները հիմնականում կենտրոնացած են ավանդությունում հիշատակված պատմական անձերի ապրած ժամանակների եւ նրանց գործունեությունն ընդգրկած տարածքներին վերաբերող խնդիրների վրա: Այդ կարծիքներում արտացոլվել են հետազոտողների (Մ.Չամչյան, Լ.Տիքսերոն, Գ.Խալաթյանց, Մ.Կարիեր, Հ.Տաշյան, Մ.Օրմանյան, Ս. Մալխասյանց, Մ.Աբեղյան, Ե.Տեր-Մինասյան, Հ.Մանանդյան, Հ. Մելքոնյան, Ն.Ակինյան, Մ.Շոմոն, Մ.վան Էսբրուկ, Պ.Անանյան, Ռ.Թոմսոն, Գ.Սարգսյան եւ ուրիշներ) մոտեցումները ավանդության պատմականության եւ Հայ եկեղեցու Առաքելական քարոզությամբ հիմնադրման խնդիրների կապակցությամբ: Դրանց պարզաբանմանը հատկապես նպաստում է Մ.Օրմանյանի պաշտպանած տեսակետը՝ Հայ եկեղեցու ավանդության պատմա-հոգեւոր հիմքի մասին, ինչը հաստատվում է սկզբնաղբյուրների հետազոտությամբ, որով եւ հնարավորություն է ստեղծվում Հայ եկեղեցու ավանդությունը լուսաբանել իրեն սկզբնավորած միջավայրի առումով: Հետազոտության այս եղանակի արգասաբեր է Հայոց պատմության Ա դարին վերաբերող մի շարք խնդիրների (նախորդ դարերից եկող Երվանդունի-Արշակունի-Արտաշեսյան միջդինաստիական կապեր, Հայոց Միջագետքի տեղն ու դերը Հայոց պետականության եւ հոգեւոր պատմության մեջ, քրիստոնեության վաղ ժամանակաշրջանի էթնո-դավանանքային տերմինաբանություն եւ այլն) լուծման համար: Ավանդության սկզբնաղբյուրային հիմքի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տվել Ս.Թադեոս եւ Ս.Բարդուղիմեոս առաքյալների՝ Հայաստանում քարոզության ուղիները ներկայացնել քարտեզով[22]: Հետազոտության քարտեզագրական մեթոդը կարող է օգնել Հայ առաքելական եկեղեցու ավանդության պատմա-աշխարհագրական հիմքի քարտեզագրմանը՝ Առաքելական ծագում ունեցող եպիսկոպոսական աթոռները ներկայացնող «Քրիստոսի եկեղեցու տիեզերական քարտեզում»:

Ծանոթագրություններ

1 **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ.Աբեղեանի եւ Ս.Յարութիւնեանի, լրացումները Ա.Սարգսեանի, Երեւան,1991, II, Լ, ԼԳ, էջ 148, 151:

2 Смотри Г.Халатянц, Армянские Аршакиды в "Истории Армении" Моисея Хоренского, М., 1903; **M.Carrier**, Nouvelles sources de Moise de Khoren, Paris, 1893, p. 47; **Idem**, La légende d'Abgar dans l'Histoire d'Arménie de Moise de Khoren, Paris, 1895, pp. 371-372.

3 **L.- J. Tixeront**, Les origines de l'église d'Edesse et la légende d'Abgar, Paris, 1888, p. 128. Քննադատելով այս աշխատությունը, Հ.Տաշյանը գրել է, որ իրեն կատարել է «քննութիւն մը հեղինակին անտեղի կարծեաց, մանաւանդ այնպիսի խնդրոց մէջ, որոնք մեր պատմութեան եւ մատենագրութեան հետ սերտ կապակցութիւն ունին» (Յ.Տաշեան, Սկզբնաւորութիւնք Եդեսիոյ եկեղեցւոյն եւ Արգարու գրոյցը,



«Հանդէս ամսօրեայ», 1889, 3, էջ 48): Խորենացու հաղորդումների հարազատությունը սկզբնաղբյուրներին նկատի ունենալով՝ Հ.Տաշյանը գրել է. «Ճշդիւ խօսելով՝ Խորենացին գրած է ինչ որ գտած է» (նույն տեղում, 1889, 4, էջ 63):

4 **Movses Khorenatsi**, History of the Armenians, Transl. and comment. on literary sources by R.W.Thomson, London, 1978, p. 34.

5 **Մովսես Խորենացի**, էջ 120:

6 Տե՛ս **Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն Եկեղեցւոյ, յեղեալ յասորւոյն ի հայս, պարզաբանեալ նոր բարգմանութեամբ ի յոյն բնագրէն ի ձեռն Հ. Աբրահամ վ. Ճարեան**, Վենետիկ, 1877, էջ 60:

7 Հայ եւ օտար պատմիչների հաղորդումներից հետեւում է, որ Հյուսիսային Միջագետքի (որի զգալի մասն էր կազմում Հայոց Միջագետքը)՝ անտիկ ժամանակաշրջանում Հայոց պետականության ոլորտում գտնվելու առումով Աբգարի տոհմը Երվանդունի-Արշակունի-Արտաշեսյան ճյուղավորումներից է ընձյուղվել: Օտար պատմիչներից ուշագրավ է Անանուն Եղեսացու հետեւյալ հաղորդումը. «Քանի որ Ուռհայում բնակություն հաստատած եւ հզորացած հայերը հավատարիմ էին մնացել հունաց թագավորությանը, նրանց ազգից մեկին, որի անունն էր Աբգար, թագավոր հռչակեցին: Սա եւ իր սերունդները երեք հարյուր ութսուն տարի տիրեցին Ուռհայի ու Միջագետքին: Նրանցից շատերը կոչվեցին Աբգար, առաջին թագավորի անունով» (Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, 12. Ասորական աղբյուրներ, Բ, **Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն**, թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանոթագր. Լ.Տեր-Պետրոսյանի, Երեւան, 1982, էջ 195-196):

8 Տե՛ս **Моисес Хоренаци**, История Армении, пер. с древнеармянского, введение и прим. Г.Саркисяна, Ереван, 1990, с. XXXI-XXXII.

9 **Մ.Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, Ա, Երեւան, 1944, էջ 343:

10 **Ե.Տեր-Մինասյան**, Ե դարի Հայ եկեղեցու պատմության եւ գրականության մի քանի հանգուցային հարցերի շուրջ, «Էջմիածին», 1962, Զ, էջ 49, ծան. 20:

11 **Ս.Մալխասյանց**, Մատենագիտական դիտողություններ, Երեւան, 1961, էջ 153-168:

12 **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, Ա., Կ.Պոլիս, 1912, էջ 92:

13 Տե՛ս **Հ. Պօղոս Անանեան. Քրիստոնէութեան հետքեր Հայաստանի մէջ Ս.Գրիգոր Լուսաւորչի քարոզութենէն առաջ, (պատմական ուսումնասիրութիւն)**, Վենետիկ, 1979, էջ 37: Աբգար թագավորին, որը Աբգար Ե-ն է, Աբգար Ը-ի (կամ Թ-ի) հետ նույնացնողները (տե՛ս **A.Lepsius**, Die Edessenische Abgar Sage, Braunschweig, 1880, S. 99: Ասորական աղբյուրներ, Բ, էջ 239, եւ այլն), փաստորեն, ժխտում են ավանդության՝ I դարից եկող արմատները:

14 Տե՛ս **Հ.Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, Ա, Երեւան, 1942, էջ 7:

15 Սոփերք հայկականք, Ը, Վենետիկ, 1853:

16 Տե՛ս **Լաբութենեայ դիւանագիր դպրի Եղեսիոյ Թուղթ Աբգարու, յեղեալ յասորւոյն ի ձեռն Ս. բարգմանչաց**, Վենետիկ, 1868: **Ղեւոնդեայ Եղեսացի, Թուղթ Աբգարու թագաւորի Հայոց եւ քարոզութիւնք Սրբոյն Թադէի առաքելոյ, Յերուսաղէմ**, 1868: **Գ.Զարբհանալեան. Պատմութիւն Հայերէն դպրութեան**, Վենետիկ, 1865, Ա, Հին մատենագրութիւնք, էջ 82-87: **W.Cureton**, Ancient Syriac Documents, Amsterdam, 1967, p. 6, տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, 8. Ասորական աղբյուրներ, Ա, բարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանոթագր. Հ.Մելքոնյանի, Երեւան, 1976, էջ 41:

17 Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 161:

18 Թուղթ Աբգարու, էջ 45-46:

19 Տե՛ս **Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց. Հատընտիր բաղեալք ի Ճառընտրաց**, Ա, Վենետիկ, 1874: Գիրք հարցմանց Երիցս երանեալ Սրբոյ հօրն մերոյ **Գրիգորի Տաթեացւոյն**, Կ.Պոլիս, 1729, էջ 549:

20 **Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը՝ Ք.Պատկանյանի, թարգմ. և ծանոթագր. Ստ.Մալխասյանցի**, Երեւան, 1987, էջ 12, 48, 66:

21 Տե՛ս **M. van Esbroeck**, Un nouveau témoin du livre d'Agathange, "Revue des études arméniennes", N.S., 1971, VIII, pp. 22-23.

22 «Հայաստանը Առաքելական բարոզության ժամանակաշրջանում» (քարտեզ), Երեւան, 1994:

Վալենտինա Կալցոլարի
(Ժնեւ)

ՍՈՒՐԲ ԹԵԿՂԻ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

1. Ս.Թեկղ Էջմիածնի մէջ

Էջմածնի մայր եկեղեցւոյ հիւսիսային ճակատին վրայ կը գտնուի Պօղոս առաքեալի եւ Ս.Թեկղի պատկերները կրող հարթաքանդակ մը: Այս հարթաքանդակը տեղաւորուած է պատի այն մասին վրայ, որ V դ. կը պատկանի: Հարթաքանդակին ծագումը անծանօթ է. եթէ հայկական է, պէտք է եզրակացնենք, որ երկու պատկերները V դարէն աւելի հին են եւ որ այբուբենի ստեղծագործութենէն առաջ են, որովհետեւ Պօղոսի եւ Թեկղի անունները յունարէն տառերով գրուած են[1]: Այս հարթաքանդակը հնագիտական ամենահին հետքն է Հայաստանում Ս.Թեկղի աւանդութեան ներկայութեան մասին: Ի՞նչ կրնանք ըսել գրական աւանդութեան մասին: Ե՞րբ սկսան հայերը հետաքրքրուիլ Ս.Թեկղով եւ իր աւանդութեամբ: Ընդհանուր առմամբ ի՞նչ դեր խաղաց այս սրբուհին հայ քրիստոնէութեան հնագոյն պատմութեան մէջ:



Եթէ հնագիտական ուրիշ հետքեր անծանօթ են, ընդհակառակը կարելի է հետեւիլ Ս.Թեկղի աւանդութեանը հայ գրական պատմութեան մէջ: Իսկոյն ըսեմ, որ Հայաստանի մէջ Ս.Թեկղի աւանդութեան զարգացումը ուսումնասիրելով, ի վիճակի ենք գտնել քանի մը հետաքրքրական վկայութիւններ հայ, բիւզանդական եւ ասորական քրիստոնէութիւններու միջեւ կապերու մասին:

2. Ս.Թեկղ հին հայկական գրականութեան մէջ

2.1. . "Թեկղի Գործք"

Առաջին երկը, որու վրայ ուշադրութիւն կ՛ուզէի հրաւիրել՝ հետեւեալ վերնագիրը կը կրէ. "Պատմութիւն սրբոյն Թեկղի կուսի աշակերտի սուրբ առաքելոյն Պաւղոսի". այս տեքստը յիշուած է նաեւ "Թեկղի Գործք" կամ "Պատմութիւն վարուց Սրբոյն Թեկղեայ" վերնագիրներով: Այս երկը կը գտնուի աւելի քան 20 հին ճառընտիրներու մէջ (11՝ Երեւանի Մատենադարանի): Ձեռագիրներու այս բաւական ճոխ թիւը կ՛ապացուցանէ, որ այս երկը կարեւորութիւն ունեցած է Հայաստանի մէջ[2]:

Ի՞նչ կը պատմեն "Թեկղի Գործք"-ը: Այս գրուածքը, որ քրիստոնեայ պարականոն գրականութեան կը պատկանի, կը պատմէ Պօղոսի եւ Թեկղի միջեւ հանդիպումը Իկոնիոն քաղաքում (Փոքր Ասիոյ մէջ): Թեկղը, որ Թամիրիս անունով երիտասարդի մը նշանուած է, քրիստոնեայ կը դառնայ եւ իր կեանքը բոլորովին կը փոխէ: Աղջիկը

կ'որոշէ չամուսնանալ իր նշանածին հետ՝ կոյս մնալու նպատակով: Այս որոշումը պատճառ կը դառնայ, որ Թամիրիս եւ ամբողջ քաղաքը զայրանան Թեկղի դէմ: Ի հարկէ՝ ըստ Իկոնիոն քաղաքի "օրենքներուն" եւ առ հասարակ ըստ տիրող մտայնութեան, երիտասարդ աղջկան մը ճակատագիրն էր ամուսնանալ եւ տոհմային յաջորդութիւնը ապահովել: Իր որոշումին պատճառաւ Թեկղը մահուան կը դատապարտուի, բայց Աստուծոյ հրաշագործ օգնութեամբ կը փրկուի: Պօղոսի հետ Անտիոք քաղաքը կ'երթայ, ուր երկրորդ փորձութիւն մը կը սպասէ իրեն: Հազիւ քաղաք մտած՝ Աղեքսանդր անունով ուժեղ երիտասարդ մը իր վրայ կը յարձակի: Բայց Թեկղը աւելի ուժեղ կը յայտնուի եւ կը յաղթէ Աղեքսանդրին: Աղեքսանդրը կարեւոր անձնաւորութիւն մը ըլլալով՝ Թեկղը երկրորդ անգամ մահուան կը դատապարտուի, բայց երկրորդ անգամ եւս Աստուած կը փրկէ զինք: "Թեկղի Գործք"-ի վերջաւորութեան, Թեկղը արդէն նոր դեր մը կը ստանայ. ինքն ալ, Պօղոսի պէս, առաքեալ դարձած է: Իբրեւ առաքելուհի Թեկղը կ'երթայ Սելեւկիա քաղաքը՝ իր քարոզութիւնը կատարելու համար: Երկու խօսքով ահաւասիկ ամփոփուած "Թեկղի Գործք" երկը:

"Թեկղի Գործք"-ի հայերէնը ասորերէնէ "Թեկղի Գործք"-ի թարգմանութիւնն է[3]. յիշենք, որ իր կարգին ասորերէնը II դ. յունարէն բնագրի մը թարգմանութիւնն է[4]:

Ս.Թեկղի աւանդութեան վերաբերեալ առաջին վկայութիւնները հայ գրականութեան սկիզբին կը պատկանին: Արդարեւ՝ ասորերէնէ հայերէն թարգմանութիւնը հաւանաբար V դ. առաջին կէսին կատարուած է[5]: Հայերէն առաջին թարգմանութիւններուն նպատակը քաջածանօթ է, ուստի աւելորդ է կրկին ընդգծել: Աստուածաշունչի եւ եկեղեցւոյ հայրերու երկերուն թարգմանութիւններուն միջոցով հայ թարգմանիչները ուզեցին ի կատար հասցնել Հայաստանի աւետարանումը եւ, միեւնոյն ատեն, գտնել ազգային միութեան սկզբունք մը: Այս առաջին երկերուն կարեւոր նպատակներէն մէկը Հայոց կրօնական եւ ազգային գիտակցութիւնը ամրացնել էր: Նկատի առնե՛նք, որ այդպիսի երկերու շարքին կը պատկանի հայերէն "Թեկղի Գործք"-ը: Ապացոյց, որ հայերը շատ կանուխէն մեծ կարեւորութիւն տուին այս օտար ծագումով սրբուհիին, որուն պաշտամունքը կը տարածուէր նաեւ ամբողջ Արեւելքի եւ մասնաւորապէս Ասորիքի մէջ: Նկատի առնե՛նք նաեւ, որ, ինչպէս տեսանք, Հայաստանն ու Ասորիքը կապող մշակութային եւ կրօնական սերտ առնչութիւններու շնորհիւ է, որ Թեկղի հայ գրական աւանդութիւնը ծաւալուած է Հայաստանի մէջ:

2.2. Ս.Թեկղ Փաւստոս Բուզանդի "Հայոց պատմութեան" մէջ

Դարձեալ V դ. կը պատկանի Թեկղի հայ գրական աւանդութեան մասին երկրորդ աղբիւր մը՝ Փաւստոս Բուզանդի "Պատմութիւն Հայոց" երկին չորրորդ դպրութեան Ժ գլուխը: Այս գլուխը կը գտնուի գրքին կարեւոր մէկ հատուածին մէջ. այն հատուածը, որ կը պատմէ հերոսական պայքարը Ս.Ներսէս եպիսկոպոսապետին Վաղէս կայսէր դէմ: Առաջինը ուղղափառութեան ախոյեանն է, երկրորդը՝ աւուղղափառութեան խորհրդանիշը: Այս հատուածին մէջ Թեկղը նիկէական ուղղափառութեան եւ Սուրբ Երրորդութեան պաշտպանուհիի հիմնական դերը կը կատարէ: Այս հատուածին վրայ ծանրանալու կարիք չկայ այստեղ: Այլուր գրած եմ այս մասին[6]: Յիշեմ միայն, թէ կարելի է, որ Հայաստանի հարաւէն եկող Փաւստոսը Թեկղի աւանդութեան ծանօթացած ըլլայ ասորական վարքագրական գրականութեան միջոցով: Ի հարկէ, ինչպէս Ն.Գաբոյեան կ'ենթադրէր, հաւանաբար Փաւստոս Տարօնցի հեղինակ մըն էր[7]: Չմոռնա՛նք, որ Տարօն՝ Հայաստանի հարաւային գաւառը ասորական քրիստոնէութեան ազդեցութեան ենթարկուած է շատ կանուխէն:

Իբրեւ առաջին եզրակացութիւն՝ կրնանք ըսել, որ Թեկղի նկատմամբ Հայոց հետաքրքրութիւնը ցոյց տուող առաջին երկու վկայութիւնները V դ. կը պատկանին, եւ որ այս երկու վկայութիւններուն ծագումը Ասորիքի մէջ է:

2.3. Ս.Թեկղի աւանդութիւնը Հայաստանի մէջ բիւզանդական շրջանին

Մատենադարանի վեց ձեռագիրներու մէջ գտայ Թեկղի վերաբերեալ նոր գրուածք մը. "Հրաշք սքանչելեաց որ եղեն զկնի վկայական հանդիսից սրբոյ առաքելուհին Թեկղի յաշխարհին Սուրացւոց": Այս բնագիրը պիտի կոչեմ պարզապէս "Հրաշք Թեկղի"[8]:

Այս տեքստը կը պատմէ քանի մը հրաշքներ, մանաւանդ բժշկութիւններ, որ Թեկղը գործած է Սելեւկիա, երբ 18 տարեկան էր: Երկրորդ մասին մէջ Սրբուհիին արդէն 90 տարեկան է եւ կը շարունակէ հրաշքներ կատարել: Այս զօրութիւնը կը գրգռէ քաղաքի բժիշկներուն բարկութիւնը, որոնց շահը խափանուած է: Անոնք կ'որոշեն անառակ մարդիկ ղրկել Սրբուհիին մօտ, որպէսզի վրան յարձակէին: Անշուշտ բժիշկները կը կարծէին, որ Թեկղը Արտեմիս դիցուհիին նուիրուած կոյս մ'ըլլար եւ որ, այս պատճառով, Արտեմիսի օգնութեամբ իր ամէն ուզածը կարենար իրագործել: Բայց անգամ մը եւս Աստուած իր օգնութիւնը կը պարգեւէ Թեկղին: Երբ անառակ մարդիկը արդէն Թեկղի մօտ են, Աստուած բանալ կու տայ մօտը գտնուող վէմ մը, որ Սրբուհիին իր մէջը կ'ընդունի: Անմիջապէս յետոյ վէմը կը փակուի յաւիտեան. Թեկղ կ'անհետանայ, եւ միայն իր հագուստին մէկ կտորը կը մնայ դուրսը՝ այս հրաշքին իբրեւ փաստ:

Հայերէն "Թեկղի Հրաշք"-ը 1978 թ. Գ.Դագրոնի կողմէ հրատարակուած յունարէն բիւզանդական բնագրի մը թարգմանութիւնն է[9]: Դժուար է ճշտել հայերէն թարգմանութեան թուականը. գուցէ Գրիգոր Վկայասէրի դպրոցին կը պատկանի, XI դ.: Հայ գրուածքին վերջաւորութեան կը գտնուի յիշատակարան մը, որ կը յիշեցնէ Ս.Թեկղի տօնին թուականը՝ 24 սեպտեմբեր. "*...եւ զառ ի յիշատակի նորա տաւնախմբեն ամենայն հաւատացելոց բազմութիւնք ի սեպտեմբերի ամսեանն ի քսաներորդումն ի չորրորդում աւուրն ի փառս Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ յաւիտեան յաւիտենից ամէն*":

Այս յիշատակարանէն կրնանք եզրակացնել, որ միջին դարուն ո՛չ միայն գրական աւանդութիւն մը, այլ նաեւ Թեկղի պաշտամունքը ծանօթ էին Հայաստանի մէջ. հաւանաբար այս պաշտամունքի հետ կապուած հանդէսներու առթիւ այս տեքստը կը գործածուէր:

Թեկղի պաշտամունքին գոյութեան մասին ուրիշ փաստ մը ունինք *Յայսմաւուրքի* շնորհիւ, որ կը պարունակէ նաեւ "Վկայաբանութիւն սրբուհւոյ կուսին Թեկղի" (15 Հոռի = 24 սեպտ.)[10]: Ի միջի այլոց հետաքրքրական է նկատել, որ այս վկայաբանութեան աղբիւրները ճիշտ մեր ուսումնասիրած երկու հայերէն թարգմանութիւններն են՝ "Թեկղի Գործք" եւ "Հրաշք Թեկղի": Ասիկա գրական աւանդութեան եւ Սրբուհիի պաշտամունքին միջեւ գոյութիւն ունեցող կապին նկատմամբ հետաքրքրական փաստ մը կը ներկայացնէ:

Փորձե՛նք առաջին հաշուեկշիռ մը կատարել: Ինչպէս տեսանք, Թեկղի աւանդութիւնը կարեւոր տեղ ունեցած է Հայաստանի մէջ, տարբեր դարաշրջաններու ընթացքին: Այս աւանդութիւնը հարստացած է մէկէն աւելի օտար աւանդութիւններու շնորհիւ: Մէկ կողմէ՝ ասորական աւանդութիւնը, V դ., միւս կողմէ՝ յունականը, գուցէ Գրիգոր Վկայասէրի ժամանակ: Ինչպէս արդէն ըսեր էինք, Ս.Թեկղի հայկական աւանդութեան զարգացման ուսումնասիրութեան միջոցով նոր տեղեկութիւններ կը քաղենք Հայաստանը եւ սահմանակից քրիստոնեայ ժողովուրդները կապող մշակութային եւ կրօնական առնչութիւններուն, մասնաւորապէս այդ սահմանակից երկիրներուն հայ մշակոյթի վրայ գործած ազդեցութեան: Եթէ մինչեւ հիմա նկատի առինք, թէ ինչպէ՞ս այս օտար Սրբուհին հայ կրօնական աշխարհին մէջ մտաւ եւ ո՞ր օտար աղբիւրներու միջոցով հայերը ճոխացուցած են Թեկղի աւանդութիւնը, շատ հետաքրքրական է նաեւ

ստուգել, թէ ինչպէ՛ս, ավելի ուշ, հայերն ալ իրենց կարգին տարածած են Սրբուհիին աւանդութիւնը Հայաստանի սահմաններէն դուրս՝ մինչեւ Արեւմուտք:

3. Ս.Թեկղի հայերէն աւանդութեան լատիներէն թարգմանութիւն մը

Ըստ XIV դ. պաշտօնական քանի մը փաստաթղթերու, որ Բարսեղոնայի արխիւներուն մէջ կը պահուին[11], հայերը տարածած են մինչեւ Կատալոնիա ոչ միայն Թեկղի աւանդութիւնը, այլ նոյնիսկ Սրբուհիին մէկ ճշխարը:

Այդ շրջանին յաճախակի եւ ջերմ կապեր գոյութիւն ունէին Արագոնայի եւ Կիլիկիոյ թագաւորներուն միջեւ, այսինքն՝ Յակոբ II-ի եւ Օշին II-ի միջեւ: Ըստ վերոյիշեալ պաշտօնական նամակներուն՝ 1319 թ. Յակոբ թագաւոր կը տեղեկացնէ Օշինին, որ Տարրագոնա՝ Արագոնայի մայրաքաղաքը կառուցած է Ս.Թեկղին նուիրուած աբեղաներու եկեղեցի մը[12]: Ան կը գրէ նաեւ, որ ինչ-ինչ աղբիւրներէ իմացած է, որ Թեկղի քանի մը ճշխարները կը գտնուին Կիլիկիա՝ Օշինի թագաւորութեան մէջ. *noviter ex fide dignorum relatibus ad nostrum pervenisse auditum, quod corpus beate tecle virginis, seu pars ipsius corporis, habetur in partibus regni vestri* (Նամակ Յակոբ թագաւորէն Օշին թագաւորին, 4. IX. 1319):

Այս մասին կարդա՛նք նաեւ Յակոբէն Տարրագոնայի եպիսկոպոսին ղրկուած նամակը, ուր թագաւորը կը բացատրէ, թէ ինչո՛ւ եւ ինչպէ՛ս ճշխարը խնդրած էր Կիլիկիոյ թագաւորէն. *...cum instantia maxima postularunt, ut cum tam fama publica, quam quorumdam relatione veridica diceretur illustrem Regem Armenie habere reliquias aliquas sacri corporis beatissime Tecla virginis et prothomartiris, ...nos ...nostros prefato regi dignaremur nuncios destinare, rogando eumdem ut siquas de reliquiis habebat, eisdem nobis deberet transmittere et donare* (Նամակ, 4. XII. 1320):

Կիլիկիոյ մէջ էր Սելեւկիա քաղաքը, ուր, ինչպէս տեսանք, ըստ հին աւանդութեան Թեկղ ապրած է: Արդարեւ զարմանալի չէ, որ Յակոբ ճիշտ Կիլիկիոյ մէջ կը փնտրէ Թեկղի ճշխարները: Ահավասիկ, 1320 թ. Թեկղի ճշխար մը՝ աջ թեւը, Կիլիկիայէն Կատալոնիա կը հասնի, ինչպես կրնանք կարդալ Յակոբ թագաւորի նոյն նամակին մէջ. *Rex... dicte sacre virginis brachium, cum nil aliud de dicto sacro corpore in dictis vel in aliis mundi partibus scitur a quoquam fuisse repertum, per suos legatos seu nuncios... nobis misit* (անդ):

Ս.Թեկղի ճշխարին փոխադրութիւնը երկու թագաւորներուն հոյակապ առիթ մը կ՛ընծայէ իրենց փոխադարձ բարեկամութիւնը վերահաստատելու:

Սակայն, եթէ աւելի ճշգրտօրէն նայինք Թեկղի հին աւանդութեանը, Թեկղի ճշխարի մը գոյութիւնը XIV դ. բոլորովին անսպասելի բան մըն է: Ինչո՞ւ: Որովհետեւ Թեկղի հին պաշտամունքին յատկանիշերէն մէկը ճշխարներու բացակայութիւնն է: Արդէն IV եւ V դդ. Սելեւկիա քաղաքը Թեկղի նուիրուած շատ ծանօթ վանք մը եւ եկեղեցիներ կը գտնուէին, զորոնք այցելած են նշանաւոր ուխտաւորներ, ինչպէս Գրիգոր Նազիանզացին: Գիտենք, որ Սրբուհիին ճշխարները չկային այնտեղ: Ճիշտ այս բացակայութիւնը արդարացնելու համար V դ. Թեկղի վարքին ամենածանօթ հեղինակը՝ կեղծ-Բասիլիոս Սելեւկացին կը գրէ, որ Թեկղը երբէք չէ մեռած[13]. ուստի անիմաստ է չմեռած Սրբուհիին ճշխարները փնտրել: Կը կրկնեմ, կարեւոր կէտ մըն է, V դ. կեղծ-Բասիլիոսի նպատակը Թեկղի ճշխարներու բացակայութիւնը արդարացնելն է: Այսքա՞ն՝ ինչ կը վերաբերի բիւզանդական աւանդութեան:

XIV դ. ինչպէ՞ս կ՛արդարացնեն Թեկղի մարմնի մէկ մասին գիւտը: Ինչպէ՞ս կը հաշտեցնեն հին աւանդութիւնը, որ կը մերժէր ճշխարներու գոյութիւնը, եւ նորը, որ կ՛ենթադրէր ճիշտ հակառակը: Այս հարցումներուն պատասխանը կը գտնուի 1920 թ. հրատարակուած միջնադարեան լատինական տեքստի մը մէջ, որ Բարսեղոնայի XIV դ. ձեռագիրի մը վրայ պահուած է[14]: Այս գրուածքին վերջին մասը կը պատմէ, թէ ինչպէս

Թեկղի ճշխարը գտնուած է եւ Յակոբ թագաւորին ղրկուած: Տեքստին վերջաւորութեան յիշատակարան մը կայ, որուն համաձայն այս լատինական գրուածքը հայերէն բնագրի մը թարգմանութիւնն է, զոր Օշին թագաւորն ինքը պատրաստել տուած է իր դիւանատան: Ի յառաջագունէ անհաւատալի բան մը չէ այս: Գիտենք, որ Կիլիկիոյ շրջանին հայերը սովոր էին լատիներէն ուսանիլ՝ մանաւանդ Դոմինիկեան քարոզիչներէն: Գիտենք նաեւ, որ անոնք երբեմն լատին քարտուղարներ ալ կ՛օգտագործէին իրենց դիւանագիտական կարիքներուն համար: Բայց կարելի՞ է արդեօք գիտնալ, թէ իսկապէս հայերը ըրած են զայն եւ ոչ թէ կատալոնացիները: Բարեբախտաբար յիշատակարանին մէջ յիշուած քարտուղարին անունը՝ Նիկոլա դէ Բայս, մեզի ծանօթ է. գիտենք, որ իրապէս ան աշխատած է Օշինի թագաւորական պալատին մէջ[15]: Ուրեմն, հաւանօրէն այս տեքստը Կիլիկիա գրուած է:

Բայց ուրիշ հարցումի մը ևս պէտք է պատասխանենք: Կարելի՞ է արդեօք ստուգել, թէ այս լատինական գրուածքը հայերէնէ եկող թարգմանութիւն մը ըլլայ: Այս հարցման պատասխանելու համար պէտք է համեմատենք լատինական տեքստը եւ հայերէն ծանօթ երկերը, այսինքն՝ այն երկերը, զոր վերեւ յիշեցի՝ "Թեկղի Գործք" եւ "Թեկղի Հրաշք": Այսպէս կը հասնինք ուղղակի ներկայ հետազօտութեանս արդիւնքներուն: Այսպիսի համեմատութիւն մը ընելով՝ կրցայ ստուգել, որ լատիներէնի առաջին մասը հայերէն "Թեկղի Գործք"-ի թարգմանութիւնն է: Յիշենք, որ հայերէնը ասորերէն բնագրէ մը թարգմանուած է: Քանի մը սխալներ, որ "Թեկղի Գործք"-ի հայ թարգմանիչը ըրած էր ասորերէն բնագիրը թարգմանելով, կը գտնուին նաեւ միջնադարեան լատիներէն տեքստին մէջ. ապացոյց, որ լատիներէնը մեզի ծանօթ հայերէն բնագրէն կու գայ: Տեսնե՛նք օրինակ մը.

յուն. *ἦν δὲ ὁ Παῦλος νηστεύων... ἐν μνημείῳ...*
ասոր. *wpwlws s'm hw'...byt 'lm' hd...*
հայ. *Եւ Պաւղոս ի պահս էր... ի տան առն միոջ երիտասարդի*
լտ. *Paulus vero beatus apostolus...in domo cuiusdam iuuenis...residebat...*
("Թեկղի Գործք", գլուխ 23)

Յունարէն *μνημείῳ* կը նշանակէ "գերեզման" եւ ասորերէն թարգմանուած է *byt 'lm'*, որ նոյն իմաստը ունի: Այս ասորերէն բառին շատ մօտ է ուրիշ բարդ բառ մը՝ *byt 'lym'*, որ կը նշանակէ "երիտասարդի (*'lym'*) տուն (*byt*)": Հայ թարգմանիչը այս երկրորդ (սխալ) ձեւով կարդացած է եւ թարգմանած՝ *ի տան առն միոջ երիտասարդի*: Լատիներէնին մէջ կը կարդանք *in domo cuiusdam iuvenis*, որ հայերէն *ի տան առն միոջ երիտասարդի* թարգմանութիւնն է:

Ինչ կը վերաբերի լատիներէնի երկրորդ հատուածին, նման ուսումնասիրութեամբ մը ստուգեցի, որ ան ալ հայերէն "Թեկղի Հրաշք"-ի թարգմանութիւնն է: Դարձեալ յիշենք, որ այս երկրորդ հայերէն տեքստն ալ վերոյիշեալ յունարէն բնագրէն եկող հայերէն թարգմանութիւն մըն է: Յունարէն "Թեկղի Հրաշք"-ի հայերէն թարգմանութիւնը զանազան տարբերութիւններ ունի իր բնագրին համեմատութեամբ: Նոյն տարբերութիւնները կը գտնուին նաեւ լատիներէնին տեքստին մէջ: Ապացոյց, որ լատիներէնի երկրորդ մասը հայերէն "Թեկղի Հրաշք"-ի թարգմանութիւնն է: Լոկ օրինակ մը քննե՛նք.

յուն. *ἐξῆλει συλλέγειν βοτάνας...*
հայ. *եւ ժողովէր արմատ դալար զվայրենի բանջարոց...*
լտ. *...et radices viridentes herbarum silvestrium...colligebat...*
("Հրաշք Թեկղի", գլուխ 2)

Յունարէն *βοτάνας* "բոյսեր" թարգմանուած է հայերէն *արմատ դալար զվայրենի բանջարոց*. նոյն դարձուածքը կը գտնենք նաեւ լատիներէնի մէջ. *radices viridentes herbarum silvestrium*:

Լատիներէն գրուածքին այս երկրորդ մասը կը վերջանայ Թեկղը ընդունելու համար բացուող վէմին հրաշքով: Այս պատմուածքէն ետք, լատիներէնը երրորդ մաս մը ունի, ուր Թեկղի նշխարը յիշուած է: Այս հատուածը կը պատմէ, որ այն շրջանին, երբ քրիստոնէութիւնը յաղթեց հեթանոսութեան, քրիստոնեաները սկսան փնտրել սուրբերու եւ վկաներու նշխարները: Նաեւ յոյները սկսան փնտրել Թեկղի նշխարները Սելեւկիա: Բազմաթիւ եւ անվերջ աղօթքներէ ետք, ահա հրեշտակ մը կ'երեւի քաղաքին հայրապետին, յայտնելով իրեն, որ Թեկղի վէմին քով Սրբուհիին մէկ նշխարը պիտի կարենայ գտնել: Ուրիշ բազմաթիւ աղօթքներէ ետք, վէմը երկրորդ անգամ մը հրաշագործօրէն կը բացուի: Թեկղի նշխար մը դուրս կ'ելլէ եւ հայցողներուն տրամադրութեան կը մնայ. *...cepit locus, membra virginis continens, submoveri et scissus est lapis in medio, et apertus est mons atque intuentibus visibiliter cunctis astandibus cum redolentissimo consolacionis odore universam regionem implente, tecle dextera coniuncta cum brachis usque ad lacesti iuncturam de saxo progrediens, devote querentibus se concessit.* Այս երրորդ մասին նպատակը յայտնի է. Թեկղի աւանդութեան վրայ նոր յաւելումը կ'ուզէ հաշտեցնել նշխարներու բացակայութեան հին աւանդութիւնը եւ նշխարներու գիւտին նոր աւանդութիւնը. ան կ'ուզէ նաեւ Թեկղի նշխարին "վաւերականութեան կնիք" մը տալ: Ո՞վ է արդեօք հեղինակը լատիներէն այս վերջին մասին: Հայե՞րը՝ իրենց նուէրին աւելի մեծ արժէք մը տալու համար, թէ՞ սպանացիները՝ իրենց պաշտած Սրբուհիին նշխարին կարեւորութիւնը եւս աւելի շեշտելու համար: Գրուածքին վերջին մասին մէջ պարունակուած քանի մը կէտերը կը թելադրեն հայկական ծագում մը:

Ի հարկէ լատիներէն տեքստը կը շարունակէ, աւելցնելով, որ այս նշխարը, զոր նախ եւ առաջ յոյները գտած են, յետոյ ստացած են հայերը՝ այս գաւառին տիրելէ ետք: Ան ինք կը պահեն նշխարը մինչեւ որ Կաթալոնիայի թագաւորը իր խնդրանքը կը յայտնէ Օշին թագաւորին: Լատիներէն տեքստը կ'ըսէ նաեւ, որ այս խնդրանքը լսելով, Օշին կը խորհի, որ քրիստոնեայ թագաւորներու միջեւ բարեկամութիւնը նոյնիսկ աւելի կարեւոր է, քան Թեկղի նշխար մը ունենալը: Չմոռնա՛նք, որ միջին դարուն նշխարները շատ մեծ կարեւորութիւն ունէին: Միջնադարեան մարդոց համար նշխարներուն ներկայութիւնը կը նշանակէր նոյնիսկ սրբոց ներկայութիւնը, որ կը շարունակէին իրենց պաշտպանութիւնը եւ հրաշքները ընծայել հաւատացեալ ժողովուրդին:

Այս հանգամանքը նկատի ունենալով՝ Օշինի կարգադրութիւնը աւելի ճիշտ կրնանք գնահատել: Գիտենք, որ այս հայ թագաւորին համար Քրիստոնեայ Արեւմուտքի հետ կապերը շատ կարեւոր եղած են: Գիտենք նաեւ, որ Օշինի թագաւորութեան ժամանակ զանազան ճիգեր կատարուեցան Պապութեան եւ ընդհանրապէս կաթողիկէ արեւմտեան թագաւորութիւններուն հետ դաշնակցութիւն ստեղծելու նպատակով: Օշինի թագաւորութեան ընթացքին տեղի ունեցան նաեւ Սիսի (1307) եւ Ադանայի (1316) յայտնի եկեղեցական ժողովները:

Մեր լատիներէն տեքստը կը վերջանայ շատ հետաքրքրական գաղափարով մը. գրողը կը մաղթէ, որ Թեկղը, որ նախ Հայաստան ապրած էր եւ որ յետոյ տեղափոխուեցաւ Կաթալոնիա, շարունակէ իր հովանին տարածել երկու քրիստոնեայ թագաւորութիւններուն վրայ: Ահա՛, սկզբնաբար հայոց բոլորովին օտար եւ ապա դարերու ընթացքին հայոց կողմէն որդեգրուած այս սրբուհին Կիլիկեան շրջանին կը դառնայ քրիստոնեայ թագաւորներու միջեւ բարեկամութեան պաշտպան Սրբուհին: Իբրեւ վերջին եզրակացութիւն կրնանք աւելցնել, որ քաղաքական եւ դիւանագիտական հրամայականն ալ գործակցած է ճոխացնելու Թեկղի աւանդութեան զարգացումը[16]:

Ծ ա ն օ թ ա գ ր ու թ իւ ն ն ե ր

1 Տե՛ս Sp. Յովսէփ Ստյիգովսկի, *Էջմիածնի Աւետարանը* (ուսումնասիրութիւն հայկական, ասիական եւ ասորա-եգիպտական գեղարուեստի), թարգմ. Հ. Բառնաբաս վ. Պիլէզիկճեան, Վիեննա, 1892, էջ 5-6; **P.Donabédian**, Apports byzantins dans la sculpture arménienne préarabe, **H.Ahrweilre**, *L'Arménie et Byzance* (Byzantina Sorbonensia, 12), Paris, 1996, p. 90; **A.Khatchatrian**, *L'architecture arménienne du IVe au VIe siècle* (Bibliothèque de cahiers archéologiques, 7), Paris, 1971, pp. 67-68.

2 "Թեկղի Գործք"-ը հրատարակուած է առաջին անգամ Հ.Ղ.Ալիշանի կողմէ (տե՛ս *Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց. Հատընտիր բաղեալք ի մատենագրաց*, Ա, Վենետիկ, 1874, էջ 513-531): Երկրորդ եւ գիտական հրատարակութիւնը կատարած է Ի.Աբուլաճեան՝ հայերենի կատարուած հին վրացերէն թարգմանութեան առկցումով, (տե՛ս Ի.Աբուլաճեան, *Աշխատութիւններ*, հ.1, Թբիլիսի, 1975, էջ 45-124, վրացերէն): Նոր հրատարակութիւն մը պատրաստած եմ դոկտորական ատենախօսութեանս մէջ (տե՛ս **V.Calzolari**, *La leggenda di santa Tecla nella letteratura armena antica. Introduzione, edizione critica e traduzione annotata del testo armeno degli Atti di Tecla e dei Prodigi di Tecla*, Università Cattolica, Milano, 1995, pp. 76-150):

3 Այս մասին տե՛ս **V.Calzolari**, Notes sur la traduction arménienne du texte syriaque des Actes de Thècle, *"Proceedings of the Fifth International Conference on Armenian Linguistics (McGill University. Montreal, Quebec, Canada, May 1-5, 1995)"*, Delmar, N.Y., 1996, p. 233-243; **Idem**, La trasmissione dei testi apocrifi cristiani in armeno: l'esempi degli Atti di Paolo e Tecla, in A.Valvo (ed.), *"La diffusione dell'eredità classica nell'età tardoantica e medievale. Forme e modi di trasmissione"*, Alessandria 1997, pp. 45-58. Ասորերէն տեքստին մասին տե՛ս **W.Wright**, *Apocryphal Acts of the Apostles*, London, 1871 (Amsterdam, 1968), I, pp. 128-169.

4 Տե՛ս **M.Bonnet**, **R.A.Lipsius**, *Acta Apostolorum Apocrypha*, vol.II, 1, Leipzig, 1898 (Darmstadt, 1959), էջ 245-273.

5 Այդ է վկայում նաեւ հայերէնից կատարուած թարգմանութեան Շուշանիկի վկայաբանութեան վրացական խմբագրութեան աղբիւր ծառայելու փաստը:

6 Տե՛ս **V.Calzolari**, De Sainte Thècle à Anahit: Une hypothèse d'interprétation du récit de la mort de l'empereur Valens dans les *Buzandaran Patmut'iwnk'*, in N.Awde (ed.), *Armenian Perspectives (10th Anniversary Conference of the Association Internationale des Études Arméniennes. School of Oriental and African Studies)*, Richmond, Surrey 1997, pp. 39-49; 371-377; **Idem**, Santi armeni e imperatori romani: eroi in conflitto. (Il patriarca armeno Nersès e l'imperatore romano Valente nei *Buzandaran Patmut'iunk'*), in C.Mutafian (ed.), *Roma-Armenia*, Roma, 1999, pp. 74-76.

7 Տե՛ս **N.G.Garsoian**, *The Epic Histories (Buzandaran Patmut'iwnk')*, Cambridge, MA, 1989, pp. 11-16.

8 Տե՛ս **V.Calzolari**, Un nouveau texte arménien sur sainte Thècle: Les Prodiges de Thècle (Présentation et analyse linguistique), *"Revue des études arméniennes"*, 1996-1997, 26, pp. 249-271. Հրատարակութիւն՝ **V.Calzolari**, *La leggenda di santa Tecla nella letteratura armena antica...*, pp. 151-164.

9 Տե՛ս **G.Dagron**, *La Vie et les Miracles de sainte Thècle* (Subsidia hagiographica, 62), Bruxelles, 1978, pp. 416-421 (= BHG 1718m).

10 Տե՛ս **G.Bayan**, Le Synaxaire arménien de Ter Israel, *"Patrologia Orientalis"*, 1910, 6, pp. 277-285.

11 Տե՛ս **G.Villada**, La traslacion del brazo de Santa Tecla desde Armenia a Tarragona (1319-1323), *"Estudios eclesiasticos"*, 1922, 1, pp. 41-50; **K.J.Basmadjian**, Jacques II, roi d'Aragon et Oschin, roi de la Petite Arménie (1310-1320), *"Revue de l'Orient Latin"*, 1905-1908, 11, pp. 1-6; **C.Marinesco**, La Catalogne et l'Arménie au temps de Jacques II (1291-1327), *"Mélanges de l'École Roumaine en France"*, II, Paris, 1923, pp. 5-37.

12 Սպանիոյ մէջ Ս.Թեկղի պաշտամունքի մասին տե՛ս S.Misser, *El libro de Santa Tecla*, Barcelona-Tarragona, 1977.

13 Տե՛ս **G.Dagron**, op. cit., p. 280, l. 7-10.

14 Տե՛ս **G.Villada**, op. cit., pp. 113-124; 215-228 (= BHL 8022b-c).

15 Տե՛ս **J.Richard**, La diplomatique royale dans les toyaumes d'Arménie et de Chypre (XIIe-XVe siècles), *"Bibliothèque de l'École des Chartes"*, 144, 1986, p. 72. Իմ երախտագիտութիւնը կը փափաքիմ յայտնել փրոֆ. Ժ.Ռիշարի հանդէպ, որ նամակով մը ազնուութիւնն ունեցաւ այս մասին կարեւոր տեղեկութիւններ հաղորդելու ինծի:

16 Իմ շնորհակալութիւնը կը փափաքիմ յայտնել փրոֆ. Պ.Լ.Ջէքիեանին, որ այս հայերէն յօդուածս կարդաց հրատարակութենէն առաջ:

Феликс Тер-Мартиросов

ПРЕДДВЕРИЕ ХРИСТИАНСТВА В АРМЕНИИ

Исследования процесса принятия христианства в Армении, как правило, проводятся на основании изучения исторических письменных сведений и, прежде всего, ''Истории Армении" Агатангелоса. При рассмотрении этих данных основное внимание уделяется изучению политики знати страны и царской власти в этом направлении. Как основные выводы выделяются:

а) принятие христианства как государственной религии в стране благодаря деятельности Григория Просветителя;

б) разрушение христианами дохристианских культовых сооружений и разрыв преемственности дохристианской и христианской культур;

в) определение в качестве основной причины принятия христианства как государственной религии, политико-культурного противостояния Армении ассимиляционной политики Сасанидского Ирана и Византии[1].

Сопоставление накопленного за последние годы археологического материала с другими историческими источниками позволяет уточнить некоторые вопросы христианизации Армении. В данной работе затронуты три вопроса:

а) состояние религиозных верований и культуры страны перед принятием христианства;

б) связь дохристианских и христианских культурных традиций;

в) выявление внутриполитических причин принятия христианства как государственной религии.

Основываясь на сохранившихся письменных сведениях по античному пантеону Армении и форме имен богов, исследователи предполагали статичное состояние культов страны с VI в. до н.э. по IV в. н.э. и их формирование под воздействием иранских религиозных воззрений[2]. Однако рассмотрение археологического материала, культовых сооружений и предметов, позволяет утверждать, что для данного периода следует различать три этапа развития[3]. На первом этапе, в VI-III вв. до н.э., сохраняется традиционная для племен Армянского нагорья форма поклонения древним божествам с их восприятием, в основном, в зооморфном облике или в виде идолов. Показательно, что даже в святилище ахеменидского времени, открытом в дастакерте правителя Ширака, Драсханакерте, богиня Анаит почиталась в облике коровы-нетеля, о чем можно судить по наличию хлева в святилище[4]. Данная форма почитания богини Анаит была чужда верованиям ахеменидского Ирана. Антропоморфно, в очень архаичном облике, изображалась лишь богиня прародительница, что хорошо отражается в материалах Ервандашата[5]. Не менее показательно, что, несмотря на тщательность и большой объем расскопок древнего Армавира, бывшего в ахеменидский период крупным политическим центром, лишь найденная здесь каменная ступа[6] может рассматриваться как отражение иранской религиозной практики изготовления священной хаомы.

Второй этап, со II в. до н.э. по середину II в. н.э., является временем развития эллинистической культуры в Армении. Характерно, что Мовсес Хоренаци[7] для древней столицы Армении, города Армавира, указывает на наличие в храмах города

статуй предков царя и Солнца, и Луны (II, 8). Но в рассказе о Тигране Среднем, т.е. о Тигране Великом, наиболее могущественном царе эллинистической Армении, Мовсес Хоренаци (II, 14) сообщает, что Тигран установил изображения Дия Олимпийского, т.е. Зевса, Афины, Афродиты и ее возлюбленного – Геракла. В этих сообщениях ясно прослеживается развитие характера культов. Для раннего периода боги упоминаются по их функциональному признаку. Это позволяет предположить, что боги почитались в символическом образе. В дальнейшем, в эллинистическое время, боги предстают в антропоморфном облике. При этом, судя по указанию на то, что Геракл воспринимался как возлюбленный Афродиты, т.е. по наличию мифологического сюжета не характерного для греческой мифологии, можно говорить, что *в Армении боги, отождествляемые по имени с греческими божествами, сохраняли свою древнюю мифологию.* Наиболее ярко этот период развития древних культов прослеживается по распространению в это время терракотовых статуэток, изображавших богов Армении. Интересно отметить, что при этом древние боги изображались в художественной манере, присущей как для эллинистического искусства Мессопотамии, так и для эллинистического искусства Малой Азии. Так, богиня Анаит предстает в облике, присущем для греко-римской Великой богини – Матер Матура, и выступает как покровительница царского дома[8]. Богиня Астхик изображалась в облике Афродиты в гроте. Бог Митра изображается как в парфянской манере в виде всадника на вздыбленном коне[9] или пешего мужчины[10], так и в виде головы римского солдата[11]. При этом нет никаких оснований утверждать о сильном влиянии иранских культов в Армении. Так, если в это время в Армении засвидетельствован культ бога Тира[12], то наряду с ним встречено изображение Силена[13]. Таким образом, можно говорить, что при наличии культурных влияний Востока и Запада, в основе культов страны сохраняются традиционные местные божества. Особо подчеркну, что бытующая практика говорить о распространении иранских верований в Армении[14] на основании общности формы имен, как например имени Митры, не корректна. Следует помнить, что боги Митра и Варуна, засвидетельствованные на юге Армянского нагорья еще в середине II тысячелетия до н.э., продолжали традиционно почитаться и в последующие периоды[15].

Третий период развития, с конца II в. по начало IV в., характеризуется сохранением двух – западного и восточного – течений культурного влияния на страну. Конец II в. характеризуется ослаблением конфронтации Парфии и Армении с Римской империей. Со становлением в Иране династии Сасанидов армянские Аршакиды полностью стали ориентироваться на союзные отношения с Римом. Все это приводит к усилению влияния культуры и искусства Римской империи в Армении. Утрата Аршакидами древних династийных храмов на территориях Парфии и Ирана, обусловило построение новых династийных храмов на территориях Армении. В Гарни, Вагаршапате и других местах страны сооружаются новые храмы по образцам храмов восточно-римских провинций. Одновременно с этим происходила ревизия официального пантеона богов с закреплением формы имен, бывшей традиционной для Парфии. Повидимому, именно в это время в Армении закрепляются имена богов *Арамазд, Спандарамет.*

Таким образом, как представляется, *следует отказаться от тезиса развития дохристианских культовых воззрений под преобладающим воздействием иранского зороастризма.* Археологический материл подтверждает существующие исторические представления о проводимой царями Армении политики политического и культурного противостояния влиянию Ирана. Можно говорить, что развитие влияний на культовые воззрения в стране отражали общую ситуацию развития политко-культурных связей Армении с окружавшим ее миром. Ухудшение политических отно-

шений между Арменией и Сасанидским Ираном обусловило ослабление официальной религиозной ориентации на Иран. Известна антизороастрийская политика царя Трдата III[16], хотя возможно, что в ряде регионов, тесно связанных с Ираном, местная знать могла поддерживать иранские религиозные воззрения.

Можно также предположить, что острая антизороастрийская направленность труда Езника Кохбаци[17], автора V в., отражает более древнюю традиционную дохристианскую направленность армянской культуры, идущую с III в. Таким образом, можно говорить, что религиозная ситуация в Армении, накануне ее христианизации, была близка к положению в соседних с ней регионах восточных провинций Римской империи, таких как Каппадокия, где христианство распространилось так же рано.

Как указывалось выше, в проведеных исследованиях основное место уделялось отношению высшей знати к распространению христианства, но не меньший интерес представляет уточнение среды, в которой в Армении распространялось христианство. Исследователи данного вопроса уделяли особое внимание значению деятельности иудейской общины в распространении христианства. Сведения о данной общине построены на сообщениях историков Мовсеса Хоренаци и Фавстоса Бузанда[18]. Наибольший интерес представляет сообщение Фавстоса Бузанда о выводе сасанидскими войсками из городов Армении в общей сложности 95 тысяч семей евреев, проживавших в них с времен царя Тиграна II (IV, 55). Учитывая, что в древности в состав семьи включались и слуги (особенно у иудеев с характерной для данной религии связи повседневного быта с религиозной обрядностью), общее число евреев в Армении должно было бы составлять около одного миллиона. Сообщение Фавстоса Бузанда, не имеющее параллелей в сведениях других армянских историков, отмечалось многими арменоведами как реальный исторический факт. Специальное исследование этого вопроса[19] показало, что сообщение о выводе евреев из Палестины царем Тиграном II лишено исторической правды. Исходя из этого, было предложено объяснить сообщение Фавстоса о наличии евреев в Армении прозелитством, т.е. принятием иудейства в I-IV вв. значительной частью армянского населения городов, а также высказано предположение о возможности влияния этого фактора на процесс распространения христианства. Считая абсолютно корректным предположение о прозелитстве Шамбата Багарата и не оспаривая возможности проживания в городах Армении какой-то части еврейского населения, отмечу, что данное сведение Бузанда не может восприниматься прямолинейно, некритично. Если согласиться со сведениями Бузанда, то независимо от того, были ли евреи выведены из Палестины или же это армяне, принявшие иудейство, во всех случаях наличие огромной массы населения, исповедовавшего на протяжении четырех веков иудейство, должно было оставить материальные следы в виде культовых построек, синагог, какие были обнаружены в античных городах Передней Азии, и предметы, связанные с иудейской культовой обрядностью. Однако, ведущиеся уже более 30 лет раскопки античных городов Армении, в том числе древнего Арташата, не выявили ни одного подобного факта. Как представляется, сведения Фавстоса Бузанда могут быть объяснены лишь при понимании отношения Фавстоса Бузанда к горожанам. Наиболее ярко оно отражено при описании гибели города Аршакавана. Исследователями уже отмечалась разность пересказа данного события в трудах Мовсеса Хоренаци и Фавстоса Бузанда. Если Хоренаци (III, 27) описывает гибель царского города Аршакавана, в который стекалось население страны в поисках защиты от знати страны, в результате нападения на него феодалов страны, то Бузанд (IV, 13) изображает гибель города как справедливую божью кару в виде эпидемии, уничтожившей нечестивое население после проклятия, произнесенного христианским католикосом. Здесь

отчетливо проявляется отрицательное восприятие Бузандом горожан. Представляется, что именно этим надо объяснить использование им этнонима "евреи". При исследовании культуры восточных провинций Римской империи отмечено, что во II-III вв. шел процесс превращения терминов "эллины", "римляне", "египтяне" из понимания их как этнические в восприятие их как классовые, подчеркиваемые различиями в культуре, языке[20]. В этой связи интересно вспомнить, что Хоренаци (II, 8) отмечал, что по велению царя Вагаршака, "горажане должны были быть более уважаемы и почитаемы, нежели сельчане; сельчане должны почитать горожан наравне с вельможами".

Несомненно, что в период становления феодального строя в Армении население городов, поддерживающее царскую власть, рассматривалось земельной знатью и, возможно, частью церковной знати, как противостоящий им по культуре и политической направленности элемент, а значит чуждый элемент. Именно поэтому Бузанд употребляет термин "евреи", противопоставляя его христианству. Одновременное употребление Бузандом терминов "евреи и армяне" при указании численности населения городов, как представляется, являлось указанием на численность собственно горожан, именуемых им евреями, и жителей сельской округи принадлежавшей городу, именуемых Бузандом как армяне. *Археологический материал городов и других поселений Армении позволяет утверждать о сравнительной однородности культуры страны перед принятием христианства.* Использование Фавстосом термина "евреи" для обозначения горожан не отражал реальности их конфессиональной принадлежности. Как отмечалось выше, даже предполагалось, что наличие иудейской общины в городах лишь способствовало распространению христианства в стране.

Сообщение Агатангелоса о том, что первые христианки, сподвижницы св. Рипсимэ занимались производством стеклянных изделий[21], позволило предположить, что христианство распространялось в среде горожан-ремесленников. Как представляется, распространение христианства прежде всего в ремесленной среде обусловило прекращение изготовления терракотовых статуэток с изображением античных богов со второй половины II в.[22], что является фиксацией времени распространения христианства в Армении. Интересно отметить, что данный процесс в это же время прослеживается и в погребальном обряде. Наиболее ярко это отражается в материалах некрополя храмового поселения Ширакаван[23]. Захоронения II в. сохраняют черты древней обрядности – кромлех вокруг плиты, ямочки на плитах для ритуальных возлияний, сквозные отверстия, символизирующие возможность возрождения погребенного. Погребенный помещался в скорченном положении, в зависимости от пола (на правом боку – мужчина, на левом – женщина). Ориентация погребенных, независимо от пола, головой на запад. В захоронениях III в. распространяется положение погребенного на спину в вытянутом виде, со сложенными на груди руками, в позе, которая становится характерной в последующее время для христианских захоронений. Материалы Ширакаванского некрополя, свидетельствующие о постепенном, на протяжении двух веков, восприятии христианской обрядности, сейчас подтверждаются материалами других памятников. Интересен и другой аспект. Как известно, все исторические источники указывают на большую роль женщин в распространении христианства в Армении. Как представляется, отказ в погребальной символике от подчеркивания связи позы погребенного с его полом позволяет говорить, что распространение христианства воспринималось как шаг в установлении равноправия между мужчинами и женщинами.

Рассмотрение погребальной обрядности интересно и для прослеживания связи дохристианских и христианских культурных традиций. Как уже было сказа-

но, погребенные ориентированы головой на запад. Погребения, распространившиеся в Армении со II в., представляют собой каменные ящики, сложенные из больших плит. Как отмечалось, захоронения II в. сохраняют черты древней обрядности: кромлехи, ямочки на плитах, сквозные отверстия, в ряде захоронений обнаружены фалические идолы и положенный по древней традиции богатый сопутствующий материал. Погребенные в этих гробницах определенно не были христианами. Как представляется, эти древние погребения, сооруженные из каменных плит, символизировали скальные помещения и принадлежали последователям культа Митры, но не иранского, а западного толка, выступавшего соперником христианства. Из этого следует, что традиция ориентации погребенных головой на запад, характерная для христиан, имеет дохристианские корни. Как представляется, раннехристианские, пещерного типа культовые постройки Армении в качестве своих прототипов также могли иметь древние пещерные культовые святилища, посвященные Митре.

Подчеркну, что расхожее утверждение о возведении христианских церквей Армении на руинах античных храмов пока не подтверждается фактами. Сейчас несомненен факт перестройки в Гарни в 325 г. царем Трдатом III античного храма, посвященного культу царской династии в христианский мартирий – усыпальницу святой царевны Хосровидухт[24]. А.Саинян предположил возможность перестройки античных сооружений в христианские строения для базилики в Касахе и мартирия в Зовуни. Исследования А.Саиняна в Эчмиадзине выявили использование тесанных известковых камней из античных строений в основаниях кафедрального собора и церкви св. Рипсимэ[25]. Однако, представляется весьма спорным определение небольшой постройки, возведенной из рванного камня на глинянном растворе с очагом в виде тонира, находящейся под алтарной частью собора как храма огня. Представляется более вероятным, что данное сооружение является частью дома, в котором тайно, для молитв, собирались первые христиане. Такие молитвенные дома первых христиан открыты при раскопках античных городов Переднего Востока[26]. С официальным принятием христианства это место послужило основанием для возведения здесь нового молитвенного дома, каким первоначально являлась церковь. Отражение этого процесса более четко прослеживается в Ереруйке. Здесь, в пустынной местности, около более древних святилищ, первые христиане стали использовать для богослужений пещерные сооружения. Сохранились две древние пещерные церкви. В их окрестностях обнаружены также пещерные кельи и погребения этого времени[27]. В V в. в 30 метрах южнее пещерных церквей была возведена Ереруйкская базилика, на южной стене которой сохранилась надпись того времени на греческом языке из 92 псалма: "Дому твоему, Господи, подобает святость и длинные дни". Так победившее христианство, отказываясь от прежней скромности и скрытости, подчеркивало свое торжество возведением величественных строений.

Большой интерес представляет вопрос роли царской власти в принятии христианства. Под влиянием "Истории Армении" Агатангелоса образовалась традиция восприятия царя как грешника, которого постигла божья кара и спасение которого возможно было лишь с принятием христианства. Картина крещения у Агатангелоса показана как насильственное действие не только для царя, но и для всей страны. Это обуславливает кратковременность, почти одномоментность описания событий. К сожалению, не сохранились другие исторические источники, описывающие крещение Армении. В труде Мовсеса Хоренаци оно должно было размещаться между 82 и 83 главами II книги. Факт отсутствия его в труде Хоренаци не случаен, и ключ к его разъяснению имеется в 92 главе II книги: "Повествуя о светлом и великом втором подвижнике нашем, духовном распорядителе нашего

просвещения, об истином царе, бывшем когда-либо после Христа, следует говорить самыми возвышенными словами, как о сподвижнике и ревнителе, равном первопроходцу и родоначальнику нашего просвещения. Святому Духу было угодно отдать старшинство моему просветителю только через жребий исповедничества, добавлю от себя – и апостольства, а в остальном они были равны в словах и делах. Сказал бы даже, что царь здесь имел преимущество, ибо созерцание Бога и суровый образ жизни были равно свойственны им обоим, а умением покорять убедительным и властным словом в большой мере был наделен царь, *ибо его действия никогда не отклонялись от веры*" (курсив наш – Ф.Т.-М.). Ясно, что образ и значение царя Трдата III, отраженные в труде Хоренаци, в процессе принятия христианства резко отличаются от ставшего уже традиционным образа царя-грешника. В противовес легенде Агатангелоса в Истории Мовсеса Хоренаци царь Трдат III выступает первопроходцем в распространении христианства в не меньшей степени, чем сам святой Григор. О том, что царь Трдат придавал большое значение христианизации страны, свидетельствует принятие им при крещении имени Ованес и постройка им в Багаране храма своего патрона, св. Иоанна. Этим царь как бы сопоставлял свою деятельность в распространении христианства в стране со значением Иоанна Крестителя в христианском учении. Проводя христианизацию страны, Трдат III преследовал прежде всего цель укрепления царской власти в борьбе с крепнувшей феодальной властью. Порывая с древними религиозными воззрениями, Трдат отказывался от идеи восприятия царя как потомка богов, но при этом он лишал такого же идеологического обоснования и знать страны, также возводившую свою родословную к божественым предкам. В то же время, как уже отмечалось исследователями, принимая христианство, царь выступал прямым наместником единого бога на земле, на что уже не могла претендовать старая знать. В укреплении позиций царского дома большую роль играла и сестра царя Хосровидухт. Раннеармянские историки подчеркивают ее особые заслуги в принятии и распространении христианства в стране. После ее смерти, Хосровидухт стала восприниматься как святая из царского дома, и Гарнийский храм был превращен в ее мартирий. Это событие отражено в 90 главе II книги "Истории Армении" Мовсеса Хоренаци: "Զայսու ժամանակս կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնւոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ. յորում շինեալ և *սրահ խորհրդաւոր, մահարձանօք*, սրաճշելի դրօշուածովք, բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ, և գրեալ ի նմա գիշատակ իւր հելլենացի գրով": – "В те времена завершил Трдат постройку крепости Гарни из тесанных базальтовых камней, скрепленных железными скобами, спаянных свинцом. В ней он соорудил дом прохлады (усыпальницу) с мемориальными стеллами, чудесными изваяниями, высокой скульптурой для сестры своей Хосровидухт и начертал на ней в ее память (надпись) эллинскими буквами" (перевод с древнеармянского наш – Ф.Т.-М.).

По-видимому, уже на ранних стадиях принятия христианства в Армении началась борьба между царским домом в лице царя Трдата, который, как и византийские императоры, старался подчинить своей власти церковь, и церковной иерархией. В свою очередь церковь стремилась подчинить божественному авторитету царскую власть. Поражение царя в этой борьбе привело к уходу Григора Лусаворича и к насильственной смерти царя Трдата, а также к установлению монофизитства, как формы христианства, исключающей возможность обожествления царской власти. Как результат борьбы за главенство над церковью возникли две версии принятия христианства в Армении. Царская, отрывочно сохранившаяся в труде Мовсеса Хоренаци, и церковная – Агатангелоса, в которой царь предстает в облике грешника, а акт принятия христианства рисуется как полный разрыв христианской культуры с прошлым.

Для нашей тематики интересно, что создавая эту легенду, авторы ее вынуждены были использовать дохристианские фольклорные принципы создания легенд, переставляя лишь знаки плюс и минус. Если по древним представлениям истинный царь должен был обладать огромной силой, и в Истории Хоренаци царь Трдат представлен исполином, разрубающим пополам противников, то в христианской легенде Трдат не в силах овладеть девой Рипсимэ. Кабан-вепрь в древних мифах и ритуалах выступал в качестве существа, посланного богами для ритуальной проверки праведности и мощи воскресающих и умирающих богов, временных царей и героев. Не случайно, поэтому, сцена убийства кабана царем, т.е. подчеркивание благости и силы царя, являлась одной из наиболее распространенных в изобразительном искусстве древнего мира[28]. В христианской легенде о Трдате, в которой сюжет построен на наказании царя-грешника за преследование христиан, его расскаивании и физическом и духовном возрождении при принятии христианства, царь Трдат не гибнет, а сам принимает облик кабана. Как известно, и сегодня некоторые исследователи армянского средневекового искусства склонны видеть в изображениях звериноголового человека, на четырехгранных стеллах, образ царя Трдата. Однако, рассмотрение географии находок стелл в Армении и на территории Византии, и агиографии, позволяет утверждать, что в этих изображениях передана иконография псаглавого святого Христофора[29]. Это однако не исключает воможности того, что в более поздние времена данные изображения стали рассматриваться как образ "свиноголового царя Трдата", и этот облик стали придавать Трдату при его изображении в позднесредневековом искусстве.

Таким образом, рассмотрение материалов позволяет говорить, что процесс христианизации Армении длился на протяжении двух веков, и раннехристианская культура имеет глубокую связь с античной культурой Армении.

Примечания

1 См. Հայ ժողովրդի պատմություն, հ.2, Երևան, 1984, էջ 71-77. Там же см. литературу по данному вопросу.
2 См. Н.О.Эмин, Очерк религии и верований языческих армян, М., 1864; С.Б.Арутюнян, Армянская мифология, "Мифы народов мира", т.1, М., 1987, с. 106.
3 См. Ф.Тер-Мартиросов, Медвежонок и другие персонажи армянской мифологии, Ереван, 1996, с. 32-52; Его же, Характер развития религиозных представлений в Армении, «Հայ ժողովրդական մշակույթ», Երևան, 1997, էջ 74-75.
4 См. Его же, Памятник классической античности Армении, «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, 3, էջ 60-63.
5 См. Его же, Местонахождение "Парадиза" Ервандидов, "Проблемы исследования античных городов", М., 1989, с. 115.
6 См. Б.Аракелян, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, «Պատմա-բանասիրական հանդես» (ՊԲՀ), 1969, 4, էջ 164, նկ. 4.
7 См. Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ.Աբեղեան եւ Ս.Յարութիւնեան, Տփղիս, 1913; Movsec Хоренаци, История Армении, пер. с древнеарм. азыка, введение и примечания Г.Саркисяна, Ереван, 1990.
8 См. Ф.Тер-Мартиросов, Терракоты из Арташата, «Լրաբեր հասարակական գիտությունների» (ԼՀԳ), 1973, 4, էջ 84.
9 См. Ж.Хачатрян, Коропластика древней Армении, "Вестник древней истории", 1979, 3, с. 98, рис. 8-9.
10 См. Հ.Հակոբյան, Ռ.Վարդանյան, Տ.Հովհաննիսյան, Հողմիկի հնդնիստական հուշարձանի 1991-1992 թթ. հնագիտական ուսումնասիրության հիմնական արդյունքները, «Հայաստանի Հանրապետությունում 1991-1992 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված ստացրջան. Զեկուցումների թեզիսներ», Երևան, 1994, էջ 40:
11 См. Ф.Тер-Мартиросов, Медвежонок и другие персонажи армянской мифологии, с. 45-47.
12 См. там же, с. 47.
13 Б.Аракелян, Очерки по истории искусства древней Армении, Ереван, 1976, таб. 40.

14 См. Ժ.Խաչատրյան, Իրանա-հայկական դիցաբանական աղերսների հարցի շուրջ, ԼՀԳ, 1981, 2, էջ 54-73:
15 См. Ф.Тер-Мартиросов, Медвежонок и другие персонажи армянской мифологии, с. 45.
16 См. Հայ ժողովրդի պատմություն, հ.2, Երևան, 1984, էջ 70-73:
17 См. Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց, աշխ. Ե.Արամեանի, Թիֆլիզ, 1914:
18 См. Փաւստոսի Բիւզանդացւոյ Հայոց պատմութիւն, բնագիրը Ք.Պատկանյանի, բարգմ. և ծանոթագր. Ստ.Մալխասյանցի, Երևան, 1987.
19 См. Р.Манасарян, К вопросу о вероисповедании населения городов Армении, ՊԲՀ, 1989, 2, էջ 198-204. Там же см. литературу по данному вопросу.
20 См. А.Б.Ранович, Восточные провинции Римской империи в I-III вв., М.-Л., 1949, с. 256.
21 См. Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ.Տէր-Մկրտչեան եւ Ստ.Կանայեանց, Տփղիս, 1909, ԺԲ, 150:
22 См. Ф.Тер-Мартиросов, Значение терракотовых статуэток в изучении культов античной Армении и развития народного искусства, "II Международный симпозиум по армянскому искусству. Доклады", т.1, Ереван, 1978, с. 280.
23 См. Ф.Тер-Мартиросов, Г.Караханян, Раскопки поселения и некрополя античного Ширакавана, «Գիտական աշխատություններ», հ.1, Գյումրի, 1998, էջ 26-28.
24 См. Ф.Тер-Мартиросов, Храм в крепости Гарни – Героон, Мартирий, Ереван, 1995.
25 См. Ա.Սահինյան, Քասաղի բագիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955; **A.Sahinian**, Recherches scientifiques surs les voutes de la cathedrale d'Etchmiadzin, "Revue des études arméniennes", N.S., 1966, III, pp. 39-71.
26 См. **J.Lassus**, Sanctuaires chrétiens de Syrie, Paris, 1947, pp. 5-11.
27 См. Ф.Тер-Мартиросов, Археологические разыскания памятников Ереруйка, "VI республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении", Ереван, 1987, с. 216-217.
28 Его же, Образование царства Армения в контексте исторических данных и исторической памяти, Ереван, 1995, с. 59-60.
29 Его же, Храм в крепости Гарни..., с. 28-29.

Հակոբ Սիմոնյան

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ՀՆԱԳՈՒՅՆ ԵԿԵՂԵՑԱԾԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(նախնական հարցադրում)

Հայաստանում քրիստոնեության տարածման եւ առաջին քրիստոնեական համայնքների ձեւավորման հարցերի վերաբերյալ հայագիտության մեջ միասնական կարծիք չկա: Հայագետների մի մասը քրիստոնեական համայնքների առկայությունը բխեցնում է Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների գործունեությունից՝ հենվելով հնագույն հայկական գրավոր աղբյուրների վրա[1], մյուսները անվերապահորեն ժխտում են դա, քրիստոնեության տարածումը Հայաստանում վերագրելով Գրիգոր Լուսավորչին[2]: Երկու դեպքում էլ հակադիր տեսակետների կողմնակիցները հենվում են գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկությունների վրա: Ցայժմ այս հարցը քննարկողները չեն արծարծել նյութական մշակույթի հուշարձանները, որոնք, մեր կարծիքով, վճռական դեր ունեն այս հարցադրումը լուսաբանելու խնդրում: Առկա է միասնական տեսակետ, համաձայն որի, նախքան Գրիգոր Լուսավորչի կողմից քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելը՝ Հայաստանում չեն կառուցվել եկեղեցիներ, եւ դրանցից վաղագույնները թվագրվում են լոկ IV դարով[3]:

1993-1998 թթ. պատմական Հայաստանի Արցախ նահանգի տարածքներում մեր կողմից կատարված ուսումնասիրությունները տվեցին անակնկալ արդյունքներ, որոնց վերլուծությունը հնարավորություն է ընձեռում նորովի մեկնաբանել կարծրացած տեսակետները: Սակայն մինչեւ բուն նյութին անցնելը, ավելորդ չենք համարում հիշեցնել գրավոր աղբյուրների տեղեկությունները: Հայ պատմիչների հաղորդումների համաձայն՝ Օսրոյենե-Եդեսիայի հայոց թագավորության Արշամի որդի Աբգար թագավորը, որն իր հեզության եւ իմաստության համար կոչվում էր «...աւագ այր...», առաջին ծիրանակիր գործիչն էր, որ լսելով Քրիստոսի գործած հրաշքների մասին եւ տեսնելով իրեն ուղարկած Աստծո անձեռակերտ պատկերը, ընդունեց եւ իր քաղաքում տարածեց քրիստոնեությունը[4]: Գիտական շրջանակներում պատմական այս իրադարձությունը վերագրվում է ոչ թե I դ. առաջին կեսում թագավորած Արշամի որդի Աբգարին, այլ Եդեսիայի Աբգար Թ (179-214) արքային, որի հայազգի լինելը համարվում է վիճահարույց[5]:

Հայկական գրավոր աղբյուրները բազմիցս վկայում են Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների եւ նրանց աշակերտների գործունեությունը Մեծ Հայքի Այրարատ, Վասպուրական եւ Սյունյաց նահանգների գավառներում[6]: «Բարդուղիմեոսը Պարսկաստանից վերադառնալիս իր աշակերտների հետ գալիս է Ատրպատականով եւ անցնելով Երասխ գետը՝ մտնում է Սիսականի սահմանները, սկսում է բարոզել Որդվատ գյուղում[7], Արեւիք գավառում[8], Քաղքում[9] եւ Գողթնում[10]»:[11] Հայկական սկզբնաղբյուրները խիստ որոշակի մատնանշում են I դ. առաքյալների՝ Հայաստանի տարբեր վայրերում հիմնած եկեղեցիների եւ նրանց շուրջը գործող քրիստոնեական համայնքների մասին: Այսպես, Բարդուղիմեոս առաքյալը Գողթան գավառի արեւմտյան ծայրամասում, ժայռի վրա, իր կացարանի տեղում, կառուցում է Տյառնընդառաջ եկեղեցին,

Երնջակ գավառի Վանանդ գյուղում, այստեղ վախճանված Լուսիկ անունով աշակերտի գերեզմանի վրա՝ մատուռ, նույն գյուղում, իր ձեռքով կործանած կռատաճ տեղում՝ մի անշուք եկեղեցի՝ նվիրված Ս.Թովմային[12], Անձեւացյաց գավառի Դարբնաց քար վայրում՝ Ս.Աստվածածին կուսանոց-եկեղեցին: Բարդուղիմեոսի նահատակության վայրում, նրա գերեզմանի վրա, Աղրակ գավառի Աղամակերտ (Հաղամակերտ, այժմ Բաշկալա) քաղաքի մոտ հիմնվում է Ս.Բարդուղիմեոս եկեղեցին, որի կիսականգուն ավերակները պահպանվում են մինչեւ այժմ: Ճարտարապետ Ա.Զարյանը մեզ անհայտ հիմնավորմամբ այն թվագրում է IV դարով[13]: Մեկ այլ վանք էլ հիմնվում է 66 թ. Թադեոս առաքյալի կողմից, նրա նահատակության վայրում՝ Վասպուրականի Արտազ գավառում, Շավարշավան (Մակու) քաղաքի մոտակայքում: Սամուել Անեցու հաղորդման համաձայն՝ եկեղեցին կործանվում է 1329 թ. երկրաշարժի հետեւանքով[14]: Հետագա դարերում այն բազմիցս վերանորոգվում է եւ կորցնում իր նախնական տեսքը: Ավանդությունների համաձայն, I-II դդ. եկեղեցիներ են կառուցվում նաեւ առաքյալների աշակերտների գերեզմանների վրա, որոնց անուններով էլ կոչվում են այդ վանքերը: Թադեոս առաքյալի աշակերտ, Սյունիքի եպիսկոպոս, այստեղ նահատակված Եւստաքեոսի (Ստաքեոսի) գերեզմանին կառուցվում է Տաքեւի վանքը[15], իսկ Դադեի գերեզմանին՝ Դադիվանքը:

ՀՀ պատմության եւ մշակութի հուշարձանների պահպանության վարչության Հայկական հուշարձանների համահավաքի խմբագրությունը 1992-1997 թթ. պատմական Հայաստանի Արցախ նահանգի տարածքներն ուսումնասիրելիս բացահայտեց քրիստոնեական պաշտամունքային համալիրների մի խիստ վաղնջական շերտ, որը թերեւս նախորդում է Գրիգոր Լուսավորչի կողմից քրիստոնեությունը որպես պետական կրոն Հայաստանում հռչակելուն: Դրանցից առավել ուշագրավ են Դադիվանքը՝ Քարվաճառի շրջանում, Ծիծեռնավանքը՝ Քաշաթաղի շրջանում, Վանքասարի ժայռափոր համալիրը՝ Աղդամի շրջանում:

Ըստ XII դ. պատմիչ Միխայիլ Ասորու, Դադիվանքը հիմնադրվել է I դ., Թադեւոս առաքյալի 70 աշակերտներից մեկի՝ Ս.Դադեի գործունեության վայրում, նրա գերեզմանի վրա: Այս հաղորդումը հավաստում են վիմագիր եւ գրավոր աղբյուրները, որոնք բազմիցս Դադիվանքը հիշատակում են որպես Առաքելադիր եկեղեցի: Բացառիկ ուշադրության է արժանի 1214 թ. հիմնադրված Ս.Կաթողիկե եկեղեցու արեւմտյան ճակատի արձանագրությունը, որը վավերացնում է Գրիգոր իշխանի կողմից Ս.Դադեի գերեզմանին կատարած նվիրատվությունը՝

ԱՆՈՒԱՄԲՆ $\overline{\text{ԱՅ}}$, ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ Հ|ԱՍԱՆԱ, ՈՐ ՍԵՓ ՅՈՒՍՈՎ ՏՈՒԻ Ի | ԴԱԴԻ ԳԵՐԵԶՄԱՆՆ :Դ: ՏՈՒՆ ՇԻ|ՆԱԿ[ԱՆԱ] Վ/ԱՍՆ ՀՈԳՈ ԻՄՈ, ՅԱՌԱՋ-ՆՈՐԴ|ՈՒԹ[ԵԱՆ ՏՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ: ԵՒ ՍՈՔԱ | ՏՈՒԻՆ ԻՆՁ ՁՏԱԻՆ ՍՐԲՈՅՆ ԳՐ|ԻԳՈՐԻ ԶԱՄԵԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ:| ԱՐԴ ՈՎ ԽԱՓԱՆԻ ՅԱՌԱՋՆՈՐԴԱՑ ՁԻՄ ԺԱՄՆ, ԿԱՄ ՅԱՒԱԳԱ|Յ ՅԻՄՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ ՁԸ|ԻՆԱԿԱՆ ՅԵՏ ԱՌՆԼՈՎ՝ ԻՄ ՄԵՂԱՅՍ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԵՒ ՄԱՄՆ ՆՈՐԱ | ԸՆԴ ՅՈՒԴԱՅԻ ԵՂԻՑԻ :ՌՀԳ:(1224):

Այս արձանագրությունը վկայում է այն մասին, որ զարգացած միջնադարում կանգուն մի որեւէ կառույց կամ կոթող որոշակիորեն ընկալվել է որպես Ս.Դադեի գերեզմանը՝ հիմնադրված I դ.: Առավել հավանական է, որ Դադեի գերեզմանն է նկատվել Ս.Դադեին վերագրվող միանավ եկեղեցու բեմի մոտ կանգնած քառակող հսկա կոթողը՝ կերտված կարծր գորշակապտավուն ավազաքարից: Կոթողի գագաթին գտնվող փոսիկը վկայում է, որ այն ժամանակին զարդարված է եղել ինչ-որ քանդակով, թերեւս՝ թեւավոր խաչով: Կոթողի ճակատային մասը զարդարված է խաչապատկերներով:

Այստեղ գտնվում է գաղտնագիր, բաղկացած կցագիր տառերից: Հստակ ընթերցվում է Թ տառը, որը Թադե (Դադե) անճնանվան առաջին տառը կարող էր հանդիսանալ: Դեպի այդ բարև է տարել Արգուխաթունի կառուցած Ս.Կաթողիկե եկեղեցու հյուսիսային մուտքը, որը շուտով փակվել է կոթողի շուրջը եկեղեցի կառուցելու պատճառով, քանզի նորակառույց եկեղեցու արեւելյան պատը միանգամայն անջրպետում էր Կաթողիկեից դեպի Դադեի գերեզմանը տանող կարճ ուղին: Կոթողի դիրքը եկեղեցում անըմբռնելի է: Այն գտնվում է բեմին կից, սակայն խիստ բարձր է սեղանի բարի հիմք ծառայելու համար: Հավանական է ենթադրել, որ մտադրություն է եղել եկեղեցին կառուցել այնպես, որ իր մեջ ամփոփի Ս.Դադեի գերեզմանը: Սակայն կոթող-գերեզմանաքարի հսկայածավալ լինելը պարտադրում էր անհիրականանալի բարձր եւ լայնաթիռ թաղի կառուցում, որը տեխնիկապես անհնար էր իրագործել, ուստի եկեղեցու շինարարությունը մնում է անավարտ: Վկայակոչված փաստարկները խոսում են այս կոթողի՝ Ս.Դադեի գերեզման հանդիսանալու օգտին:

Հայաստանի վաղ քրիստոնեական նշանավոր ուխտավայրերից է Ծիծեռնավանքի եռանավ բազիլիկան: Գտնվում է համանուն գյուղի հյուսիս-արեւմտյան եզրին, Աղավնո գետի աջ ափին, երկու ձորակներով շրջափակված բնական հրվանդանի վրա, պատմական Սյունիքի Աղահեճ (Քաշաթաղ) գավառում: Ծիծեռնավանքը գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է Սյունյաց նախարար Փիլիպպեի 844 թ. նվիրատվական փաստաթուղթը վավերացնելու կապակցությամբ: Այնուհետև Ստեփանոս Օրբելյանը Ծիծեռնավանքը հիշատակում է Սյունիքի մեկ եւ կես հարյուր եկեղեցիների շարքում՝ որպես 30 նշանավոր վանքերից մեկը: XVII դ. սկզբներին Սյունյաց Հայկազ իշխանի ջանքերով բարեկարգվում է եկեղեցին, իսկ համալիրը շրջափակվում կրաշաղախով ամրացված գետաքարերով կառուցված պարսպով: 1655 թ. Թռվմա վրդ. Վանանդեցին Հայաստանի մեծ սրբավայրերին նվիրված ներբողում անդրադառնում է նաեւ Ծիծեռնավանքին՝ որպես փառահեղ անցյալ ունեցող վանքի:

1779 թ. վերակառուցվում է խարխլված ծածկը, իսկ տանիքի արեւելյան մասում կանգնեցվում է փոքրիկ զանգակատուն[16]:

Եկեղեցին իր ծավալատարածքային եւ հատակագծային հորինվածքով, ինչպես նաեւ խիստ վաղնջական պատկերաքանդակներով դասվում է վաղագույն քրիստոնեական կառույցների շարքը:

Ծիծեռնավանքի ճարտարապետության առանձնահատկություններից է մուտքերի առատությունը (դրանք չորսն են) եւ արեւմտյան ճակատում մուտքի բացակայությունը: Ընդունված տեսակետի համաձայն, եկեղեցու ստորին՝ ութ շարք բազալտից կառուցված հատվածը եղել է հեթանոսական մեհյան, որը հետագայում ձեւափոխվել է եկեղեցու (Մ.Հասրաթյան): Մեր դիտարկումները պարզեցին, որ չնայած կառույցի վաղնջականությանը, այն ի սկզբանե նախագծվել եւ կառուցվել է որպես եկեղեցի: Ծիծեռնավանքի հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Ավանդության համաձայն, կառուցվել է Պետրոս առաքյալի մասունքի՝ ճկույթի (ծիծեռնի) թաղման վայրում, որից եւ ստացել է իր անվանումը: 1997 թ. հետախուզական պեղումների ժամանակ, ի թիվս այլ ժամանակաշրջանների նյութերի, այստեղ հայտնաբերվեցին I-III դդ. խեցեղենի մի քանի տասնյակ բեկորներ: Հելլենիստական շրջանի պաշտպանական եւ բնակելի կառույցների բացակայությունը, ինչպես նաեւ հրվանդանի խիստ փոքր տարածքը հիմք են տալիս ենթադրելու, որ այստեղ դեռեւս առաքելական դարասկզբին եղել է պաշտամունքային կենտրոն, դատելով ավանդությունից՝ քրիստոնեական:

Արեւելյան Տիգրանակերտից 3 կմ հյուսիս, Խաչենագետի աջափնյա՝ ուղղագիծ կտրվածքով ժայռի կենտրոնական մասում է գտնվում Վանքասարի ժայռափոր համալիրը: Գետի մակարդակից 60-70 մ բարձրությամբ ժայռի մեջ փորված են՝ եկեղեցի,

բարոզման հրապարակ, առաջին քարոզիչների հանգստարանը՝ ժայռափոր դագաղաձեւ գերեզմաններով (սարկոֆագներ), դեպի ուր տանում են ժայռափոր աստիճանները: Ուշագրավ է, որ ավանդության համաձայն՝ Թադեոս առաքյալի նահատակությունից հետո նրա դին իր մեջ է ամփոփում պայծառ լույսից բացված վեմը: Այստեղ նույնպես առաջին քարոզիչների գերեզմանները վիմափոր են: Ժայռի հարթ մակերեսներին փորագրված են հարյուրից ավելի հնագույն խաչապատկերներ, խորհրդավոր պատկերաքանդակներ, հայերեն եւ հունարեն արձանագրություններ:

Ժայռափոր համալիրի տարածքում 1994-1995 թթ. մեր կողմից կատարված պեղումների ժամանակ հայտնաբերված I-III դդ. խեցեղենի բեկորները, ի թիվս այլ կռվանների, ամերկբա վկայում են այն մասին, որ այս համալիրը, որպես քրիստոնեական պաշտամունքային կենտրոն, հիմնադրվել է առաջին հազարամյակի սկզբին, Հայոց Արեւելից կողմանց մեծագույն քաղաքներից մեկի՝ Արեւելյան Տիգրանակերտի հարեւանությամբ, նրանից զգուշավոր հեռավորությամբ, Քրիստոսի ուսմունքը գաղտնի պաշտող համայնքի կողմից: Ուշագրավ է Ստեփանոս Օրբելյանի հաղորդումը այն մասին, որ Ս.Բարդուղիմեոսի կողմից քրիստոնյա դարձած հայերը իրենց առաջնորդներ Կումսիի եւ Բաբելասի մահից հետո հաստատվում են Դարու (Գարու) լեռան վրա, երկար ժամանակ քարոզում Քրիստոսի ուսմունքը՝ մինչեւ Գրիգոր Լուսավորչի գործունեությունը[17]:

Վկայակոչված հուշարձանները հայերեն գրավոր աղբյուրների՝ I դ. Հայաստանում քրիստոնեության լայն տարածման մասին հաղորդումների իրեղեն ապացույցներն են: Դրանք վավերացնում են Ագաթանգեղոսի հունարեն վարքի, Գավազանագրքի եւ այլ աղբյուրների հաղորդումները, համաձայն որոնց, Հայաստանում, նախքան Գրիգոր Լուսավորչի գործունեությունը, առկա էր քրիստոնեական համայնքների տարածված ցանց, որոնք փաստորեն ոչ միայն հիմք հանդիսացան քրիստոնեության պետական կրոն հռչակման համար, այլեւ պատմական կարճ ժամանակահատվածում պայմանավորեցին նոր ուսմունքի տարածումը եւ արմատացումը[18], որը շուտով կարողացավ դիմակայել հակաքրիստոնեական հզոր ուժերի բոլոր ճնշումներին: Եւ վերջապես այն, որ սկսած I դ. Հայաստանում սկիզբ է դրվել եկեղեցաշինությանը, առանց որոնց անհնար է պատկերացնել քրիստոնեական համայնքների գործունեությունը:

Ծանոթագրություններ

1 Տե՛ս Краткий очерк истории армянской восточной церкви, пер. с франц., со вступлением от Н.Эмина, М., 1872, с. 12-1; Մաղաքիա արք. Օրմանեան, Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կ.Պոլիս, 1911: Հ. Պօղոս Անանեան, Քրիստոնէութեան հետքեր Հայաստանի մէջ Ս.Գրիգոր Լուսաւորչի քարոզութենէն առաջ /պատմական ուսումնասիրութիւն/, Վենետիկ, 1979, էջ 5-7, 20-24, 32-34:

2 Տե՛ս Հ. Վարդան վ. Հացունի, Կարեւոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն, Վենետիկ, 1927, էջ 1-165: Հ.Ս.Կոգեան, «Հայոց եկեղեցին» մինչեւ Փլորենտեան ժողովը, Բեյրութ, 1961, էջ 1-60:

3 Տե՛ս Վ.Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երեւան, 1992:

4 Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, բնագիրը եւ ներածութիւնը Մ.Աբեղեանի եւ Ս.Յարութիւնեանի, լրացումները Ա.Սարգսեանի, Երեւան, 1991, II, ԻԶ, էջ 142-143:

5 Տե՛ս Г.Саркисян, К.Худавердян, К.Юзбашян, Потомки Хайка, Очерк истории и культуры Армении с древнейших времен до становления Третьей республики, Ереван, 1998, с. 40-41; Հայ ժողովրդի պատմություն, հ.2, Երեւան, 1984, էջ 73: Արգար, «Հայկական սովետական հանրագիտարան» (ՀՍՀ), հ.1, Երեւան, 1974, էջ 18:

6 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, բարգմ., ներածությունը եւ ծանոթագր. Ա.Ա.Աբրահամյանի, Երեւան, 1986, էջ 76-78:

7 Այժմ Օրդուբադ, բնակավայր Նախիջեւանի ինքնավար հանրապետությունում:

8 Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Սյունյաց աշխարհի 11-րդ գավառը, այժմ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրու ենթաշրջանը:
9 Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Սյունյաց աշխարհի 9-րդ գավառը, այժմ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի ենթաշրջանը եւ հարեւան Ջանգելանի շրջանը:
10 Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Վասպուրական աշխարհի 33-րդ գավառը, այժմ Նախիջեւանի ինքնավար հանրապետության Ապրակունիսի եւ Օրդուբադի շրջանները:
11 **Ստեփանոս Օրբելյան**, նշվ. աշխ., էջ 76:
12 Տե՛ս անդ, էջ 77:
13 Տե՛ս Ա.Զաքյան, Բարդուղիմեոսի վանք, ՀԱՀ, հ.2, Երեւան, 1976, էջ 314-315:
14 «Ի ՃԿԸ. թվին եղեւ ահագին շարժ յարեւելս. եւ զԹադէոս առաքելոյն վանքն եւ զեկեղեցին կործանեաց...» (**Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս Գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս. ծայրաբաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Ա.Տէր-Միքելեանի**, Վաղարշապատ, 1893, էջ 157):
15 Տե՛ս Հ. Ղեւոնդ վ. Մ.Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 224:
16 Տե՛ս Մ.Հասրաթյան, Շիծեռնավանք, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երեւան, 1985, էջ 236:
17 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, նշվ. աշխ., էջ 77:
18 Տե՛ս Պ.Անանեան, նշվ. աշխ., էջ 25:

Արամ Քալանթարյան
Նյուրա Հակոբյան

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆԻՍ ԴՎԻՆԸ

Հայ եկեղեցու 1700-ամյա շրջափուլում Դվինի կաթողիկոսարանն իր շուրջ չորսուկես դարյա պատմությամբ (V դ. երկրորդ կես – IX դ. 20-ական թթ.) կարևոր դեր խաղաց երկրի ազգային-ազատագրական շարժման, քաղաքական ուժերի միավորման, պետականության ամրապնդման, հոգևոր ճարտարապետության զարգացման, մշակութային կյանքի բարգավաճման, հայ Առաքելական եկեղեցու հիմքերի ամրապնդման, աղանդավորական շարժումների դեմ պայքարի գործում:

Դվինը, ուր IV դ. 30-ական թթ. Խոսրով Բ Արշակունի հայոց թագավորը Արտաշատից տեղափոխում է արքունիքը, V դ. քաղաքական, կրթամշակութային, տնտեսական խոշոր կենտրոն էր և մարզպանական Հայաստանի մայրաքաղաքը:

Դվինն ուներ եպիսկոպոսական առանձին վիճակ Գրիգոր Լուսավորչի ժամանակներից սկսած: «Եւ ելեալք ի Կեսարիայէ մնայր ժամանակս ինչ ի Սեբաստիայ, հաւաքեալ դասս կրաւնաւորաց. և զոմանս վարդապետս կոչէր յԱղէքսանդրիայէ և հրաշազուն պաշտաւնեայս, յորոց մինն Դիմառիոս, զոր Դովնաղաշտի եպիսկոպոս կարգեաց»[1]: Հենց այդ շրջանում էլ հիմնադրվում է Դվինի եռանավ տաճարը՝ հավանաբար ավերված Տիր աստծու հեթանոսական մեհյանի տեղում:

Դվինի եպիսկոպոսությունն ուներ քիչ այլ կարգավիճակ: Հարցն այն է, որ հայոց կաթողիկոսներն սկզբնական շրջանում միաժամանակ գլխավորել են նաև Այրարատի եպիսկոպոսական թեմը: Դա շատ հստակ երևում է Սասանյան արքա Հազկերտի նամակին պատասխանելու առիթով Եղիշեի վկայությունից, որտեղ Հովսեփ կաթողիկոսը համարվում է Այրարատի եպիսկոպոս. «Անուանք եպիսկոպոսացն, որք ժողովեցան յԱյրարատեան գաւառն և արարին նամակին պատասխանի, Յովսէփ եպիսկոպոս Այրարատոյ...»[2]:

Այրարատի եպիսկոպոսությունը կապված էր կաթողիկոսական կենտրոնական իշխանության հետ: Ըստ երևույթին, քրիստոնեությունն ընդունելուց հետո Հայաստանում առանց աթոռի թեմի եպիսկոպոսներ չկային: Հայրապետը, եպիսկոպոսների գլուխ լինելով հանդերձ, ուներ իր առանձին թեմը, ինչպես Արշակունի թագավորները, ամբողջ Հայաստանի տիրակալ լինելով, ունեին իրենց նահանգը: Հավանաբար Դվինը Այրարատի թեմի կենտրոնն էր իր վիթխարի հոգևոր կառույցներով, որը զգալի նշանակություն ունեցավ V դ. կեսերից Դվինի՝ երկրի քաղաքական և հոգևոր կենտրոն դառնալու գործում:

Սակայն հայրապետական աթոռը Դվինում հաստատելու խնդիրն իր մեջ պարունակում է վիճելի հարցեր, հատկապես ժամանակագրական բնույթի: Ժամանակակից և ժամանակագրորեն մոտիկ պատմիչներից և ոչ մեկը չունի ստույգ վկայություն կաթողիկոսարանը Վաղարշապատից Դվին տեղափոխելու մասին: Ավելին, Ղազար Փարպեցին, որը ներկայացնում է V դ. երկրորդ կեսի ողջ քաղաքական դեպքերը, լոկ

փաստում է Դվինի մայրաքաղաք և հոգևոր կենտրոն լինելը 480-ական թթ.՝ Վահանանց ապստամբության ժամանակ:

X դարից սկսած պատմական աղբյուրները հիշատակում են Դվինի կաթողիկոսական աթոռը, հատկապես հիմք ունենալով պատմիչներ Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու վկայությունները՝ Դվինում կրակապաշտական մեհյան հիմնելու հետ կապված[3]: Բոլոր պատմիչները միաձայնակ Վաղարշապատից հայրապետանոցը Դվին տեղափոխելը կապում են Գյուտ Արահեզցի կաթողիկոսի անվան հետ /461-478 թթ./:

Հայ պատմագրության մեջ չկա որոշակի կարծիք այս խնդրում: Մեծ մասն այն կարծիքին է, որ հայրապետանոցը Դվինում հաստատվել է Գյուտի ժամանակ, իսկ մյուս խումբը, հատկապես Մ.Օրմանյանը, գտնում է, որ Դվինի հայրապետանոցը Հովհան Մանդակունու աջակցությամբ հիմնադրել է Վահան Մամիկոնյանը, երբ կարգվեց Հայաստանի մարզպան[4] մոտ 484-485 թթ: Մ.Օրմանյանը գտնում է, որ Գյուտը ծերացած և քաշված էր հայրենի Օթմսու գյուղ՝ Վաղարշապատից շատ հեռու, և չէր կարող Դվին գնալ և նվիրագործել նոր կաթողիկե և հայրապետանոց[5]:

Դվինում կաթողիկոսական աթոռի հաստատումը կարող էր տեղի ունենալ միայն Գյուտի օրոք՝ V դ. 60-70-ական թթ.: Դրա համար կան որոշակի կռվաններ, որոնք չի կարելի անտեսել: Առաջին հերթին հայրապետանոցի տեղափոխումը Դվին կապվում է վերջինիս մայրաքաղաքի կարգավիճակի հետ: Այս հարցը նույնպես մեր պատմագրության մեջ վիճելի է: Հայտնի է, որ Խոսրով Կոտակից հետո /IV դ. 30-ական թթ./ Հայաստանի մայրաքաղաքը Վաղարշապատն էր: Մարզպանության առաջին շրջանում, դատելով Եղիշեի վկայություններից, կապված Վարդանանց դեպքերի հետ, մարզպանի նստավայրը շատ կարճ ժամանակով հավանաբար Արտաշատն էր[6]: Սակայն V դ. 50-ական թթ. հետո, երբ ավերվում է Արտաշատը, ըստ երևույթին Դվինը հռչակվում է մարզպանության կենտրոն: Դա կարող էր տեղի ունենալ 457 թ. հետո, երբ Սասանյան Հազկերտ Բ արքային փոխարինում է Պերոզը: Վերջինս հայտնի էր Հայաստանի նկատմամբ իր լոյալ վերաբերմունքով, որն արտահայտվեց ողջ մնացած աքսորված նախարարների և հոգևոր գործիչների վերադարձով: Համենայն դեպս, 481 թ., երբ Դվինում կազմվեց Հայաստանի կառավարությունը՝ մարզպան Սահակ Բագրատունու ղեկավարությամբ, Դվինն արդեն մայրաքաղաք էր, իսկ կաթողիկոսը՝ Հովհան Մանդակունին[7]:

Հայոց կաթողիկոսությունը վաղ քրիստոնեական շրջանում երբեք տեղագրական անուն չուներ: Հանրահայտ փաստ է, որ կաթողիկոսությունն իրեն իրավունք էր վերապահում հայրապետանոցը հաստատել այնտեղ, որտեղ երկրի քաղաքական կենտրոնն էր: Այդպես էր նաև հետագա դարերում:

Այդ խնդիրը կարող էր իրականացնել միայն Գյուտի նման խոհեմ, ճկուն քաղաքականություն վարող կաթողիկոսը, որն ի վերջո Սասանյան արքունիքի կողմից զրկվեց իր հոգևոր կոչումից[8]: Դժվար թե նահատակված Հովսեփ կաթողիկոսին փոխարինող Մելիտե Ա. Մանազկերտցին և Մովսես Ա. Մանազկերտցին իրենց կարճ հովվապետության ժամանակ կարողանային լուծել այդ դժվարին խնդիրը, առավել ևս, երբ այն պահանջում էր կատարել նաև որոշակի շինարարական աշխատանքներ Դվինում՝ կաթողիկոսարանի կառուցում, եկեղեցու վերանորոգում և այլն:

Մյուս կողմից, Հովհան Մանդակունին էլ չէր կարող իր իշխանության տարիներին կատարել այդ գործը, որովհետև այդ ժամանակաշրջանը պայքարի և անկախության ձեռք բերելու տարիներ էին: Համենայն դեպս 485 թ., երբ Վահանը կարգվում է մարզպան, այդ արարողությունը կատարվում է Դվինի մայր տաճարում, որը, Ղազար Փարպեցու վկայությամբ, ուներ արտաքին սրահ, կառուցված շատ ավելի վաղ, քան

Հովհան Մանդակունու տիրապետության տարիներն էին: «Եւ ոչ բաւեալ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ՝ լնուին արտաքոյ սրահք եկեղեցւոյն և փողոցք և ամենայն տեղիք հրապարակացն չուրջանակի»[9]:

Հնագիտական պեղումները շատ ավելի ստույգ են տալիս այդ պատկերը, որը կարելի է համարել ընդունելի[10]: Այս կապակցությամբ կա նաև մի խնդիր՝ Քրիստափորի հովվապետության հարցը 476-480 թթ. միջև, որի շուրջ կան տարբեր կարծիքներ: Մենք գտնում ենք, որ չնայած կաթողիկոսի անունը բացակայում է Ղազար Փարպեցու մոտ, նա եղել է և հայտնի է իր որոշակի գործունեությամբ, հատկապես՝ աղանդավորական շարժումների դեմ:


Հաջորդ հարցը, որ նույնպես կարևոր է Դվինի հայրապետանոցի հաստատման և նրա հետագա գործունեության համար, Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու վկայությունների տվյալներով Դվինում կրակապաշտական մեհյանի ստեղծման հետ առնչվող խնդիրն է: Պատմիչները հաղորդում են, որ մեր նախարարներից Շավասպ Արծրունին և Վնդոն, ուրանալով քրիստոնեական հավատը, Դվինում հիմնում են «տուն հրապաշտութեան», այսինքն՝ որմզդական մեհյան, Վնդոյի որդի Շերոյին կարգելով քրմապետ: Թովմա Արծրունու մոտ Վնդոն է հանդես գալիս որպես հայոց մարզպան[11], Դրասխանակերտցու մոտ՝ Մշկանը[12]: Այնուհետև «Մեծն Վարդան Մամիկոնեանը», թողն «Մեծին Սահակայ», իր համախոհներով հարձակվում է ուրացողների վրա, սպանում է Շավասպին, Վնդոյին և Շերոյին: «Եվ ի տեղի բագնին շինէ եկեղեցի մեծ անուանակոչութեամբ սրբոյն Գրիգորի, անդ փոխելով զաթոռ հայրապետութեանն. և հաստատեալ կացուցանէ ի նմա զմեծ հայրապետն Գիւտ»[13]: «Եւ քանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն, և փոխեն անդ զկաթողիկոսն Հայոց զԳիւտ»[14]:

Անշուշտ, այս վկայությունները կարևոր սկզբնաղբյուր են Դվինի և հայրապետարանի վերաբերյալ և, բնականաբար, դրանք բազմիցս օգտագործվել են մեր պատմագրության մեջ տարբեր մեկնաբանություններով:

Հարցն այն է, որ այս վկայությունները, ունենալով որոշ իրական հիմքեր, հավանաբար ժամանակավրեպ են, անճշտությամբ: Դժվար է ասել, թե որ աղբյուրից են օգտվել պատմիչները, որովհետև ոչ Եղիշեի և ոչ էլ, առավելապես, Փարպեցու մոտ չկան հիշատակումներ այս դեպքերի կապակցությամբ: Օրինակ, Վարդան պատմիչը, հավանաբար, նկատելով Թովմա Արծրունու և Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակությունների մեջ եղած որոշ անհամապատասխանությունները, յուրովի է լուծում այս հարցը: Նա Վարդանի կողմից հիշյալ դեպքերից հետո Ս.Գրիգոր եկեղեցու կառուցումից հետո շարունակում է. «Եւ զսուրբն Յովսէփ ձեռնադրեն կաթողիկոս, որ արար զժողովն ի Շապահի վանս... Զկնի երկուց ամաց ձեռնադրեն կաթողիկոս, որ արար զժողովն ի Շապահի վանս... Զկնի երկուց ամաց եկեալ գունդ ի Պարսից և ըմբռնեալ զնա և զՍահակ և զՂևոնդ և զայլս՝ եղին ի բանդի որպէս զխրատատուս Վարդանայ... Վասն որոյ ի մի վայր եկեալ իշխանքն Հայոց՝ դնեն զԳիւտ պատրիարգ, և ի Դուին փոխեն զաթոռն հրամանաւ նորին Յովսեփայ»[15]:

Նախ, ոչ Պերոզ արքայի և ոչ էլ Գյուտ կաթողիկոսի ժամանակ Վարդան Մամիկոնյանը չէր կարող լինել: Առավելապես նա չէր կարող Դվինի եկեղեցին կառուցել, քանի որ այն արդեն կանգուն էր: Պատմիչների մոտ Շավասպ Արծրունին, որը Վարդանի կողմնակիցներից էր և երբեք դավաճանի չի եղել, հիշատակվում է որպես դավաճան և հավատն ուրացող նախարար. «Անուանք նախարարացն որք կամօք յօժարութեամբ վասն սիրոյն Քրիստոսի եառան զանձինս ի կապանս արքունի: ...Յազգեն Արծրունեաց Մերշապուհ և Շավասպ և Շնգին և Մեհրուժան և Պարգև և Տաճատ»[16]:

Մշկան և Վնդո անունով մարզպաններ չեն եղել, առավել ևս՝ Վարդանի ժամանակ: Մարզպանները, որոնք հիշատակվում են Արշակունիներից հետո, հետևյալներն



Դվինի կաթողիկոսական վիմափոր տաճարի (ներկայիս ավերակներ) ընդհանուր տեսքը հարավ-արևելքից

են՝ Վեհմիհրշապուհ /428-445/, Վասակ Սյունի /445-453/, Ատրորմիզդ /453-464/, Ատրվշնասպ /464-482/, Սահակ Բագրատունի /482-484/, Անդեկան /485/, Վահան Մամիկոնյան /485-ից հետո/ և ուրիշներ:

Դվինում մեհյանի կառուցման, ավերման, մարզպանի սպանության և, հետագայում, եկեղեցու կառուցման (վերակառուցման) ողջ գործընթացը ժամանակագրորեն չի համապատասխանում V դ. կեսերի իրադարձությունների հետ: Այն ավելի շուտ ընդունելի է VI դ. 60-70-ական թթ. Դվինում կատարված իրողություններին, երբ պարսից Սուրեն մարզպանը Դվինում հիմնադրում է մեհյան, որը հայերի ապստամբության առիթներից մեկն է լինում 570-571 թթ.: Վարդան Մամիկոնյանի (կրտսեր) գլխավորությամբ ապստամբներն ավերում են մեհյանը, սպանում մարզպանին, իսկ VII դ. սկզբներին Սմբատ Բագրատունին սկսում է Ս.Գրիգոր եկեղեցու վերաշինությունը:

Վերջին երկու տասնամյակներում Դվինում կատարված հնագիտական աշխատանքների ժամանակ V դ. կաթողիկոսական պալատի հարևանությամբ բացվել են կրակապաշտական մեհյանի մնացորդներ /տե՛ս լուսանկարը/, որոնք ժամանակագրորեն համապատասխանում են 570-571 թթ. դեպքերին:

Այսպիսով, կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները:

1. Կաթողիկոսարանը Դվին է տեղափոխվել V դ. 60-70-ական թթ. Գյուտ կաթողիկոսի օրոք:

2. Հայրապետարանը Դվին տեղափոխելու անհրաժեշտությունը բխել է նրանից, որ Դվինը Հազկերտի մահից հետո մարզպանության կենտրոնն էր, իսկ վաղքրիստոնեական շրջանում հայոց հոգևոր և քաղաքական կենտրոնները տեղադրությամբ նույն վայրում են գտնվել:

3. Դվինում կրակապաշտական մեհյան կառուցելու և այն ավերելու իրողությունը կապվում է VI դ. 60-70-ական թթ. դեպքերի հետ:

Ծ ա ն ո թ ա գ ր ա թ յ ու ն ն ե ր

1 Յովհան Մամիկոնեան. Պատմութիւն Տարօնոյ, աշխ. և առաջաբանով Ա.Աբրահամյանի, Երևան, 1941, էջ 78:
2 Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բազդատութեամբ ձեռագրաց աշխ. Ե.Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 27:
3 Տե՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 58-59: Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 137-138: Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական, ի լոյս ընծայեաց Մ.Էմին, Մոսկվա, 1861, էջ 75: Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս Գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս, ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յատկութիւններով եւ ծանօթութիւններով Ա.Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 270, և այլք:
4 Տե՛ս Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Ա., Կ.Պոլիս, 1912, էջ 433-434:
5 Տե՛ս անդ:
6 Տե՛ս Եղիշէ, էջ 28, 99:
7 Տե՛ս Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխ. Գ.Տէր-Սկրտչեանի և Ստ.Մալխասեանցի, Թիֆլիս, 1907, էջ 267-268:
8 Տե՛ս անդ, էջ 247-255:
9 Անդ, էջ 394:
10 Տե՛ս Կ.Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները, I, Երևան, 1952, էջ 95-96:
11 Տե՛ս Թովմա Արծրունի, էջ 135:
12 Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 59:
13 Անդ:
14 Թովմա Արծրունի, էջ 137-138:
15 Վարդան Բարձրբերդցի, էջ 74-75:
16 Եղիշէ, էջ 157:

Ազատ Բոզոյան

«ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ» ՏԻՏՂՈՍԻ ՆՈՐՈՎԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Հայոց եկեղեցին դարերի ընթացքում ձևավորել է սրբությունների իր համակարգը, մշակել ազգային հաստատությունների հետ սեփական հարաբերությունները, որոնք ժամանակի ընթացքում ենթարկվում էին միայն փոքրիկ սրբագրությունների: Նույն բանը կարելի է ասել նաև Հայոց կաթողիկոսական նոտարատան վավերագրերում օգտագործվող տիտղոսների մասին:

Տիտղոսների այդ շարքի մեջ առանձնանում է «Հայոց կաթողիկոս» տերմինը, որը հայ պատմագրության և մատենագրական տարբեր գործերում հիշատակվում է ի սկզբանե, V դարից: Հենագույն այս տիտղոսի ամբողջական տարբերակն էր «Կաթողիկոս Հայոց Մեծաց» արտահայտությունը: Այդ են վկայում V դ. հայ պատմագրության գրեթե բոլոր հուշարձանները:

V դ. Հայոց կաթողիկոսարանը փոխարինելու եկավ հայոց քրմապետության ինստիտուտին: Մինչ այդ, թագավորի կողքին քրմապետի պաշտոնը զբաղեցնում էր կամ տիրակալը, կամ նրան ազգակից քրմապետը: Այդ նույն տրամաբանությամբ քրիստոնեություն ընդունած Հայաստանի առաջին հոգևոր առաջնորդները կրկին նույն ազգատոհմից էին, սակայն թագավորական ընտանիքին բշնամացած ճյուղից:

Հետաքրքիր է այն պարագան, որ կաթողիկոսական տիտղոսը թագավորականի նմանությամբ ուներ նույն կառուցվածքը. «Թագավոր Հայոց Մեծաց» և «Կաթողիկոս Հայոց Մեծաց»: Տիտղոսի այս ձևակերպումը հանդիպում է արդեն Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Փարպեցու երկերում: Ճիշտ է, V դ. վերջին քառորդում Հայաստանը բաժանվեց երկու մասի, սակայն Հայոց կաթողիկոսական ինստիտուտը չբաժանվեց: Այլ հարց է, որ Հայոց կաթողիկոսարանը մնաց Պարսկական կողմում, և արդեն Ս.Սահակին և Ս.Մեսրոպին կայսերական հատուկ թույլտվություն էր պետք գիրն ու գրչությունը Բյուզանդիայի տարածքում գտնվող Հայաստանի մասում տարածելու համար: Կարելի է ենթադրել, որ այստեղ գործավարող եպիսկոպոսական աթոռները ուղղակիորեն չէին ենթարկվում Պարսկական մասում նստող Հայոց կաթողիկոսին, որը շարունակում էր զուգահեռաբար գոյություն ունենալ Հայոց թագավորության ինստիտուտի կողքին:

Այս դրությունն ամենայն հավանականությամբ շարունակվում է մինչև Մորիկ կայսեր իշխանության շրջանը: Վերջինս, նորովի բաժանելով Հայաստանը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, առաջին անգամ Հայոց կաթողիկոս է ձեռնադրել տալիս երկրի Բյուզանդական կողմում: Այդ մասին Հովհաննես Դրասխանակերտցին ցավով գրում է. «... ըստ հրամանի կայսերն Մօրկայ զՅոհան... կացուցանեն կաթողիկոս Յունական կողմանն՝ բնակեցուցանելով զնա ի քաղաքագիւղն Աւան... Իսկ մեծ հայրապետն Աբրահամ... բնակէր ի Պարսից Բաժնի... հակառակաբոռ գոլով՝ յերկուս հատուածս ճեղքեալ լիներ միաստարր միութիւն հայրապետական աթոռոյն. և ապա ոչ սակաւ հակառակութիւն կրեալ լինէին կողմանքն երկոքին»[1]: Դրանից հետո, հատ-

կապես Հերակլ կայսեր իշխանության տարիներին, թեպետ բյուզանդական կայսրերը հաճախ միջամտում են Հայոց կաթողիկոսարանի գործերին, սակայն Հայոց եկեղեցու միասնականությունը չի խախտվում:

Արաբական տիրապետության ժամանակ ևս Հայոց եկեղեցին ներկայացնում է մի ամբողջական կառույց: Բագրատունյաց թագավորության շրջանում թեպետ եկեղեցին չպառակտվեց, սակայն Բագրատունիների և Արծրունիների պայքարը և Արծրունիների թագավորության տարածքում Հայոց կաթողիկոսական աթոռի հաճախակի հայտնվելը հետագայում նախադեպ ստեղծեց քաղաքական բաժանումը եկեղեցականով ամրապնդելու համար: XII դ. Աղթամարում հաստատվեց կաթողիկոսական նոր աթոռ, որը ժամանակ առ ժամանակ հակադրվում էր Կիլիկիայում հաստատված կաթողիկոսարանին:

XI դ. Հայոց թագավորությունը վերացնելու և Բյուզանդական կայսրությանը միացնելու քաղաքականությունն ուղեկցվում էր նաև ինքնուրույն հայկական կաթողիկոսական աթոռը Բյուզանդական կայսրությանը ենթարկելու գաղափարի հետ: Պետրոս Գետադարձ և Խաչիկ Բ կաթողիկոսները հեռացվեցին Անի մայրաքաղաքից: Այս քաղաքականությունից պարզ երևում է, որ Հայոց կաթողիկոսարանը հզոր ուժ էր Հայոց թագավորության կողքին, և վերջինիս վերացումը կայսրությունը ձգտում էր ամրապնդել Հայոց կաթողիկոսարանի դիրքի սահմանափակումով: Բյուզանդիան ստիպում էր կաթողիկոսի հաստատումը և նշանակումը վերապահել բյուզանդական կայսրին: Այս քաղաքականությունը հասել էր որոշակի հաջողությունների:

Դեռևս Անիի Բագրատունյաց թագավորությունը չէր հեռացել պատմական թատերաբեմից, երբ Բյուզանդիայի Կոստանդին Ժ Մոնոմախ, Կոստանդին ԺԱ Դուկաս կայսրերը արգելեցին Պետրոս Գետադարձին և, այնուհետև՝ Խաչիկ Բ Անեցուն բնակվել կաթողիկոսանիստ Անիում: Նրանցից առաջինը ստիպված էր իր կյանքի վերջին տարիներն անցկացնել Սեբաստիայում, իսկ երկրորդը՝ բնակվել Կոկիսոնից ոչ հեռու գտնվող Թավբլուր բնակավայրում: Բյուզանդական կայսրությունն ամեն գնով փորձում էր մոռացության մատնել Անիի թագավորությունը և կաթողիկոսանիստը: Այս քաղաքականությունն անվերականգնելի հարված հասցրեց նաև Բյուզանդական կայսրությանը: Հայկական զինված ուժերի տեղափոխությունը հայրենական տարածքներից, փաստորեն, արևելքից եկած սելջուկ հրոսակների առջև բաց արեց կայսրության սահմանները, իսկ Մանազկերտի ճակատամարտից (1071 թ.) հետո գրեթե ողջ Փոքր Ասիան անցավ հակառակորդին: Արփ-Արսլանի սելջուկյան բանակների կողմից Բագրատունյաց Հայաստանի ողջ տարածքի և Անի մայրաքաղաքի գրավումից հետո հետզհետե անհնարին դարձավ կաթողիկոսների՝ Անի վերադառնալու հույսը:

1065 թ. Թալբլուրում վախճանվեց Խաչիկ Բ Անեցին: Սակայն բյուզանդական քաղաքականությունը, որը ձգտում էր քաղկեդոնականությունը հաստատել Հայոց եկեղեցում և կաթողիկոսական աթոռը հպատակեցնել Կոստանդնուպոլսի պատրիարքությանը, իր նպատակին չհասավ: Հայկական տարածքներից հեռացված հայ իշխանները և, հատկապես, Կարսի վերջին թագավոր Գագիկ Աբասյանը, որը կայսրությունից տարածքներ էր ստացել Սեբաստիայի և Պիզուի կողմերում, Կոստանդնուպոլսում կարողացավ պաշտպանել Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը և հասնել նրան, որ բյուզանդական կայսրը թույլատրեց Հայոց նոր կաթողիկոսի ընտրությունը: Հայոց երկրից դուրս բերված հայկական զինված և քաղաքական ուժերի ղեկավարները համաձայնեցին կաթողիկոս ձեռնադրել Բյուզանդական կայսրության պաշտոնյա Գրիգոր Մագիստրոսի որդուն՝ Վահրամ Պահլավունուն, որին անվանեցին Գրիգոր Բ Վկայասեր:

Հայաստանի քաղաքական ճակատագրի համար այս բախտորոշ ժամանակաշրջանում գումարվում է (հնում արդեն հայտնի սկզբունքով) Հայոց իշխանների ժողով.

«որք մնացեալ էին ի թագաւորացն և յիշխանացն Հայոց խնդիր արարին գտանել զմի ոք արժանաւոր»[2]: Պահր Հայոց պատմության մեջ ամենաճգնաժամայիններից էր: Հայաստանի տարածքի վրայից վերացել էր Բագրատունյաց թագավորությունը: Հայկական իշխանական տների հիմնական մասը, հանձնելով պապենական տիրույթները, դուրս էր եկել հայրենի տարածքներից և բնակություն հաստատել Բյուզանդական կայսրության արևելյան սահմաններում: Օգտվելով անիշխանական այս վիճակից՝ սելջուկ-թյուրքերը կարողացան բավական հեշտությամբ տեր դառնալ ողջ Հայաստանին: Պատմական Հայաստանը գրկվել էր և՛ թագավորական, և՛ կաթողիկոսական իշխանություններից. այդ իշխանությունների կրողները հայտնվել էին Բուն Հայաստանի տարածքներից դուրս:

Հայաստանից դուրս հաստատված տարբեր իշխանություններն էին այժմ որոշում Հայոց քաղաքական կյանքի գլխավոր հարցերը: Մանազկերտի ճակատամարտից հետո Հայաստանում ստեղծվեց նոր քաղաքական իրադրություն: Կաթողիկոսական աթոռը, գտնվելով Բուն Հայաստանի՝ Մեծ Հայքի տարածքից դուրս, ժամանակի ընթացքում օտարացավ տեղական իշխանություններին և իր տեղն էր փորձում գտնել Կապադովկիա, Հյուսիսային Ասորիք և Կիլիկիա տեղահանված հայ ազգաբնակչության կողքին: Փիլարտոս Վարաժնունին XI դ. 70-ական թթ. փորձում է միավորել Հայաստանից դուրս եկած հայկական բոլոր զինական ուժերը: Այս նպատակին հասնելու համար նա իր իշխանության տարածք է հրավիրում նաև Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսին, սակայն վերջինս նախընտրում է Փիլարտոսին ուղարկել Հայոց կաթողիկոսական իշխանության բարձրագույն նշանները (Լուսավորչի աջը, Վարագայ ս. Նշանը), խորհուրդ տալով ընտրել այլ կաթողիկոս, քան անձամբ ենթարկվել նրա իշխանությանը: Փիլարտոսը Գրիգոր Բ Վկայասերի խորհրդով Հոնիում կաթողիկոս է ձեռնադրել տալիս Պետրոս Գետադարձի ազգական Սարգսին: Այս ձեռնադրությունից հետո Գրիգոր Բ Վկայասերը գործունեություն է ծավալում *Բուն Հայաստանում*, Անիում եպիսկոպոս է օծում իր ազգական Բարսեղին, որին մի քանի տարի հետո Լոռիի Բագրատունյաց թագավոր Կիւրիկեն Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի ձեռքով օծում է Հայոց կաթողիկոս: Հետաքրքիր է, որ նույն շրջանում Գրիգոր Բ Վկայասերը Եգիպտոսում, ուր, Մատթեոս Ուռհայեցու պատմելով, կար շուրջ 30000 հայ բնակչություն, տեղի հայոց կաթողիկոս է օծում իր մյուս ազգականին՝ Գրիգորին:

XI դ. երկրորդ կեսին Հայոց կաթողիկոսական գահը հայտնվում է աննախադեպ մի իրավիճակի առջև: Փաստորեն խախտվում է Հայոց կաթողիկոս տերմինի բուն նշանակությունը, որը հնուց ի վեր նշանակում էր *Մեծ Հայք* քաղաքական միավորի հոգևոր իշխանության աթոռ: Հայոց կաթողիկոսարանի աշխարհագրական («Հայոց Մեծաց») ընկալումը հետզհետե փոխարինվում է էթնիկական հատկանիշով: Քաղաքական այն միավորները, որոնց մեջ մեծ թիվ է սկսում կազմել հայ բնակչությունը, իրենց տարածքներում են ցանկանում տեսնել Հայոց եկեղեցու առաջնորդին: Քաղաքական և եկեղեցական պայքարի այս ժամանակաշրջանում Հայոց եկեղեցին, փաստորեն, ի զորու չէր ընդդիմանալ այս երևույթին: Գրիգոր Բ Վկայասերը Հայոց եկեղեցու մյուս գործիչների հետ (Բարսեղ Անեցի և ուրիշներ), առանց դեպքերին ակտիվորեն միջամտելու, սպասում էր իրադարձությունների հետագա զարգացմանը:

XI դ. վերջին և XII դ. ընթացքում Հայոց կաթողիկոսարանը հույս ուներ դառնալ հայերին միավորող համազգային միակ կազմակերպությունը: Արդեն XII դ. 60-ական թթ. Ներսես Դ Շնորհալին բնորոշում է Հայոց կաթողիկոսի իրավասության սահմանները: Ըստ նրա՝ կաթողիկոսական իշխանության առանձնահատուկ կողմն այն էր, որ այն տարածվում էր հայազգի բոլոր հավատացյալների վրա, «որք յարևելս՝ ի սեփական աշխարհս Հայաստանեայց բնակեալք, և որք յարևմտեան կողմանսն սահեալք ՚ի դիտեմք, և որք ի միջերկրեայս...»[3]:

Հայոց կաթողիկոսական աթոռի միասնականության համար մղվող պայքարում չափազանց կարևոր հանգրվան դարձավ Հայոց ՇԼԹ = 1090/91 թ. Բարսեղ Անեցու այցը Մելիք Շահին. «... Եւ տեսեալ սուլտանին զՏէր Բարսեղն՝ յոյժ մեծարեաց զնա և կատարեաց զամենայն խնդրուածս նորա. և արարեալ զամենայն կամս Տէր Բարսեղին և ազատեաց զամենայն եկեղեցիս և զվանորայսն և զքահանայսն. և առեալ գիր ազատութեան, և հրովարտակօք, և մեծարանօք արձակեաց զհայրապետն Հայոց»[4]: Ինչպես երևում է Մատթեոս Ուռհայեցու պատմածից, Մելիք Շահի բանակի մաս էր կազմում նաև հայկական զորաբանակը[5]: Ամենայն հավանականությամբ, Ջալալ Էդ-Դին Դաուլա Մելիք Շահից (1072-1092) Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսը նաև խնդրել էր սելջուկյան տիրապետության սահմաններում իրեն ճանաչել միակ Հայոց կաթողիկոս: Այդ է պատճառը, որ այդ ընդունելությունից հետո «Եւ ելեալ արքունական հրամանօք Տէր Բարսեղն գնաց մեծաւ ուրախութեամբ, և *արք փառաւորք ի սուլտանէն գնետ իւր*, և եկեալ հասանէր ի Ջահան գաւառին. և յարեաւ ի վերայ Տեառն Թէոդորոսի, որ հրամանաւ Փիլառտոսին նստեալ էր կաթողիկոս ի Հոնին. և Տէր Բարսեղն ընկենոյր յաթոռոյն զՏէր Թէոդորոսն և առեալ ի նմանէ զթողն և զգաւազանն և զսուրբ Նշանն Տէր Պետրոսի՝ և արար *միահնծամի* զհայրապետութիւնն իւր, և անտի եկն ի քաղաքն Ուռհա»: Բարսեղ Ա-ի այս քայլի նպատակն էր Հայոց կաթողիկոսական աթոռի միասնականության ապահովումը: Հետաքրքիր է, որ Մատթեոս Ուռհայեցին փորձում է արդարացնել Բարսեղ Ա-ի այցելությունը Մելիք Շահին. «Եւ արդ՝ այս ոչ է մեղադրելի գնալ հայրապետին առ այլազգի թագաւոր և առնել խաղաղութիւն սրբոյ Եկեղեցւոյ. զի յաղագս խաղաղութեան գնաց սուրբն Բարսեղ (իմա՝ Կեսարացի – Ա.Բ.) առ անօրէնն Յուլիանոս թագաւորն, և սուրբն Ներսէս առ որացողն Վաղէս թագաւորն Յունաց, և սուրբն Մարութա առ Յազկերտ Պարսից արքայն, և վարդապետն Նաւասն (ձեռագրերից մեկում՝ Յոհան)[6] առ Թագաւորն Քաղդէացւոց, և Քրիստոս եկեալ առ հրէական ազգն»[7]:

Հայոց եկեղեցու ազդեցության ոլորտի՝ վերևում փաստարկված լայն աշխարհագրական ընդգրկումն արդեն արձանագրված է խաչակրած արևելքի XII դ. երկրորդ կեսի պատմիչ Վիլհելմ Սուրացու աշխատության մեջ, երբ նա խոսում է Իննոկենտիոս Բ-ի ժամանակ Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու և կաթոլիկ եկեղեցու փոխհարաբերությունների մասին: Հռոմի պապությունը, որը մինչ այդ միայն առանձին փոխհարաբերություններ էր ունեցել Հայոց եկեղեցու հետ և նրա տարածքային ընդգրկումը IX դ. տեսնում էր միայն ողջ Կովկասում[8], XII դ. Հայոց կաթողիկոսությանը ենթակա տարածք է համարում Կապադովկիան, Մեդիան, Պարսկաստանը և երկու Հայաստանները. «Cui synodo interfuit maximus Armenorum pontifex, immo omnum episcoporum Capadocie, Medie, Persidis et utrusque Armenie princeps et docteur eximus, qui Catholicus dicitur»[9]:

Հայոց կաթողիկոսության դերի ու քաղաքական նշանակության և տիտղոսի նոր ընկալման մասին են խոսում նաև XII-XIII դդ. արաբական և ասորական սկզբնաղբյուրները: Դեռևս դարասկզբին իր հայ-ասորական եկեղեցական փոխհարաբերություններին նվիրված մենագրության մեջ անվանի հայագետ Ե.Տեր-Մինասյանը, օգտագործելով հակոբիկ ասորական եկեղեցու պատրիարք Բար-Շուշանի՝ ասորերենով պահպանված թուղթը, նկատել էր, որ այս վավերագրի երկրորդ մասը չի պատկանում հիշյալ պատրիարքին և հնարավոր է՝ ավելի ուշ շրջանի երկ է: Բնագրի հրատարակիչ Լիխտին նկատել է թղթի վերջում դրված «Իգնատիոս, պատրիարք Անտիոքայ անուանեալ Մատթէոս ըստ կարգի երեսներորդ երրորդ յակոբիկեան պատրիարքներու, Մատթէոս Մարդինցի» կնիքը[10], որը հավաստում է, որ Բար-Շուշանի թղթի երկրորդ մա-

սի հեղինակը հետագա շրջանի ասորի կաթողիկոսներից է: Հիմնվելով այս փաստերի վրա, Ա.Վարդանյանը ենթադրում է, որ հնարավոր է՝ Բար-Շուշանի թղթի վերջին էջերն ընկել են, և Իգնատիոս-Մատթեոս պատրիարքի հակահայկական հակաճառական երկը, որը հավանաբար գրվել է XIII դ., միացել է նախորդ գրությանը: Այստեղ, ԺԴ հատվածում, քննադատելով Հայոց կաթողիկոսական աթոռի ժառանգականությունը, XIII դ. ասորի պատրիարքը գրում է. «Այս սովորութիւն առ Արաբացիս ևեթ կալաւ, առ որս գլխաւորն ննջա, որում կալիփն (խալիֆն – Ա.Բ.) անուն կարդան, ժառանգութեամբ պայազատէ ըստ նոցանէ, որ տոհմիկ լիեալ իցեն ազգաւ տոհմին Մուհամետայ»[11]: Հայոց կաթողիկոսին բնորոշելու համար խալիֆա տերմինն օգտագործում է նաև XIII դ. Այուբյան սուլթանության արաբալեզու պատմագիր Բահաեդդին Իբն Շադդադը, որը բերելով Գրիգոր Դ Տղայի թուղթը՝ ուղղված Սալահ ադ-Դինին, կաթողիկոս տերմինը բացատրում է *խալիֆա* տիտղոսով[12]:

Հայտնի է, որ մուսուլմանական աշխարհում այս տիտղոսն ունի մի քանի կարևոր հատկանիշ, որոնք կարող են նմանեցվել Հայոց կաթողիկոս տիտղոսի ընկալումների հետ.

ա) *խալիֆը* բոլոր մուսուլման հավատացյալների հոգևոր առաջնորդն է,

բ) *խալիֆը* վեր է կանգնած մուսուլմանական աշխարհի բոլոր աշխարհիկ տերերից, և, ըստ չգրված օրենքի, բոլորը պետք է ենթարկվեն նրա հրամաններին,

գ) *խալիֆը* սերում է Մուհամեդի ազգատոհմից և այդ տիտղոսը ստանում է ժառանգական կարգով:

XII դ. Հայոց եկեղեցու կաթողիկոսը ևս իրեն դիտում և ընկալվում է որպես ողջ հայ ազգի հոգևոր առաջնորդ, որը վեր է կանգնած ժողովրդի բոլոր քաղաքական իշխանություններից: Ի համալրումն դրանց, Հայոց կաթողիկոսությունը հետզհետե դառնում է ժառանգական: XI-XIII դդ. այս աթոռին են արժանանում Պահլավունի-Արշակունի (Մ.Օրմանյանի խոսքերով՝ երկրորդ Պահլավունիներ) իշխանական տան զավակները, որոնք իրենց կապում են Գրիգոր Լուսավորչի սերունդների հետ: Հայոց կաթողիկոսական գահը մինչ այդ հիշում է ևս երկու շրջան, երբ այս աթոռին բազմում էին նույն տոհմի ներկայացուցիչներ: Առաջինը Լուսավորչի անմիջական ժառանգներն էին, իսկ Բագրատունյաց շրջանում այդ շնորհին արժանացավ մի այլ ընտանիք, որը միջնադարյան պատմագրության մեջ ստացել է *Պետրոսի տուն* անունը:

Ժամանակի ընթացքում, XI դարից հետո, քաղաքական փոփոխությունների հետևանքով Հայոց կաթողիկոսների տիտղոսից աննկատելիորեն դուրս է մղվում «Մեծաց» ցուցիչը և նրա փոխարեն արդեն XII դ. սկսում է օգտագործվել «Ամենայն» հասկացությունը: Այս «Ամենայն Հայոց» բանաձևն արդեն արձանագրված է, Գրիգոր Գ Պահլավունու ընտրության կապակցությամբ, Մատթեոս Ուռհայեցու երկում: «Ամենայն Հայոց կաթողիկոս» բանաձևում արդեն առկա է XII դ. 60-70-ական թթ. հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերում: Կոստանդնուպոլսի պատրիարքների գրած թղթերի թղթառաջք-դիմումներում «Կաթողիկոս ամենայն Հայոց» տիտղոսը փոխարինելու է գալիս մինչ այդ ավելի հաճախ օգտագործվող «Կաթողիկոս Հայոց Մեծաց»-ին:

«Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսն ավելի մեծ հաճախականությամբ օգտագործվում է XIII-XIV դդ.: Այս տերմինի օգտագործումը հատկապես հատկանշական է, երբ դրանով իրենց իշխանությունը բնորոշում են ժամանակակից հակաթոռ կաթողիկոսներ՝ Աղթամարի հայրապետ Զաքարիան և Սսի կաթողիկոս Կոստանդինը՝ XIV դ. երկրորդ տասնամյակում[13]: Նկատելի է, որ կաթողիկոսական աթոռը «Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսի մեջ դնում է նոր, էքսիկական իմաստ: Նրա մեջ փորձում է միավորել Հայոց եպիսկոպոսական բոլոր թեմերը, որոնք ձևավորվել էին նաև Հայաս-

տանի սահմաններից դուրս (Կիլիկիա, Հյուսիսային Ասորիք, Բալկաններ, Եգիպտոս), այնտեղ, ուր բնակություն էին հաստատել հայերը: Ակնհայտ է, որ Հայոց կաթողիկոսարանը XI-XII դդ. ողջ հայ ազգաբնակչությունը, զինական ուժերը և հայկական բաղաքական միավորները իր հովանու տակ համախմբելու քաղաքականություն էր որդեգրել:

Ծանոթագրություններ

1 Յովհաննու Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ.Էմին, Թիֆլիս, 1912, էջ 72-73:
2 Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, աշխ. Մաքրե վ. Մելիք-Աղամեան և Ներսէս ս. Տէր-Միքայէլեան, Վաղարշապատ, 1898, էջ 185; Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Ա, Կ.Պոլիս, 1912, • 876, էջ 1273:
3 Ընդհանրական թուղթ սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ, Երուսաղէմ, 1871, էջ 1:
4 Մատթէոս Ուռհայեցի , էջ 240:
5 Պուզանի բանակում հայկական զորաբանակի առկայության մասին տեղեկացնում է Մատթեոս Ուռհայեցին (տե՛ս անդ, էջ 237):
6 Նկատի ունի Նաևա Ասորի Վարդապետին:
7 Անդ, էջ 241:
8 Տե՛ս Նիկողայոս Ա Հռոմի պապի թուղթը՝ ուղղված Աշոտ Բագրատունի իշխանաց իշխանին (Nicolas I. Papae Epistoiae Nr. 87, S.151f.).
9 **Wilhelm Tyrensis**, Chronicon, Bd. LXIIIA, 15, 18, S.699 Z.15.
10 Յովհաննէս Ժ. Բար-Շուշանի՝ Հայոց կաթողիկոսին գրած թուղթը, ուսումնասիրեց ու ասորի բնագրէ թարգմ. Հ.Ա.Վարդանեան, Վիեննա 1923, էջ 14-15:
11 Անդ., էջ 84:
12 Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմ. Հ.Թ.Նալբանդյան, Երևան, 1965, էջ 297:
13 Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ. Լ.Ս.Խաչիկյան, Երևան, 1950, էջ 68, 78:

Կառլեն Միրումյան

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴՐԱԿԱՐԳԸ

Յուրաքանչյուր ժողովրդի ազգային-քաղաքական խնդրակարգի առանցքն է կազմում պետականության խնդիրը: Վերջինս ազգի պատմական կեցության ամենահրատապ, դրան կենսունակություն հաղորդող գործոններից է: Ընդհանուր առմամբ, այն բաղկացած է երկու հիմնական մասերից՝

1/ պետականության ստեղծում /կամ վերականգնում/,

2/ պետականության պահպանում և ամրապնդում:

Քաղաքական պատմությունը ենթարկվում է ընդհանուր օրենքների և օրինաչափությունների: Միաժամանակ յուրաքանչյուր ազգ յուրովի է լուծում նշված խնդիրը, այսինքն՝ որոշակի առանձնահատկություններ է ներմուծում պատմական օրինաչափությունների մեջ: Այս հանգամանքը էապես պայմանավորված է ոչ միայն կոնկրետ պատմական և քաղաքական գործընթացներով, ստեղծված իրավիճակով, այլև ազգի քաղաքական մտածողության մակարդակով, ազգին ներհատուկ հոգևոր էներգիայով:

Այս առումով չափազանց ուշագրավ է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու իրադարձությունը, ինչը բախտորոշ նշանակություն ունեցավ ազգի հետագա ամբողջ պատմության, ճակատագրի համար: Նշված պատմամշակութային և հոգևոր շրջադարձը լայնածավալ պատմագիտական ուսումնասիրության է արժանացել, որի շուրջ ստվարածավալ գրականություն է ստեղծվել: Միաժամանակ այս հիրավի բացառիկ պատմական երևույթի առավել խորազնին ուսումնասիրությունը և արդի գիտական դիրքերից համարժեք գնահատումը պահանջում են նաև բազմաշերտ և բազմանիստ երևույթի հետազոտական համապատասխան հարթությունների առանձնացում: Հոդվածում առանձնացվում է հետազոտական մի կտրվածք, որն առնչվում է ոչ միայն գործնական քաղաքականության, այլև քաղաքական մտածողության, տեսության ոլորտին:

Հայտնի է, որ 227 թ. Սասանյանները տապալեցին պարթև Արշակունիներին և տիրեցին պարսկական գահին: Հայ Արշակունիների մոտ դա բնական զայրույթ և բողոք առաջացրեց, ինչը պայմանավորված էր թե՛ դինաստիական նկատառումներով, թե՛ հարևան երկրների և, առաջին հերթին, Հայաստանի նկատմամբ Սասանյան Իրանի կրոնագաղափարական և քաղաքական զավթողականության խստացմամբ: Կտրուկ սրվեց տարածաշրջանում տիրող գաղափարաքաղաքական իրավիճակը, և փոխվեց ռազմաքաղաքական ուժերի դասավորությունը, որի հետևանքով Հայաստանը շուտով հայտնվեց մուրճի և զնդանի /Հռոմի և Պարսկաստանի/ արանքում:

Զրադաշտականության հզորացումը և պետական կրոնի հռչակումը Պարսկաստանում և մյուս երկրներում ուղեկցվում էր հելլենիստական մշակույթի ավանդույթների ոչնչացման քաղաքականությամբ: Հայաստանը քաղաքականապես ենթարկելու նպատակով Սասանյանները ջանում էին ոչնչացնել հելլենիստական մշակույթը, «սինկրետիկ հայկական հելլենիստական պանթեոնը»[1]: Հայաստանում զրադաշտա-

կանության բոնի ներմուծման քաղաքականությունը և Հայաստանի դիմակայությունը փաստորեն ոչ միայն կրոնական գաղափարախոսության տարբեր ձևերի, այլև աշխարհայացքի, մշակութային արժեհամակարգի և հոգեմտավոր կողմնորոշման երկու ձևերի բախման բնույթ ստացավ: Այս պայքարում Հայաստանը հանդես էր գալիս որպես հելլենիստական ավանդույթների կրող և պաշտպան, որպես հելլենիստական մշակութային աշխարհի ներկայացուցիչ: Ավելին, Սասանյան Պարսկաստանի նվաճողական քաղաքականության հետևանքով III դ. երկրորդ կեսին Հայաստանի մեծ մասը գտնվում էր օտարների հսկողության տակ: Հայկական պետականությունը կրկին հայտնվել էր կործանման եզրին, ինչը առաջադրեց պետական ինքնիշխանության և ազգային ինքնության պահպանման պատմական խնդիրը:

Այսպիսով, հարևան հզոր տերությունների հակամարտությունը, այդ թվում՝ ռազմավարական առումով կարևոր Հայաստանի տարածքին տիրելու նպատակով, ավատատիրական հարաբերությունների զարգացումը և հայ ազնվականության շրջանում կենտրոնախույս ձգտումների ուժեղացումը, երկպառակությունը, հոմոխամետ և պարսկամետ կողմնորոշումների ձևավորումը և այլն էապես վտանգում էին ոչ միայն երկրի ներքին ամբողջականությանը, այլև պետականության գոյությանն առհասարակ: Ազգի և երկրի առջև ծառացավ կործանարար միտումների չեզոքացման խնդիրը: Քննարկվող դարաշրջանում խնդրի լուծումն անհրաժեշտաբար ենթադրում էր կենտրոնացված թագավորական իշխանության վերականգնում և ամրապնդում, ինչը, իր հերթին, պահանջում էր ազգի բոլոր հատվածները և սոցիալական խավերը միավորել միասնական գաղափարի, ազգային ընդհանուր խնդիրների և շահերի շուրջ: Ընդամենը, կենտրոնական իշխանության, պետականության ամբողջականության և ազգային ինքնության գաղափարները պետք է դիտվեին իբրև նույնական: Այդպիսի գործառույթ կարող էր կատարել համակարգված գաղափարախոսությունը, որը հիմնավորեր կենտրոնացված թագավորական իշխանության գերակայությունը, նպաստեր ազգի բոլոր խավերի համախմբմանը և միասնության ամրապնդմանը: Մինչդեռ երկրում իշխող բազմաստվածությունը, իբրև աշխարհայացք և գաղափարախոսություն, պատմական նոր պայմաններում ոչ միայն ի վիճակի չէր նպաստել ծառացած խնդիրների լուծմանը, այլև ներունակաբար բովանդակում էր առանձին նախարարական տների ինքնավարության, այսինքն՝ կենտրոնախույս միտումների գաղափարական հիմնավորումը: Բազմաթիվ և խայտաբղետ կրոնագաղափարական հոսանքներից և վարդապետություններից այդ պահանջներին առավելագույնս բավարարում էր հզորացող քրիստոնեությունը՝ իր ընդգծված միաստվածության գաղափարով, որն էլ Տրդատ Գ Մեծի գահակալումից /298 թ./ քիչ հետո՝ 301 թ., Հայաստանում հռչակվեց պետական կրոն:

Հայաստանում քրիստոնեությունը հիմնականում ներմուծվում էր «վերևից»՝ թագավորի և նրա մերձավոր շրջապատի կողմից, քանզի նախ՝ դրա անհրաժեշտությունը առաջին հերթին գիտակցում էր վերնախավը, երկրորդ՝ քրիստոնեությունը տարածվում էր հունարեն և ասորերեն լեզուներով, որոնց ազատ տիրապետում էր հայ ազնվականությունը, ինչը զգալի չափով հեշտացնում էր նոր վարդապետության ընկալումը: Քրիստոնեության տարածումը Հայաստանում երկարատև և տանջալի գործընթաց էր, քանի որ ժողովրդի լայն զանգվածները չէին կարող միանգամից ըմբռնել և ընդունել նոր կրոնը: Նրանց ավելի հոգեհարազատ էին և հասկանալի ավանդական հեթանոսական հավատալիքները: Բազմադարյան ավանդույթներից և սովորույթներից դժվար էին հրաժարվում նաև աշխարհիկ և հոգևոր վերնախավի շատ ներկայացուցիչներ[2]:

Քրիստոնեության գաղափարախոսները և հատկապես Գրիգոր Լուսավորիչը քաջ գիտակցում էին, որ հեթանոսական կրոնը խորապես արմատացել է ժողովրդի գիտակցության և աշխարհընկալման մեջ: Ուստի Գրիգոր Լուսավորիչը բազավորի

անմիջական և գործուն աջակցությամբ ձեռնարկում է մատաղ սերնդի լուսավորության և կրթության գործի կազմակերպումը՝ նրանց քարոզչական և կրոնաեկեղեցական գործունեության նախապատրաստելու համար: Հատուկ ուշադրություն էր դարձվում քրմական դասի զավակներին հավատի բերելուն, ինչը մի շարք խնդիրներ էր լուծում՝ 1/ թուլանում էր քրմական խավի դիմադրությունը, որը դրա մեջ կարող էր հեռանկարի որոշակի երաշխիք տեսնել, 2/ գործի մեջ էին ներգրավվում լավ դաստիարակություն ու կրթություն ստացած երիտասարդներ, 3/ այլ կրոնագաղափարական, հոգևոր հիմքի վրա ապահովվում էր սերունդների ժառանգորդումը, 4/ փոքր-ինչ հարթվում էին սոցիալական հակասությունները: Սակայն ուշադրությունը հիմնականում կենտրոնացված էր հասարակ, ստորին սոցիալական խավերի երեխաների դաստիարակության և կրթության վրա, որոնք կոչված էին նոր վարդապետության հիմնական քարոզիչները դառնալու: Հիշյալ խնդիրը լուծելու համար Գրիգոր Լուսավորիչը հունական և ասորական տիպի բազմաթիվ դպրոցներ է հիմնում՝ լեզուներ սովորեցնելու, թարգմանիչներ պատրաստելու և Ս.Գրքին հաղորդ դարձնելու նպատակով:

Հայագիտական գրականության մեջ տարածված է այն տեսակետը, որի համաձայն քրիստոնեության հաղթանակը Հայաստանում ամենից առաջ հոռոմեական կողմնորոշում ունեցող թագավորի և նախարարների հաղթանակն էր, որ «Տրդատ Գ Մեծի ժամանակվանից արդեն քրիստոնեական եկեղեցին դառնում է Հայաստանի ու Հռոմեական կայսրության քաղաքական մերձեցման կարևորագույն օղակներից մեկը»[3]: Հիշյալ տեսակետը, իմ կարծիքով, որոշ վերապահումների և ճշգրտումների կարիք ունի: Այստեղ ես կանդրադառնամ մի քանի հանգամանքների, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել:

Չնավորվելով կայսրության արևելյան մարզերում՝ քրիստոնեությունը III դ. վերածվել էր հզոր կրոնագաղափարական ուժի, իսկ եկեղեցին դարձել էր նվիրապետական: Եկեղեցին լիովին պատրաստ էր «պետության հետ դաշինք կնքելու», սակայն կայսերական իշխանությունը դեռևս պատրաստ չէր «քրիստոնեական եկեղեցու հետ դաշինք» կնքելու[4]: Ավելին, III դ. կեսերից, Դիոկղետիանոսի /284-305/ օրոք: Վերջինս միայն 303-304 թթ. ընթացքում քրիստոնեությունը արգելող չորս հրովարտակ հրապարակեց, որի հետևանքով բազմաթիվ եկեղեցիներ ավերվեցին, Ս.Գրքեր ոչնչացվեցին, եկեղեցական և հոգևորականների անձնական ունեցվածքը բռնագրավվեց: Այս ամենի արդյունքում կայսրության մեջ ստեղծվել էր յուրօրինակ հակասական իրավիճակ: Մի կողմից, կայսրության մասնատման խորացող միտումները պահանջում էին գաղափարախոսական հզոր հենարանի առկայություն՝ ի դեմս համակայսերական կրոնի, մյուս կողմից, ոչ մի հեթանոսական պաշտամունք ի վիճակի չէր նման դերակատարություն ստանձնել: Այդպիսի իրական ուժ էր քրիստոնեությունը՝ իր համամարդկային, աշխարհակալական ուղղվածությամբ, հոգևոր արժեհամակարգով և ժողովրդավարական միտումներով: Սակայն կայսրերը չկարողացան քրիստոնեության մեջ տեսնել միավորող գաղափարական գործոն, կայսրության տրոհումը կասեցնող միջոց, չկարողացան ճիշտ կողմնորոշվել և հասկանալ, որ ստեղծված պատմական իրավիճակում միայն քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու շնորհիվ է հնարավոր լուծել կայսրության առջև ծառացած խնդիրները[5]:

Քրիստոնեության տարածումը և վերաճումը իրական գաղափարաքաղաքական և հոգևոր ուժի՝ կայսրությունում կատարվում էր «վարից վեր»՝ առաջին պարզ համայնքներից դեպի եկեղեցական կարգավորված և կուռ կազմակերպություն: Այս գործընթացն ի վերջո ստիպեց կայսերական իշխանությանը «բաց աչքերով» նայել

իրականությանը: Ուստի կարելի է համաձայնել այն տեսակետի հետ, որի համաձայն Դիոկղետիանոսի՝ գահից հոժարակամ հրաժարվելու մեջ արտահայտվել է այն իրողության գիտակցումը, որ «առանց քրիստոնեական զանգվածների աջակցման՝ կայսրության համախմբման որևէ քաղաքականություն այլևս հնարավոր չէ»[6]: Այս ուղղությամբ առաջին քայլը կատարեց Գալերիոսը /293-311/ 311թ. հրովարտակով օրինականացնելով քրիստոնեությունը, ինչը հաստատվեց և զարգացվեց 313 թ. Կոստանդինոսի և Լիկինիոսի «Միլանի հրովարտակում»: Նշված փաստաթղթերի շնորհիվ քրիստոնեությունը քաղաքացիության իրավունք ստացավ մյուս կրոնական վարդապետությունների կողքին: Իսկ պաշտոնական կարգավիճակ այն ստացավ Նիկիայի տիեզերաժողովում /325թ./ Կոստանդինոս Մեծ կայսեր գործուն միջամտությամբ: Սակայն դա ևս չի կարելի քրիստոնեության վերջնական հաղթանակ համարել: Ինքը՝ կայսրը, շարունակում էր երկրպագել հեթանոսական պանթեոնը, կրել «գերագույն քրմի» /«պոնտիփիկոսի»/ ավանդական տիտղոսը և կնքվեց միայն մահվան մահճում 337 թ.: Ընդամին, վերջին հանգամանքը շատ գիտնականներ վիճահարույց են համարում: Մինչև Թեոդոսիոս Ա Մեծ կայսրը, փաստորեն, հռոմեական կայսրերը քրիստոնեության նկատմամբ «ոլորապտույտ քաղաքականություն» էին վարում: Միայն 395 թ. Թեոդոսիոս Ա Մեծ կայսրը քրիստոնեությունը միակ պաշտոնական /պետական/ կրոն հռչակեց կայսրության ամբողջ տարածքում[7], ինչն էլ նշանավորեց քրիստոնեության վերջնական հաղթանակը: Ուշագրավ է, որ այս իրադարձությունը համընկավ Հռոմեական կայսրության՝ Արևմտյան և Արևելյան մասերի պաշտոնական բաժանման հետ:

Այսպիսով, կարելի է ասել, որ III դ. երկրորդ կեսին և՛ Հռոմեական կայսրությունում, և՛ Հայաստանում ստեղծվել էր մի իրավիճակ, որը համախմբող և համաղորդ կրոնագաղափարական գործոնի ընտրություն էր պահանջում: Ու թեև քրիստոնեությունն առավել տարածված ու կազմակերպորեն ամրացած էր կայսրությունում, այնուհանդերձ կայսրերը տարբեր /օբյեկտիվ և սուբյեկտիվ/ պատճառներով չկարողացան ըստ արժանվույն գնահատել պետականության ամրապնդման գործում քրիստոնեության և քրիստոնեական եկեղեցու իրական հնարավորություններն ու հզոր ներուժը:

Հայաստանում քրիստոնեությունը նման տարածում և կազմակերպական հասուն ձևավորում չուներ: Բայց հենց այստեղ մարդկության պատմության մեջ առաջին անգամ քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն:

Քրիստոնեության ընդունումը Հայաստանում, Տրդատ Մեծի, Գրիգոր Լուսավորչի և նրանց զինակիցների դրսևորած վճռակամությունը կարելի է բացատրել այն բանով, որ նախ՝ նրանք խորապես գիտակցում էին թե՛ ներքին՝ ֆեոդալականացման գործընթացի հետևանքների, թե՛ արտաքին ագրեսիայի վտանգը պետականության գոյության համար: Երկրորդ՝ նրանք ճիշտ կողմնորոշվեցին պետական ամբողջականության պահպանման և ամրապնդման առկա միջոցների ընտրության մեջ, ինչը թե՛ Հայաստանում, թե՛ կայսրությունում տիրող գաղափարաքաղաքական իրադրության և մթնոլորտի համարժեք գնահատման և պետական-քաղաքական բարձր մակարդակի մտածողության արդյունք էր:

Ճիշտ է, քրիստոնեության ընդունումը հայերին մերձեցրեց կայսրության արևելյան մարզերի և քրիստոնեական եկեղեցիների հետ, որոնք, սակայն, ավանդաբար գաղափարաքաղաքական ընդդիմություն էին կազմում պաշտոնական Հռոմի նկատմամբ: Հետևաբար, հայոց արքունիքի վարած կրոնական քաղաքականությունն ամենևին չէր նշանակում հոռոմեամետ կողմնորոշում, առավել ևս՝ այն չի կարելի գնահատել իբրև Հայաստանի և Հռոմի քաղաքական մերձեցման արտահայտություն: Քրիստոնեության ընդունումը նպաստում էր արևելյան մարզերի, սահմանամերձ քրիստոնեական եկեղեցիների հետ հարաբերությունների հաստատմանն ու ընդլայնմանը, բայց՝ բնավ ոչ



Տրդատ Մեծ, դրվագ Ս.Գրիգոր Լուսավորիչ (Տ.Հոնենցի) եկեղեցու „Գրիգոր Լուսավորչի դասը„ որմնանկարից

պաշտոնական Հռոմի հետ, որը շարունակում էր պարբերաբար կազմակերպել քրիստոնյաների զանգվածային հալածանքներ, ինչն անդրադարձել էր նաև հայ-հռոմեական հարաբերությունների վրա: Այս դիմակայության ընթացքում Հայաստանը հանդես էր գալիս որպես քրիստոնեության պաշտպան: Ինչ վերաբերում է դեպի Հռոմ հայերի ունեցած հակվածության օրինակներին, ապա դա բացատրվում է ոչ թե կրոնադավանաբանական, այլ գերազանցապես քաղաքական նկատառումներով: Ավելին, ոչ պակաս թվով օրինակներ կարելի է բերել նաև դեպի Պարսկաստան ունեցած հակվածության օգտին:

Այսպիսով, Հայաստանում քրիստոնեության՝ պետական կրոն հռչակումը հոգևոր և գաղափարական նախադրյալներ ստեղծեց ինչպես զրադաշտական Պարսկաստանից, այնպես էլ դեռևս հեթանոսական Հռոմից գաղափարախոսական սահմանազատման, իսկ միջնորդավորված ձևով նաև քաղաքական ինքնուրույնության ու անկախության համար, որոնք պետականության պահպանման և ինքնուրույն քաղաքականություն վարելու հիմքերն էին[8]:

Պետական քաղաքականության համակարգում հոգևոր-գաղափարական գործոնի կարևորման հայեցակարգը հայոց պատմության մեջ առաջին անգամ որոշակիորեն նշմարվում է Տիգրան Մեծի /մ.թ.ա. 95-55 թթ./ քաղաքականության մեջ: Միավորելով հայկական հողերի մեծ մասը և նվաճելով մի շարք հելլենիստական երկրներ ու մարզեր՝ նա ստեղծեց կայսրություն, որի բնակչությունը քաղաքակրթության տարբեր մակարդակներում գտնվող ժողովուրդների և ցեղերի հավաքածու էր: Մեծ քաղաքագետն ու պետական գործիչը բաջ գիտակցում էր ստեղծված կայսրության անկայունությունը, հասկանում էր համադրական գործոնի անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտար կարգավորել երկրի սոցիալական և քաղաքական հարաբերությունները, կայսրությունը վերածել միասնական ամբողջի: Այդ գործոնը նա տեսավ պետության կազմակերպման հելլենիստական ձևերի և հելլենիստական մշակույթի մեջ, որոնց հիման վրա մտադիր էր միավորել խայտաբղետ ազգությունները, ստեղծել միասնական էթնոսոցիալական հանրույթ /հասարակություն/՝ դրանք ներմուծելով «համակեցության միասնական ռիթմի մեջ»[9]: Ռազմական և տնտեսական գործոնների հետ միասին այն կոչված էր ապահովել Հայաստանի ներքին միասնականությունը, պետաքաղաքական կառույցների ներդաշնակ գործառությունը և ռազմաքաղաքական հզորությունը: Այլ կերպ ասած՝ Տիգրան Մեծը հելլենականացմանը հաղորդեց պետական քաղաքականության կարգավիճակ: Պատահական չէ, որ հելլենիստական Արևելքի որոշ ժողովուրդներ դա ընկալում էին որպես Հռոմի նվաճողական քաղաքականության հզոր հակակշիռ, որպես քաղաքակրթության /Արևելքի/ և բարբարոսության /Արևմուտքի/ հակամարտություն:

Ճիշտ է, Տիգրան Մեծին չհաջողվեց պատմական կարճ ժամանակահատվածում /17 տարի/ լուծել առաջադրած բոլոր խնդիրները, ի վերջո ստիպված լինելով ճանաչել Հռոմի գերակայությունը: Սակայն եթե հարցին մոտենանք քաղաքական ռազմավարության և մարտավարության տեսանկյունից, ապա ակնհայտ կդառնա նրա քաղաքական մտածողության ամբողջ հանճարը:

Քրիստոնեության ընդունումը նշմարեց հայ ժողովրդի և պետականության հետագա զարգացման ուղիները, հոգևոր կյանքի, մշակույթի, մտածողության և աշխարհընկալման ուղենիշներն ու չափանիշները, որոնք թեև դժվարությամբ, բայց հետզհետե թափանցում էին ազգային գիտակցության, ապրելակերպի, կենցաղի մեջ: Աստիճանաբար այն վերածվեց ազգային գաղափարախոսության, հզոր հոգևոր զենքի արտաքին գաղափարաքաղաքական նկրտումների կասեցման, ազգի միավորման և համախմբման դժվարին գործում: Այս պատմական առաքելությունը քրիստոնեությունը և ազգային դարձած Հայ առաքելական եկեղեցին կատարում էր 17 դար շարունակ: Հայ ժողովրդի հոգևոր պատմության այս շրջադարձային էջի ընթերցումը ոչ միայն պատմաճանաչողական նշանակություն ունի, այլև բովանդակում է տեսական-քաղաքական մտածողության որոշակի մոդել, որը ազգի գաղափարախոսները և տեսաբանները յուրովի կիրառում էին հոգևոր-մշակութային և եկեղեցաքաղաքական գործունեության տարբեր ոլորտներում: Այս իրադարձության իմաստավորումն ու քաղաքական փորձի յուրացումը կարող է օգտակար լինել յուրաքանչյուր անցումային դարաշրջանի, այդ թվում՝ մեր օրերի համար: Պատմության այդ դասի հիմնական կետերից են.

ա/ պետական-քաղաքական լայնախոհության դրսևորումն անբարենպաստ պատմական պայմաններում,

բ/ ազգի և պետականության առջև ծառացած խնդիրների ճիշտ ըմբռնումը և դրանց լուծման համարժեք միջոցների ընտրությունը,

գ/ հոգևոր-գաղափարական գործոնի դերի գիտակցումը պետական-քաղաքական հիմնահարցերի լուծման ընթացքում,

դ/ ազգային և պետական ընդհանուր խնդիրների և գաղափարների շուրջ տարբեր սոցիալական խավերի համախմբման համար համակարգված գաղափարախոսության կարևորումը՝ որպես ազգի միասնականության, սոցիալական ներդաշնակության ստեղծման նախադրյալ, որն իր հերթին ներպետական և արտաքին քաղաքական խնդրակարգի և նպատակների իրագործման կարևորագույն երաշխիքն է:

Ծանոթագրություններ

1 Հայ ժողովրդի պատմություն, հ.2, Երևան,1984, էջ 53:
2 Տե՛ս Փաւստոսի Բիւզանդացւոյ Հայոց պատմութիւն, բնագիրը Ք.Պատկանյանի, թարգմ. և ծանոթագր. Ստ.Մալխասյանցի, Երևան, 1987, III, ԺԳ:
3 Հայ ժողովրդի պատմություն, հ.2, էջ 77:
4 Տե՛ս, օրինակ, И.С.Свенцицкая, Раннее христианство: страницы истории, М., 1988, с. 171.
5 Տե՛ս И.А.Крывелев, История религий, т.1, М., 1975, с. 157.
6 А.Донини, У истоков христианства: от зарождения до Юстиниана, пер. с итал., М., 1979, с. 214.
7 Տե՛ս անդ, էջ 204.
8 Համմ. Հայ ժողովրդի պատմություն, հ.2, էջ 71:
9 Տե՛ս А.Степанян, Развитие исторической мысли в древней Армении: миф, рационализм, историописание, Ереван, 1991, с. 95. К.Мирумян, Культурная самобытность в контексте национального бытия. К формированию политической концепции культуры в Армении, Ереван, 1994, с. 27.

Վրեժ Վարդանյան

ՏՐԴԱՏ ՄԵԾԻ ԱՎԱՆԴԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՒԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մծբինի 298 թ. քառասունամյա հաշտության պայմանագրի կնքումից հետո ստեղծված խաղաղ իրավիճակում Հայոց թագավոր Տրդատ 3-ը որոշակի քայլեր ձեռնարկեց երկրի ներքաղաքական միասնության ամրապնդման ուղղությամբ: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելով՝ նա հույս ուներ հոգեւոր-գաղափարական զենք կռել ընդդեմ հեթանոս Պարսկաստանի: Նոր կրոնը պաշտոնապես հռչակվեց 301 թ.[1]:

Միաստվածական կրոնը Հայաստանում պետականորեն հռչակելու հանգամանքն ինքնին երկրի հոգեւոր-գաղափարական հեղաբեկման գործում առաջատար ու վճռորոշ դերը վերապահեց Հայոց թագավորին: Այս իրողությունը նկատի ուներ V դ. եկեղեցական մատենագիր Սոզոմենոսը, երբ գրում էր, որ Հայոց թագավոր Տրդատը «ինքը դարձավ քրիստոնյա եւ հրամայեց, որ քարոզչությամբ նույն կրոնն ընդունեն իր բոլոր հպատակները»[2]:

Մեծ Հայքում պետականորեն հռչակվելուց հետո քրիստոնեությունը դարձավ օտար տիրապետության դեմ հայ ժողովրդի անհավասար մաքառումների, գոյատեւման գաղափարական եւ քաղաքական զորեղ կռվանը: Քնճավ պատահական զուգադիպություն չէր, որ հայոց քրիստոնյա դարձի պատմությունը Ագաթանգեղոսը շարադրեց հայ ժողովրդի համար հույժ բախտորոշ պատմաշրջանում՝ 450-451 թթ. ժողովրդազատագրական պատերազմի տարիներին[3]:

Հայոց Արշակունի թագավորության միասնության, պետաիրավական հիմքերն ամրապնդելու գործում կարեւոր դեր էր վերապահված եկեղեցական ամրակուռ համակարգի, ճիրապետության ստեղծմանը: Միասնական պետականությունը պետք է ուներ միախորհուրդ ու միակուռ ճիրապետություն, պետականորեն համակարգված գաղափարաբանություն, միաստվածական կրոն եւ միակենտրոն եկեղեցի: Ասվածից հասկանալի է դառնում Հայոց թագավոր Տրդատ 3-ի առանձնահատուկ ուշադրությունը Հայ առաքելական եկեղեցու ճիրապետական համակարգի ստեղծման գործառույթներին: Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն արմատավորելուց հետո անհրաժեշտ էր ապահովել նրա հարատեւումը, ժողովրդի միջից հեթանոսական հավատալիքների դուրս վանումը, հոգեւոր նոր հաստատությունների ստեղծումը եւ եկեղեցական ճիրապետության ճեւավորումը, որի առաջնահերթ եւ հույժ կարեւոր խնդիրը դարձավ Հայոց եկեղեցու հայրապետի ընտրությունը: Դրա նախաձեռնողը Տրդատ թագավորն էր: Վերջինիս նպատակասլաց ջանքերով եւ գործուն աջակցությամբ այն դրվեց պետական հիմքերի վրա: Թագավորը հրավիրեց հայ ավագանու ժողով, որտեղ պետք է որոշեին, թե ով է դառնալու Հայոց եկեղեցու առաջնորդը: Տրդատ 3-ը համոզված էր, որ առանց ճիրապետական ամրակուռ հիմնախարիսխի Հայ եկեղեցին չի կարող ունենալ հոգեւոր-գաղափարաբանական եւ իրավական այն ներուժը, որն անհրաժեշտ էր ժողովրդի, հայ նախարարների համախմբման, Հայաստանի հոգեւոր եւ քաղաքական անկախության ապահովման, հարեւան այլակրոն պետությունների (առա-

ջին հերթին Պարսկաստանի) կողմից հովանավորվող եւ նրանց հենարան ծառայող հեթանոսամետ ուժերին պատշաճ հակահարված տալու համար: Հիշյալ ժողովում Գրիգոր Լուսավորիչը ճանաչվեց Հայոց եկեղեցապետ[4]: Այն, որ եկեղեցու գլուխ կանգնած հայրապետը այդ պաշտոնում կարգվեց Հայոց թագավորի կամքով, վկայություն է ասներկա այն իրողության, որ Հայ եկեղեցին եւ նրա հովվապետը պետք է ենթարկվեին թագավորական իշխանությանը:

Քրիստոնեությունը պետականորեն հռչակելու հանգամանքն ինքնին նոր կրոնը վերածում էր պետական գաղափարաբանության, քաղաքական դավանանքի, որը պետք է հեղաբեկեր երկրի հոգեւոր եւ պետաիրավական հարաբերությունները: Ագաթանգեղոսը Հայ եկեղեցու ավիրապետության ստեղծման գործում առաջնությունը վերապահում է վերին /աստվածային/ ընտրանքին: Նա համոզված էր, որ Տրդատ արքան Աստծու հրամանով Գրիգոր Լուսավորչին կարգեց Հայոց աշխարհի քահանայապետ: Ագաթանգեղոսի հունարեն խմբագրության («Վարք»-ի) հեղինակը Գրիգորի կաթողիկոսական իշխանությունը ավիրապետական միության մեջ է տեսնում Կեսարիայի հայրապետական աթոռի հետ[5]: Թեեւ հունարեն «Վարքը» պարունակում է պատմական այնպիսի տեղեկություններ, որոնք բացակայում են Ագաթանգեղոսի հայկական բնագրում[6], սակայն այստեղ ընկատելի է նրա հեղինակի միտումը՝ Հայ եկեղեցին ավիրապետորեն լծորդել Կեսարիայի մետրոպոլիտության հետ: Հարկ է նշել, որ Կեսարիայում Գրիգոր Լուսավորչի ծառայությունը զուտ ծիսական բնույթ ուներ եւ բնավ նպատակ չուներ ավիրապետական միությունում պարտադրել Հայոց եկեղեցուն: Այն փաստը, որ Տրդատ Մեծը Գրիգորին Կեսարիա ուղարկելուց առաջ արդեն, ինչպես տեսանք, նրան հայ նախարարների համահաւնությամբ կարգել էր Հայոց հայրապետ, նույնպես վկայում է Կեսարիայում Գրիգորի ծառայությունը զուտ ծիսական բնույթի մասին:

Հարկ է նաեւ նշել, որ Հայաստանն անձնախ պետություն էր, որը բոլորովին հաշվի չէր առնում «դաշնակից» Հռոմեական կայսրության տիրակալի հետ եւ, ի հեճուկս նրա, ընտրեց գաղափարաբաղաքական ու կրոնական նոր ուղի եւ նրա հանդեպ հոգեւոր դիմակայությամբ պետական պաշտոնական կրոնի վերածեց Հռոմեական պետության մեջ հալածվող քրիստոնեությունը: Բնական էր սպասել, որ անկախ ու ինքնակա Հայաստանի եկեղեցին չէր կարող ավիրապետական միությամբ կազմակերպչորեն կախյալ կարգավիճակում լինել Հռոմեական կայսրության մեջ գտնվող Կեսարիայի եկեղեցական կենտրոնից: Հայաստանում քրիստոնեության պետականացման բուն նպատակը քաղաքական եւ հոգեւոր միասնության, անկախ գոյավիճակի ապահովումն էր, հարեւան հեթանոսական պետությունների ազդեցությունից նրան ձերբազերծելը: Ուստի պետականորեն ընդունված քրիստոնեական կրոնը պետք է բացառեր օտար պետություններից Հայաստանի հոգեւոր ու քաղաքական կախման նոր հնարավորությունները: Չպետք է անտեսել նաեւ այն հանգամանքը, որ Կեսարիայի աթոռն իր հերթին կարիք ուներ աշխարհում առաջինը քրիստոնեությունը պետական կրոն հռչակած Հայոց թագավորության զորակցության: Բնավ պատահական եւ հավուր պատշաճի արված ցույց չպետք է համարել այն, որ Տրդատ Մեծը ծառայությունը Կեսարիա մեկնող Գրիգոր Լուսավորչին ուղեկիցներ կարգեց «զգլխաւորս նախարարաց եւ զկուսակալս աշխարհաց», որոնց մեջ էին Հայր մարդպետը, Բագրատունյաց, Մամիկոնյան, Արծրունյաց եւ Սյունյաց գահերեց իշխաններն ու Հայաստանի բդեշխները[7]:

Ավելին. հունարեն Վարքի հավաստմամբ, Գրիգորին ուղեկցում էին նաեւ 30 հոգեպար հեծյալ եւ բազում հետեւակ զորականներ[8]:

Մովսես Խորենացին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու, երկրում այն զանգվածորեն տարածելու եւ ամրապնդելու գործում առաջատար դերը վերապահում է Տրդատ Մեծին: «Առաւել էր բազաւորին շնորհ. քանզի ըստ հաւատոցն ոչ ինչ կասեցուցանէր զգործսն: Այսորիկ աղագաւ կոչեմ եւ զսա նախաշաւիղ ճանապարհ եւ լուսաւորութեան մերոյ հայր», – գրում է պատմագիրը[9], դրանով իսկ շեշտելով Տրդատ 3-ի ձեռնարկող դերը Հայոց ամբողջական դարձի իրականացման գործում:

Հայ առաքելական եկեղեցու կազմակերպման, ավիրապետորեն այն ձեւավորելու գործում որոշակի դեր խաղացին նաեւ Հայաստան ժամանած օտարերկրացի եկեղեցականները: Համաձայն հունարեն Վարքի մի վկայության, Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից իր հետ Հայաստան բերեց Հռոմեական կայսրության կազմում գտնվող Փոքր Հայքի հոգեւորականների[10], որոնք հավանորեն հայեր էին: Հովհան Մամիկոնյանը հավաստում է, որ Գրիգորը Հայաստան հրավիրեց նաեւ Ալեքսանդրիայի, Ասորիքի եկեղեցականների[11]: Արաբերեն «Վարքի» համաձայն, Գրիգոր Լուսավորիչը եւ իր ուղեկիցները Սեբաստիայում «հավաստացյալ ու բարեպաշտ եղբայրների մի խմբի համոզեցին գնալ իրենց հետ, որպեսզի սուրբ Գրիգորիոսը նրանց ձեռնադրի (եւ դարձնի) իր երկրի կողքը»[12]: Իսկ Հովհան Մամիկոնյանը գրում է, որ Գրիգորը Կեսարիայից իր հետ բերած հոգեւորական Զենոր Գլակին նշանակեց Տարոնի եպիսկոպոս[13]: Երբ Տարոնի հեթանոսները զինված դիմակայեցին քրիստոնեությանը, Տրդատ 3-ն անձամբ ժամանեց այնտեղ եւ զորքի միջոցով հարկադրեց նրանց դադարեցնել դիմադրությունը[14]: Տարոնը դիցապաշտ Հայաստանի հոգեւոր կենտրոնն էր: Այդտեղ էին գտնվում Հայաստանի քրմապետների կալվածները, Աշտիշատ ավանը՝ Վահագնի, Անահիտի, Աստղիկի, Որմզդի մեհյաններով: Տրդատ Մեծը զենքի ուժով հնազանդեցրեց նաեւ հեթանոսական Հայաստանի մյուս ոչ սրակաս ազդեցիկ կենտրոն Բագրեւանդ գավառը՝ Բագավան ավանով, որից հետո հնարավոր դարձավ Արածանի գետում զորքի ու ժողովրդի զանգվածային մկրտությունը:

Հայոց եկեղեցու ավիրապետության մեջ Տրդատի եւ Գրիգորի կամքով ընդգրկվեցին նաեւ նախկին քրմեր եւ քրմորդիներ: Հունարեն Վարքում նշվում է, որ Տրդատ 3-ն ու Գրիգորը միասին ջանում էին քրիստոնեացնել նախկին քրմերին, որոնք անցյալում Հունաստանից էին բերվել Հայաստան[15]: Պետք է կարծել, որ հիշյալ քրմերը Հայաստանում նաեւ հելլենիստական քաղաքակրթության մշակներն էին եւ հարկ է, որ ավելի դյուրությամբ ընկալելին նոր կրոնը: Հոգեւոր այս փոխակերպումն ավելի քաղաքակրթական երեւույթ էր: Քրիստոնեացված հույն քրմերը Հայաստանում դարձան քրիստոնեության կենսաւորող գաղափարների մշակողներն ու շեփորահարը: Ընդամին այդ քրմերի ժամանելը Հայաստան, հայոց հեթանոսական տաճարներում նրանց ծառայությունը վկայված է նաեւ Մովսես Խորենացու մոտ[16]: Գուցե նաեւ հույն քրմերի ազդեցությամբ էր, որ հայազգի քրմերի մի զգալի մասը հարեց քրիստոնեությանը: Հավանաբար քրիստոնեացված քրմության ազդեցությամբ էր նաեւ, որ Գրիգոր Լուսավորիչը դիմեց փոխզիջումների՝ ժողովրդի կողմից սիրված հեթանոսական որոշ տոներ, արարողություններ մուծելով քրիստոնեական ծիսակարգի մեջ: Տրդատ Մեծը՝ երբենմն մոլեկրոն հեթանոսը, էականորեն նպաստեց նոր կրոնի ժողովրդականացմանը: Նրա սատարմամբ եւ Գրիգորի եռանդուն ջանքերի շնորհիվ Հայոց եկեղեցին յուրացրեց հեթանոսական հավատքի առավել ժողովրդական տարրերը, որոնք քրիստոնեության շնորհիվ նոր շունչ ու ոգի առան եւ, իրենց հերթին, ինչ-որ չափով ազգային երանգներ հաղորդեցին նոր կրոնին: Հայոց թագավորն ու կաթողիկոսը իրենց գործունեության բերումով վերահասու եղան այն իրողությանը, որ քրիստոնեությունը պետականորեն հռչա-

կելու հանգամանքը դեռեւս չէր նշանակում, թե Հայաստանում այդ կրոնը նվաճել է մարդկանց հոգիները եւ ձեռք բերել լիակշիռ ազգային բովանդակություն: Անշուշտ, նրանց ներդրած ջանքերը տվեցին իրենց պտուղները: Ժողովուրդը հոգեւորապես փարվեց քրիստոնեությանը, նրա մեջ տեսնելով եւ ըմբռնշխնելով նախնյաց հավատքի նվիրական ու հարազատ տարրերը, միայն այն ժամանակ, երբ նոր կրոնի մեջ պետության ու եկեղեցու առաջնորդների կամքով հաստնեցին հայոց ծեսերն ու տոնախմբությունները:

Ագաթանգեղոսի հավաստմամբ, Գրիգոր լուսավորիչը նախկին քրմերից ու քրմորդիներից 12-ին ձեռնադրեց եպիսկոպոս[17]: Վերջիններիս անուններից երեւում է, որ նրանց մեծ մասն ուներ հունական ծագում: Ն.Ադոնցը կարծում է, որ հիշյալ եպիսկոպոսները, բացի երկուսից (Տիրիկեսից ու Կիրակոսից), պետք է լինեին Հայաստանի բյուզանդական բաժնից[18]: Մ.Օրմանյանի կարծիքով, այդ եպիսկոպոսները հայոց հայրապետանոցին կից ժողով էին կազմում[19]: Բայց դժվար է կարծել, որ այդպիսի բարձրազդեցիկ եկեղեցական խորհրդի կազմը կարող էր համալրվել միայն քրմական միջավայրից: Անշուշտ, անվավերական է Տրդատ Մեծի ու Գրիգոր Լուսավորչի օրոք Հայաստանում 400 եպիսկոպոսներ ձեռնադրելու վերաբերյալ Ագաթանգեղոսի երկում տեղ գտած վկայությունը, որը հավանորեն աղերսակցվում է Ներսես Մեծի Վարքում եղած այն տեղեկության հետ, որտեղ հիշվում են Տրդատ Մեծի օրոք հայ նախարարների 400 գահերը[20]: Ուխտանեսը թեեւ IV դ. սկզբին Հայաստանում հիշում է 30 եպիսկոպոսական վիճակներ, սակայն, ամենայն հավանականությամբ Ագաթանգեղոսի հետեւողությամբ, եպիսկոպոսների թիվը հասցնում է 400-ի[21]: Միևչդեռ, ինչպես կարելի է հետեւեցնել մատենագրական վկայություններից, Գրիգոր Լուսավորչի օրոք եպիսկոպոսների թիվը չի անցել 20-ից:

Հայոց եկեղեցու, նրա նվիրապետության տնտեսական հիմքերի ամրապընդմանն էին նպատակաուղղված նաեւ Տրդատ Մեծի հրամանով եկեղեցիներին ու նրան սպասարկող հոգեւորականներին անհրաժեշտ հողաբաժիններով ապահովելու միջոցառումները, որոնց շնորհիվ գյուղերի եկեղեցիներին հատկացվեցին չորսական ծխաբաժին հողատիրույթներ, ավաններում՝ դրանից ավելի՝ «եօթն եօթն հողս երդոյ»[22]: Ագաթանգեղոսի հունարեն եւ այս վերջինից ազատ կերպով թարգմանված արաբերեն խմբագրություններում նույնը ասված է որոշ այլափոխությամբ: Ըստ հունարեն Վարքի, Տրդատը յուրաքանչյուր մեծ գյուղում եկեղեցիների համար հատկացնում էր հինգ, իսկ փոքր գյուղերում՝ երեքական հողաբաժին[23]: Արաբերեն խմբագրությունը նշում է ամենուրեք Տրդատ արքայի կողմից եկեղեցուն հատկացված չորսական հողաբաժինները[24], հունարեն Վարքում եղած հինգ եւ երեք հողաբաժինները ներկայացնելով միջին՝ չորս թվով: Ըստ Փավստոս Բուզանդի, Տրդատ Մեծը Հայոց աշխարհի եկեղեցիներին շնորհում է յոթական հողաբաժին[25]: Պատմիչն, անշուշտ, նկատի ունի միայն ավանների եկեղեցիներին թագավորի կողմից հատկացված հողերը, որոնք ավելի ընդարձակ պետք է լինեին, քան գյուղերինը եւ ագարակներինը, քանի որ այս վերջիններում քահանաների ու սարկավագների թիվն ավելի պակաս էր:

Եկեղեցիներին տրված հողային շնորհումներն, անշուշտ, կատարվել են նախարարական տների համաձայնությամբ: Եկեղեցականները ջանում էին հասնել այն բանին, որ եկեղեցուն հատկացվող հողերի վերաբերյալ օրենքը պարտադիր կիրառություն գտներ բովանդակ Հայաստանում: Ուստի այդ որոշումը պետք է ընդունված լիներ նախարարների համաձայնությամբ, այդ նպատակով հրավիրված ժողովում[26]: Սկզբնաղբյուրների վկայություններից երեւում է, որ Տրդատ 3-րդ թագավորի կամքով հոգեւորականությունը դասվել է ազատների կարգը եւ օժտվել ապահարկությամբ: Սա նկատի ուներ Եղիշե պատմիչը, երբ գրում էր, թե Հայոց եկեղեցին «էր ազատ... ըստ

կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ»[27]: Հատկանշական է նաեւ այն փաստը, որ Դվինի 645 թ. եկեղեցաժողովի ընդունած եւ կանոնն ազդարարում է, որ «ժառանգութիւն սրբոյ եկեղեցւոյ իբրեւ զազատութիւն է»՝ տրված Տրդատ Մեծի կողմից, Գրիգորի մասնակցությամբ: Նույն ժողովի ընդունած կանոնախմբի ԺՏ հոդվածում նշված է, որ Տրդատ Մեծի եւ Գրիգոր Լուսավորչի կամքով եկեղեցականներն «ընդ ազատաց տոհմին են կարգեալ, եւ ազատ էին սրբոյ եկեղեցւոյ հող եւ ջուր»[28]: Ինչպես տեսնում ենք, հոգեւորականների՝ ազատների դասին պատկանելը Հայոց կանոնագրքում հաթակցվում է նրանց հողատիրույթների ապահարկ կացության հետ:

Տրդատ Մեծը հոգ տարավ նաեւ եկեղեցու համար սպասավորներ պատրաստելու մասին, կազմակերպելով նրանց ուսուցման գործը[29]: Այդպիսով հնարավոր դարձավ ապահովել ձեւավորվող եկեղեցական համերկրային համակարգի պահանջները հոգեւոր պաշտոնեության, եկեղեցու ուսյալ սպասավորներ ունենալու բնագավառում: Տրդատը ըստ ամենայնի հետամուտ էր Հայ առաքելական եկեղեցու ինքնուրույնության, ազգային ամբողջական դիմագծի պահպանմանը: Որպես երկրի գերագույն տեր, նա մեծապես շահագրգռված էր քրիստոնեության՝ իբրեւ պետական-քաղաքական գործեղ գործոնի ոգով Հայաստանի ներեկեղեցական, իրավական հարաբերությունների օրինակարգմանը:

Գրիգոր Լուսավորիչը կյանքի վերջալույսին հեռացավ Եփրատի ակունքներին մերձակա լեռները՝ նախկին քուրմ Աղբիանոսին թողնելով իրեն տեղապահ[30]: Սակայն Տրդատ Մեծը, ինչպես կարելի է կռահել Մովսես Խորենացու մի վկայությունից, դեմ է եղել Գրիգորի այս քայլին, նրան հորդորել է մնալ Վաղարշապատում եւ հովվապետել Հայոց աշխարհում, բայց Գրիգորը շարունակել է ճգնակեցիկ կյանքը եւ միայն երբեմնակի, հավանաբար արձագանքելով Հայոց թագավորի հրավերներին, վերադարձել է մայրաքաղաք եւ միջամուխ եղել եկեղեցու գործերին[31]: Երկրում մերթընդմերթ գլուխ բարձրացնող հեթանոսության դեմ պայքար ծավալելու համար անհրաժեշտ էր Գրիգոր Լուսավորչի ներկայությունը, որին մեծ նշանակություն էր տալիս թագավորը: Ըստ երեւույթին, Աղբիանոսը ի զորու չի եղել զսպել հեթանոսությունը: Հունարեն Վարքի հավաստմամբ, Տրդատ Մեծը, իր մոտ ունենալով Աղբիոսին (Աղբիանոսին), որ «ոչ մի բան չէր ձեռնարկում», փնտրեց Գրիգորին եւ, իմանալով նրա տեղը, մեկնեց նրա մոտ եւ խնդրեց լինել իր հետ[32]: Հենց Տրդատի նախաձեռնությամբ էր, որ Գրիգորի որդիները Կեսարիայից բերվեցին Հայաստան: Անվավերական է Ագաթանգեղոսի մի վկայությունը (որը հետագայում է մուծվել նրա երկասիրության մեջ), համաձայն որի, Տրդատ Մեծն ու Գրիգոր Լուսավորիչն Արիստակեսի ու Աղբիանոսի հետ մեկնել են Հռոմ եւ դաշինք կնքել Կոստանդինոս կայսեր հետ[33]: Այս իրադարձությունը պատմական վերհուշ է 66 թ. Տրդատ I Արշակունու՝ Հռոմ մեկնելու մասին[34]: Մովսես Խորենացին գրում է, որ Կոստանդինոսը հատուկ հրովարտակով Տրդատ Մեծին եւ Գրիգորին հրավիրել է մասնակցելու Նիկիայի առաջին տիեզերաժողովին, Սակայն Հայոց թագավորը մերժել է կայսեր հրավերը եւ Նիկիա է ուղարկել միայն Գրիգորի որդի Արիստակեսին[35], որն, իրոք, հիշատակվում է այդ տիեզերաժողովի մասնակիցների թվում[36]: Արիստակեսին Նիկիա ուղարկելը վկայությունն էր այն փաստի, որ Տրդատ Մեծն իր հավանությունն էր տվել նրան Հայոց եկեղեցու առաջնորդ կարգելու վճռին: Հենց Տրդատ Մեծի առաջարկով էր, որ Գրիգոր Լուսավորիչը Արիստակեսին եպիսկոպոս ձեռնադրեց եւ դարձրեց իր տեղապահը[37]: Մովսես Խորենացու վկայությամբ, Նիկիայի տիեզերաժողովից Արիստակեսի վերադառնալուց հետո Գրիգոր Լուսավորիչն այլեւս չերեւաց, եւ նրան հաջորդեց Արիստակեսը՝ գահակալելով յոթ տարի[38], իմա՝ 325-333 թթ.: Հ.Մարկվարտի կարծիքով, Արիստակեսի օրոք Հայաստանի եպիսկոպոսների թիվը հասնում էր վեցի[39]: Բայց այս թիվը նվազեցված է, քանի որ, ինչպես տեսանք, Գրիգոր Լուսավորչի օրոք

Հայաստանում արդեն կային մոտ 20 եպիսկոպոսներ: Արիստակեսի օրոք Հայ եկեղեցու ևվիրապետական համակարգն ավելի պետք է ընդլայնվեր ու կատարելագործվեր, շեշտելով Հայոց եկեղեցու ինքնուրույն դիմագիծը, այն դեպքում, երբ Հռոմեական կայսրությունում տակավին պետականորեն չէր ընդունվել քրիստոնեությունը:

Տրդատ Մեծը հետեւողական պայքար կազմակերպեց հեթանոսության դեմ, որը հատկապես աշխուժացել էր Գրիգոր Լուսավորչի մահվանից հետո, նրա որդիների՝ Արիստակես եւ Վրթանես կաթողիկոսների օրոք: Այդ պայքարն ուներ շեշտված հնչեղություն, քանի որ ուղղված էր Հայաստանում գլուխ բարձրացրած հեթանոսությանը սատար կանգնող պարսից Շապուհ II արքայի դեմ, որը, չնայած 298 թ. Մծբինում կնքված Հռոմեա-պարսկական 40-ամյա պայմանագրին, չէր հրաժարվում Հայաստանի հանդեպ ևվաճողական նկրտումներից, առայժմ, իհարկե, կրոնական գործոնի միջոցով: Այդպիսով Հայաստանի հեթանոսամետ նախարարները վերածվում էին պարսկասեր ուժերի, սպառնալով ոչ միայն քրիստոնեությանն ու Հայոց եկեղեցուն, այլեւ Հայաստանի միասնությանը, ջանալով առ ոչնչի հանգեցնել Տրդատ Մեծի ու Գրիգոր Լուսավորչի ջանքերով Հայաստանում արմատավորված քրիստոնեական քաղաքակրթության ևվաճումները: Շապուհ II արքան կամենում էր արգելակել քրիստոնեության թափանցումն իր տերության սահմանները, ուստի, ինչպես հավաստում է VI դ. ասորի պատմագիր Մշիխա Զեխան, արյաց արքան հրաման արձակեց իր ստորադրյալներին՝ անխնա ոչնչացնել քրիստոնյաներին[40]: Հայաստանի հեթանոսադարձ ուժերի չարաբնեգ նկրտումների զոհը դարձած Արիստակես կաթողիկոսն ընկավ Ծոփքի իշխանի սրից: Վերջինս, Հայոց թագավորի կողմից սպասվող պատժից խույս տալով, փախավ Կիլիկիա[41]:

Հեթանոսությունը չէր նահանջում: Նրա դեմ մղվող պայքարը ժառանգեցին նաեւ Արիստակեսի հաջորդները: Այդ պայքարի ընթացքում անհրաժեշտ էր ավելի ամրապնդել Հայոց եկեղեցու ևվիրապետական համակարգը: Ուստի Տրդատ Մեծը շարունակեց նպաստել եկեղեցու ազդեցության մեծացմանը հոգեւոր-մշակութային, գաղափարաքաղաքական, պետա-իրավական ոլորտներում: Եկեղեցին իր ևվիրապետությամբ շարունակեց օժտվել նաեւ պետականության հատկանիշներով: Եկեղեցու դատական, դիվանագիտական լայն գործառությունը եւ ևվիրապետական իրավազորությունը նրան դարձնում էին քաղաքական ազդեցիկ գործոն, որը էականորեն խոչընդոտում էր Սասանյանների եւ նրանց արքանյակների ևվաճողական ծրագրերին:

Հայ մատենագիրները հաղորդում են, որ Վրթանեսի որդի Գրիգորիսը Տրդատ Մեծի կողմից ուղարկվել էր Աղվանք՝ Մասքթաց Արշակունիների թագավորության մեջ քրիստոնեություն տարածելու նպատակով[42]: Սակայն Գրիգորիսը Աղվանք է մեկնել Տրդատ Մեծի վախճանվելուց հետո՝ 335 թ.:

Տրդատ Մեծի ու Գրիգոր Լուսավորչի նպատակասլաց ջանքերով ձեւավորված Հայ առաքելական եկեղեցու ևվիրապետական հիմնաշենքը հաստատուն մնաց բազում դարեր, հարատեւելով մինչեւ մեր ժամանակները:

Ծ ա ն ո թ ա գ ր ու թ յ ու ն ն ե ր

1 Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունելու տարեթվի շուրջ կան տարամետ կարծիքներ: Բերենք դրանցից մի քանիսը: Ըստ Ն.Ադոնցի, Հայոց դարձն ընկնում է 288 թ. (տե՛ս **N.Adontz**, Les vestiges d'un ancien culte en Arménie, "Melanges Franz Cumont", 1936, p. 513), ըստ Հ.Մանանդյանի՝ 314 կամ 315թ. /տե՛ս Հ.Մանանդյան, Երկեր, Բ, Երեւան, 1978, էջ 131/: Մեկ այլ ուսումնասիրողի կարծիքով, Հայոց ամբողջական դարձը կատարվել է 294 թ. (տե՛ս **B.Macdermot**, The conversion of Arménia in 294 a.d., "Revue des étude arméniennes", /REArm./, 1970, pp. 284-285): Մ.Շոմոնի կարծիքով, Հայոց դարձը տեղի է ունեցել 305 թ. հետո (տե՛ս **M.Chaumont**, Sur l'origine de saint Gregoire d'Arménie, "Le Muséon. Revue d'études orientales", t.102, fasc.1-2, Louvain,1989, p. 129):

2 Տե՛ս **L.Duchesne**, Early history of the Christian church, vol. III, London, 1960, p. 367.
3 Տե՛ս **G.Winkler**, Our present knowledge of the history of Agatangelos and its Oriental versions, REArm., 1980, t.XIV, p.125.
4 Տե՛ս Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ.Տէր-Մկրտչեան եւ Ստ.Կանայեանց, Տփղիս, 1909, ՆԺԱ, 791-794:
5 Տե՛ս **G.Garitte**, Documents pour l'étude du livre d'Agathange, Vaticano, 1946, p. 89.
6 Տե՛ս Ագաթանգեղոսի պատմության հունարեն նորահայտ խմբագրությունը /Վարք/, բարգմ. հունարեն բնագրից Հ.Բարթիկյանի, առաջաբան եւ ծանոթագր. Ա.Տեր-Ղեւոնդյանի, «Էջմիածին», 1966, Է, էջ 29 եւ հտ.:
7 Տե՛ս Ագաթանգեղոս, ՆԺԲ, 795:
8 Տե՛ս **G.Garitte**, op. cit., p. 83.
9 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ.Աբեղեան եւ Ս.Յարութիւնեան, Տփղիս, 1913, II, ՂԲ, էջ 245-246:
10 Տե՛ս **G.Garitte**, op. cit., p. 95.
11 Տե՛ս Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխ. եւ առաջաբարով Ա.Աբրահամյանի, Երեւան, 1941, էջ 78:
12 Ա.Տեր-Ղեւոնդյան, Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, Երեւան, 1968, էջ 90:
13 Տե՛ս Յովհան Մամիկոնեան, էջ 38:
14 Տե՛ս անդ, էջ 119:
15 Տե՛ս **G.Garitte**, op. cit., p. 101:
16 Տե՛ս Մովսես Խորենացի, II, ԺԴ, էջ 127:
17 Տե՛ս Ագաթանգեղոս, ՆԻԱ, 845: Պատմիչն այս եպիսկոպոսներից հիշում է միայն Աղբիանոսի ու Եվտաղիոսի հովվապետությանը ենթակա շրջանները, իսկ մնացյալ տասը եպիսկոպոսների սուկ անուններն է նշում: Սինչդեռ հունարեն Վարքում տրված են բոլոր 12 եպիսկոպոսների առաջնորդությանը ենթակա տարածքները /տե՛ս G.Garitte, op. cit., pp. 102-104/:
18 Տե՛ս **Н.Адонц**, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, с. 343.
19 Տե՛ս Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Ա, Կ.Պոլիս, 1912, էջ 99:
20 Տե՛ս Սուիերք հայկականք, Զ, Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց Հայրապետի, Վենետիկ, 1853, էջ 24-26 եւ հտ.: Նկատի է առնված այն իրողությունը, որ եպիսկոպոսական վիճակները հիմնվում էին ըստ նախարարությունների:
21 Տե՛ս Ուխտանէս, Պատմութիւն Հայոց, I, Վաղարշապատ, 1871, Հ, էջ 100:
22 Ագաթանգեղոս, ՆԺԹ, 837:
23 Տե՛ս **G.Garitte**, op. cit., p. 114.
24 Տե՛ս Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, էջ 93:
25 Տե՛ս Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ած Ք.Պատկանեան, Ս.Պետերբուրգ, 1883, V, ԼԱ, էջ 194:
26 Տե՛ս Հ.Մանանդյան, Երկեր, Դ, Երեւան, 1981, էջ 28:
27 Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխ. Ե.Տէր-Մինասեան, Երեւան, 1957, Բ, էջ 46:
28 Կաւոնագիրք Հայոց, Բ, աշխ. Վ.Հակոբյանի, Երեւան, 1971, էջ 204, 209:
29 Տե՛ս Ագաթանգեղոս, ՆԻ, 840:
30 Տե՛ս անդ, ՆԻԳ, 846:
31 Տե՛ս Մովսես Խորենացի, II, ՂԱ, էջ 243:
32 Տե՛ս **G.Garitte**, op. cit., p. 114-115:
33 Տե՛ս Ագաթանգեղոս, ՆԻԶ, 873-874:
34 Տե՛ս Ա.Գաբրաշեան, Քննական պատմութիւն Հայոց, Գ, Թիֆլիս, 1895, էջ 359-361: Հ.Մանանդյան, Երկեր, Բ, էջ 135:
35 Տե՛ս Մովսես Խորենացի, II, ՃԹ, էջ 239-240:
36 Տե՛ս **J.Mansi**, Sacrorum concliorum nova et amplissima collectio, vol.2, Graz-Austria, 1960, p. 699.
37 Տե՛ս Ագաթանգեղոս, ՆԻԳ, 862:
38 Տե՛ս Մովսես Խորենացի, II, ՂԱ, էջ 243: Հիմնավորված չէ Ն.Ակինյանի կարծիքն այն մասին, որ Գրիգոր Լուսավորչին հաջորդել է ոչ թե Արիստակեսը, այլ Մերուժան եպիսկոպոսը, որը հիշվում է Եւսեբիոս Կեսարացու «Պատմութիւն եկեղեցւոյ» երկում (Վենետիկ, 1877, էջ 517) III դ. կեսերին, այն դեպքում, երբ Արիստակեսը կաթողիկոս է դարձել 326 թ. (տե՛ս Ն.Ակինեան, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, «Հանդէս ամսօրեայ», 1949, 4-12, էջ 27, նաեւ՝ Դիոնեսիոս Աղեքսանդրացի, Թուղթ վասն Ապաշխարութեան առ Մեհրուժան եպիսկոպոս Հայոց, հրատ. Ն.Ակինեանի, նույն տեղում, 1949, 4-12, էջ 66-67): Հնարավոր չէ համաձայնել նաեւ այն կարծիքի հետ, թե իբր Արիստակեսը հորից ավելի վաղ է

* վախճանվել եւ եղել է սոսկ կաթողիկոսական փոխանորդ՝ 320-327թթ. (տե՛ս Պ.Ալանեան, Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, «Բազմավէպ», 1960, էջ 107):

39 Տե՛ս **J.Markwart,** Die Entstehung der armenischen Bistümer, Roma, 1932, S. 197.

40 Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 8. Ասորական աղբյուրներ, Ա, Մշիխա Զեխա, Աղիաբենի եկեղեցու պատմություն, բարգմ., առաջաբան եւ ծանոթագր. Հ.Մելքոնյանի, Երեւան, 1976, էջ 97:

41 Տե՛ս **Մովսես Խորենացի,** II, ՂԱ, էջ 243-244:

42 Տե՛ս անդ, III, Գ, էջ 259: **Փաւստոս Բուզանդ,** III, Զ, էջ 12-13: **Մովսէս Կաղանկատուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխ. Վ.Առաքելյանի, Երեւան, 1983, I, ԺԴ, էջ 38:

Պօղոս Լեւոն Զէքիեան
(Վենետիկ)

ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԳԻԾԵՐ ՈՒ ԵԶԱԿԻ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԷՋ

Հայ Եկեղեցին, իր կազմակերպեալ գոյութեան տասնեօթ դարերու ընթացքին, ապրած է աստուածաբանական ծաղկման փայլուն շրջաններ, տուել է համաքրիստոնէական չափանիշներով ակնառու՝ մանաւանդ իւրայատուկ ինքնատիպ դրոշմով առանձնացող աստուածաբաններ, արձանագրել աստուածաբանական հայեցողութեան խորագնին կոթողներ:

Ներկայ յօդուածի նպատակն է ուրուագրել, իր ամէնէն էական գիծերով, այդ մտաւոր ու հոգեւոր պատմութեան գլխաւոր փուլերը եւ, յատկապէս, մատնանշել այն դէմքերը, որոնք կը ներկայացնեն այդ պատմութեան ամէնէն ինքնատիպ դրուագներից ոմանք:

Բայց կը կարծեմ, թե լաւ կը լինի նախ անդրադառնալ համառօտիւ այն կարեւոր հարցին, թե ի՛նչ է աստուածաբանութիւնը՝ մի բառ, որու գործածութիւնը բաւական յաճախակի եւ, ըստ երեւոյթին, նաեւ հաճելի է դարձած վերջերս Հայաստանի գիտամշակութային շրջանակներում:

Հարկ է նախ եւ առաջ յստակել սա հիմնական կէտը, թէ աստուածաբանութիւնը (պատճենում՝ յունարէն *թէոլոգիա* բառին) *գիտութիւն է,* այնպէս, ինչպէս գիտութեան այլեւայլ բնագաւառները, որոնք արեւմտեան լեզուներու մէջ *–լոգիա* եւ հայերէնում *– բանութիւն* բարդութեամբ կ՛արտայայտուին. հոգեբանութիւն, երկրաբանութիւն, հանքաբանութիւն, ընկերաբանութիւն, մարդաբանութիւն, էակաբանութիւն, լեզուաբանութիւն, իրաւաբանութիւն եւ այլն: Առանց մտնելու երկար մտորումներու եւ վիճուած խնդիրների մէջ, կրնանք այստեղ իբրեւ մեկնակէտ ընդունիլ հետեւեալ սահմանումը, թէ հումանիտար գիտութիւնների ոլորտում «գիտութիւն» կը նշանակէ տուեալ նիւթի մը կամ առարկայի մը շուրջ մեթոդաբանօրէն ձեռք բերուած համակարգային ծանօթութիւն: Պարզ է, որ աստուածաբանութիւնն ալ կը ներգրաւուի ընդհանուր առմամբ, առանց անտեսելու անոր իւրայատուկ հանգամանքը, հումանիտար գիտութիւններու ծիրին մէջ: Պիտի ասենք, ուրեմն, որ աստուածաբանական գիտութիւնն ալ համակարգային ծանօթութիւն է՝ ստացուած մեթոդաբանական ուրոյն գործընթացներով[1]:

Բայց այս սահմանումը կը բնորոշէ աստուածաբանութիւնը իբրեւ գիտութիւն սոյն յղացքի ընդհանրութեանը մէջ, առանց տարորոշելու, թէ ի՛նչ է աստուածաբանական գիտութիւնը իր եզակիութեանը մէջ սահմանող տարրը: Սա ոչ այլ ինչ է՝ բայց եթէ աստուածաբանութեան առարկան: Աստուածաբանութեան առարկան հաւատքի տուեալն է, աստուածային Յայտնութեան տուեալը, այն, որ, ըստ հաւատքի թելադրանքին, Աստուծոյ յայտնեալ խօսքն է, այս յայտնեալ խօսքի բովանդակութիւնը: Ուրեմն, հաւատքի տուեալն է, կամ Աստուծոյ յայտնեալ խօսքը, որ կը զատորոշէ աստուածաբանութիւնը միւս գիտութիւններէն: Զատորոշում, որ չի հայիր միայն բովանդակութեան, այլ նաեւ նոյնինքն գիտութիւնը կառավարող սկզբունքներին եւ մեթոդներուն:

Այս կէտին է, որ կը յայտնուի զանազանութիւնը կամ տարբերութիւնը ընդմէջ մէկ կողմէ՝ աստուածաբանին եւ միւս կողմէ՝ իմաստասէրին, կրօնքների պատմութեան մասնագէտին եւ այլն: Աստուածաբանը, ըստ էութեան եւ ըստ սահմանումի, չի՛ կարող հաւատացեալ չլինել: Հետեւաբար, աստուածաբանը չի՛ կրնար տարակոյսի ենթարկել հաւատքի տուեալը, այլապէս լոկ կրօնքի պատմաբան կամ իմաստասէր կը լինէր: Աստուածաբանը, ընդունելով հաւատքի տուեալը իբրեւ ճշմարիտ, պիտի ջանայ իր մտքի կարողութիւններուն եւ հնարաւորութիւնների միջոցով ու չափով բացատրել, մեկնաբանօրէն և համակարգայնօրէն, այդ տուեալի իմանալիութեանը, անոր ներքին տրամաբանութեանը, ներքին ներդաշնութեանը, մասերու փոխադարձ յարակցութեանը մէջ, վեր հանել եւ ցոյց տալ, թէ այդ տուեալին մէջ չկան ներքին հակասութիւններ, մարդկային մտքի հիմնարար սկզբունքներին հակասող առաջարկութիւններ, նոյնիսկ եթէ կան (եւ չէ կարելի, որ այլապէս լինէր, եթէ խօսքը Աստուծոյ մասին է, եւ եթէ Աստուած անհուն է) մարդկային մտքի հասողութիւնը գերազանցող խորհուրդներ:

Աստուածաբանական գիտութիւնը կը յայտնաբերէ, ուրեմն, երկու էական տարածք՝ աստուածային ու մարդկային: Աստուածային՝ այնու, որ աստուածային է իր առարկան, մարդկային՝ այնու, որ անդրադարձութիւնը, խոկումը, հայեցողութիւնը այդ առարկայի մասին տեղի կ'ունենայ մարդկային մտքի ճիգերով ու միջոցներով: Նաեւ աստուածաբանական գիտութեան կարելի է ուրեմն յատկացնել այն գեղեցիկ և նշանակալից վերադիրը՝ *քէանդրիկ*, այսինքն՝ «աստուածամարդեան», որ կը բնորոշէ հիմնականում քրիստոնէական տնօրէնութեան էական կառոյցը՝ խարսխուած Քրիստոսի, Աստուածամարդուն վրայ:

Երկրորդ կարեւոր հարցը, զոր պիտի ուզէի յստակել նախադրաբար, ինքնութեան, իւրայնութեան, ինքնատպութեան յղացքներն են: Դարձեալ առանց սուզուելու շատ խորացող վերլուծումների մէջ, ընդհակառակն, նկատելով զանոնք ա՛յն հայեցակէտից միայն, որով «ուրիշ»էն զանազանուելու հարցը կ'ընդգրկուի: Կը խորհիմ, թէ սոյն հարցի առաջարկումը, առ հասարակ որեւէ հարթակի վրայ, եթէ կը լուծուի սոսկ ուրիշէն տարբերելու, ուրիշին հակադրուելու տարրերի որոնումով, այլ խօսքով՝ մեկնելով ինքնութեան *ներհակադիր* ըմբռնումէ մը, կը մատնանշէ ինքնին բաւական տկար, գրեթէ ինքն իրեն չվստահող մի ինքնութիւն: Ընդհակառակն, որքան աւելի *դրական* տուեալներու հիման վրայ ինքնութիւն մը յղացուի եւ իմացուի, անկասկած, այնքան աւելի հրահանգիչ կը դառնայ իրեն պատկանողներուն համար, իսկ ուրիշների համար՝ թելադրիչ, մինչեւ իսկ՝ հմայիչ: Նոյնը ե՛ւս աւելի կը զօրէ, կը կարծեմ, աստուածաբանական մարզին մէջ: Դեռ մերձաւոր անցեալում, մինչեւ շուրջ կէս դար առաջ, Եկեղեցիների հասկացողութիւնը թէ՛ իրենց իւրայատուկ հոգեւոր-աստուածաբանական ինքնութեան եւ թէ՛ այլ քրիստոնեաներու աւանդին բնորոշուած է եղել առ հասարակ միակողմանի մերձեցումներով, սեւեռելով համակ ուշադրութիւնը գրեթէ տարամերժօրէն այն կէտերուն վրայ, որոնք վէճի, տարակարծութեան կամ փոխադարձ մեղադրանքներու առիթ են ընծայել, զանց ընելով կամ գոնէ չկարենալով լիովին արժեքաւորել աստուածաբանութեան եւ հոգեւորութեան այն հսկայ աւանդը, որ, թեպետեւ դուրս մնացած վէճերու ծիրէն, չէ՛ եղած նուազ ինքնուրոյն. ընդհակառակն[2]: Ինչ կը վերաբերի մասնաւորապէս Հայաստանեայց Եկեղեցւոյ, նրա հոգեւոր-աստուածաբանական հարուստ աւանդը շատ երկար ժամանակներով նկատառման առարկայ եղած է, դժբախտաբար, թէ՛ իր հետեւորդներուն եւ թէ՛ այլ քրիստոնեաներու կողմէ, գրեթէ տարամերժօրէն, կ'ասէի, դարերով վիճուած մի քանի հարցերի առնչութեամբ (որոնցմէ ամենայայտնին՝ քրիստոսաբանական հակաճառութիւնը) բօղարկելով գրեթէ ամբողջապէս Հայ Եկեղեցւոյ եւ հայ քրիստոնեայ մարդուն իւրայատուկ ընկալումը, իւրայատուկ փորձը, իւրայատուկ ապրումը Աստուծոյ խօսքին, Քրիստոսի խորհուրդին, իրենց բազմերփեան ընթերանգներով: Արդարեւ, երբ դուրս կու գանք սոսկ (յաճախ՝ սին) հակաճառութեան ոլորտէն, քրիստոնեայ հասարակութիւնների եւ Եկեղեցիներու միջեւ իւրայնութեան բնորոշիչ հիմնական տարրերը կը յայտնուին առաւելաբար իբրեւ այլեւայլ երփնաւորումներ՝ քրիստոնէական հասարակաց հաւատքի փորձընկալման եղանակին:

Հուսկ, իբրեւ վերջին նախադրեալ՝ ուշադրութեան կ'ուզէի յանձնել սա կէտը եւս: Ընականաբար, երբ կը խօսուի հաւաքական ինքնութիւններու եւ իւրայնութիւններու մասին, կարելի չէ երբեք մտաբերել, թէ անձնական-անհատական տարբերակումները կը լուծուին ու կը ձուլուին հասարակաց յայտարարներու հալոցին մէջ: Ընդհակառակն, պատմութեան փորձը ցոյց է տալիս, թէ որքան աւելի հասարակութիւն մը յաջողած է տալ ուժեղ անհատականութեամբ օժտուած անձնաւորութիւններ, այնքան աւելի ցայտուն են եղել նրա ուրոյն դիմագիծը բնորոշող յատկանիշները:

Հայ Եկեղեցւոյ աստուածաբանական մտքի փուլերը կը կարծեմ թէ կարելի է աւելի դիպուկօրէն ուրուագրել՝ հետեւելով զայն ներկայացնող մեծ դէմքերու յաջորդականութեան, քան թէ դպրոցների կամ հոսանքներու: Նոյնն է պարագան նաեւ հայրախօսական աստուածաբանութեան նկատմամբ: Փաստօրէն Հայ Եկեղեցին, ինչպէս Արեւելեան Եկեղեցիները ընդհանրապէս, իրենց աստուածաբանական մտքի իրարայաջորդ հանգրուաններու ընթացքին, աւելի երկարօրէն եւ առաւել չափերով պահած են հայրախօսական մտքի որոշ առանձնայատկութիւններ, քան Արեւմտեան Եկեղեցիները: Այլ խօսքով՝ արեւմտեան մթնոլորտում ծնած եւ հասակ նետած *սկոլաստիկ*, "դպրոցական" աստուածաբանութիւնը, որ առ հասարակ կը նկատուի նաեւ իբրեւ սկիզբը աստուածաբանութեան սեղմ իմաստով գիտական համակարգումին, համեմատաբար աւելի ուշ է թափանցել արեւելեան քրիստոնէութեան մտածողութեան մէջ: Մեր մօտ այդ շարժումի մեծ ռահվիրան է եղել Եսայի Նչեցին, որու գործը, Յովհան Որոտնեցիի միջնորդութեամբ, կատարին կը հասնի Գրիգոր Տաթեւացու համադրութեանը մէջ:

Հայ աստուածաբանական մտքի ամէնէն յատկանշական աւանդներու հոյլերէն, որոնք իրենց կնիքը դրոշմած են ամբողջ մի շրջանի եւ յետագայ սերունդների վրայ, պիտի քաղեմ տասը անուն, ջանալով բնութագրել, գրեթէ ցուցակագրային ոճով, այն, ինչ որ իւրաքանչիւրին ինքնատպութեան մեծագոյն արժանիքը կը կազմէ, կարծում եմ, միջեկեղեցական, համաքրիստոնէական չափանիշներով: Պարզ է, որ ներկայ յօդուածի նպատակը չէ խորացնել խնդրոյ առարկայ բնութագիրները, այլ՝ ուշադրութիւն հրաւիրել եւ կեդրոնացնել անոնց վրայ ի տես եւ ի խնդիր յաջորդական խորացումներու՝ ըստ այն մեթոդաբանական մերձեցումին եւ առաջարկուող հարցադրումին ու հայեցակէտին, որոնք կ'ուղղեն եւ կը կողմնորոշեն ներկայ յօդուածը:

Կատարուած ընտրութիւնը կը կարօտի հակիրճ բացատրութեան մը՝ կանխելու համար թիւրիմացութիւնները:

Նախ եւ առաջ՝ կարելի չէ մոռնալ, թէ որեւէ ընտրութիւն խնդրական է ինքնին եւ թէ գործնականին մէջ գրեթէ անկարելի է բաւարարել բոլոր հնարաւոր եւ օրինաւոր յարացոյցները, չափանիշները, պահանջներն ու ճաշակները:

Երկրորդ՝ կատարուած ընտրութիւնը պէտք չէ իմանալ *տարամերժօրէն*, այլ՝ *ներառօրէն*: Այսինքն՝ չի բացառուիր բացարձակապէս, որ թուեալ անուններուն աւելացուին եւ այլ անուններ:

Երրորդ՝ չի նշանակեր, թէ նշուած բոլոր աստուածաբանները ունենան հավասար արժէք, ինքնատպութիւն, խորութիւն եւ կամ հաւասար համազգային ներկայացուցչական հանգամանք:

Հուսկ՝ չի նշանակեր նաեւ, թէ տուեալ անունները ըլլան ամէն տեսակէտէ ամէնից յատկանշականներու թում:

Ա. *Վարդապետութիւն Գրիգորի* – Հայերէն Ագաթանգեղոսի ներկայ խմբագրութեան մէջ Լուսաւորչին ընծայուած այս գործը, որ անշուշտ աւելի ուշ տասնամեակներու կը պատկանի, աստուածաբանական գոհար մ'է: Զայն կարելի է նկատել, Կիւրեղ Երուսաղէմացու *Կոչումն Ընծայութեան* գործի կողքին, իբրեւ լաւագոյն ևմոյշներէն մէկը հայրախօսական ընծայականքութեան (baptismal catechesis): Իբրեւ հեղինակային վերագրում, շատ հաւանական է թւում Հ.Բ.Սարգիսեանի եւ Ռ.Թոմսոնի վերագրումը Ս.Մեսրոպ Մաշտոցին: Որեւէ հարկադրիչ պատճառ չի թուիր ունենալ, ընդհակառակն, Հ.Պ.Անանեանի վերագրումը Թէոդորոս Մոպսուեստացուն[3]: *Վարդապետութեան* մեծ արժանիքներէն է, ի միջի այլոց, պահպանումը եւ մշակումը հնագոյն ասորական աստուածաբանութեան ինչ-ինչ տեսութիւնների, որոնք յետագայում աղօտած կամ անհետացած են նոյնիսկ ասորական միջավայրում: Այսպէս, օրինակի համար, Ս.Հոգւոյն "իգական" բնոյթը, որ կարեւոր չափով կ'որոշադրէ *Վարդապետութեան* աստուածաբանութիւնը Ընծայման Խորհուրդներու մասին (Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն): Ակնյայտ է մի նման աստուածաբանական յղացքի կարեւորութիւնը ու մանաւանդ այժմէականութիւնը՝ ժամանակակից աստուածաբանութեան մէջ երեւան եկած եւ ոչ միշտ հաւասարակշիռ ընթացք պահող կանաչապաշտ (ֆեմինիստ) խմորումների նկատմամբ[4]:

Բ. *Եզնիկ Կողբացի* – Եզնիկի ամէն առումով ոսկեդէնիկ մատեանը, աւանդաբար *Եղծ* կամ *Ընդդէմ Աղանդոց* կոչուած, իր լաւագոյն կոչումը ստացած է գրքին բովանդակութեանը լաւագոյն մասնագէտ Հ. Լուի Մարիէսի կողմէ, որ զայն խւրագրած է *De Deo* (Յազագս Աստուծոյ): Իր ամբողջութեանը մէջ այդ մատեանը հայրախօսական ջատագովութեան ոչ միայն ամէնէն գեղեցիկ, ամէնէն համակարգեալ, այլ եւ ամէնէն ինքնատիպ արտադրութիւններից մէկն է: Թէեւ Եզնիկ օգտագործում է, ու մերթ տառացիօրէն, բազմաթիւ հեղինակներ, բայց շատ ճիշտ նկատած է Մարիէս, եւ կարելի չէ, կը կարծեմ, համաձայն չգտնուիլ իրեն հետ, որ եթէ նոյնիսկ օր մը ապացուցուէր, թէ Եզնիկի չէնքին եւ ոչ իսկ մէկ աղիւսը իր սեպհականութիւնն է լրիւ, բայց եւ այնուամենայնիւ այդ չէնքին ամբողջութիւնը պիտի կրէ միշտ անշփոթելիօրէն Եզնիկի հանճարին անայլայլելի կնիքը[5]:

Գ. *Եղիշէ* – Եղիշէի աստուածաբանական ինքնատպութիւնը կը յայտնուի զոյգ հարթակներու վրայ. մին այն հարթակն է, զոր կրնանք կոչել պատմութեան աստուածաբանութիւն եւ զոր պէտք է նկատել արտակարգօրէն ճոխ հայ պատմագրութեան իբրեւ գլխաւոր մէկ երակը: Եղիշէ կ'առանձնանայ այնու, որ կը յայտնուի իբրեւ հիմնադիրը հայ պատմական աստուածաբանութեան, բայց մանաւանդ իբրեւ այն, որ խորագոյն ակօսն է փորել իր ժողովրդի ազգային-քրիստոնէական ինքնագիտակցութեանը մէջ: Չեմ ներգրաւեր այստեղ Խորենացին, քանի որ իր պատմատեսութիւնը աւելի հանգամանօրէն կը զետեղուի փիլիսոփայութեան դաշտին մէջ՝ իբրեւ պատմութեան փիլիսոփայութիւն: Միւս հարթակը, ուր կը փայլի Եղիշէ իր աստուածաբանական հայեացքի ինքնատպութեամբ, եկեղեցաբանութիւնն է՝ սերտօրէն ընդելուզուած միաձգամայն իր պատմութեան աստուածաբանութեան: Գրիգորի *Վարդապետութեան* նման Եղիշէ եւս կը վերապրեցնէ ու իւրովի կը վերամշակէ մի հին ու գեղեցիկ, ասորական աստուածաբանական տեղիք՝ բիւրեղացած Եկեղեցւոյ յղացքին մէջ իբրեւ "ուխտ"[6]:

Դ. *Յովհան Օձնեցի* – Օձնեցու մեծութիւնն ու ինքնատպութիւնն այն է, որ, յետ Հայ Եկեղեցւոյ հակաքաղկեդոնական դիրքորոշման ու եզրաբանական, գուցէ եւ յղացական երերումներու, յստակօրէն եւ հաւասարակշռօրէն կը վերաբաձածէւէ կիւրեղեան-եփեսոսեան քրիստոսաբանութիւնը՝ յետագայ աւելի քան երկդարեան զարգացումների լոյսին ներքեւ, կ'երաշխաւորէ (Սեւերոս Անտիոքացիի նման եւ աւելի կողքին՝ թէեւ մի քիչ ուշ) կիւրեղեան "միաբնէութեան" ուղղափառ մեկնաբանութիւնն ու մեկնաբանումը, հուսկ՝ կ'ընծեռէ հաւաստի ու հեղինակաւոր փորձաքար մը յաջորդ դարերու Հայ Եկեղեցւոյ քրիստոսաբանութեան: Յիշենք նաեւ, որ Ստեփաննոս Սիւնեցիի հետ, գրեթէ ժամանակակցաբար, Օձնեցին հնագոյն քրիստոնեայ մատենագիրն է, որ մեկնաբանած ըլլայ ժամակարգութիւնը[7]:

Ե. *Գրիգոր Նարեկացի* – Նարեկացին ինքնատպութեան էացումն է համաքրիստոնէական ու համամարդկային չափանիշներով՝ իր հանճարի պատկանելիութեան բոլոր ոլորտներում: Այստ հանդերձ պիտի ուզէի նշել, որ իր խորհրդաբանութիւնը նոր հում մը կը բանայ լոյսի ու խաւարի (կամ բացասումի) աւանդական խորհրդաբանութիւններու կողքին. զայն պիտի որակէի "անդունդի" խորհրդաբանութիւն, մինչ լեզուի (langue) ու լեզուաձեւումի (language) տագնապը Նարեկացիի մօտ կը ստանայ անսահմանութեան բանաձեւումներ[8]:

Զ. *Ներսէս Շնորհալի* – Եթէ Շնորհալու հոգեւորութեան աւետարանական արմատականութիւնը հանգիստութեան եզր մը կը գտնէ Փրանկիսկոս Ասիզացիի մը մէջ, ապա աստուածաբանական լեզուի պայմանաղրականութեան մասին իր խոր յայտնատեսութիւնը կը մնայ իբրեւ դարեր անդրազանցող մի "գիտ": Արդարեւ Շնորհալի, յետ հաստատելու, թէ Քրիստոսի բնութիւններու իմացումին մէջ ամէն ինչ կախում ունէր նոյնիսկ "բնութիւն" բառին սահմանումէն, կը յաւելուր, թէ պատրաստ էր նաեւ "երկու բնութիւն" ասելու, բայց ո՛չ իբրեւ "ի մոլորութենէ ի ճշմարտութիւն դարձեալք": Ի զուր չէ, որ նոյնիսկ կայսերական նուիրակ հաշտասէր Թէորիանոսը պիտի չկարենայ վերահասու լինել իր խօսակիցին նրբամտութեանը, ինչպէս ո՛չ ոք երկար դարերու տեւողութեամբ: Գտնելու համար միջեկեղեցական պատմութեան մէջ նման մի բան Շնորհալու հանճարեղ, հոգեշունչ յայտնատեսութեան, հարկ է ոստնուլ մինչեւ Փլորենտիոյ վաղանցուկ, շատ քիչերէ հասկացուած համաձայնութիւնը ընդմէջ լատինաց եւ յունաց, եւ ոստնուլ Փլորենտիայէն մինչեւ XI դ., մինչեւ ժամանակակից էկումենական շարժումը[9]:

Է. *Ներսէս Լամբրոնացի* – Լամբրոնացին լրիւ ժառանգն է իր պապի եղբօր՝ Շնորհալիի ոգու եւ աստուածաբանութեան՝ նկարագրի ու խառնուածքի նշելի տարբերութիւններով հանդերձ: Աստուածաբանական մարզում Լամբրոնացու կարեւորագոյն եւ ինքնատիպ ներդրումներից է իր խորհրդածական (mystagogical) աստուածաբանութիւնը, որու մեծագոյն ներկայացուցիչներէն մին պէտք է նկատուի Դիոնիսիոս Արիոպագացիի եւ Մաքսիմոս Խոստովանողի կողքին[10]: Աստուածաշունչի մեկնաբանութեան մէջ եւս իր *Մեկնութիւն Սաղմոսաց*ը, դժբախտաբար տակաւին անտիպ, դասուելու է անկասկած բոլոր ժամանակներու ամէնէն ուշագրաւ մեկնութիւնների շարքում:

Ը. *Գրիգոր Տաթեւացի* – Տաթեւացին, ինչպէս արդէն նշուեցաւ, իր կատարին կհասցնէ հայ սխոլաստիկան: Կիրարկած աստուածաբանական մեթոդաբանութիւնը փոխ կ'առնէ լատիններէն, յաջողելով սակայն լրիւ տիրապետել անոր: Տաթեւացու միջքրիստոնէական արժէքը եւ հետաքրքրականութիւնը կը ծագի ճիշտ այս յարակարծային համադրումէն՝ ընդմէջ լատին դպրոցականութեան եւ արեւելահայկական խորհրդազգածութեան: Աստուածաբանական այլեւայլ հարցերի մէջ ծայրագոյն ճշգրտութեան հետախուզումը, որ կը յատկանշէր լատին սխոլաստիկան, զայն հետացնելով որոշ չափով հայրախօսական աստուածաբանութեան յատուկ մթնոլորտէն եւ աւանդներէն, ուշ Միջին դարից սկսեալ օժգնօրէն կը ներգործէ միեւնոյն ուղղութեամբ նաեւ հայ եւ առ հասարակ արեւելեան աստուածաբանական մտքին վրայ: Հիմնական մտահոգութիւնն էր՝ զատորոշուիլ լատիներէն եւ կասեցնել անոր տիրակալական ոգիով ներխուժումը դեպի արեւելք՝ չափուելով նրա հետ ի՛ր իսկ զէնքերով[11]:

Թ. *Յակոբ Նալեան* – XVIII դ. Կ.Պոլսոյ դպրոցին գրականօրէն եւ աստուածաբանօրէն ամէնէն կարկառուն ներկայացուցիչը, մինչ Կոլոտ Պատրիարք փայլած է առաւելաբար հովուական-կազմակերպչական գործունէութեամբ: Նալեան եւս կը զե-

տեղուի Տաթեւացու հարցաղրումի ճոյն ծիրի մէջ, բայց ջանալով անցնիլ լոկ ջատագովականէն աւելի համադրական դիրքորոշումների՝ հայոց՝ Արեւմուտքի հետ հանդիպման ընդհանուր հարցին առնչութեամբ, բացի կրօնականէն նաեւ կրթական, մշակութային ու կենցաղային ոլորտներում:

Ժ. Միքայէլ Չամչեան – Մխիթարեան դպրոցի թերեւս ամէնէն համապարփակ միտքը, հեղինակ, բացի քաջածանօթ *Պատմութիւն Հայոց* եռահատոր երկէն, տասը հատորանոց *Մեկնութիւն Սարմնացի* եւ տակաւին անտիպ ընդամէնը չորս հատոր *Վահան Հաւատոյ* եւ *Վահան Ուղղափառութեան* աստուածաբանական երկերուն, որոնց բնագիրները (Պոլսում ննջգաւ առեւանգուած Վարդապետի քրոջ ձեռքէն) ի պահ կը մնան Հռոմի «Հաւատոյ Պաշտպանութեան» ատեանի արխիւներում: Չամչեան կը փորձէ Արեւմուտքի «հաւատացեալ լուսաւորապաշտ» գաղափարախօսութիւնը կիրարկել հայ իրականութեան, ազգային ու եկեղեցական զոյգ տարածքների վրայ: Հետեւելով Մխիթար Սեբաստացու՝ թունդ ջատագով կը հանդիսանայ Հայ Եկեղեցւոյ ուղղափառութեան հռոմէական ատեաններուն առջեւ, ջանալով ցոյց տալ նրա կիրարկած բանաձեւերի անխոցելիութիւնը (օրինակ, քրիստոսաբանութեան հարցում՝ մերժելով ամէն կասկած, թէ հայերը կը շփոթէին Քրիստոսի մէջ մարդկութիւնն ու աստուածութիւնը): Չամչեան իր ժամանակին մնաց մեծ մասամբ չհասկացուած, քանի որ ինքն ալ կը մեկնէր, ինչպէս նախապէս Շնորհալին ու Լամբրոնացին, աստուածաբանական լեզուի պայմանաղրականութեան գիտակցութենէն, որի հասկացողութեան հնարաւորութիւնը XVIII դ. քրիստոնէական համընդհանուր մթնոլորտում դեռ նոյնքան յուսահատական էր, ինչպէս Միջին դարում[12]:

Այս չափազանց հակիրճ ակնարկը բաւական է ցոյց տալու, եթէ հարկ լիներ, որ Մեծ Պատմահօր պատգամը՝ «թէպէտ եւ եմք ածու փոքր... բայց բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհի եւ արժանի գրոց յիշատակի», լրիւ կը յարմարի նաեւ հայ աստուածաբանական մտքի ժառանգութեան: Ճիշտ է, որ վերջին հարիւր եւ յիսուն տարիները չեն ունեցել այն բեղունութիւնը աստուածաբանական եւ հոգեւոր գրականութեան ասպարէզներում, զոր տեսանք նախընթաց դարերու ընթացքին: Մեծագոյն դէմքը, որ եկեղեցական գիտելիքներու մարզում կը տիրապետէ սոյն շրջանին, Կ.Պոլսոյ Մաղաքիա Օրմանեան Պատրիարքն է. բայց անոր հսկա վաստակը աւելի եկեղեցական պատմութեան կը վերաբերի, քան թէ բուն աստուածաբանութեան: Մաղթելի է, ուրեմն, որ հայ նոր սերունդները՝ եւ ո՛չ միայն հոգեւորական, այլ եւ աշխարհական (Արեւմուտքում եւ Օրթոդոքս աշխարհում կայ արդէն աշխարհական աստուածաբաններու մի փաղանգ, որոնցմէ ոմանք դասւում են նոյնիսկ դարուս մեծագոյն աստուածաբաններու կարգին), նոր թափով եւ նոր գիտակցութեամբ նուիրուին աստուածաբանական ուսումներուն, չմոռանալով մինչ այդ նաեւ լաւագոյնս վերաբժեքաւորել եւ ծանօթացնել հանուր քրիստոնեայ աշխարհին եւ ի հոգեւոր շինութիւն բոլորին, հայ հոգու եւ մտքի աստուածաբանական հարուստ, Ս.Հոգւոյն դրոշմով օծուն, դարաւոր արգասիքը:

Ծանօթագրութիւններ

1 Աստուածաբանութեան մասին իբրեւ գիտութիւն եւ նրա մեթոդաբանութեան մասին տե՛ս **B.Lonergan**, *Method in Theology*, N.Y., 1972; **N.Matsoukas**, *Δογματική καὶ συμβολική, I, Εἰσαγωγὴ στὴ θεολογικὴ γνωσιολογία*, Saloniki, 1990:

2 Բաւ է յիշել, որ Միջին դարում Եկեղեցիները իրարու կը վերագրէին տասնեակ ու տասնեակ մոլորութիւններ, եւ թէ Սուոյ Մխիթար կաթողիկոսի օրով հռոմէականների՝ հայոց վերագրած "սխալ"ներու (!) թիւը կը հասնէր հարիւրտասնեօքի (տե՛ս **Denzinger**, *Enchiridion Symbolorum*):

3 Տե՛ս այս մասին **B.L.Zekiyan**, Quelques observation critiques sur le "corpus elisaeanum", *The Armenian Christian Tradition*. Scholarly Symposium in Honor of the Visit to the Pontifical Orientall Institute, Rome, of His Holiness Karekin i, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, December 12, 1996, ed. by R.F.Taft, Roma, 1997, p. 117, n. 63; Ն.Թոմսոնը իր կարծիքը կ՝արտայայտէ հետեւեալ երկում. *The Teaching of St. Gregory. An Early armenian Cathechism*, transl. by R.W.Thomson, Cambridge, MA, 1978, p. 38: Թոմսոն տեղեակ չէ սակայն, որ իրմէ առաջ Հ.Բ.Սարգիսեան կատարած էր արդէն նման վերագրում կամ գոնէ գայն չի յիշատակեր: Իսկ ինչ կը վերաբերի Վարդապետութեան Ս.Գրիգոր Լուսաւորչին աւանդական վերագրման հարցին, ապա Թոմսոն լաւ կ՝ամփոփէ դրա ուղղիչ գաղափարը եւ չարժառիթները մեսրոպեան վերագրման վարկածում. "an attempt to sketch the lines of the Armenian theological tradition and gain for it the authority of the Illuminator" (անդ), որ խնդրոյ առարկայ հիմնական մտահոգութիւնը՝ ժողովուրդին հաղորդելու կարիքն է իր բրիստոնէական ինքնութեան պատմական գիտակցումը: Վերջերս Ս.Արեւշատեան եւս միացած է սոյն կարծիքին, Մեսրոպ Մաշտոցին վերագրելով նաեւ *Յաճախապատում*ն, ինչ որ, ընդհակառակն, մեզի յոյժ անհաւանական կը թուի (տե՛ս Ս.Ս.Արեւշատյան, Մեսրոպ Մաշտոցի փիլիսոփայական հայացքները, *Պատմա-բանասիրական հանդես*, 1996, 1-2, էջ 91-97: Հ.Պ.Անանեան առաջարկած է *Վարդապետութիւնը* Թէոդորոս Մոպսուեստացիին վերագրելու վարկածը (տե՛ս Հ. Պօղոս Անանեան, *Վարք Սբ.Մեսրոպ Մաշտոցի*, Վիեննա, 1964, էջ 378-403): Համաձայն լինելով հանդերձ ականաւոր բանասէրի այն մտքի հետ, որ այս գրուածքը, իր նախնական խմբագրութեամբ, կը պատկանի ակնյայտօրէն անտիոքեան կնիքը կրող բրիստոսաբանական աւանդութեան, այնուամենայնիւ մենք չենք տեսնում դրա հեղինակութիւնը Անտիոքի շրջան տեղափոխելու որեւէ հրատապ անհրաժեշտութիւն: Ո՛չ միայն չկայ եւ ոչ մի վկայութիւն, որ հակասէր վաղ բրիստոնէական շրջանի այդ խոշոր կենտրոնից դեպի Հայաստան ներթափանցող հզօր ազդեցութեան հնարաւորութեանը, այլեւ, ընդհակառակն, կան ծանրակշիռ պատճառներ ենթադրելու, որ Հայ Եկեղեցւոյ նախեփեսոսեան շրջանին անտիոքեան ազդեցութիւնը շատ հզօր է եղել, թերեւս՝ ամենահզօրը, որու նկատմամբ որեւէ պատճառ չկայ, որ քրիստոսաբանութեան ասպարէզը բացառութիւն կազմէր: Այս իրողութեան աւելի քան պերճախօս վկայութիւնն է Ս.Յովհաննէս Ոսկեբերանի եւ իր գրական հունձքին վայելած անհամեմատ ընդունելութիւնը Հայոց մօտ, ի հնճուկս նրա քրիստոսաբանութեան ակնյայտօրէն անտիոքեան թեքումին:

4 Այս մասին հանգամանալից ուսումնասիրութիւններ հրատարակած է Գ.Վինկլեր, որոնք յիշուած և վերամփոփուած են իր հիմնարար աշխատանքում՝ **G.Winkler**, *Das Armenische Initiationsrituale* (Orientalia Christiana Analecta, 217), Roma, 1982:

5 **L.Mariès**, Le De Deo d'Eznik de Kolb connu sous le nom de "Contre les Sectes". *Etude de critique littéraire et textuelle*, extr. de *"Revue des études arméniennes"*, 1954, 4, pp. 11-12; éd. critique du texte arménien par L.Mariès et Ch.Mercier, "*Patrologia Orientalis*", XXVIII/3, 1959, pp. 409-538; traduction franç., notes et tables: "*Patrologia Orientalis*", XXVIII/4, 1959, pp. 541-776.

6 Տե՛ս **B.L.Zekiyan**, Elišē as Witness of the Ecclesiology of the Early Armenian Church, in *East of Byzantium: Armenia and Syria in the Formative Period*, Dumbarton Oaks Symposium 1980, N.G.Garsoïan, Th.F.Mathews and R.W.Thomson (Ed.s), Dumbarton Oaks Center for Byzantine Studies, Washington D.C., 1980, pp. 187-197; **Idem**, L'idéologie nationale de Movsēs Xorenac'i et sa conception de l'histoire, *"Հանդէս ամսօրեայ"*, 1987, էջ 482; **W.Thomson**, The Maccabees in Early Armenian Historiography, *"The Journal of Theological Studies"*, N.S., XXVI/2, 1975, pp. 329-341.

7 Ս. սրկ. Ֆընտըքեանի (M.Findikyan)՝ 1997 թ. Հռոմի Պապական Արեւելագիտական ինստիտուտում պաշտպանած դոկտորական ատենախօսութիւնը Սիւնեցիի և Օձնեցու մեկնութիւնների մասին՝ հատուածներ ցարդ կատարուած ամէնէն ամբողջական աշխատանքն է այս նիւթի շուրջ: Բաղձալի է սոյն ատենախօսութեան վաղընդհոյս հրատարակութիւնը:

8 Նարեկացիի միստիքականութեան դրած հարցերի մասին եւ բաղդատական մի հայեացքի համար նորագոյն ուսումնասիրութիւնը հատուածներ այն է, որ է յոյս տեսել Նարեկի առաջին երեսուներեք Բանների իտալերէն բարգմանութեան ընդարձակ ներածականում (տե՛ս **B.L.Zekiyan**, *La spiritualità armena. Gregorio di Narek, Il Libro della Lamentazione*, Roma, 1999):

9 Տե՛ս **Idem**, Un dialogue oecuménique au XII[e] siècle: les pourparlers entre le catholicos St. Nersès Shnorhali et le légat impérial Théorianos en vue de l'union des Églises arménienne et byzantine, *"Actes du XV[e] Congrès International d'Études Byzantines"*, *Athènes, Sept. 1976*, IV. *Histoire*, Communications, Athènes, 1980, pp. 420-441, վերատպուած է թեթեւակի փոփոխութիւններով "St. Nersès Shnorhali en dialogue avec les Grecs: un prophète de l'oecuménisme au XII[e] siècle" վերնագրի տակ (Armenian Studies, Études Arméniennes in memoriam Haig Berberian, Lisboa, 1986, pp. 861-883); **Idem**, St. Nersès de Lambron Docteur de l'Église Arménienne et théologien de l'union des Églises, *"Jahrbuch der Oesterreichischen Byzantinistik"*, 31/Beiheft, XVI, *Internationaler Byzantinistenkongress. Akten*, I/Beiheft, Wien, 1981, p. 2.1; **Idem**, Les relations arméno-byzantines après la mort de St. Nersès Shnorhali; *"Jahrbuch der Oesterreichischen Byzantinistik"*, 32/4, *XVI Internationaler Byzantinistenkongress. Akten*, II/4, Wien, 1982, pp.

331-337; **Idem**, The Armenian Community of Philippopolis and the Bishop Joannes Atmanos Imperial Legate to Cilicía; *"Between the Danube and the Caucasus. Oriental Sources on the History of the Peoples of Central and South Eastern Europe"*, Budapest, 1987, pp. 363-373; **Idem**, "Nersès de Lambron" եւ "Nersès Shnorhali", *"Dictionnaire de Spiritualité"*, XI, Paris, 1981, ll. 122-134, 134-150: Տե՛ս նաեւ **P.Ananian**, Narsete IV Klayetzi, *"Bibliotheca Santorum"*, IX, Roma, 1967, ll. 750-753; **E.Suttner**, Eine "Oekumenische Bewegung im 12. Jahrhundert und ihr Bedeutendster Theologe der armenische Katholikos Nerses Schnorhali, *"Kleronomia"*, t.7, fasc. 1, 1975, pp. 87-97; **H.Khatchadourian**, The Christology of St. Nerses Shnorhali in Dialogue with Byzantium, *"Miscellanea Francescana"*, 78, 1978, pp. 413-434:

10 Տե՛ս **Cl.Gugerotti**, *La celebrazione liturgica come mistagogia ... in Nerses di Lambron*, Padova, 1987.

11 Տե՛ս **L.Arpee**, *History of Armenian Christianity*, N.Y., 1946, ch. XIV, "Gregory of Datev and the Armenian Summa", pp. 175-186. Շատ աւելի հանգամանօրէն՝ **M.De Durand**, Une Somme arménienne au XIV siècle, *"Études d'Histoire Littéraire et Doctrinale"*, Quatrième série, (Université de Montréal. Publications de l'Institut d'Études Médiévales, XIX), Montréal - Paris, 1968, pp. 217-277.

12 Վերջին երկու հեղինակների աստուածաբանական վաստակին եւ միջեկեղեցական տարողութեամբ աստուածաբանական իրայատկութիւններուն քննութիւնը աւելի սաղմնային վիճակում է, քան նախորդներինը:

ՀԵՌՈՒ ԵՎ ՄՈՏԻԿ ՏԱՐԱԾՔՆԵՐ



Տրդատ Մեծի շքերթը (որմնանկար),
Անիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Տիգրան Հոնենցի) եկեղեցի:

Արմինե Զոհրաբյան

ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԴՐԱՄՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Անդրադառնալով հայ Բագրատունիների դրամների բացակայության հարցին, դրամագետները, նշելով այդ փաստը, խուսափել են որևէ պատասխան որոնելուց[1], քանի որ այն կարող էր հանգեցնել հայկական անկախ թագավորության իրավական կարգավիճակի վերանայման: Սեփական դրամը միշտ ընկալվել է որպես անկախության պարտադիր պայման: Սակայն պատմական ամեն մի ժամանակաշրջան ունի իր առանձնահատկությունները ոչ միայն պատմագիտության, այլև դրամագիտության տեսանկյունից, որոնց ճիշտ գնահատումը կօգնի հասկանալ առաջ քաշված խնդիրը:

Դեռևս վաղ միջնադարից Հայաստանն ընդգրկված էր դրամական մի տարածաշրջանի մեջ, որտեղ, ելնելով առևտրատնտեսական հարաբերությունների պահանջներից, հաստատվել էին միմյանց լրացնող երկու դրամական համակարգ՝ *բյուզանդական* և *սասանյան*: VII դ. վերջում այդ տարածաշրջանում Սասանյան Իրանի տեղը զբաղեցրեց Արաբական խալիֆայությունը: Չնայած վերջինիս ռազմական գերիշխանության արագ հաստատմանը և քաղաքական կշռի աճին, պահանջվեց ավելի քան 60 տարի, որպեսզի արաբները կարողանան իրականացնել դրամական բարեփոխում և, շրջանառության մեջ մտցնելով սեփական դրամներ, շուկայից դուրս մղել ավանդական վստահություն ունեցող սասանյան դրամները: Բյուզանդիան նոր դրամական համակարգի հանդես գալուն պատասխանեց խալիֆայության դեմ ռազմական գործողությունների վերսկսումով, քանի որ իր ոսկե դրամի շրջանառությունն այդ տարածքում կարող էր տնտեսական և քաղաքական կախվածության պատրանք ստեղծել Բյուզանդիայի կողմից[2]:

Հավանաբար, այդ պատճառով Բյուզանդիան և Արաբական խալիֆայությունը նույնպիսի համածայնության են գալիս, ինչպես ժամանակին Բյուզանդիան և Սասանյան Իրանը[3]: Խալիֆայությունը, որի զգալի մասը կազմում էր նախկին Սասանյան կայսրության տարածքը, շարունակեց իր նախորդի դրամական քաղաքականության «ավանդույթները»: Այդ տարածքում վճարման միջոցը մնաց արծաթե դրամը, իսկ ոսկին թողարկվում էր միայն խալիֆայության մայրաքաղաքում և ոչ այն քանակությամբ, որ բավարարեր շուկայի պահանջները: Այդ պայմաններում բյուզանդական ոսկե դրամը պահպանեց միջազգային արժույթի իր դերը: Հանդիսանալով ոսկե դրամի հիմնական մատակարարողը, Բյուզանդիան շարունակում էր պահպանել իր ազդեցությունը տարածաշրջանում: Այսպիսով, դրամական այս տարածաշրջանը բաժանված էր դրամաշրջանառության երկու ոլորտի՝ բյուզանդական և արաբական, համապատասխանաբար նաև ոսկե և արծաթե դրամների, որոնք լրացնում էին միմյանց և կարգավորվում երկու կայսրությունների առևտրատնտեսական հարաբերություններով:

Այսպիսին էր վիճակը մինչև IX դ. 2-րդ կեսը, երբ հայ Բագրատունիները մահմեդական մի շարք տերությունների հետ ինքնուրույնություն ստացան: Դա Արաբական կայսրության քայքայման սկիզբն էր: Բայց խալիֆայությունը շարունակում էր մնալ հզոր կայսրություն, իսկ խալիֆը՝ մահմեդական աշխարհի համար աշխարհիկ և

հոգևոր գերագույն իշխանություն: Մահմեդական աշխարհում «առանձին քաղաքական կյանք գոյություն չունի. ամեն մի քաղաքական գործողություն, գործառություն, նորամուծություն դիտվում էր որպես կրոնի հետ անմիջական կապ ունեցող»[4]: Խալիֆի ձեռքում էր գտնվում դրամահատության (սիկկա) և ուրբաթօրյա քարոզի (խութբա) իրավունքի շնորհումը: IX դ. կեսից այս երկու իրավունքը միասին դառնում են մահմեդական ինքնուրույն տերության ճանաչման պարտադիր պայման: Հաստատվում է ընդհանուր սկզբունք դրամահատության և խութբայի մեջ՝ նոր տիրակալի անունը անպայման նշվում է խալիֆից հետո: Դրամահատության իրավունքը հավասարեցվում է խութբային, դրանով ձեռք բերելով կրոնահիրավական բնույթ:

Մյուս կողմից, ինքնուրույնություն ստացած տիրակալների դրամներն արտահայտում էին խալիֆայության և մահմեդական տերությունների փոխհարաբերությունները, որտեղ առաջինը հանդես էր գալիս որպես սյուզերեն, իսկ վերջիններս՝ վասալի կարգավիճակով: Նոր տիրակալներն իրենց ճանաչում էին խալիֆի վասալներ և «ձգտում էին ձևականորեն պահպանել խալիֆի գոյությունը», քանի որ «նրանց, իսկ գլխավորը՝ հպատակներին, առանց խալիֆի պետությունը չէր թվում իսկապես իսլամական»: Առանց խալիֆի՝ տիրակալի «իշխանությունը կարող էր համարվել անօրինական»[5]: Մինչև XI դ. սկիզբը բոլոր մահմեդական տիրակալները պաշտոնապես կրում էին *ամիրա* տիտղոսը, որը, թեկուզ ձևականորեն, նշանակում էր խալիֆայության ներկայացուցիչ տվյալ նահանգում: Մահմեդական նոր դրամները, արտահայտելով վասալային այդ կախվածությունը, ունեին նույն տիպը, ինչ Աբբասյան համապետական թողարկումները, միայն խալիֆից հետո ավելացվում էր տիրակալի անունը: Մինչև IX դ. նահանգների կառավարիչները թողարկում էին իրենց անունով դրամներ, բայց դրանք պղնձե ֆելսեր էին և նախատեսված էին ներքին շուկայի համար: IX դ. կեսերից նրանք իրավունք են ստանում թողարկել նաև ոսկե և արծաթե դրամներ՝ իրենց անունով, որը նրանց ինքնուրույնության դրսևորումներից էր:

Բագրատունյաց թագավորության հաստատումից կարճ ժամանակ անց՝ 892 թ. Հայաստանում կառավարիչ են նշանակվում Ատրպատականի Սաջյան ամիրաները, որոնք Դվինում թողարկում են ոսկե և արծաթե դրամներ՝ իրենց անվան հիշատակությամբ[6]: Թողարկման վայրն ավանդաբար նշվում էր՝ «Արմինիա»: «Արմինիա» վայրի հիշատակությամբ մեզ հայտնի ամենաուշ թողարկումը վերաբերում է 945 թ.[7]: Դա նշանակում է, որ Հայաստանում դրամ հատելու իրավունքը խալիֆը տվել էր Ատրպատականի ամիրաներին:

Հայ Բագրատունիները, որոնց թագավորությունը ճանաչվել էր խալիֆի կողմից, յուրահատուկ կարգավիճակ ունեին. նրանք թագի հետ միասին ստացան «արքայից արքա» (շահնշահ) տիտղոսը: Խալիֆայության կողմից միայն նրանք էին, որ կրում էին այդ տիտղոսը: Նույնիսկ մահմեդական որոշ տիրակալներ, որոնք իրանական ծագում ունեին և իրենց հռչակել էին սասանյանների ժառանգորդ, խալիֆի կողմից չստացան «շահնշահ» տիտղոսը, որին նրանք շատ էին ձգտում, քանի որ «արքայական իշխանությունը հակասում է մահմեդական համայնքի բնույթին և հակառակ է իսլամի հիմունքներին»[8]: Մահմեդական բոլոր տիրակալները քննարկվող ժամանակաշրջանում կրում էին *ամիրա* կամ *ամիր ալ-ումարա* տիտղոսը, որը նշանակում էր նաև որոշակի կրոնական գործառույթներ: Իսկ դրամահատությունը, իր նշանակությամբ հավասարվելով խութբային, ձեռք էր բերել կրոնական իմաստավորում և դրա իրավունքը կարող էր շնորհվել միայն որոշակի հոգևոր իշխանությամբ օժտված տիրակալի: Սակայն հայ Բագրատունիները, հանդիսանալով զուտ քրիստոնյա տիրակալներ, կրում էին աշխարհիկ «շահնշահ» տիտղոսը և չէին կարող ակնկալել խալիֆայությունից դրամ կտրելու իրավունք: Մյուս սյուզերեն տերությունը, որը կարող էր դրամահատության իրավունք տալ, Բյուզանդիան էր: Սակայն, լինելով ավելի կենտրոնացված իշխանությամբ կայսրություն, Բյուզանդիան չուներ դրամահատության այն ավանդությները, ինչ խալիֆայությունը: Բյուզանդիայից կախում ունեցող տարածքներում ոչ միայն չէին թողարկվում դրամներ կառավարիչների անունով, այլ չկային նույնիսկ համապետական թողարկումներ: Բյուզանդիան իր դրամները թողարկում էր հիմնականում մայրաքաղաք Կոստանդնուպոլսում:

Բյուզանդիան, որը X դ. քաղաքական նոր վերելք էր ապրում, նպատակ ուներ վերջնականապես նվաճել Հայաստանը, հատկապես որ՝ գնալով թուլանում էր Արաբական խալիֆաթի ազդեցությունը: Նա այդպես էլ չճանաչեց Բագրատունիների թագավորական իշխանությունը, ընդունելով միայն նրանց նախկին՝ իշխանաց իշխան տիտղոսը: Նման պայմաններում Բյուզանդիան թույլ չէր տա Բագրատունյաց դրամների հանդես գալը: Հայկական դրամների բացակայությունը պայմանավորված էր նաև ներքին գործոններով: Ամենակարևորը երկրի մասնատվածությունն էր տարբեր թագավորությունների միջև: Այս հանգամանքը փայլուն օգտագործում էին թե՛ Բյուզանդիան, թե՛ Աբբասյան խալիֆայությունը: Դա թույլ չտվեց Բագրատունիներին Հայաստանում ստեղծել միացյալ թագավորություն՝ կենտրոնացված իշխանությամբ, որը կարևորագույն նախապայմաններից է դրամի թողարկման համար:

Սակայն երկիրը մասնատված էր ոչ միայն հայ նախարարական տների, այլ նաև մահմեդական ամիրայությունների միջև: Վերջիններս Հայաստանում զբաղեցնում էին ոչ թե առանձին տարածք, այլ սփռված էին հայկական իշխանությունների միջև, որն ավելի էր խորացնում մասնատվածությունը: Մահմեդական ամիրաները հիմնականում ձգտում էին հաստատվել քաղաքներում, այդ թվում նաև Հայաստանի այն կենտրոններում, որոնք գտնվում էին առևտրական ճանապարհների վրա: Այս հանգամանքը նույնպես չէր կարող նպաստել հայկական դրամի հանդես գալուն, քանի որ այն չէր ընդունվի վաճառաշահ քաղաքներում հաստատված ամիրաների կողմից: «Հենց քաղաքներում էլ կենտրոնացել էր արաբ և մահմեդական բնակչությունը»[9]:

Հայաստանը քննարկվող շրջանում ընդգրկված էր Բյուզանդիայի և Խալիֆաթի ապրանքադրամային հարաբերությունների ոլորտում: Դարերի ընթացքում դրամահատությունը եղել է կայսրությունների մենաշնորհը: Որոշ դեպքերում դրամ կտրելու իրավունք ձեռք էին բերում նաև քաղաքական որոշակի կշիռ ունեցող առանձին տիրակալներ, որոնք, այնուամենայնիվ, ընդունում էին իրենց վասալային կախումը: Նման դրամները լիովին արտահայտում էին այդ փոխհարաբերությունները: Նոր տիրակալների դրամները համապատասխանում էին կայսերական թողարկումների՝ ինչպես դրամակշռային, այնպես էլ պատկերագրական ստանդարտին:

Հաստատված այս կարգը կարող էր խախտել միայն հզոր մի տերություն, որը կունենար իրական քաղաքական և տնտեսական հիմք ու կզբաղեցներ այս կայսրություններից մեկն ու մեկի տեղը: Սակայն ավանդական վստահությունն այս դրամների հանդեպ, որը բխում էր մետաղի տեսակից և որակից, խախտվեց ամենևին ոչ նոր տերության ասպարեզ իջնելով: XI դ. կեսերից Արևելքում սկսվում է «արծաթի ճգնաժամը»: Աստիճանաբար ընկնում է արծաթե դրամների որակը, որոնք շուտով դուրս են գալիս շրջանառությունից՝ իրենց տեղը զիջելով պղնձե դրամներին: Ճգնաժամն անդրադառնում է նաև բյուզանդական ոսկե դրամի որակի վրա, որը, որպես միջազգային արժույթ, չէր հասցնում բավարարել ամբողջ տարածաշրջանի շուկայի պահանջը: Այս՝ մինչև այսօր բացատրություն չգտած երևույթը շարունակվել է մինչև XIII դ.:

Ստեղծված իրավիճակը ստիպում է Բյուզանդիային թույլ տալ իր վասալ տերություններին թողարկել բյուզանդական տիպի դրամներ՝ անպայման նշելով այդ տիրակալների՝ Բյուզանդական կայսրության կողմից շնորհված տիտղոսը: Այդպիսի

դրամները ընդգծում էին նոր հանդես եկած տերությունների կախվածությունը կայսրությունից:

Այս հանգամանքներն էին, որ հնարավորություն ստեղծեցին XI դ. 70-ական թթ. Լոռու Բագրատունիներից Կյուրիկե 2-րդ թագավորին թողարկել սեփական դրամ, սակայն նորից բյուզանդական տիտղոսի պարտադիր հիշատակմամբ՝ կյուրապաղատ:

«Արծաթի ճգնաժամը» պարզեցրեց դրամահատության կանոնները նաև մահմեդական Արևելքում, որտեղ, խախտելով Ղուրանի օրենքները, թողարկվում են պատկերներով դրամներ: Դրանք հիմնականում կրկնում էին հելլենիստական, երբեմն նաև սասանյան առանձին տիրակալների դրամները: Կան դեպքեր, երբ մահմեդական դրամների վրա դրոշմված են նույնիսկ Հիսուսի և Աստվածամոր պատկերները:

«Արծաթի ճգնաժամի» առաջ բերած խառնաշփոթ վիճակը տարածաշրջանի դրամական տնտեսության մեջ վերջ դրեց բյուզանդական և արաբական դրամական համակարգերի գերիշխանությանը, վերջնականապես բայրայելով Աբբասյան խալիֆայությունը և թուլացնելով Բյուզանդիայի դիրքերը:

Բագրատունյաց դրամների բացակայությունը չի նշանակում, թե Հայոց թագավորությունն ինքնուրույն տերություն չէր: «Հայաստանը շատ ավելի ծանր էր կշռում Բյուզանդիայի համար, քան արևմուտքի և արևելքի բոլոր տերությունները՝ բացառյալ Արաբական խալիֆաթից...»[10]: Նույնը կարելի է ասել նաև Հայաստանի և Խալիֆայության փոխհարաբերությունների մասին: Սակայն IX դ. վերջից մինչև XI դ. 2-րդ կեսն ընկած ժամանակաշրջանում դեռ չէին առաջացել այն պայմանները, երբ կխախտվեր բյուզանդական և արաբական դրամական համակարգերի գերիշխանությունը, որոնք թույլ կտային քաղաքական ավելի փոքր միավոր տերություններին թողարկել սեփական դրամ՝ ինքնուրույն պատկերագրական լուծումներով: Այդ ընթացքը սկսվեց միայն XI դ. 2-րդ կեսից, երբ Բագրատունյաց թագավորությունն արդեն չկար: Բայց այն, որ հայերը սեփական դրամի փաստը անբաժան էին համարում անկախ թագավորության գոյության գաղափարից, իր դրսևորումը գտավ Կիլիկյան Հայաստանում, որտեղ հայ թագավորները առաջին իսկ նպաստավոր պայմաններում թողարկեցին ոսկե, արծաթե, պղնձե դրամներ՝ հայերեն գրություններով:

Ծանոթագրություններ

1 Տե՛ս Կ.Բասմաջեան, Հայկական ընդհանուր դրամագիտութիւն և Հայաստանի վերաբերեալ դրամներ, Վենետիկ, 1936, էջ 48: Խ.Մուշեղյան, Դրամական շրջաառությունը 9-11-րդ դդ., «Հայ ժողովրդի պատմություն», հ.3, Երևան, 1976, էջ 223:

2 Տե՛ս Е.А.Беляев, Арабы, ислам и Арабский халифат, М., 1966, с.188.

3 Տե՛ս А.Мец, Мусульманский ренессанс, М., 1973, с. 376.

4 М.Б.Пиотровский, Светское и духовное в теории и практике средневекового ислама, "Ислам: религия, общество, государсрво", М., 1984, с. 177.

5 Անդ, էջ 178:

6 Տե՛ս Р.Р.Фасмер, О монетах саджидов, "Известия Общества обследования и изучения Азербайджана", Баку, 1927, 5, с. 46.

7 Տե՛ս А.А.Быков, Дайсам ибы Ибрахим ал-Курды и его монеты, "Эпиграфика Востока", X, М.-Л., 1955, с. 14-38.

8 М.Б.Пиотровский, ук. соч., с. 179.

9 Ա.Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 247:

10 Հ.Բարթիկյան, Բյուզանդիան և Հայ պետականությունը 10-11-րդ դդ., «Լրաբեր հասարակական գիտությունների», 1996, 1, էջ 29:

Արամ Քալանթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԴՐԱՄԱԿՇՌԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ V-VII ԴԱՐԵՐՈՒՄ
(ըստ Դվինի նյութերի)

Հայաստանի տարածքից գտնված հնագիտական նյութերը և դրամների գտածոները հնարավորություն են տալիս որոշակի գաղափար կազմել V-VII դդ. դրամակշռային համակարգի վերաբերյալ: Նպատակ չունենալով խնդիրը լուծել իր ամբողջության մեջ[1], հարկ եմ համարում մասնակի ներկայացնել վաղ միջնադարյան Հայաստանում բյուզանդական դրամակշռային համակարգի հետ կապված որոշ հարցեր, որոնք արժանի են ուշադրության:

Հայկական միջնադարյան աղբյուրներում ոսկե դրամը, առաջին հերթին բյուզանդականը, անվանվել է *դահեկան*: Այն ոսկե դրամի հիմնական դրամակշռային միավորն էր Կայսրությունում, նրա ենթակա և հարևան երկրներում, այդ թվում և Հայաստանում: Բյուզանդական ոսկե դրամը՝ դահեկանը, շրջաառության մեջ մտավ սոլիդ անվանմամբ 324 թվականից՝ Կոստանդին Մեծ կայսեր դրամական բարեփոխություններից հետո, և հետագայում ունեցավ տարբեր անվանումներ ու կշիռ: Բյուզանդիայում դահեկանը կոչվել է նաև *նոմիսմա:*

Անանիա Շիրակացուն վերագրվող «Անանիայի Շիրակայնւոյ Համարողի Յաղագս կշռոյ, կշռոց եւ կշռողաց» բնագրում ասվում է. «Նոմիսմայ ըստ հռովմայեցւոց դահեկան անուանի, զի Նոմիսմայ անուն էր թագաւորին և ըստ իւրում անուանն նոմիսմայ անուանեաց»[2]:

Ուշ շրջանի չափագիտական բնագրերից մեկի ընդօրինակությունում գրված է՝ «դահեկանն մի ոսկի է»[3]: Կա մի հետաքրքիր փաստ, որ ակնարկում է Ա.Մեցը՝ կապված բյուզանդական ոսկե դրամի հետ. Բյուզանդիայի և Իրանի միջև կնքված համաձայնագրով ոսկե դրամ կտրելու և շրջաառության մեջ մտցնելու բացարձակ իրավունքը վերապահվել է Կայսրությանը[4]: Դա է պատճառը, որ Արևելքում վաղ միջնադարում հայտնի բոլոր ոսկե դրամները բացարձակապես բյուզանդական սոլիդներ են, իսկ իրանական թողարկումները արծաթից են: Պատահական չէ, որ բյուզանդական ոսկե դրամների տարածման ոլորտի մեջ գտնվող գրեթե բոլոր երկրներից գտնվել են կշռաքարերի նմուշներ (Եգիպտոս, Սիրիա, Բուլղարիա, Ռումինիա, Վրաստան և այլն), որոնք անմիջականորեն կապված են ոսկե դրամների կշիռները ստուգելու հետ և լայն կիրառություն ունեին բյուզանդական դրամակշռային համակարգում[5]: Նման կշռաքարերի վրա, որոնք հայտնի են *էքսագիում* անունով, մեծ մասամբ գրված են կշռաչափի և միավորի քաշի անվանման սկզբնատառերը:

Դվինը վաղ միջնադարում միջազգային տարանցիկ առևտրի ոլորտում է եղել: Հանրահայտ փաստ է, որ Բյուզանդիայի կայսեր 408/409 թ. հրովարտակով Արևելքում տարանցիկ առևտրի երեք կենտրոններից մեկը եղել է Արտաշատը[6]: V դարից, ըստ երևույթին, այդ իրավունքն անցել է Դվինին, որը Սասանյանների ժամանակ մաքսային կենտրոններից մեկն էր և նաև՝ ապրանքների մթերանոց[7] (դրա ապացույցն են նաև


Դվինից գտնված կնքադրոշմները[8]): Պրոկոպիոսի վկայությամբ՝ «Հնդկաստանից, հարևան Իբերիայից, մի խոսքով Պարսից ենթակա բոլոր երկրներից, որոշ չափով նաև հռոմեական երկրից ապրանքներ բերողները հենց այստեղ են իրար հետ առևտուր անում»[9]: Ի դեպ, պետք է նշել, որ 562 թ. բյուզանդական կայսր Հուստինիանոս Ա-ի և պարսից արքա Խոսրով Անուշիրվանի միջև կնքված պայմանագրի 4-րդ կետով ուժի մեջ էր մնում վերոհիշյալ պայմանագրերը առևտրի փոխանակման սահմանային կենտրոնների մասին:

Արտաքին առևտրի բերումով Հայաստան են թափանցել նաև վաղբյուզանդական ոսկե դրամները՝ *սոլիդները*[10]: Մասնավորապես, Դվինից հայտնի են Թեոդոսիոս Բ-ի (408-450) և Լևոն Ա-ի (457-474) դրամները: Ոսկե դրամների մուտքը Հայաստան բնականաբար իր հետ պետք է բերեր նաև դրամակշռային համակարգի հետ կապված երևույթներ:

Միջնադարյան կշիռների չափերի անվանումների հիմնական ցուցակը տվել է Անանիա Շիրակացին[11]. հետագա բոլոր աղբյուրներն իրենց հիմքում ունեն Անանիա Շիրակացու համակարգը:

Միջնադարյան կշռաչափերի՝ ըստ հնագիտական նյութերի ուսումնասիրությունը գտնվում է դեռևս նախնական վիճակում: Անիի նյութերի հիման վրա առաջին փորձերը արվել են Ն.Մառի և Հ.Օրբելու կողմից[12]: Անիից գտնված կշռաքարերի չափերի և անունների ստույգ հիմնավորումը տվել է Ռ.Վարդանյանը[13]: Կատարվել են նաև Դվինի նյութերի նախնական դիտարկումներ[14]:

Դվինից գտնված վաղմիջնադարյան կշռաքարերը ապակուց են և բրոնզից: Գտնված ապակե կշռաքարերը երեքն են (4.52, 4.42, 4.40 գրամ մեծություններով), բրոնզե կշռաքարերը՝ չորսը (8.8, 8.8, 49.86, 640.6 գրամ մեծություններով): Բոլոր կշռաքարերն ունեն մակագրություններ: Բացի այդ, գտնվել են մոզայիկ ապակուց և քարից բրգաձև առարկաներ (գծապատկեր 1), որոնք ենթադրվում են կշռաքարեր և իրենց



Գծապատկեր 1

կշիռներով համապատասխանում են բյուզանդական դրամակշռային միավորներին:

Ապակե կշռաքարերի նմուշները տարբեր գույնի սկավառակներ են, մեկ երեսին արված խաչազարդով: Վերջինիս թևերից մեկի ծայրին նշված են N (երկու օրինակում) և Σ (մեկ օրինակում) տառերը, որոնք Նոմիսմա-Էքսագիոնի համարժեք միավորների առաջին տառերն են, և նմուշների կշիռներն էլ համապատասխանում են բյուզանդական ոսկե դրամի կշռին (գծապատկեր 2): Փաստորեն դրանք էտալոններ են, որոնք կիրառվել են ոսկե դրամի կշիռը ստուգելու համար:



Գծապատկեր 2

Նույն նպատակի համար են օգտագործվել նաև բրոնզե կշռաքարերը: Դրանցից երկուսն ունեն երկու նոմիսմա քաշ (8.8 գրամ) և համապատասխան մակագրություն: Կշռաքարերից մեկը սկավառակաձև է, մյուսը՝ քառանկյուն, և երկուսն էլ կրում են խաչազարդեր: Հաջորդ բրոնզե կշռաքարը (գծապատկեր 3) սկավառակաձև է (մոտ 3.5 սմ տրամագծով և 1 սմ հաստությամբ), իր վրա կրում է թռչնազարդեր՝ կտուցից կախված օձերով և մակագրությամբ՝ 12 նոմիսմա (49.86 գրամ): Կշռաքարը գտնվել է Դվինի միջնաբերդում բացված ոսկերիչի VI դ. արհեստանոցում: Նույն արհեստանոցից են գտնվել նաև վերոհիշյալ ապակե նմուշներից մեկը և 3 բրգաձև առարկաները մոզայիկ ապակուց (կշիռները՝ 14.75, 19.49, 23.49 գրամ): Ոսկերչական արհեստանոցում բյուզանդական կշռաքարերի նմուշների առկայությունը կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով: Անտարակույս է, որ ոսկու ձուլակտորների ձեռքբերման և պատրաստի ապրանքների վաճառքի ժամանակ օգտագործվել է նոմիսմա-էքսագիոն կշռաչափը, այսինքն՝ բյուզանդական կշռային միավորը: Հետաքրքիր է, որ նույն արհեստանոցում գտնված ոսկու մի ձուլակտորի կշիռը 8.40 գրամ է, այսինքն՝ մոտավորապես երկու նոմիսմա:

Կշռաքարի առկայությունը ոսկերչական արհեստանոցում մեզ հուշում է այն միտքը, որ այստեղ զբաղվել են նաև դրամափոխանակությամբ:

Բյուզանդիայում արծաթագործների կորպորացիաները (գուցե՝ համքարությունները) իրավունք ունեին վաճառել ոսկի, արծաթ և թանկարժեք քարեր (ի միջի այլոց, արհեստանոցում գտնվել են կիսամշակ կնքաքարեր): Նրանց արգելվում էր կատարել պղնձե արտադրանքի և վուշե գործվածքի վաճառք: Բուն հունական "ἀργυροπράτης" տերմինը երկու նշանակություն ուներ՝ ոսկե և արծաթե իրեր պատրաստող վարպետ, ոսկերիչ կամ դրամափոխ[15]: Շատ հնարավոր է, որ Դվինի այս արհեստանոցում (գուցե և քաղաքում) դրամափոխները միավորել էին իրենց մասնագիտությունը ոսկերչի կամ ոսկե իրեր վաճառողի մասնագիտության հետ: Այս նույն երևույթը նկատվում է Մցխեթայում՝ V-VII դդ. դամբարաններից մեկում գտնված նյութերում[16]: Որպես կանոն, դրամափոխները ստուգում էին դրամի կշիռը և իսկությունը:

Բյուզանդական սոլիդի կշիռը Անանիա Շիրակացու ժամանակ եղել է 4.53 գրամից քիչ ավելի[17]: Ապակե կշռաչափը, որը գտնվել է արհեստանոցում, 4.52 գրամ է, այսինքն՝ եթե կիրառենք մաթեմատիկական վիճակագրությունում օգտագործվող 95


տոկոսանոց հուսալիության սահմանը[18], նմուշի կշիռը համապատասխանում է բյուզանդական սոլիդի կշռին:

Ոսկե դրամի հուսալիությունը ստուգելը կշռի տեսակետից, ըստ երևույթին, պարտադիր էր, հակառակ դեպքում աղբյուրներում տեղ չէին գտնի այնպիսի վկայություններ, ինչպես «Դահեկանն մի ոսկի է, որոյ կշիռ յամենայն ազինս միևնոյն է, և թէ ուրեք գտանիցի պակաս, արտաքոյ բանակին ոսկւոյ է, զոր և գաղտնի անուղղայք արարել են»[19]: Մխիթար Գոշի Դատաստանագրքում, չնայած ուշ աղբյուր է, կա հողված. «Իսկ դահեկանահատիցն եւ դրամակոփիցն զծեռսն հատանել հրամանաւ իշխանաց»[20]:

Դվինից պատահական գտնվել է մի կշռաքար, որի վրա կան Λ և B մակագրությունները (գծապատկեր 4): Իր կշռով այն համապատասխանում է երկու լիտր միավորի, որը 640 գրամից քիչ ավելի է (այսինքն՝ մեկ լիտրը՝ 320 գրամ): Սա նույնպես բյուզանդական կշռի միավոր է, որը բազմիցս հիշատակվում է Անանիա Շիրակացու և նրա հաջորդների կողմից: Լիտրը հավասար էր 72 դահեկանի (ըստ աղբյուրների) և, ըստ երևույթին, նույնպես կապ ուներ ոսկու հետ:



Գծապատկեր 3



Գծապատկեր 4

Այսպիսով, հնագիտական նյութերը, հատկապես դրամակշռային միավորների նմուշները, մեծ չափով օգնում են բացահայտելու դրամակշռային համակարգի առանձին միավորների մեծությունները, վկայված նաև հայ մատենագրության մեջ, որը հետաքրքրություն է ներկայացնում սոցիալ-տնտեսական հարաբերությունների և մշակույթի պատմության համար:

Ծանոթագրություններ

1 Հայաստանի միջնադարյան դրամակշռային համակարգն ուսումնասիրվել է Հ.Ավգերյանի, Ք.Պատկանյանի, Հ.Մանանդյանի, Ա.Աբրահամյանի և այլոց կողմից: Մասնավորապես, այս խնդրի շուրջ, աղբյուրների լայն ընդգրկմամբ, շահեկան աշխատանք է կատարել Ռ.Վարդանյանը (տե՛ս Ռ.Վարդանյան, Հայաստանի չափերն ու կշիռները (V-XV դարեր), Երևան, 1989):

2 Անանիայի Շիրակայեցւոյ Համառոտի Յաղագս կշռոյ, կշռոց եւ կշռողաց, «Անանիա Շիրակացու մատենագրությունը», աշխ. Ա.Աբրահամյանի, Երևան, 1944, էջ 255:

3 Տե՛ս Ռ.Վարդանյան, նշվ. աշխ., էջ 251:

4 Տե՛ս А.Мец, Мусульманский ренессанс, М.- Л., 1973, с. 376.

5 Տե՛ս Т.Герасимов, Ранновизантийски экзагии от България, "Археология", 1973, 2, с. 54-58; М.М. Ивашенко, Находка византийского экзагия в Грузии, "Короткие сообщения Института истории материальной культуры", XIX, 1948, с. 43-45; **O.Wulff**, Altchristliche und Mittelalterliche byzantinische und italienische Bildwerke, Berlin, 1909, SS. 193-194 և այլն:

6 Տե՛ս Я.Манандян, О торговле и городах Армении, Ереван, 1954, с. 108.

7 Տե՛ս Հ.Մանանդյան, Երկեր, Դ, Երևան, 1981, էջ 354:

8 Տե՛ս А.Калантарян, Раннесредневековые буллы Двина, Ереван, 1982.

9 Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 5. Բյուզանդական աղբյուրներ I, Պրոկոպիոս Կեսարացի, Պատերազմների մասին, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագր. Հ.Քարթիլյանի, Երևան, 1967, էջ 142:

10 Տե՛ս Խ.Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երևան, 1983, էջ 114:

11 Տե՛ս Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 254-256:

12 Տե՛ս Н.Я.Марр, Реестр предметов древности из VI (1907) археологической компании в Ани, СПб, 1908; И.Орбели, Каталог Анийского музея древностей, СПб, 1913, с. 246-247.

13 Տե՛ս Ռ.Վարդանյան, նշվ. աշխ., էջ 158-169:

14 Տե՛ս Ռ.Վարդանյան, Ա.Քալանթարյան, Վաղ բյուզանդական դրամակշռային միավորների նմուշներ Դվինի պեղումներից, «ՀՍՍՀ-ում 1981-1982 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված նստաշրջանի թեզեր», Երևան, 1983, էջ 38-39: Ռ.Վարդանյան, նշվ. աշխ., էջ 138-140:

15 Տե՛ս Ф.Успенский, История Византийской Империи, т.1, СПб, 1913, с. 246-247.

16 Տե՛ս М М.Ивашенко, ук. соч., с. 44:

17 Տե՛ս Հ.Մանանդյան, Երկեր, Դ, էջ 127:

18 Տե՛ս Ռ.Վարդանյան, նշվ. աշխ., էջ 139:

19 Տե՛ս անդ, էջ 251:

20 Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխ. Խ.Թորոսյանի, Երևան, 1975, էջ 148:

Գրիգոր Գրիգորյան

ՍՅՈՒՆԻՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
(X-XII դարեր)

Միջնադարյան Հայաստանի քաղաքական կազմավորումների պատմության մեջ առանձնակի տեղ է գբաղեցնում Սյունիքի ավատական թագավորությունը, որի հանդես գալու համար X դ. կեսին ստեղծվել էին մի շարք նախադրյալներ, որոնցից հիշատակելի են՝

1. Միջավատական հարաբերությունների հստակեցման մղումով առաջացած սուր ճգնաժամը,
2. Հզոր իշխանական տոհմերի մրցապայքարը գերագահության համար, տաբաժքային հավակնությունները,
3. Բագրատունյաց թագավորության ժամանակավոր թուլացումը,
4. Արտաքին ուժերի խանգարիչ գործոնը (միջամտությունը):

Ընդամենը 21 տարի էր անցել Հայկական պետականության վերականգնման ժամանակից (885 թ.), երբ Հայոց աշխարհի բնիկ տերերը սիրո և միասնության նշանաբանով ժամանել էին Տաթև՝ ուրախությամբ նշելու Սյունյաց եպիսկոպոսական աթոռի մայր տաճարի նավակատիքը: 906 թ. տոնախմբությանը մասնակցում էին Հայոց թագավոր Սմբատ Ա Բագրատունին, պատմիչ-կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին, Սյունիքի, Աղվանքի, Վասպուրականի իշխաններն ու գահակալները...

Սակայն չէր անցել նույնիսկ երկու տարի, երբ, արտաքին ուժերի սադրանքով և դրդմամբ, Գագիկ Արծրունին 908 թ., արաբական ոստիկան Յուսուֆի աջակցությամբ, իրեն հռչակեց Հայաստանի թագավոր՝ առաջին սեպը խրելով հայոց միասնության մեջ: Պատճառը Նախիջևանն էր, որ Սմբատ Ա Բագրատունին վերցրեց Վասպուրականից և տվեց Սյունյաց գահերեց իշխանին:

Սա, թերևս, առաջին լուրջ սխալն էր, որ թույլ տրվեց Բագրատունիների կողմից և, փաստորեն, առիթ հանդիսացավ քաղաքական երկպառակության համար:

Առանձին թագավոր ունենալու խմորումներ առաջացան նաև Սյունիքում, որի հզոր տերերից Վասակ Գաբուռը ամուսնացած էր Բագրատունյաց արքայադուստր Մարիամի հետ: Սյունյաց բարձրաստիճան հոգևորականությունը և, հատկապես, Վահան եպիսկոպոս (հետագայում՝ կաթողիկոս) Ջևանշերյանը՝ Բաղքի գահակալ Չագիկի թոռը, նպաստեց այդ գաղափարի իրականացմանը: Եվ ահա, 970 թ. (այլ ուսումնասիրողների կարծիքով՝ 987 թ.) Սյունյաց գահերեց իշխան Աշոտի թոռը՝ Սահակի որդի Սմբատը, նույնպես արտաքին ուժերի թելադրանքով, իրեն հռչակեց Սյունիքի թագավոր:

Պատմիչ Ստեփաննոս Օրբելյանը ցանկանում է արդարացնել Սյունյաց թագավորության առաջացումը պատմական բատերաբեմում, թեև չէր կասկածում, որ ինչպես Սյունիքի, այնպես էլ Աղվանքի (Փառիսոսի), Տաշիր-Չորագետի (Կյուրիկյանների), Կարսի (Վանանդ-Բասենի) և այլ փոքրիկ թագավորությունների հանդես գալը խարխլում և բզկտում էր Հայաստանի միասնական պետության քաղաքական և տնտեսական հիմքերը, ինչին ձգտում էին օտար իշխանավորները, տվյալ դեպքում՝ Արաբական խալիֆայությունը: Մինչ այդ էլ արաբական կուսակալ Ափշինը ամեն կերպ գրգռում էր Վասակ իշխանին «թագ կապել» Սյունյաց աշխարհում, սակայն, ինչպես նույն պատմիչն է վկայում, այս հեռատես իշխանը «ոչ կամեցաւ ապստամբական անուն ժառանգել» և կտրականապես մերժեց նրան:

Սյունիքում առանձին թագավորություն ստեղծելու փաստը Ստեփաննոս Օրբելյանը հիմնավորում է Բագրատունյաց տան ազդեցության ոլորտների նվազմամբ, ինչպես նաև նահանգի հեռավորությամբ, քանզի Բագրատունիներն իշխում էին Շիրակում, Այրարատում, Գեղարքունիքում, Կարինում, մինչև Չորագետ, և Սյունիքը կտրված էր Բագրատունիներից: Հեռավորության այս վարկածը տրամաբանական չէ և անընդունելի է: Երկրորդ վարկածը բխում է տոհմական փառասիրությունից և ուղղված է Բագրատունիների՝ իբրև երկրի սյուզերենների ոչ հայկական ծագում ունենալու, սակայն իշխելու իրավական կարգավիճակի հիմնավորվածության խնդրին: Այդ ինչու՞, գրում է Սյունյաց պատմագիրը, Հրաչեի կողմից գերեվարված Բագրատունիների ժառանգներից կարող են օծվել Հայոց թագավորներ, իսկ Սյունյաց աշխարհից՝ ոչ: Չէ՞ որ «ի Հայկայ երեսի հարազատութեամբ որդիք գնարս փոխանակելով և տէրութեամբ եկեալ հասեալ էին մինչև ցայժմ»[1] և «երբէք ոչ ընդրուստացան ի հայրենի տէրութեանցն»[2]:

Սյունիքի թագավորությունը պատմագիտական գրականության մեջ կոչվում է նաև Բաղաց կամ Կապանի: Նրա առաջին գահակալը՝ Սմբատ Սահակյանը, վախճանվեց 998 թ. և ամփոփվեց Տաթևի վանքում: Գահը ժառանգեց նրա որդի Վասակը (998-1040), որը «ազատակոյտ բազմութեամբ» օծվեց Գրիգոր եպիսկոպոսի ձեռքով: Կրտսեր եղբայր Սևադան դարձավ իշխանաց իշխան: Վասակ Սյունյաց թագավորի դուստրը՝ Կատրանիդեն, որին ժամանակագիր Մատթեոս Ուռհայեցին սխալմամբ կոչում է վրաց թագավոր Գեորգիի դուստր[3], ամուսնացած էր Գագիկ I Բագրատունի թագավորի հետ (989-1020) և իր մոր՝ Շահանդուխտի նման զբաղված էր լայն շինարարական գործունեությամբ՝ շարունակելով կառուցել Անիի մայր տաճարը: Վասակ թագավորի խնդրանքով և Կատրանիդեի միջամտությամբ վերականգնվում է Սյունյաց մետրոպոլիտությունը, որը շնորհված էր նահանգի հոգևոր առաջնորդներին դեռևս IV դ. Ներսես Մեծի կողմից և վերացվել էր Անանիա կաթողիկոսի կոնդակով X դ. 60-ական թթ.:

Պատմական որոշակի արժեք է ներկայացնում Սարգիս Սևանցի կաթողիկոսի՝ Սյունիքի հոգևոր թեմին ենթակա գավառների մասին 1006 թ. շրջաբերական նամակը՝ ուղղված Վասակ թագավորին և Սյունյաց Սևադա ու Աշոտ իշխաններին: Ի թիվս այլ գավառների՝ նահանգի մետրոպոլիտի ենթակայության են անցնում Նախիջևանը, Ագուլիսը, Որդվատը (Օրդուբադը), Երնջակը, Ճահուկը և այլ բնակավայրեր[4]:

Մեզ են հասել Վասակ թագավորի մի շարք հրամանագրերն ու կալվածագրերը, որոնք սկսվում են ընդհանուր բանաձևային կաղապարներով[5]: Հրամանագրերը ստորագրում և վավերացնում էր անձամբ թագավորը. «Գրեցաք և կնքեցաք մերով արքունական հրամանաւ և մատանեաւ»[6]:

Վասակ թագավորն իր քրոջն ամուսնացրել էր իշխանաց իշխան Աշոտի (Աշոտիկի) հետ, որը երկրորդ դեմքն էր Սյունյաց թագավորությունում: Այս մասին հիշատակված է 1019 թ. կալվածագրերից մեկում[7]. «Ես՝ Սմբատ իշխան, վկայ եմ իմ քեռոյս՝ աստուածապսակ թագաւորիս հրամանացս»: Նույն կերպ է ստորագրել իբրև վկա հանդես եկող Գրիգորը՝ Սյունիքի ապագա թագակիրը[8]:

Վասակ թագավորը գահակալեց ավելի քան 40 տարի: Նա վախճանվեց և թաղվեց Տաթևի վանքում «ընդ հօր իւրում Սմբատայ»[9]:

Վասակն արու զավակ չուներ, և Սյունյաց տերերը որոշեցին գահին բազմեցնել իշխանաց իշխան Աշոտի (Աշոտիկի) ավագ որդի Սմբատին (1040-1051), իսկ կրտսեր եղբայրը հոր փոխարեն հռչակվեց «իշխան իշխանաց Սիսական աշխարհիս»[10]: Սմբատը որքան «քաղցր և հեզահամբոյր» էր յուրայինների հանդեպ, նույնքան «էր ահարկու յամենայն շրջակայ ազգսն»[11]:

Մատթեոս Ուռհայեցին գրում է, թե ինչպես Դվինի Աբուլսուար (Աբուլ-Ասվար) Շեդադյան ամիրան, ցանկանալով իրեն ենթարկել Դավիթ Ա Անհողինին (989-1048), 150 հազար զորքով ներխուժեց Լոռի: Դավիթը օգնության դիմեց Անիի Հովհաննես-Սմբատ թագավորին, վերջինս էլ խնդրեց Կապանի թագավորին, որը Լոռի եկավ իր 2000-անոց այրուձիով[12]: Կապանի թագավորը Սմբատ Բ Սյունյաց թագավորն էր: 11 տարի (և ոչ՝ 4, ինչպես նշված է ուսումնասիրողների մոտ) թագավորելուց հետո Սմբատը վախճանվեց Կապան մայրաքաղաքում և թաղվեց Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահում: Մեր կողմից հայտնաբերված նրա տապանաքարին փորագրված է. «ՍՄՊԱՏ ԹԱԳԱՒՈՐ, Թ[ՈՒԱԿԱՆԻՆ]. Շ (1051)»[13]:

Սյունյաց գահին բազմում է նրա եղբայր Գրիգորը, քանզի Սմբատը ժառանգ չուներ: Այս երկու եղբայրներն իրենց հոր անունով կոչվում են «աւագ Աշոտեանք»[14]: Գրիգոր Ա Սյունյաց թագավորն ամուսնացած էր Արցախի ականավոր իշխան Սահակ-Սևադա Բ-ի դստեր՝ Շահանդուխտի հետ (Շահանդուխտ Բ Սյունյաց թագուհի, մահ. 1116 թ.): Նրանք նույնպես ժառանգ չունեին, և այդ փաստն արձանագրված է Վահանավանքի Ս.Աստվածածին կրկնահարկ եկեղեցու 1086 թ. վիմական բնագրում, ուր, մասնավորապես, կարդում ենք. «Փ :ՇԼԵ: (1086) ԹՎԱԿԱՆԻՍ ԵՍ՝ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ՝ ԴՈՒՍՏՐ ՍԵՒԱԴԱՒ ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐԻ՝ ՈՐԴՈ ԱՇՈՏԿԱ, ՎԱՍՆ ՈՉ ԳՈԼՈ ՄԵՐ Ի ՄԻԱՍԻՆ ԺԱՌԱՆԳ (Ը)ՍՏ ՍԱՐՄՆՈ...»[15]:

Սմբատ Բ և Գրիգոր Ա թագավոր եղբայրները զբաղվել են լայն շինարարական աշխատանքներով: Աջակցել և «ամենայն պիտոյիւք» օգնել են Տաթևի վանքի[16], Վահանավանքի, Բղենո Նորավանքի և այլ հոգևոր-կրթական կենտրոնների վերանորոգման աշխատանքներին: Երկու եղբայրների անվան հիշատակությամբ Վահանավանքում հայտնաբերվել է հետևյալ արձանագրությունը, որն, անշուշտ, ունի պատմագիտական կարևոր արժեք. «ՓՎ.: ՆԳԵ: (1046). ՈՂՈՐՄԵԱ ՔՍ ԱՇ ՍՄՊԱՏՍՏԱ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ԻՒՐ ԵՂԲԱՒՐՆ ԳՐԻԳՈՐՈ, ՇԻՆՈՂԻ ՍՐԲՈ ԵԿԵՂԵՑՈՅՍ, ՍՐԱՀԻՍ ԵՒ ԺԱՍՏԱՆՆ: ՈՐՔ ՄՏԱՆԷՔ ՅԱՐԿՍ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՁՍՈՑԱ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ»[17]:

21 տարի (և ոչ՝ 40, ինչպես ընդունված է պատմագիտական գրականության մեջ) թագավորելուց հետո Գրիգոր Ա-ն մահանում է և թաղվում Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահում: Նրա տապանաքարն ունի հետևյալ մակագրությունը. «ԹՈՒԱԿԱՆ: ՇԻԱ: (1072) . ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐ, ՈՐԴԻ ԱՇՈՏԿԱ»[18]:

Ուրեմն, վերջնականապես ճշտվում է Սյունյաց այս թագավորի գահակալության տարիների թիվը, այն է՝ 1051-1072 թթ.: Գրիգոր Ա-ի մահվանից հետո, Սյունյաց ազնվականության միահամուռ որոշմամբ, գահին է բազմում Գրիգորի կնոջ՝ Շահանդուխտ թագուհու կրտսեր եղբայր Սեներերիմը, որը, պատմիչի վկայությամբ, եղել է «յոյժ գեղեցիկ տեսլեամբ եւ առոյգ հասակաւ՝ հանճարեղ եւ իմաստուն» պատանի[19]: Նա բարեկամական հարաբերություններ է հաստատում սելջուկյան սուլթան Մելիք-Շահի (1072-1092) հետ, ձգտելով հետ վերադարձնել սելջուկ-թուրքերի բռնագրաված Սյունյաց գավառները: «Յոլով գաւառս շորթեալ հանին ի Սիսական աշխարհէս՝ ի ձեռաց բնիկ տերացն», – գրում է Ստեփանոս Օրբելյանը[20]: Եվ պատահական չէ, որ, օգտվելով Մելիք-Շահի բարյացակամ վերաբերմունքից, այս դիվանագետ թագավորը,

երբեմն դիմելով նաև սրի՝ «ընդարձակեաց զամենայն սահմանս տէրութեան իւրոյ և բազում ամօք վարեաց զթագաւորութիւնն եւ խաղաղական կենօք մինչև ի մահ Մելիք սուլթանին, որ մեռաւ ի 541 (1092) թուականին»[21]: Իր հրամանագրերից մեկում Սենեքերիմը գրում է. «Աստուած անյիշաչար եղեւ առ իս եւ ողորմեցաւ ինձ եւ կրկին հաստատեաց ի յիս զիայրենի տէրութիւն իշխանութեան իմոյ, որ խախտեալ էր ի ձեռն Իսմայէլականացն»[22]: Նա հաղթական պատերազմներ է մղել Սյունիքի Կովսական գավառ (այժմյան Զանգելանի շրջան) ներխուժած Փատլուն ամիրայի դեմ[23]:

Մատենագրական աղբյուրների համաձայն՝ Սենեքերիմն ուներ երեք ուստր (Գրիգոր, Սմբատ, Սևադա) և մեկ դուստր: Սակայն Վահանավանքի պեղումների ժամանակ հայտնաբերվեց մի տապանագիր, որը վկայում է Սենեքերիմի՝ 4-րդ արու զավակն ունենալու փաստը. «ՉԿԻՐԿԷ, ՈՐԴԻ ՍԵՆԻՔԱՐԵՄ ԹԱԳԱՒՈՐԻ ԿԻՍԱՐԵԱ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՅԱՂԱԹՍ ՅԻՇԵՑԷՔ. Թ. ՇՃԸ (1099)»[24]:

Սենեքերիմի մայրը՝ Սոփիան, արձանագրություններում կոչված է «Աղվանից թագուհի»: Գտնվեց նաև նրա տապանաքարը՝ հետևյալ արձանագրությամբ. «ՍՈՓԻ՝ ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳՈՒՀԻ, ՋՈՔԸՆՉ ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐԻ՝ ՈՐԴՈ ԱՇՈՏԿԱ, ՍԱՅՐ ՇԱՀԱՆԴԱԽՏՈ. Թ. ՇԼ (1081)»[25]: Նույն 1081 թ., նրա զավակներ Շահանդուխտ թագուհին, Սենեքերիմը և «սրբասնունդ օրիորդ» Կատան գեղաքանդակ խաչքար են կանգնեցրել Վահանավանքի մեծ տաճարի արևելյան սարալանջին[26]:

Սելջուկ-թուրքերը Մելիք-Շահի մահվանից հետո ամեն կերպ ցանկանում էին վերացնել Սյունիքի թագավորությունը, «զոր խոչ մեծ համարէին ինքեանց»: Այս կապակցությամբ հարկ ենք համարում համառոտակի խոսել Սյունյաց թագավորների քաղաքական կողմնորոշման մասին: Ի տարբերություն Վասպուրականի իշխանավորների, որոնք քրիստոնյա Բյուզանդիայի աջակցությամբ փաստորեն կործանեցին իրենց երկիրը՝ վոխանակելով այն Կեսարիայի հետ, Սյունիքի տերերը, իրենց հեռատես և հմուտ դիվանագիտական քայլերի շնորհիվ, մտերմիկ հարաբերություններ հաստատեցին սելջուկ սուլթանների հետ և պահպանեցին Սյունյաց աշխարհը ավերիչ ասպատակություններից: Այս տեսանկյունից հատկապես առանձնանում է Սյունյաց արքա Սենեքերիմը, որն ազատ ելումուտ ուներ սուլթան Մելիք-Շահի արքունիքում: Եվ պատահական չէ, որ, այս բոնակալի հովանավորությունն օգտագործելով, 1086 թ. նա դուրս վռնդեց Սյունիքի Կովսական գավառ ներխուժած սելջուկ-թուրքական ավազակախմբերին: Ուրեմն, իբրև սկզբունք, Սենեքերիմը չի ղեկավարվել կրոնական-դավանական առաջնայնության գաղափարով: Ընդհակառակը, օտար ներխուժումից երկիրը փրկելու համար նա համագործակցել է օտար հզորի հետ՝ մյուս օտարին ոչնչացնելու նպատակով: Այս նուրբ, ճկուն և հեռատես քաղաքականությունը հետագայում որդեգրեցին հատկապես Օրբելյան և Պռոշյան իշխանները, երբ մոնղոլների աշխարհավեր արշավանքներից հետո, հարաբերական կայունությունն օգտագործելով, ստեղծեցին Սյունյաց լեռնաշխարհի խոշորագույն ուսումնագիտական օջախը՝ Գլաձորի համալսարանը: Ուրեմն, քաղաքական իրադրության ճիշտ ընկալումից էին բխում Սենեքերիմի դիվանագիտական քայլերը:

Իրադրությունը Սյունիքում կտրուկ փոխվեց Մելիք-Շահի մահվանից հետո:

1094 (կամ 1096) թ. խաղաղության դաշն կնքելու պատրվակով, միջնորդ ունենալով Շիրակի Գրիգոր Ապիրատ իշխանին, Ելտկուզ ամիրան ժամանում է Կապան, որտեղ՝ Բաղաբերդ ամրոցում, ճակատամարտի էր պատրաստվում Սենեքերիմ արքան: Բանակցությունների ժամանակ «չարաթոյն գազան» Գանձակի տիրակալը «ստեաց ուխտին, և յարձակեալ մոմռանօք ի վերայ՝ եսպան զթագաւորն» Սենեքերիմ: «Այսպէս շիջաւ ճրագն քրիստոնէից, որ կայր մնացեալ յամուրսն Բաղաց», – գրում է

պատմիչը[27]: Սեներերիմը նույնպես թաղվեց Վահանավանքի արքունական դամբարանատանը՝ «ի շիրմի ընդ այլ թագաւորսն»[28]:

Մեզ են հասել Սենեքերիմ Սյունյաց թագավորի մի շարք հրամանագրերը: Դրանցից մեկն սկսվում է այսպես. «Կամաւ կարող հզօրին Յիսուսի՝ ես՝ Սենեքերիմ թագաւոր Հայոց, կացեալ ի Սիսական և Բաղաց աշխարհիս»[29]: Սենեքերիմին հաջորդում է նրա որդի Գրիգորը (Գրիգոր Բ) «ընդ աղօտ թագաւորեալ»:

1103 թ. սելջուկ-թուրքերը Մելիք-Շահի երբեմնի մատռվակ Չորթմանի գլխավորությամբ ներխուժեցին Բաղք գավառ: Նրանց հիմնական նպատակն էր գրավել Սյունյաց մայրաքաղաք Կապանը[30], ոչնչացնել զինական ուժը և վերջնականապես լուծել «Սյունյաց խոչընդոտի» հարցը: Չորթմանի հրոսակները կոտորածն սկսում են Ջհստաթաղ կոչված արվարձանից: Թշնամուն չի հաջողվում գրավել արքայանիստ Բաղաբերդ ամրոցը, և թալանած հարուստ ավարով հեռանում է քաղաքից: Սելջուկյան գահին բազմած Բարկիարուխը՝ Մելիք-Շահի որդին, ի վիճակի չէր սանձահարել իր արյունռուշտ ցեղակիցներին, գուցե և ինքն էր նրանց հորդորում Սպահանի իր արքունական պալատից: Սյունիքի 43 ամրոցներն ու 1400 (1008) բնակավայրերը հեշտությամբ չէին կարող նվաճվել, ուստի Բաղք-Չորքը թողած՝ նրանք հարձակման պաքն ուղղեցին Որոտն և Բղենո գավառների ուղղությամբ: Կատաղի մարտերը տևեցին մեկ տարի: 1104 թ. նրանք ներխուժեցին Որոտան և Բղենո գավառ, գերեվարեցին Խոսրովիկ իշխանին, սակայն չկարողացան առաջանալ: Սյունիքն ազատ շունչ քաշեց ևս 22 տարի: 1126 թ. Հարոն ամիրան գրավեց Արևիք գավառը՝ Մեղրին, 1152 թ. թուրքերին հաջողվեց նվաճել Շևորուտի բերդը, իսկ հինգ տարի հետո՝ 1157 թ. ընկավ Մեղրու բերդը:

1170 թ. մատենությամբ գրավվեց Սյունյաց նահանգի «ժույս և ապավեն» Բաղաբերդ ամրոցը: Հրկիզվեցին և ոչնչացվեցին այստեղ ամբարված ավելի քան 10000 ձեռագիր մատյաններ ու սրբություններ, կողոպտվեցին արքունական գանձերը: Բաղաբերդի անկումը պատմիչը համեմատում է Նաբուգոդոնոսոր արքայի կողմից Երուսաղեմը կործանելու հետ:

Սյունյաց Գրիգոր Բ թագավորը, որ իր միակ դստերը՝ Կատային, կնության էր տվել Խաչենցի իշխանազգի Հասան Գեռաքարեցուն, իր եղբայր Սմբատի հետ մահացել էր դեռևս 1166 թ., Սյունյաց գահաժառանգ էր հռչակել իր փեսային՝ Հասանին: Վերջինիս ոչինչ չէր մնում անելու, քան կնոջն առած հեռանալ Արցախ:

Սյունիքի վերջին թագավորների մասին հատուկ հիշատակում է Ստեփանոս Օրբելյանն իր «Ողբ եւ՝ Հառաչանք ի դիմաց Կաթուղիկէին» քնարական-պատմողական պոեմում, որը գրված է 1300 թ.: Այստեղ, մասնավորապես, կարդում ենք.

«...Որոց (համ՝ Սյունիքի թագավորության) վերջին Սենէքարիմ
Նաև Գրիգոր որդի նորին:
Ապա և զայս ի բաց բարձին
Ի ժամանակս Ելտկուզին
Ազգն անիծեալ և պարսկային,
Որք հրով զաշխարհս տոչորեցին՝
Ի վեց հարիւր մեր թուականին
Եւ տասնևհինգ յաւելուածին...»[31]:

Այսպիսով, պատմության ասպարեզից վերացավ Հայաստանի վերջին քաղաքական կազմավորումը (բուն Հայաստանում)՝ Սյունյաց թագավորությունը, որը համառորեն գոյատևեց 200 տարի շարունակ:

Վիմագրական և մատենագրական սկզբնաղբյուրների համադրությամբ՝ այսօր, թերևս, կարելի է կազմել Սյունյաց գահացանկը՝ թագավորների գահակալության տարիներով հաջորդած.

1. Սմբատ Ա՝ որդի Սահակի – 970 (987)-998[32]
2. Վասակ՝ որդի Սմբատի – 980-1040
3. Սմբատ Բ՝ որդի Աշոտի – 040-1051
4. Գրիգոր Ա՝ որդի Աշոտի – 1051-1072
5. Սենեքերիմ՝ որդի Սևադայի – 1072-1094 (1096?)
6. Գրիգոր Բ՝ որդի Սենեքերիմի – 1096 (?) -1166
7. Հասան Խաչենցի – 1166-1170[33]:

Ամփոփենք:

1. Սյունիքի, ինչպես նաև այլ ավատական փոքրիկ թագավորությունների հանդես գալը պատմականորեն չի արդարացվում, քանզի այդ կազմավորումները պառակտում, տարանջատում և ի վերջո կործանում էին միասնական պետության քաղաքական հիմքերը և թուլացնում նրա տնտեսական և պաշտպանական համակարգերը:

2. Հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջանների ծալքերն ուսումնասիրելիս ամենուր երևում է արտաքին ուժի ոչ միայն ռազմական, այլև դիվանագիտական միջամտության քայքայիչ ազդեցությունը:

3. Սյունիքը, լինելով Հայաստանի խոշոր և, ռազմական կարողության տեսակետից՝ հզոր նահանգներից մեկը, վաղնջական ժամանակներից ցայսօր մնում է մեր ժողովրդի հյուսիս-արևելյան (ցավոք, այժմ հարավային) սահմանների հուսալի պատվարն ու պահապանը:

Ծանոթագրություններ

1 **Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի** Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մ.Էմին, Մոսկվա,1861, էջ 220:
2 Անդ, էջ 219:
3 Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 6:
4 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 220:
5 Տե՛ս անդ, էջ 224:
6 Անդ:
7 Անդ:
8 Տե՛ս անդ, էջ 233:
9 Անդ:
10 Անդ:
11 Անդ:
12 Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 54:
13 Գ.Գրիգորյան, Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, «Պատմա-բանասիրական հանդես» (ՊԲՀ), 1980, 2, էջ 159:
14 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 233:
15 Դիվան հայ վիմագրության, II, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 138: Ի դեպ նշենք, որ նախորդ ընթերցողներն այստեղ կարդացել են ԿԱՎԱՍՆ իշխանազունի անունը, որպիսին իրականում գոյություն չունի. անճանունն առաջացել է կապակցության սխալ բառանջատման պատճառով, ուստի և մտել Հ.Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի» մեջ: Իրականում գրված է ...ԱՇՈՏԿԱ ՎԱՍՆ...:
16 Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 230:
17 Գ.Գրիգորյան, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1970, 10, էջ 87:
18 Նույնի՝ Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, էջ 164:
19 **Ստեփանոս Օրբելյան**, էջ 233:
20 Անդ, էջ 234:
21 Անդ:
22 Անդ, էջ 241:
23 Տե՛ս անդ, էջ 236-237, 240:

24 Գ.Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 40:
25 Նույնի՝ Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, էջ 162:
26 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, II, էջ 139, տե՛ս նաև՝ Գ.Գրիգորյան, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, էջ 87: Վահանավանքի կրկնահարկ եկեղեցու արևմտյան գավթում է թաղված Աղվանից կաթողիկոս տեր-Ստեփաննոսը, որը Կապան էր եկել «Նեղեալ ի Տաճկաց», հավանաբար XI դ. 70-ական թթ.:
27 Ստեփաննոս Օրբելյան, էջ 235:
28 Աձդ: Տե՛ս նաև Г.Григорян, Очерки истории Сюника, IX-XV вв., Ереван, 1990, с. 58-59, 63.
29 Ստեփաննոս Օրբելյան, էջ 236:
30 Սյունիքի մայրաքաղաք Կապանի ավերակները գտնվում են Կապան – Քաջարան մայրուղու ձախ կողմում, Ողջի (Կապան) գետի աջ ափին, այժմյան պիոներական ճամբարների և Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատի առողջարանի շրջակայքում: Քաղաքը ծածկված է անտառային բուսականությամբ. պահպանվել են ամրոցապատերի հետքերը՝ տեղ-տեղ 2,5 մ բարձրությամբ: Վայրը տեղացիները կոչում են «Տաճոռ լեռ»:
31 Ստեփաննոս Օրպէլեանի Ողբ ի Ս.Կաթուղիկէն, բնագիրը յառաջաբանով և ծանօթութիւններով հրատ. Կ.Կոստանեանց, Թիֆլիս, 1885, էջ 38:
32 Ը.Հարությունյանի կարծիքով, Սմբատ Ա-ն 976-980-ին եղել է գահերեց իշխան, թագավորել է 987-998 թթ. (տե՛ս Ը.Հարությունյան, Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, էջ 145-153):
33 Տե՛ս Գ.Գրիգորյան, Ստեփաննոս Օրբելյան, ՊԲՀ, 1976, 4, էջ 160:

Պավել Չոբանյան

ՀՌՈՄՈՒՄ ԳՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ (XIII դար)

Հայոց պատմության մեջ նշանակալի է գաղթօջախների կատարած դերը, և, ըստ այդմ, նրանց պատմության խոր ուսումնասիրությունը մեծապես նպաստում է հասկանալու նաև հայոց պատմության Հայաստանյան հատվածի ընթացքը:

Գաղթօջախների առաջացումը թեև պայմանավորված էր մայր երկրից կատարվող արտագաղթերով, սակայն ոչ բոլոր արտագաղթերն էին հանգեցնում գաղթօջախների կազմավորման: Յուրաքանչյուր գաղթօջախ կազմավորվում և ձևավորվում էր որոշակի համախմբումով և որոշակի առաքելության որդեգրումով: Հայտնի են առանձին արտագաղթեր, որոնք ընդունող երկրում ունեցել են շատ կարճ ազգային կյանք[1]:

Մինչև XIII դ. առաջին քառորդը, ինչպես բուն Հայաստանը, այնպես էլ Կիլիկյան Հայաստանը գտնվում էին համեմատաբար նպաստավոր պայմաններում. զարգանում էր տնտեսությունը, մշակույթը, կայունանում քաղաքական իրավիճակը: Թագավորության հռչակումը Կիլիկիայում և Զաքարյանների կողմից Հյուսիսային Հայաստանի ազատագրումը որևէ պատճառ չէին թողնում Հայաստանից զանգվածաբար վտարանդվելու կամ արտագաղթի համար:

XIII դ. 20-30-ական թթ., սակայն, հաջորդաբար երկու ահեղ արհավիրքներ կախվեցին Հայաստանի վրա. Ջալալ էդ-Դինի ավերիչ արշավանքը և 1236-1240 թթ. մոնղոլների ներխուժումը ճակատագրական դարձան բուն Հայաստանի համար: Մոնղոլների դաժան ավերածությունները հրահրեցին նոր արտագաղթեր: Իրադարձությունների ականատես Կիրակոս Գանձակեցին հավաստում է, թե «Լցաւ երկիրն ամենայն դիակամբք մեռելոց, և ոչ որ էր, որ թաղէր զնոսա... երկիր թափուր մնաց ի բնակչաց իւրոց, և շրջէին ի նմա որդիք օտարաց»[2]: Այդ վկայության հաստատումն ենք գտնում նաև մի շարք հիշատակարաններում, որոնք գրվել են Հռոմում՝ 1240-1260-ական թթ. ընդօրինակված ձեռագրերի գրիչների ու պատվիրատուների կողմից: Ուշագրավ է, որ գրիչները Արևելյան Հայաստանից են և, մասնավորապես՝ Խաչենից, Գանձակից, Գետիկից և այլ վայրերից, որոնք առաջինը կրեցին մոնղոլների արշավանքների ծանրությունը:

Հայերի այցելություններ Իտալիա և, մասնավորապես՝ Հռոմ եղել են նաև վաղ միջնադարում: X-XII դդ. ավելի են հաճախանում հայ-իտալական կապերը[3]: XIII դարասկզբին Հռոմում արդեն կար թե՛ հայկական եկեղեցի և թե՛ «հանգստարան հայոց»: 1239 թ. Հռոմում գրված հայերեն Ավետարանի հիշատակարանում նշվում է, որ այն կատարվել է «ձեռամբ... Խաչենեցի Վարդան աբեղայիս՝ ի ՈՋԸ (1239) թուականութեան Հայկազեան տումարիս, ի տիեզերական մայրաքաղաքն Հռոմ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի և քրիստոսեան սուրբ պատկերին, զոր Դաստառակ ասի, ի հանգստարանիս Հայոց, ի դրան սրբոյ մաւրս լուսոյ Սանթա Մարէ, ի միոջ *միեղէն եղբայրութեանս, որք վասն սիրոյն Քրիստոսի և սրբոց առաքելոց և վասն*

յուսոյն արքայութեան յանձին ունեն զկամաւոր աղքատութիւն: Որոյ է առաջնորդ տանս և եղբարցս՝ Սարգիս Մարմաշինեցին, զորս յիշեսցէ Քրիստոս Աստուած զամենեսեան, որք կան յայս հանգստեանս, զմեծ և զփոքր, զառաջնորդն և զայլս ամենեսեան, և... ողորմեսցի Քրիստոս Աստուած Վանականին և *իւր սրախողխող ննջեցելոյն, որ ոչ ընկալաւ զնոսա գերեզման»*[4]:

1240 թ. սկզբներին գրիչ Վանականը արձանագրում է. «...գրեցաւ սա ի յակնադիտակ և ի հռչակաւոր մայրաքաղաքս Հռոմ... ի հանգստարանի տանս Հայոց, ի դրան սուրբ Աստուածածնիս... Ողորմեսցի Քրիստոս Աստուած այս կամաւոր աղքատացս, որ կան աստ բազում տառապանաւք՝ արանց և կանանց, առաջնորդի տեղոյս՝ Սարգսի և այլ միեղէն եղբայրութեանս... Նաև գրողի սորա Վանականին և իւր ծնողացն և *նոցա, որ սրով ելին յաշխարհէս»*[5]:

Երրորդ հիշատակարանը, որ մեզ է հասել Հռոմի այդ շրջանի ձեռագրերից, գրվել է 1242 թ., որտեղ Թորոս գրիչը հաղորդում է իր աշխատանքի ավարտի մասին. «ի հայրութեան[6] Ստեփանոսի Ղազարուվանցւոյ, որոյ ողորմեսցի տէր Աստուած... և համաշունչ եղբարց մերոց սուրբ քահանայից՝ Յովհաննիսի, և Վարդանայ, և Խաչատրոյ, և Յովհաննիսի, որ կամաւոր յաժարութեամբ *ընկալան զմեզ*, ողորմեսցի Քրիստոս»[7]:

Հիշատակարանների հաջորդ խումբը 1260-ական թվականներից է և ավելի ընդարձակ տեղեկություններ է հաղորդում ինչպես գրիչների, այնպես էլ նրանց ճանապարհորդությունների մասին: 1262 թ. ընդօրինակված Նոր կտակարանի վերոհիշյալ Թորոս գրիչը հաղորդում է. «Ես նուաստ և անարժան ծառայ Աստուծոյ Թորոս... սպասաւոր բանի յԱրևելից գաւառաւ և քաղաքաւ ի Գանձակայ, սնեալ և վարժեալ ի մեծ մենաստանն Գետիկ, տարբերեալ այսր-անդր, հասի սահասասան ճանապարհաւ... ի մեծս Հռոմ, ուր են ի դամբանի ամոլքն հաւատոյ Պետրոս և Պաւղոս, *զի բերևս ի ձեռն նոցին բարեխաւսութեան ապրեսցուք ի յահագնասարսափ և ի սարսռաշատ աւուրն, և ազատեսցուք ի քարմնելի ամաւթոյն բարեխաւսութեամբ նոցին»*[8]: Այս վկայությունը ենթադրել է տալիս, որ Գետիկից ճանապարհորդությունն ու Հռոմում հայտնվելը թելադրված էր դիվանագիտական նկատառումներով:

Հետևելով XIII դ. 20-30-ական թթ. Այսրկովկասում ստեղծված աշխարհաքաղաքական իրադրությանը և Վրաստանի ու Հռոմի միջև տեղի ունեցած նամակագրությանը[9], կարելի է հանգել այն եզրակացության, որ, իրոք, տրամաբանական ու սպասելի էր բանակցությունների նպատակով պատվիրակության առաքումը Հռոմ:

Չորրորդ խաչակրաց արշավանքի ժամանակ գրավվել էր Կոստանդնուպոլիսը, ստեղծվել Լատինական կայսրությունը (1204-1261), որով հայ-բյուզանդական հարաբերությունները փաստորեն դադարել էին քաղաքական լուրջ հեռանկար խոստանալուց: Ջալալ Էդ-Դինի և ապա մոնղոլների արշավանքի ժամանակ հայ-վրացական զորքերի կրած պարտությունները ակնհայտ էին դարձրել դաշնակիցներ որոնելու անհրաժեշտությունը: Մոնղոլների դեմ դաշնակցելու կամ թե Հռոմից օժանդակություն ստանալու խնդրանքով Հռոմի պապին դիմել էին ոչ միայն Վրաստանից, այլև Իկոնիայից, Ասորիքից, Իրաքից իսմայիլիտները և այլք[10]:

1240 թ. փետրվարի 13-ին Հռոմի Գրիգոր 9-րդ պապը Վրաստանի Ռուսուդան թագուհուն և նրա որդուն՝ Դավիթին ուղղված պատասխան նամակում ողջունում և իր ուրախությունն է հայտնում հանուն քրիստոնեական հավատի նրանց մղած անզիջում պայքարի համար և իր ափսոսանքը՝ թաթարների ներխուժման կապակցությամբ: Այնուհետև նամակում նշվում է. «Ձեր նամակում եղած տեղեկությունը, որ թաթարները՝ կաթոլիկ եկեղեցու բշնամիները, հարձակվել են ձեր թագավորության վրա և ձեզ ծանր վնասներ են հասցրել, նվազեցրեց մեր ուրախությունը և վշտացրեց մեզ»[11]: Նամակի հրատարակիչ Ի.Տաբաղուայի արդարացի նկատումով պարզվում է՝ Ռուսուդան թագուհին և Դավիթ թագավորը օգնություն էին խնդրել պապից իրենց բշնամիների դեմ պայքարի համար[12]: Պապը, սակայն, օգնություն չի խոստանում և արդարանում է նրանով, որ իր ուժերը գբաղված են Իսպանիայում, Ասորիքում և Իտալիայում հերետիկոսների դեմ պայքարով: Նա գովում է կաթոլիկ եկեղեցուն միանալու թագուհու ցանկությունը: Կասկածից վեր է, որ Ռուսուդանի նամակը պապին, որը դեռևս չի հայտնաբերված, պետք է գրված լիներ 1240 թվականից առաջ, ամենայն հավանականությամբ՝ 1239 թ.: Նկատի ունենալով նշված թվականներին հայ-վրացական քաղաքական փոխհարաբերությունների բնույթը, միանգամայն թույլատրելի է մտածել, որ հայազգի գործիչները ոչ միայն լավատեղյակ էին Վրաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումներին, այլև որոշակի ներգործություն ունեին նրա ձևավորման վրա[13]: Միանգամայն համոտեղվում են մեզ հասած այն վկայությունները, ըստ որոնց մոնղոլների մոտ գերի ընկած, մոնղոլներին մոտիկից ճանաչող նշանավոր գիտնական Վանականին 1238 թ. մենք տեսնում ենք Թիֆլիսում, որտեղ նա փրկագնել էր թաթարների կողմից գերեվարված հայերեն մեկ ձեռագիր[14], իսկ 1239 թ.՝ Հռոմում: Բնական է հավանական համարել, որ պապին գրված Ռուսուդանի նամակը նա Հռոմ է տարվել այդ խմբի կողմից և նույն խմբի կողմից էլ պապի պատասխան նամակը բերվել Վրաստան 1240 թ. գարնանը, իսկ նույն թվականի Վարդավառի տոնին՝ հուլիսի 22-ին, Վանականը, ինչպես հայտնի է, այցելել է իշխան Հասան-Ջալալին և մասնակցել Գանձասարի վանքի տաճարի օծման արարողությանը[15]: Պատվիրակությունը Հռոմից վերադարձել էր Կիլիկիայով: Վարդան Արևելցին նա Երուսաղեմից վերադարձին մնացել էր Կիլիկիայում[16], իսկ 1246 թ. Մարգարեի (Վանական վարդապետի եղբորորդու) հետ վերադարձել Արևելյան Հայաստան, բերելով Կոստանդնի Բարձրբերդցու «Թուղթը»[17], իսկ Արցախի Վաղուհաս գյուղի «մայրաքաղաք» կոչված «հռչակավոր»[18] եկեղեցու համար՝ մեկ Ավետարան և որոշակի օժանդակություն[19]:

Ամենայն հավանականությամբ, 1239-1240 թթ. դեսպանագնացությունը միակը չէր պատվիրակության հետ: Վարդան Արևելցու մասնակցությամբ 1264 թ. Հուլավու էլչանի հրավերով դեսպանագնացությունից հետո, 1268-1269 թթ. Հռոմ կատարված մեկ այլ դեսպանագնացության մասին անգամ կարելի է ենթադրել Վանական վարդապետի եղբորորդու՝ Մարգարեի[20] թողած հիշատակարանի հիման վրա:

1269 թ. Հռոմում ավարտված Աստվածաշնչի հիշատակարանում գրիչ *Մարգարեն* շատ ավելի է ծավալվում և շարադրում թե՛ 1239-1240-ական թթ. Հռոմ ժամանած պատվիրակության ճակատագիրը և թե՛ իր ժամանակի դրությունը. «Ի յամի եաւթն հարիւրերորդի, ութ և տասսեներորդի (1269) թըւականութեանս Հայոց տոմարիս, յորում ժամանակի հովուէր զուղղափառութիւն հաւատոյս քրիստոնէութեան վերադիտողական իշխանութեամբ ճշմարիտ աթոռակալ Լուսաւորչին մերո տէր Յակոբոս[21] աստանօր յանգ եղեալ կատարեցաւ աստուածախօս մատեանս ի... յակաւաւոր մայրաքաղաքիս Հռոմ... ի Հանգստարանիս Հայոց... Նոցաւ, որ առաջագոյն աշխատեալ են ի Տունս, զի ոմանք ի յանցանէ... հանգեալ են ի Քրիստոս, և ոմանք՝ գնացեալ յաշխարհն իւրեանց... *Եւ որք ի յայժմու ներկայս բնակեալ են ի Տունս, փառագուարճ քահանայք, անբիծք և անարատք, բարեշուք ծերունիքն Գրիգորն և Առաքեալն, և սոքա ևս որ մանկական տիոք արիանաւն ընդդէմ բազմահնար ախտիցն* Բելիարայ՝ Ստեփաննոսն և Կարապետն, Խաչատուրն և Յովհաննէսն, Թորոսն և Եղիազարն, և Վարդան Արևելցին»:

Այս խմբից առանձին թվարկվում են Հռոմում գտնվող Հայաստանի այլ գավառներից ժամանած հայերը նա՝ թվով 26 անձնավորություն, որոնց համար ասվում է, թե «Սոքա են բնակիչք Տանս ի յայժմուս, որք թողեալ զաշխարհ իւրեանց և զազգ, զտունս և զհայրենիս, եկեալ պանդխտանան ի դուռն սուրբ առաքելոցս Պետրոսի և Պաւղոսի, և

ակն ունին յուսոյն յաւիտենից և անապատում հանգստեանն»: Հիշատակարանում նշվում է նաև, թե «հանդերձ այսոքիւք և կանայք պատուականք, և պարկեշտ պառաւունք կան բնակեալ ի Տուին, աղբատ և աղքատացեալք»[22]:

Մեկ կարևոր հավելում ևս կատարվում է վերոբերյալ հիշատակարանում. գրիչը հանգստություն է մաղթում «ամենայն հայադաւան ննջեցելոցն», իսկ այնուհետև՝ «Այլ և ձեր աղաւթիւք և բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին և սուրբ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի և ամենայն սրբոց՝ երկնաւորաց և երկրաւորաց, և Սրբոյ Յովաննու Կարապետին՝ խաղաղութիւն տայցէ մերում աշխարհին և ազատեսցէ ի ծառայութենէ այլասեռիցն, կազդուրեցուսցէ, կարողացուսցէ և հաստահիմն արասցէ և զբնակիչք Տանս Հռոմայ օրհնեսցէ բարեգութն Աստուած»[23]:

Այս թվարկումից արդեն հստակ է, որ եթե Հռոմ ժամանած հայերի խմբի անդամների մի մասը վերադարձել էր հայրենիք, ապա մնացողները ոչ միայն այլևս մտադիր չէին վերադառնալու, այլև համալրվում էին նոր ներգաղթողներով և համակերպումի ու սպասման մեջ էին: Նկատենք, որ այս տասնամյակից էլ սկսում է հայերի զանգվածային ցրումը Իտալական քաղաքներում, հիմնադրվում են հայկական եկեղեցիներ, ձևավորվում է իտալահայ գաղթօջախը:

1272 թ. հուլիսի 31-ին Փերուժ (Perugia) քաղաքում հիմնադրված Ս.Մատթէոս եկեղեցին 1273 թ. հուլիսի 2-ին պաշտոնապես օծվում է որպես հայոց եկեղեցի[24]: 1279 թ. Կիլիկիայի Լևոն թագավորը ձեռագիր ճաշոց է նվիրել այդ եկեղեցուն. «Լեւոն՝ շնորհաւք Աստուծոյ եւ աւգնականութեամբ նորին թագաւոր Հայոց, որդի հանգուցեալ արքային Հեթմոյ, վասն խնդրոյ Յոհաննիսի քահանայի, պարգեւեցաք զԺամագիրքս գայս իւր եկեղեցւոյն Սուրբ Մատթէոսի Աւետարանչի, որ է ի Փերուժ քաղաք, ի յիշատակ մեր եւ նախնեացն մերոց, ի թուականութեանս Հայոց ԷՃԻՀ (1279)»[25]:

Փերուժ քաղաքի հայերի՝ Ս.Հովհան Սկրտչի կարգին հետևելը, որ արձանագրել է Ջ.Կազագրանդեն և դա իրավացիորեն ընկալել որպես ազգայինի դրսևորում (այն կապելով Տարոնի Ս.Կարապետի կամ Գլակա անապատի հոչակի հետ)[26], մատնացուցում է որոշակի հայկական գաղթօջախի կազմավորման սկիզբ, հայկական մտածողության պահպանման միտում՝ իտալական հողի վրա: Փերուժի զուգահեռը մենք տեսնում ենք արդեն Ջենովայում, որտեղ հայոց եկեղեցին (հիմն. 1308 թ.) կրում էր Ս.Բարդուղիմեոս առաքյալի անունը[27]:

Այսպիսով, իտալահայ գաղթօջախի կազմավորումը պետք է տեղադրել XIII դդ. կեսերին, որի համար բնորոշ են դառնում սպասումն ու հավատը, սպասում վերադարձի ու նաև պայքար՝ հանուն ազգային գոյության:

XIV դ. հայկական գաղթօջախներ ենք տեսնում արդեն Իտալիայի շատ քաղաքներում՝ Հռոմ, Պիզա, Վենետիկ, Սալեռնո, Ջենովա, Բոլոնիա և այլն:

Ծանոթագրություններ

1 Գաղթօջախների դասակարգմանը, նրանց ստեղծմանն ու գնահատմանն են նվիրված վերջերս լույս տեսած մի շարք ուսումնասիրություններ: Տե՛ս, մասնավորապես, Վ.Բարխուդարեան. Հայկական գաղթավայրերը (առաջացումը, նշանակութիւնը), «Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան», Երևան, 1996, էջ 1-19: **B.L.Zekiyan**, In mergine alla Storia, Dal fenomeno dell' emigrazione verso un nuovo concetto dell' identita' e dell' integrazione etnoculturale, "Ad limina Italiae", a cura di B.L.Zekiyan, Venezia, 1996, pp. 267-286.

2 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 240:

3 Տե՛ս **G.Dédéyan**, Les arméniens en Occident (fin Xe - debut XIe siècle), "Occident et Orient au Xe siècle", Paris, 1979, pp. 124-133; **B.L.Zekiyan**, Le colonie Armene del medio evo in Italia e le Relazioni culturali Italo-Armene [Materiale per la Storia degli Armeni in Italia], "Atti del Primo simposio internazionale di arte Armena", Venezia, 1978, pp. 813-851.

4 Գարեգին կաթ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 935-938; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, կազմ. Ա.Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 216-217:

5 Գ.Յովսէփեան, նշվ. աշխ., էջ 939-942: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 218-219:

6 Տպագրության մեջ գրված է «հայրապետութեան» (տե՛ս նույն տեղում, էջ 224): Այդ տարիներին Ստեփաննոս Ղազարովանեցին եղել է առաջնորդը «տանս հայոց հանգստարանի», որի «հայրապետիւը» հիշատակված է նաև ոմն Մխիթարի գերեզմանին կանգնեցված խաչքարի վրա. «Ի ՈՂԼ թուիս հաոց կանգնեցաւ խաչս ի բարեխաւսութիւն Մխիթարայ եւ ծնողաց իւրոց ի հայրապետաև Ստեփաննոսի Ղազարայվանեցո որք երկրպագէք յիշեցէք յաղաւթս» HAEC CRUX CONSECRATA EST: Տե՛ս Ղազարյանների ընտանիքի մասին՝ Ղ.Ալիշան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս և միութեան նոցա ընդ հռոմէական եկեղեցւոյ ի փլորենտեան սիւնհոդոսի, Վենետիկ, 1878, էջ 54-55: Ա.Պալճեանը աղճատել է հռոմէական եկեղեցւոյ ի փլորենտեան սիւնհոդոսի, Վենետիկ, 1878, էջ 54-55: Ա.Պալճեանը աղճատել է տեղանունը, վերջինս դարձնելով անձնանուն՝ «Ղազար Ստեփանոս Աբբայ Վանեցի». իրականում Ղազարովանքը գոյություն ունի և գտնվում էր Տարոնում (իմա՝ Մշո Ս.Առաքելոց վանքը):

7 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 224:

8 Նույն տեղում, էջ 313: Նույն այս Թորոս Արևելցին կամ Գանձակեցին 1268 թ. Հռոմում կազմել է մի ժողովածու ևս, որից կատարված ընդօրինակությունը պահվում է Օքսֆորդում:

9 Տե՛ս, մասնավորապես, Պ.Մուրադյան. Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 63-64, 121:

10 Տե՛ս Я.М.Свет, После Марко Поло, М., 1968, с. 8. **G.Soranzo**, Il papato, l, Europa cristiana e I tartari, Milano, 1930, pp. 30-35. **K.-E.Lupprian**, Die Beziehungen der Papste zu islamischen und mongolischen Herrschern im 13. Jahrhundert anhand ihres briefwechsels, Citta del Vatikano, 1981, SS. 50-77.

11 Ի.Տաքաղուա, Վրաստանը Եվրոպայի արխիվներում և գրադահոցներում, հ.I, Թբիլիսի, 1984, էջ 85 (վրացերեն):

12 Տե՛ս անդ:

13 Կիրակոս Գանձակեցու դիպուկ բնորոշմամբ՝ «Ընդ այն ժամանակս թագաւորութիւնն վրաց նուաղեալ էր, զի էր ընդ ձեռամբ կնոջ, որում անուն էր Ռուզուդան, դուստր Թամարին, բոյր Լաշային, թոռն Գիորգեայ... վարէր զիշխանութիւն թագաւորութեանն ի ձեռն զօրագլխացն Իւանէի, և որդոյ իւրոյ Գիորգեայ... վարէր զիշխանութիւն թագաւորութեանն ի ձեռն զօրագլխացն Իւանէի, և որդոյ իւրոյ Սւագին, և Շահնշահի՝ որդւոյ Զաքարէի, և Վահրամայ և այլոցն» (Կիրակոս Գանձակեցի, էջ 238):

14 Ա.Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990, էջ 111, 165-166:

15 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 270:

16 Տե՛ս անդ, էջ 294: Դժվար է ասել, թե Վարդան Արևելցին ե՞րբ է ճշգրիտ ոխտավարությամբ եղել Երուսաղեմում, որ պատմում է Կիրակոս Գանձակեցին՝ առանց թվականը նշելու, սակայն հայտնի է նաև, որ 1238 թ. «Կոստանդնի կաթողիկոս ընդ կաթողիկոսին Ասորւոց երթայ յԵրուսաղէմ՝ յուխտ» (Հ. Դեւոնդ վ. Մ.Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 554): Խոսելով Կիլիկիայում Վարդան Արևելցու կրթական աշխատանքով զբաղված լինելու մասին, Փ.Անթաբյանը այդ ժամանակաշրջանը թվագրում է 1240-1251 թթ. (տե՛ս Փ.Անթաբյան, Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը, Բ, Երևան, 1989, էջ 24-25):

17 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 294: Լ.Խաչիկյան, Կոստանդնի Բարձրբերդցու խրատական Թուղթը, առաքված Արևելյան Հայաստան, 1251 թվականին, «Բանբեր Մատենադարանի», 1958, 4, էջ 268-269:

18 Տե՛ս Մ.Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 191:

19 Տե՛ս անդ, էջ 192: Արձանագրությունը, Ս.Բարխուդարյանի հավատմամբ, այլևս չկա տեղում և հայտնի է Ս.Ջալալյանցի և Մ.Բարխուդարյանցի հրատակությամբ. «Աստուծոյ շնորհիւն. ես Կոստանդնին եմ

21 Հակոբ Ա.Կղայեցի (1268-1286 թթ.):
22 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 368-369:
23 Անդ, էջ 369:
24 Տե՛ս **B.L.Zekiyan**, op. cit., pp. 865-868. **G.Traina**, Materiali sulla presenza armena nella Perugia medievale, "Ad limina Italiae", p. 98.
25 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 489: Համմ. **B.L.Zekiyan**, op. cit., p. 847; **G.Casagrande**, S.Matteo degli Armeni nel contesto insediativo-religioso di Perugia [sec. XIII-XV], "Ad limina Italiae", pp. 115-127.
26 Տե՛ս **G.Casagrande**, op. cit., p. 118.
27 Տե՛ս Վ.Յովհաննէսեան, Հայ եկեղեցի մը Նեմովայի մէջ, «Բազմավէպ», 1958, էջ 175-180:

Լավրենտի Հովհաննիսյան

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՉԳՐԱՆՑՎԱԾ ԲԱՌԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
(ըստ V դարի մատենագրական տվյալների)

Հայ բառարանագրությունը ըստ ամենայնի արտացոլել է գրաբարի բառային կազմը: Բառարանագիրների ուշադրության կենտրոնում է եղել հատկապես V դ. մատենագրությունը, որովհետև այն հայ գրավոր խոսքի առաջին արտահայտությունն էր՝ բազմաժանր ու բազմաբնույթ գրականությամբ, բնականաբար, նաև հարուստ բառապաշարով, որն իր ազդեցությունն է թողել հետագա շրջանի գործերում: Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ այդ դարում էր թարգմանվել Աստվածաշունչը, որի բառապաշարի արտացոլումը բառարանագիրների առաջնահերթ խնդիրն էր: Բնականաբար, կարևորվում են հատկապես այն բառարանները, որոնցում բառահոդվածները բնագրային վկայություններով են, բացատրություններն ու բառի վկայության ժամանակը՝ հավաստի: Այդ տեսակետից անգնահատելի է հատկապես «Նոր հայկազյան բառարանը» (ՆՀԲ): Վերջինիս, ինչպես նաև «Հայկազյան լեզվի առձեռն բառարանի» (ԱԲ) հրատարակումից հետո էլ ուսումնասիրողների պրպտուն ջանքերով ի հայտ բերվեցին բազմաթիվ նոր բառեր, որոնք տեղ չէին գտել գրաբարի բառարաններում: Այսպես կոչված նորահայտ բառերի հայտնաբերման, քննության գործում մեծ է Ա.Վարդանյանի, Ն.Բյուզանդացու և Հ.Աճառյանի վաստակը: Հ.Աճառյանի «Արմատական բառարանում» հիմնականում տեղ են գտել նախորդ բառարաններից դուրս մնացած բառերը:

Ըստ արժանվույն գնահատելով երախտավոր բառարանագիրների ու բանասերների վաստակը՝ պետք է ասել, որ այդ բնագավառում անելիք դեռ կա: V դ. մատենագրության բառապաշարի քննության ընթացքում գտել ենք ավելի քան երկու հարյուր բառ, որոնք բառարաններում ավանդված չեն: Խոսքը հունաբան հայերենի արհեստական բառածների մասին չէ, այլ՝ հայերենի բառակազմական կաղապարներով կազմված բառերի կամ օտար փոխառությունների: Ինչու՞ են այդ բառերը դուրս մնացել բառարաններից. կարելի է թվարկել մի շարք պատճառներ.

ա) Բառարանագիրների ձեռքի տակ չեն եղել մի շարք ձեռագրեր:

բ) Չեն եղել քննական բնագրեր:

գ) Բառերի մի մասը պարզապես վրիպել է բառարանագիրների ուշադրությունից:

Նորահայտ բառերի զգալի մասը թարգմանական գրականությունից է, և դա պատահական չէ, քանի որ այն իր ծավալով և թեմատիկայով ավելի ընդգրկուն է, և ապա՝ V դ. ինքնուրույն գրականությունն ավելի խորն ու բազմակողմանիորեն է ուսումնասիրված թե՛ բանասիրական, թե՛ լեզվաբանական և թե՛ այլ հայեցակետերից: Իհարկե, չարձանագրված բառեր կան և ինքնուրույն գրականությունից: Բերենք մեկ օրինակ Մովսես Խորենացուց, որը հետաքրքրական է հատկապես բառիմաստի տեսակետից. «Եւ կալաւ զաշխարհս մեր... ամս քսան և վեց. և յետ նորա որդի նորին, որ անուանեցաւ Շապուհ, որ լսի *Արքայամանուկ*»[1]: Բառարաններում *արքայամանուկ* բառը չկա: Ըստ երևույթին բառարանագիրներն այն դիտել են որպես հատուկ անուն:

Արքայամանուկ-ը իրանական Šāhpuhr-ի (šāh «արքա», puhr/puh «որդի») պատճենում-թարգմանություն է: Այս բառն ուշագրավ է այլ առումով. ի հայտ է գալիս *որդի* «մանուկ» իմաստը, որը ԱՔ-ն չի նշում, իսկ ՆՀՔ-ի վկայած օրինակներում այդ իմաստը հստակ չէ:

Ներկայացնենք մի քանի բառեր որոշ դասակարգումներով: Նյութը քաղված է հիմնականում Եւսեբիոս Եմեսացու, Եփրեմ Ասորու գործերի թարգմանություններից. կան օրինակներ նաև այլ թարգմանական երկերից:

I Նորահայտ բառերի բառաձևային յուրահատկությունները

1. Բառակազմության տեսակետից նորահայտ բառերն առկայանում են զանազան կաղապարներով. ա) նախածանցավոր ձևեր՝ *անգրական* «չգրված», *անապանցական* «ամուրի», բ) վերջածանցավոր բառեր՝ *լրթական, նպաստական, գորենական, ատեցիկ, պատուաստիկ, պաշտօնիկ, երեկի*, գ) արմատական կամ որպես այդպիսին գիտակցվող բառեր՝ *ժիել* «ժխտել», *բարուր* «հողագործ», *սրտիլ* «շվի», դ) բարդ բառեր՝ *ինքնաչու, խորաբուն, կանխանկար, կրկնածին, չեւահաս, մշակապետ, մատարկել*...

2. Միավորներ, որոնք զուտ բառային տարբերակներ են:

Գրաբարում *տեղ*-ը և *եղ*-ը (սեռական՝ ետեղ) բառակազմական տարբերակներ են. *եղ*-ը նվազ հաճախական է հատկապես վերջադաս կիլուռության դեպքում: *Ճակատետղ* և *հանգստետղ* բառերը բառարաններում արձանագրված չեն: «Ի *ճակատետղի* ընդարձակ ելէք» (Եփրեմ Ասորի)[2]: ԱՔ-ն և ՆՀՔ-ն ունեն *ճակատատեղ* ձևը: *Ճակատետղ*-ը պատահական կիլուռություն չպետք է համարել. Եփրեմ Ասորու նույն գործում հանդիպում ենք մի այլ օրինակի՝ *ժամանակետղը*. «Գեղեցիկ *ժամանակետղը* քաղաքին, ահա եղեն կարկառք-կարկառք»[3]: Հրատարակիչը ծանոթագրում է. «Պակասէ ի բառգիրս»: Դարձյալ նույն բնագրում կա *ժամասակետղ* ձևը «... ի մի սուրբ *ժամասակետղ* եղեն բոյնք գերեզմանք նոցունց ի վախճանի...» (ըստ հրատարակչի՝ «նոր բառ, այլուստ, անծանօթ»): *Ժամասակետղ*-ը կարելի է թերևս ուղղել՝ *ժամասագետղ*. դա այլ հարց է: Փաստն այն է, որ *եղ* բաղադրիչով ի հայտ են եկել նոր բառեր: Ի դեպ, այդ նույն բաղադրիչով *հանգստետղ* բառն առկա է Եփրեմ Ասորու մեկ այլ գործում՝ «Կցուրդներում». «Եւ ի հանգստեան խափանին լալիք եւ զբաւսանք, ի մտանել իւր ի չէն *հանգստետղ*»[4]: ՆՀՔ-ն և ԱՔ-ն չունեն նաև *հանգստատեղ* ձևը:

Ստենահատոյց բառով վկայված է երկու օրինակ (Եփրեմ Ասորի). «Կոխեաց զծերս իբրեւ զհասեալս, եւ զերիտասարդս իբրեւ զկայծեալս, *Զստենահատոյցս* իբրեւ զվաղահասս, եւ զտղայս իբրեւ զաւշարակս»[5]: «Զի որ արար զնոսա յդիս, արասցէ զնոսա մանկունս: Որ արարն *ստենահատոյցս*, արասցէ զնոսա պատանիս: Որ արարն զնոսա երիտասարդս, արասցէ զնոսա ծերս և ալեւորս»[6]: Բառարաններն ունեն *ստենահատոյց* ձևը՝ «կրծքից կտրած»:

3. Բարդ բառեր, որոնց համապատասխանները ներկայանում են մեկ հոմանիշ բաղադրիչի փոփոխմամբ:

Ինքնաչու: Բառարաններն ունեն *ինքնախաղաց* ձևը, թեև ներքոհիշյալ վկայության մեջ երկու հոմանիշն էլ առկա են. «...*ինքնաչու*, ինքնախաղաց... զզարդս ծածկէին»[7]: Հավանորեն ԱՔ-ն նկատի չուներ վերոհիշյալ օրինակը, այլապես *ինքնաչու*-ն էլ կբառարանագրվեր:

Կանխանկար. «Երեսուն առ երեսուն, զի կատարեսցի *կանխանկար* աւրինակ»[8]: Բառարաններում ավանդված է *նախանկար*-ը:

Հանդարտակոխ. «... որ մեղմագնաց եւ *հանդարտակոխն* ոտիւք խափանեաց զկառամարտիկս»[9]: Եմեսացու ճառի այս հատվածն ընդգրկված է Սեբերիանոսի ԺԱ ճառում, որտեղ *հանդարտակոխ*-ի փոխարեն *հանդարտագնաց* է:

Թիկնակալ. «Ու՞ր էին արդեւք գունդք հեծելոց վառելոց և սպառազէնք նահատակաց, որ միշտ վերջապահք *թիկնակալք* էին նոցա ի թշնամեաց»[10]: Բառարաններն ունեն *թիկնապահ* ձևը:

Փոքր-ինչ խախտելով այս ենթադասակարգման սկզբունքը՝ ներկայացնենք մի քանի բառեր, որոնք, ըստ երևույթին, հաճախական չեն եղել գրավոր խոսքում և բառարաններում էլ չկան:

Անձրեւակիր. «Այլ մեք զծիածանն գիտեմք զի յանձրեւաց ցածնուլ լինի, յորժամ արեգական զճառագայթս ընդդէմ *անձրեւակիր* ամպոցն արկանիցէ»[11]:

Ողջաբաղ. «Փոխանակ կենդանի անձանց, ահա լի՛ է մեռեալ մարմնովք: Էի են տունք քան զգերեզմանս, *ողջաբաղ* եւ ողորմ մեռելովք»[12]:

Կարճագաւակ. «Ոչ ետես մայր զսիրելի իւր եւ ոչ *կարճագաւակ* զմիամաւր իւր»[13]: *Կարճագաւակ* նշանակում է միակ որդի ունեցող մայր:

Սրտառաջ. «Եւ եհար զարքայն Իսրայէղացւոց ընդ մէջ *սրտառաջացն* և ողնափողին... և թափ եհան»[14]: Զոհրապյան Աստվածաշնչում *սրտառաջ*-ի փոխարեն լանջ հոմանիշն է. «Եհար զարքայն Իսրայէլի ընդ մէջ թոքոցն և լանջացն»: *Սրտառաջ*-ը բառարաններում վկայված չէ:

II Նորահայտ բառերի իմաստային-գործառական յուրահատկությունները

1. Տարածքային տարբերակներ:

Գրաբարը թեև միասնական գրական լեզու էր, այնուհանդերձ հենց V դ., անշուշտ, կային գրական նորմից շեղումներ՝ բարբառային-տարածքային տարբերակներ: Ներքոհիշյալ բառերը թերևս այդ բնույթի են:

Արմատակալել. «Քանզի որ ի հեթանոսաց հաւատացեալքն *արմատակալեալ*, կռոպեալ համարէին զիրէական հաւատացեալսն»[15]: Ղարաբաղի բարբառում այսօր էլ գործածական է *տրկրտրկալիլ* (*տակոի* «արմատ») բառը:

Արդի մի շարք բառարաններում և խոսակցական լեզվում գործածվում է *գիրդ* «կտրուկ, միանգամից» բառը: Գրաբարի բառարաններն այն չեն վկայել: Ներքոհիշյալ օրինակներում թերևս այդ բառն է՝ -ի- մակբայակերտ ածանցով. «Զոր աւրինակ *գրդի* որ երթիցէ քարի, քարին ինչ ոչ ստնանէ, այլ զիւր գլուխն ողջ ոչ ապրեցուցանէ»[16]: -Ի- ածանցով հանդիպում ենք և *երեկի* ձևին (համմտ. Ղարաբաղի բարբառում *յրրկէ* «երեկ»). «Եւ աստ է տեսանել նորագործ նորանշան որս. որ *երեկի* որսացեալ, այսաւր զայլս որսայ»[17]:

Ժիել «ժխտել, մերժել». «...յորժամ տեսին զլոյսն ծագեալ՝ ժխտեցին, *ժիեցին* զյայտնութիւնն»[18]:

Ծիրաքաղ. «...զի ոչ եթէ մոռանամք՝ զոր առաջի արկաքդ, այլ այժմիկ *ծիրաքաղ* արարաք վասն ձերոյ...»[19]: Եթե գրչագրական սխալ չէ կամ հետին գրություն, ապա բառարաններում ավանդված *ծայրաքաղ*-ի կողքին V դ. առկա է եղել բարբառային *ծիրաքաղ*-ը:

Անշուշտ, ժողովրդախոսակցական են *ածեմ* բաղադրիչով կազմված հետևյալ բառերը:

Ոտնածեմ «պարել». «...եւ *զոտնածել* կաքաւչաց եւ մատամբքն զնուագն յարիւնել»[20]: Գրաբարում հաճախական է *կաքաւել*-ը (որից՝ կաքաւութիւն, կաքաւիչ), *պարել*-ն էլ վկայված է V դարից, բայց թերևս այն ուներ «խմբապար, չուրջպար» իմաստը:* *Ոտնածել*-ը եզակի վկայություն է:

---

* Դատելով հին վրացերենում ունեցած կիլուռումից՝ «խաղալ է» նշանակում: *Ծանոթ. խմբ.*

Տարեւածեմ, հոմանիշ է *տարուբերեմ*-ին. «Մարմնոյ բարի է միայնում տան, քանզի ոչ *տարեւածեն* զնա ցանկութիւնք»[21]:

2. Բառեր, որոնք ուշագրավ են ստուգաբանական-բառաքննական դիտարկումների տեսակետից:

Պատման «չափ, պայման»: Վկայված է Ոսկեբերանի մի գործում. «...նուազագոյն քան զնոսա արար զսա չափով, մարմնով փոքր ինչ հասակաւ *պատման*»[22]: Իզուր է բանասեր Ե.Դադյանը փորձում ուղղել՝ պայման: *Պատման*-ը և *պայման*-ը նույն բառերն են, երկուսն էլ իրանական փոխառություն, բայց տարբեր սկզբնաղբյուրներից. *պատ*-ով ձևերը ենթադրում են պարթևական աղբյուր (համմտ. պատգամ, պատկեր, պատմուճան...), իսկ իրանական *pət*-ի համապատասխան pay ձևերը միջին պարսկերենից են (համմտ. պայազատ, պայուսակ...):. *Պատ* բաղադրիչով հայերենի իրանական փոխառությունները շատ են, և դրանց շարքում պետք է բառարանագրել նաև *պատման*-ը:

Սրտիմ «երաժշտական գործիք»: Վկայված է Եփրեմ Ասորու «Կցուրդներում». «*Սրտիմս* հարկանեն երիտասարդք եւ ջնարաւորք երգեն ջնարիւք. երգեցիկք փողովք իրեանց»[22]: Իմաստի և ձևի տեսակետից ակնհայտ զուգահեռներ են ռուս. свирель, բուլղ. свирóл «շվի» (սլավոներեն *svьr-ից) բառերը, սակայն որոշակի բան չենք կարող ասել բնիկ հայերեն լինելու կամ փոխառության բուն աղբյուրի մասին:

Ապարանաւոր «ապարանքի ձև ունեցող, հսկա»: Վկայված է Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայում». «Եւ արդ՝ զի՞նչ մարքթասցուք զմտաւ ածել եւ կամ խորհել զշինածաձեւ և *ապարանաւոր* կերպարանաց փղի, մեծ եւ ահագին գազանին»[24]: «Վեցօրեայի» մի շարք ձեռագրերում մեզ հետաքրքրող բառը *ապարանագաւոր* է, որը կա ՆՀԲում և ԱԲ-ում: Ճիշտ է վարվել «Վեցօրեայի» քննական բնագիրը կազմող Կ.Մուրադյանը՝ *ապարանագաւոր*-ի փոխարեն դնելով *ապարանաւոր*-ը: Վերջինս հիմնավորվում է համատեքստի բովանդակությամբ, նաև *շինածաձև* հոմանիշի առկայությամբ: Ի դեպ, *շինածաձև* բառն էլ բառարաններում չկա, այլ կա *շինուածաձև*՝ նկատի ունենալով Կեսարացու համապատասխան օրինակը: Նշենք, որ Ն.Բյուզանդացին լրացված ՆՀԲ-ում նույնպես առաջարկում է *ապարանաւոր* ձևը[25]:

Սգածք. «Իբրև ի վերայ մեռեալ եղբարց ձերոց, թուխս սգոյ զգեցայք, բայց ոչ հանդերձս թուխս զոր զգենուն *սգածք* վասն մեռելոց...»[26]: Հրատարակիչը ծանոթագրում է. «*Սգածք* չիք ի բառգիրս, եթէ չէ՛ ինչ վրիպակ գրչի, փխե. սգազգածք»: Մեր կարծիքով *սգածք*-ը վրիպակ չէ. այն կազմված է *սուգ* և *ած*(ել) բաղադրիչներից և նշանակում է «սգացող, սուգ ասող»: Նշենք, որ ԱԲ-ն ունի այս բառի բայական ձևը՝ *սգածիմ* «սուգ մտնել, սգող»:

Ստայլել. «Եւ այլ եւս կամէի զայսպիսի աստուածականաց ճառել. քանզի չիք յագուրդ զԱստուծոյ պատմել. եւ ոչ *ստայլել* եւ ձանձրանալ ի քրիստոսական խաւսից»[27]: Ն.Ակինյանը կարծում է, որ սխալ գրություն է և պետք է ուղղել՝ *մմայլել* «կշտանալ, յագել»[28]: Բառը կարելի է վրիպակ չհամարել և ընդունել *ըստ* + *այլել* կազմությունը՝ «խորթանալ, օտարանալ» նշանակությամբ: *Ըստ-ստ* անցման համար համմտ. *ըստանձնել-ստանձնել*:

Մաղմաղ. «Հաց կսկուծ, որ նկանն կոչի եւ լինէր այսպէս. սալ ջեռուցանէին, յորոյ վերայ զճարպն թացեալ՝ անաստառ անդ դնէին, եւ ապա *մաղմաղ* ի վերայ արկանէին»[29]: Դևաբաղի բարբառում այսօր էլ գործածական է *մղղմղղ* «կամաց, հանդարտ»: Այս իմաստն է և գրաբարում: Բառը թերևս բնիկ հնդեվրոպական է՝ *mel արմատից, որից՝ *մեղմ, մալեմ*:

Մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ խոսել բոլոր այն նորահայտ բառերի շուրջ, որոնք քաղել ենք V դ. մատենագրությունից: Այստեղ փորձել ենք ներկայացնել ոչ թե բառարանային ամբողջ նյութը, այլ դրա այն մասը, որ ուշագրավ է բառիմաստի, բառակազմության, գործառության ոլորտների, ստուգաբանական դիտարկումների տեսակետից: Առաջարկվող դասակարգումներն էլ որոշ չափով կարող են պայմանական լինել, ստուգաբանությունները՝ վիճելի:

Նորահայտ բառերը կարևորվում են գրաբարի բառապաշարի ուսումնասիրության առումով, դրանք արժեքավոր տվյալներ են հրատարակվելիք պատմական բառարանի համար՝ ի մասնավորի V դ. բառապաշարը ըստ կարելվույն լիակատար ներառելու համար: Ավելացնենք, որ գրաբարի բառարաններում ավանդված հարյուրավոր բառեր հետհինգերորդդարյան կամ նույնիսկ հետգրաբարյան վկայություններով են, այնինչ դրանց առաջին գործածությունը V դարից է, իսկ պատմական բառարանի համար էական է բառի գործածության ժամանակագրական ճշգրտումը:

Ծանոթագրություններ

1 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ.Աբեղեան եւ Ս.Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 216:
2 Ս.Եփրեմի Ասորւոյ Վիշտասան ասացուածք վասն Նիկոմիդեայ քաղաքին, «Սիոն», 1930, 2, էջ 56:
3 Նույն տեղում, 1928, 7, էջ 222:
4 Կցուրդք Ս. Եփրեմի Խորին Ասորւոյ, հրատ. հանդերձ ներածութեամբ Հ. Ներսէս վ. Ակինեան, Վիեննա, 1957, էջ 7:
5 Նույնի՝ Վիշտասան, «Սիոն», 1928, 6, էջ 187:
6 Նույն տեղում, 1929, 6, էջ 189:
7 Եւսեբիայ եպիսկոպոսի Եմեսացւոյ Ճառք, հրատ. Ն.Ակինեանի, «Հանդէս ամսօրեայ», 1956-1959, Ճառ ԺԱ, 1959, 1-4, էջ 23-24:
8 Նույն տեղում, Ճառ Ե, 1957, 8-10, էջ 361-362:
9 Նույն տեղում, Ճառ ԺԳ, 1959, 9-11, էջ 323-324:
10 Աբրահամու Խոստովանողի Վկայք Արեւելից, բարգմ. յասորական՝ աշխ. Գ.Տէր-Մկրտչեանի, Էջմիածին, 1921, էջ 71:
11 Եւսեբիոսի Եմեսացւոյ Մնկնութիւնք ութամատեան գրոց Աստուածաշնչին, աշխ. Հ Վահան վ. Յովհաննէսեան, Վիեննա, 1980, էջ 49:
12 Եփրեմ Ասորի, Վիշտասան, «Սիոն», 1928, 4-5, էջ 158:
13 Նույն տեղում, 1928, 7, էջ 220:
14 Բ Մնաց. ԺԸ 33:
15 Եւսեբիոս Եմեսացի, Ճառք, Ճառ ԺԱ, էջ 9-10:
16 Նույն տեղում, Ճառ Բ, 1956, 9-12, էջ 403-404:
17 Նույն տեղում, Ճառ Ը, 1958, 5-9, էջ 169-170:
18 Նույն տեղում, Ճառ ԺԳ, էջ 335-336:
19 Երանելւոյն Կիւրղի Երուսաղէմայ Հայրապետի Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832, էջ 52:
20 Եւսեբիոս Եմեսացի, Ճառք, Ճառ ԺԳ, էջ 355-356:
21 Եփրեմ Ասորի, Կցուրդք, էջ 5:
22 Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Մնկնութիւն թղթոցն Պաւղոսի, հ.1, Վենետիկ, 1862, էջ 867:
23 Եփրեմ Ասորի, Կցուրդք,էջ 6:
24 Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցաւրեայ արարչութեան, աշխ. Կ.Մուրադյանի, Երևան, 1984, Ճառ Ը, էջ 309:
25 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, սրբագրուած և ճոխացուած Ն.Բիւզանդացիի ձեռքով, հրատ. պատրաստեց Մ.Մինասյանը, Ա, Ժնեւ, 1990:
26 Եփրեմ Ասորի, Վեշտասան, «Սիոն», 1930, 2, էջ 55:
27 Եւսեբիոս Եմեսացի, Ճառք, Ճառ Գ, 1957, 3-5, էջ 117-118:
28 Տե՛ս անդ, ծանոթ. 92:
29 Նույնի, Մնկնութիւնք, էջ 182:

Սուսաննա Գրիգորյան

ԲԱՌԵՐԻ ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բառի ուղիղ, ուղղակի իմաստ, ապա անուղղակի, երկրորդվող, այլաբանական իմաստներ. այս բարդ եւ հետաքրքիր երեւույթի բացատրության ճանապարհին մի բան պարզ է. բառիմաստի բոլոր նոր երբեքանգնելում պահպանվում է նրա նախնական իմաստը, եւ այս նախնական իմաստի դիտարկումների շուրջն է, որ բառը գործածության նոր ոլորտներ է ստանում: Այլ կերպ ասած, եթե բառը դնենք կենտրոնում, ապա բառի եւ նրա նշանակությունների կապը կարելի է դիտարկել սարդոստայնի տեսքով, որն ամբողջությամբ հյուսված է մեկ թելով, եւ այն ընդհանուր առմամբ մեզ է ներկայանում իբրեւ ներդաշնակ մի կառույց:

Եվ այնուամենայնիվ, ինչպե՞ս է սկսում բառի երկրորդային իմաստների մշակումը: Այստեղ պարզորոշ մի սահմանագիծ կա. մի կողմում իր, առարկա եւ նրա հետ ուղղակի կապված գործողություն, ասենք՝ ոտք եւ քայլել, աթոռ եւ նստել, աչք եւ տեսնել եւ այլն, մյուս կողմում՝ այսպես կոչված սոցիալական հարաբերություններում խաչաձեւվող դիտարկումներ, որտեղ աթոռը եւ նստելը, օրինակ, կարող են դառնալ պաշտոն նշանակող կամ հակառակ՝ պաշտոնանկ եղող եւ կամ ինչ-որ դիրքի հասնող մարդու, կամ այդ գործողության խորհրդանիշ:

Բառի երկրորդային կամ այլաբանական իմաստի դիտարկումը միջնադարում սովորական երեւույթ է եղել՝ մեծապես պայմանավորված այն հայտնի հանգամանքով, որ ողջ միջնադարյան գրականության զգալի մասի ակունքը քրիստոնեական հոգեւոր գրականությունն էր: «Առակաւոր բան» – այս արտահայտությունը V դարից սկսյալ սովորական է դառնում նաեւ հետագա ամբողջ մեկնողական գրականության հեղինակների համար: Մեկնիչների համար «առակաւոր բանը», ինչպես հետագայում ամրագրում է նաեւ «Սուրբ Գրոց բառարանը», ունի գրեթե այն բոլոր իմաստները, որոնք նախանշվում են հենց Սուրբ Գրքում: «Սուրբ Գրոց բառարանը» բերում է հետեւյալ իմաստները. 1. «...առակ բառը կը նշանակէ երբեմն ճշմարիտ պատմութիւն», 2. «...քնութենէ առնուած օրինակ եւ նմանութիւն», 3. «...երբեմն եւս կը նշանակէ բուն առակ», 4. «...կը նշանակէ նաեւ մթին եւ այլաբանական խօսքերով բացատրուած ճշմարտութիւն»: Այս բացատրությունում նույնպես երեւում է, որ այն, ինչ հետագայում ձեռք է բերում խորհրդանշական կամ այլաբանական իմաստ, սկզբում նմանության նպատակ հետապնդող օրինակ է ծառայում: «Սուրբ Գրոց բառարանը» շարունակում է. «Առակ մը մեկնելու համար պէտք է նկատել նախ անոր ճշմարտութիւնը եւ բուն նպատակը: Առակին մասնաւոր պարագաներն իբրեւ այլաբանութեան զարդ նկատուելու են: Առակին ամէն մանր պարագան մեկնելու ջանալ, եւ հոգեւոր, այլաբանական իմաստ հանել անկէ, կրնայ մեծամեծ մոլորութեանց տանիլ»[1]:

Այսպիսով, առակավոր խոսքի կառուցվածքի առաջին աստիճանը ընկալելի է համընդհանուրի համար, մինչդեռ նույնը չի կարելի ասել 2-րդ եւ 3-րդ աստիճանների մասին, որոնք կրում են սուբյեկտիվ բնույթ: Ավելին, «այլաբանութեան զարդ» համարվող մասնավոր պարագաների մանրակրկիտ բացատրության ջանքերը կարող են տանել խրթին, բարդ եւ խճողված այլաբանության:

«Առակաւոր խօսքի» կիրառությունը հայ միջնադարում պարզաբանելու համար բերենք Սուրբ Գրքի «Առակաց» գլխի Համամ Արեւելցու, Ներսես Լամբրոնացու եւ Գրիգոր Տաթեւացու մեկնությունների զուգահեռը, երբ, մի կողմից, ունենք հենց V դ. շրջանառության մեջ դրված «առակավոր խօսքի» դասական օրինակ, ապա՝ տարբեր դարերում, մասնավորապես IX, XII և XIV դդ., դրան նորից անդրադարձած երեք հեղինակների մեկնությունները:

Համամ Արեւելցու «Առակաց մեկնութիւն»-ը կենդանի եւ աշխույժ ոճով գրված ոչ շատ ծավալուն մի աշխատություն է, որն սկսվում է «Առակաց գրքի» հանրահայտ, առաջին իսկ «Ճանաչել զիմաստութիւն եւ զիրատ, իմանալ զբանս հանճարոյ» տողի մեկնությամբ:

«Առակաց գիրքը», ինչպես արդեն նշեցինք, այլաբանական շերտերով հարուստ «առակաւոր խօսքի» դասական օրինակ է, եւ եթե Արեւելցին իր մեկնության մեջ գերազանցեր չափը, ապա արդյունքում մենք կունենայինք «Սուրբ Գրոց բառարանում» նշված մոլորության մեջ ընկած մի հեղինակի, մինչդեռ ուշադրության կենտրոնում պահելով Սուրբ Գրքի բարոյախոսությունը՝ Համամ Արեւելցին համեմատությունների, դարձվածների, փոխաբերական խոսքի դիպուկ կիրառություններով ստեղծում է բարոյախրատական, գեղարվեստական եւ այլաբանական շերտերի միահյուսմամբ մի մեկնություն: Շատ հաճախ փոխաբերության կամ այլաբանության դիմելիս Արեւելցին ինքն է ցույց տալիս անցումը ուղղակի իմաստից փոխաբերականին: Այսպես, համեմատելով անգործունյա մարդու աղքատանալը իր հոգեւոր բարիքների համար չանհանգստացող մարդու վիճակի հետ, Արեւելցին գրում է. «Մինչեւ յե՞րբ անկեալ կաս ով վատ... եւ հասանէ քեզ օր վախճանին իբրեւ զգառն ուղեւոր աղքատութեան, զոր օրինակ աղքատացն մերկութենէ անգործութիւնն, սոյնպէս եւ անգործն ի բարեացն աղքատանայ զվերջին աղքատութիւնն եւ մերկ ի մեծ ի ձմերանին լինի, ուր փախուստ ոչ գոյ»[2]:

Արդյունքում ունենք «անգործն ի բարեացն աղքատանայ» արտահայտությունը, որ համարժեք է ժամանակակից հայերենի «հոգով աղքատ» դարձվածին: Մեկ ուրիշ համեմատությամբ Արեւելցին շրջանառության մեջ է դնում «ծակ կարաս կրել» դարձվածը, որ դարձյալ ժամանակակից հայերենում զուգահեռ ունի. խոսքը «մաղով ջուր կրելու» մասին է, որով փաստվում է անօգուտ աշխատանք կատարելը: «Որ ունի գկին շուն, – գրում է Արեւելցին, – անմիտ է, քան զայն, որ ծակ կարաս կրէ կամ ի ջրհոր խոր ջուր կամ զգառն պտղոց մայրն տնկէ...»[3]:

Այս ճանապարհով, ահա, Արեւելցին ստեղծում է փոխաբերական խոսքի փայլուն օրինակներ: Խրատական բնույթի են Արեւելցու մեկնության ամփոփումները. «Մի՛ ձկտիր ի հանգանակս մսավաճառաց, զի ամենայն արբեցող եւ բոզաբոյծ[4] աղքատասցի»[5], «Ճրագ ամբարշտաց շիջցի»[6]:

Ներսես Լամբրոնացու աշխատությունը, ի տարբերություն նախորդի, ծավալուն է, գրված շուրջ 300 տարի հետո: Մեկնությունն ամբողջությամբ խոհափիլիսոփայական ընդգծված երանգով աստվածաբանական, միաժամանակ՝ գեղարվեստական բարձր շնչով գրված երկասիրություն է: Լամբրոնացին երբեմն պատմական բացատրությունների փորձ է կատարում, եւ այս իմաստով բառի բացատրությունը դառնում է նաեւ ինչ-որ առումով բառիմաստի պատմություն, որտեղ ուրվագծվում է նաեւ անցումը բառի ուղղակի իմաստից փոխաբերականին եւ այլաբանականին: Այս առումով հատկանշական է «իմաստասիրութիւն» բառի նրա կիրառությունն ու բացատրությունը: Նրա կարծիքով մարդը անցել է ճանաչողության մի շարք փուլեր՝ սկսած շրջապատող

աշխարհի երեւույթների ըմբռնումից մինչև գանազան գիտությունների եւ վերերկրային երեւույթների հասու դառնալը. «Արդ՝ իմաստութիւն էր հելլենացւոցն, որով ձկտեցան ի լուսաւորացս շաւիղս. յերկրային նիւթոց որոշմունք, ի բնութեանս տեղեկութիւն, յորս ներակրթութեամբ ստացան բազում իրաց կանխագիտութիւն: Իմաստութիւն է եւ զանազան արհեստից գիւտք, զի իմացող միտքն շարժէ զզգայարանս... ո՛ետ կանանց իմաստութիւն ոստայնանկութեան: Իմաստութիւն է եւ բանից ընդրութիւնք եւ բացատրութիւնք ստուգութեան ի ստութենէն... Իսկ տիրապէս եւ կատարեալ իմաստութիւն է մտացն հպելն յԱստուած եւ յիմացականսն»[7]:

Փոխաբերական եւ այլաբանական անցումների ժամանակ Լամբրոնացին հաճախ դիմում է «նման», «այսինքն», «իբր» մեկնող բառերին, որոնք արդեն իսկ հուշում են, որ դրանց հաջորդելու է մեկնություն կամ բացատրություն, ինչպես, օրինակ, հետեւյալ հատվածը, որ մեկնում է Առակաց գրքի «եկեսցէ իբրեւ զկարապետ աղքատութիւն քո» արտահայտությունը. «այսինքն աղքատութիւնդ յառաքինութենէ նախընթաց եւ աւետաւոր լինի քեզ»[8]:

Միանշանակ է, որ փոխաբերության կամ այլաբանության ճանապարհին հաստատագրված օղակը համեմատությունն է, որով կարելի է գնալ փոխաբերության կամ այլաբանության, անգամ մթագնած եզրերի բացատրությանը: Լամբրոնացու երկն ունի բազմաթիվ այդպիսի «հասունացած» համեմատություններ, որոնց հաջորդում է կամ կարող է հաջորդել փոխաբերություն: Փոխաբերական արժեք ունեն հետեւյալ հատվածները. «Հասուցանէ... ի կատարեալ պտուղ սրտին»[9], «Քրիստոսի իմաստնացեալն առ Աստուծոյ հայեցուածսն եւ վերին գիտութիւն»[10], «Որչափ մարմնոյ ննդութիւն ծանրանայ, իմաստութեան լոյս յիւր ակնկալութեան հասատ եւս պայծառանայ»[11], «Իսկ որ անզգամաց կցորդի, ոչ բաբչի այլ ապականեալ բարքն ի չար բանիցն, տա պտուղ դառնութեան»[12]:

Գալով *Գրիգոր Տաթեւացու «Լուծմունք առակացին»*, պետք է նշել, որ այն շարադրված է այդ հեղինակին հատուկ ոճով, այսինքն՝ ամփոփելով նախորդներից ստացած ժառանգության արդյունքները, նա միաժամանակ նոր խոսք է ասում այն բնագավառում, որը քննության նյութ է դարձնում: Նա այս մեկնության մեջ հարազատ է մնում մեկ այլ սկզբունքի եւս, այսինքն՝ նախ կատարում է տեսական հարցադրումներ, տալիս ընդհանրացված բնորոշումներ, ապա անցնում է նյութի քննությանը, բերում դրանց գործնական կիրառությունները: «Ի՞նչ է առակը եւ ինչո՞ւ են խոսում առակներով» հարցին Տաթեւացին տալիս է հետեւյալ պատասխանը. «Առակն այն է, որ այլով զայլ ինչ ուսուցանեն, որպէս առակ սերմանն եւ այլն: Եւ սա ի չորս բաժանի, այսինքն նոյնով զնոյն (սա յայտնի է). այլով զայլ (սա առակն է). նոյնով զայլ (սա բարառնութիւնն է), եւ այլով զնոյն (սա վկայութիւնն է)»[13]:

Ի տարբերություն օրինակի, որը, ըստ Տաթեւացու, առարկայական է (իրօք է), առակը՝ բանիւ է: Իսկ թե ինչու են խոսում առակներով, նա պարզաբանում է, որ «առակաւոր խօսքը» հաստատուն է ու լավ է մտապահվում եւ հեշտալուր լինելու պատճառով է ընտրվել իբրեւ մանկանց, այսինքն՝ երիտասարդներին խրատելու միջոց: Երկրորդ՝ «իմաստիւք լսեսցեն» եւ երրորդ՝ ներքին իմաստները ծածկված է պահում անարժաններից: Իսկ ընդհանրապես՝ առակը «ուսուցանէ մեզ զբարոյական առաքինութիւնս»[14]:

Ինչպես նշեցինք, տեսական հարցադրումներին Տաթեւացին հաճախ զուգորդում է դրանց հմուտ կիրառությունները: Թեւավոր խոսքի են վերածվում նրա ամփոփումները, ինչպես, օրինակ, «Աստուած յԱստուծոյ ծնանի, եւ մարդ ի մարդոյ»[15], «Մերկ ձեռն հրացեալ երկաթի ո՛չ օգնէ»[16]

Մեր կարծիքով, հետաքրքրությունից զերծ չէ նաեւ այն, որ «առակաւոր խօսքին» որեւէ հատվածում հաճախ պարփակված են նաեւ ժամանակի գիտելիքները այս կամ

այն բնագավառի վերաբերյալ: Այսպես, օրինակ, համեմատելով մարդկային միտքը և վերընթաց բարձրացող ջուրը, Տաթեւացին գրում է. «Ինպէս ջուր շուրջանակի խողովակաւ պնտեալ ի վեր ելանէ, միտք պնդեալ ժուժկալութեամբ ի վեր ի բարձունս ելանէ»[17]: Կամ՝ «Զփտեալ առամն հանեն, զի մի այլքն ապականեսցեն»[18], «Գայլն ի ծերութեան իւրում առաւել խորամանկէ», «Քար անկեալ ի ծով ոչ դադարի մինչեւ իջանէ յատակս նորա»[20]: Սրանք բոլորն էլ փոխաբերական նպատակ հետապնդող մտքեր են:

«Ամենայն պատուական իր ի բարձր տեղւոջ է»[21], – գրում է Տաթեւացին: Մեր հայրերի կողմից բառի նկատմամբ միշտ երկյուղած եւ հարգալից վերաբերմունք է եղել: Հավանաբար, ամենապատվական «բանը» նրանց համար իսկապես խոսքն է (իմա՝ բառը) եղել, որ դարձյալ կարիք ունի դրվելու ամենաբարձր տեղում:

Ծանոթագրություններ

1 Բառարան Սուրբ Գրոց, հանդերձ պատկերօք, աշխարհացուցօք եւ տախտակօք, Կ.Պոլիս, 1881, էջ 47:
2 Համամայ Արեւելցւոյ Մեկնութիւն առակաց, Մ.Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 1151, էջ 13ա:
3 Անդ, էջ 40ա:
4 Այս բառը, ինչպես եւ հաջորդ հատվածում հիշատակված *բոզորտող* բառը արձանագրված չեն ոչ մի բառարանում, հետեւաբար կարելի է ենթադրել, որ դրանք հենց իր՝ Համամ Արեւելցու կերտած բառերն են:
5 Անդ, էջ 47բ:
6 Անդ, էջ 49ա:
7 Ներսէս Լամբրոնացի, Մեկնութիւն առակաց, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 1144, էջ 3բ:
8 Անդ, էջ 160 բ:
9 Անդ, էջ 2 բ:
10 Անդ, էջ 2ա:
11 Անդ, էջ 25բ:
12 Անդ, էջ 85բ:
13 Գրիգոր Տաթեւացի, Համառատ հատորումն յառակաց գրոցն Սողոմոնի, ի լուսաւոր բանից մեծին Ներսէսի Լուծմունք առակաց, Մ.Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 5869, էջ 89ա:
14 Անդ, էջ 325ա:
15 Նոյնի՝ Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729, էջ 272.
16 Նոյնի՝ Գիրք որ կոչի Ոսկէփորիկ, Կ.Պոլիս, 1746, էջ 19:
17 Նոյնի՝ Գիրք քարոզութեան, Ամարաս, Կ.Պոլիս, 1741, էջ 416:
18 Անդ, էջ 310:
19 Նոյնի՝ Գիրք քարոզութեան, Ջմեռան, Կ.Պոլիս, 1740, էջ 284:
20 Անդ, էջ 296:
21 Նոյնի՝ Գիրք հարցմանց, էջ 662:

Հասմիկ Մկրտչյան

ՀԱՅԵՐԻ ԵՎ ՄԵԼՔԻՏՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Հայ առաքելական եկեղեցու և քրիստոնյա-արաբական հին եկեղեցական հայմայրերի /մելքիտ, հակոբիկ, նեստորական, դպտի, մարոնի/ միջև փոխհարաբերությունների պատմությունը վաղ միջնադարից մինչև մեր օրերը, դեռևս առաձին, ամբողջական ուսումնասիրության նյութ չի դարձել, թեև նրա առաձին շրջաններին նվիրվել են որոշ ուսումնասիրություններ:

Սույն հոդվածի հիմնական նպատակը ոչ թե զուտ միջեկեղեցական կապերի կամ դավանաբանական խնդիրների, այլ, նախ և առաջ, այն մշակութային առնչությունների լուսաբանումն է, որոնք գոյություն են ունեցել հայերի և "քրիստոնյա արաբների" միջև: Սակայն քանի որ զուտ կրոնական, միջեկեղեցական հարաբերությունները միջին դարերում կարևոր դեր էին խաղում՝ նպաստելով կամ, ընդհակառակը, խոչընդոտելով մշակութային կապերի առաջացմանը, ապա առանց առաջինների ուսումնասիրության հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել վերջիններիս մասին:

Անհրաժեշտ է ճշտել նաև, թե ինչ նկատի ունենք "քրիստոնյա արաբներ" բնորոշմամբ: «Խոսքը վերաբերում է ոչ միայն նրանց, ովքեր արաբական ծագում ունեն, այլև բոլոր նրանց, ովքեր, լինելով արաբ կամ արաբացած, արամեացի կամ պարսիկ, ապրել և աշխատել են մահմեդական երկրներում՝ արաբական տիրապետության ներքո, ճիշտ այնպես, ինչպես, մեր օրերում, Սիբիայում կամ Իրաքում ապրող և այդ երկրների հպատակներ հանդիսացող հայերը կամ քաղդեացիները դիտվում են որպես արաբներ»[1]: Այսպիսին է իրենց՝ քրիստոնյա արաբների կարծիքն այդ մասին:

Հայերը և քրիստոնյա արաբները դարեր շարունակ ապրել են կողք-կողքի՝ պատմական Հայաստանում, Կիլիկիայի Հայկական թագավորությունում, Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում, Իրաքում, Եգիպտոսում և մյուս արաբական երկրներում, ուր հնուց ի վեր գոյություն են ունեցել և առ այսօր գոյություն ունեն բազմաթիվ հայկական գաղթավայրեր: Նման երկարատև համագոյակցությունը հանգեցրել է նրան, որ նրանց պատմությունը, մշակույթը և ճակատագրերը, կարելի է ասել, մասամբ միահյուսվել են:

Ինչպես և պետք էր սպասել, հայագիտության մեջ համեմատաբար հանգամանորեն են ուսումնասիրված հայերի առնչությունները հակոբիկյանների հետ. դարեր շարունակ միաբնակ հայերը սերտ կապերի մեջ են եղել, նախ և առաջ, միաբնակ ասորիների, այսինքն՝ հակոբիկյանների հետ, և մշակութային արժեքների փոխանակում տեղի է ունեցել, ամենից հաճախ, նրանց հետ: Իսկ ինչ վերաբերում է մելքիտներին և նեստորականներին, այսինքն՝ երկաբնակներին, ապա Հայոց եկեղեցին նրանց հանդեպ ցուցաբերել է պակաս հանդուրժողականություն, որը թելադրված է եղել իր անկախությունը և ազգային ինքնությունը պահպանելու ձգտմամբ: Դա, իհարկե, խոչընդոտել է փոխադարձ մշակութային կապերի սերտացմանը, սակայն, այդուհանդերձ, չի կարելի ասել դրանց իսպառ բացակայության մասին:

Հայերի հետ սերտորեն առնչվել են նաև միաբնակ դպտիները, ինչպես նաև մարոնիները: Այլ կերպ ասած, մշակութային կապեր գոյություն են ունեցել փաստորեն բոլոր դավանանքներին պատկանող քրիստոնյա արաբների և հայերի միջև, սակայն դրանց պատմության շատ էջեր առ այսօր մնում են քիչ ուսումնասիրված կամ բոլորովին չուսումնասիրված:

Մելքիտ[2] եկեղեցու գոյության սկզբնական շրջանում Հայոց եկեղեցին, պիտի ենթադրել, անհանդուրժողական վերաբերմունք է ունեցել նրա նկատմամբ: Հայկական աղբյուրներում *մելքիտ* բառը չի հանդիպում, կարելի է գտնել միայն "քաղկեդոնականներ" անորոշ հորջորջումը[3], որով, ի դեպ, անվանվում են երկաբնակներն ընդհանրապես, առանց զանազանության՝ ըստ ազգային պատկանելության: Այդ իսկ պատճառով մելքիտներին վերաբերող տեղեկությունները հայկական աղբյուրներում հազվադեպ են ու կցկտուր, և երբեմն, երբ խոսվում է ընդհանրապես քաղկեդոնականների մասին, դժվար է որոշել, թե հատկապես ո՛ր քաղկեդոնականների մասին է խոսքը: Հայկական և օտար աղբյուրների տվյալների համադրումը թույլ է տալիս որոշ պատկերացում կազմել միջին դարերում հայերի և մելքիտների փոխհարաբերությունների վերաբերյալ:

Այսպես, ասորական աղբյուրների /Դիոնիսիոս Թելմահրացի, IX դ., և Միխայիլ Ասորի, XII դ./, ինչպես նաև XIII դ. հայ պատմագիրներ Վարդանի և Մխիթար Այրիվանեցու վկայությամբ, IX դ. սկզբին մելքիտները փորձ են կատարել Հայաստանում արմատավորելու քաղկեդոնականությունը, սակայն դիմադրության են հանդիպել ոչ միայն հայերի, այլև հակոբիկյան ասորիների կողմից, որոնք, միանալով հայերին, ձախողել են այդ փորձը: Դա տեղի է ունեցել հետևյալ կերպ: 812 թ. Երուսաղեմի մելքիտ պատրիարք Թովմասը /807-821 թթ./ հանձնարարել է Թեոդորոս Աբու Կուռային՝ քաղկեդոնականության եռանդուն ջատագովին, ուղերձ հղել միաբնակ հայերին, հորդորելով նրանց ընդունել քաղկեդոնականությունը: Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին /մեռ. 826 թ./, ստանալով այդ ուղերձը, իր մոտ է հրավիրում Թեոդորոս Աբու Կուռային: Սակայն հայոց իշխանը միաժամանակ ճամակով դիմել էր նաև հակոբիկյան վարդապետ Հաբիբ իբն Խիդմա Աբու Ռայթային /ըստ հայկական աղբյուրների՝ Բուրէտ/, ցանկանալով իմանալ նրա կարծիքն այդ մասին: Աբու Ռայթան Աշոտ Բագրատունու մոտ է ուղարկում հակոբիկյան սարկավագապետ Նաևա Մծբինացուն, որը հաղթում է Թեոդորոս Աբու Կուռային կրոնական բնույթի "բանավեճ-մենամարտում" և դրանով իսկ "հայերին փրկում մոլորությունից": Եվ մելքիտ ջատագով Աբու Կուռան, ամոթահար եղած, ստիպված է լինում ձեռնունայն հեռանալ Հայաստանից:

Ն.Մառի կարծիքով, «Միջագետքյան քաղկեդոնականության հետ հայ քաղկեդոնականության ունեցած կապի մասին է վկայում Թեոդորոս Աբուկուռայի՝ Խառանի եպիսկոպոսի հայտնի առաքելական ուղերձը դեպի Հայաստան»[4]: Ըստ Վ.Հարությունովա-Ֆիդանյանի, «IX դ. քաղկեդոնականները, հաստատվելով Հյուսիսային Հայաստանում, փորձ արեցին հաղթանակի հասնել և կենտրոնականում», որի մասին է վկայում Թեոդորոս Աբու Կուռայի քարոզը՝ ուղղված Աշոտ Բագրատունուն[5]:

Եվս մեկ մելքիտ գործչի /կամ, հնարավոր է, մի քանի գործիչների/ Հայաստանում գտնվելու մասին են վկայում արաբական աղբյուրները /ինչպես քրիստոնյա-արաբական, այնպես էլ մահմեդական-արաբական/՝ Իբն ան-Նաղիմը /X դ./, Իբն ալ-Կիֆտին /XII դ./, Իբն Աբի Ուսայբիան /XII դ. վերջ-XIII դ./, Բար Հեբրեոսը /XIII դ./[6]: Նշված աղբյուրները հաղորդում են, որ մելքիտ հայտնի գիտնական, բարգմանիչ և բժիշկ Կոստա իբն Լուկա Բաալբեքցին[7] /820-912 կամ 913 թթ./ հրավիրվել է Հայաստան Սանհարիբի /այսինքն՝ Սենեքերիմի/ կողմից՝ գիտական-բարգմանական գործունեություն ծավալելու համար: Այստեղ նա մնացել է մինչև իր մահը և այստեղ էլ թաղվել: Ի նշան մեծարանքի, նրա գերեզմանի վրա կառուցվել է դամբարան՝ նման թագավորների և

հոգևոր առաջնորդների դամբարաններին: Արաբ պատմագիրները հաղորդում են նաև, որ Կոստա իբն Լուկան իր հետ Հայաստան է բերել բազմաթիվ գրքեր՝ տարբեր ածանց համար, որոնց թվում է եղել նաև ոմն Աբու-լ-Ֆիտրիֆ ալ-Բիտրիկ[8], այսինքն՝ Եվգենիոսի հայր Պատրիկը /Ֆիտրիֆ արաբերեն նշանակում է «ազնվազարմ», ինչպես և հունարեն Եվգենիոս անունը/: Արդյո՞ք այս Աբու-լ-Ֆիտրիֆ ալ-Բիտրիկը, եթե դատելու լինենք ըստ նրա «հունանման» անվան, նույնպես մելքիտ չի եղել: Եվ արդյո՞ք Կոստայի բերած գրքերի թվում չի եղել նաև կրոնական բնույթի, այսինքն՝ քաղկեդոնական գրականություն:

Հայկական աղբյուրներում այս ամենի մասին ոչինչ չի ասվում[9]: Նախքան հետագա դատողություններին անցնելը, անհրաժեշտ է ճշտել, թե ո՞վ է արաբական աղբյուրների հիշատակած Սեներերիմը: Ն.Մառը նրան նույնացնում է Վասպուրականի թագավոր Սենեքերիմի հետ, նշելով նրա կառավարման հետևյալ տարիները՝ 1003-1024 թթ.[10]: Միաժամանակ նա հղում է Ղ.Հովնանյանին, /որն, ի դեպ, առաջինն է ուշադրություն դարձրել Կոստայի՝ «հայ իշխանի մը մօտն եկած» լինելու փաստին/, տարակուսանք հայտնելով այն կապակցությամբ, որ, ըստ Ղ.Հովնանյանի, Կոստան վախճանվել է 923 թ.[11]: Վ.Վարդանյանը համաձայնվում է Ն.Մառի նույնացման հետ[12]: Ա.Տեր-Ղևոնդյանը գրում է. «Կոստա իբն Լուկան... այցելել է Հայաստան և վայելել Վասպուրականի Արծրունիների հովանավորությունը», չկոնկրետացնելով, սակայն, թե Արծրուններից հատկապես ո՞ւմ մասին է խոսքը[13]: Սակայն Սենեքերիմ Արծրունու իշխանության տարիները /ըստ նորագույն ուսումնասիրությունների՝ 968-1021 թթ./ և Կոստայի կյանքի տարիները համեմատելիս ի հայտ է գալիս անհամապատասխանություն:

Ասորական աղբյուրները վկայում են, որ Կոստան եղել է արաբական նշանավոր փիլիսոփա, բժիշկ և մաթեմատիկոս ալ-Քինդիի ժամանակակիցը /որի մասին հայտնի է, որ նա ապրել է 805 և 873 թթ. միջև/ և ողջ է եղել նաև Աբբասյան խալիֆ ալ-Մուկթադիր Բիլլահի /908-932 թթ./ օրոք[14]: Այդպիսով, ակնհայտ է, որ կամ արաբական աղբյուրները ճիշտ չեն անվանում այն Արծրունու անունը, որը հովանավորել է Կոստային /ինչը քիչ հավանական է/, կամ էլ, բացի հիշյալ Սենեքերիմ Արծրունուց, գոյություն է ունեցել ևս մի Սենեքերիմ Արծրունի՝ առաջինի անվանակիցը և Կոստայի ժամանակակիցը[15]:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ քրիստոնյա-արաբական բոլոր հինգ եկեղեցական համայնքներից հենց մելքիտներն են ամենամեծ հետաքրքրությունը ցուցաբերել Ագաթանգեղոսի "Պատմության" /ինչպես նրա ընդարձակ, այնպես էլ համառոտ խմբագրության՝ "Վարք Գրիգոր Լուսավորչի"/ նկատմամբ: Մելքիտական հայտնի Ս. Կատարինե վանքում /Եգիպտոս, Սինայ/ պահվում են այդ գրական հուշարձանի մի քանի արաբերեն ձեռագրեր: Ինչպես պարզել են ուսումնասիրողները՝ թե՛ ընդարձակ, թե՛ համառոտ խմբագրությունների արաբերեն թարգմանություններն արվել են հունարեն բնագրերից, որոնք էլ, իրենց հերթին, թարգմանված են հայերենից: Արաբերեն թարգմանություններն արվել են, ինչպես ենթադրվում է, IX-X դդ., մելքիտական միջավայրում[16]:

Կիլիկյան Հայաստանում մելքիտների և հայերի փոխհարաբերությունների մասին մեզ հասած տեղեկությունները նույնպես քիչ են: Երբեմն կարելի է անուղղակի տեղեկություններ քաղել ձեռագրերի հիշատակարաններից, ինչպես, օրինակ, կիլիկյան բժիշկ Ֆարաջ Ասորու "Բժշկարան ձիոյ" երկի հիշատակարանից: Այսպես, Ֆարաջը գրում է. «...Եւ եմ ազգաւ և հաւատով ասորի, աստուածապաշտութեամբ կատարեալ ուղղափառ: Եւ աշխատեցայ բարգմանել զբժշկական և զիմաստասիրական գիրքս ի մայրաքաղաքս Սիս», «...հրամանաւ քրիստոսասէր արքային հայոց Սմբատայ իմաստնո...»[17] /այսինքն՝ 1296-1298 թթ./:


Այն, որ Ֆարաջն իրեն անվանում է «ազգաւ և հաւատով ասորի», հուշում է մեզ, որ «կատարեալ ուղղափառ» արտահայտությունը պետք է հասկանալ որպես «միաբնակ», այսինքն՝ հակոբիկյան: Ֆարաջի ծգտումը՝ ընդգծելու իր պատկանելությունը հակոբիկյան եկեղեցուն, հակադրելով իրեն՝ որպես «կատարեալ ուղղափառի», մյուս ուղղափառներին՝ քաղկեդոնականներին, խոսում է այն մասին, որ միաբնակ հայերի վերաբերմունքը մելքիտների նկատմամբ կիլիկյան շրջանում նս շարունակել է մնալ ոչ սերտ:

Սակայն Կիլիկիայի Հայկական թագավորության անկումից հետո /1375 թ./ իրադրությունը փոխվում է: Սկսվում է հայերի արտագաղթը Կիլիկիայից: Արտագաղթածների մի մասը հաստատվում է Սիրիայում, հատկապես Հալեպ քաղաքում, դրանով իսկ նպաստելով այստեղ ավելի վաղ հիմնված հայկական գաղթավայրի հայերի թվի աճին:

Ուշ միջնադարում հայ-մելքիտական մշակութային առնչությունների վառ արտահայտությունն է մի շարք հայ նկարիչների՝ Մուսաուվիրների ընտանիքի չորս սերնդի ներկայացուցիչների /XVII-XVIII դդ./, ինչպես նաև Հանինա Երուսաղեմցու /XVIII դ./ ստեղծագործությունը: Մուսաուվիրները դավանանքով եղել են մելքիտ և իրենց մեծ ավանդն են ներդրել մելքիտների մշակութային ժառանգության ստեղծման գործում: Մուսաուվիրների ընտանիքի ավագ ներկայացուցիչը Յուսուֆ ալ-Մուսաուվիրն[18] է /արաբերեն՝ "Հովսեփ-Նկարիչ"/: Նա ծնվել և ապրել է Հալեպում: Սերտորեն կապված է եղել մելքիտական հնուելկտուալ շարժման ներկայացուցիչների հետ, որի ղեկավարն էր Մելես Քարմեն /հետագայում՝ մելքիտ պատրիարք Եվթիմիոս II/, եղել է վերջինիս աշակերտը: Քարմեի մահից հետո Յուսուֆը դարձել է պատրիարք Մակարիոս III Հալեպցու «հոգևոր աշակերտը»: Եղել է բահանա, գերազանց տիրապետել հունարենին և արաբերենին: Հունարենից արաբերեն է թարգմանել մի շարք գրքեր: Լինելով հոյակապ գեղագիր և տաղանդավոր նկարիչ, ընդօրինակել և ծաղկել է մի շարք արաբերեն ձեռագրեր: Պատրիարք Մակարիոս Հալեպցու՝ դեպի Ռուսաստան կատարած հանրահայտ ճանապարհորդությունից հետո մելքիտ եկեղեցու առաջնորդը միտք է հղացել ստեղծել մելքիտական սրբապատկերներ, որոշ հետազոտողների կարծիքով, ռուսական սրբապատկերների ուժեղ ազդեցության տակ[19]: Հալեպ վերադառնալուց հետո պատրիարք Մակարիոսը Յուսուֆ ալ-Մուսաուվիրին հանձնարարել է նկարել առաջին մելքիտական սրբապատկերները: Այդպիսով, Յուսուֆը դարձել է մելքիտական սրբանկարչության և, մասնավորապես, վերջինիս Հալեպյան դպրոցի հիմնադիրը[20]: Նա վախճանվել է 1660 և 1667 թթ. միջև ընկած ժամանակահատվածում: Նրա աշխատանքները պահվում են Սիրիայի որոշ մելքիտական եկեղեցիներում և մասնավոր անձանց հավաքածուներում /Հալեպ, Բեյրութ/:

Յուսուֆի որդին՝ Նեմեհը /կամ Նիմաթուլլահը/, նույնպես եղել է քահանա և նկարիչ: Նա ևս ծնվել և, հավանորեն, իր ողջ կյանքն անց է կացրել Հալեպում, սակայն նրա սրբապատկերները գրված են Սիրիայով մեկ: Նրա գործերը վերաբերում են 1694-1722 թթ.: Նրա ամենահայտնի գործերի թվին է պատկանում "Աիեղ դատաստանը", նկարված 1694 թ. /այժմ պահվում է մելքիտական Բալամանդի Աստվածամոր վանքում, Կյուրա, Լիբանան/, այնուհետև կրկնօրինակված իր որդու՝ Հանանիայի հետ միասին, Հալեպի Ս.Քառասուն մանկունք հայկական եկեղեցու համար /1708 թ./, ուր և գտնվում է առ այսօր[21]:

Հանանիան՝ Նեմեհի որդին, սովորել է, անկասկած, իր հոր մոտ, և նրանց նկարելաոճերը այնքան նման են իրար, որ թվում է, թե երբեմն նրանք աշխատել են միասին: Հանանիան եղել է սարկավագ: Նրա նկարները պահվում են Կյուրայում /Լիբանան, Բալամանդի Աստվածամոր վանք/ և Բեյրութում /Նիկոլա Սուրոկի բան-



Յուսուֆ ալ-Մուսաուվիր, Հիմն Սուրբ կույսի, մինչև 1667, Բեյրութ, Ացրի Ֆարաոնի հավաքածու



Նեմեհ, Աիեղ դատաստան (դրվագ) (1694 ?), Լիբանան, Կյուրա, Բալամանդի Աստվածամոր վանք

գաբան/: Նրա "Ս.Գևորգ" գործը պահվում է Հալեպի Ս.Քառասուն մանկունք հայկական եկեղեցում:

Ջուղայի խաչքարերի ճակատային մշակման ամենաբնորոշ տարրը ձգված, ցռուկաձև վերջավորությամբ խորշն է, որի մեջ քանդակված է ստորին, արտակարգ երկար թևով խաչը: Խորշի հիմքը՝ խաչի շուրջը ծածկված է զարդաքանդակով, հետևաբար խաչքարի հարդարանքը երկու հարթությամբ է իրականացված: Խորշն ունենում է և մի այլ վերջավորություն՝ պայտաձև կամարիկի և ցռուկի զուգակցումով: Ըստ բարձրության՝ խաչքարի մակերեսը բաժանվում է մի շարք գոտիների. վերին՝ ծովորը մշակված է կամարիկներով (որոնց մեջ խաչեր կամ պատկերաքանդակներ են տեղադրված), միջին՝ հիմնական խաչով խորշն է, նրանից ներքև՝ ոլորաձև, քանդակազարդ ցցուն շրջանը, իսկ ստորին գոտին հատկացված է արձանագրությանը և պատկերաքանդակներին:

Ջուղայի խաչքարերը զուտ քանդակագործական արվեստի գործեր են և էապես տարբերվում են ինչպես իրենց ժամանակակից Գեղարքունիքի դպրոցի, այնպես էլ X-XIV դդ. խաչքարերից, և միաժամանակ նաև ճարտարապետական փոքր ձևեր են: Այսպես, օրինակ, Ջուղայի խաչքարերը, առանց բացառության, չունեն պատվանդան և քիվ: Նրանք սոսկ քարե ուղղանկյուն սալեր են, անմիջականորեն հողի մեջ խրված: Կառուցողական տեսակետից դա անհաջող ձև է, որովհետև դարերի ընթացքում անձրևներից և խոնավությունից, հողի մեջ տարալուծված աղերի ազդեցությունից խաչքարերի ստորին մասն առանց պատվանդանի քայքայվում է, որի հետևանքով շատերի արձանագրություններն ու պատկերաքանդակները չեն պահպանվում:

Մեծ մասամբ Ջուղայի մոտ երկու մետր բարձրություն ունեցող խաչքարերի մյուս բնորոշ գիծը խիստ ձգված, ուղղածիգ համաչափություններն են: Այսպես, եթե ուշ միջնադարի (նաև ավելի վաղ՝ XIII-XIV դդ.) խաչքարերի լայնության և բարձրության հարաբերությունը հիմնականում 1:2,1 – 1:2,4 է, ապա Ջուղայի խաչքարերում այն մեծ մասամբ 1:3,2 է: Այսպիսի համաչափությունները Ջուղայի խաչքարերին տալիս են բավական յուրօրինակ ուրվագիծ՝ խիստ տարբեր խաչքարային մյուս դպրոցների կոթողներից:

Հարդարանքի հիմնական տարրերի և նրանց զուգակցման տարբերակների արտակարգ բազմազանությունը Ջուղայի վարպետների ստեղծագործական տաղանդի դրսևորումն է, որը յուրաքանչյուր խաչքարին անհատական կերպար է հաղորդում: Ջուղայի դպրոցին բնորոշ և ինքնատիպ լուծումներից է հիմնական մեկ խոշոր խաչի փոխարեն զույգ՝ միմյանց կողքի քանդակված խորշերի մեջ երկու խաչ տեղադրելը: Խորշերը մեծամասամբ ունեն պայտաձև կամար, ինչպես նշվեց՝ ցռուկաձև գագաթով: Այդ խաչքարերի լավագույն օրինակներն են Մանուկ Պետրոսի (1596 թ.), Ղալամի և նրա կին Դշխուհու (1598 թ.), Հովհաննեսի (1600 թ.) հիշատակին կանգնեցվածները[6]:

Եզակի է Հակոբին նվիրված (1601 թ.) խաչքարը (այժմ Էջմիածնում): Այստեղ կենտրոնական մեծ խաչը ներառված է խաչաձև խորշի մեջ, իսկ ուղղանկյուն շրջանակի միջև ստացվող անկյունային չորս տարածությունը մշակված է ավելի փոքր խաչերի քանդակների խորշերով: Խաչքարերը տարբերակվում են նաև վերին գոտու՝ ծովորի կամարակապ փոքրիկ խորշերի քանակով. այն տատանվում է երեքից մինչև յոթը: Խորշերը հիմնականում ունեն պայտաձև կամար՝ ցռուկաձև գագաթով, և նրանց մեջ փոքրիկ խաչեր են քանդակված:

Խաչքարերի շարքում ճոխությամբ առանձնանում է քաղաքագլուխ Խոջա Խաչիկի խաչքարը (1604 թ.), որը ժամանակագրական առումով Ջուղայի վերջին կոթողներից է: Նրա ծովորն ունի յոթ կամարակապ խորշ և վերջիններիս քանակով այն եզակի է: Կամարաշարը տարբերվում է նաև իր ձևով (միջին խորշը կրկնակի լայն է) և քանդակներով: Ավանդական խաչերի փոխարեն կենտրոնում Քրիստոսի պատկերաքանդակն է գահի վրա, շուրջը չորս ավետարանիչների խորհրդանշաններով, իսկ երկու կողմի երեքական խորշերում ծնկաչոք հրեշտակների քանդակներն են[7]:



Ջուղա: Վարպետ Գրիգորի կերտած խաչքարը (1602 թ.):

Ջուղայում պատկերաքանդակներով քիվ սակավ է հանդիպում, ընդ որում՝ հիմնականում XVI դ. վերջի և XVII դ. սկզբի խաչքարերում (այդ տիպին է պատկանում, օրինակ, 1602 թ. վարպետ Գրիգորի կերտած խաչքարը): Պետք է կարծել, որ դա Ջուղայի դպրոցում ձևավորվող նոր ուղղություն էր, որը, սակայն, վերահաս տեղահանման և քաղաքի ավերման պատճառով չհասցրեց իր ավարտուն տեսքն ստանալ: Պատկերաքանդակները գրավում են վերևի ողջ գոտին՝ առանց խորշերի բաժանման: Քանդակվում են «Համբարձման» տեսարանը, «Քրիստոսը գահի վրա», գերադասված թեմա է ընդհանուր գլխով զույգ գրիֆոնների պատկերը: Ավելի բազմաթիվ են ստորին մասում պատկերաքանդակներ ունեցող խաչքարերը: Այստեղ ևս կա գերադասված թեմա՝ հեծյալը խաչը ձեռքին (հանդիպում են նաև հոգևորականներ), կան խնջույքի տեսարանի քանդակներ:

Ուշագրավ է, որ կատարման ձևով խաչքարերի վերին և ստորին մասերի պատկերաքանդակները զգալիորեն տարբերվում են՝ վերևում բարձրաքանդակ են, ցցուն, մշակված մանրամասերով, իսկ ներքևում հարթաքանդակ են, ընդհանրացված ձևերով, ընդ որում հեծյալի «տիպարային» քանդակը կրկնված է խաչքարերի մեծ մասում:

Ջուղայի խաչքարերը, չունենալով ճարտարապետական կառույցին բնորոշ ծավալային ջլատումներ, օժտված են, սակայն, նրանց փոխարինող (ինարկե, տեսողականորեն միայն) ճակատի հարկածև լուծումով: Այսպես, խաչքարերի մի մեծ խումբ հիմնական խաչի փոխարեն ունի չորս, կրկնակի անգամ փոքր խաչեր՝ տեղադրված երկու զույգով (մեկը մյուսի վրա) խոր, ցռուկածև կամարով չորս խորշում: Խորշերը բավականին խոր են փորված. նրանց լույս ու ստվերի ուժեղ խաղը մանրակերտ հարկաբաժինների պատրանք է ստեղծում: Տվյալ ենթախմբին պատկանող բազմաթիվ խաչքարերից իրենց նրբագեղությամբ և զարդաքան-

դակների ճոխությամբ աչքի են ընկնում պարոն Մկրտչի, Ծատուրի, Նազարի (1587 թ.) հիշատակին կանգնեցվածները[8]: Այս հորինվածքի տարբերակն է յուրաքանչյուր բաժանումում երեքական խորշ տեղադրելը: Խաչքարի լայնությունը չի փոխվում, որի հետևանքով խորշերը զգալի նեղ և սլացիկ են դառնում, ավարտվելով արդեն ավանդական ցռուկածև գագաթով պայտաձև կամարով: Նրանց միջի խաչերն էլ համապատասխանաբար ավելի ձգված են ստացվում: Այս լուծումն ունի, օրինակ, Մահդասի Ղալամի (1596 թ.) հիշատակին կերտված խաչքարը, որի վերին մասի՝ ծովորի հնգական կամարիկները խաչքարի հորինվածքին տալիս են ներքևից դեպի վեր թեթևացման պատրանք:

Ջուղայի վարպետները նաև փորձել են ավելացնել ուղղածիգ բաժանումների թիվը՝ կամարակապ խորշերը երեք շարքով տեղադրելով: Այս հորինվածքը, սակայն, տարածում չստացավ: Նրա բնորոշ օրինակն է ուստա Հայրապետի՝ 1572 թ. Գրիգորի հիշատակին կերտած խաչքարը: Այստեղ ծովորն ունի վեց փոքր կամարիկ, այնուհետև երկու շարք երկուական խորշերն են խաչերով, որոնցից ներքև ավանդական բանդակազարդ շրջանն է, իսկ ստորին գոտին նույնպես զույգ, ցռուկածև կամարով խորշեր են, որոնց մեջ, սակայն, խաչերի փոխարեն տեղադրված է արձանագրությունը: Ստացվում է, փաստորեն, ըստ բարձրության խորշերի չորս հարկ, որը ստեղծում է բարդ և կոթողային հորինվածքի տպավորություն, և խաչքարի ճարտարապետական կազմությունն այդ ձևով նորից իր արտահայտությունն է գտնում Հայաստանի ուշ միջնադարյան արվեստում:

Ջուղայի գերեզմանաքարերի մյուս տիպը խոյածև տապանաքարերն են, կողերին արձանագրություններով և հանգուցյալի արհեստը պատկերող քանդակներով:

Ջուղայի խաչքարերը եղան հայ միջնադարյան արվեստի այդ ինքնատիպ բնագավառի հազարամյա զարգացման եզրափակիչ փուլը, զգալիորեն հարստացնելով Հայաստանում ստեղծված և միայն հայ գեղարվեստական մշակույթին հատուկ այս հուշակոթողների ավանդական հորինվածքները:

Ծ ա ն ո թ ա գ ր ու թ յ ու ն ն ե ր

1 Ս.Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 137:
2 Տե՛ս անդ, էջ 184: Ընդուշտ կամ Ս.Բարխուդարյանի ցանկից դուրս մնացած ոչ քիչ անուններ:
3 Անդ:
4 Տե՛ս А.Л.Якобсон, Армянские хачкары, Ереван, 1986, с. 68.
5 Տե՛ս անդ, էջ 73-74:
6 Տե՛ս А.Айвазян, Джута, Ереван, 1990, табл. 132, 164, 184.
7 Տե՛ս անդ, նկ. 179:
8 Տե՛ս անդ, նկ. 116, 158, 163:

Վիգեն Ղազարյան

ՄԻՋԱՎԱՅՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Իբրև պատկերման սկզբունք՝ Թեոֆիլոս լատին քահանան (մոտ XII դ.) առաջադրում էր. "Նկարչության արվեստի համար հիմնականը գույների կոմպոզիցիան է՝ ուշադրություն դարձնելով նրանց խառնուրդին: Ուշադիր եղեք դրա համար և ճիշտ եղեք սահմաններն ընդգծելիս, որպեսզի ձեր նկարածը լինի ազատ զարդարված և ազատական ստեղծված"[1]: Էականը համարվում է գույների խառնուրդը "ուրվագծերի" մեջ, այնպես որ՝ ներգործությունը լինի օրնամենտալ, ազատ, ասես ծաղկազարդված:

Մենք դեռևս վաղուց ուշադրություն էինք հրավիրել Սարգիս Պիծակի մի հիշատակարանում "տնօրինական զարդ" արտահայտության վրա, ցույց տալով, որ վերջինս "օրնամենտ","ձև","լույս", "պայծառագունություն", նույնիսկ "կարգ", "տիեզերք" (միջնադարյան-պլատոնական աստվածաբանության ըմբռնումով) հասկացությունների համադրություն է[2]: Ընդունելով միջնադարյան, հատկապես հայկական մանրանկարչության երկչափ օրնամենտալ բնույթը՝ մենք մարդկանց և առարկաների պատկերումները զատում ենք ոչ միայն ֆոնից, այլև միմյանցից: Ֆոնից ֆիգուրի տարբերությունն այն է, որ ֆոնը համեմատաբար տարբերակված չէ, գտնվում է ֆիգուրի ուրվագծից դուրս, որը սահմանազատում է ֆիգուրը... սուբյեկտիվ տեղայնացման հետևանքով ֆիգուրը ավելի մոտ է թվում, քան ֆոնը[3]:

Ֆոնի և ֆիգուրների հարաբերությունը մենք պայմանականորեն կարող ենք անվանել հեռանկարի համակարգ: Դա այն պատկերատարածքն է, որի մեջ ընդգրկված են ներկայացված գործող անձինք: Իսկ միմյանց հետ գործողությամբ կամ իմաստով կապված մարդկային կերպարանքները գործում են ճարտարապետական կոլիսների (այդ թվում՝ նաև կահկարասու, կահույքի, քանի որ այն հաճախ կրկնվում է գրեթե նույն երկրաչափական բանաձևերով, ինչ ճարտարապետական կոլիսները) և բնապատկերի միջավայրում: Մ.Շ.Բունիմը առաջարկում է ֆիգուրները և օբյեկտները ներկայացնելու երկու հիմնական դասակարգում՝ կոնցեպտուալ (հղացքային) և օպտիկական, ընդ որում կոնցեպտուալը շեշտում է առարկայի ընդհանրացված շոշափելի կամ "ռեալ" ձևը, իսկ "օպտիկականը"՝ նրա տեսանելի (վիզուալ) ձևը: Երկրորդ դեպքում նշվում է խորքային՝ երրորդ չափումը[4]:

Միջնադարյան (այդ թվում կիլիկյան) մանրանկարչության մեջ մարդը այդ երկչափ (առանց խորքի կամ երրորդ չափման նշման) տարածքում հաճախ մեծ տեղ է գրավում ճարտարապետական աքսեսուարի համեմատությամբ: Իբրև ելակետ պետք է ընդունել, որ հայկական (նկատի ունենք հատկապես կիլիկյան) մանրանկարում բյուզանդահելլենիստական որոշակի ազդեցությամբ նկարված ֆիգուրները գործում են ոչ թե պատրանքային կամ գծային-տոնային հեռանկարի (լինի դա ուղիղ թե հակադարձ հեռանկար, այսինքն՝ հեռացող թե մոտեցող), այլ, եթե կարելի է ասել, "սիմվոլիկ" կամ "սխեմատիկ" տարածքում, որը մոտ է "տնօրինական զարդի" ըմբռնմանը (Արևմտյան Եվրոպայի տարածքում մինչև XII-XIII դդ. դա հատուկ էր հատկապես իռլանդական ազդեցությամբ կամ հենց իռլանդական մանրանկարչությանը, որը հակադրվում էր

բյուզանդահելլենիստական ազդեցություններին)[5]: Իսկ ավետարանիչներին կամ ավետարանական կերպարներին (Հիսուսի գլխավորությամբ) շրջապատող միջավայրը՝ ճարտարապետական թե բնապատկերային, հազիվ թե մերձավոր-արևելյան ծագում ունենա: "Սիմվոլիկ" կամ "սխեմատիկ" ասելով՝ նկատի ունենք ոչ թե նկարված երկթեք տանիքներով շենքերի, բուրգերի, լեռնային ու արահետային բնապատկերների, բեմատարածքների (պրոսցենիում) ուշ անտիկ ծագումնաբանությունը, այլ դրանց ենթարկումը Կիլիկիայում մոգական մի սիմվոլիզմի, որը, բացի գեղարվեստական դեկորատիվ պատկերատարածքից (թեև դրանք երբեմն հասնում են էմալային ցոլքերի), չի ճանաչում հեռանկարի այլ ձև՝ ուղիղ, հակադարձ, խորքային կամ մթնոլորտային[6]: Կան դրանց բոլոր արտահայտությունները տարբեր ցայտունությամբ, բայց հիմնական պատկերային հատկանիշը գունային "սիմվոլն" է կամ "սխեման" (այլաբանությունը): Նա առարկաներին նույնքան ուժ է հաղորդում, որքան գործող անձանց, և կիլիկյան վարպետները ձգտել են դարերի միջով մեզ հասցնել հենց գույնի այդ հնչեղությունը (նկատի ունենք գույնը դնելուց առաջ նախապատրաստական մեծ աշխատանքը, որ թույլ չէր տալիս ոչ միայն մանրէներին, այլ նաև խոնավությանը (իհարկե, որոշ աստիճանի) քայքայել ներկանյութը):

Երբ խոսում ենք գույնի ու պատկերատարածքի մոգական ուժի մասին, մենք նկատի չունենք հին արևելյան, պարսկական մոգությունը: Նույնիսկ նկատի չունենք հուռութքները, հմայիլները, գուշակությունները, կախարդանքները, որոնք մինչև այսօր էլ ապրում են իբրև մնացուկային երևույթ ժողովրդի զանազան խավերի գիտակցության մեջ: Մենք գերմանացի արվեստաբան Վ.Վորրինգերի օրինակով նկատի ունենք բնության և ճարտարապետության վերացարկումը՝ գեղանկարչական ավանդույթի և նկարչի երևակայության միջոցով: Այստեղ, հասկանալի է, խոսք չի կարող լինել բնության ուղղակի վերացարկման և ուղղակի վերարտադրության մասին. այստեղ խոսքը վերաբերում է անտիկ ավանդույթի վերացարկմանը բյուզանդական ավանդույթում (մանրանկարչության մեջ և խճանկարում) XI-XII դդ. և բյուզանդական ավանդույթի վերացարկմանը կիլիկյան ավանդույթում, որն իր գագաթնակետին է հասնում Սարգիս Պիծակի մանրանկարչության մեջ:

Վ.Վորրինգերն ուսումնասիրել է Եգիպտոսի, Բյուզանդիայի և Իրանի արվեստները, այսինքն՝ արվեստներ, որոնք "օրգանական բնությունը, ներառյալ նաև մարդուն, հանգեցնում են գծային-երկրաչափական ձևերի և հաճախ լիովին հեռանում օրգանական աշխարհից՝ հօգուտ մաքուր գծերի, ձևերի, գույների": "Օրնամենտը զատվում է այժմ... իբրև այնպիսի մի բան, որը չի հետևում կյանքի ընթացքին, այլ հաստատորեն կանգնում է կյանքին դեմ-հանդիման": Ապա՝ "օրնամենտը... ժամանակից դուրս վերցված ինչ-որ բան է. նա մաքուր տարածականություն է, հաստատուն և կայուն":

Նույն մոգականության (զարդաճևային կայունության) արտահայտությունն ենք տեսնում հայ միջնադարյան պոեզիայի (հատկապես XII-XIV դդ.) մի շարք նմուշներում, նորագույն ժամանակներում՝ իռլանդացի մեծագույն պոետ Յեյթսի "Բյուզանդիա" և "Նավարկում դեպի Բյուզանդիա" բանաստեղծություններում, որոնցում զգացվում է բյուզանդական էպոսի՝ "Վասիլ Դիգենիս Ակրիտասի", Ուայլդի հեքիաթների և Վ.Վորրինգերի ազդեցությունը[7]:

Թեև խորագիտակ մարդու համար ընկալելի է, բայց չի ուսումնասիրվել այն հարցը, որ հայ մանրանկարչության "բյուզանդամետ" նմուշները կամ արհեստակրատական նմուշների մի մասը տարբեր ժամանակներում օգտվել են տարբեր աղբյուրներից և նմուշներից, որոնք ժամանակային և տարածական լայն սանդղակ են գրավում: Կիլիկյան մանրանկարչության պարագայում կողմնորոշումը դեպի XI-XII դդ. բյուզանդական մանրանկարչությունն է, որի շատ օրինակներ քաղաքական, հոգևոր, դինաս-



Մատթեոս Ավետարանիչ , Ավետարան, XIII դ. (Մատենադարան, ձեռ. 2629):



Մանկանց կոտորածը, Ուռ մանրանկարիչների Ավետարան, XIII-XIV դդ.
(Մատենադարան, ձեռ. 7651):

տիական, ազնվական և այլ առնչությունների շնորհիվ կարող էին հայտնվել Կիլիկիայում (որտեղ հայտնվել էր նաև Մեծ Հայքի արիստոկրատիայի, այսինքն՝ նախարարության ծաղիկը): Այսպիսի մի օրինակ է Ֆլորենցիայի Լաուրենցիանա գրադարանի VI. 23 ձեռագիրը, որն ամենայն հավանականությամբ եղել է Կիլիկիայում (“Ուռ մանրանկարիչների Ավետարանի” 17 մանրանկարներ ուղղակի ընդօրինակված են այդ ձեռագրից, մի շարք մանրանկարներ էլ այնտեղից վերցվել են՝ փոխակերպվելով անճանաչելիության աստիճանի): Բյուզանդական այդ ճշգրտավոր մատյանն ունի հայերեն էջահամարներ (երևի՝ ըստ պրակների)[8]:

Եթե XIII դ. գոթական մանրանկարները գունային դաշնակումներով կողմնորոշված են դեպի վիտրաժները, կապույտի և կարմրի պեսպիսություններով[9], ապա կիլիկյան մանրանկարչությունը կողմնորոշված է դեպի ակնեղենը և ծաղիկների գույները (ինչպես բյուզանդական էմալը): Այդ պատճառով կիլիկյան մանրանկարներում ոսկին ավելի հնչուն է, քան գոթական և մահմեդական արվեստում, և հնչում է ավելի բազմաձայն կերպով: Ուրեմն, ոսկին, շենքերը, կահկարասին և բնապատկերը կազմում են այն միջավայրը, որտեղ գործում են կերպարները: Կիլիկյան մանրանկարչության մոգականության մի հայտանիշն էլ այդ ամենի վրա դրված հիմք գույների և նրանց ներսում դաշնակվող լրացնող գույների կայունությունն է: Կարմիրը՝ իր ոչ շատ երանգներով, կապույտը և կանաչը մեծ մակերեսներում՝ նույնպես իրենց քիչ երանգներով: Կարմիրի և կանաչի մեջ դաշնակող դեր խաղում է հիմնականում դեղինը՝ իրրև կամ մաքուր դեղին, կամ կարմիրի ու կանաչի հետ խառնուրդով զգույշ երանգավորում: Սպիտակը նույնպիսի դաշնակող դեր է խաղում կապույտի մեջ՝ կապույտի հետ նուրբ երանգավորումով: Վարդագույնը և մանուշակագույնը իրենց ներսում ուղեկցվում են սպիտակ երանգավորումով: Այդ ամենը ոսկու հետ ստեղծում են մոգական այն մթնոլորտը, որի մասին ակնարկեցինք սկզբում: Կան նաև այլ գույներ՝ դեմքերի, մարմինների մերկ մասերի, դրանց ուրվագծումների, որոշ, համեմատաբար ավելի ճանաչելի և նատուրալիստորեն պատկերվող առարկաների գույները, որոնք ամբողջ պատկերատարածքում գերակշռող չեն, շեշտում են մոգական-այլաբանական պարագաների գոյությունը (վազեր, մկրտության ավազան, սեղան, աթոռ, պահարան, թանաքաման, գրիչ, դանակ, օխրայաոսկեման պարեգոտ և այլն):

Մյուս հարցը գույների պլաստիկական կերպավորումն է, որը կապված է գունաթների ուղղորդվածության հետ, իսկ վերջինս էլ տարբեր է ծալազարդման դեպքում, դիմագծերի, դիմախաղի և ձեռածության դեպքում, ճարտարապետական և բնապատկերային դեկորներում: Այդ կերպավորումն ավելի մեղմ ու նրբագեղ է գոթական պլաստիկական կերպավորման համեմատ և ավելի դինամիկ՝ X-XII դդ. բյուզանդական մանրանկարչության համեմատ (պալեոլոգյան շրջանի մասին չենք խոսում, որովհետև նրա ծաղկումը համընկնում է կիլիկյան մանրանկարչության ավարտին կամ չգոյությանը): Ոսկին և գունային այդ համակարգը խոսում են աստվածային ներկայության մասին (լույսը ոչ միայն ոսկու շողն է, այլև ծիածանային կամ ակնեղենի մաքուր գույները)[10]:

Հաջորդ կարևոր հարցը միջավայրի պայմանականության և միջավայրի ու գործող անձանց կապվածության հարցն է գրական սյուժեի միջոցով: Դա միջնադարյան արվեստի համար կարևոր հարց է, որն արծարծել ենք ժամանակին “Ուռ մանրանկարիչների Ավետարանի” մանրանկարներում արտահայտված սյուժետային գծի առիթով[11]: Դրա պարզ և ուղղակի պատմողական ձևերը տեսնում ենք անտիկ վազանկարչության մեջ և պապիրուսե գտածոներից մի քանիսում, որոնք ներկայացնում են Հոմերոսին և անտիկ ողբերգակներին: Նրանցում սխեման պարզ է. ճարտարապետական դեկորը (պարզագույն պորտիկ, ֆրոնտոնով) անջատում է գործողությունները[12]: Քրիստոնեական արվեստում դրա տարբերակները շատ ավելի հարուստ են և բազմա-

զան. սիմվոլիկ սյուժետային բազմազանությունը հանգեցնում է նաև գեղարվեստական բազմազանության և սյուժեն ներկայացնելու ավելի մեծ հնարամտության, որի տարբերակները փորձել ենք ցույց տալ "Ութ մանրանկարիչների Ավետարանում", որտեղ, շնորհիվ նկարչական տարբեր եղանակների, զարմանալի չափով հաղթահարված է Ֆլորենցիայի Լաուրենցիանա գրադարանի VI. 23 ձեռագրի մանրանկարների համաչափ-դասական միապաղաղությունը:

Այս տիպի սյուժետային գիծ ունեցող մանրանկարները տարբեր են Վերածննդի շրջանի մեծապես իլյուստրատիվ (Բերնսոն) նկարներից, որի դեմ ընդվզեցին իմպրեսիոնիստները և Սեզանը[13]: Այս տիպի նկարներում մեծ դեր են խաղում ուրվագիծը և նկարչի հնարամտությունը: Նոր շրջանում, անտիկ վազանկարչության և Վինկելմանի գրքերի ազդեցությամբ, նման նկարներ ստեղծում էր անգլիացի նկարիչ Ֆլաքսմանը, որը գծանկարի իր ուրվագծային մաներայով մեծապես դրական ազդեցություն ունեցավ Էնգրի նրբագեղ, կատարյալ նոր-դասական գծանկարի վրա[14]:

Հայ նորագույն արվեստում սյուժետային գծի ուղղակի և այլաբանական ներկայացման արտակարգ հնարամտությամբ էր օժտված Հակոբ Կոջոյանը:

Ծ ա ն ո թ ա գ ր ու թ յ ու ն ն ե ր

1 Հղվում է ըստ՝ **L.Venturi**, History of Art Criticism, New York, 1936, p. 69.
2 Տե՛ս Վ.Ղազարյան, Սարգիս Պիծակ, Երևան, 1980 (տե՛ս "Ներածությունը" և "Հետևությունները"): Նույնի՝ Միջնադարյան պատկերըմրոնողության մասին, "Գարուն", 1982, 7, էջ 80-84:
3 Տե՛ս P.Francse, Восприятие формы и объектов, "Экспериментальная психология", ред.-сост. П.Фресс и Ж.Пиаже, вып. VI, М., 1978, с. 248-249.
4 Տե՛ս **M.Sch.Bunim**, Space in Medieval Painting and the Forerunners of Perspective, N.Y., 1940, pp. 4-5.
5 Կարոլինգյան, իռլանդական, նորմանդական և օթթոնյան պատկերատաբաժնքների մասին տե՛ս **O.Pacht**, Buchmalere: das Mittelalters, München, 1984, S. 173 և այլն:
6 Տե՛ս **Б.В.Раушенбах**, Пространственные построения в живописи, М., 1983 (այս ուշագրավ գիրքը պետք է զգույշ կարդալ. գիտական մոտեցումը գերակշռում է արվեստագիտականին):
7 Տե՛ս **W.Worringer**, Abstraktion und Eifuhlung, Berlin, 1908. Տե՛ս նաև **R.Wellerk** and **A.Warren**, Theory of Literature, N.Y, 1956, pp. 194-196.
8 Տե՛ս **T.Velmans**, Le Tetraévangile de la Laurentienne, Florence, Laur. VI.23, Paris, 1971.
9 Տե՛ս **И.П.Мокрецова, В.Л.Романова**, Французская книжная миниатюра XIII века в советских собраниях. 1200-1270, М., 1983, с. 23.
10 Գույների սրբազան նշանակության մասին տե՛ս Խորանների մեկնություններ, աշխ. Վ.Ղազարյան, Երևան, 1995: Նաև՝ Վ.Ղազարյան, Սարգիս Պիծակ («Հետևություններ»):
11 Տե՛ս Վ.Ղազարյան, Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դ. վերջ - XIV դ. սկիզբ), Երևան, 1984:
12 Տե՛ս **K.Weitzman**, Illustrations in Rûll and Codex, A Study of the Origin and Method of Text Illustration, Princeton, 1970.
13 Տե՛ս Պոլ Սեզան, Նամակներ, գրույցներ, Երևան, 1996:
14 Տե՛ս **K.Clark**, The Romantic Rebellion. Romantic versus Classic Art, N.Y, Evanston, San Francisco, London, 1973, p. 97 etc.

Աննա Արևշատյան

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ «ՋԱՅՆԻՑ» ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄՈՎՍԵՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ «ՅԱՂԱԳԱՍ ԿԱՐԳԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ» ԳՐՎԱԾՔԸ

Հայկական միջնադարյան երաժշտական տեսական-գեղագիտական միտքն ունի դեռևս չուսումնասիրված էջեր: Դրանցից են այսպես կոչված «ձայնից» մեկնությունները՝ եկեղեցու կողմից հաստատագրված համապարտադիր ութ ձայնեղանակների գլուխին ու մեկնությանը նվիրված մի շարք ինքնուրույն և բանաքաղված գրվածքները:

Մեր հոգևոր երաժշտության զարգացման կարևոր հանգրվաններից են VII-VIII դարերը: Այդ շրջանում մի շարք նշանակալի տեղաշարժեր են կատարվում շարականերգության մեջ նոր երաժշտա-բանաստեղծական տեսակների ներմուծման, պաշտոներգության հետագա բարեկարգման ուղղությամբ, հարստանում և նոր որակ է ձեռք բերում երաժշտական տեսական-գեղագիտական միտքը: Ահա այս շրջանի արգասիք է հայտնի քերական, աստվածաբան և ծիսագետ Մովսես Սյունեցու (Քերթողի) «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» երկասիրությունը, որը հայոց եկեղեցական ձայնեղանակներին նվիրված ամենավաղ գրավոր աղբյուրներից է: Նրանում առաջին անգամ տրված է հայկական *Ութձայն* համակարգի նորովի իմաստավորված ամբողջական նկարագրությունը և գեղագիտական մեկնությունը:

Առաջին անգամ այն հրատարակել է Հ.Քյուրտյանը «Անահիտ» հանդեսում, 1935 թ., իրեն պատկանող ձեռագրի հիման վրա, որն, ըստ Հ.Քյուրտյանի նկարագրության, ամենայն հավանականությամբ, Ժողովածոյ տիպի մատյան է, գրված Հովհաննես Դ. Անթէպցի Կիլիկիոյ կաթողիկոսի համար, 1605 թ., Աղանայի Ս.Աստուածածին եկեղեցում՝ գրիչ Գրիգոր երեցի կողմից[1]:

Երկրորդ անգամ մեզ հետաքրքրող բնագրին անդրադարձել է Ն.Թահմիզյանը «Մովսես Սյունեցին և նրա «Յաղագս կարգաց» գրվածքը» հոդվածում, ուր կազմել և գետեղել է նաև Մովսես Սյունեցու երկի քննական բնագիրը[2]:

Բնագիրն ուշագրավ է մի քանի տեսակետից.

ա) Ի տարբերություն նախորդ շրջանի հեթանոս աշխարհիկ երաժշտական տեսության և գեղագիտության մնացուկներ պարունակող տարաբնույթ գրվածքների, շատ ավելի միատարր է և ամբողջական՝ իր շարադրանքով, ներկայացնելով արդեն զուտ եկեղեցական երաժշտական տեսության և գեղագիտության մի նմուշ, որակապես մի նոր երևույթ:

բ) Հեթանոսական առասպելախառն պատկերացումներն այստեղ փոխարինվում են քրիստոսաբանական, վախճանաբանական մեկնություններով, որոնք սերում են մեկ կողմից՝ Հովհաննես ավետարանչի Հայտնության[3] և Ս.Աստվածածնի պարականոն տեսիլի[4], իսկ մյուս կողմից՝ արեոպագիտյան գրականության ավանդույթներից:

Լեզուն բարդ է, ուշ հունաբան դպրոցին բնորոշ: Ինչպես «Անահիտ» հանդեսի խմբագրությունն է նշել Հ.Քյուրտյանի ուղարկած նյութը տպագրելիս՝ «մեր Շարակա-

նին (ավելի ճիշտ՝ Սաղմոսարան-Ժամագրքին – Ա.Ա.) երաժշտական հորինվածքին աստվածաբանական, արվեստագիտական և պատմաբանական մեկնությունն է, բավական խորհրդավոր ու խրթին ոճով շարադրված»[5]:

Մովսես Սյունեցու երկասիրությունը, որն ազդանշում է հայկական Ութձայնի տեսական-գեղագիտական իմաստավորման երկրորդ փուլը, հստակորեն տարանջատվում է երկու հատվածի: Առաջինում զատորոշվում են *չորս բուն, չորս կողմ և երկու ստեղի* եղանակները, բնորոշվում նրանց զգայական-էթիկական բնույթը, նշվում ժամերգության մեջ կատարվող հանրածանոթ երգասացությունների պատկանելիությունը այս կամ այն ձայնեղանակին: Հեղինակը ձգտում է իր մեկնությամբ հիմնավորել ձայնեղանակների ծագման աստվածաշնչային կոնցեպցիան, այսպես. «Եւ արդ, քանզի նախկին հնչեաց բարբառն աստուածային՝ թէ Ո՞ւր ես Ադամ[6]. եւ երկրորդ՝ թէ Ո՞ւր է Աբել եղբայր քո[7]. եւ երրորդ՝ թէ Ո՞ւր է Սառա կին քո[8]. արդ այս ամենայն ձայնքս հաւրազատք են առաջի ձայնին, որոց՝ սրբոց Սրովբէիցն հնչումն յերկրիս՝ երկրորդ յօրինեցաւ փառաբանութեան երգըն: Քանզի յառաջին փառաւորչացն, յառաջին հրաշափառական ձայնիւ հնչեաց բարբառն յասելն՝ եթէ Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն[9]: Իսկ կողմն նորին՝ գողոքական մաղթանս ունի, եւ գերկրաւձգական աղաւթսն՝ երգ Մովսէսեան յերկրորդում խորանին վկայութեան[10], ըստ որում համաձայնի աւրհներգութիւն Մարիամայ՝ քեռն Ահարովնի՝ յերգելն ի Կարմիր ծովուն, թէ Աւրհնեսցուք զՏէր զի փառաւք է փառաւորեալ[11]» և այլն:

Ըստ Մովսես Սյունեցու, «երկրորդ ձայնն՝ զխմբական աղաչողութիւն ունի /.../, որպէս ասի յերկրորդ ձայնիւ երգեալ՝ յերկրորդ ժամու աւուրն: Իսկ կողմն նորին՝ ողբերգական ձայն. սովաւ յաւրինեցան Սաղմոսք ի սուրբ ի պահս քառասնորդացն եւ Քրիստոսի չարչարանաց աւուրն, ըստ երկրորդի զղջման ապաշխարողացն, զառաջին զբարեզարդութիւնն ոչ ունելով»[12]: Այնուհետև երրորդ ձայնը բնորոշվում է որպես իգական աղաչողություն ունեցող, իսկ նրա կողմ եղանակը որպես «գերկրալից ձայն, որ եւ վառ իսկ կոչի, այսինքն է՝ խիստ ձայն: Սովաւ յաւրինեցան Սաղմոսք աւուրն Արմաւենեաց, ի մտանելն Յիսուսի յԵրուսաղէմ, որոց եւ համաձայնի աւրհներգութիւն տղայոցն, յասելն եթէ Աւրհնեալ եկեալ անուամբ Տեառն[13]: Իսկ չորրորդ ձայն. զընդհանուր զբարոգութիւնն յայտնէ ըստ չորս անկիւնս աշխարհի, ըստ չորից ժողովոցս եւ ըստ չորից բաղկացութեան մարդոյս: Իսկ կողմն նորին՝ ուրախալից ձայն. սովաւ շարագրեցան ստողոգիականքն Սաղմոսք ի սուրբ Պասեքին, ի Յարութեանն Քրիստոսի, ի մի պարունակութիւն երկնայնոցն եւ երկրաւորացս, ըստ առաջին բաղկացութեանն»[14]:

Սրան հետևող մեկնությունն ունի վառ արտահայտված վախճանաբանական բնույթ, որը լեցնում է Հովհաննես Ավետարանչի հայտնության և Աստվածածնի տեսիլքի մի շարք տարբերությունների հետ ունեցած ուղղակի աղերսներով: Տվյալ մեկնությանը որոշ հապավումներով կամ հավելումներով կարելի է հանդիպել հետագայի գրեթե բոլոր «ձայնից» մեկնություններում, ուստի մեջ բերենք այն ամբողջությամբ. «Իսկ յապառնի ժամանակին՝ առաջին ձայնիւ հնչեցեալ լինի փողն Գաբրիէլեան, եւ գերեզմանք բանան, եւ մեռեալք յառնեն: Երկրորդ ձայնիւ լսի բարբառ՝ եթէ Փեսայ գայ, արիք ելէք ընդառաջ նորա[15]: Երրորդ ձայնիւ մարգարէքն վառին որպէս սպառազէնս առաջի նորա. եւ կողմն արդարոցն վերաբերի՝ հանապազ ընդ Տեառն լինելով: Չորրորդ ձայնիւ կարգի ատեանն ահագին, եւ նստի դատաւորն յաթոռն՝ դատել զաշխարհս արդարութեամբ: Իսկ կողմն առաջին՝ լալումն եւ կոծումն մեղաւորաց ի դժոխս: Իսկ երկրորդի կողմն՝ գեղ հրոյ յորդեալ ելանէ առաջի նորա: Իսկ երրորդի կողմն՝ նովաւ լսին բարբառք դիմադարձացն եւ անհաւատիցն՝ եթէ երթայք, անիծեալք, ի հուրն յաւիտենից, որ պատրաստեալն է սատանայի եւ հրեշտակաց նորա[16]: Իսկ չորրորդի կողմն՝ ուրախալից ձայն. նովաւ կոչին արդարքն՝ եթէ եկայք աւրհնեալք Հաւր իմոյ, ժառանգեցէք

զարքայութիւնն, պատրաստեալ ձեզ ի սկզբանէ աշխարհի[17]: Իսկ երկրորդի ստեղն՝ զորս գտեալ հրոյն, ճարակ եւ կերակուր իւր առնէ զամենեսեան: Իսկ վերջին ստեղն՝ պատրաստէ սիրելեաց իւրոց բաժակ փրկութեան եւ անմահութեան յարքայութեանն երկնից: Այս է պատճառ ձայնից երաժշտականաց»: Այսպես ավարտվում է Մովսես Սյունեցու մեկնության առաջին հատվածը[18]:

VII-VIII դդ. Ութձայնի պաշտոնապես վավերացված համակարգը կապված էր դեռևս միակ կանոնական ժողովածուի՝ հայկական հնագույն Սաղմոսարան-Ժամագրքի հետ: Եղանակները «բուն ձայների» և «կողմերի» զատորոշելը արտացոլում էր Ութձայնի չորս հիմնական և չորս օժանդակ /οι κύριοι καὶ πλάγιοι ἦχοι/ բաղադրամասերի բաժանելու համաքրիստոնեական սովորույթը, որի հիմքում ընկած էր հին հունական հնչյունաշարերի կամ ձայնեղանակների վերահիմաստավորված դասակարգումը[19]: Հայ միջնադարյան մտածողներին քաջ հայտնի էին ինչպես պյութագորյան, պլատոնական, այնպես էլ՝ ալեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչների երաժշտության հետ առնչվող տեսական-գեղագիտական հայացքները, ինչը վկայված է ոչ միայն բարձրարժեք հայերեն հնագույն բարգմանություններում, այլ նաև Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու և այլոց երկերում: Մեծ տարածում էին ստացել նաև Դիոնիսիոս Արեոպագացու /կամ նրա անվան տակ հանդես եկող հեղինակի/ երկերը: Հատկապես «Յաղագս երկնային քահանայապետութեանցն» աշխատության մեջ, ելնելով Եզեկիելի և Եսայիի մարգարեություններից, վերահիմաստավորվում է երաժշտության երկնային ծագման հեթանոսական գաղափարը և զարգացվում այն միտքը, թե, մասնավորապես, եկեղեցական երաժշտարվեստը երկրորդումն է կամ ընդօրինակումը սերովբեների և քերովբեների երգեցողության, որոնք երկնքում անդադար Աստծուն են փառաբանում[20], ասելով. «Սո՛րբ, սո՛րբ, սո՛րբ Տէր զօրութեանց, լի՛ է երկիր փառօք նորա»[21]: Այս դրույթով սկիզբ է դրվում աստվածային լույսը, շնորհը և գեղեցկությունը գովերգող գեղագիտական մի ողջ ուղղության համաքրիստոնեական երգարվեստում, որը տարբեր եկեղեցիներում ստանում է կալոֆոնիկ երգեցողություն՝ καλοφωνία, прекрасногласное, ангелогласное пение և, ավելի հատուկ դեպքերում՝ κεροωβικόν և херувимская песнь որակումները: Հայոց մեջ այն իր լավագույն դրսևորումն է ստացել Պատարագի գեղեցկագույն սրբասացություններում և Մաշտոցման արվեստում: Ամեն ինչից երևում է, որ VII-VIII դդ. հայ մտածողները /այդ թվում՝ Հովհան Օձնեցին, Ստեփանոս Սյունեցին և, նախ և առաջ, հենց Մովսես Քերթողը/ ձգտում էին արեոպագիտյան ոգով մեկնել ծեսի և պաշտամունքային երգեցողության հետ առնչվող այլևայլ հարցեր ու երևույթներ:

Տվյալ շրջանում դեռ վերջնականապես չէր կայունացել հայ եկեղեցու օրվա ժամակարգության ժամերի քանակը /այն տատանվում էր յոթ և ութ ժամերի միջև, որոնք ունեին խորհրդաբանական իմաստ/, ուստի Մովսես Սյունեցին իր երկասիրության մեջ անդրադառնում է նաև հայոց հնագույն Սաղմոսարան-Ժամագրքի ութամասն կառուցվածքին, փորձելով հիմնավորել այն աստվածաբանական դիրքերից: Ահա իր ժամանակի այդ կարևոր ծիսագիտական հարցին, որն աստվածաբանական-փիլիսոփայական բանավեճի առարկա է մնում ընդհուպ մինչև Գրիգոր Տաթևացին, ևվիրված է նրա երկասիրության երկրորդ հատվածը: Ըստ էության, երկրորդ մասը ժամակարգության մեկնություն է, որի մեջ կենտրոնական տեղը հատկացված է Երից մանկանց երգի մեկնությանը:

Անդրադառնանք նաև քննվող բնագրի խորագրին. «Մովսէսի Քերթողահայր /որը Ն.Թահմիզյանը ճիշտ ուղղում է՝ «Քերթողի»»/ յաղագս կարգաց եկեղեցւոյ բացայայտութիւնք»: Ենթախորագիրը դժվար ըմբռնելի լինելով, կարոտ է դեռևս հետագա մեկնաբանության. «Շարադրութիւն շարամանու Հոգեւոր երգարանիս ըստ երաժշտա-

կան չափոց՝ շտամբաձայնութեան, ստեղնաչափութեան, ութամասնեայ պատկանաւոր ձայնից պատճառք»: Ն.Թահմիզյանը, մեկնելով ենթախորագիրը, գալիս է ընդունելի եզրակացության, որ «Հոգեւոր երգարան» ասելով Մովսես Սյունեցին հասկանում է ութ սաղմոսակաևոնները, դրանց կից մարգարեական օրհնությունները և նաև երգեցիկ քարոզները, աղոթքներն ու մի քանի հին, համաքրիստոնեական ընդհանրացած երգեր պարունակող Սաղմոսարան-Ժամագիրքը, որը VII-VIII դդ. եկեղեցու կողմից միակ պաշտոնապես վավերացված ժողովածուն էր: Ըստ Ն. Թահմիզյանի, ենթավերնագրում հիշատակված են հայ հոգևոր երգեցողության մեջ ձևավորված մեղեդիների կատարման երկու հիմնական ընթացքը /տեմպը/. գնաց կամ հորդոր – «շտամբաձայնութիւն», և ծանր կամ քաշ – «ստեղնաչափութիւն»:

Մեր կարծիքով, այս մեկնաբանությունը դեռևս ստուգելի է: Հազիվ թե ենթախորագրում (փաստորեն՝ վերնագրում) խոսվեր տեմպերի մասին: Կարելի է ենթախորագիրը հասկանալ բոլորովին այլ կերպ, ենթադրելով, որ այստեղ խոսքը ավելի շատ պաշտոներգության, ծեսի, եկեղեցական երաժշտության տեսության և գեղագիտության տարբեր հարցեր արծարծող մեծածավալ աշխատության մասին է, որի ընդամենը մեկ հատվածն է հասել մեզ:

Անկասկած է, որ Մովսես Սյունեցու «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» մեկնությունը, որն իր ժամանակաշրջանի աստվածաբանական և գեղագիտական մտքի ինքնատիպ արտահայտությունն է, մեծ ազդեցություն է թողել հայ երաժշտական տեսական-գեղագիտական մտքի հետագա զարգացման վրա:

***

Ձայնեղանակների մասին ուսմունքը, ինչպես արդեն ասվեց, կենտրոնական տեղ է գրավում միջնադարյան երաժշտական մտածողության համակարգում, մասնավորապես, գեղագիտության մեջ: Այն իր որոշակի տեղն ունի նաև գիտական և գործնական տեսության մեջ: Պատահական չէ, որ այսպես կոչված «մեկնութիւնք ձայնից»-ը զետեղվում էին սովորաբար Ոսկեփորիկ, Պատճառաց, Հարցմանց գրքերում, որոնք նախատեսված էին ուսումնական-կրթական նպատակների համար: Այդ մեկնությունները, արտաքին և ներքին գիտությունների, ծիսակարգի խնդիրներին առնչվող հարցերի հետ մեկտեղ, միջնադարյան բարձրագույն տիպի դպրոցներում տրվող անհրաժեշտ գիտելիքների հանրագումարի մի մասն էին կազմում:

Չեռագրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայկական ձայնեղանակների համակարգը մի քանի կարևոր փուլ է անցել իր զարգացման մեջ:

1. Հիմքում ունենալով հեթանոսական շրջանում կազմավորված պատկերացումները, որոնք ձայնեղանակները կապում էին երկնային լուսատուների, չորս տարերքների, բնության զանազան երևույթների, կենդանական աշխարհի, արհեստների, հույն դիցաբանությունից և պատմությունից հայտնի երաժիշտների և գիտնականների անունների հետ, այն վերահիմաստավորվում է IV-V դդ.՝ ըստ քրիստոնեական նոր գաղափարախոսության և գեղագիտական նոր պահանջների:

2. Հաջորդ փուլը կապված է հունաբան դպրոցի գործունեության, մասնավորապես, VII-VIII դդ. ներկայացուցիչների հետ (Մովսես Քերթող և Ստեփանոս Սյունեցի), երբ կայունանում և տեսական իմաստավորում են ստանում հայկական Ութձայնի չորս բուն, չորս կողմ և երկու ստեղի ձայնեղանակները: Այս շրջանում գերակշռող է դառնում հայրաբանական և արեոպագիտյան գրականության մեջ արծարծված աստվածաբանական պատկերացումների և գաղափարների ազդեցությունը:

3. Վերջին փուլը վերաբերում է զարգացած ավատատիրության շրջանին: X-XIV դդ. Ութձայնի արդեն բյուրեղացած հնչյունաշարերի համակարգը գնալով ընդլայնվում ու ճյուղավորվում է, ընդգրկելով Ութձայնի կանոնական սահմաններից դուրս եկող և հաճախ ինքնուրույն ստեղիատիպ, զարտուղի և դարձվածքաննման ձայնեղանակներ (այսպես կոչված «մանրուսման եղանակներ»), որոնց առկայությունը մեծապես կապված էր տաղային արվեստի զարգացման հետ:

Երաժշտա-տեսական-գեղագիտական բնույթի պատառիկների և գրվածքների մի մասը հրատարակվել և քննարկվել է տարբեր տարիներին լույս տեսած աշխատություններում (Ղ.Ալիշան, Կոմիտաս, Բ.Սարգսյան, Հ.Քյուրտյան, Հ.Աճառյան, Ք.Քուշնարյան, Ն.Թահմիզյան և ուրիշներ): Կան նաև բնագրեր, որոնք չեն հրատարակվել առ այսօր:

Տվյալ մեկնությունները գալիս են լրացնելու մեր պատկերացումները միջնադարում հայկական Ութձայնի գործնական և տեսական մշակվածության մակարդակի մասին և պարզելու, թե որքանո՞վ է այն պահպանվել գոնե մինչև XIX դ. կեսերը, երբ Պոլսի երաժիշտ-տեսաբանները զարկ տվեցին հայ հոգևոր երգարվեստի հավաքմանն ու գրանցմանը:

Հայկական միջնադարյան ձայնից մեկնությունները քիչ են ուսումնասիրված: Առ այսօր բացակայում է վերոհիշյալ բնագրերի միասնական, ի մի բերված համահավաք մի այնպիսի հրապարակում, որը լիարժեք և սպառիչ ներկայացներ ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում:

Առանդրադառնանք երկու մեկնությունների, որոնք, հավանաբար, ստեղծվել են հայկական Ութձայնի կարգավորման առաջին և երկրորդ փուլերում: Խորագրերը, որոնցում այդ բնագրերի ստեղծումը վերագրվում է Բարսեղ Կեսարացուն, առաջին հայացքից թվում են գրեթե համանման: Սակայն և՛ խորագրերի, և՛, առավել ևս, բնագրերի բովանդակությունը միանգամայն տարբեր են իրարից:

Առաջինը գրավել է տակավին երիտասարդ Կոմիտասի ուշադրությունը և հրատարակվել նրա «Հայոց եկեղեցական եղանակները» անդրանիկ տեսական հոդվածում՝ առանց ձեռագրական աղբյուրի նշման[22]: Վերնագիրը հետևյալն է. «Եթաեւելոյն Բարսեղի յաղագս ձայնից թե ոստի իցեն և կամ յումմէ գտան, զոր թարգմանեաց Ստեփաննոս փիլիսոփայ, զի նա եղև երաժիշտ և հմուտ ձայնից ամենայն կենդանեաց և բաժանեաց զձայնս իմաստունս Իդ, որ են այսօրիկ, բառաչել, կռնչել, գոչել, բզչել, մնչել, և այլն»[23]:

Արդեն խորագիրը և բնագրի սկիզբը բացահայտորեն խոսում են հնագույն շրջանի բնապաշտական պատկերացումների և անտիկ ավանդույթի, մասնավորապես, Արիստոտելից վերագրվող «Պրոբլեմներ» երկասիրության «Կենդանիների ծագման մասին» գլխի հայկական արձագանքների մասին:

Ակներև է տվյալ բնագրի հունական հիմքը: Դա ապացուցվում է մի շարք հունական անձնանունների առկայությամբ, ինչպես Փոկեղիդէս, Սովոկլիդէս, Արիստարքոս, Քիւնոփեղէս, Զեղեոս և այլն, ինչպես նաև՝ հունական ձայնեղանակների աղավաղված անվանումներով, որոնք բերված են հայկականների կողքին: Բացառված չէ, որ տվյալ մեկնությունն ամփոփել է իր մեջ հատվածներ ինչ-որ հունական տրակտատից, որը ստեղծվել է ուշ հելլենիզմի և վաղ քրիստոնեության սահմանագծին և որը պատկանում է եթե ոչ Բարսեղ Կեսարացուն, ապա իրեն ժամանակակից որևէ այլ հունագիր հեղինակի: Պետք է նշել, որ սույն մեկնությունը բաժանվում է երեք ինքնուրույն հատվածների, որոնք ներկայացնում են ձայնեղանակների գյուտի երեք տարբեր վարկած: Դրանք հետագայում միավորվել են նույն մեկնության շրջանակներում: Առաջին հատվածում ձայնեղանակների գյուտը կապվում է կենդանիների և թռչունների ձայնե-

րին, երկրորդը ձայնեղանակների գյուտը կապում է հույն առասպելական երաժիշտների անուններին: Ըստ երրորդ՝ եզրափակիչ հատվածի, ձայնեղանակների գյուտը սկիզբ է առել Հին կտակարանի մարգարեներից: Ամենայն հավանականությամբ, Կոմիտասին հայտնի է եղել այս բնագրի տվյալ խմբագրությունը կամ տարբերակը: Մեր դասակարգման համաձայն, բացի այս տարբերակից, որն իր ծավալով միջին տեղ է գրավում, գոյություն ունեն նաև նրա համառոտ և ընդարձակ խմբագրությունները: Համառոտը 1924 թ հրատարակել է Բ.Սարգսյանը[24], իսկ ընդարձակը՝ Հ.Քյուրտյանը, 1935 թ.[25]: Այս բնագրերն, անկասկած, արժանի են մանրակրկիտ վերլուծության և համեմատության[26]:

Երկրորդ մենկությունը, որը գրավեց մեր ուշադրությունը, քիչ է հայտնի և չի հրատարակվել առ այսօր: Այն ուշագրավ է մի քանի տեսակետից:

ա) Ինչպես Մովսես Սյունեցու երկը, այս երկը նույնպես շատ ավելի միատարր և ամբողջական է իր շարադրանքով, ներկայացնելով արդեն զուտ եկեղեցական երաժշտական տեսության մի նմուշ:

բ) Ջերծ է ձայնեղանակների ուսմունքին վերաբերող նախորդ շրջանին հատուկ առասպելախառն դրույթներից, որոնք պահպանել էին աշխարհիկ երաժշտական տեսության մնացուկներ:

գ) Հետաքրքրական տվյալներ է պարունակում Ստեփանոս Սյունեցու մասին, որոնք համաձայնում են մի շարք միջնադարյան պատմիչների վկայությունների հետ:

Տվյալ բնագրում ուշադրություն է գրավում նախևառաջ երկու հանգամանք: Եթե ընդունենք, որ տեքստը թարգմանական է, անկախ հեղինակային պատկանելության հարցը քննելուց, ապա խորագրում ճշտվում է թարգմանչի անունը: Նշենք, որ Բարսեղ Կեսարացու անունը խորագրում կարող է լոկ պայմանական լինել, համաձայն միջնադարում շատ տարածված խոշոր եկեղեցական հեղինակություններին վերագրելու ավանդույթի, որովհետև առ այսօր գոնե Բարսեղ Կեսարացու աշխատությունների ոչ մի ցանկում չի հանդիպում նման մի գրվածք[27]:

Մեզ հետաքրքրող բնագրի խորագիրը հետևյալն է. «Բարսեղի Կեսարեցւոյն ասացեալ յաղագս ձայնից, զոր թարգմանեալ է Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի», ի տարբերություն մյուս գրչագրերում հանդիպող անորոշ «Ստեփաննոս երաժշտի» կամ «Ստեփաննոս փիլիսոփայի»: Այնուհետև գնահատվում է նրա վաստակը որպես երաժիշտ-տեսաբանի և երաժշտապետի. «...զի նա եղև երաժիշտ ամենայն ձայնից և բաժանեաց զձայնն ի մասունս»: Երրորդ կարևոր տեղեկությունը, որը չի հանդիպում մնացած նմանատիպ բնագրերում՝ «...և էդ գյարուկայք ձայնիցն»: Այս արտահայտության վրա ուզում ենք կանգ առնել հատկապես: Մեզ հետաքրքրող բառը *յարուկ*-ն է: Նոր հայկազեան բառարանը այսպես է բացատրում այդ բառը. «Յարուկ – անուն երաժշտական խազի՝ նման հարիսարի կամ փշոյ»[28]: Ուրեմն, բնագրում խոսքը խազային նոտագրության մասին է, որի ներմուծումը, բյուզանդական կանոնի և Ութձայնի կարգավորման հետ մեկտեղ, ամենայն հավանականությամբ, կապված է եղել Ստեփանոս Սյունեցու անվան հետ: Մեր կարծիքով, բնագրում «յարուկ» բառն օգտագործված է ընդհանուր իմաստով՝ իբրև գրական տեքստի վրա դրվող ելևէջը կամ առոգանությունը ցույց տվող պայմանական նշանների ամբողջություն: Դա է հուշում նաև բառի հոգնակի թվով օգտագործումը բնագրում:

Ակներև է, որ բնագրի կազմողը քաջ ծանոթ է եղել Մովսես Քերթողի «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» երկասիրությանը, ուր արդեն հստակորեն զատորոշված էին չորս բուն, չորս կողմ և երկու ստեղի եղանակները, բնորոշված՝ նրանց զգայական-էթիկական բնույթը, նշված՝ ժամերգության մեջ կատարվող հանրածանոթ երգասացությունների պատկանելիությունը այս կամ այն ձայնեղանակին: Մեր բնագիրը հավատարմո-

րեն հետևում է այդ ավանդույթին: Այստեղ նշմարելի են ինչպես ուղղակի փոխառություններ, այնպես էլ վերաշարադրված և հեղինակի կողմից համալրված հատվածներ:

Եվ, վերջապես, առավել հատկանշականը. տվյալ բնագրում հիմնական եղանակների կողքին հիշատակված են բոլոր բուն և մեկ կողմ ձայնեղանակներին համապատասխանող ստեղի եղանակներ, մի փաստ, որն, ամենայն հավանականությամբ, պատմական իրողություն է հավաստում: Ինչպես հայտնի է, Հայոց եկեղեցին կանոնականացրել է ութ ձայն և երկու ստեղի եղանակները: Սակայն Շարակնոցի երգասացություններում, բացի ութ հիմնական ձայնեղանակներից, առկա են ոչ թե երկու, այլ երեք ստեղի եղանակ և մի շարք, այսպես կոչված, «դարձվածքներ»: Դա հստակ երևում է Ռ.Աթայանի գրքում բերված ձայնեղանակների տախտակից[29]: Այդ երևույթը նկատել է դեռևս Ե.Տնտեսյանը և դրան անդրադարձել իր «Նկարագիր երգոց»-ում, նշելով ստեղիների չորս հիմնական տեսակ և մի քանի միջանկյալ, խառը և հատուկ ձևեր[30]: Սակայն հազիվ թե Ե.Տնտեսյանին ծանոթ լինեին այս միջնադարյան մենկությունները, որոնք պետք է հաստատեին իր էմպիրիկ փորձը գրավոր վկայությամբ:

Հետաքրքրական է նաև այս բնագրում նշվող ԲԿ ստեղին, որը, մեր կարծիքով, կարող է որոշ լույս սփռել այն հարցին, թե ինչու է ԲԿ կոչվել Ավագ կողմ: Կարելի է ենթադրել, որ ԲԿ ստացել է այդ անվանումը, որովհետև այդ շրջանում միակն էր մյուս կողմ եղանակների մեջ, որն ուներ ստեղի:

Վերջապես, հարց է ծագում, իսկ ու՞ր անհայտացան այդ ստեղիները: Մեր կարծիքով, դրանք պետք է փնտրել «դարձվածք» կոչվող ձայնեղանակների մեջ, նկատի ունենալով, որ «դարձվածք» տերմինը միջնադարյան ոչ մի աղբյուր չի հիշատակում: Այն այդպես էլ չստացավ իր հատուկ նշումը նույնիսկ ուշ միջնադարում և նոր շրջանում կատարված հոգևոր երգերի ձայնագրություններում:

Ավարտելով, ուզում ենք հիշեցնել, որ հայկական Ութձայնի յուրահատկությունն այն է, որ «կողմերը» հիմնականում անկախ են «բուն» ձայներից, այսինքն՝ մասամբ միայն կարող են համարվել դրանց ածանցյալ միավորները: Ութ ձայներից յուրաքանչյուրն (բացառությամբ ՌՉ-ի և ԳԿ-ի) ունի մեկ կամ մի քանի «դարձվածք»: Բացի դրանից, հայկական Ութձայնը, առանց «դարձվածքների» էլ, մշտապես հիշատակվում է երկու հավելյալ ստեղի ձայնեղանակներով համալրված, ինչն արդեն իսկ դուրս է գալիս ութի սահմաններից: Հետևաբար, քննվող բնագրում առկա ձայնեղանակների ոչ ավանդական դասակարգումը մենկության ձևով արտացոլել է միջնադարյան վանքային միջավայրում ձևավորված հոգևոր երգարվեստի գործնականին առնչվող որոշակի իրողությունների երաժշտատեսական-գեղագիտական ընդհանրացումը:

Ծանոթագրություններ

1 Տե՛ս Յ.Քիւրտեան, Երաժշտութեան մասին երկու հատուածներ նախնեաց մատենագրութենէն, «Ազատիտ», 1935, 1-2, էջ 33:
2 Տե՛ս Ն.Թահմիզյան, Մովսես Սյունեցին և նրա «Յաղագս կարգաց» գրվածքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, 11, էջ 85-94:
3 Յայտն. Ը, Թ, Ժ, ԺԱ 15-18, Ի 10-15:
4 Տե՛ս Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Բ, Անկանոն գիրք Նոր կտակարանաց, Տեսիլ ամենասրբուհոյ Աստուածածնին զորետես ամենօրհնեալն՝ յաղագս տանջանաց մեղաւորաց, հրատ. Հ. Եսայի Տայեցի, Վենետիկ, 1898, էջ 411, 427, 437:
5 «Ազատիտ» 1935, 1-2, էջ 30:
6 Ծննդ. Գ 9:
7 Ածդ. Դ 9:
8 Ածդ, ԺԸ 9:
9 Ղևտ. Բ 14:
10 Եղ. ԺԵ:

11 Անդ, ժԵ 21:
12 Ն.Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 91:
13 Սղմ. ՃԺԷ 26, Մատթ. ԻԱ 9, Ղուկ. ԺԹ 38, Յովհ. ԺԲ 13:
14 Ն.Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 91:
15 Մատթ. ԻԵ 6:
16 Անդ, ԻԵ 41:
17 Անդ, ԻԵ 34:
18 Ն.Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 92:
19 Տե՛ս Е.Герцман, Византийское музыкознание, Л. 1988, с. 177.
20 Տե՛ս Ն.Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 88:
21 **J.-P.Migne**, Patrologiae Corsus Completus, Series Graecae, t.3, Sancti Dionysii Areopagitae, De Coelesti Hierarchia, p. 211.
22 Տե՛ս Կոմիտաս, Հայոց եկեղեցական եղանակները, «Արարատ», 1894, էջ 256: Տե՛ս նաև՝ Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 115-116:
23 Տվյալ և նմանատիպ մեկնությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Х.С.Кушнарев, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, с. 96-99; Н.К.Тагмизян, Теория музыки в древней Армении, Ереван, 1977, с. 63-65, 86-87, 160-164.
24 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, յորինեց՝ Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Բ, Վենետիկ, 1924, էջ 580:
25 Տե՛ս Յ.Քիւրտեան, նշվ. աշխ., էջ 30-34:
26 Տե՛ս մեր հրապարակումը՝ Deux textes arméniens attribués à Basile de Césarée sur l'interprétation des modes musicaux, "Revue des études arméniennes", 1996-1997, 96, pp. 339-355.
27 Այդ հանգամանքը նշել է դեռևս Ն.Թահմիզյանը (տե՛ս նշվ. աշխ. էջ 54-ի ծանոթագրությունը):
28 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Բ, Երևան, 1981, էջ 66:
29 Տե՛ս Ռ.Աթայան, Հայկական խազային նոտագրությունը, Երևան, 1959, էջ 162-163:
30 Տե՛ս Ե.Տ֊Մինասյան, Նկարագիր երգոց Հայաստանեայց ս.եկեղեցւոյ ըստ ութ ձայնից, Իստանպօլ, 1933, էջ 70:

Լիլիթ Երնջակյան

ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ՍՏՆՈԴԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ հոգևոր երգարվեստի և մերձավորարևելյան դասական երաժշտական ավանդույթի՝ մակամաթի փոխհարաբերության հարցը պարբերաբար գտնվել է հայ երաժշտագետների ուշադրության ղորտում, սակայն առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել: Այս խնդրի լուծումը կապված է պատմամշակութային, ծագումնաբանական-տիպաբանական, ինչպես նաև մեր օրերում արդիականացած կրոնագեղագիտական բնույթի բազում խնդիրների հետ: Վերջին կտրվածքով կփորձենք դիտարկել հոգևոր մոնոդիաների և դասական մակամաթի չվման եզրերը:

Թեև հայ հոգևոր երաժշտության տարբեր ժանրերի /շարական, սաղմոս, հոգևոր մեղեդի և այլն/ կառուցվածքը և գրական բաղադրատարրը նրանց կամրջում է արևելաքրիստոնեական ավանդույթին, մեղեդիական բաղադրիչի առումով դրանք սերտ աղերսների մեջ են նաև այսպես կոչված "համաարևելյան" կամ հաճախ "մահմեդական" անվանվող մակամաթի արվեստի հետ:

Կարծում ենք անվիճելի է, որ մակամաթի արվեստի ազգային տարբերակների կազմավորման և զարգացման առաջին փուլերը կապվում են միջնադարյան Իրանի երաժշտական մշակույթի հետ[1]: Իրանական "ավազաթն" /փոքր դաստգահների համակարգ/ ու "մակամաթը" հնուց ի վեր Արևելքում ընկալվել են որպես դասական, չափանմուշ օրինակներ: Հայտնի է նաև, որ արևելյան երաժշտության լադային համակարգի ձևավորման արմատները ծգվում են մինչև Սասանյան մշակույթը, որի ազդեցության շրջանակում էր նաև վաղմիջնադարյան Հայաստանի երաժշտական արվեստը: Պատահական չէ, որ VII դ. հայ երաժիշտ Սարգիսը հրավիրվել էր Տիգրոն՝ մասնակցելու իրանական երաժշտության "արքայական" "խոսրովային" լադերի կանոնավորմանը: Միանգամայն ակնհայտ է, որ Սարգիսը, ինչպես և շահի արքունիք հրավիրված մյուս նշանավոր երաժիշտները՝ պարսիկ Բարբաղը, հույն Նակիսան, պետք է իրենց հետ բերած լիճեին և սեփական երկացանկը, երաժշտատեսական դրույթներն ու կատարողական այն ավանդույթները, որոնք բյուրեղացել էին այլ մշակութային կենտրոններում[2]: Այդ գործընթացն ուղեկցվել է նաև արևելյան երաժշտության գեղագիտական նորմերի և ստեղծագործական սկզբունքների մշակումով, որի հավաստումը հայկական աղբյուրներում կիրառվող "խոսրովային ոճ" – եզր հասկացությունն է:

Մոնոդիայի վաղեմի տեսությունը մշակելով արևելյան մշակույթների համանման երևույթների համատեքստում, հայ երաժիշտները գործնականում հենվում էին տարբեր արևելյան երաժշտարվեստներում առկա արմատական կապերի վրա: Մուսուլմանական քաղաքակրթության տարբեր կենտրոններում նրանք նոտագրում, հրատարակում, ինչպես նաև ստեղծում էին արևելյան ավանդական ժանրերի նոր նմուշներ՝ շարականներ, տաղեր, մակամներ, բեշրաֆներ և սեմայիներ[3]: Տիրապետելով հայկական ութձայնի ուսմունքին և մուղամաթի արվեստին, նրանք համադրում էին ընդհանուր ծագումնաբանական հիմքեր ունեցող մոնոդիկ ոճերը, կազմում համապա-

տասխան հնչյունաշարերի համեմատական աղյուսակներ: Սրանով էլ բացատրվել է այն փաստը, որ հայկական հոգևոր մոնոդիաները կատարելու համար պոլսահայ երաժիշտները տեքստի վրա նշել են մակամների՝ իբրև հայկական հոգևոր երաժշտության մեջ իրենց նմանական ունեցող որոշակի լադաինտոնացիոն համակարգերի պարսկական կամ թուրքական անվանումները: Այս առիթով Ա.Շահվերդյանը նշել է, թե պետք չէ մեծ նշանակություն տալ հայ երաժիշտների՝ պարսկական կամ արաբական տերմինաբանությունը օգտագործելու երևույթին: Այն չի խանգարել հիրավի ազգային արվեստ ստեղծելուն[4]:

Այսպես, միջնադարյան իսլամական Արևելքում ստեղծվում էին երաժշտական արվեստի էթնիկ սահմաններից անկախ միջազգային նորմեր, որոնց էթիկական-գեղագիտական հիմքի պահպանումը պարտադիր էր մասնագետ-երաժիշտների համար: Երաժշտական արվեստի կանոնացման միտումը, ապահովելով նախորդ շրջանների ավանդույթի շարունակումը, միևնույն ժամանակ նպաստում էր արևելյան մշակույթների երաժշտական տեսակների ու սեռերի ձևավորմանը նորմատիվ մտածողության դիրքերից: Ասվածի վկայությունն է հայ եկեղեցական երաժշտության մեջ գործնական մշակում և խոր իմաստավորում ստացած "խոսրովային ոճը", որի ակունքները մեզ տանում են դեպի սասանյան ժամանակաշրջան և կապվում պարսից Խոսրով Փարվիզ արքայի ձեռնարկած ու մշակութային սխրանքի նշանակություն ձեռք բերած արևելյան լադերի համակարգի կանոնականացման գործընթացին: Այս չափազանց ընդգրկուն և վաղեմի պատմություն ունեցող երևույթը պաշտոնապես ճանաչվել է Հայ եկեղեցու կողմից: XII դ. կաթողիկոս Ներսես Շնորհալին, իր ստեղծագործության մեջ զարգացնելով այդ ոճը, հաստատեց երաժշտական արվեստի տարաբնույթ տեսակների փոխներթափանցման կենսունակությունը[5]: Իր բազմաթիվ ստեղծագործություններում Շնորհալին օգտագործել է հայկական ութձայնի երրորդ ձայնեղանակը՝ Գձ, որ արևելյան Չարգահ լադի համարժեքներից է, կարգորոշել "խոսրովային" կոչվող երգերի և ստեղի շարականների մեղեդիները, որոնք հայոց Պատարագի գերիշխող ձայնեղանակներից են: Կարևորելով ձայնեղանակային այս խմբի նշանակությունը Պատարագի երգեցողության մեջ, Ե.Տնտեսյանը հիշյալ "զարտուղի" եղանակը անվանել է Պատարագի "մայր եղանակ", իսկ Ք.Քուշնարյանը վերջինս իր բոլոր տարբերակներով և տարատեսակներով դիտել է իբրև Գձ-ից ածանցված, նշելով նաև "զարտուղի" ձայնեղանակային համակարգի ինքնատիպ արտահայտչականությունը[6]:

«Խոսրովային» ոճին հարող և նրա ոլորտում գտնվող զարտուղի, հատկապես Գձ-Չարգահ կամ հարմոնիկ տետրախորդ պարունակող ալտերացված աստիճաններով լադերում ընթացող հնագույն մեղեդիներից շատերը, ինչպես, օրինակ, միջնադարյան "Ի կոյս վիմէն"-ը և "Տիրամայրը" և դրանց ժանրային ձևափոխումները, տիպական մոդելներ են դարձել այլևայլ մոնոդիաներ ստեղծելու համար, իսկ "Ի ննջեցեալէդ արքայական" (Բաղդասար Դպիր), "Դուն էն գլխէն" (Սայաթ–Նովա), "Այգեպան" (Շիրին) շղթայի հիմքում ընկած լադաինտոնացիոն և ձևակառուցվածքային առումով կանոնավորված և ավանդական դարձած ձևույթը ավելի քան օրգանական կապի մեջ է արևելյան Չարգահ մուղամի հետ: Նման ելևէջային-կառուցվածքային առանձնահատկությունները բնորոշ են նաև հայկական Պատարագի այլ համարներին, մասնավորապես, "Գոհանամք" և "Աչքն ծով" մոնոդիաներին[7]:

Ազգային հոգևոր երգարվեստի գանձարանում ընդգրկված վերոհիշյալ մոնոդիաների և արևելյան մակամաքի "հոգին" հանդիսացող "Չարգահ" մուղամի բազմաթիվ պարսկական և հայկական տարբերակների միջև եղած ընդհանրությունները նախկինում քննարկել ենք դրանց հնչյունաշարերի, իմպրովիզացիայի զարգացման օրինաչափությունների, ձայնային ծագում ունեցող տիպական մոդֆեմ-կառուցվածք-

ների /լադի կոնկրետ աստիճանների հետ կապված յուրատիպ մեղեդային բանաձևերի/ և դրանց տարբերակման, այն է՝ Արևելքի ավանդական երաժշտության, մասնավորապես, մակամաքի արվեստի հիմքում ընկած կանոնի և իմպրովիզացիայի փոխադարձ կապի տեսանկյունով: Համեմատական ուսումնասիրությունն ի դերև է հանում համանման հուզական-հոգեբանական վիճակների ընդհանրությունը նս: Ասվածը հիմք է տալիս խոսել Չարգահի առանձնահատուկ սեմանտիկական կայունության, նրան բնութագրող ինտերվալներով պայմանավորված արտահայտչական երանգապնակի ինքնատիպության, պարտադիր-կանոնավորված և ավանդույթից-ավանդույթ տեղափոխվող ձևույթների պարունակած իմաստային "կողի" մասին: Չարգահը դասական մակամաքի ամենատարածված լադերից է, որի հնչյունաշարը պարունակում է շղթայական եղանակով միակցված երկու երկակի տետրախորդ /ըստ Քուշնարյանի տերմինի՝ "կրկնակի երկակի"/: Լադի կառուցվածքի երկակիությունը, մծ. 2-ի առկայությունը, մաժոր և մինոր տարրերի զուգակցումը արտացոլվում է Չարգահի երաժշտական հատկանիշներում, բովանդակության դրամատիկ-փիլիսոփայական խորությունը: Պատահական չէ, որ Արևելքի երաժշտատեսական աղբյուրներում, առասպելական մեջ: Պատահական չէ, որ Արևելքի երաժշտատեսական աղբյուրներում, առասպելական երաժիշտ-իմաստունների գեղագիտական ասույթներում, ինչպես նաև XIII դ. նշանավոր հայ երաժիշտ Թամբուրի Արութինի "Արևելյան երաժշտության ձեռնարկ"-ում Չարգահը հանդես է գալիս իբրև արևի կերպը մարմնավորող ավագե-մակամ, անվանվում մակամաքի հոգի, յուրատիպ արտահայտչականության կրող[8]: Մակամ-ավագե-շորե-փերդե կոչվող տիպական մեղեդիների շրջագծերի նկարագրության մեջ ընդգծվում է նրա կարևորությունը. չարգահի հնչյունաշարը և անվանումը միատիպ են հաստատագրված զանազան արևելյան երաժշտական ավանդույթներում:

Չարգահի բնութագիրը շարունակելով խորհրդանիշերի հարթության վրա, կարող ենք նշել նրա արխիտեկտոնիկայում առկա և 4-չհար հենակետերով պայմանավորված ինտոնացիոն դարձվածքներ. իրանական, թուրքական և հայկական ավանդույթներում Չարգահը ներառում է 4 պարտադիր-կանոնավորված մասեր՝ Մագլուբ, դույթներում Չարգահը ներառում է 4 պարտադիր-կանոնավորված մասեր՝ Մագլուբ, Մագլիֆ, Մանսուրիա և Բաստանիգար, իսկ իրանական դաստգահների համակարգում Մագլիֆ, Մանսուրիա և Բաստանիգար, իսկ իրանական դաստգահների համակարգում ընդհանրապես մեծ թիվ են կազմում չհար մեզրաբ /4 հարված/, չհար-բաղ /4 այգի/ ընդհանրապես մեծ թիվ են կազմում չհար մեզրաբ /4 հարված/, չհար-բաղ /4 այգի/ կոչվող գուշեները /մակամի մաս/, որոնց անվանումը աղերսվում է իսլամական դրախտի 4 գետերի և դրանցով պայմանավորված 4 ջրանցքների և 4 այգիների, աստվածային վերելքի 4 աստիճանների հետ[9]:

Ինչպես տեսնում ենք, շոշափված չափացույցն առնչվում է մահմեդական աշխարհի տարբեր մշակութային շերտերում արտացոլված սուֆիական գաղափարների, կրոնական-միստիկ պատկերացումների, թվերի սիմվոլիկայի հետ, որոնք, ցարդ անտեսված լինելով մակամաքի արվեստին ներքին խորհրդային շրջանի գրականության մեջ, մեր օրերում իրենց վրա են բևեռում մասնագետների ուշադրությունը: Ուրեմն, ձևակառուցվածքային և լադաինտոնացիոն տարրերի նմանություններով, իսկ հաճախ էլ նույնությամբ և դրանց կազմակերպման կանոններով, բնավ չի ավարտվում առնչությունների խնդիրը:

Հիմքեր կան ենթադրելու, որ իրենց գործառական նշանակությամբ առաջին հայացքից այնչափ անհարիր և անհամեմատելի բրիստոնեական հոգևոր մեղեդի – մահմեդական մուղամ հարաբերությունը խարխլված է մեկ այլ՝ առավել խոր հենքի վրա, որի գործառական էությունը հարատևել է ժողովուրդների կրոնական մշակույթի տարբեր փուլերի բնականոն գործընթացում:

Մոնոդիկ նմուշների կատարման գործառությունը նույնատիպ հոգևոր վերելքի ձեռքբերումն է, ինչը պայմանավորված է սեմանտիկական կողի համարժեքությամբ:

Հայ հոգևոր երգարվեստի հոգևոր վերելքի ձեռքբերման գործառությունն ակնհայտ է, մուղամաքի պարագայում այն կարիք ունի բացահայտման: Ինչպես քրիստոնեական եկեղեցու երաժշտաձիսական արարողությունն իր մեջ արտացոլել է նաև հեթանոսական երաժշտական մշակույթի բազմաթիվ տարրեր, այնպես էլ սուֆիական սինկրետիկ ծիսակարգը ներառել է բազմաթիվ կրոնաաղանդավորական երևույթներ և կրել հեթանոսության, քրիստոնեության, զրադաշտականության, նեոպլատոնականության ազդեցությունը[10]: Ըստ որոշ հեղինակների, մզկիթային արարողակարգի երաժշտական ձևավորումը, պաշտոնական երգչախմբի ներկայությունը IX դարում, ինչպես նաև Ղուրանի երգեցիկ ընթերցանությունը, որ կատարվել է զանազան մեղեդիներով և հանգով, հետևանք է քրիստոնյա եկեղեցու ժամերգության ընդօրինակման, և այդ ոճը մեծապես ազդվել է քրիստոնեական պաշտոներգության ժամանակ արտասանվող հռետորական քարոզներից[11]: IX-X դդ. հոգևորականների կողմից պարբերաբար արգելվող և կանոնացվող այդ սովորույթը ի վերջո բախանցել է սուֆիական ծիսակարգ, որտեղ երաժշտության ունկնդրումը /հաճախ պարային շարժումներով ուղեկցվող/ դարձավ հոգևոր էքստազի /վաժդ/ և հուզավառության հասնելու անհրաժեշտ նախապայմաններից մեկը: Ճշմարիտ հոգևոր պոետը պետք է սուֆի լիներ, վարժ տիրապետեր հոգևոր երգեցողությանը և, մասամբ՝ սրբազան պարին, թեև վերջինը ոչ բոլոր սուֆիների համար է ընդունելի եղել[12]:

Սուֆիական ծիսակարգում բրծված այս սինկրետիկ ատաղձը լավագույնս նպաստում էր հոգևոր տեքստերի, որոշակի երաժշտաբանաստեղծական բանաձևերի, դրանց բազմակի կրկնությունների ու տարբերակումների կանոնացմանը՝ միաժամանակ լայն ասպարեզ տալով հոգու և մտքի հանկարծաբանական թռիչքին: Նշված դիխոտոմիան է ընկած մակամի՝ իբրև երաժշտական ժանրի և մտածողության հիմքում: Երաժշտության և հոգևոր-միստիկ փորձի շփումը խթանել է մակամի ժանրի բյուրեղացմանը սուֆիների կրոնա-գեղագիտական պատկերացումների և մեկնությունների ոլորտում: Մակամի հոգևոր էությունը լուսաբանող կարևոր աղբյուր են կրոնա-փիլիսոփայական հասկացությունների և ավանդական խորհրդանիշների համակարգով հագեցված սուֆի բանաստեղծների տեքստերը, որոնք ընկած են մակամաքի վոկալ շարքերի հիմքում /Հաֆիզ, Ջամի, Ռումի, Նավոի և այլն/, ինչպես նաև "ռահ-ռուհ" – հոգու ճանապարհ անվանվող գուշեները, որոնցով ներծծված են պարսկական դաստգահների հսկայածավալ շարքերը:

Նվագարանային և վոկալ երաժշտության մուտքը սուֆիական ծիսակարգ պայմանավորված էր նրան վերագրվող առանձնահատուկ դերով՝ հանձինս հոգու ամենահզոր շարժիչի: Երաժշտության ընթացքը խթանում էր հոգու փոփոխությունների ընթացքը և այս մակարդակում համեմատելի դարձնում մակամ՝ կանգառ իմաստով և հայ՝ աստվածային պայծառատեսության վիճակ հասկացությունները, որոնք դրված են սուֆիզմի գաղափարախոսության կենտրոնում. մակամ էին կոչվում 4, 7, 10 հիմնական կանգառները, որոնցով սուֆին հոգևոր վերելքի ճանապարհին անցնում էր՝ աստվածային էության հետ հաղորդակցվելու և նրան ձուլվելու, անէանալու համար[13]:

Երաժշտական առումով մակամը կատարյալ հնչյունաշար ձայնեղանակ է /ուշ ավանդույթում միայն վերընթաց/, որի աստիճանների հետևողական ելևէջային-ռիթմական զարգացումը իմպրովիզացիոն արվեստի միջոցներով կերտում է ծավալուն ստեղծագործություն՝ գագաթնակետային-էքստատիկ առոյի /համեմատելի է էքստատիկ վաժդի հետ/ ձեռքբերումով:

Մեր նպատակը չէր այստեղ քննել ազդեցությունների ինքնին բարդ և տարողունակ խնդիրը: Ընդհանրության փաստը գտնում ենք սուֆիական ծիսակարգում: Եթե հայ հոգևոր երաժշտությունը զարգացել է կանոնակարգված կրոնական պատկերացումների հիման վրա, եկեղեցու պատերի ներսում, ապա մուղամի ժանրը դուրս է մղվել մզկիթից և կարևորվել սուֆիական ծիսակարգում: Նրա պարփակումը աղանդի սահմաններում և օտարումը պաշտոնական արարողակարգի ժամերգությունից /թեև պահպանվել են տեղեկություններ հնում մուղամների կատարման ժամի կանոնավորված ավանդույթի վերաբերյալ/[14], ժանրի հետագա զարգացումն ուղղել են դեպի ժողովրդապրոֆեսիոնալ, ավանդական երաժշտության բնագավառը: Սակայն հոգևորից դեպի աշխարհիկը տանող ճանապարհին մակամները, երկփեղկվելով և զարգանալով տարբեր մշակութային ոլորտներում՝ սուֆիզմի աղանդավորական ծիսակարգում և դասական-ավանդական երաժշտության մեջ, պահպանել են իրենց խորքային սեմանտիկական լիցքը: Այս իրողությունը թույլ է տալիս վերականգնել նրանց արմատները նաև ուշ միջնադարում վերակազմավորված մակամաքի արվեստի մոնումենտալ շարքերում՝ իրանական դաստգահներում, միջինասիական Շաշմակոմում և այլն:

Անդրադարձը հայ հոգևոր մոնոդիաների ու արևելյան մակամների աղերսներին և դրանց հիմքում ընկած կրոնական պատկերացումներին, նոր հեռանկարներ է բացում ինչպես Արևելքի երաժշտական ավանդույթներում առկա "նախակառույց" տարրերի բացահայտման /ձևակառուցվածքային մակարդակ/, այնպես էլ իմաստաբանական մակարդակը վկայող հոգևոր սուբստրատների ուսումնասիրության համար: Այն համեմատելի է դարձնում մեր իրականության մեջ հոգեբանորեն անջրպետված և անհարիր համարվող քրիստոնեական հոգևոր մեղեդի – մահմեդական մուղամ հարաբերությունը, պարզաբանելով նաև ժանրի համատարած կենցաղավարման փաստը մերձավորարևելյան զանազան ազգային մշակույթներում: Թերևս այս փաստի գիտակցումն է թույլ տվել հայ երաժիշտներին ազատորեն ստեղծագործել Արևելքի դասական ավանդական երաժշտության ժանրային համակարգի ոլորտում, իսկ մուղամաքի ասպարեզում ստեղծել հոգևոր ներշնչանքի անգերազանցելի կատարումներ, որպիսին է Արևելքի երաժշտության փայլուն գիտակ Ա.Օգանեզաշվիլու /Ալեքսանդր Հովհաննիսյան/ Չարգահը:

Ծանոթագրություններ

1 Տե՛ս Լ.Երիցյական, Մուղամաքի արվեստը հայ-իրանական երաժշտական կապերի պատմությունից, Երևան, 1991:

2 Տե՛ս **L.Yernjakian**, Armenian Musicians' Contribution to the Middle East Musical Culture Development, «Borbad and Culture Traditions of Central Asiatic Peoples: The History and the Present», Dushanbe, 1990.

3 Տե՛ս Արիստակէս քհ. Հիսարլեան, Պատմութիւն հայ ձայնագրութեան եւ կենսագրութիւնք երաժիշտ ազգայնոց, 1769-1909, Կ. Պոլիս, 1914:

4 Տե՛ս А.Шавердян, Очерки истории армянской музыки XIX-XX веков, М., 1959, с. 202. Պոլսահայ երաժիշտների գործունեության համակողմանի նկարագիրը տրված է՝ К.Худабашян, Армянская музыка на пути от монодии к многоголосию, Ереван, 1977, с. 25-31.

5 Ղ.Ալիշանը "Շնորհալի և պարագայ իւր" աշխատության մեջ գրում է, որ հայերը իրենց երաժշտության մեջ լայնորեն զարգացրին "խոսրովային ոճը", իբրև օրինակ բերելով Կիրակոս Գանձակեցու խոսքերը Շնորհալու մասին, որը "կարգեաց... *Խոսրովային* ոճով շարականս, մեղեդիս, տաղս և ոտանաւորս" (տե՛ս Ղեւոնդ Մ.Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 89):

6 Տե՛ս Х.С.Кушнарев, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, с. 533-536.

7 Տե՛ս Ն.Թահմիզյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 23-25: Ուշագրավ է, որ Կոմիտասը, բարձր գնահատելով "Գոհանամք" մեղեդու Մ.Եկմալյանի մշակումը, տեսնում էր նրանում արևելյան, մասնավորապես, պարսկական մեծ ազդեցություն (տե՛ս Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, հավաքեց Ռ.Թերլեմեզյան, Երևան, 1941, էջ 144):

8 Տե՛ս Тамбурист Арутин, Руководство по восточной музыке, перевод с турец., предисловие и комм. Н.К.Тагмизяна, Ереван, 1968, с. 54.

9 Տե՛ս Les systèmes de la Musique Traditionnelle de l' Iran, Téheran, 1973 (par M. Barkechli); Radif Vocale de la Musique Traditionnelle de l'Iran, Téhéran, 1978 (par. M. Massoudieh).
10 Տե՛ս И.П.Петрушевский, Ислам в Иране в VII-XV веках, Л., 1966, с. 62.
11 Տե՛ս А.Мец, Мусульманский ренессанс, М., 1966, с. 261.
12 Տե՛ս նույն տեղում, էջ 234:
13 Մուղամաթի արվեստի հետ կապված խնդիրների որոշակի բարդույթը հոգևոր հարթության վրա տեղափոխելը հնարավորություն է տվել որոշ գիտնականների լույս սփռել դրանց բովանդակային-իմաստային հիմքի տարբեր մակարդակների վրա, ճշգրտումներ կատարել մակամաթի համակարգում կարևոր գործառույթ ունեցող եզրերի /ռահ –ռուհ/, մինչև այժմ էլ գործածական և հատուկ անվանակոչություններ ունեցող գուշեների, փերդենների, ավազների և այլ երաժշտական սեռերի վերաբերյալ և, վերջապես, սուֆիական ավանդույթում արտացոլված թվերի սիմվոլիկան հարաբերակցել թվային նշանակումներ կրող մուղամների հետ (տե՛ս О.Ибрагимов, Семантика макомов, Автор. дисс. на соискание уч. ст. доктора иск., Ташкент, 1998):
14 Տե՛ս **R. d'Erlanger**, La musique arabe, 6 vol-s, Paris, 1930-1959, IV, 45.

Տիրան Մարության

ԳԱՌՆԻԻ ԲՈԼՈՐԱԿ ՏԱՃԱՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գառնիի հեթանոսական տաճարի արևմտակողմին կպած, բոլորակ հատակագծով, զգալի չափերի քրիստոնեական տաճար ենք ունեցել, որը հայ ճարտարապետության վաղ միջնադարի կարևոր հուշարձաններից է: Մեզ են հասել տաճարի արևելյան մասի հիմնապատերը, պատերի ստորին մասի շարքերից փոքր հատվածներ՝ մեծ մասամբ զրկված տուֆի երեսապատումից, ինչպես և մի քանի պատամիջի զանգվածներ, որոնցից մեկը՝ միջին չափերի:

Էջմիածնի հոգևորականներից Խաչիկ վրդ. Դադյանը, որ այս դարասկզբին պեղել էր Զվարթնոցի ավերակը և մի քանի այլ հուշարձաններ, 1907 թ. մասնակի պեղումներ կատարելով անտիկ տաճարի շուրջը, գրում է. «Բերդի միջի սարոյթի ապառանքի արևմտեան կողմը գտնուեցավ մի մեծ եկեղեցւոյ յատակագիծ, որի սեղանը վիթխարի փլատակների տակ է, նման Զուարթնոցի զանգվածներին...»[1]:

Գառնիի հեթանոսական տաճարի մասին խոսելիս Թ.Թորամանյանը հիշատակում է նաև այս եկեղեցին. «Արևմտյան կողմին գրեթե կից կա բոլորակ կամ ութանկյունի մի շենքի մնացորդ հազիվ հիմերը նշմարելի»[2]: 1909-1911 թթ. Ն.Մառի արշավախումբը Գառնիի հեթանոսական տաճարի պեղումներին զուգընթաց բացում է բոլորակ տաճարի մնացորդները: Արշավախմբի մասնակից Յա.Սմիռնովը Գառնիի ամրոցի գլխավոր հատակագծի վրա կետագծով ցույց է տվել նաև բոլորակ տաճարի հատակագիծը:

Ն.Մառի արխիվում կա գրառում. «Կաթողիկե եկեղեցու քարերը համարյա ամբողջությամբ, դրսից մինչև հողի հարթությունը, պոկված են և տարված: Այսպիսի այլանդակված ձևով էլ ամենայն հավանականությամբ կանգնած է եղել այդ եկեղեցին մինչև գլխավոր հուշարձանի կործանումը»[3]:

Ն.Բունիաթյանը, որ Գառնիի հեթանոսական տաճարի ամենահանգամանալից հետազոտողներից է, նրա գիտական չափագրողը, վերակազմության նախավերջին նախագծի ստեղծողը և 1930-ական թթ. վերաշինական աշխատանքների ձեռնարկողը, իր աշխատության[4] էջերում բոլորակ տաճարի վերաբերյալ ոչինչ չի ասում:

1949 թ. սկսվում են Գառնիի ամրոցի հետևողական ուսումնասիրությունները: Պեղումներով զբաղվող Հայաստանի ԳԱ գիտական արշավախմբի ղեկավար Բ.Առաքելյանն իր աշխատության մեջ հրապարակում է նաև բոլորակ տաճարի հատակագիծը (Ա.Սահինյանի չափագրությամբ) և շուրջ երեք էջ հատկացնում նրա նկարագրությանը և կառուցման ժամանակի որոշմանը[5]: Տարիներ անց նույն հարցին անդրադառնալով՝ Բ.Առաքելյանը Գ.Կարախանյանի աշխատակցությամբ հրատարակած «Գառնի» մատենաշարի III գրքում ևս երկու էջ է հատկացնում բոլորակ տաճարին՝ առնվազն բերելով նույն հատակագիծը: Այդտեղ էլ տողատակին ծանոթագրում է, որ «Գառնիի ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությամբ պարապում է արշավախմբի ճարտարապետ Ա.Սահինյանը»[6]:

«Гарни и Гегард» աշխատության[7] բարեփոխված և լրացված հրատարակության մեջ Ա.Սահինյանը գրում է. «Շենքի (պալատական – Տ.Մ.) մնացորդների մի մասը գտնվում է VII դարում կառուցված քրիստոնեական պաշտամունքի քառաբսիդ տաճարի հիմքերի տակ»[8], և ուրիշ ոչինչ այդ տաճարի մասին:

Ստ. Մնացականյանը նույնպես անդրադառնում է Գառնիի բոլորակ տաճարին և եթե կառուցման ժամանակի որոշման հարցում նա նույնությամբ կրկնում է Բ.Առաքելյանին, որ այն VII դ.՝ 659 թ. կառուցված հուշարձան է, բայց ահա ծավալատարածական հորինվածքի վերակազմության հարցում նա միանգամայն ինքնուրույն է[9]:

Ընդունելով Գառնիի բոլորակ տաճարի կառուցման Բ.Առաքելյանի սահմանած ժամանակը, կուզենայինք պարզություն մտցնել հարցի մանրամասներում: «Գառնի – III» աշխատությունում[10] կարդում ենք. «VII դարի սբ. Սիոն անունով եկեղեցու վերաբերյալ վկայություն պահպանվել է 1346 թ. մի ձեռագրի հիշատակարանում, որտեղ ասված է. «Ի Հայոց թուին ՃԼ. (ՃԸ – ըստ Բ.Ա. և Գ.Կ.) *չինեցաւ* (ընդգծումը մերն է – Տ.Մ.) սուրբ Սիոն ի Կուրապաղատին (Կուրապաղատէն - ըստ Բ.Ա. և Գ.Կ.) ի վերայ Գառնոյ հողահատին, տեր Ներսիսի հրամանաւ»[11]: Դա նշանակում է, որ եկեղեցին կառուցվել է 659 թ.: Հանրահայտ է, որ մեր պատմիչների գործերում ընդունված է հաղորդել կառուցման ավարտը և ոչ թե սկիզբը: Բանն այն է, որ 659 թ. նաև Ներսես Գ Շինող կաթողիկոսի՝ հայրենի Տայք «կամավոր աքսորից» վերադառնալու տարին է, ինչն անմիջականորեն առնչվում է Թեոդորոս Ռշտունու մահվան հետ: Այդ դեպքում ինչպե՞ս բացատրենք, թե կաթողիկոսը վերադառնալն ու տաճարի կառուցումը մեկ արեց, կառուցեց այդ *կաթողիկեն* (Ն.Մառի ձևակերպմամբ), որն իր չափերով չի զիջում նույնիսկ Հռիփսիմե տաճարին:

Ստ.Մնացականյանն իր նախաձեռնությամբ 659 թ. համարում է տաճարի հիմնադրման տարի: Նա գրում է. «VII դարում ...Ներսես Շինող կաթողիկոսը ...իր մահից ընդամենը երեք տարի առաջ, 659 թ. այստեղ հեթանոսական տաճարի արևմտյան կողմում, համարյա հպված նրան, *հիմնադրեց* (ընդգծումը մերն է – Տ.Մ.) մի մեծ կենտրոնագմբեթ տաճար»[12]:

Մեր կարծիքով, Գառնիի բոլորակ տաճարը Ներսեսը կառուցել սկսել է դեռևս 640-ական թթ., այսինքն՝ Զվարթնոցի հետ գրեթե միաժամանակ, հետևաբար 652 թ., երբ Զվարթնոցը հիմնականում կառուցված էր, նույն ձևով մինչև 652 թ., մինչև Ներսեսի մեկնելը Վաղարշապատից, Գառնիի բոլորակ տաճարը նույնպես հիմնականում ավարտված էր, և այդ ավարտն իր ձևակերպումն ունեցավ՝ օծվեց Ներսեսի կողմից, նրա վերադառնալուց անմիջապես հետո:

Այս հարցն իր երկրորդ կողմն էլ ունի: Մեր աշխատություններում մենք ապացուցված ենք համարում, որ Բանակ տաճարը կառուցվել է Զվարթնոցը կառուցող Ներսես Գ Շինողի կողմից այն տարիներին, երբ նա գտնվում էր հայրենի Տայքում՝ 652-658 թթ. ընթացքում*: Նույն աշխատություններում ճարտարապետական-շինարարական վերլուծությունների արդյունքում եզրակացվել է, որ Բանակ տաճարի կենտրոնական մասը որպես նախօրինակ ունի Բագարանը և Գառնիի բոլորակ տաճարը: Ուրեմն՝ Գառնին 652 թ. պետք է հիմնականում ավարտված լիներ, որ կարողանար Բանակի համար դառնալ նախօրինակ: Իսկ որ այն իրոք Բանակ տաճարի համար նախօրինակ է եղել, մենք չենք տարակուսում[13]:

* Բանակի տաճարը, Սմբատ Դավթա որդու տեղեկությամբ, կառուցել է Դավիթ Կյուրոպաղատի որդի Աղարնասենը՝ իբրև Կյուրիկե Բանակցու առաջնորդարան՝ IX-X դդ. սահմանագծում: *Ծանոթ. խմբագրի:*

Գառնիի բոլորակ տաճարի հատակագծով աշխարհում միայն երեք տաճար կա, երեքն էլ՝ Հայաստանում: Դրանք են. Գառնին՝ VII դ. (645-652/659 թթ.), Խծկոնքի համալիրի Սարգսի եկեղեցին՝ XI դ. (1027 թ.), Մարմաշենի համալիրի մեջ գտնվող բոլորակ եկեղեցին, որի կառուցումը պետք է ժամանակակից համարել մուտը կանգնած մյուս երեք եկեղեցիներին՝ X-XI դդ. սահմանագիծ (986-1029 թթ.):

Գառնիի բոլորակ տաճարի ճարտարապետությունը Խծկոնքի և Մարմաշենի համեմատությամբ յուրահատուկ է, զգալիորեն տարբեր: Խծկոնքի և Մարմաշենի ճարտարապետությունը հարում է Անիի X-XI դդ. հուշարձանների ճարտարապետությանը՝ արտաքուստ դասականորեն պարզ ու մաքուր դեկորատիվ սյունակամարաշարերով հարդարված, իսկ Գառնիի բոլորակ տաճարի ճարտարապետությունը նույնական է VI-VII դդ. ստեղծված, հիմնականում հարթ պատերով կանգնած հուշարձանների՝ Հռիփսիմեի, Գայանեի, Թարգմանչացի ճարտարապետության հետ, յուրահատուկ VII դ. շատ կառույցների համար: Ինչպես Գագկաշենը, որ հատակագծապատկերով նույնական է Զվարթնոցին, սակայն արտաքին հարդարանքն արգասիք է X-XI դդ. լայն տարածում ստացած առավել նրբակազմ դեկորատիվ սյունակամարաշարի մոտիվին, այնպես էլ Խծկոնքի ու Մարմաշենի բոլորակ տաճարները հիմքում ընդունել են Գառնիի հատակագծապատկերը (VII դ.), մինչդեռ արտաքին հարդարանքով հարազատ են X-XI դդ. վերածնունդով ստեղծված ճարտարապետությանը:

Ինչպես Գառնիի հատակագիծն, այնպես էլ մյուսները քառախորանաներ են (тетраконх)՝ չորս անկյունների ավանդատներով, որ ամփոփված են արտաքին բազմանիստ եզրագծերով զանգվածի ներսում:

Գառնիի բոլորակ տաճարի, ինչպես և Մարմաշենի ու Խծկոնքի հատակագծերը յուրօրինակ են ու չեն հանդիպանում «Հռիփսիմեի ու Զվարթնոցի սինթեզը», ինչպես գրում է Ստ.Մնացականյանը[14]: Դրանք պարզապես քառախորան, չորս ավանդատներով, արտաքին բազմանիստ եզրագծերով զանգվածներում ամփոփված տաճարներ են, մեր քառախորան տաճարների բազմազան տիպերից մեկը, որ մյուսների հետ ընդհանրություններ ունեն մասնակի կողմերով միայն:

Գառնիի բոլորակ տաճարի ավերակը չափագրել և առաջին հատակագիծը ստեղծել է Ա.Սահինյանը՝ Բ.Առաքելյանի ղեկավարած հնագիտական արշավախմբում աշխատելու տարիներին: Նրա ներկայացրած հատակագծում մեզ չեն հաջողվում գմբեթատակ քառակուսին ստեղծող որմնամույթերի պարագծերը: Դրանք ենթադրաբար վերակազմել է հեղինակը, հիմք ընդունելով պահպանված երկու բեկոր, ընկած տվյալ հանգույցում: Ա.Սահինյանի վերակազմած պատկերը յուրահատուկ է X-XIII դդ. կառուցված մեր հուշարձանների նույն հանգույցներին: Այդ նույն բեկորների օգտագործմամբ տվյալ հանգույցը վերակազմվում է VII դ. կառուցված այլ հուշարձանների նույն հանգույցի օրինակներով:

Հնարավոր ենք համարում ենթադրել, որ տաճարը, հյուսիսային մուտքից բացի, կարող էր մուտք ունենալ նաև հարավակողմից: Բանն այն է, որ տաճարից հարավ հրվանդանը շարունակվում է դեպի հարավ, և այնտեղ գնալը դժվարամատչելի է, քանի որ արևմտակողմում տեղանքն ընկնում է, արևելակողմում՝ հեթանոսական տաճարն է, նրանից էլ արևելք անցումը՝ նույնպես անհարմար:

Ա.Սահինյանի վերակազմած հատակագծում արևմտակողմի երկու ավանդատներում խորանաձևման փոքր խորշեր են ցույց տրված՝ արևմտյան կողմնորոշմամբ: Նկատի ունենալով, որ VII դ. ավանդատները ծառայում էին նաև որպես մատուռներ, արևելակողմի ավանդատների օրինակով, այստեղ ևս պետք է ցույց տրվեին արևելակողմի պատերի վրա, ինչպես պատկերված են տողերիս հեղինակի գործերում[15]:

Գառնիի բոլորակ տաճարին անդրադառնալու հիմնական շարժառիթը տվյալ դեպքում ոչ այնքան հատակագծի հանգույցների մշակման անընդունելի լինելն է, որքան նրա ծավալատարածական հորինվածքի վերակազմության՝ գոյություն ունեցող նախագծի հետ անհամաձայն լինելը: Այդ նախագիծը տարիներ առաջ կազմել է հանգուցյալ Ստ.Մնացականյանը[16]: Իր վերակազմության մեջ նա հիմնականում համաձայնել է տաճարի առաջին հատակագիծը կազմող Ա.Սահինյանի հետ՝ գմբեթատակ քառակուսու անկյունների որմնամույթերի պարագծերի հարցում, որի անընդունելի լինելու վերաբերյալ մեր կողմից մանրամասն խոսվեց վերևում: Այնուհետև, Ա.Սահինյանը տաճարի համար երկրորդ մուտք է նախագծել արևմտակողմից, մի բան, որ անհավանական է՝ վերջինիս մոտենալու դժվարությունը նկատի ունենալով: Սակայն տաճարի ներքին տարածության զգալի չափերը ստիպում են համաձայնել այդ՝ երրորդ մուտքի գոյությանը:

Ստ.Մնացականյանը Ա.Սահինյանի կազմած հատակագծում արևմտակողմի ավանդատների՝ արևմուտք ուղղված կիսաբոլորակ խորշերը վերացրել է. նա կարող էր խորշեր ցույց տալ արևելյան պատերի վրա Խծկոնքի օրինակով, բայց չի արել:

Իր վերակազմած հատակագծում Ստ.Մնացականյանը ավանդատների մուտքերը ցույց է տվել այնպես, կարծես թե դրա համար կանոններ կամ նախօրինակներ չկան. արևելյան երկու ավանդատների մուտքերը ցույց է տվել արևելյան խորանից, արևմտյան երկու խորանների մուտքերը ցույց է տվել հյուսիսային և հարավային խորաններից: Ստացվում է, որ չորս խորանների բոլոր դռներն իրենց կանոնական և ավանդական տեղերում չեն:

Ինչպես ստորև կերևա, Գառնիի բոլորակ տաճարը Ստ.Մնացականյանին հետաքրքրել է, ըստ երևույթին, գլխավորապես այն առումով, որ նրա օրինակով հավաստի իր որոշ դրույթները Զվարթնոցի և այդ տիպի տաճարների վերակազմությունների, հատկապես նրանց երկրորդ աստիճանը արտաքուստ խաչածև պատկերելու հարցում: Գառնիում այդ ավերակը չափազանց փոքր չափով է պահպանված, հետևաբար, այն բավարար կռվան չի կարող լինել նման մտքի հանգելու համար: Ստ.Մնացականյանը նշում է. «Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, որ այս տաճարը ևս դասվում է Զվարթնոցի տիպին հարող տաճարների շարքին, որովհետև ոչ արտաքինից բազմանիստ լինելը և ոչ էլ ներքին տեղադրակոնխային կոմպոզիցիան, հասկանալի է, բավական չէին այդպիսի դասակարգման համար: Սակայն այդ տարակուսանքը փարատվում է, երբ անդրադառնում ենք նրա հնարավոր ծավալային կոմպոզիցիային, որը, ինչպես կտեսնենք տաճարի վերակազմության ժամանակ, ընդհուպ մոտենում է Զվարթնոցի հորինվածքին, ընդ որում, այստեղ ևս առաջին բազմանիստ հարկաբաժնի վրա է բարձրացել նրա երկրորդ հարկաբաժնի խաչածև կոմպոզիցիան: *Ահա այս Զվարթնոցի տիպի տաճարներին այնքան յուրահատուկ կոմպոզիցիայի առկայությունն է, որ մեզ հիմքեր է տվել Գառնիի տաճարը ևս դասել մեզ հետաքրքրող տաճարների շարքին*»[17] (ընդգծումը մերն է – Տ.Մ.):

Ինչպես հասկանում ենք վերոհիշյալ ընդարձակ մեջբերումից, նա, առանց այլևայլ հանգամանքներ նկատի ունենալու, Գառնիի հատակագծի վրա բարձրացրել է եռաստիճան կառուցվածք, ասելով, որ սա Զվարթնոցի կոմպոզիցիան է, տաճարի երկրորդ աստիճանն էլ խաչածև է, ինչպես հանիրավի վեճի առարկա դարձած Զվարթնոցի երկրորդ աստիճանի հորինվածքը, բայց այստեղ հարց է ծագում, թե ինչու՞ Ստ. Մնացականյանը նույն մոտեցումը չի ունեցել Բանակ տաճարի վերակազմության մեջ, չէ՞ որ վերջինիս կենտրոնը չի տարբերվում Գառնիի հատակագծից: Այդ դեպքում Բանակը կստացվեր քառաստիճան տաճար, մինչդեռ իրականում այդպես չէ: Ստ.Մնացականյանը չի նկատել, որ Զվարթնոցում և Գառնիում առաջին բազմանիստ «հարկաբաժիններ» տարբեր ձևով են ստեղծված. Զվարթնոցում՝ բոլորակ սրահ կազմող պատով, իսկ Գառնիում բոլորակ սրահ կազմող պատ չկա:

Վերակազմության նյութերին ծանոթանալով՝ անսխալ կարող ենք պնդել, որ Գառնիի բոլորակ տաճարի վերակազմության ստեղծողը հաշվի չի առել այն հանգամանքը, որ բոլորակ եկեղեցու կառուցման ժամանակներում (VII դ.) անմիջապես կողքին կանգնած է եղել հեթանոսական տաճարը, հանգամանք, որ անկասկած թելադրել է, թե ինչ և ինչպես կարելի է կառուցել նրա հարևանությամբ:

Համաձայն Ստ.Մնացականյանի, «...Ներսեսը, հիմնելով իր ամառային կացարանը, ցանկացել է այստեղ՝ Գառնիում ևս ունենալ մի տաճար, որը որոշակի հիշեցներ նրա չքնաղակերտ նախօրինակը՝ Զվարթնոցը»[18]:

Ելնելով վերոհիշյալ համոզմունքներից՝ Ստ.Մնացականյանը Զվարթնոցի հատակագծի հետ գրեթե ընդհանրություն չունեցող Գառնիի բոլորակ տաճարի հատակագծի վրա բարձրացրել է Զվարթնոցի իր վերակազմության տարբերակը: Ընդ որում, նախագծի մասերի փոխադարձ համաչափությունները խիստ անհաջող են թե՛ առանձին վերցրած եկեղեցու համար և թե՛ հարևան տաճարի ծավալների հետ համադրելու առումով: Ստեղծված ընդհանուր պատկերում եկեղեցին իր մասնատվածությամբ անհամեմատ զիջում է մոնումենտալությամբ հատկանշվող հեթանոսական տաճարին: Իսկ այդպիսի իրավիճակը չէր բավարարի քրիստոնեական համայնքի և եկեղեցական առաջնորդների սպասելիքները:

Ստ.Մնացականյանի վերակազմության անհաջողության հիմնական պատճառը արհեստականորեն եռաստիճան հորինվածք ստեղծելն է: Նա հետևել է Բագարանի օրինակին, սակայն այս վերջինում բոլորովին այլ հատակագիծ է և բարձրության այլ չափեր, մասերի այլ փոխհարաբերություններ: Հիշյալ վերակազմության մեջ տաճարի երեք աստիճանները միմյանց նկատմամբ անհարիր են, մասշտաբային առումով՝ տարբեր, ճակատային հարթությունների մշակումները (թեկուզև սխեմատիկ)՝ ոչ միասնական, ասես տարբեր շինություններից ինչ-որ դրվագներ բերել, դրել են միմյանց վրա: Այդ է պատճառը, որ առաջին աստիճանը ստացվել է անհնախադեպ ցածր: Բավական անհաջող են նաև ներքին մասերի փոխհարաբերությունները. օրինակ, ամենակարևոր դրվագներ հանդիսացող խորանները, որ տեղավորված են առաջին աստիճանի ներսում, բավական ցածր են, մինչդեռ նախախորանները՝ անհարկի բարձր:

Գոյությունը պահպանած մեր եկեղեցիներից ոչ մեկի բարձրությունն այդպես չի զիջել լայնական կամ երկայնական չափերին, ինչպես Ստ.Մնացականյանի վերակազմության մեջ՝ բարձրությունը (6-7 մ) հավասարվում է մեծ թմբկապատի տրամագծի (20 մ) մեկ երրորդին: Մեր վերակազմության մեջ այդ նույն չափը կազմում է մեծ թմբկապատի մոտ կեսը (10-11 մ), և պետք է նկատել, որ նույնպես շատ բարձր չէ: Խծկոնքի նույնատիպ եկեղեցու ստորին մեծ թմբկապատի բարձրությունը կազմում է տրամագծի մոտ 0,75 մասը: Վերջին երկուսը համարում ենք ընդունելի, նկատի ունենալով, որ հուշարձանները, սկսած վաղ միջնադարից, աստիճանաբար բարձրությամբ ձգվել են դեպի վեր: Ինչ խոսք, եթե Գառնիի բոլորակ տաճարը կանգնած չլիներ հեթանոսական տաճարի անմիջապես կողքին, վերակազմության մեջ մենք ևս ինչ-որ չափով ավելի բարձր կպատկերեինք:

Մեր վերակազմած հատակագծում՝ ա) նոր պարագծեր են ստացել գմբեթատակ քառակուսին ստեղծող որմնամույթերը, որոնք ընդունել են վաղ միջնադարում կառուցված որմնամույթերի բնույթ, բ) մուտք է ցույց տրվել տաճարի նաև հարավակողմից, ինչն, անկասկած, եղել է ներքին բակը կապող միակ ուղին, գ) բոլոր ավանդատներում մուտքերը ցույց են տրվել բնականոն տեղերում, դ) արևմտակողմի երկու ավանդատների արևելյան պատերում ցույց են տրվել կիսաշրջան խորանաձև խորշեր:

Մեր կարծիքով, Գառնիի բոլորակ տաճարի կառուցման դրդապատճառներն ավելի լուրջ են եղել, քան Ստ.Մնացականյանի բացատրականում է. դրանք ունեցել են կրոնական-քաղաքական երանգ: Ինչպես ամրոցում, այնպես էլ նրան հարող բնակելի տարածքում չի եղել քրիստոնեական եկեղեցի, հետևաբար պետք է այն կառուցվեր և լիներ այնպիսին, որ հակակշռեր հեթանոսական տաճարին:

Մեր պատկերացմամբ, կառուցողը եղել է հմուտ արվեստագետ, հարցին մոտեցել է տակտով, խնդիրը լուծել մտածված. նա իր շինությունը տեղադրել և նրա ճարտարապետությունը լուծել է այնպես, որ արդեն գոյություն ունեցող ներդաշնակ միջավայրում իրենով ոչ միայն խորքություն չառաջացնի, այլև հարստացնի ու առավել բովանդակալից դարձնի այն: Նա չէր ձգտելու «ոչնչացնել» հեթանոսական տաճարի ունեցած գեղագիտական նշանակությունը, միաժամանակ չէր հանդուրժելու, որ իր նոր կառույցը նրա հարևանությամբ նսեմանա որպես արվեստի գործ. նա իր արժանիքներով պիտի նախորդին չգիջի, մնա համապատասխան մակարդակի վրա:

Գլխավոր հատակագծից պարզ երևում է, որ եկեղեցու կառուցման համար տեղանքը պարտադրված է եղել, այսինքն՝ ստիպված են եղել տեղադրել այդ նեղվածքում: Ավելի հարմար տեղ չի եղել՝ ամրոցի մուտքից մինչև այդ կառույցներն ընկած ազատ տարածությունը հրապարակ էր, որը պետք է անձեռնմխելի մնար. անհրաժեշտ է եղել երկու հարևան շենքերի հյուսիսային ճակատները, որոնք նաև գլխավոր մուտքերն են, դնել մի գծի վրա: Ահա այս հանգամանքն է, որ շատ բարդ խնդիրների լուծման առաջ է կանգնեցրել ճարտարապետ-կառուցողին, և պետք է խոստովանել, որ նա հաջողությամբ է գլուխ բերել իր գործը: Այդ տարածքում, իհարկե, ավելի դյուրին կլիներ կառուցել ուղղանկյուն պարագծերով շինություն, որի դեպքում հնարավոր կլիներ խուսափել հեթանոսական տաճարին ընդհուպ մոտենալուց: Սակայն կառուցողը նախընտրել է տաճարների բոլորակ տիպը և չի սխալվել: Դեռ ավելին, հեթանոսական տաճարը փրկել է ավերածությունից, այսինքն՝ ամբողջությամբ չի ծածկել արևմտյան ճակատն իր շքեղ սյունաշարով: Եկեղեցու բոլորակ հորինվածքը հնարավոր է դարձրել հիշյալ արևմտյան ճակատը տեսանելի թողնել ինչպես հյուսիսից, այնպես էլ հարավից:

Հատակագծային հարցերը հաջողությամբ լուծելով, ճարտարապետ-կառուցողն աշխատել է նույնպիսի արդյունքի հասնել նաև եկեղեցու արտաքին հորինվածքային հարցերի լուծման գործում: Նա եկեղեցու հիմնական՝ ստորին լայնանիստ ծավալի բարձրությունը, այսինքն՝ այն վերից պսակող քիվը, վերցրել է կից կանգնած տաճարի հիմնական ծավալի հորիզոնական քիվի բարձրությանը հավասար: Եկեղեցու ստորին թմբկածև ծավալի տանիքի թեքությունը վերցրել է ճակտոնի թեքությամբ, որից վերև բարձրանում է եկեղեցու գմբեթի թմբկապատը՝ իր բրգածև վեղարով:


Այսպես վարվելով, հնարավոր է եղել պահպանել ներդաշնակ հավասարակշռությունը: Դրան չեն խանգարել անտիկ տաճարի հունահռոմեական ճարտարապետությամբ կերտված հարուստ սյունաշարը, նաև եկեղեցու լայնական նստվածքով խոշոր ծավալը և բարձրացած գմբեթային մասը: Այդտեղ գործել է հակադրությունների միասնությունը:

Գառնիի հատակագիծն ունեցող Խծկոնքի Սարգսի եկեղեցին երկաստիճան է. այն համապատասխանում է հատակագծային տվյալներին: Խծկոնքը հայ միջնադարյան ճարտարապետության լավագույն հուշարձաններից է և մնում է այդպիսին:


Նույնպիսի երկաստիճան լուծում պետք է ունեցած լինի նաև Գառնիի բոլորակ եկեղեցու արտաքին ծավալատարածական հորինվածքը: Ահա այդպիսին է նա մեր վերակազմությամբ. այն համապատասխանում է հատակագծի բոլոր տվյալներին և, որ գլխավորն է մեր կարծիքով, հեթանոսական տաճարի հետ ապրել, գոյատևել է ներդաշնակ՝ դարեր ի վեր:




Գառնիի բոլորակ տաճարը (վերակազմությունը Ստեփան Մնացականյանի) հեթանոսական տաճարի հարևանությամբ




Գառնիի բոլորակ տաճարը (վերակազմությունը Տիրան Մարությանի) հեթանոսական տաճարի հարևանությամբ



Գառնիի բոլորակ տաճարի հատակագիծը (վերակազմությունը Տիրան Մարությանի)



Գառնիի պալատական շենքեր և նրանց շրջապատի կառույցներ, հատակագիծ



Գառնիի բոլորակ տաճարի հատակագիծը (վերակազմությունը Ալեքսանդր Սահինյանի)

Ծ ա ն ո թ ա գ ր ու թ յ ու ն ն ե ր

1 Խ.Դաղյան, 1907 թ. հնագիտական պեղումներ, «Արարատ», 1909, Բ, էջ 179:
2 Թ.Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ.2, Երևան, 1948, էջ 126:
3 Архив Н.Я.Марра, Архив АН РФ, ф. 800, д.29, с. 61; Տե՛ս Ստ.Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 222-223:
4 Տե՛ս Ն.Բունիաթյան, Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնի ամրոցում, Երևան, 1933:
5 Տե՛ս Б.Аракелян, Гарни I. Результаты работ археологической экспедиции Института истории АН Арм.ССР 1949-1950 гг., Ереван, 1951, с. 69-72.
6 Տե՛ս Բ.Առաքելյան, Գ.Կարախանյան, Գառնի, III, 1949-1956 թթ. պեղումների արդյունքները, Երևան, 1962, էջ 29:
7 Տե՛ս А.Саинян, Гарни и Гегард, М., 1958.
8 Ա.Սահինյան, Գառնիի և Գեղարդի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1969, էջ 12:
9 Տե՛ս Ստ.Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 202-227:
10 Բ.Առաքելյան, Գ.Կարախանյան, նշվ. աշխ., էջ 29:
11 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ. Լ.Խաչիկյան, Երևան, 1950, էջ 352:
12 Ստ.Մնացականյան, Երևանը և նրա շրջակայքը, Երևան, 1971, էջ 74:
13 Տե՛ս Տ.Մարության, Տայքի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1972, էջ 35-89: Նույնի՝ Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք, Երևան, 1978, էջ 34-104: Նույնի՝ Архитектурные памятники: Звартноц, Аван, Собор Анийской Богоматери..., Ереван, 1989, с. 167-204.
14 Ստ.Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, էջ 223:
15 Տե՛ս Տ.Մարության, Տայքի ճարտարապետական հուշարձանները, էջ 65: Նույնի՝ Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք, էջ 80: Նույնի՝ Архитектурные памятники..., с. 196.
16 Տե՛ս Ստ.Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, էջ 224, գծ. 53:
17 Անդ, էջ 225:
18 Անդ, էջ 226:

Анатолий Высоцкий
(Москва)

ДВА ПАМЯТНИКА РАННЕСРЕДНЕВЕКОВОЙ ХРИСТИАНСКОЙ АРХИТЕКТУРЫ ИЗ СРЕДНЕЙ АЗИИ

Письменные источники о раннесредневековой христианской культуре исторических Ирана и Средней Азии были суммированы еще в конце XIX-начале XX вв[1]. Памятники же раннесредневековой архитектуры из современной Средней Азии, связываемые с христианством, в противоположность памятникам раннесредневековой христианской архитектуры восточной части Месопотамии[2] (а также Синьцзяна[3]), были открыты относительно недавно. К настоящему времени были опубликованы четыре памятника: два из исторического Ирана и два из исторической Средней Азии; причем два из них были опубликованы как христианская церковь: постройка "Хароба-Кошук" на поселении Дуе-Чакын около Мерва (Марыйская область Туркменистана) и постройка "объект IV" на городище Ак-Бешим (Кыргызстан), и два из них – как христианский монастырь[4]. В настоящей статье рассматриваются два первых.

К сожалению, при сравнительном анализе всех четырех памятников недоучитывался историко-культурный фон, и в качестве аналогий привлекались случайные памятники, что не могло способствовать правильности выводов. Задача настоящей статьи – уточнение интерпретаций, датировок и реконструкций двух рассматриваемых памятников, а также выявление генезиса их архитектурной иконографии с всесторонним учетом историко-культурного фона, следовательно, с привлечением в качестве аналогий всех необходимых памятников[5].

Раннесредневековая христианская культура Ирана и Средней Азии не была оторвана как от нехристианской культуры, так и от христианской культуры вне их. (Восточная же часть Северной Месопотамии, аванпоста на пути распространения христианства из Византии в Иран, являлась составной частью Ирана).

Обычная характеристика христианской церкви Ирана и Средней Азии термином "несторианская" или "сирийско-несторианская" не покрывает собой всех ее сторон. Для раннего средневековья этот термин является дезориентирующим анахронизмом. Несторианство возникло в Византии (и никак не в Иране и Средней Азии) лишь к 431 г. Христианская же церковь Ирана и Средней Азии приняла несторианство как официальный толк христианства лишь в 484 г.

Более того, монофизитство, возникшее в Византии к 451 г., распространялось в Иране и Средней Азии, особенно, в восточной части Северной Месопотамии при Хосрове II (591-628). Христианская церковь Ирана и Средней Азии полностью отмежевалась не только от православия, но и от монофизитства лишь после завоеваний арабов в середине VII в., которые полностью прекратили традиционное подчинение всех христиан на определенной территории одной христианской церкви.

Вместе с тем, в отличие от несторианства и монофизитства, оппозиционных

Византии и поэтому поддерживаемых Ираном, православие (малкитство), официальное для Византии (и никак не оппозиционное ей)[6], вряд ли широко распространилось в Иране и Средней Азии[7]. В письменных источниках термины, соответствующие русскому "православный", – греческий "ὀρθοδόξος", сирийский "tryṣšwbh", армянский "ուղղափառ" и отчасти арабский "му'мин (насрани)" – иногда имеют дезориентирующее оценочное значение. У авторов-несториан и у авторов-монофизитов (в частности, у Иоанна Эфесского, якобы свидетеля распространения православия в Иране и Средней Азии)[8] они имеют значение соответственно "несторианин" и "монофизит"

Таким образом, раннесредневековая христианская культура Ирана и Средней Азии была связана с культурой стран Закавказья, особенно, Армении: страны Закавказья с 387 г. входили преимущественно в состав Ирана и в них господствовало монофизитство, но распространилось и несторианство. Раннесредневековая христианская культура Ирана и Средней Азии была связана и с культурой Сирии, особенно, западной части Северной Месопотамии: Сирия была населена преимущественно сирийцами и подчинялась (как и частично до 363 г. восточная часть Северной Месопотамии) Антиохийской церкви, первоначальному оплоту несторианства и монофизитства, а с середины VI в. – и параллельной иаковитской или сирийско-монофизитской церкви. Но раннесредневековая христианская культура Ирана и Средней Азии не была связана с культурой Малой Азии, особенно, ее юго-западной части: Малая Азия входила в состав Византии, была населена преимущественно греками и с 451 г. подчинялась Константинопольской церкви, постоянному оплоту православия.

Естественна поэтому необходимость привлечения в качестве аналогий памятников раннесредневековой светской архитектуры Ирана и Средней Азии и памятников раннесредневековой христианской архитектуры восточной части Северной Месопотамии, а также стран Закавказья и Сирии, но не Малой Азии.

Первый из рассматриваемых памятников располагается в историческом Иране, в кустаке Хорасан, в шахре Мерв (античная Маргиана) около одноименного центра шахра Мерв, аванпоста на пути распространения христианства из Ирана в Среднюю Азию. Здесь была резиденция епископа и митрополита, по крайней мере, с начала V в.[9]; здесь же был раскопан предположительно христианский некрополь[10]. Этот памятник – постройка "Хароба-Кошук" на поселении Дуе-Чакын около Мерва – состоит из двух помещений, базиликального и центрического, сообщающихся друг с другом и расположенных на одной продольной оси. После обследования в 1951 г. этот памятник был впервые опубликован руководителем обследования, Н.А.Пугаченковой[11], как христианская, скорее всего, несторианская, церковь V-VI вв. с перестройками (для вторичного использования) до XII в. После раскопок в 1966-1967 гг., позволивших уточнить планы обоих помещений, этот памятник был повторно опубликован (к сожалению, без подробных описания и иллюстраций) руководителем раскопок Г.Я.Дресвянской[12], с той же интерпретацией и датировкой. Этот памятник был упомянут и рядом других исследователей[13], причем в одном случае[14] как атрий (двор) и церковь.

Единственным основанием для интерпретации памятника являлся и может являться лишь его сравнительный анализ: при раскопках не было зафиксировано никаких связанных с христианством находок.

Памятник сопоставим с некоторыми раннесредневековыми светскими памятниками Ирана. Это – постройки, которые состоят из двух помещений, базиликального и центрического, сообщающихся друг с другом и расположенных на одной продольной оси, как дворец Кала и Духтар около Фирузабада (III в.)[15] и дворец в Хисар-тепе

около Дамгана (V в.)[16]. Однако, эти памятники имеют неопределенную ориентацию, рассматриваемый же – восточную (неточную, северо-восточную, объяснимую ориентацией по солнцу летом)[17]. Кроме того, эти памятники имеют в базиликальном помещении вход-айван на продольной оси, рассматриваемый же – входы лишь по обеим сторонам ее.

Эти и некоторые другие черты позволяют сопоставить памятник с раннесредневековыми (а также вообще средневековыми) христианскими (но также светскими) памятниками Ирана (а также стран Закавказья и Сирии) (в раннесредневековых границах).

Базиликальное помещение-наос, с входами лишь по сторонам продольной оси, характерно для многих средневековых христианских памятников Ирана, стран Закавказья и Сирии, для различных базиликальных построек. (Большое число входов, если оно относится к эпохе функционирования, может объясняться лишь большой длиной памятника и большим числом пролетов)[18]. Это, например, – нижняя церковь в Ктесифоне (VI в.)[19], верхняя церковь в Ктесифоне (конец VI - начало VII вв.)[20], церковь на холме XI в Хире (VI в.)[21] и церковь в Болниси (V в.)[22]; все они – с входами лишь по обеим сторонам продольной оси, иногда – с входами во всех пролетах, кроме крайних. Это, например, – и главная церковь в монастыре Мар Азазиел в Кефр Зехе (V в.)[29], церковь Мар Ахуддемех в Мосуле (XII в.)[25], церковь в монастыре Танахатванк около Аравуса (V в.)[25], главная церковь в монастыре Хогеацванк около Касрика (V в.)[26], большая церковь в Манхути (VI-VII вв.)[27], церковь в Кликис-Джвари (VII-VIII вв.)[28], церковь в Рбейе (V в.)[29] и церковь Павла и Моисея в Дар Ките (V в.)[30]; все они – с входами лишь по одной стороне продольной оси, преимущественно – с входами с юга.

Так или иначе, происхождение этой черты памятника можно связать непосредственно с раннесредневековыми христианскими памятниками Ирана.

Базиликальное помещение-наос, однонефное, с равномерными пилонами, со сводчатыми нишами, характерно для многих средневековых христианских и светских памятников Ирана, стран Закавказья и Сирии. Это – однонефные базиликальные постройки со сводчатыми нишами и с коробовым сводом, как главная церковь в монастыре Мар Азазиел в Кефр Зехе (V в. ?), отчасти церковь Мар Тахмазгерт в Киркуке (X в.)[31], две пещерные гробницы в монастыре Мар Габриел (Дейр ал-Умар) в Картамине (VI в. ?)[32], главная церковь в монастыре Хогеацванк близ Касрика (V в.), зал дворца около церкви Звартноц близ Эчмиадзина (VII в.)[33], церковь в Кликис Джвари (VII-VIII вв.), четвертая церковь в Пицунде (VI в. ?)[34], церковь N 1 в Мингечауре (V в. ?)[35], церковь N 1 в Верхнем Чирюрте (VI-VII вв)[36], отчасти главная церковь в монастыре Сурб Акоп в Джиндейрмене (IX в.)[37], мавзолей в Хассе (IV в.)[38] и отчасти пещерная гробница в Эдессе (IV-VII вв. ?)[39].

Такое же базиликальное помещение-наос характерно и для некоторых памятников юго-западной части Малой Азии. Это – однонефные базиликальные постройки со сводчатыми нишами, но преимущественно с крестовыми сводами или с куполами на парусах, как безымянная церковь в Сардах[41] или церковь Георгия в Сардах[42]. Однако, функции и даты этих памятников преимущественно неопределенны: так, одна из двух безымянных церквей в Гиераполе[43] – зал терм после перестройки (до IV в.; перестроен в V в.)[44], а церковь Троицы в Эфесе[45], якобы самая близкая аналогия рассматриваемого памятника[46], – центральная часть церкви Марии после второй перестройки (II в.; перестроена в IV-V, V-VI и VII-VIII вв.)[47].

Так или иначе, происхождение этой черты памятника можно связать непосредственно с раннесредневековыми христианскими и отчасти со светскими памятниками Ирана (и никак не юго-западной части Малой Азии).

Центрическое помещение-алтарная часть – снаружи прямоугольное, равное по ширине базиликальному помещению-наосу и вписывающееся вместе с ним в единый прямоугольник; оно – внутри противопоставленное базиликальному помещению-наосу, Т-образное, с прямоугольником (и никак не квадратом[48]) в центре, с тремя прямоугольными рукавами на севере, юге и востоке, меньшими по ширине соответствующей стороны прямоугольника; оно – в целом не характерно для средневековых христианских памятников Ирана, стран Закавказья и Сирии. (Северный и южный рукава не являются трансептом, разделяющим алтарную часть и наос[49]; копоть на восточной стене восточного рукава, если она относится к эпохе функционирования, может объясняться лишь обычными для христианского культа светильниками[50]).

Вместе с тем, среди средневековых христианских памятников Ирана и Сирии, а также соседней с Сирией Палестины встречаются различные базиликальные постройки с алтарной частью, внутри Т-образной или триконховой, причем купольной, в Иране противопоставленной наосу, как главная в монастыре Хидр Елиас около Мосула (XII в.)[51], южная церковь в монастыре Симеона Столпника Младшего на Дивной горе около Антиохии (VI-VII вв.)[52] и церковь в Рас ас-Сиаге на горе Небо после перестройки (IV в.; перестроена в V в.)[53] (сравни отчасти главную церковь в монастыре на острове Харк (V-VII вв. ?)[54] и отчасти церковь Мар Ахуддемех в Мосуле (XII в. ?)).

Среди раннесредневековых светских памятников Ирана встречаются и постройки, которые состоят из двух помещений, базиликального и центрического, причем купольного, сообщающихся друг с другом и расположенных на одной продольной оси, как дворец Кала-и Духтар около Фирузабада (III в.) и дворец в Хисар-тепе около Дамгана (V в).

Наконец, среди средневековых христианских памятников Ирана, стран Закавказья и Сирии встречаются различные базиликальные постройки с алтарной частью, снаружи прямоугольной, равной по ширине наосу и вписывающейся вместе с ним в единый прямоугольник, внутри также прямоугольной, в Иране противопоставленной наосу[55].

Происхождение этой черты памятника можно связать, прежде всего, равным образом, с раннесредневековыми христианскими памятниками соседней с Сирией Палестины типа церкви в Рас ас-Сиаге на горе Небо после перестройки (IV в.; перестроена в V в) и с раннесредневековыми светскими памятниками Ирана типа дворца Кала-и Духтар около Фирузабада (III в). Рассматриваемый памятник – первый среди средневековых христианских памятников Ирана – различных базиликальных построек с алтарной частью внутри не только купольной, но и Т-образной.

Таким образом, исходя из сравнительного анализа памятника, а также из историко-культурного фона, следует признать обоснованной интерпретацию памятника как христианского, скорее всего, несторианского (н никак не православного (малкитского)[56]), причем как церкви в целом.

Основаниями для датировки памятника являлись и могут являться: дата поселения Дуе-Чакын (VI-VII вв.)[57], даты аналогий, включая аналогии по строительной технике в Иране (V-VII вв.)[58], и даты находок, относящихся к эпохе функционирования, – керамики (V-VI вв.)[59] и монет Кавада (488-531) и Хосрова II (591-628)[60]. Однако, расплывчатость большинства дат, кроме дат монет, и неопределимость по публикации положения находок (на первоначальном полу ?) являются препятствием для

точной датировки памятника.

Так или иначе, исходя из этих оснований, а также из историко-культурного фона, следует признать слишком ранней и, возможно, слишком широкой датировку памятника V-VI вв. и предложить взамен датировку памятника периодом с 484 г., с легализации христианства Ираном, и до конца VI в. (но, возможно, и до 651 г., до завоевания арабами Мерва).

Задача реконструкции памятника включает лишь реконструкцию перекрытия центральной части наоса и всей алтарной части.

Исходя из строительной техники наличных остатков, а также из строительной техники аналогий, включая все аналогии по строительному материалу (кирпичу-сырцу) в восточных областях Ирана, можно предложить следующую реконструкцию. Центральная часть наоса шириной около 3,25м была перекрыта сводом, как и пролеты между пилонами шириной около 2,5м и с остатками сводов. Прямоугольные рукава алтарной части шириной около 3,25м были также перекрыты сводами. Наконец, прямоугольник алтарной части размером около 5,6x3,75 м был перекрыт куполом на тромпах, как и главный зал храма огня в Кух-и Хвадже после второй перестройки (VI-V вв. до н. э.; перестроен в III-I вв. до н. э. и III в.)[61] размером около 7,0x7,0 м; причем, скорее всего, он был перекрыт куполом на тромпах и сводами, как и зал храма огня в Кух-и Хвадже после второй перестройки (VI-V вв. до н. э.; перестроен в III-I вв. до н. э. и III в.) размером около 8,5x3,0 м.

Второй из рассматриваемых памятников располагается в исторической Средней Азии, в области Семиречье, на территории Тюркского каганата. Сюда христианство проникло, по крайней мере, в середине VII в.[62] Этот памятник – постройка "объект IV" на городище Ак-Бешим состоит из трех помещений, базиликального и центрического, сообщающихся друг с другом и расположенных на одной продольной оси, и прямоугольного, изолированного от других и расположенного сбоку от продольной оси. После раскопок в 1954 г., не позволивших полностью установить план первого помещения, этот памятник был опубликован руководителем раскопок, Л.Р. Кызласовым[63], как христианская церковь VIII в., точнее, как атрий (двор), церковь и баптистерий. Этот памятник был упомянут и рядом других исследователей[64], причем, за исключением одного случая[65], как церковь в целом.

Основаниями для интерпретации памятника являлись и могут являться как его сравнительный анализ, так и некоторые находки – 18 захоронений по христианскому обряду[66]. Положение этих находок, во всех трех помещениях и снаружи, с востока, тяготеющее к периметру всех трех помещений, особенно, второго, соответствует обычаю захоронений рядовых мирян, монахов и клириков в церквях, особенно, около их алтарей, не отменимому никаким запретом[67]. Поэтому положение этих находок заставляет относить их именно к эпохе функционирования. Однако, оно не способствует точной интерпретации помещений памятника.

Памятник сопоставим с некоторыми раннесредневековыми буддийскими памятниками Средней Азии, Синьцзяна и Гандхары.

Второе помещение памятника, центрическое, можно сопоставить с некоторыми раннесредневековыми буддийскими памятниками Средней Азии, Синьцзяна и Гандхары. Это – центрические постройки, внутри Т-образные с квадратом в центре, с тремя прямоугольными рукавами, меньшими по ширине стороны квадрата, как второй буддийский храм в Ак-Бешиме (VI-VII вв.)[68], отчасти буддийский храм – в Хочо[69] и несколько пещерных буддийских храмов в Бамийане (V-VIII вв.)[70] (сравни отчасти

маздеистский храм в Сеталаке 1 после первой перестройки (IV в.; перестроен в IV-V и V-VI вв.))[71]. Однако, эти памятники имеют неопределенную ориентацию, рассматриваемый же – восточную (почти точную). Кроме того, первый из этих памятников имеет обход.

Первое и второе помещения памятника, базиликальное и центрическое, также можно сопоставить с некоторыми раннесредневековыми буддийскими памятниками Средней Азии, Синьцзяна и Гандхары. Это – постройки, которые состоят из двух помещений, базиликального и центрического, иногда внутри Т-образного, сообщающихся друг с другом и расположенных на одной продольной оси, как первый буддийский храм в Ак-Бешиме (VII-VIII вв.)[72], буддийский храм – в Хочо[73] и пещерный буддийский храм (?) в Наи Кале (до VIII в. ?)[74] (сравни отчасти первый маздеистский храм в Пенджикенте после второй перестройки (V в. перестроен в VI и VII-VIII вв.)[75]). Однако, эти памятники имеют неопределенную ориентацию, рассматриваемый же – восточную (почти точную). Кроме того, эти памятники имеют в базиликальном помещении вход на продольной оси, рассматриваемый же – вероятно, входы лишь по обеим сторонам, по крайней мере, по одной стороне ее. Наконец, первый из этих памятников имеет обход вокруг центрического помещения. Эти и некоторые другие черты и находки, как и отсутствие среди находок каких-либо связанных с буддизмом, позволяют сопоставить памятник с раннесредневековыми (а также вообще средневековыми) христианскими памятниками Ирана (а также стран Закавказья и Сирии) (в раннесредневековых границах).

Второе помещение памятника, центрическое, можно сопоставить с некоторыми раннесредневековыми памятниками Ирана, стран Закавказья и Сирии. Это – центрические купольные постройки преимущественно типа вписанного креста (и никак не типа свободного (обнаженного) креста[76], характерного для стран Закавказья, а также для Малой Азии, и никак не для Сирии, а также для Ирана)[77]; они – внутри крестообразные или Т-образные, с квадратом в центре, с прямоугольными или полукруглыми рукавами на севере, юге и востоке, меньшими по ширине стороны квадрата, как отчасти церковь ал-Адхра в Хахе (V в. ?)[78], баптистерий или мартирий в церкви Мар Малка в Мидйате (V-VII вв. ?)[79], отчасти церковь в Мастаре (VII в.)[80], главная церковь в монастыре Дейр Зафаран (V в. ?)[81] и отчасти баптистерий или мартирий в церкви "базилика В" в Рсафахе (V в.)[82]. Однако, эти памятники, если являются церквями, всегда имеют, помимо наоса, алтарную часть с собственно алтарем, которая отделена от наоса, включает, помимо полукруглого рукава с собственно алтарем на востоке, одно или два дополнительных помещения и не выступает из полукруглого рукава так далеко на запад. Кроме того, эти памятники никогда не имеют атрия (характерного не только для Средней Азии и Синьцзяна)[83], как не имеют атрия, по крайней мере, на продольной оси, и все средневековые христианские памятники Ирана, стран Закавказья и, за некоторыми исключениями, Сирии, в отличие от буддийских и маздеистских памятников Средней Азии Синьцзяна, как первый буддийский храм в Ак-Бешиме (VII-VIII вв.), первый маздеистский храм в Пенджикенте после второй перестройки (V в.; перестроен в VI и VII-VIII вв.) и большой буддийский храм в Йар-хото[84].

Первое и второе помещения памятника, базиликальное и центрическое, как и все три его помещения, включая прямоугольное, также можно сопоставить с некоторыми средневековыми христианскими памятниками Ирана, стран Закавказья и Сирии. Это – различные базиликальные постройки, упомянутые при сравнительном анализе постройки "Хароба-Кошук" на поселении Дуе-Чакын около Мерва, и сам последний

Даты жизни Григора Татеваци известны – 1346-12.XII.1409 г. (или первые дни 1410 г.). Л.Хачикян довольно подробно воспроизводит биографию Григора Татеваци по Маттеосу Джугаеци (N 6607 Матенадаран)[4]. Григор Татеваци, как одаренный ребенок, с детства был взят Ованнесом Воротнеци на воспитание и в ученики. Великий учитель, рабунапет, как его величают в рукописях, всюду возил его с собой и учил. Он дважды привозил своего воспитанника в Ерзнка и на гору Сепух, к усыпальнице Григора Просветителя. В первый раз он посвящает его у могилы Просветителя в сан саркавага (дьякона). Во второй раз он привозит его в Ерзнка после пребывания в Иерусалиме, где посвятил его в священнический сан, и здесь, вновь у усыпальницы Просветителя, присваивает уже сан вардапета. По крещении Григор Татеваци носил имя Хутлушах, и только при постриге его, по получении сана саркавага, Ованес Воротнеци нарек его в честь Григория Просветителя Григориосом. Позже, уже в Татеве, будучи настоятелем монастыря Татева, вардапет Григориос становится Григором или Григориосом Татеваци. Последние строчки памятной записи, в которой заказчик Хутлушах, словно, "разнится" от писца Григориоса, ученика Воротнеци, заставили нас сравнить почерк данного Евангелия с почерком завершенной в 1403 г. рукописи N 2382 Матенадарана. "Համառօտ հաւարումն վերլուծութեան վեցից սկզբանց գրոց" и с почерком Послания Евсевия и титульных листов Евангелия N 7482 Матенадарана.[5] Первая рукопись написана самим Григором Татеваци, согласно памятной записи и Списку рукописей Матенадарана. Вторая написана в 1297 г. писцом Ованнесом на горе Сепух и иллюстрирована в 1378 г. в Татеве частично Григором Татеваци, которым, возможно, написаны и тексты Послания и титульных листов. При исследовании пер-

вой рукописи оказалось, что над ней работал не один писец, а по крайней мере два. Однако начальная часть рукописи, в которой даются прописи, действительно написана близким к нашему Евангелию N 96 из Эчмиадзина почерком, близким, но не идентичным. Следует учесть также большой разрыв во времени их написания – 1374 г. и 1409 г. – в 29 лет! То же самое можно сказать и при сравнении со второй рукописью, указанные листы которой были написаны, возможно, в 1378 г., т.е. через 4 года после нашей рукописи. Они также написаны близким, но не идентичным почерком. Таким образом, сравнение почерков не помогает подтвердить то, что Григориос Евангелия N 96 есть Григор Татеваци. Разгадка таится в самой памятной записи, последние строки которой можно понять и так, что родители Хутлушаха являются родителями самого Григориоса, а если так, то, следовательно, Евангелие N 96 Эчмиадзина действительно является автографом Григора Татеваци, написано в 1374 г. по получении сана вардапета, посвящено наставнику Григора Ованесу Воротнеци, называемого великим рабунапетом, и заказано самим Григором для себя.

Однако прелесть и ценность Евангелия N 96 не ограничивается великолепной каллиграфией, ее принадлежностью руке великого Григора Татеваци и наличием в нем стихотворения Ованеса Воротнеци, написанного им самим. Пожалуй, еще большую прелесть ему сообщают художественное оформление и иллюстрации. Это – одно из наиболее богато украшенных сюжетными миниатюрами армянских рукописных Евангелий, в котором илюстрации и текст тесно взаимосвязаны друг с другом. Как уже упоминалось, художником является Хачатур Кесараци, выступающий в данном случае блестящим живописцем и оформителем книги. В составе рукописи – хораны, портреты евангелистов в паре с титульными листами четырех евангелий, многочисленные текстовые, т.е. совмещенные на странице с текстом сюжетные миниатюры, несколько листовых и несколько маргинальных сюжетных миниатюр, вместе составляющих расширенный христологический цикл, (причем сцены могут повторяться в разных евангелиях); а также портреты Ованеса Воротнеци и Григора Татеваци, декоративные маргиналии и рубрики "главных евангелий"[6]. Текстовые миниатюры – самого различного расположения, для них уже при письме были выделены специальные места. Состав книги следующий:

л. 5б-6а – хораны Послания Евсевия Карпиану с их портретами в медальонах; ***7б-8а*** – парные хораны канонов с павлинами; ***9б-10а*** – парные хораны с птицами-рыболовами; ***11б-12а*** – парные хораны с различными птицами; ***13б-14а*** – парные хораны с петухами и птицами-рыболовами; ***15б-16а*** – парные хораны с птицами; ***16б-18а*** – оглавление ев. от Мф. и согласование евангелий; ***18б-19а*** – пролог ев. от Мф.; ***19б-20а*** – евангелист Мф. и титульный лист ев. от Мф. с символом Мф. в инициале, текст трчнагир; ***20а-104б*** – текст ев. от Мф; ***24а*** – над текстом Бегство в Египет в рамке; ***26б*** – под левым столбцом Крещение в рамке; ***34а*** – заставка чтения ՔՉ; ***57б*** – под правым столбцом Голова Иоанна Крестителя в потире; ***65а*** – под текстом Преображение в обрамлении; ***75б*** – в правом столбце Вход в Иерусалим в обрамлении; ***94б*** – в левом столбце внизу Молитва в Гефсимании в обрамлении; ***99б*** – над правым столбцом "Христос в багрянице" под шутки "Радуйся, царь иудейский"; ***102б*** – под текстом "Жены у Гроба" (Воскресение); ***103б*** – над левым столбцом Явление Христа Женам; ***105а-б*** – оглавление ев. от Мк. и согласование ев.; ***106а*** – пролог ев. от Мк.; ***106б-107а*** – евангелист Мк. и титул ев. от Мк.; ***107а-160а*** – текст ев. от Мк.; ***124а*** – в правом столбце голова Иоанна Крестителя в потире; ***152б*** – под текстом Молитва в Гефсимании в обрамлении; ***153б*** – над левым столбцом Взятие под стражу в рамке; ***157а*** – в правом столбце Распятие с Деисусом; ***161б-163а*** – оглавление ев. от Лк. с согласованием евангелий;



Ованес Воротнеци и Григор Татеваци, Евангелие 1374 г. (N 96 Эчмиадзин), худ. **Хачатур Кесараци**.

164а – пролог ев. от Лк.; ***164б-165а*** – евангелист Лк. (в старой визант. Иконографии с тонзурой) и титул ев. от Лк. с символом-инициалом-быком; ***165а-253а*** – текст ев. от Лк.; ***166а*** – под правым столбцом Явление ангела Захарии в храме; ***167б*** – в правом столбце Благовещение в обрамлении; ***171а*** – маргиналия Пастух с ягненком к Рождеству; ***172б*** – над текстом Принесение во храм в рамке; ***197б*** – под левым и в правом столбце, углом, Насыщение хлебами в рамке; ***223а*** – в правом столбце между строк две миниатюры в рамках Бог-Отец с младенцем на троне и "В аду"; ***229б-230а*** – под левым столбцом Исцеление слепого и над правым столбцом Христос и Закхей; ***241а*** – над текстом Тайная вечеря в обрамлении; ***252б*** – над текстом Вознесение в рамке; ***253б*** – оглавление ев. от Ин. и согласование ев.; ***254*** – пролог ев. от Ин., ***254б-255а*** – Иоанн с Прохором и титул ев. от Ин. с символом-инициалом; ***255а-326б*** – текст ев. от Ин.; ***283б*** – маргиналия с фигурой слепца; ***292а*** – под текстом Воскрешение Лазаря в обрамлении; ***293а*** – над текстом Омовение ног в рамке; ***302а*** – над текстом Христос на троне "Учитель"; ***316а*** – в правом столбце Несение креста в рамке; ***316б*** – листовая миниатюра Распятие в рамке, под которой памятная запись художника; ***321а*** – под текстом Христос среди учеников; ***322а*** – в левом столбце Уверение Фомы в рамке; ***323б*** – под текстом Удачный улов; ***325а*** – листовая миниатюра Христос с Петром, указующим на женщину; ***325б-326б*** – текст Истории блудницы; ***327а-328б*** – стихотворение-молитва Ованеса Воротнеци; ***329а-б*** – памятная запись писца Григориоса, под которой в арках изображены Воротнеци и Татеваци.

Живопись отличается тонкостью письма, многослойностью, выразительностью ликов, свободой моделировки и компоновки фигур. Особенно поражают краткие по иконографии изображения, как например головы Иоанна Крестителя в потире, отличающиеся необычайной экспрессией и ясностью при очень малых размерах. Широко использовано золото, как листовое, так и твореное, прекрасно сохранившееся. Оно покрывает фоны, им оконтурены художественно акцентированные инициалы и написаны первые строки рубрик, первые страницы (после титулов) каждого евангелия, слова, обозначающие Бога, оно вплетается в декор. По иконографии и стилю, по структуре и системе илюстрирования Евангелие N 96 близко к киликийским Евангелиям, особенно к тем, которые имеют текстовые миниатюры. С ними перекликаются и хораны, и их изображение на одной стороне листа, сверкающие, как эмали, краски, полированная фактура золотых фрагментов.

С киликийскими же книгами сравнимы миниатюрность и изящество изображений, предназначенных именно для книги, их единство с текстом, гармония изображений и декора с отличающимся красотой мелким шрифтом, ювелирные качества живописи. Иконография, стиль и образы рукописи достойны монографического исследования.

Большую ценность и интерес представляет четырехстворчатый оклад рукописи, изготовленный из золота – редкий для армянского искусства, так как сохранилось всего два золотых оклада, одним из которых и является данный оклад. Размеры – 13,7 x 10 см. Оклад не имеет даты. Однако судя по стилю изображений на нем, особенно по техническим особенностям, он изготовлен позже, в XVI-XVII вв. в Татеве. Обитые кожей деревянные створки покрыты толстыми золотыми пластинами, соединенными плетеным с зернью корешком. На верхней створке представлено Распятие в Деисусной композиции, повторяющее миниатюру на **л. 316б**, с армянскими сокращенными формами имен персонажей: "Թգր. Հրց., Սբ Աստ., Սբ Յհննս". На обратной стороне оклада представлены портретные изображения под арками Ованеса Воротнеци и Григора Татеваци, повторяющие миниатюру на **л. 328б**, но здесь надписанные: "Սբ Յոհաննէս Որոտնեցի, Սբ Գրիգոր Տաթևացի". На боковой узкой створке – сцена Прославления Спаса Нерукотворного: два ангела поддерживают убрус с изображением Спаса Нерукотворного. Надпись по-армянски гласит: "Դաստարակն է Քի". Сцены гравированы в линейном стиле. Имелись два замочка с плетеными цепочками, нижняя из которых утеряна. Сохранность рукописи и оклада хорошая.

Евангелие N 96 в золотом окладе из Эчмиадзинского собрания по своим высоким художественным качествам, совершенству письма и живописи, единству текста и художественного убранства является одной из жемчужин средневекового искусства книги.

Примечания

1 См. Էջմիածնի գանձերը, Ս. Էջմիածին, 1984:

2 См. Ա.Գևորգյան, Հայկական մանրանկարչություն. դիմանկար /ալբոմ/, Երևան, 1982, պատկեր 40,41, էջ 219:

3 См. Ցուցակ Մայր Արոռ Ս.Էջմիածնի Նոր ստացված ձեռագրերի, "Էջմիածին", 1952, 2, էջ 52-54:

4 См. Լ.Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս I, Երևան, 1955, էջ 102-110: См. также **С.Аревшатян**, Философские взгляды Григора Татеваци, Ереван, 1957, с. 27-31.

5 См. **А.Мирзоян**, Григор Татеваци и Аноним из Сюника (альбом), Ереван, 1987, илл. 4,5,10-13, с. 158.

6 О "главных евангелиях" см. **С.Манукян**, Рубрикация в художественной системе армянских рукописных Евангелий, "Հայ արվեստի հանրապետական 7-րդ գիտական կոնֆերանս. Զեկուցումների թեզեր", Երևան, 1995, էջ 80-81:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ



Տրդատ Մեծ և Գրիգոր Լուսավորիչ, ճաշոց 1678 թ. (Վիեննայի Մխիթարյանների գրադարան, ձեռ. 1306):

Քնարիկ Տեր-Դավթյան

ՀԻՍՈՒՍԻ ՏՂԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՔԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ միջնադարյան թարգմանական արձակում որոշակի տեղ են գրավում Հին և Նոր կտակարանների պարականոն կամ անկանոն գրքերը: V և հետագա դդ. հայերեն թարգմանված այդ երկերն առաջին անգամ միջազգային ճանաչում ստացան XIX դ. վերջերին, հատկապես Մ.Էմինի կողմից հավաքված, ապա և ռուսերեն թարգմանված պարականոնների[1], նաև հենց Մ.Էմինի հիշատակին նվիրված մխիթարյանների «Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց» երեք հատորների շնորհիվ, որոնք լույս տեսան 1896, 1897 և 1904 թթ.[2]:

Հայտնի է, որ եկեղեցին դարեր շարունակ պայքար մղելով տարբեր աղանդավորական շարժումների դեմ, չի խնայել նաև նրանց գաղափարախոսությունն արտահայտող գրականությունը, այդ թվում և պարականոնների մեծ մասը[3]: Սակայն անժխտելի է նաև այն փաստը, որ այդ գրականությունը, մասնավորապես պարականոն երկերը, հայ հասարակության որոշ շրջաններում գործածության մեջ են եղել և, անշուշտ, պետք է որ ազդեցություն թողած լինեին հայ միջնադարյան գրականության վրա: Դա հատկապես վերաբերում էր ժողովրդական ակունքներ ունեցող լայն զանգվածների ճաշակին և պատկերացումներին հարազատ վիպական արձակին, զրուցատիպ գրականությանը: Այդ կարգի գրականություն էր նաև ժողովրդի կողմից շատ սիրված Մարիամ Աստվածածնին և Հիսուսին վերաբերող պարականոն ավետարանական զրույցները:

Սամվել Անեցու, Մխիթար Այրիվանեցու ցուցակներում, ապա Սարգիս Շնորհալու երկերում հիշատակվում են երկու նորավետարանական պարականոններ, որոնք 591 թ. առաջ Հայաստան բերվեցին նեստորականների կողմից և թարգմանվեցին հայերեն: Սամվել Անեցին նշում է «Աստուածածնի պատմութիւն» և «Մանկութիւն Տեառն» երկերը, Մխիթար Այրիվանեցին և Սարգիս Շնորհալին՝ «Մանկութիւն Տեառն» և «Պատմութիւն Թովմայի» գրքերը[4]: Ասել է՝ վկայված պարականոնները պատկանում են այն գրականությանը, որը գիտական շրջանակներում ստացել է մի ընդհանուր անուն՝ «Տղայության Ավետարան» (Paedika)[5]: Բազմաթիվ այդ տիպի ավետարանների մեջ առավել արժեքավոր են համարվում հունարեն, ասորերեն, լատիներեն և այլ լեզուներով հայտնի «Նախաւետարան Յակոբայ» (Protevangelium Jacobi) և «Պատմութիւն Թովմայի» (Narratio Thomae) երկերը, որոնք ստեղծվել են, ըստ երևույթին, II դ. երկրորդ կեսին, I դ. - II դ. սկզբում տարածված ավանդությունների հիման վրա, և վերաբերում էին քրիստոնեական կրոնի սկզբնավորմանը[6]:

«Նախավետարան» կամ «Գիրք Տղայութեան Քրիստոսի» անվամբ հայտնի և տեառնեղբայր Հակոբին վերագրվող Ավետարանը պահպանվել է հայերեն թարգմանությամբ: Այն այլ ձեռագրական նյութերի հետ երկու խմբագրությամբ հրատարակեց Եսայի Տայեցին[7]: Ապա լույս տեսան Ավետարանի անգլերեն մասնակի թարգմանու-

թյունը[8], ֆրանսերեն ամբողջականը[9] և լատիներենը[10]: Ասենք նաև, որ Տղայության Ավետարանի հայերեն վարկածը XIX դ. վերջում թարգմանվել է նաև վրացերեն[11]:

Ուսումնասիրողները նկատեցին, որ հայերեն թարգմանությունը շատ է տարբերվում Արևմուտքում տարածված նույն Ավետարանից և, ըստ երևույթին, սերում է արևելյան խմբագրություններից՝ արաբականից կամ պարսկականից[12]:

Ըստ երևույթին, նրա հիմքում ընկած է Մանկության Ավետարանի այն բնագիրը, որի խմբագիրը, ինչպես նկատում են Կ.Տիշենդորֆը և նրան համամիտ Գ.Ջարբհանալյանը, հետևում է Հակոբի և Թովմայի անվամբ գտնված անհարազատ ու Ավետարանի անունը կրող գրություններին, ապա և այն ավանդություններին, որ տարածված էին ասորիների, պարսիկների և եգիպտացիների մեջ: Կ.Տիշենդորֆը հիշյալ Ավետարանի առաջացման ժամանակը դնում է «նախքան արաբացիների օրենսգրքի ի հայտ գալը»[13]:

Հայերենում, ինչպես նկատում ենք, «Գիրք Տղայութեան Քրիստոսի», երկն, իրոք, առնչվում է Թովմայի Ավետարանի հետ: Նախավետարանի 28 գլուխներից (առաջին խմբագրություն) առաջին 15-ը նվիրված են Մարիամի ծննդյան և մանկության, ապա նաև Հիսուսի ծննդյան պատմություններին (սա այն մասն է, որը բովանդակությամբ համապատասխանում է արևմուտքում տարածված Նախավետարանի ընդարձակ հունարեն բնագրին, իսկ 16-րդ գլխից սկսվող մասը նվիրված է Հիսուսի մանկությանը մինչև 18 տարեկան հասակը: Եվ այս մասում հանդիպում են մի շարք զրույցներ, առնվազն 5-6, որոնց զուգահեռները կան նաև Թովմայի Ավետարանում:

Նախավետարանը այլ պարականոնների մեջ ուրույն տեղ է գրավում: Հակառակ նրան, որ «Գիրք Տղայութեան»-ը չի անցել կանոնական Ավետարանների շարքը, այն եկեղեցու կողմից չի մերժվել, և դարերի ընթացքում Մարիամ Աստվածածնի, Քրիստոսի ծննդյան վերաբերյալ զրույցները մեծ տարածում են գտել ինչպես եկեղեցու շրջանակներում, այնպես էլ նրանից դուրս՝ ներշնչանքի աղբյուր հանդիսանալով գրողների, նկարիչների, երգահանների համար:

Տեառնեղբայր Հակոբի երկը բավական լայն ճանաչում է գտել նաև հայ մատենագրության, հայ միջնադարյան զրույցներում, մանրանկարչության և երաժշտության մեջ: Մեզ են հասել Մատենադարանում և սփյուռքի գրադարաններում պահվող այդ երկի 30-ից ավելի ձեռագրեր:

Սամվել Անեցու և Մխիթար Այրիվանեցու ցուցակներում հիշատակվելուց զատ՝ նրա մասին տեղեկություններ են հաղորդում Սարգիս Շնորհալին (XII դ.)[14] և Մխիթար Անեցին (XII դ.)[15]: Վարդան Պատմիչը (XIII դ.), ինչպես նկատել է Ն.Մառը, օգտվում է Քրիստոսի Տղայութեան Ավետարանից, թվարկում է պարականոնում հիշատակվող մոգ թագավորների անունները և հաղորդում մանրամասներ Քրիստոսի ճանապարհորդության մասին, ավելացնելով, որ Մոկք գավառի Փրկչի եկեղեցու շրջակայքում գտնվում էր մոգ թագավորներից մեկի՝ Գասպարի գերեզմանը[16]: XVI դ. հեղինակ Հովսեփ Սեբաստացին իր մի չափածո գրվածքում (1548 թ.) խոսում է Մարիամին և Հովսեփին փորձության ջուր տալու մասին և ապա ամբողջությամբ անդրադառնում Հիսուսի տղայության պատմություններին, գլուխն էլ կոչում «Վասն գնալոյ յԵգիպտոս և տղայութեան և սքանչելեացն Քրիստոսի աստուծոյն մերոյ» (այդ բանաստեղծական գրվածքի մի հատվածը հրատարակել է Ն.Մառը[17], և ապա ամբողջությամբ՝ Կ.Կոստանյանցը[18]): Քրիստոսի մանկության, հատկապես ծննդի հետ կապված պատմություններն ավելի մեծ հնչեղություն են գտել Հայսմավուրքներում, ուր Քաղոց ամսի ԻԹ (29) և յունվարի Զ (6) թվահամարի տակ նշանակված է Քրիստոսի ծնունդն ու հայտնությունը: Այսպես, Կ.Կոստանյանցը հիշատակում է մի ձեռագիր Հայսմավուրք, որտեղ խոսվում է երեք մոգերի գալուստի մասին: Այդ շատ ընդարձակ պատմության մեջ կան

մի քանի մանրամասնություններ, որոնց աղբյուրը նույնպես պարականոնն է: Օրինակ, ասված է, որ Մելքոնը Պարսից թագավոր է, Գասպարը՝ Հնդկաց, իսկ Բաղդասարը՝ Արաբացվոց, նաև այն, որ այդ թագավորների հետ եկել էր 12.000 մարդ, սրանց առաջնորդում էին 12 հազարապետ, և թվարկվում է այդ հազարապետների անունները[19]: Պետք է նկատենք, որ տպագիր Հայսմավուրքների նույն ընթերցումներում կան նույն տեղեկությունները[20]:

Նախավետարանի սյուժեներին, հատկապես մոգերի պատմությանը անդրադառնում են և XVI-XVII դդ. բանաստեղծներ Ազարիա Ջուղայեցին[21] ու Դավիթ Սալաձորցին[22]: 1969 թ. լույս տեսած «Ավանդապատումում» Ա.Ղանալանյանն առանձին բաժնով ներկայացրեց եկամուտ զրույցների շարքը՝ նրանում ընդգրկելով Հին ու Նոր կտակարանային ավանդությունները[23]: Համեմատելով հրատարակված Նոր կտակարանային զրույցները Նախավետարանի համապատասխան զրույցների հետ, գալիս ենք այն եզրակացության, որ նրանց համար աղբյուր է ծառայել Հակոբի Գիրք Տղայութեան զրույցների խմբագրությունը, թեև մի քանիսի զուգահեռները, ինչպես Հիսուսը ներկարար, Հիսուսը հյուսն, կան նաև Թովմայի Ավետարանում: Այս վերջին զրույցները մեծ տարածում են ստացել և մեզ են հասել մի քանի բարբառներով: Առաջինը հանդիպում է Շիրակի, Ղափանի, Ջավախքի ավանդույթների շարքում[24], երկրորդը՝ Շիրակի և Ղափանի[25]: Մեկ ուրիշ զրույց՝ գրանցված Ղափանում և Ղրիմում[26] Մարիամ Աստվածածնի՝ Հիսուսին վարժարան տանելու մասին, անշուշտ, նույնպես արձագանք է պարականոն ավանդության[27]:

Հակոբի Նախավետարանից է, ըստ երևույթին, սերում Նարեկացու գիհիի մասին ավանդությունը, ուր հոտաղ Նարեկացին տնկում է իր հետևից շպրտած պառավի աճքրոցը, և վերջինս կանաչում ու վիթխարի գիհի է դառնում[28]: Ավետարանի «Հիսուսը ներկարարի աշակերտ» զրույցում բարկացած ներկարարը, տեսնելով, որ Հիսուսը խառնել է բոլոր գույները, նրա հետևից գցում է կոպիչը, որն, ընկնելով գետին, անմիջապես կանաչում է[29]:

Տեառնեղբայր Հակոբի Ավետարանի թեմաները (ինչպես տեղեկացանք արվեստագետներ Ա.Գևորգյանից և Հ.Հակոբյանից) իրենց արտահայտությունն են գտել նաև մանրանկարչության մեջ: Այսպես, Մուղնու Ավետարանում (XI դ.) Եվան պատկերված է պարականոնից վերցված մանկաբարձուհու դերում, որը լողացնում է նորածին Քրիստոսին[30]: Հիսուսի ծննդյան թեմային նվիրված մանրանկարներում հանդիպում է նաև Եվայի սիմվոլիկ պատկերը՝ դիմակով[31]: Մի քանի ձեռագրերում Հովսեփը պատկերված է Եվայի հետ զրուցելիս[32]: Այնուհետև մանրանկարներում հանդիպում է նաև Հիսուսը՝ պատկերված ներկարարի աշակերտի դերում: Այսպես է պատկերել նկարիչ Առաքել Գեղամեցին Հիսուսին և նկարն էլ կոչել՝ «Քրիստոս ուսանի ներկարարութիւն»[33]: Էլ չենք ասում այն մասին, որ բազմաթիվ մանրանկարներ նվիրված են մոգերի հետ կապված պատմություններին:

Ինչպես տեսնում ենք, Նախավետարանը բավական լայն ճանաչում է ունեցել հայ հողի վրա:

Սակայն նույնը չի կարելի ասել Սամվել Անեցու և Մխիթար Այրիվանեցու ցուցակներում հիշատակված Թովմայի Ավետարանի վերաբերյալ, որի լրիվ անվանումն է. «Իսրայելցի փիլիսոփա Թովմայի Պատմությունը Քրիստոսի մանկության մասին»: Թովմայի Ավետարանի մի քանի բնագրեր հրատարակեց Կ.Տիշենդորֆը: Դրանք են. 1. հունարեն՝ ընդարձակ, 2. հունարեն՝ համառոտ, 3. ասորերեն, որը մեզ է հասել VI դ. ձեռագրով: Սրան մոտ է լատիներեն թարգմանությունը: Կա նաև այդ Ավետարանի ազատ մշակումը, այսպես կոչված Կեղծ Մաթեոսի Ավետարանը: Ընդարձակ հունարեն բնագիրն ունի 19 գլուխ և ընդգրկում է Հիսուսի 5-12 տարեկան հասակում կատա-

րած հրաշագործությունների պատմությունները, համառոտ ունի 11 գլուխ և ընդգրկում է Հիսուսի 5-8 տարեկան հասակը, ասորերենն ու լատիներենը՝ մինչեւ Հիսուսի 8 տարեկանը և պարունակում է 15 գլուխ[34]:

Թովմայի Ավետարանը հայկական ձեռագրերում չի պահպանվել կամ մինչ այժմ չի հայտնաբերվել: Որ այն կարող էր ոչնչացված լինել Հայաստանում, շատ հավանական է: Նրանում առավել ցայտուն է ի հայտ գալիս մանիքեականների, նեստորականների և սրանց հաջորդած աղանդավորականների կողմից որդեգրված գնոստիկյան գաղափարախոսությունը, մասնավորապես Docetism-ը[35], այսինքն՝ Քրիստոսի երևութականության և նրա աստվածային բնության վերաբերյալ ուսմունքը, նրա մարմնավորման փաստի ժխտումը: Հիսուսը իր հրաշագործություններով և իմաստությամբ, որոնք արտահայտություն են գտնում արդեն մանուկ հասակում, ապացուցում է, որ ինքը չի պատկանում այս աշխարհին: Այս բնույթն ունեն Հիսուսի Տղայությանը նվիրված նաև այլ Ավետարանները: Սակայն Թովմայի Ավետարանն ունի ևս մի առանձնահատկություն: Այն, ինչպես նկատել են ուսումնասիրողները (Ա.Մեհեր[36], Ն.Սպեռանսկի[37] և այլք), տարբերվում է մնացած բոլորից Հիսուսի կերպարի կերտման եղանակով: Մանուկ Քրիստոսի բնավորությունը աչքի է ընկնում արտակարգ խստությամբ և դաժանությամբ: Նա մերձավորի հանդեպ սեր չի քարոզում և հրաշագործ բարերարի դերում հանդես չի գալիս, այլ ներկայանում է որպես մի տղա, որն իրեն շրջապատող երեխաների հանդեպ ոչ միայն խիստ է, այլ հաճախ՝ նաև դաժան: Օժտված լինելով երկնային ուժով, նա այդ ուժը գործադրում է պատժելու համար բոլոր նրանց, ովքեր չեն ընդունում իր աստվածությունը: Ձրույցներից մեկում 5 տարեկան Հիսուսը չորացնում է մի երեխայի այն բանի համար, որ նա ոտով ցայտացրիվ էր արել իր կողմից փոսում հավաքած ջուրը[38]: Մեկ ուրիշում նկարագրվում է, թե ինչպես, երբ 7 տարեկան Հիսուսը անցնում էր գյուղով, մի տղա, ետևից վազելիս, հրում է նրան: Հիսուսը, դառնալով երեխային, անիծում է սրան, ասելով. «Դու քո ճանապարհի վերջին չես հասնի»: Երեխան տապալվում է գետին և մահանում: Իսկ երեխայի ծնողները, որ բողոքով եկել էին Հովսեփի և Մարիամի մոտ, կուրացվում են Հիսուսի կողմից[39]:

Հիսուսի այդ նկարագիրը շատ հեռու է կանոնական և նույնիսկ պարականոններում պատկերված Քրիստոսից, և պարզ է, որ չէր կարող լայն տարածում ունենալ: Անցյալ դարի ռուս ճանաչված գիտնական Ն.Սպեռանսկին Հիսուսի կերպարի այդ դաժան նկարագրով է բացատրում այն փաստը, որ հիշյալ Ավետարանը ռուսական գրականության մեջ շատ հազվադեպ է հանդիպում[40]: Ծանոթությունը Թովմայի Ավետարանի այլ լեզուներով պահպանված բնագրերի հետ ցույց տվեց, որ հայկական գրույցներում, թեև շատ սակավ, հանդիպում են նաև Թովմայի Ավետարանից հայ բանահյուսություն անցած և տեղայնացած գրույցներ: Դժվար է, իհարկե, խոսել անմիջական փոխառության մասին, քանի որ Թովմայի Ավետարանը անցել է զարգացման երկար ուղի, համալրվել նոր գրույցներով և այլն: Ավելի համարձակ կարելի է այն մատնանշել որպես սկզբնաղբյուր: Հայերեն մեզ հետաքրքրող գրույցները երկու տիպի են. 1. անմիջապես Հիսուսին վերաբերողներ և 2. այնպիսիք, որոնցում Հիսուսի մասին գրույցը վերագրվել է հայ ականավոր անձնավորությանը:

Հիսուսի կերպարն ընդօրինակման աղբյուր և հերոսին սրբացնելու միջոց է հանդիսացել հատկապես վարքա-վկայաբանական գրականության մեջ: Եվ դա առաջին հերթին կապվում է Գրիգոր Նարեկացու Վարքի հետ. նրա անձի շուրջ ստեղծվել են բազմաթիվ գրույցներ:

Նարեկացու Վարքը, ինչպես և գրույցները, մանրազնին և լուրջ քննության է ենթարկել նարեկացիագետ Պ.Խաչատրյանը[41]: Լրացնելով Ա.Ղանալանյանի՝ Նարեկացուն վերաբերող գրույցների հավաքածուն[42], նա ցույց է տվել, որ արդեն XIII դ. կար

Նարեկացուն նվիրված հրաշապատումների գրանցված մի շարք՝ «Վարք և պատմութիւն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն» անվամբ[43]:

Պ.Խաչատրյանի կարծիքով, «Նարեկացու մասին ավանդությունները ժողովրդական և վանական բանահյուսության արտահայտություններ են», նույնիսկ XIII դ. երկրորդ կեսի Գրիգորի մասին ավանդությունների գրառողը՝ եկեղեցական միջավայրի մարդ, իսկ Նարեկացու քրիստոսանման վարքագիծը՝ հենց հոգևոր իմացության հանգամանքների արդյունք[44]: Համամիտ լինելով այս տեսակետին, մենք դրանով կբացատրենք նաև գրույցները հավաքողների ծանոթությունը «Յիսուսի Տղայութեան աւետարանների» հետ: Այդ գրույցների մեծ մասում գերբնական ուժով օժտված Նարեկացին, Քրիստոսի նմանությամբ, մեկ հանդես է գալիս հովվի, մեկ պարտիզպանի դերում: Շատ բան այստեղ գալիս է կանոնական Ավետարաններից կամ ուղղափառ եկեղեցու կողմից ընդունված պարականոններից, սակայն կան երկու գրույցներ, որոնք, ինչպես ասացինք, կրում են Թովմայի Ավետարանի գրույցների կնիքը:

Ուշագրավ է Գրիգոր Նարեկացու կողմից աղավնիների կենդանացման մասին գրույցը, որն անցել է նաև նրա Վարքի Ծերենցյան խմբագրության մեջ: Նույն ավանդությանը հանդիպում ենք Թովմայի Ավետարանի 2-րդ գրույցում, որտեղ մանուկ Հիսուսը կենդանացնում է կավից ծեփված ճնճղուկներին:

Ձրույցի սկզբում ասվում է, որ Նարեկացին ջանքեր էր գործադրում ծույլերի և մարմնասեր առաջնորդների կողմից անփութության մատնված սուրբ եկեղեցու կարգերը վերստին հաստատելու և նորոգելու համար: Այդ պատճառով նրան հայհոյում էին «բիրտ և սոպռ» մարդիկ և համբավում էին «ծայթ», այսինքն՝ աղանդավոր: Ապա եպիսկոպոսները և իշխանները, պզատների և տանուտերերի հետ հավաքվում են և, ինչպես ասվում է գրույցում, «յղեալ կոչեցին զնա՝ առ ի դատել և յանդիմանել հրապարակաւ և աքսորել զնա պատուհասիւ՝ որպէս զհերձուածող: Եւ եկեալ առ սուրբն հրաւիրակքն, զի տարցեն զնա: Իսկ սուրբն՝ գիտացեալ զխորհուրդս նոցա և կամեցաւ յանդիմանել զանմտութիւն նոցա: Ասաց.

– Նախ կերիցուք հաց և ապա գնասցուք:

Եւ ետ տապակել երկու աղաւնիս: Եւ բերեալ եդ առաջի նոցա սեղան: Եւ օրն այն՝ ուրբաթ էր: Ընդ որ ևս առաւել գայթակղեցան հրաւիրակքն և ասեն.

– Վարդապետ՝ ո՞չ է օրս ուրբաթ:

Եւ նա իբրև յանգէտս եղեալ ասաց.

– Թողութիւն արարէք եղբարք, ես ոչ գիտացի թէ պահս է օրս այս:

Յայնժամ ասէ ցտապակեալ աղաւնիսն.

– Արիք գնացէք ի տեղիս ձեր և յերամս. զի պահս է օրս այս:

Եւ նոյն ժամայն ընդ ասել սրբոյն կենդանացան աղաւնիքն և թևս առեալ թռեան առաջի ամենեցուն: Եւ տեսեալ զզարմանալի սքանչելիսն որ եղեն, և ապուշ մնացին. և յարուցեալ անկան յոտս նորա և երկիր պագին և թողութիւն աւձանց հայցէին: Եւ գնացեալ պատմեցին զիրաշն որ եղեն: Եւ նոքա լռեցին ի չար խորհրդոցն և աւուանեցին զնա երկրորդ Լուսաւորիչ և երկրորդ Սքանչելագործ»[45]:

Այժմ բերենք Թովմայի Ավետարանի 2-րդ գրույցը:

«Երբ մանուկ Հիսուսը հինգ տարեկան էր, նա խաղում է առվակի ծանծաղուտի մոտ և ջրափոսի մեջ հավաքում ներհոսող ջուրը: Եւ իր մի խոսքով նա դարձնում է այն զուլալ... Եւ փափկացնում է կավը ու ծեփում տասներկու ճնճղուկ: Եւ շաբաթ օր էր, երբ նա անում է դա: Եւ կային շատ երեխաներ, որոնք խաղում էին նրա հետ: Բայց երբ հին-որ մի երրայեցի տեսավ, թե ինչ է անում Հիսուսը՝ խաղալով շաբաթ օրը, նա անմիջապես գնաց նրա հոր՝ Հովսեփի մոտ, և ասաց.

– Նայի՛ր, քո որդին ծաննդաղուտում է և վերցրել է կավը ու ծեփել թռչուններ և պղծել շաբաթ օրը:

Եւ երբ Հովսեփը գնաց այնտեղ ու տեսավ (Հիսուսին), նա բղավեց.

– Ինչո՞ւ ես անում շաբաթ օրն այն, ինչը չպետք է անես:

Իսկ Հիսուսը ափն ափին խփեց և դիմեց ճնճղուկներին.

– Թռե՛ք:

Եվ ճնճղուկները ճռվողյունով թռան գնացին: Եւ երբայեցիները, տեսնելով դա, ապշեցին. և գնացին ու պատմեցին ավագներին, որ իրենք տեսան, թե ինչպես Հիսուսը կատարեց ասվածը»[46]:

Եւ Հիսուսը, և՛ Նարեկացին կենդանացնում են թռչուններին: Մեկը ծեփում է ճնճղուկներ հրեաների հանգստյան՝ շաբաթ օրը, մյուսը աղավնիներ է տապակում հյուրերի պասի՝ ուրբաթ օրը, և ցանկանում հյուրասիրել իրեն այցելության եկածներին: Երկուսն էլ անթույլատրելի գործ են անում արգելված ժամանակ: Երկուսն էլ պարսավանքից հետո ափն ափին են խփում ու կենդանացնում թռչուններին: Դրանով հաստատվում է նրանց սրբությունը և գերբնական աստվածային էությունը:

Այստեղ պարզորոշ կարելի է ասել, որ պարականոն զրույցը գրեթե անփոփոխ տեղայնացել է և կապվել Գրիգոր Նարեկացու անվան հետ:

Մեկ այլ զրույց, որը նույնպես անցել է Գրիգոր Նարեկացու Վարքի Խլաթյան խմբագրություն, կապված է Նարեկացու գերեզմանի հրաշագործ ուժի հաստատման հետ, որի շնորհիվ կենդանանում է թուխսը՝ իր ճտերով[47]: Թվում է, թե սրա հիմքում ևս ընկած է եղել նույն պարականոն զրույցը:

Եթե մեր բերած այս զրույցները, հատկապես առաջինը, կարելի է համարել Թովմայի Ավետարանի փոխառության հետևանք, ապա սրանց հետ մեկտեղ պետք է մատնանշենք մի երկու զրույց՝ կապված հենց Քրիստոսի անվան հետ, որոնք իրենց բնույթով են համահնչում պարականոնի զրույցներին: Նրանցում Քրիստոսի կերպարն աչքի է ընկնում նույն դաժանությամբ և խստությամբ: Դրանք են Ավանդապատումի համար 801-ի Ը, ապա ԺԳ, ԺԴ զրույցները: Առաջինում ասված է. «Երբ Քրիստոսը անցնում էր ճանապարհով, բոլորը գնում են նրան տեսնելու, բացի ջուլհակից, որն ասում է. "Այս էլ վերջացնեմ՝ հետո. այս էլ՝ հետո"»: Այդպես շարունակվում է մինչև Քրիստոսի հեռանալը: Հիսուսը տեսնելով, որ ջուլհակը չի եկել՝ անիծում է նրան, ասելով. "Ինչքան աշխատես, կուշտ չուտես"»:

Երկրորդ զրույցում Քրիստոսը հանդես է գալիս հարկահանի դերում. նա երեխաներից տասանորդ հարկ է հավաքում: Մի կին, որ տաս երեխա ուներ, մի քանիսին թաքցնում է, որ տասանորդ չվճարի: Քրիստոսը գալիս է այս կնոջ մոտ: Վերջինս ցույց է տալիս իր երեխաներին: Հիսուսը հարցնում է.

«– Էլ որդիք չունե՞ս:

– Չէ՛, – պատասխանում է կինը:

Քրիստոսը լուռ հեռանում է:

Կինը գնում, բաց է անում պահարանը, որտեղ թաքցրել էր իր երեխաներին, սակայն ոչ մեկին այնտեղ չի գտնում. բոլորը դարձել էին Չաչանք /թաջքեր – բարի հոգիներ/»:

Կա այս զրույցի մեկ այլ տարբերակ, ուր քահանան է ունենում քառասուն երեխա և քանիսի թաքցնում է:

Այս վերջին զրույցների զուգահեռները չեն հանդիպում Թովմայի Ավետարանում, և չի կարելի պնդել, թե դրանք գալիս են այդ Ավետարանից, սակայն վստահորեն կարելի է ասել, որ դրանք նույն միջավայրի և նույն տիպի աղբյուրներից ձևած և տեղայնացած զրույցներ են:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ Քրիստոսի Տղայության Ավետարանը, այդ թվում և Թովմայի Ավետարանը, որոշակի հետք են թողել հայկական զրույցների վրա: Նրանք ոչ միայն ներշնչման աղբյուր են հանդիսացել կանոնական Ավետարանների՝ Քրիստոսի տղայության պատմության պակասը լրացնելու, այլև ինքնուրույն հայկական զրույցներ ստեղծելու համար:

Ծ ա ն ո թ ա գ ր ու թ յ ու ն ն ե ր

1 Տե՛ս Н.Эмин, К вопросу о собрании армянских апокрифов, "Переводы и статьи Н.О.Эмина по духовной армянской литературе", М., 1897, с. 336-338, նույն տեղում տե՛ս հայկական պարականոնների ցուցակը՝ Список армянских апокрифов, составленный по каталогу рукописей Эчмиадзинской библиотеки, изданному в 1863 году в Тифлисе, էջ 339-344.

2 Տե՛ս Թանգարան հին և նոր նախնեաց, Ա. Անկանոն գիրք Հին կտակարանաց, հրատ. Հ. Սարգիս Յովսեփեանց, Վենետիկ, 1896: Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Բ. Անկանոն գիրք Նոր կտակարանաց, հրատ. Հ. Եսայի Տայեցի, Վենետիկ, 1898: Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Գ. Անկանոն գիրք Առաքելականք, հրատ. Հ. Քերովբէ Չրաքեան, Վենետիկ, 1904:

3 Ե.Տեր-Մինասյանը ցույց է տալիս, որ նեստորականության դեմ պայքարը Հայաստանում ավարտվեց հաղթանակով արդեն VII դ. վերջում: Ոչնչացվեց նաև նեստորականության և աղանդավորության կնիքը կրող գրականությունը, չհաշված առանձին հատակտորների, որոնք փրկվեցին (տե՛ս Ե.Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 146): Մ.Տեր-Մովսեսյանը մատնանշում է, որ Սամվել Անեցու և Մխիթար Այրիվանեցու ցուցակներում հիշատակված 10 անկանոն գրքերից հայ մատենագրության մեջ պահպանվել են միայն երկուսը՝ «Աղամի ապաշխարութիւն» և «Մանկութիւն Տեառն» երկերը, «իսկ մնացյալները ոչ միայն հայ մատենագրությանը, այլ ընդհարձրապես հայտնի չեն» (М.Тер-Мовсесян, История перевода Библии на армянский язык, СПб, 1902, с. 251).

4 Տե՛ս Հ.Ս.Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա, Երևան, 1959, էջ XXIX-XL, նաև՝ Բ, Երևան, 1976, էջ 948-949:

5 Տե՛ս **A.Meher**, Erzahlung des Thomas, - **E.Hennecke**, "Neutestamentische Apokryphen in Verbindung mit Fachgelehrten in deutschen ubersetzung und mit Einleitungen von Edgar Hennecke", Tubingen und Leipzig, 1904, S. 63.

6 Տե՛ս Գ.Զարբհանալեան, Մատենադարան հայկական բարգմանութեանց, Վենետիկ, 1883, էջ 193-199, նաև՝ Evangelium Thomae, "Realencyklopedie für protestantische Theologie und Kirche", Leipzig, 1896, S. 657.

7 Տե՛ս Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Բ. Անկանոն գիրք նոր կտակարանաց, էջ 1-126, 127-235:

8 Տե՛ս **F.Conybeare**, Protevangelium Jacobi, from an armenian manucript in the Library of the Mechitaristes in Venice, "The American Journal of Theology", vol.I, 1897, pp. 424-442.

9 Տե՛ս **P.Peeters**, Evangiles apocryphes II, L'Evangile de l'Enfance, rédaction syriaques, arabe et arméniennes traduites et annotees, Paris, 1914.

10 Տե՛ս La version arméniennes traduites en latin par Hans Quecké E. de Stycker, "La forme la plus ancienne du Protevangile de Jacques", Bruxelles, 1961:

11 Նաև Н.Марр, Из летней поездки в Армению. Заметки и извлечения из армянских рукописей, "Записки Восточного Отделения Императорского Русского Археологического Общества", т.5, с. 212.

12 Տե՛ս Գ.Զարբհանալյան, նշվ. աշխ., էջ 192; Н.Марр, ук. соч., с. 212.

13 Տե՛ս Գ.Զարբհանալյան, նշվ. աշխ., էջ 194:

14 Տե՛ս անդ, էջ 195, ծանոթ.:

15 Տե՛ս Մխիթարայ Անեցւոյ Պատմութիւն, ի լոյս ած Ք.Պատկանեան, Ս.Պետերբուրգ, 1879, էջ 36:

16 Տե՛ս Н.Марр, ук. соч., с. 211.

17 Անդ, էջ 223:

18 Տե՛ս Կ.Կոստանեանց, Նոր ժողովածու, Ա, Միջնադարեան հայոց տաղեր ու ոտանաւորներ. Վասն գնալոյ յԵգիպտոս և տղայութեան և սքանչելեացն Քրիստոսի աստուծոյն մերոյ, Թիֆլիս, 1892, էջ 18-22:

19 Տե՛ս անդ, ծանոթ., էջ 24-25:

20 Տե՛ս Յայսմաւուրք, Կ.Պոլիս, 1730:

21 Ազարիա Ջուղայեցի, Տաղ ծննդեան և յայտնութեան Տեառն Աստուծոյ մերոյ, տե՛ս Հ.Սահակյան, Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, հ.1, Երևան, 1986, էջ 292-294:

22 Դավիթ Սալաձորցի, Երգ Աստուածածնոյ, տե՛ս նույն տեղում, հ.2, Երևան, 1987, էջ 368-382:
23 Տե՛ս Ա.Ղանալանյան, Ավանդապատում, 1969. Առաջաբան, էջ ճՁԳ-ճՂ:
24 Տե՛ս Ավանդապատում, 801-ի Գ, Դ, Է գրույցները և համապատասխան ծանոթագրությունները:
25 Տե՛ս անդ, 801-ի Զ, Է գրույցները և համապատասխան ծանոթագրությունները:
26 Տե՛ս անդ, 800-ի Ա, Բ գրույցները և համապատասխան ծանոթագրությունները:
27 Տե՛ս անդ, գրույց 800 Բ:
28 Տե՛ս Ե.Լալայան, Վասպուրական, «Ազգագրական հանդես», ԻԶ գիրք, էջ 201: Զրույցի այլ տարբերակը, ուր կանաչած գիհին համարվում է հուտաղ Նարեկացու ճիպոտը, տե՛ս Ավանդապատում, 322 Բ:
29 Տե՛ս Գիրք Տղայութեան Քրիստոսի, գլ. ԻԱ, էջ 96:
30 Տե՛ս ձեռ. 7736, Մատենադարան (XI դ.), էջ 12բ:
31 Տե՛ս ձեռ 316, Մատենադարան (XIII-XIV դդ.), էջ 3ա, ձեռ. 4820, Մատենադարան (XIV դ.), էջ 1ա:
32 Տե՛ս ձեռ. 5347, Մատենադարան, 1368 թ., ձեռ. 5332, Մատենադարան, 1357 թ., նկ. Զաքարիա Աղթամարցի, էջ 3բ:
33 Տե՛ս ձեռ. 7634, Մատենադարան (XIV դ.), էջ 16բ:
34 Տե՛ս Evangelia Apocrypha ... ed. C.Tischendorf, Lipsiae, 1853.Հունարեն ընդարձակ խմբագրությունը զուգահեռ ասորերեն և լատիներեն տարընթերցումներով, գերմաներեն բարգմանությամբ տե՛ս **E. Hennecke,** Neutestamentische Apokryphen, mnuներենով՝ Евангелие детства, "Апокрифы древних христиан", М., 1989, с. 142-148: Չշփոթել «Թովմայի Ավետարանի» և «Գիրք Թովմայի» 1945 թ. Նագ-Համմադիում /Եգիպտոս/ հայտնաբերված երկերի հետ: Սրանց մասին տե՛ս М.К.Трофимова,, Историко-философские вопросы гностицизма, М., 1979, с. 59-98, 122-141, նաև Նույնի՝ Гностические апокрифы из Наг-Хаммади, "Апокрифы древних христиан", с. 250-262. Թեև Թովմա Իսրայելցու Տղայության Ավետարանը նույնպես համարվում է գնոստիկյան, սակայն իր բնույթով տարբերվում է վերը հիշատակված Նագ-Համմադյան Թովմայի անունը կրող երկու երկերից: Սրանցում ներկայացված է Հիսուսի ուսումնը գնոստիկյան տեսանկյունից, իսկ Թովմա Իսրայելցու Ավետարանում ներկայացված է Հիսուսի մանկության տարիների պատմությունը և այդ տարիներին նրա կատարած հրաշագործությունների միջոցով գնոստիկյան հիմնական գաղափարի հաստատումը:
35 Տե՛ս Ե.Տեր-Մինասյան, Սիջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Գ. Գնոստիկականություն, էջ 17-21, նաև՝ Եզնիկ ծ. Վարդապետ, Հայրարանություն, Ա, էջ 234, 242-244, U.Էջմիածին, 1996:
36 Տե՛ս **A.Meher**, op. cit., S. 66.
37 Տե՛ս А.Н.Пыпин, История русской литературы, т.I, СПб, 1902, с. 421.
38 Տե՛ս **E.Hennecke**, op. cit., S. 67; Апокрифы древних христиан, с. 142, գրույց III:
39 Տե՛ս **E.Hennecke**, op. cit., S. 68; Апокрифы древних христиан, с. 142-143, գրույցներ IV, V:
40 Տե՛ս А.Н.Пыпин, ук. соч., с. 921.
41 Տե՛ս Պ.Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, U.Էջմիածին, 1996, էջ 159-236:
42 Տե՛ս անդ, գծապատկեր նարեկացիական ավանդապատումների, էջ 202:
43 Տե՛ս անդ, էջ 184:
44 Անդ, էջ 204-205:
45 Յայսմաւուրք, Կ.Պոլիս, 1706: Ավանդապատում, 774 Զ:
46 Апокрифы древних христиан, с. 142, գրույց II: Համեմատվել է նաև գերմաներեն թարգմանության հետ (տե՛ս **E.Hennecke**, op. cit., S. 67).
47 Տե՛ս Յայսմաւուրք, 1706, նաև Ավանդապատում, 774 Ա:

Գաբրիէլլա Ուլուհոճեան
(Բոլոնիա)

ԵՂԻՇԷԻ «ԽՐԱՏ ՅԱՂԱԳԱՍ ՄԻԱՆՁԱՆՑ»-Ը ԵՒ ՆՐԱ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՐՋԱԿԱՅ ՍԵԱԿՈՅԹԻ ՀԵՏ
(Վեկնաբանութեան փորձ)

Եղիշէն միշտ եղել է հայ գրականութեան ամենաուսումնասիրուած հեղինակներից մէկը. նրա *Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին* երկը հրատարել է հայ եւ օտար գիտնականների ուշադրութիւնը, ինչպես ցոյց են տալիս բազմազան հետազոտութիւններն ու տարբեր լեզուներով թարգմանութիւնները: Ընդհակառակը, ճառերը համեմատաբար աւելի քիչ են հետաքրքրել մասնագէտներին, եւ վերջերս է միայն, որ բազմանում են նրանց նուիրեալ գործերը[1]: Յատկապէս *Խրատ յաղագս միանձանց*[2] ճառին վերաբերող հարցերը դեռ բոլորովին լուծուած չեն, եւ հարկաւոր է խորացնել նրա ճանաչումը, որովհետեւ այս փոքր երկը նաեւ մի առանձնայատուկ սկզբնաղբիւր է հայկական աշխարհում տարածուած վանականութեան պատմութեան համար[3]:

Անցեալում ճառն հիմնականօրէն ուսումնասիրել է Հ.Բ.Կիւլէսէրեանը, որ հետեւելով Հ.Գ.Զարբհանալեանի արտայայտած նկատողութեան[4], 1909 թ. իր մենագրութեան մէջ[5] ընդգծում է *Յաղագս միանձանց* եւ Փիլոնի *Յաղագս վարուց կենաց տեսակամիս*[6] (De vita contemplativa[7]) գործերի միջեւ եղած սերտ առնչութիւնները, դրանով իսկ ընդլայնելով այդ գրուածքին փիլոնեան գրականութեան եւ, ընդհանուր առմամբ, երրայեա-հելլենիստական մշակոյթին Եղիշէի արդէն յայտնի քաջ ծանօթութիւնը[8]:

Եւրոպացի հայագէտներից առաջինը՝ U.Վէպէրն զբաղուեց սոյն ճառով[9], թարգմանեց այն գերմաներէն եւ հրատարակեց մի առաջաբանով, որում ուշադրութեամբ քննեց միայն երկի գրական սեռը (ժանրը) եւ հեղինակի օգտագործած հռետորական միջոցները, հաշուի չառնելով Հ.Բ.Կիւլէսէրեանի նկատողութիւնները, որ վերաբերում են Փիլոնի գրական ժառանգութեան հետ յիշեալ ճառի աղերսին: Այս է պատճառը, որ նրա թարգմանութիւնը զերծ չէ մի քանի սխալ կամ մակերեսային ընթռնումներից:

Այս նկատողութիւններից մղուած՝ մի քանի տարի առաջ, Ֆրիբուրգում կայացած AIEA-ի սէմինարի առիթով, զեկուցել էի սոյն ճառի մասին, հասնելով մի շարք եզրակացութիւնների, որոնք զանազան պատճառներով մնացին անտիպ: Այժմ, երբ Բ.Ուտիեի ջանքերի շնորհիւ մի նոր թարգմանութիւն լոյս է տեսել 1988 թ. ֆրանսերէն[10] եւ իր կարճ առաջաբանով զգալիօրէն բարուոքում է բնագրի իմացութիւնը, սակայն քանի որ լոկ բառացի իմաստը միշտ բաւական չէ լրացնելու բնագրի կատարեալ ընկալումը, կուզենայի վերադառնալ որոշ կէտերի: Դիտաւորապէս չեմ զբաղուելու երկի վաւերականութեան եւ հեղինակի ժամանակի հարցերին, լրիւ ընդունելով աւանդական տուեալները:

Յայտնի է, որ ճառը բաղկացած է երկու մասից. առաջինը՝ նկարագրական բնոյթ ունի, որում Եղիշէն ներկայացնում է ճգնաւորների մի խումբ, նրանց բարք ու վարքը եւ պաշտամունքի արարողութիւնները: Երկրորդ մասում, յենուելով նման սուրբ մարդկանց կեանքի վրայ, հեղինակը ջերմ յորդորանք է ուղղում իր ժամանակակից-

ներին, որպէսզի նրանք, մի կողմ թողած բոլոր աշխարհական ձգտումները եւ կրքերը, ճգնաւորների փայլուն օրինակին հետեւեն, մանաւանդ որ շրջապատող աղէտներն ու թշուառութիւնները ցոյց են տալիս՝ որքան մեծ է յանցանքը մարդկանց, որոնք երեւութապէս ոչ սրտի ճշմարտութեամբ հետեւում են Ս.Գրոց պատուիրաններին:

Անտարակուսելի է, ինչպէս ցոյց տուեց Հ.Բ.Կիլէէբեանը իր համադրական աղիւսակներով, որ Փիլոնի *Յաղագս վարուց կենաց տեսականի* եւ Եղիշէի *Յաղագս միաձուցի* միջեւ կան բազմաթիւ եւ բազմատեսակ նմանութիւններ: Յիշենք գլխաւորները. իւրաքանչիւր երկում կան մեկուսացած մարդկանց խմբեր, որոնք ապրում են քաղաքից եւ աշխարհական վայելքներից հեռու, բնակւում են աղքատիկ խրճիթներում՝ բաւարարուելով անպաճոյճ զգեստներով եւ բնական ու պարզ կերակուրներով, եւ անդադար պաշտամունք են մատուցում Աստուծոյ: Անվիճելի են Հ.Բ.Կիլէէբեանի դիտողութիւնները, սակայն նշենք, որ նման եւ նոյնիսկ բառացի մէջբերումներից շատերը իրենց բովանդակութեամբ ընդհանուր են քրիստոնեայ արեւելքի տարբեր լեզուներով եղած ճգնաւորներին նուիրուած մատենագրութեան մէջ: Մեր կարծիքով, Եղիշէի գործը ճիշտ բնութագրելու համար, կարեւոր կլինի ընդգծել նաեւ մի շարք տարբերութիւններ, որոնց միջոցով հնարաւոր է աւելի յստակօրէն պատկերացնել ճգնաւորների բուն էութիւնը: Այս առումով յատկանշական են հետեւեալները՝

ա. Թեւրափետները (հայերէն թարգմանութեամբ *բուժիչք*) Փիլոնի մօտ քաշուել են *ի պարտէզս* (*Տեսակ*, էջ 11) (ἐν κήποις *De vita* 20), եւ նրանց կողքին ապրում են սուրբ եւ պարկեշտ կանայք. Եղիշէի մօտ, ընդհակառակը, միակեացները բնակւում են սուրբ եւ պարկեշտ կանայք. Եղիշէի մօտ, ընդհակառակը, միակեացները բնակւում են *յանապատ յանշէն երկիր... առանց կանանց միաբանութեան* (էջ 159):

բ. Թեւրափետների իւրաքանչիւր կացարան ունի մի սուրբ տնակ կամ սենեակ՝ οἰκημα ἱερόν (*տէրունական*), σεμνεῖον (պարկեշտանոց), μοναστήριον (միայնարան), որտեղ խմբի անդամները մասնաւոր հրահանգներով ընծայւում են ընտրուած կեանքին, *յորում միայնանալով նորա զպարկեշտ եւ զնազելի վարուց զխորհուրդսն կատարեն* ἐν ᾧ μονούμενοι τὰ τοῦ σεμνοῦ βίου μυστήρια τελοῦνται (*Տեսակ*, էջ 12, *De vita* 25), ինչ որ բոլորովին անծանօթ է Եղիշէի միակեացներին:

գ. Թեւրափետները աղօթք են անում արեւածագին եւ արեւամուտին, Եղիշէի կրօնաւորները գիշեր-ցերեկ անդադար են աղօթում եւ միայն մարմնական հարկաւոր պահանջների համար (ուտելու, խմելու, քնելու) կարճ ժամանակով ընդհատում են իրենց պաշտամունքը:

դ. Առաջինները խմում են *վտակային ջուր* (ὕδωρ ναματιαῖον *De vita* 37), երկրորդները՝ ջուրը *յամպոց բերմանէ ի գուբս ժողովեն* (էջ 160), ինչ որ շատ տրամաբանական է նրանց համար, որ ապրում են անապատներում:

ե. Թեւրափետները շաբաթը մի անգամ եւ ամէն մի նօթ շաբաթից յետոյ միանում են սուրբ խնջոյք (*գինարբուք*, *Տեսակ*, էջ 26, συμπόσιον *De vita* 71) կատարելու, մինչդեռ Եղիշէի մօտ պաշտամունքն օրերի ընթացքում նոյնութեամբ է կատարւում:

զ. Վերջապէս՝ ամենակարեւորը. ի տարբերութիւն Թեւրափետների, որոնք ձգտում են փիլիսոփայական անհոգութեան (ἀπάθεια), Եղիշէի միակեացները քրիստոնեայ են, եւ նրանց գլխաւոր նպատակը՝ Աստուծոյ ուղիղ փառատրութիւն մատուցանելն է: Նրանց քրիստոնեայ լինելու վկայութիւնն են նաեւ նրանց աղօթքները՝ ուղղուած սուրբ Երրորդութեան, եւ Ս.Գրոց անթիւ ակնարկութիւններն ու մէջբերումները:

Նոյն նկատողութիւնները, եթէ ուշադիր քննենք նաեւ մանրամասնութիւնների պատմական արժէքը, մէզ թոյլ են տալիս մի առաջին եզրակացութեան յանգելու: Եղիշէի ճգնաւորները, որոնց, ինչպէս նա ասում է, յաճախ է տեսել *ի կողմանս հարաւոյ* (էջ 159), հաւանաբար այն միաբաններն են, որոնք ապրում էին Միջագետքի անապատներում ամենախիստ ճգնութեամբ, ինչպէս մէզ ծանօթ է ասորական միաբանների

մասին եղած ճոխ սկզբնաղբիւրներից: Հնարաւոր է մտածել նաեւ, որ հայերն էլ մասնակից լինէին այդպիսի կենցաղավարութեան քրիստոնեայ սահմանակից երկրներում կամ նոյնիսկ Հայաստանում:

Բայց ճառը ոչ միայն պատմական սկզբնաղբիւրի որոշ արժէք ունի, այլեւ իւրայատուկ քրիստոնեայ վերամշակում է այն փիլիսոփայական հոսանքների բարդ միաձուլման, որ բնորոշ է վաղ միջնադարեան Արեւելքին: Ուշադրութիւն դարձնենք մի քանի արտայայտութիւնների վրայ՝ բնագիրը խիստ լեզուական քննութեան ենթարկելով: Համոզուած ենք, որ այս ճանապարհով աւելի ըմբռնելի կը դառնան գործի յատկանշական որոշ երեւոյթներ:

Վերցնենք ճառի միայն մի հատուած. Եղիշէն այսպէս է նկարագրում իր ճգնաւորների յատուկ կեցուածքը. «*Մանաւանդ ի պարս շրջագայ անդադար պաշտամանն՝ երգս հոգեւորս հարկ բոլորեցուն մատուցանեն զաւարք հոգւով: Կամ ընդդէմ միմեանց գաչս ի վայր արկեալ՝ գծայրս ոտից մատանցն նկատելով, իբր թէ մի կէտ տեսակի ամենեքեան հայեցմին. գաջ ձեռն ի վերայ ծնօտին եդեալ եւ գահեակն ի վերայ կրծիցն, որպէս կարծեմ ուսեալ ի բնական հարցն: Երկու են պատուականագոյնք ի մարմնի, կենդանական եւ խոհական, երկոքումբք երկոցունց սպասաւորեալ. կենդանականին՝ սրտմտականն է հակառակ, իսկ խոհականին՝ արտաբերական բանիւ. Արդ ձախումն գերասանակ ի ձեռն առեալ՝ զսրտմտականն սանձակոծիցէ, եւ գաջ ձեռն ի վերայ աջոյ ծնօտին եդեալ՝ խոհականին սպաս ունի առ դրան բերմամն բանին, զի մի՝ այլակութիւն յուղիղ փառատրութիւնն խառնեսցի: Եւ ընդ այսու երկու մասամբքս նահանջին ամենայն զգայութիւնքս. աչք յուղիղ տեսութիւն եւ ականջք ի զգաստ լսողութիւն, միտք ի սուրբ իմաստութիւն, եւ այլն ըստ իւրաքանչիւր մասին:*

Եւ իբրեւ այսպէս կարգեալք և յօրինեալք, ամենեքեան ի նմանութիւն վեցթեւեան սերովբէից շուրջ պարփակեալք, ձայնս անհատս ի վեր հնչեցուցանեն, եւ օրհնութիւն եռաչափս ի խորհուրդ միաբանութեան արարչին իւրեանց բոլորեն» (էջ 159-160):

Մարդ չկայ, որ չնկատի, թէ այս ճգնաւորները բացառիկ անսովոր կերպով են պատրաստւում Աստուծոյ պաշտամունքին՝ մի ձեւ, որ ճգնաւորական կեանքին վերաբերեալ հին դարաշրջանի աղբիւրներին՝ Կորիւն, Յաճախապատում, Յովհաննէս Մանդակունի, Բարսեղ Կեսարացի եւ այլն, բոլորովին անծանօթ է, բայց ի հարկէ պէտք է իր իմաստն ունենայ, եթէ ոչ իր խորհրդանշանակութիւնը:

Եթէ ուշադրութեամբ քննարկենք յատուածի բառապաշարը, կը տեսնենք, որ միայն մի բառակապակցութիւն կայ զուտ քրիստոնեայ խորքից եկած, այն է *երգս հոգեւորս*, որ Պօղոս առաքեալից (Եփ. Ե 19՝ *եւ երգովք հոգեւորօք*) սկսեալ շատ է տարածուել ընդհանուր քրիստոնեայ աշխարհում: Սրան իմաստային առումով մոտենում է նաեւ *զաւարք հոգւով* դարձուածը, որ յիշեցնում է նոյն առաքեալի (Բ Կոր. Թ 7) *գտուրս զաւարքառատս սիրէ Աստուած* խօսքը:

Բացի սրանից, միւս նշանակալից բառակապակցութիւնները բոլորն էլ կապուած են փիլոնեան-հելլենիստական փիլիսոփայութեան բառապաշարի եւ մտքի հետ եւ յատկապէս Փիլոնի ոչ միայն *Յաղագս վարուց կենաց* բնագրի, այլեւ մնացած երկերի հետ: Տեսնենք սրանցից երեքը, որոնք յուներ են. *հայր բոլորեցուն, արտաբերական բանս, օրհնութիւն եռաչափս.* դրանք լրիւ պատասխանում են Փիլոնի կողմից յաճախ օգտագործած πατὴρ τῶν ὅλων, προφορικὸς λόγος, τρίμετρος ὕμνος (εὐλογία) արտայայտութիւններին:

Բերուած երեք օրինակներից առաջինը յաճախակի է հանդիպում, բացի Փիլոնից[11], նաեւ հերմեսեան գրականութեան մէջ[12] (CH I, I, 21; I, 31), որը ծանօթ է եղել հայկական վաղ միջնադարեան մշակոյթին, ինչպէս վկայում է Հերմէս Եռամեծի *Ստ*

Ասկղեպիոս Սահմանքի հայերէն թարգմանութիւնը[13]: Երրորդը վերաբերում է հայկական ծիսական երաժշտութեան ծագման, ձեւաւորման եւ յունական ծիսակատարութեան հետ ունեցած նրա աղերսների բարդ եւ կարեւոր խնդիրներին: Երկրորդը արժանի է մասնաւոր ուշադրութեան, որովհետեւ գտնւում է այնպիսի մի կոնտեքստում, որ բացատրութեան կարիք ունի:

Դիտենք, ուրեմն, ճգնաւորների կեցուածքը երգելուց առաջ: Նրանք՝ դէմ դիմաց կանգնած, հայեացքը սեւեռում են իրենց ոտքի ծայրին, իբր թէ բոլորն էլ նոյն կէտին են նայում. մի կեցուածք, որը անտարակոյս գուշակել է տալիս՝ ինչ որ ճառի շարունակութեան մէջ աւելի բացայայտ է լինելու. միակեացները մի տեսակ յափշտակութեան են ենթարկւում, ինչպէս ասում է Եղիշէն *մինչեւ չհամարեալ զինքեանս ի մարմնի, այլ յերկինս* (էջ 161): Նրանց ձեռքերն էլ տարօրինակ ձեւով են դրուած, ձախը կրծքին, աջը ծնօտին: Դժուար կը լինէր հասկանալ նման անսովոր կեցուածքին բուն նշանակութիւնը, եթէ հեղինակը ինքը չբացատրէր: Դարձեալ կարդանք հետաքրքրական հատուածը. *«Երկու են պատուականագոյնք ի մարմնի, կենդանական եւ խոհական, երկոքումբք երկոցունց սպասաւորեալ. կենդանականին՝ սրտմտականն է հակառակ, իսկ խոհականին <u>արտաբերական բանս</u>: Արդ ձախումն գերասանակ ի ձեռն առեալ՝ զսրտմտականն սանձակոծիցէ, եւ զաջ ձեռն ի վերայ աջոյ ծնօտին եդեալ՝ խոհականին սպաս ունի առ դրան բերման բանին, զի մի՝ այլակութիւն յոլիղ փառատրութիւնն խառնեցի»:*

Բերուած հատուածում ակներեւ է դարերով եկած յոյն ողջ փիլիսոփայութեան ազդեցութիւնը, որի խորքում, անշուշտ, սանձերը ձեռք բռնած՝ պղատոնական կառապանի հռչակաւոր պատկերն է[14], բայց Եղիշէին սրանից շատ աւելի մօտ եւ ծանօթ պէտք է լինէին Փիլոնի մտքերը, որը վերջինս կրկնում է իր երկերի մէջ, երբ խօսում է մարդու մարմնական եւ հոգեկան կառոյցի մասին: Փիլոնի *Այնոցիկ որ ի լինելութեանն, խնդրոց եւ լուծմանց*[15] կոչած երկի հայերէն թարգմանութեան մէջ կայ խնդրոյ առարկայ հատուածի զուգահեռը, թէեւ տարբեր բառերով արտայայտուած. *«Արդ ոչ միայն զմասունս մարմնոյն տեսցէ որ այսպէս կիցս եւ զոյգս, միաւորութեամբ անջատեալս՝ եւ բաժանմամբ միացեալս, այլ եւ զոգւոյն: Եւ քանզի տրա վերագոյնն երկու հատածքն՝ իբրու հրապարակածեալ, բանականն եւ անասունն, մասունքն երկաքանչիւր ուրուք հատածոցն ունի առանձինն կտրածս. իբրու թէ որպէս <u>բանականն ի միտսն</u>, եւ առ <u>արտաբերական</u> բանն. իսկ զգայականն ի չորս զգայութիւնս, քանզի հինգերորդն շօշափումն՝ հասարակաց չորեցունցն է»:*

Եղիշէի եւ Փիլոնի գաղափարները նոյնն են, սակայն, անկասկած, շատ աւելի ստոյգ եւ յստակ դրսեւորած Եղիշէի կողմից. խօսքը հոգու երկու հակառակ եւ միեւնոյն ժամանակ իրար լրացնող յատկութիւնների եւ դարձեալ մտքի կրկնակ գործունէութեան մասին է:

Ուշագրաւ է, որ իւրաքանչիւրում հանդիպում է *արտաբերական բան* կապակցութիւնը: Նոյնն աւելի հասկանալի է դառնալու նոյն կոնտեքստում, Փիլոնի հայերէն չթարգմանուած երկերի զուգահեռ հատուածների լոյսի ներքոյ: Սրանց մէջ մի անգամից աւելի կարդում ենք, որ *արտաբերական բանը* մտքի եղբայրն է, τὸν ἀδελφὸν... τὸν ἑαυτοῦ προφορικὸν λόγον (Det. 66), τὸν γὰρ προφορικὸν λόγον διανοίας ἀδελφὸν... (ibid. 126), կամ հակառակն է ἐδιάθετος λόγος-ին, որը միտքն է՝ ἐν ἀνθρώπῳ δ᾽ὁ μέν ἐστιν ἐνδιάθετος, ὁ δὲ προφορικός, ..., (ibid. 129) (De vita Mosis II, 127) καὶ δυσὶ λόγοις τοῖς καθ᾽ἕκαστον ἡμῶν, τῷ τε προφορικῷ καὶ ἐνδιαθέτῳ... (ibid. 129).

Նման գաղափար, աւելի բախտաւորեցնելով արտայայտում է դարձեալ Հերմէս Եռամեծի վերոյիշեալ երկը, որում գրուած է *բան մտաց արբանեակ է. զի զոր կամին միտքն՝ զայս եւ բանն թարգմանէ* (V, 1):

Այս վերջին մէջբերումը լիովին պարզաբանում է խնդիրը. արտաբերուած բառն իր առանձնայատկութիւնը ունի՝ *բարգմանել*, այսինքն՝ ձայնի միջոցով դրսեւորել այն, ինչ որ միտքը յղում է:

Վերադառնանք այժմ Եղիշէի բնագրին եւ փորձենք տեսնել՝ ինչ կապ ունի *արտաբերական բան* դարձուածը ճգնաւորների կեցուածքի հետ: Աջ ձեռքը աջ ծնօտի վրայ դրուած, բերանի մօտ (*առ դրան բերման բանին*) ծառայում է (*սպաս ունի*) *խոհականին* (այսինքն՝ մտքին), որպէսզի ոչ մի այլանդակութիւն չխառնուի ուղիղ փառատրութեան:

Եղիշէի մօտ, ուրեմն, ձեռքի դիրքն ունի իւրայատուկ խորհրդանշական իմաստ: Այն, մեր կարծիքով, միաբաններին յուշում է զգոյշ լինել անպարկեշտութեան վտանգից, որ միայն մարդու ներսից կարող է սկիզբ առնել: Ինչպէ՞ս չմտածել, որ այս միտքը քրիստոնեայ Եղիշէի մօտ աւետարանի մի խօսքի արձագանքը չլինի *ոչ որ ինչ մտանէ ընդ բերան պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ* (Մատթ. ԺԵ 11): Հետաքրքրական է նշել, որ նոյն տեսակի միտք գտնւում է նաեւ Թովմասի պարապանոն աւետարանում (λόγιον 14) "Ce qui sortira de votre bouche, c'est cela qui vous souillera"[16], որը, ինչպէս ծանօթ է, գնոստիկեան միջավայրից է դուրս եկել:

Աւարտելով նկատողութիւններիս շարքը, կը կամենայի յիշեցնել, որ այս՝ վերլուծութեան սոսկ մի փորձ է, որ ցոյց է տալիս, թէ որքան տարբեր մշակութային շերտերից է բաղկացած Եղիշէի երկը: Սակայն այն ունի իր բացառիկ ինքնատիպութիւնը եւ միասնականութիւնը՝ շնորհիւ իր գրական բարձր արուեստի եւ ոճի: Եղիշէի արձակը՝ թէ՛ Պատմութեան, թէ՛ կարճ երկերի, միշտ շնչում է Աստուծոյ եւ ազգի նկատմամբ ջերմ սիրով եւ լի է զգացականութեամբ:

Հետեւաբար՝ *Խրատ յաղագս միաւծանց* փոքրածաւալ ճառը եւս արժանի է քննական նոր հրատարակութեան եւ համակողմանի լրիւ ուսումնասիրութեան ու սպառիչ մեկնաբանութեան:

Ծանօթագրութիւններ

1 Տե՛ս **B.Outtier**, Une exhortation aux moines d'Elisée l'Arménien, "Mélanges Antoine Guillaumont" (Cahiers d'Orientalisme XX), Genève, 1988, pp. 97-101: Նոյն ճառի, վերջերս, լոյս տեսել է արեւմտահայերէն թարգմանութիւն, բէեւ որոշ փոքր զանցառութիւններով (տե՛ս Ե.արք.Գալուստեան, Հայազգի սուրբեր, Երեւան, 1977, էջ 141-147): Տե՛ս նաեւ Հ.Հ.Քյոսեյան, Եղիշեի ճառագրական երկերի աղբյուրներից, "Պատմա-բանասիրական հանդես", 123, 1988, 4, էջ 108-112; Նոյնի՝ Խորհրդանշանը Եղիշէի մեկնաբանական եւ ճառագրական երկերում, "Էջմիածին", 1989, 8, էջ 52-60; **L.B.Zekiyan**, Quelques observations critiques sur le "Corpus Elisaeanum", "The Armenian Christian Tradition", Orientalia Christiana Analecta 254, Roma, 1997, pp. 71-123; Նոյնի՝ Sul monte Tabor (իտալերէն թարգմանութիւն), Bose, 1996; **P. Serop Jamourlian**, Il Commento al "Padre Nostro" di Eghishe vardapet, "Բազմավէպ", 1997, 1-4, էջ 207-274; Նոյնի՝ La preghiera del Signore (իտալերէն թարգմանութիւն), Bose, 1998.

2 Տե՛ս Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի Մատենագրութիւնք. Բան Խրատու յաղագս միաւծանց, Վենետիկ, 1859, էջ 159-165:

3 Իրապէս պէտք է ասել, որ Հայաստանի վանականութեան ընդհանուր պատմութիւն, բուն սկզբնաղբիւրների վրայ հիմնուած, դեռ գոյութիւն չունի: Մասամբ տե՛ս Յուսիկ Եպիսկոպոս, Անապատականներ եւ վանականութիւն, Վաղարշապատ, 1906: Նաեւ Ե.Գալուստեան, նշվ. աշխ., էջ 136-158:

4 Տե՛ս Հ.Գ.Զարբհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ - ԺԳ դար), Վենետիկ, 1897:

5 Տե՛ս Բարգէն Ծ.վ. Կիւլէսէրեան, Եղիշէ. քննական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1909, էջ 164-174:

6 **Փիլոնի Հեբրայեցւոյ** Ճառք, թարգմանեալք ի նախնեաց մերոց, որոց հետեւն բնագիրք հասին առ մեզ. Յաղագս վարուց կենաց տեսականի, Վենետիկ, 1892, էջ 5-32 (այսուհետեւ *Տեսակ*):

7 Տե՛ս Les oeuvres de **Philon d'Alexandrie**, De vita contemplativa, intr. et notes de F.Daumas, trad. de P. Miquel, Paris, 1963 (այսուհետեւ *De vita*). Փիլոնի միւս երկերի յունարէն բնագրի օգտագործուած մէջբերումները նշուած են ըստ սոյն շարքի կրճատումների:

8 Այս մասին տե՛ս Ս.Յ., Եղիշէի եւ Մակաբայեցւոց գրքերի յարաբերութեան խնդիրը. Եղիշէ, Փիլոն, «Արարատ», 1896, ԺԲ, էջ 553-555:
9 Տե՛ս **S.Weber**, Eine Auswahl patristicher Werke in Deutscher Übersetzung. Wörte der Ermahnung über die Einsiedler, "Armenischen Kirchenväter", II, SS. 287-298, München, 1927.
10 Տե՛ս ծանօթ. 1.
11 Հեղինակի երկերում շատ յաճախ է հանդիպում. տե՛ս Leg. Alleg. I, 49; De ebriet. 81; De confus. ling. 144; De spec. leg. I, 22; II, 6; III, 127 եւ այլն:
12 Տե՛ս Corpus Hermeticum, t.I, Traités I-XII, par A.D.Nock-A.J.Festugière, Paris, 1945.
13 Տե՛ս Հ.Մանանդյան, Հերմեայ Եռամեծի "Ոո Ասկղեպիոս Սահմանք", "Բանքեր Մատենադարանի", 1958, 3, էջ 287-314 եւ **J.-P. Mahé**, Hermès en Haute-Egypte, t.II: Le fragment du Discours Parfait et les Définitions hermetiques arméniennes, Bibliothèque Copte de Nag Hammadi, Textes 7, Quebec, 1982, pp. 358-405.
14 Տե՛ս **Plato**, Phaedr, 246 c.
15 Փիլոնի Երբայեցւոյ Մնացորդք ի Հայս, աշխ. Հ. Սկրտիչ ա.վ. Մ.Ալգերեանց, Վենետիկ, 1826, III, 5, 177.
16 Պատերէն Աւետարան ըստ Թովմայի, ղպտերէն բնագիր եւ ֆրանսերէն բարգմանութիւն (տե՛ս L'Evangile selon Thomas, par Ph. De Suarez, Montélimar, 1974, pp. 16-17):

Պավել Չորաքյան

ԱՆԱՍՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԵՐԱՊՈԼՍԵՑՈՒ «ՎԱՍՆ ՎԱՆՈՐԷԻՑ, ՈՐ Ի ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔՆ ՅԵՐՈՒՍԱղԷՄ» ԵՐԿԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վաղ միջնադարյան Քրիստոնյա Արևելքի կյանքում Երուսաղեմի խոշոր դերը որքան հանրահայտ, նույնքան և կարոտ է բազմակողմանի գիտական ուսումնասիրության: Եւ դա վերաբերում է առաջին հերթին Երուսաղեմի ու Հայաստանի միջև բազմակողմ կապերի պատմության վերհանմանը, հայերի դերին Երուսաղեմում ու նաև Երուսաղեմի դերին հայ քրիստոնեական եկեղեցու[1], նրա ճարտարապետության[2] ու նրա դավանաբանության ձևավորման գործում[3]: Այն եղել է հայ մատենագրության ու գրչության կարևոր կենտրոններից մեկը:

Դեռևս Գ.Հովսեփյանն է նկատել ու արձանագրել, թե "մինչև վերջերս Զ-Է դարերը համարվում էին գրականության և քաղաքակրթական տեսակետից ամուլ դարեր. սակայն նորագույն աղբյուրների գյուտը և քննությունները ցույց տվին, թե հայ գրականության լավագույն շրջաններին են պատկանում այդ դարերը: Այդ ժամանակ են ծաղկել դավանաբանական թղթերն ու գրությունները, հելլենասերների դպրոցը՝ եկեղեցական հայրերի և փիլիսոփայական գրվածների թարգմանություններով, բայց ամենից համոզեցուցիչը այդ դարերի ստեղծագործող ուժի և կենդանության համար արվեստների թագուհի ճարտարապետությունն է: Զ դարու վերջերումն է շինված Ավանի եկեղեցին, Դվինի Ս.Գրիգորը, Է դարում՝ Հռիփսիմեն, Գայիանեն, Զվարթնոցը, Ակոռիի բազիլիկան, Թալիշի և Եղվարդի հոյակապ եկեղեցիները Գրիգոր Մամիկոնյանի ձեռքով, Թալինի մեծ ու փոքր տաճարները՝ Ներսեհ Կամսարականի, Բագարանի Ս.Թեոդորոսը (624-631 թթ.), Մրենի տաճարները: Ես չեմ հիշում Արագածի շուրջը փռված բազմաթիվ դրսից խաչածև, սասանյան շրջանի օրնամենտներով և պայտաձև կամարներով վկայարանները՝ Օշականում... Չկա կաթողիկոս, չկա փոքրիշատէ հայտնի իշխան, որ մի կոթող թողած չլինի"[4]: Այդ բուռն պոռթկումը, սակայն, բացատրելու փորձեր չեն կատարվել: Չի արձանագրվել, մասնավորապես, նաև այն հանգամանքը, որ մինչ այդ, բացի Հայաստանի տարածքից, հայկական վանքեր ու մենաստաններ էին կառուցվել նաև Երուսաղեմում, և Զ դարի երկրորդ կեսից միայն դավանաբանական պայքարի սաստկացումն ու Հայաստանի և Երուսաղեմի հարաբերությունների գրեթե խզումը, Երուսաղեմի հայկական վանքերի բռնագրավումներն ու ավերումը ժամանակավորապես ընդհատեցին այնտեղ եկեղեցիների ու վանքերի կառուցման ջանասիրությունը և այն հիմնականում տեղափոխեցին Հայաստանի տարածք[5]:

Երուսաղեմի հայ գաղթօջախի պատմության վաղմիջնադարյան շրջանի ուսումնասիրության համար կարևոր հաղորդումներ են պահպանվել Անաստաս վարդապետի անունով մեզ հասած ուղեգրական բնույթի նկարագրության մեջ, որտեղ տրված է Երուսաղեմի հայկական վանքերի ցուցակը ու թվարկված են նաև այն հանգամանքները, որոնք դրդել են ձեռնամուխ լինել ճանապարհորդությանն ու նշված ցուցակի կազմմանը: Հայ Երուսաղեմի խոշոր գիտակ Սկրտիչ եպս. Աղավնունին հետևյալ կերպ

է գնահատել այդ բնագրի արժեքը. "Հայ մատենագրութիւնը U.Տեղեաց թէ՛ հայկական վանքերու, թէ՛ օտար վանքերու մէջ ապրող հայ միաբանութեանց նկատմամբ դժբախտաբար բառ մը անգամ չէ արձանագրած, հակառակ որ նախնական դարերէ սկսեալ, մեր բնիկ աշխարհէն ուխտաւորական կարաւանները շարունակ այցելած են Երուսաղէմ, յուխտ եւ երկրպագութիւն Քրիստոսի Տնօրինական U.Տեղեաց: Հայոց Անաստաս վարդապետը միայն, ինչպէս յիշած ենք այլուր, գրի առած է Յուցակ մը Երուսաղէմի Հայ Վանորէից մասին: Ան թեեւ զերծ չէ քննադատութեներէ եւ ձեռնմխութիւններէ, ինչ որ ալ ըլլայ սակայն, այդ Յուցակը հայեցի կարեւոր յիշատակարան մըն է"[6]: Բազում այլ բղթերի նման թեև այն ևս չի ընդգրկվել Գիրք բղթոցում, սակայն բարեբախտաբար պահպանվել է և արժանի է պատշաճ ուշադրության:

Պատմական սկզբնաղբյուրների նկատմամբ "անխաբար" պահպանված մնալու պահանջն ու սպասելիքը որոշ պատմաբանների թերահավատությամբ է տրամադրել Անաստասի երկի մեջ առկա տեղեկությունների նկատմամբ, իսկ ավելի հավակնոտ պատմաբանները մի կողմ են նետել այն որպես սկզբնաղբյուր, թեև նրա ուսումնասիրությունը պետք է ուղեկցվեր բնագրի արժանահավատության հավաստմամբ միայն: Այդ առումով Անաստաս վարդապետի անունով մեզ հասած բնագիրը մեկն է, որը կարոտ է լուրջ հետազոտման ու, համոզված ենք, կարող է դիմանալ բոլոր տեսակի քննություններին ու քննադատություններին:

Հեղինակի անունը արձանագրված է իր կազմած ցուցակի վերջում, որպես Երուսաղեմ այցելած հայ ուխտավոր վարդապետ, որ Համազասպ Կամսարականի խնդրանքով կազմել է Երուսաղեմի հայոց վանքերի ցուցակը:

Ղ.Ալիշանը Անաստաս վարդապետին համարում էր VII դ. հեղինակ:

Անաստաս վարդապետի հեղինակած երկը մեզ է հասել ուշ շրջանի ձեռագրերով: Ժամանակագրորեն վաղագույն ժողովածուն, որտեղ առկա է այդ բնագիրը, Մաշտոցի անվան Մատենադարանի 1770 թվահամարը կրող գրչագիրն է, ընդօրինակված 1589 թ. մի ձեռագրից, որն էլ իր հերթին կազմվել կամ արտագրվել է 1425 թ.: Մեզ զբաղեցնող բնագիրը 399 թերթ ունեցող այդ ձեռագրում գրավում է 93բ-96ա էջերը: Այն վերնագրված է՝ "Ի յԱգաթանկեղ Պատմութենէն, որ էր դպրապետ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, վասն վանորէիցն, որ յԵրուսաղէմ": Սկիզբ. "Ի ժամանակս թագաւորութեան Տրդատայ...": Հիշատակարան. "Մեղայ քեզ աստուած: Ի յերկրին Հոռոմոց Գաղատիայ, որ մականուն կոչի Անգուրիայ, ի Լուսաւորչին Գրիգորի յանունն եկեղեցի գտաք գիրք, որում գրեալ էր դրուատս այս: Անաստաս անունամբ վարդապետ հայոց գնացեալ էր յԵրուսաղէմ եւ շրջեալ յաստուածակոխ տեղիսն եւ ականատես եղեալ վանորէիցն եւ չէն ամենայն վանորայքն հայոց, որ յԵրուսաղէմ Հ(70) վանք եւ գրեալ զամենայն եւ բերեալ ի Ծովից գաւառն, որ այժմ կոչի Չմշկածակ, եւ մեր գրեալ զայս եւ աւրինակեալ զամենայն կարգաւ" (թ. 95բ-96ա):

Նշված ձեռագրից աննշան տարընթերցումներով բնագիրը առկա է Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2079 ձեռագրի 189ա-191ա էջերում: Ձեռագիր մատյանը ընդօրինակված է 1622 թ. Լիմ անապատում:

Ձեռագրական նույն խմբին է պատկանում նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի թիվ 1537 ձեռագրի 97ա-99ա էջերում գտնվող բնագիրը: Ձեռագրի առաջին մասը գրված է Վանում 1696 թ., իսկ երկրորդ մասը, որտեղ և ընդգրկված է Անաստաս վարդապետի երկը, ընդօրինակված է 1716 թ.[7]:

Հավանաբար ձեռագրական այս խմբին է պատկանում նաև Վենետիկի մատենադարանում պահվող մի ձեռագիր ևս, որը, ըստ Ղ.Ալիշանի հաղորդման, արտագրված է 1624 թ., և "յորում այդ յետին հատուածն չկայ" (իմա գրչի վերոբերյալ հիշատակարանը)[8]:

Այս խմբին է պատկանում Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանում պահվող թիվ 3104 ձեռագիրը, որն ընդօրինակել և հրատարակել է Տ.Սավալանյանցը իր հեղինակած "Պատմութիւն Երուսաղէմի" աշխատության մեջ[9] և տողատակ բերել Ղ.Ինճիճյանի "Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի" աշխատության մեջ տպագրված օրինակի և թիվ 3541 ձեռագրի կարևոր նկատված տարընթերցումներն ու Մովսես Կաղանկատվացու բնագրի հաղորդումները:

Վերոբերյալ բոլոր ձեռագրերում Անաստասի երկը շարադրված է երրորդ դեմքով, ունի "Ի յԱգաթանկեղ Պատմութենէն, որ էր դպրապետ սուրբ Լուսաւորչին Գրիգորի" վերնագրային հավելումը. բնագրերն իրարից տարբերվում են փոքր տարընթերցումներով և, ըստ այդմ, կազմում են մեկ խմբագրություն[10], որի հիմք ձեռագիրը եթե վաղագույն թիվ 1770 ձեռագիրը չէ, ապա բոլորը՝ նրա հետ միասին, ծագում են մայր օրինակից, գուցե ընդօրինակված մեզ չհասած 1425թ. գրված ձեռագրից:

Երկրորդ խումբն են կազմում ընդամենը երկու գրչագրով հայտնի ձեռագրեր, որոնց մեջ Անաստասի երկը շարադրվում է առաջին դեմքով: Ձեռագրերից առաջինը պահվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանում (թիվ 3541), որից և 1858 թ. Երուսաղեմում Հ.Չիլինկերյանի կողմից արտագրվել է[11] այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում (թիվ 9622) պահվող երկրորդ ձեռագիրը:

Երկի հեղինակի ու նրա գործի մասին հայտնվել են հակասական կարծիքներ:

Առաջին անգամ Անաստաս վարդապետի ու նրա երկի մասին խոսում է Մովսես Կաղանկատվացին[12]: Նրա "Պատմութիւն Աղուանից աշխարհի" երկի երկրորդ գրքի ԾԲ գլուխը վերնագրված է՝ "Անուանք վանորայիցն, որք յԵրուսաղէմ են շինեալ յԱղուանից անուն, զոր ի թղթոյ երանելւոյն Անաստասայ առ Վահան[13] Մամիկոնեան առեալ ուսաք, այս են": Եթե անգամ չլիներ Անաստասի անվան նշումը, ապա թվարկման մեջ եղած նմանություններն իսկ բավարար էին հաստատապես պնդելու համար, որ Մովսես Կաղանկատվացին իր երկի այդ գլուխը շարադրելիս իր տրամադրության տակ ունեցել է Անաստաս վարդապետի ցուցակի մի ավելի անխաթար օրինակ և որ ինքն այդ գործից դուրս ոչ մի այլ վանք չի արձանագրում: Դա նշանակում է միաժամանակ, որ Անաստասի երկը ևս, ինքնուրույն գոյատևելով ավելի քան 14 դար, քիչ փոփոխությունների է ենթարկվել: Մովսես Կաղանկատվացու երկում պահված այդ քաղումներին առաջինը ուշադրություն են դարձրել Ա.Տեր-Հովհաննիսյանցը և Տ.Սավալանյանցը և դրանք օգտագործել Անաստասի հաղորդումների ծանոթագրման ժամանակ:

XVIII դ. առաջին քառորդին է գրվել ու ապա տպագրվել հայ գիտնական Հաննայի (Հովհաննես վրդ. Հաննա Երուսաղեմացու) աշխատությունը, որը կոչված էր նաև ուղեցույց լինելու և գործնական նշանակություն ունենալու ուխտավորների և վանքի համար[14]: Հաննա պատմաբանը, սակայն, Անաստասի երկին անծանոթ էր և իր աշխատության մեջ չի հիշատակում այն[15]: Նա սկսում է իր շարադրանքը Երուսաղեմի հայ միաբանության վիճակի արձանագրումով, Երուսաղեմի պատմությունը շարադրելու անհրաժեշտության հիմնավորումով և ապա Երուսաղեմի հայոց միաբանությանը օժանդակելու կարևորության արձանագրումով, Երուսաղեմ ուխտագնացությունն աշխուժացնելու կոչով, Երուսաղեմ գնալու ուղիների նկարագրությամբ և այլն: Համառոտ շարադրում է քաղաքի հիմնադրումն ու կառուցման պատմությունը և ապա Երուսաղեմի ուխտատեղիների ու շինությունների, մասնավորապես հայկական սրբավայրերի, նկարագրությունը: Ուշագրավ է, որ խոսելով սրբավայրերից մեկի մասին, Հաննան գրում է. "Եւ թէպէտ սա չէր բնական եկեղեցին մեր, բանզի մեր եկեղեցին եւ պատարագամատոյցն սուրբ Գողգոթայն էր, որպէս գրէ *Ագաթանգեղոս պատմագիրն*, սակայն ազգն վրաց[16] յորժամ նենգութեամբ խլեցին ի ձեռաց մերոց..."[17]: Ագաթանգեղոսի՝ մեզ հասած ոչ մի ձեռագիր չունի այդ հաղորդումը, ուստի մնում է ենթադրել, որ Հաննան

ձեռքի տակ ունեցել է Անաստասի երկը, սակայն ինքնուրույն քննագիր չի համարել և դիտել է որպես Ագաթանգեղոսի երկի մեկ հատված:

Անաստասի երկը, այսպիսով, հայտնաբերել ու առաջինը գիտական շրջանառության մեջ է դրել Ղ.Ինճիճյանը, որն իր ձեռքին եղած ոչ լրիվ ձեռագիրը հրապարակել է իր "Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի" երկի մեջ: Ղ.Ինճիճյանը մասնավոր քննության չի ենթարկել այն և բավարարվել է տողատակի ընդարձակ ծանոթագրությամբ, որտեղ ուշագրավ է հեղինակի այն նշումը, թե "այս գիր է իբր վերջին գլուխ տնօրինական տեղեացն որ յԵրուսաղէմ. զորս յետ մի ըստ միոջէ թուելոյ դնէ վերնագիր. "Ի յԱգաթանգեղոյ Պատմութենէն, որ էր դպրապետ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, վասն վանորէիցն որ յԵրուսաղէմ: ...Եւ ապա սկսանի. "Ի ժամանակս թագաւորութեան Տրդատայ եւ ի հայրապետութեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մեծամեծք Հայոց շինեցին վանորայք ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ, որոց անուանք վանորէիցն են այսոքիկ"[18]: Ղ.Ինճիճյանը արձանագրելով, որ «ոչ գտանի յայժմեան գիրս Պատմութեան նորին (իմա՝ Ագաթանգեղոսի) զոր ունիմք", ենթադրում է, թե "ի Պատմութենէն Ագաթանգեղոյ ասելովն՝ տայ մեզ իմանալ, թէ զայս ցուցակ անուանց վանորէից յուրոյն իմն պատմութեան էր գրեալ Ագաթանգեղոս»: Ցանկանալով հիմնավորել իր ենթադրությունը, Ղ.Ինճիճյանը նույն տեղում ավելացնում է. "Եւ չեն ինչ զարմանք զանազան եկեղեցիս շինելն յԵրուսաղէմ մերոյն Տրդատայ եւ Լուսաւորչի եւ նախարարացն: ...Պարտ է եւս համարել, թէ... բազմութիւն ուխտաւորաց ի մերոց հայկազանց յաճախէին գնալ անդր. եւ նմին իրի դէպ *լինէր այլ եւ այլ նախարարաց զանազան վանորայս շինել ի դիւրութիւն բնակութեան ուխտաւորաց իւրաքանչիւր ցեղից յուրոյն ուրոյն վանս*": Ղ.Ինճիճյանը միաժամանակ զգուշացնում է, թե "այլ չէ պարտ այնպէս իմանալ, թէ այս ամենայն վանորայք...առհասարակ ի ժամանակս Տրդատայ եւ Լուսաւորչի շինեցան: ...Յայտ է այս եւ յանուանէ նոցա. քանզի վանքն, որ յանուն Լուսաւորչի՝ յայտ է թէ զկնի նորա շինեալ եղեւ. որպէս եւ Ղեւոնդեանցն՝ զկնի նահատակութեան նոցա՝ բազմօք զկնի Լուսաւորչին": Այս ամենից հետո Ղ.Ինճիճյանը ստիպված էր առաջադրել իր վարկածը. "Եւ այսպէս նոյն իսկ պատմութիւն ցուցանէ, թէ Ագաթանգեղոս յայս ցուցակ նշանագրեաց զվանորայս շինեալս ի Տրդատայ եւ ի Լուսաւորչէ եւ յոմանց ի նախարարաց իւրոց ժամանակին. իսկ զկնի Ներսէսի՝ յաւելին այլք ի նոյն ցուցակ արձանագրել եւ զշինեալսն ի Ներսիսէ եւ յայլոց նախարարաց, ապա յետագայք նորք յաւելին նշանակել եւ զառումն Տաճկաց եւ Հոռոմոց, որք յապա ժամանակս եղեն":

XIX դ. Մերձավոր Արևելքը հայտնվում է ժամանակի եվրոպական խոշոր պետությունների քաղաքական ու գիտամշակութային ուշադրության կենտրոնում: Պատմագիտական ու տեղագրական և նկարագրական աշխատություններ են լույս տեսնում Երուսաղեմի ու Սուրբ երկրի մասին[19], հրատարակվում են տարածաշրջանի միջնադարյան պատմության մասին եղած սկզբնաղբյուրներ, հիմնադրվում հատուկ գիտական պարբերականներ, ձեռնարկվում հնագիտական պեղումներ և այլն:

Հայ պատմագրությունը ևս չէր կարող մեկուսի մնալ: Հայերենով ևս հրապարակվում են Երուսաղեմի հայ գաղթօջախի պատմության վերաբերյալ իր ժամանակի համար առաջնակարգ ստվարածավալ գիտական աշխատություններ[20] և սկզբնաղբյուրներ, վավերագրեր, տեղագրություններ, հավաքվում վիմագիր արձանագրություններ և այլն:

XIX դ. Անաստաս վարդապետի կազմած Երուսաղեմի հայկական վանքերի ցուցակն ունենում է տասը հրատարակություն, այդ թվում և քարգմանություններ ռուսերեն, ֆրանսերեն եւ անգլերեն: Հրատարակությունները հիմնականում իրականացնում է Ղ.Ալիշանը, որի հմուտ քարգմանությամբ էլ այն հրապարակվում է եվրոպական

լեզուներով ու դառնում լայն քննարկման առարկա: Ղ.Ալիշանին է պատկանում Անաստասի երկի ստեղծման ժամանակի որոշման առաջնությունը: Ծանոթագրելով բնագրի "գրեցին առ երանելի կաթողիկոսն Յոհան" արտահայտությունը, Ղ.Ալիշանը գրում է. "Այս բաներս Տաճկաց (Արաբացւոց) տիրելէն առաջ եղած ըսելով՝ պատմիչս, երեւի որ Գ. Յովհաննէս կաթողիկոսն է դա, ի վերջ Ջ դարու եւ ի սկիզբն Ը-ին"[21]: Ճշգրտված թվագրմամբ այժմ հայտնի է, որ Հովհաննես կաթողիկոս Գաբեղենացին գահակալել է 557-574 թթ.: Իրականում Անաստասի նամակը ծնունդն է այն իրադրության ու իրադարձությունների, որոնք տեղի են ունեցել VI դ. երկրորդ կեսին:

Ղ.Ալիշանի վստահությունը Անաստասի երկի նկատմամբ առավել աճել է նրանից հետո, երբ ձեռնամուխ է եղել թարգմանելու Արուսեակ Հայի աշխատությունը, որի արդյունքում ծնվել է նրա կարևոր աշխատություններից մեկը[22]: Արուսեակի անգլերենի հրատարակիչը "համրած է եգիպտական եկեղեցեաց թուով 707 եւ վանորէից՝ 181, բայց ասոնց վրայ կրնանք քանի մը այլ աւելցընել", – գրում է Ղ.Ալիշանը[23]:

V-VI դդ. Երուսաղեմի հայոց վանքերի շրջեղության մասին էին վկայում XIX դ. վերջերին Երուսաղեմի տարբեր հատվածներում կատարված շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված հայատառ գեղեցիկ խաճանկարները[24]:

Ուշագրավ է, որ Երուսաղեմում հայտնաբերվել են նաև վրացերեն հնագույն արձանագրություններ ու խաճանկարներ՝ ի վկայություն այն իրողության, որ հայ և վրաց դավանական համերաշխության շրջանում նա նրանք Երուսաղեմում ունեցել են սեփական վանքեր ու մենաստաններ, իսկ ժամերգությունները կատարվել են մայրենի լեզուներով[25]:

Երուսաղեմի վանքերի ու եկեղեցիների բազմաբանականության մասին վկայություն է պահպանվել նաև Անտիոխ Ստրատիգի մոտ[26]:

Որքան էլ գայթակղիչ ու նաև սպասելի, սակայն Անաստասի մոտ Գահնամակի օգտագործման ոչ մի հետք չկա:

Ա. Թվարկվում են մի շարք նախարարական տներ, որոնք մեկենասել են Երուսաղեմում կառուցված վանքերին, ընդ որում նման նախարարական տների քանակը ընդամենը 16-ն է: Ուշագրավ է, որ Արծրունյաց տոհմը, Գահնամակում ունենալով 3 բարձ, ըստ Անաստասի, Երուսաղեմում ուներ միայն մեկ վանք: Մամիկոնյանները, ունենալով 2 բարձ, հովանավորում էին 6 վանքի: 2 բարձ ունենալով Գահնամակում, Սյունիները հովանավորում էին 6 վանքի: Ամատունիները և Սահառունիները 1-ական բարձ միայն ունենալով՝ ունեին 2-ական վանք:

Բ. Գահնամակի ու Անաստասի կազմած ցանկերի մեջ նախարարական տների հերթականությունը չի պահպանվում: Անաստասի մոտ վանքերի հերթականությունը շարադրված է՝ ըստ Երուսաղեմում նրանց ունեցած տեղի, աշխարհագրական դիրքի, տեղանքի հնարավոր ճշգրիտ մատնացուցումով:

Գ. Անաստասի մոտ կան արքունի ծախսով կառուցված վանքերի անուններ, որոնք չէին կարող լինել Գահնամակում:

Դ. Աղվանքի տոհմերը չեն մտել Գահնամակ, իսկ Անաստասի մոտ նշված Աղվանից կոչվող վանքերի անվանումներով մենաստաններ ու սրբավայրեր պահպանվել են Արցախում՝ ընդհուպ մինչև մեր օրերը: Այն հանգամանքը, որ Աղվանից (և Սյունյաց) վանքերը ներկայացված են առանձին խմբավորումով, բայց՝ Անաստասի ցուցակի մեջ, վկայություն է այն մասին, որ այդ ցանկը կազմելու ժամանակ նրանք, ի տարբերություն վրաց եկեղեցու, միաբանակության դիրքերում մնալով հանդերձ՝ թեմական առումով առանձին միավորներ էին ներկայացնում: Ավելին, հակադրվում է այն իրողությունը, թե "Պանդայ վանքն սուրբ Կարապետ, յարեւելից ի կողմն Չիթենեաց սուրբ լերին շինեցաւ արքունի ծախիւք յանուն Սուրբ Կաթողիկէին, որ ի Վաղարշապատ քա-

դաքի, եւ է ի ձեռս աղուանից": Ուշագրավ է, որ այդ վանքը թեև "է ի ձեռս աղուանից", սակայն չի մտցված Աղվանից վանքերի ցանկի մեջ, որ բերված է ցուցակի վերջին մասում: Այդպիսի ժամանակահատված Հայոց եկեղեցու պատմության մեջ հայտնի է VI դ. և VII դ. առաջին տասնամյակները, երբ Աղվանքի համար պայքարը հատկապես սրված էր միաբնակ ու երկաբնակ հոսանքների միջև:

Ե. Անաստասի ցուցակի ավանդագրույց կամ անվավեր լինելը բացառվում է, որովհետև անհիմաստ էր կազմել գոյություն չունեցող վանքերի ցանկ՝ նրանց նկատմամբ հավակնություն ներկայացնելու համար: Ավելին, այն բոլոր սրբատեղիները, որոնց՝ հայերի իրավասության ներքո գտնվելը հաստատվում է նաև այլևայլ սկզբնաղբյուրներով, և անառարկելի է նրանց գոյությունը "Դաշանց թղթի" "կազմման" ժամանակ, բացակայում են Անաստասի ցուցակում: Հետագա գրիչներին զարմացրել է, անշուշտ, ցանկի մեջ այդ մենաստանների բացակայությունը, և ցանկն ավելացվել է նրանց կողմից մեկ պարբերությամբ՝ առանց խաթարելու Անաստասի կազմած ցանկը՝ դրանց կառուցումը վերագրելով Տրդատ թագավորին ու Գրիգոր Լուսավորչին:

Ասել է թե՝ նշված պարբերության գոյությունն ամենևին չի կարող փաստարկ ծառայել Անաստասի ցուցակի նկատմամբ վերապահում կատարելու համար:

Անաստասի նկարագրությունը միանգամայն հավաստի, թեև ոչ հանգամանալի սկզբնաղբյուր է դիտվում Երուսաղեմի հայ գաղթօջախի լավագույն գիտակներից մեկի՝ Մ.Աղավնունու կողմից[27]:

Հայ մատենագրության մեջ ո՛չ Անաստաս վարդապետի և ո՛չ էլ նրա կազմած ցուցակի՝ մասին, բացի Մովսես Կաղանկատվացու վերոբերյալ վկայությունից, այլ վկայություն չունենք: Բնագրի հետ կապված բոլոր հարցերի պատասխանը, ըստ այդմ, փնտրելի է միայն բնագրի աղբյուրագիտական ու պատմական քննության մեջ: Արդեն այն փաստը, որ Մովսես Կաղանկատվացու "Պատմութիւն Աղուանից աշխարհի" աշխատության Բ գրքում հատուկ գլուխ է առանձնացված Անաստասի գործից քաղված նյութը ներկայացնելու համար, ցույց է տալիս, որ այդ նկարագրությունը կար VII դարում[28], իսկ Անաստասը անհայտ մեկը չէր ու "երանելի" էր արդեն Մովսեսի ժամանակ[29]:

Առաջինը, որ աչքի է զարնում Անաստասի նկարագրության մեջ, Երուսաղեմի հայոց վանքերի անշուք, ավերված կամ արդեն իսկ խլված լինելու արձանագրումներն են: Հայկական 72 վանքերից կանգուն են և դեռևս հայերին են պատկանում միայն 55-ը (այդ թվում Աղվանից[30] կոչվածները):

Ի տարբերություն ուշ շրջանի մտայնության (XII-XIII դդ.), ըստ որի "յԵրուսաղէմ զԳողգոթայ՝ գտեղի խաչելութեանն Քրիստոսի եւ զսուրբ Յակովբն, եւ տեղի մի պատարագի ի սնարս սուրբ Յարութեանն" հայերը ստանում են Տրդատի ու Գրիգոր Լուսավորչի՝ Հռոմ այցելության ժամանակ, Անաստասի մոտ ներկայացված է հետևյալ տեսքով. "Ի ժամանակս թագաւորութեան Մեծին Տրդատայ եւ ի հայրապետութեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին շինեցան ի մեծամեծ իշխանացն մերոց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ վանորայք բազումք, որոց ականատես եղէ գրելով յայս գիւրաքանչիւրսն յականէ յանուանէ": Ասել է թե՝ Անաստասի ցուցակագրմամբ հայերը հավակնում են միայն այն մենաստաններին, որոնք կառուցվել են հայերի՝ հայ իշխանների, նախարարական տների կամ արքունի գանձով, և ոչ այն մենաստաններին, որտեղ այլևայլ ժողովուրդների ներկայացուցիչների հետ բնակվում էին նաև հայազգի անապատականներ ու միաբաններ: Վերջին կարգի հայ ուխտավորների ու միաբանների մասին եթե վկայություններ են պահպանվել նաև V-VII դդ. հունարենով գրված և տարբեր լեզուների թարգմանված մի շարք վարքերի ու նկարագրությունների մեջ, ապա զուտ

հայկական մենաստանների առկայության ապացույցներ են Երուսաղեմում հայտնաբերված հայերեն արձանագիր խճանկար հատակներ ունեցող վանքերի գոյությունը:

Անաստասի ցուցակն արժեքավոր է նաև այն առումով, որ կարևոր վկայություններ է պարունակում հայ նախարարական տների, Հայաստանի նահանգների ու գավառների անունով Երուսաղեմյան վանքերի հայտնի լինելու մասին: Դա վկայություն է նաև այն սերտ կապի մասին, որ կար Հայաստանի ու Պաղեստինի միջև: Հայտնի է, որ Հայոց եկեղեցու առանձնահատկություններից էր նրա կառուցվածքային սկզբունքը. "Своеобразной особенностью древнеармянской церкви была ее нахаразизация или феодализация, состоявшая, главным оброзом, в том, что устройство церкви сложилось в древней Армении почти всецело под влиянием нахарарско-феодальной организации"[31]: Նմանատիպ կառուցվածք և իրավիճակ է արձանագրվում նաև վրաց եկեղեցու պարագայում[32], ուստի միայն այդ հանգամանքն արդեն նոր հնարավորություններ է հուշում Անաստասի ցուցակը և Հայոց եկեղեցու մի շարք հիմնահարցեր նորովի լուսաբանելու համար:

Ծ ա ն ո թ ա գ ր ու թ յ ու ն ն ե ր

1 Տե՛ս Շ.Ռեքմո, ''Ճաշոց'' գրքի ծագումն ու զարգացումը, «Պատմա-բանասիրական հանդես», 1987, 2, էջ 30-45; **J.Wilkinson**, Egeria's Travels to the Holy Land, rev. ed. (Jerusalem: Warminster: 1981), pp. 253-277.

2 Տե՛ս Շնորհք Եպիսկոպոս, Սալարկում Ս.Յակոբայ տաճարին և պատահական պեղումներ այդ առթիւ, «Սիոն», 1958, 7-8,էջ 194-197, 9-10, էջ 232-238: **Նույնի՝** Նորոգութիւններ Ս.Մինասի մատրան մէջ, նույն տեղում, 1958, 11-12, էջ 289-293: **Նույնի՝** Նորոգութիւններ Ս.Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ, նույն տեղում, 1959, 5-6, էջ 137:

3 Տե՛ս Թուղթ երկրորդ տեառն Աբրահամու՝ հայոց կաթողիկոսի առ Կիւրիոն վրաց կաթողիկոս, «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 176-177, և Պատասխանի, նույն տեղում, էջ 178-179:

4 Գ.Հովսեփյան, Հայ արվեստի ծագումն ու ոսկեդարը, - Գ.Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, Բ, Երևան, 1987, էջ 318-319:

5 Երուսաղեմի հայ վանական շինությունների մասին ակնարկ անգամ չկա Վ.Հարությունյանի «Հայկական ճարտարապետության պատմություն» աշխատության մեջ /Երևան, 1992/:

6 Սկրտիչ եպս. Աղաւնունի, Հայկական հին վանքեր և եկեղեցիներ սուրբ Երկրին մէջ, Երուսաղէմ, 1931, էջ 158-159:

7 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, յորինեց՝ Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Բ, Վենետիկ, 1924, էջ 819: Ձեռագրի նկարագրության մեջ Բ.Սարգիսեանը, Անաստասի բնագրի վերջում եղած գրչի հիշատակարանը վերագրելով իր կողմից նկարագրվող ձեռագրին, գրում է. "Հաւանօրէն այս յիշատակարանս, որ ուրիշ Ձեռագրաց մէջ եւս կը գտնուի - Էնկիւրիի Ս.Գր.Լուսաւորիչ եկեղեցւոյ Ձեռագրին է, եւ անուղղակի կերպով ընդօրինակուած Թումայ գրչէն" (անդ, էջ 830): Այդ վերապահումով հանդերձ Բ.Սարգիսեանը իր կողմից նկարագրվող ձեռագրի երկրորդ մասի գրչության վայրը ևս համարում է Ծմշկածագը (տե՛ս անդ, էջ 818): Հետևելով Բ.Սարգիսեանին՝ Ա.Սանջյանը ևս թիվ 1537 ձեռագրի գրչության վայր է նշում Վանը եւ Ծմշկածագը (տե՛ս Le Muséon, 82, f.3-4, p. 267):

8 «Բազմավէպ», 1882, էջ 23: Ելնելով այն հանգամանքից, որ Ղ.Ինճիճյանն օգտագործել է հենց այդ ձեռագիրը: Ցանկից պակասում են թիվ 1-3, 5-8, 16, 27-30, 36, 45-47 51, 58, 60, 65-67 նշումները (տե՛ս Հ. Ղուկաս ա.վ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական հայաստանեայց աշխարհի, Բ, Վենետիկ, 1835, էջ 199-201): Այս ձեռագիրը նկատի ունենալով՝ Մ.Աղավնունին գրում է.""անց ցուցակներ, ինչպէս Վենետիկի 1624-ի ձեռագիրը, որ չունին ներածական մասը, այլ միայն վանորէից պարզ ցուցակը. այդ պատճառաւ Ներածականը կը նկատուի անվաւեր" (Մ.Աղաւնունի, նշվ. աշխ., էջ ԺԹ):

9 Տե՛ս S.Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, աշխարհաբար թարգմ. Մ.Նշանեանի, Ա, Երուսաղէմ, 1931, էջ 242-247:

10 Ա.Սանջյանը, որ առաջին անգամ խմբավորել է Անաստասի երկի ձեռագրերը, որպես ինքնուրույն միավոր է ներկայացնում նաև S.Սավալանյանցի կողմից վանքի մատենադարանի թիվ 3104 ձեռագրից

(ժողովածու, 1852 թ.) իր «Պատմութիւն Երուսաղէմի» աշխատության մեջ կատարած արտագրությունը (1872 թ.), որ պահվում է նույն մատենադարանում (թիվ 2013):

11 Տե՛ս նաև Le Muséon, 82, f. 3-4, p. 267.

12 Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, բնն. բնագիրը և ներածությունը Վ.Առաքելյանի, Երևան, 1983, էջ 285-286:

13 1289 թ. ձեռագրում՝ Վահրամ: (Տես ՍՄ, ձեռ. 1531, վայր՝ Յովհաննավանք, ստացող՝ Համազասպ եպս., թերթ՝ 378, թուղթ. բովանդ.՝ Մոկրատաց Սքղաստիքոսի Պատմութիւն եկեղեցական, Պատմութիւն Վարդուց Սեդրեատրոսի, Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից:)

14 Տե՛ս **Յոհաննէս վ. Երուսաղէմացի (Հաննա)**, Գիրք պատմութեան սրբոյ եւ մեծի քաղաքիս աստուծոյ Երուսաղէմիս եւ սրբոց տեղիս՝ ուսումնասիրութեամբ տեղեաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Կ.Պոլիս, 1731, Կ.Պոլիս, 1767, Կ.Պոլիս, 1782, Կ.Պոլիս, 1807:

15 Նրա աշխատության մեջ եղած մի վկայությունից, սակայն, կարելի է ենթադրել, թե ինքը ձեռքի տակ ունեցել է Ագաթանգեղոսի մի բնագիր, որը պարունակող ձեռագրում եղել է նաև Անաստասի երկը, և ինքը, օգտվելով Անաստասի մի խաթարված հատվածից, վերագրում է այն Ագաթանգեղոսին (տե՛ս Հաննա, նշվ. աշխ., Կ.Պոլիս, 1782, էջ 164):

16 Ըստ Ե.Մեսրոպեան հաշվարկի, "IV-XVII դդ. Երուսաղեմում կառուցվել են երեսունի չափ վրացական վանքեր ու մենաստաններ: Նրանց մեծ մասը ժամանակի ընթացքում ավերվել է, իսկ ինչ փրկվել է ավերումից, այլևայլ ժամանակներում յուրացրել են հույները, լատինները և հայերը, այնպես որ՝ այժմ նրանցից ոչ մեկն այլևս չի պատկանում վրացիներին» (Ե.Մեսրոպեան, Երուսաղեմի մի շարք վրացական վանքերի թվագրման փորձ, «Վրաց.ԽՍՀ ԳԱ Ձեռագրերի ինստիտուտի Բանբեր», Թբիլիսի, 1962, 4, էջ 225 /վրացերեն/): Հայերի մասին եղած վկայությունների քննությունը տե՛ս Պ.Ա. Չորաքյան, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981, էջ 46-62:

17 Հաննա, նշվ. աշխ., էջ 167, Հետաքրքիր է, եթե Հաննան Անաստասի երկը նկատի չունի, ապա Ագաթանգեղոսի ի՞նչ բնագիր է ունեցել իր ձեռքին:

18 **Ղ.Ինճիճեան**, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Բ, էջ 199, ծան. 1:

19 Տե՛ս Titus Toblers zwei Bucher Topographie von Jerusalem und scinen Umgebungen, Buch I, Berlin 1853, Buch II, Berlin, 1854.

20 Տե՛ս **Ա.Տէր-Յովհաննիսեանց**, Ժամանակագրական պատմութիւն ս. Երուսաղէմի, հհ. 1,2, Երուսաղէմ, 1890:

21 **Հ. Գետնդ վ. Մ.Ալիշան**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 229, ծան.1:

22 Տե՛ս **Արուսեակ Հայ**, Պատմութիւն եկեղեցեաց եւ վանորէից Եգիպտոսի, Վենետիկ, 1895:

23 *"...Յետ զասոնք յիշելու՝ չենք կրնար չյիշել խոր զգացմամբ՝ մեր նախնեաց յիշած եւ յանուանէ նշանական եօթանասունէն աւելի հայոց վանքերը յԵրուսաղէմ եւ ի մերձաւոր տեղիս, զատ յեգիպտականաց, Լուսաւորչի օրերէն մինչեւ ի վերջ Ջ դարու՝ շինուած, բնակուած, նորոգուած եւ աւրուած: Միթէ զուտ ազգային հեղինակ մ'այլ՝ Արուսեակի եւ Շաքուշթի նման չէ՞ր գրած չափաւորապէս (եւ աւելի քան զԱնաստաս վարդապետ մեր յ Է դարու) ասոնց պատմութիւնը, կամ. սիտի ըլլա՞յ մէկ մի, որ հետաքրքնէ ասոնց անհետացեալ տեղուանքը եւ յերեսաց հանէ անակնկալ եւ ոչ իսպառ անյուսալի նշխարքը, արձանագրերն եւ այլ ի՞նչ գիտեմ"* (անդ, էջ 13-14*)*:

24 Տե՛ս "Նոր դար", Թիֆլիս, 1894, 23 հուլիսի, 11 օգոստոսի: **R.Riess**, Reste eines alten armenischen Klosters auf dem Ölberg und diesselbst aufgefundene Inschriften, "Zeitschrift des Deutschen Palästina-Vereins", VIII, Leipzig, 1885, SS. 155-161; **H.Guthe**, Mosaiken mit armenischer Inschrift auf dem Ölberge, "Mitteilungen und Nachrichten des Deutschen Palästina-Vereins", Leipzig, 1895, SS. 51-53; Գ.Հովսեփյան, Հայերեն արձանագրության խճանկար Երուսաղեմի հյուսիսում, - Գ.Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 340-342 (թարգմ. գերմաներենից): Գ.Հովսեփյանը հետագայում, հղելով իր այս աշխատանքը, գրել է. "...այն կարծիքն ենք յայտնել, թէ (Մոզայիկ արձանագրութիւնը Չիթենեաց սարի վերայ) առնուազն Թ-Ժ դարու գիր պէտք է համարել. այժմ ընդունում ենք ոչ ուշ. քան Ջ-Է դարերի" (տե՛ս Գարեգին վ. Յովսէփեան, Գրչութեան արուեստը հին հայոց մէջ, Գ. "Քարտէզ հայ հնագրութեան", Վաղարշապատ, 1913, էջ 5): Տե՛ս նաև **Б.Н.Аракелян**, Армянская мозаика IV-VII вв., "Լրաբեր հասարակական գիտությունների", 1971, 3, էջ 17-25:

25 Տե՛ս Կ.Կեկելիձե, Վրացական հնագույն վանքեր Երուսաղեմի մոտ և նրանց խճանկար արձանագրությունները, «Դրվագներ հին վրաց գրականության պատմության», հ.6, Թբիլիսի, 1960, էջ 74 /վրացերեն/: Գ.Ծերեթելի, Հնագույն վրաց արձանագրություններ Պաղեստինից, Թբիլիսի, 1961 /վրացերեն/:

26 Տե՛ս **Антиох Стратиг**, Пленение Иерусалима персами в 614 г., грузинский текст исследовал, издал, перевел и арабское извлечение приложил Н.Марр, СПб, 1909, с. 25-29.

27 Տե՛ս Մ.Աղաւնունի, նշվ. աշխ.:

28 Մովսես Կաղանկատվացու Պատմության աղբյուրների մասին տե՛ս **А.А.Акопян**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 177-210.

29 Անաստաս վարդապետին Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի (661-667 թթ.) հետ է փորձում նույնացնել Նորայր եպս. Պողարյանը, սակայն՝ միայն անունների նույնության հիման վրա և չբացառելով ծննդավայրի մասին եղած տարբեր ցուցումները (Հերապոլսեցի և Ակոռեցի) (տե՛ս **Նորայր եպս. Պողարյան**, Հայ գրողներ, Ե-ԺԷ դար, Երուսաղէմ, 1971, էջ 80-81):

30 Ուշագրավ է, որ, բացի հայկական վանքերից, Աղվանից վանքեր ևս արձանագրվում են V դարում. "Auch die Armenier traten schon im 5. Jahrhundert als geschlossene Gruppen auf, siedelten z. T. in griechischen Klostern und erbauten sich auch eigene. Drei Kloster sind auch fur die Kaukasischen Albanier bezeugt", (**H.-G.Beck**, Kirche und theologische Literatur im byzantinischen Reich, München, 1959, S. 206). Վրաց վանքերի մասին հեղինակը գրում է, թե "Stark war auch der Zustrom georgischer Pilger im Heiligen Land. Petros der Iberer [†488] hatte sein Kloster zwischen Gaza und Maiuma. Iustinianos I restaurirte dieses kloster sowie das der Lazen in de Wuste Juda. Guch in Jerusalem war ein Iberer Klaster. Aber auch noch im hohen Mitelalter werden georgische Kloster errichtet. Unter den Mamelucken genossen sie besondere Freiheiten" (անդ):

31 **Я.А.Манандян**, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, с. 92.

32 Տե՛ս **Ե.Մեսրոպեան**, Նյութեր Երուսաղեմի վրաց գաղութի պատմության, Թբիլիսի, 1962, էջ 9-11 (վրացերեն):

Համլետ Պետրոսյան

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ «ԽՐԱԽՃԱՆԱԿԱՆՔԸ» ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԽՆԴՈՒՅՔԸ

Դեռևս XIX դ. վերջին Հ.Տաշյանը իր «Յուցակ հայերեն ձեռագրացի» անվանացանկում Անանիա Շիրակացու աշխատությունների շարքում, որպես առանձին ստեղծագործություն, հիշատակում է խրախճանականները՝ գրելով. «Խրախճանականք. վեց ուրիշ բուաբանական առեղծուածք, անտիպ, որչափ ծանօք է»[1]: 1939 թ. Ա.Աբրահամյանը այս վեց առեղծվածները կամ խնդիրները հրատարակեց «Խրախճանականք» վերնագրով՝ համարելով այն Անանիա Շիրակացու թվաբանական դասագրքի վերջին՝ յոթերորդ բաժինը, որը հաջորդում է «Յաղագս հարցման և լուծման» բաժնին, ուր ներկայացված են զուտ թվաբանական խնդիրները[2]: 1944 թ. հրատարակված «Անանիա Շիրակացու մատենագրությունում» Ա.Աբրահամյանը այս վեց խրախճանականներին ավելացրեց ևս երեքը: Ընդ որում, յոթերորդից պահպանվել էին միայն վերջին երկու տողերը, իսկ ութերորդն ու իններորդը, չնայած ձեռագրում տեղադրված են խրախճանականների շարքում, չունեն խրախճանականին բնորոշ առաջաբան և վերջաբան[3]: Այսպիսով, առայժմ կարելի է վստահորեն խոսել միայն վեց խրախճանականների մասին:

Ինքը՝ Շիրակացին, այսպես է բնութագրել դրանք. «Գրեմ ձեզ եւ խրախճանականս, յորժամ ի կերակուրս եւ յընպելիս զուարճանայք եւ կամիք խաւսել բանս զուարճացուցիչս եւ ծիծաղականս»[4]: Փաստորեն այս շարքի «Խրախճանականք» անվանումը պատկանում է Շիրակացուն: Այսպիսով, այս խնդիրների թե՛ շիրակացիական անվանումը և թե՛ դրանց օգտագործման վերաբերյալ նրա տված ցուցումը թույլ են տալիս եզրակացնել, որ խրախճանականները գրվել են՝ հատուկ կերուխումի կամ խնջույքի ժամանակ օգտագործելու նպատակով:

Վեց խրախճանականներից երրորդն ունի բացթողումներ, որի պատճառով նրա թվաբանական մասը հասկանալի չէ, երեքը թվային հաշվարկների վրա հիմնված խաղեր են (ուշագրավ է, որ նման թվային խաղերն այսօր էլ որոշակի տարածում ունեն), իսկ երկուսը «հարցմունքից» չտարբերվող խնդիրներ են, ուղղակի ունեն խրախճանականներին բնորոշ առաջաբան և վերջաբան: Խրախճանականների կառուցվածքին և թեմատիկային ավելի հանգամանորեն ծանոթանալու համար մեջբերենք մեկ «խնդրային» և մեկ «խաղային» խրախճանական:

"*Երկրորդ խրախճանականք*: Ասասջիր ցընկերն քո՝ եթէ երբեմն ի խրախութեան մերում ետես պարսիկ մի պարագայիկ, զգաս մի պարագայից յոյն. աղաղակեաց առ նոսա ասելով. «Տայր ոք ինձ զձեզ, և ձեր չափ այլ, և ի ձեր կիսոյդ չափ այլ, և չորևորիդ չափ, և ես ի ձեզ և մեք հարեւր լինէաք: Արդ գիտեա՝ եթէ յոյն պարագայիկքն քանի լեալ են: Եթէ ի գիտնոց ոք լինի ընկերն քո՝ արագ իմանայ եթէ ԼՉ են: Ապա եթէ ախմարաց ոք իցէ՝ դեգերումն նորա և անգիտութիւն ոչնչիդ քեզ ուրախութիւն լինի»":

"*Վեցերորդ խրախճանականք*: Ասասջիր ցընկերն քո մինչ վաճառես գինի փաս Կ և տաս գինւոյն յերկու դրամս, քանի զգինն Ը ունիս դրամ. և ասիցէ զքեզ՝ թէ ԻԴ դրամ:

Եւ ասասջիր դու ցնա՝ եթէ ես վաճառեմ նոյնպես և չահիմ դրամ մի աւելի քան զքեզ: Եւ արասջիր այսպէս. ասասջիր զԼ միաձեռն երեք փասս դրամ մի և զԼ միաձեռն Բ փասս դրամ մի. լինի նոյնպէս Ե երկու. և դրամ մի աւելի չահելովն ամաւթ առնես յառաջագոյն վաճառուդն և նորա հիացմամբն դու ուրախասցիս"[5]:

Շիրակացին, ինչպես կարելի է տեսնել և մեջբերված օրինակներում, խրախճանականները սկսում է հետևյալ ներածական խոսքերով՝ «Ասասջիր ցընկերն քո ...» կամ «Ասիցես ցընկերն քո ...», այսինքն՝ հարցն ուղղվում է մեկին, և, ինչպես ցուցում են նաև վերջաբանները, որոնց կծանոթանանք ստորև, պատասխանն էլ սպասվում է մեկից: Այսպիսով՝ խոսքային մրցությունը տեղի է ունենում երկու հոգու միջև: Շիրակացին մրցակցին անվանում է «ընկեր». հաշվի առնելով մրցության խնջույքային միջավայրը՝ ավելի քան հավանական է, որ բառը տվյալ դեպքում օգտագործվում է իր նախնական՝ «միասին ուտող, հացակից, ճաշակից» իմաստով[6]: Խրախճանականների վերջաբանները պատկերում են այն բերկրանքը, որ պիտի ստանա հարց տվողը մրցակցի պարտության դեպքում. «Ապա եթէ յախմարաց ոք իցէ (մրցակիցը՝ Հ.Պ.)՝ դեգերումն նորա և անգիտութիւն ոչնչիդ քեզ ուրախութիւն լինի», «եթէ տգէտ ոք իցէ՝ նորա դեգերումն թուովքն զքեզ ուրախ առնէ», «...նորա հիացմամբն դու ուրախասցիս»[7]: Այսպիսով, խրախճանականները, ի տարբերություն «Հարցմունքի», ուղեկցվում են հատուկ հրահանգ-խորհուրդներով՝ երբ, որտեղ և ինչպես դրանք օգտագործել, ինչպիսի պահվածք ընդունել և այլն՝ հնարավորություն ընձեռելով որոշակի պատկերացում կազմել և բուն խնջույքի ընդհանուր մթնոլորտի մասին: Բնութագրական է, որ խրախճանականներից երեքի զուտ թվաբանական մասն էլ կազմված է խնջույքի և գինու թեմայով. «Ասասջիր ցընկերն քո՝ թէ կարող եմ գիտել յորում ժամու դու կամիցիս ուտել ճաշ եւ քանի ըմպել գինի ...» (Առաջին խրախճանական), «Ասասջիր ցընկերն քո՝ եթէ երբեմն ի խրախութեան մերում ետես պարսիկ մի պարագայիկ» (Երկրորդ խրախճանական), «Ասասջիր ցընկերն քո՝ մինչ վաճառես գինի փաս Կ ...» (Վեցերորդ խրախճանական):

Նկատենք, որ այս ամենով հանդերձ՝ խրախճանականների բուն ատաղձը միայն և միայն թվաբանական է, չկան հանելուկային-այլաբանական կամ ձևական-տրամաբանական առաջադրանքներ, իսկ խրախճանականներից երկուսն էլ (երկրորդ, հինգերորդ) իրենց բարդությամբ չեն զիջում Շիրակացու «Հարցմունքին». դրանք պիտի որ լուրջ դժվարություններ հարուցեին նույնիսկ զգոն վիճակում լուծել փորձելու դեպքում: Այնպես որ, հակառակ Շիրակացու հավաստիացման, դրանք ամենևին էլ ծիծաղելի չեն, և միայն հայտնի բողոքության դեպքում կարելի է համարել զվարճալի: Դրա փոխարեն կարելի է փաստել, որ Շիրակացին փորձել է իր խնդիրներին «խնջույքային» արտաքին հաղորդել՝ ընդգրկելով ինչպես գինու և գինարբուքի հետ կապվող թեմաներ, այնպես էլ լրացնելով դրանք խնջույքին պատշաճող առաջաբանով ու վերջաբանով: Այսպիսով, ավելի քան հավանական է, որ մենք գործ ունենք թվաբանական խնդիրների և գիտելիքների մասսայականացման մի ուշագրավ ձեռնարկման հետ:

Ընդհանրապես միջնադարի հայ միտքը մեկ անգամ չէ, որ մշակութային-հոգևոր-բարոյական գաղափարների տարածման համար լայնորեն օգտագործել է ժողովրդական աշխարհընկալման, սովորույթների և ծեսերի զանազան կողմերը: Կոնկրետ խնդրո առարկա թեմայի հետ կապված նշենք, որ Մխիթար Գոշը, ձեռնարկելով առակների գրքի կազմումը և հաշվի առնելով ժողովրդական առակների նկատմամբ հոգևորականության անբարեհաճ վերաբերմունքը, այսպես է պատճառաբանում իր ձեռնարկումը. «...Թէպէտ անըմբռն ասացեալքդ կարծի, սակայն թանձրամտաց առաւել ախորժելի երևին, որոյ աղագաւ զսակաւ յօժարեցաք գրել»[8]: Անանիա Շիրակացու՝ իր ժամանակ բարդ համարվող թվաբանական խնդիրները մասսայականացնելու նպատակով դրանց պատմողական ատաղձը հայ կյանքից և առօրյայից վերցնելու այս

առանձնահատուկ տաղանդը գերազանց կերպով բնութագրել է Հ.Օրբելին: Հիմք ունենալով Շիրակացու «Հարցմունքը» («Խրախճանականքը» Հ.Օրբելուն ծանոթ չէր), գիտնականը գրում է. «Անանիայի խնդիրները զբաղեցնող են, կենսալից, պարզ: Խնդիրների թեմաները մեծամասամբ վերցված են Անանիային շրջապատող կենցաղից, գործողության վայրը նրա հայրենի Շիրակն է և նրան հարևան վայրերը, գործող անձինք, եթե կոչվում են անուններով, տեղական իշխաններն են՝ Կամսարականները, այդ թվում և Անանիային ժամանակակից Ներսեհը»[9]:

Ինքը՝ Շիրակացին, այսպես է բնութագրում թվաբանությունը. «Գանձ ծածկեալ էիր յերկրիս Հայոց և ակն թագուցեալ ի տանս Թորգոմայ, զի մայր ես ամենայն իմաստութեանց և թուոց և աղբիւր ամենայն արուեստից»[10]: Իսկ թվաբանական դասագրքի վերջաբանն ավարտում է հետևյալ նախադասությամբ. «Եւ դուք, քաջ աշակերտք, հայեցէք և զարմացարուք»[11]: Այսպիսով, թե՝ «Հարցմունքին» և թե՝ «Խրախճանականքի» դեպքում Շիրակացուն մեծապես հուզել է այդ «ծածկեալ գանձի» և «թագուցեալ ակի» բերելն ու տարածելը, ինչպես ինքն է նույն վերջաբանում բնորոշում, «յերկիրս Հայոց եւ Քրստոսասէր վիճակն սրբոյն Գրիգորի»[12]:



Խնջույք, տապանաքար, 1605 թ., Արենի

Բարեբախտաբար, միջնադարյան խնջույքի ժամանակ ընթացող խոսքային մրցության մասին Շիրակացու խրախճանականներից բխող եզրակացությունը կարելի է ամրապնդել նաև ուղղակի վկայություններով: Անանիա Շիրակացու նման, բայց ավելի ընդարձակ մի ձեռնարկում էլ XII դ. իրականացրեց Ներսես Շնորհալին՝ ստեղծելով իր հանելուկների հայտնի ժողովածուն: Կիրակոս Գանձակեցին այդ մասին հետևյալն է գրում. «...արար և առակս խորհրդաբարս ի գրոց, և հանելուկս, զի փոխանակ առասպելեաց՝ զայն ասասցեն ի գինարբուս և ի հարսանիս»[13], այսինքն՝ Շնորհալին գրել է Սուրբ գրքի թեմաներով խորհրդավոր առակներ և հանելուկներ, որպեսզի դրանք փոխարինեն գինարբուքների և հարսանիքների ժամանակ պատմվող առասպելներին: Ի՞նչ հիմքի վրա կարող էին իրար փոխարինել «խորհրդաբար առակը», «հանելուկը» և «առասպելը»: Գանձակեցին իզուր չէ այս հատվածում առակի հետ օգտագործում «խորհրդաբար» մակդիրը. սա նշանակում է, որ առակն էլ հանելուկի նման ենթադրում է պատասխան, որը տվյալ դեպքում նրա մեկնաբանությունն է կամ

բարոյախոսությունը: Այս առումով Գոշի կատարած գործի ամենահիմնական նպատակը նույնական է Շնորհալու նպատակի հետ, քանի որ Գոշը ժողովրդական առակները պսակել է քրիստոնեական բարոյականությունից բխող պատասխան-մեկնաբանություններով: Ահա միայն այս հիմքի վրա հանելուկն ու առակը կարող են փոխարինել իրար: Նշանակում է՝ առասպելն էլ հայտնի չափով կարող էր ենթադրել պատասխան-մեկնություն, այլապես նա չէր կարող փոխարինվել հանելուկով կամ «խորհրդաբար» առակով[14]:

Ահա վերծանրային այս հատկանիշով է, որ թվաբանական խնդիրը կարող է միավորվել առակի, հանելուկի և առասպելի հետ:

Ընդհանրապես նկատենք, որ դա միջնադարյան խնջույքի ժամանակ տեղի ունեցող մրցության միակ ձևը չէր: Դա հատկապես հստակ կարելի է ցուցել արքայական խնջույքի քննությամբ, որի արարողակարգի վերականգնման պատիվը պատկանում է Վ.Հացունուն[15]: Այն բաղկացած էր երկու հիմնական մասից՝ հացկերույթ և գինարբուք: Եթե առաջինին բնորոշ էր հստակ հիերարխիան, ապա երկրորդին՝ ընդհակառակը, հիերարխիայի բանդումը, փոխատեղումները և մրցակցությունը: Արքայական խնջույքին մասնակցում էին միայն հրավիրյալները: Նրան մասնակցելու համար պետք էր հագնվել ոչ միայն տոնական ու շքեղ, այլև հատուկ հագուստ ու զարդ-նշաններ, որոնց հիմնական մասը արքայի ընծրածն էր: Հատուկ նշան-պատիվները ցուցում էին դրանք կրողի տեղը արքայական սեղանի շուրջ և դրանով իսկ՝ նրա տեղը հասարակական հիերարխիայում: Այդ սեղանը հասարակության հիերարխիկ կառույցի սիմվոլն էր և նրա արտահայտման կատարյալ ձևը: Հայոց «Գահնամակը», որ բառացիորեն նշանակում է գահերի մասին թուղթ կամ հրովարտակ և սահմանում էր արքայական սեղանի շուրջ բազմելու հերթականությունը, իր հիմքում նախ և առաջ ունի այս համընդհանուր պատկերացումը: Նկատենք, որ միջնադարյան նմանատիպ երկրորդ փաստաթուղթը կոչվում էր «Զորանամակ», որը նույն հիերարխիան սահմանում էր՝ ըստ զինուժի: Այլ կերպ կարելի է ասել, որ խնջույքը և կռիվը ընկալվում էին որպես լինելիության գերագույն ձևեր և դրանով իսկ հիերարխիկ հասարակություններում ձեռք էին բերում հիերարխիկ բացարձակ սիմվոլների արժեք: Խնջույքն ու կռիվը հաջորդում են իրար թե՛ ռեալ կյանքում, թե՛ ծեսում և թե՛ առասպելապոետիկ մտածողության մեջ: Նույնիսկ տապանաքարային



Խնջույք, տապանաքար, Մեծ Մասրիկ, 1685 թ.

պատկերաքանդակում հանգուցյալը պատկերվում է երկու հիմնական կերպավորումով՝ խնջույքի սեղանի շուրջ նստած՝ ձեռքին գինու թասը, կամ էլ՝ սպառազինված ռազմիկ-որսորդ[16]: Այսինքն՝ լինելության այս երկու գերագույն ձևերն ընկալվում և արտապատկերվում էին որպես մահը հաղթահարելու երկու գերագույն ձևեր: Առաջին դեպքում մահվան հաղթահարումը տեղի էր ունենում «սրբազան» կամ «աստվածային հեղուկի» ընկղմամբ, որի դերում հանդես էր գալիս գինին, իսկ երկրորդ դեպքում՝ ուղղակի մահվանը սպանելու միջոցով՝ ի դեմս նրա զանազան անձնավորումների:

Արքայական խնջույքում, ինչպես նշեցինք, գինարբուքի ծեսը սկզբունքորեն առանձնանում էր «հացկերույթից»: Ճաշկերույթն ավարտվելուց հետո սեղանը ազատվում էր ճաշի սպասքից և լայնաբերան կարասներով, որոնց ընդհանրական անունը «թակոյկ» էր, ներս էր բերվում գինին[17]: Սկզբում թակույկից գինի էր լցվում մի մեծ գավաթի մեջ (որը սովորաբար կոչվում էր *ճկագ*) և հանձնվում արքային: Այս առաջին գավաթը կոչվում էր «նուագ ուրախութեան»: Նրանից սկզբում ըմպում էր արքան, ապա, ըստ «գահի և պատվի», մատուցվում էր սեղանակիցներին[18]: Այս ծեսում փաստորեն արքան ստանձնում էր քուրմ-աստծո դերը. նրա բաժակն ընկալվում էր որպես «կենաց բաժակ», գինին՝ «կենաց հեղուկ», և խոսքը՝ «կենաց խոսք»: Սրանով ողջ գինարբուքը ստանում էր «կենաց հեղուկի» միջոցով մահը հաղթահարելու իմաստ: Դրանից հետո ամեն մեկը վերցնում էր իր գավաթը, խնջույքն աստիճանաբար կորցնում էր իր պաշտոնական հիերարխիան, ամեն մեկն աշխատում էր շատ խմել և հարբել: Ներս էին մտնում գուսանները, ծաղրածու-խեղկատակները, ըմբշամարտիկները և վարձակները:

Խնջույքի ամեն մի մասնակից ոչ միայն իրեն հանձնում է «կենաց հեղուկին», այլև գտնում է իր «ախոյանին»: Իրար հետ մրցում են արքան և ծաղրածուն, գուսանները, ըմբշամարտիկները, մասնակիցները: Այսպիսով, միջնադարյան խնջույքում մենք կարող ենք տեսնել մահը հաղթահարելու երկու հիմնարար, ըստ էության խիստ ավանդական պատկերացումների համադրությունը և դրանով իսկ հասկանալ խնջույքում մրցակցության թեմայի պարտադիր առկայությունը:

Շատ ավելի ուշագրավ է թվում հենց խոսքային մրցակցության հայտնի գերակայությունը: Կարելի է ենթադրել, որ «կենաց հեղուկը» նաև հատուկ, այլաբերական լեզվին տիրապետելու միջոց էր: Այս առումով խիստ հատկանշական է թվում գուսանների և, ընդհանրապես, առասպելական-այլաբերական լեզվին կատարելապես տիրապետողներին Մովսես Խորենացու տված բնորոշումը, որն ակնհայտորեն բաղածայնություններ

Հակոբ Քյոսեյան

ՆՈՐԱՀԱՅՏ ՆՇԽԱՐՆԵՐ ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Մեկ անգամ չէ, որ խոսվել է խմբագիր մեկնությունների աղբյուրագիտական, բնագրագիտական կարևորության մասին: Շատ հաճախ այդօրինակ մեկնություններին ներհյուսված տարաբնույթ բնագրային հատվածները ներկայացնում են այս կամ այն կորած երկասիրության առանձին դրվագներ, որոնց քննությունն ու հրապարակումն օգնում է գոնե արձանագրել այդ գործի երբեմնի գոյությունը կամ էլ ընդհանուր պատկերացում կազմել տվյալ գործի բովանդակության մասին, իսկ երբեմն էլ վերականգնելով սրբագրել խնդրո առարկա գործի ամբողջական բնագրի աղավաղված տեղերը: Այս տեսակետից հատկապես բնութագրական է Եղիշեի Արարածոց մեկնության պարագան: Վարդան Արևելցու Արարածոց խմբագիր մեկնության մեջ ներառված Եղիշեի այս երկասիրության հատվածների՝ Լ.Խաչիկյանի բանասիրական հմտանից քննությամբ իրականացրած հրապարակումը նշանակալից չափով օգնեց հետազոտողներին առավել համակողմանի պատկերացում ունենալ Եղիշեի աստվածաբանական ժառանգության մասին: Թվում է՝ այս ուղղությամբ կատարվող ամեն մի նոր, թեկուզ համեստ, քայլ կարող է իր ոչ անկարևոր նպաստը բերել որևէ հեղինակի մատենագրական վաստակի առավել իրատես գնահատման գործին: Պարագան այսպիսին է Ստեփանոս Սյունեցու († 735) մատենագրական ժառանգության դեպքում նմանապես: Բացի այդ հեղինակի Արարածոց, Յոբի, Դանիելի, Եզեկիելի մեկնության հատվածներից, այսօր հայտնի է նաև նրա Քառավետարանի խմբագիր մեկնությունը[1]: Ելնելով այն իրողությունից, որ XII դ. հեղինակ Սարգիս Կունդի Ղուկասու Ավետարանի խմբագիր մեկնության մեջ օգտագործվել է Սյունեցու Ղուկասու մեկնության ընդարձակ տարբերակը, որ մեզ չի հասել[2], կարելի է ենթադրել, թե գոյություն են ունեցել մյուս ավետարանների ընդարձակ մեկնությունները նմանապես, որոնք, ընկալյալ սովորության համաձայն, ուսումնական նպատակներով հեղինակը համառոտել–խմբագրել է: Եվ, իրոք, փաստերը վկայում են, որ Ստեփանոս Սյունեցին հեղինակել է նաև Մատթեոսի Ավետարանի մի ընդարձակ մեկնություն, որի առանձին մասերը հյուրընկալվելով զետեղվել են առանձին ժողովածուների մեջ: Այդ են հաստատում Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2042, 2039 ձեռագրերը, որոնք Տոնապատճառ ժողովածուներ են: Մատթեոսի Ավետարանի մեկնության առանձին հատվածներ, դուրս բերվելով նրա, ինչպես երևում է, ընդարձակ բնագրից, որպես նյութին առավել պատշաճող բացատրություններ, ներմուծվել են Տոնապատճառի մեջ: Եվ քանի որ այդ հատվածները պարունակող հիշյալ ձեռագիր Տոնապատճառները ներկայացուցիչներն են X-XI դդ. մեծանուն մատենագիր Սամվել Կամրջաձորեցու կազմած համաբնույթ ժողովածուի[3], ուստի պետք է ենթադրել, որ այդ հատվածները, քաղվելով ամբողջական բնագրից, ժողովածու են ներմուծվել X-XI դդ.: Այս հիմամբ մտածելու է, որ Ստեփանոս Սյունեցու Մատթեի մեկնությունը թերևս ամբողջական ծավալով շրջանառության մեջ է եղել մինչև X-XI դդ.: Խնդրո առարկա երկասիրության հատվածները ներհյուսվել են Պայծառակերպման և Համբարձման տոների խորհուրդը բացատրող Տոնապատճառի համապատասխան մասերում: Պայծառակերպման խորհուրդը մեկնաբանվում է «Պատճառ Վարդավառի տօնին» (2042, թ. 265բ-270ա, 2039, թ. 249բ-260բ), իսկ Համբարձման խորհուրդը՝ «Յաղագս որ յետ Յարութեան տաւեմք զՀիսուս աւր զնոյն առանց պահոց եւ ծուռ դնելոյ կատարեմք հանդերձ չորք Աւետարանչաւք» (2042, թ. 224բ-233բ, 2039, թ. 211բ-215բ) խորագրերի ներքո զետեղված բնագրերում: Ստեփանոսյան հատվածները փոխներհյուսված են լուսանցներում նշված համառոտագիր անուններով (Պղ=Պողոս, Եփ=Եփրեմ, Կր=Կիւրեղ, Ոսկ., Ոկ=Ոսկեբերան, Մու, Մուսես=Մովսես, Ջաք=Ջաքարիա) ներկայացող հեղինակների զանազան երկերից բանաքաղված հատվածների մեջ՝ Ստ., Ստեփ. համառոտագրությամբ: Համեմատությունը պարզում է, որ երկու ձեռագրերում «Ստեփ[անոս]» անվան տակ զետեղված հատվածները միշտ չէ, որ ծավալով և հեղինակային պատկանելությամբ համապատասխանում են իրար: Այսպես. եթե թիվ 2042 ձեռագրում Մատթ. ԻԸ 20 մեկնությունը բովանդակող ընդարձակ հատվածի համար իբրև հեղինակ նշված է միայն «Ստեփանոս»-ը (թ. 230ա), ապա թիվ 2039 ձեռագրում այդ նույն հատվածի «Կառաւարեալ ամպով ելանէ ընդ աւդս վերինս ընդ հաստատութիւն աւդոյդ, որ երկինք կոչեն... Մարդակերպ այր ի ներքուստ տեսանեմք, ոչ կարեմք իմանալ զիրս գործոյդ» մասի (թ. 213ա) համար արձանագրված է «Ջաք[արիա]» անունը: Քննությունը պարզում է, որ «Ջաքարիա» անվամբ արձանագրված հատվածը խմբագրումն է Ջաքարիա Ջագեցի Կաթողիկոսի (855-877) «Ի Մեծի աւուր Համբարձման» ճառի համապատասխան մասի[4]: Դարձյալ թիվ 2042 ձեռագրում «Ստեփանոս» անվամբ ներկայացված մի շարք հատվածների առանձին մասեր թիվ 2039 ձեռագրում կրում են «Ջաքարիա» անունը: Եվ իրապես. այդ հատվածները («Ետուն պատասխանի եւ ասեն. Ո՞վ է Սա թագաւոր փառաց... ի կերպարանս ծառայի հիացեալ հարցանէին. Ո՞վ է Սա թագաւոր փառաց»[5], «Ետուն պատասխանի յառաջ-ընթացքն Տեառն... որ զդժոխոց զբռնութիւն ելոյծ»[6], «Եւ հրճուեցան առաջին դասքն, որ են հրեշտակք... հրեշտակապետացն: Եւ անդ երկրպագեալ փառաւորեցան ի նոցանէ... եղից զթշնամիս Քո ի ներքոյ ոտից Քոց»[7], «Եւ Հայր ասէ ցՈրդի Ընդ Քեզ է Իմ սկիզբն... փառաբանչաց անուն Իւրոց փառս եւ պսակս, որպէս ի մարգարէութեան ժամանակին»[8] [2042, թ. 232ա-233ա, 2039, թ. 214բ-215բ]) ոչ այլ բան են, քան խմբագրումն ու մասամբ էլ նույնական հառաջաբերությունը Ջաքարիա Ջագեցու հիշյալ ճառի համապատասխան մասերի: Հեղինակային պատկանելության ճշտման կարոտ է նաև թիվ 2042 ձեռագրում Ստեփանոսի անվամբ ներկայացող բնագրային հատվածը, որի «Վասն է՞ր կարմիր են ձորձք քո եւ հանդերձ քո որպէս հնձանահարի կոխելոյ» (Եսայի ԿԳ 2) ... որում Տէր պատասխանի առնէ նոցա» (291 բ) մասը թիվ 2039 ձեռագրում կրում է «Ոսկ[երերան]» անունը (214ա): Այդ մասը սակայն չի համապատասխանում Ս. Հովհան Ոսկեբերանի՝ Եսայա մեկնության այդ տեղի բացատրությունը[9]: Այն բացակայում է նաև Ոսկեբերանի Մատթեի մեկնության պահպանված ենթադրվող մասում[10]: Այս հիման վրա, խիստ վերապահությամբ, տվյալ հատվածը համարում ենք մասը Ստեփանոս Սյունեցու մեկնության (տե՛ս հատված ԺԴ): Այլ է թիվ 2039 ձեռագրում Ստեփանոսի (265բ), իսկ թիվ 2042 ձեռագրում (254բ) Պողոսի անունով ներկայացող ներքոբերյալ հատվածի հեղինակային պատկանելության պարագան. «Առեալ զնորոյս կտակիս պաշտաւնեայսն եհան ի լեառն եւ ետ գաւրէնս գրել է սիրտս նոցա ըստ մարգարէին. «Տայց գաւրէնս իմ ի միտս նոցա եւ ի սիրտս նոցա գրեցից զնոսա» (Երեմիա ԼԱ 33), զի աւանդեսցեն եկեղեցւոյ, զոր լուանն ի Հաւրէ եւ տեսին, զի լուիցէ Պետրոս ականջաւքն, զոր խաւսեցաւ լեզուն, տեսցէ աչաւքն, որում հաւատայր սրտին: «Եհան ի լեառն»՝ հաստատել զվեմն, զոր Հայր եդ ի հիմն նոր Սիովնի զծայր անկեանն, զի դիցէ Որդին Աստուծոյ զվէմն ի վերայ գլխոյ նորա, յորոյ վերայ եւթն աչք են, ըստ մար-

գարէութեան Զաքարիայ (Գ 9) զեւթնարփեան շնորհս նշանակելով զՀոգւոյն Սրբոյ, զի մի ոք կարասցէ քակել զհիմն քաղաքին, որ յերկինս եդաւ սկիզբն: Եւ Յովհաննէս տեսեալ վկայեսցէ, թէ՝ «Տեսաք զփառս Նորա իբր Որդւոյ Աստուծոյ» (Յովհ. Ա 14): Եւ վկայեսցէ Յակովբոս արեամբ իւրով: Երեք սիւնք եկեղեցւոյ, յորոյ վերայ հանգչի Սուրբ Երրորդութիւն եւ հաստատեսցի վկայութիւն յերից քան զմիոյն միւսի: Ընդ երիսն զբոլոր հաւատացեալքս ժողովել ի վերին Երուսաղէմ: Ընդ երիսն զամենայն արժանիսն եհան ի լեառն, զի մի մարմին եմք ամենեքին ի Քրիստոս»: Ելնելով շարադրանքի ընդհատ բնույթից՝ «...զիրաշալի փառսն տեսանել զՔրիստոսի (Ստեփաննոս): Առեալ զնորոյ կտակիս պաշտաւնեայս...» (Պողոս), ինչպես նաև՝ մեկնաբանական ուրույն մոտեցման փաստից՝ թիվ 2042 ձեռագրի լուսանցային նշումը համարում ենք հավաստի և այսու՝ վավերական: Պետք է ենթադրել, որ այս Պողոսը այն Պողոս վարդապետն է, որ թիվ 2039 ձեռագրում Սամվել Կամրջաձորեցու հետ հիշատակվում է իբրև հեղինակ «Վերլուծութիւն ընթերցուածոյ գրոց» (41ա):

Բնագրային պատկերը պարզ դարձնելու նպատակով նորահայտ հատվածների հետ նույնացող Ստեփաննոս Սյունեցու Քառավետարանի համառոտ խմբագիր մեկնության մասերը բերում ենք տողատակում (= Սյունեցի):

* * *

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ա

Զի Պետրոս եւ Յակոբոս եւ Յոհաննէս առաւել առհամարհեցին զաշխարհս, վասն այսորիկ ընդ Քրիստոսի արժանի եղեն ելանել ի լեռն եւ զիրաշալի փառսն տեսանել զՔրիստոսի[11]:

Թիվ 2042 (= A), թ. 265բ:

Թիվ 2039 (= B), թ. 249բ:

Բ

Արդ, փառաւորեցան երեսք Նորա ի լերինն անդ: Տե՛ս դու, թէպէտ փառք երեսացն Մովսիսի ձեւացաւ իբրեւ զԱդամայն ի դրախտին, զի մեղքն թագաւորեալ էին յԱդամայ մինչեւ աւրէ՛քն էթարձ թագաւորութիւն նորայ եւ դատապարտեաց իբրեւ զծառայ, զի ասաց Տէր. «Ես եմ թագաւոր եւ Աստուած Աբրահամու»: Վասն այսորիկ գրեալ է. «թագաւորեաց մահ յԱդամայ մինչեւ ցՄովսէս»[12]: Նա եւ առաքեալքն ոչ էին կատարեալք իբր արդեն իսկ ակն ունէին հաստուցանել նոցա, իբր թէ թագաւորեսցէ յԵրուսաղէմ նման Դաւթի եւ Եզեկիայ եւ Յովսիայ, վասն որոյ եւ ասէին. Տէր թէ ի ժամանակի աստ յայսմիկ հաստուցանես զարքայութիւն Քո Իսրայէլի: Եւ Տէր ասէ. «Վասն [աւուրն այնորիկ եւ ժամու] ոչ Որդի գիտէ, բայց Հայր միայն»[13]: Եւ կարծէին նմա անգիտութեան: Եւ Պետրոս. «Քաւ Քեզ, Տէր, ի խաչ ելանել»[14]. զի ոչ գիտէին զգիրս, թէ պարտ [է] Նմա ի մեռելոց յառնել: Արդ, կամեցան առաքեալքն ուսանել, թէ որպէս գալոց է Նայ կամ որպէս փառաւորի ի միւս անգամ[15] գալստեանն. Եւ առեալ տարաւ զնոսա ի լեռն Թափոր եւ եղեւ այլակերպ որպէս զարեգակն[16], եւ աշակերտքն թալացան ի լուսոյն սաստկութեանցն եւ յահէն: Եւ Քրիստոս ասաց[17]. Այսպէս գալոց եմ:

A թ. 265բ-266ա:

B թ . 254բ:

Գ

Զաստուածահրաշ երեւումն եւ զաստուածային փառսն ցուցանէ, զի ծանիցեն, զի Աստուած ի վեր է, քան զչարչարանս: Այլ կամաւ յանձն առնու վասն արարածոց փրկութեան, զի նոքա յաւժարեսցին կրել զչարչարանս վասն անձանց իւրեանց կենդանութեան:

A չիք:

B թ. 254բ:

Դ

[«Հանդերձ նորա սպիտակ իբրեւ զլոյս»][18]. Հանդերձն նշանակէ զաւետարանական եւ առաքելական գիրս, աստուածաբանի մեկնութեամբ միտք նոցա լուսազարդ բանիւք[19]:

A թ. 267ա:

B թ. 255բ:

Ե

Իսկ Մովսէս ցանկացաւ տեսանել զԱստուած, եւ ոչ էր ժամանակ անժամանակին, բայց Մովսէս փափագմանէ հաս զԱստուած էութեամբ ի մարմնի միացեալ էտես, որպէս արեգական ճառագայթն բոլորակովն ընդ անաւսր աւդս ցնցուղ տայ ի մէջաւրէի կամ ընդ յատակ ջուր աղբեր բոլորակն արեգականն փայլեալ լուսովն տեսանի: Այսպէս հրեշտակք եւ մարգարէք եւ առաքեալք եւ ամենայն սուրբք զԱստուած միացեալ ի մարմնի տեսին: Եւ Եղիայ նախանձեցաւ զնախանձ Տեառն, եւ յայրին Քորեբ ցանկացաւ տեսանել զԱստուած, եւ անց առաջի Նորա հուր եւ հողմ սաստիկ եւ շարժումն: Եւ ոչ ի նոսա Տէր, որ զաստկութիւն աւրինացն նշանակէր, եւ ապա աւդ քաղցր եւ Տէր ի նմայ՝ մարդեղութեան ժամանակս, որ հեզութեան ցուցանէր, զոր էտես Եղիայ[20]: Եւ լցաւ ցանկութիւն նորա:

A թ. 268ա:

B թ. 256ա:

Զ

Սղերս արկանէին մարգարէքն առաջի Տեառն՝ կատարել յԵրուսաղէմ զփրկութիւն աշխարհի, քանզի լցանք բանք մարգարէիցն ի մարդեղութեան Քո: Արդ, կատարեսցի փրկութիւն մարդկան ի մահու Քո: Արդ, տես՝ զիարդ Մովսէս քահանայութեամբն եւ Եղիայ աւրինաւքն եւ մարգարէաւքն, քանզի երկոքեանն[21] ի դէմս մարգարէիցն եւ առաքելոցն խաւսէին ընդ միմեանս վասն ելիցն, զոր հանդերձեալ էր կատարել յԵրուսաղէմ[22]: Եւ զի՞նչ էին ելքն. յայտ[23] է, թէ տնաւրէնութեան վախճանն՝ Խաչն, մահն, ի մեռելոց յառնելն[24], յերկինս ի վեր[25] ելանելն: Վասն զի զայսոսիկ կանխաւ տպաւորէին աւրինացն ստուերաւքն պայծառ եւ մեծ մարգարէիցն սրբոցն պարք:

A թ. 268 բ:

B թ. 256բ-257ա:

Է

Թէ որպէս ծանեան առաքեալքն զմարգարէսն՝ մարգարէական հոգովն իմացան, զոր յարութեան ամենայն սուրբքն առնուն զայսպիսի շնորհս, որով ճանաչեն վերջինքն զառաջինսն:

A թ. 269բ:

B թ. 257բ:

Ը

Որպէս ձեղուն արքունական կամ ծի թագաւորական անդ եւ թագաւորն իմանի, նոյնպէս եւ ամպն[26]:

A թ. 270ա:

B թ. 258ա:

Թ

Քանզի լուսաւորի եւ հանգչի, որ գայ յԱւետարանաւս ի Հոգւոյն Սրբոյ աւրէնսն եւ ի մարգարէսն, զի ամպն, որպէս թուի ինձ, Հոգին Սուրբ է: Եւ զի համբառնալն առ

Հայր լուսափայլ ամպովն վերանայր, զի ցուցցէ, թէ ի միւս անգամ գալստեանն նոյնպէս յայտնի եւ առաքելոցն եւ մարգարէիցն: Ընդ ամպովն լինելն նշանակէ զամենայն սուրբսն եւ զարդարսն ամպաւք վերանալ ընդ առաջ Քրիստոսի, եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինել:

A չիք:
B թ. 258բ:

Ժ

Եսայի ասէ. «Յաւուրս յետինս յայտնի լեառն Տեառն Աստուծոյ»[27] եւ այլն: Զի ի Սինեայ[28] ետ աւրէնս եւ բնակեցոյց յԵրուսաղէմ, այսաւր ի լեառն Զիթենեաց տայ զաւետարանն յառաքեալսն՝ փչելով ի նոսա Հոգի Սուրբ՝ բանալով զմիտս նոցա՝ իմանալ զմիտս ծածուկ գրոց, աւետարանել ընդ ոլորտս երկրի եւ կոչել ի վերինն Երուսաղէմ: Այսաւր ամենայն ազգք հաւատացելոց յայս սուրբ լեառն ժողովեալ երկիր պագանեն մեծի մարմնացելոյն Աստուծոյ, որ նստի ի բերրեբս, սուրբ լեառն եւ ճշմարիտ տուն Աստուծոյ բարձրացեալ փառաւք՝ ոչ պէտս ունելով լուսափայլ ամպոյն, այլ ի պատիւ Տեառն, որ զաստուածային հրաշալի փառսն բացայայտէր[29]:

A թ. 228բ:
B թ. 211բ:

ԺԱ

«Եւ ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի»[30]. Եւ եղեւ ընդ առաքեալսն մինչեւ ի կատարած աշխարհի, զի արդեն վախճանեցան ամենեքեան: Առ այս ասելի է, թէ ոչ զանձինս առաքելոյն միայն ասացաւ, այլ ամենայն քրիստոնեայս աշակերտեալս նոցա[31]: Վկայէ Պաւղոս, թէ Ջփորձ ինչ խնդրէք գՔրիստոսէ, որ ինեւս ընդ ձեզ խաւսի բնակեալ ի սիրտս մեր արմատացեալ եւ հաստատեալ[32], որ երեւեցաւ նմա ի ճանապարհին Դամասկիայ եւ ի տաճարին յԵրուսաղէմ, յորժամ կայր յաղաւթս՝ ասելով նմա. Առ հեթանոսս հեռաւորս առաքեցից զքեզ եւ ի Կորնթոս ժողովուրդ բազում է ինձ ի քաղաքիս յայսմիկ, եւ «որպէս վկայեցեր վասն իմ յԵրուսաղէմ, պարտ է քեզ եւ ի Հռոմ վկայել»[33]: Թուի թէ երեւէր նոցա ըստ հանապազ նմանութեան, որպէս էտես Ստեփաննոս ընդ աջմէ Հաւր եւ կամ զՊաւղոս յափշտակեալ, զի այսպէս ունէին յոյս վստահացեալ ի Քրիստոս, որ անարգեցաւ ի քահանայիցն՝ զՆա աչաւք տեսին վերացեալ յերկինս: Վասն այսորիկ բարձաւ ի նոցանէ ամենայն տրտմական իրք, որ ասաց յառաջ քան զԽաչն. «Դուք տրտմեսջիք եւ աշխարհս խնդասցէ, այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի եւ տեսանիցէք զԻս եւ ուրախ լինիջիք, եւ զուրախութիւն ձեր ոչ ոք հանիցէ ի ձենջ»[34]:

A թ. 230աբ:
B թ. 213ա:

ԺԲ

Քանզի Քրիստոս վերանայր յերկինս աստուածային եւ մերոյին բնութեամբս միացեալ՝ ունելով զսպիս քեւեռացն եւ զխոցումն տիգին, զոր ի հանդերձեալսն ծանեաք նոյն կերպիւ գոլով, զի տեսցեն, զոր խոցեցին, ընդ որ մարգարէին հիացեալ ասէ. «Ջինչ է այդ վէրք ի ձեռս քո»[35]: Լուեալ զայս՝ Սուրբ Հոգին ասէ ի դիմաց Քրիստոսի. «Զոր վիրաւորեցայ ի տան սիրելոյ իմոյ»[36]: Վասն այնորիկ վերին դասքն սրոբէիցն եւ այլն ամենայն զարմացեալ հայէին տեսանելով զադամային մարմինն երկնագնաց եղեալ՝ անգիտացան զտնաւրէնութեան խորհուրդն սքանչացեալք, քանզի անհաս մտաց էր Բանն, զի[37] ծնծկեաց Որդին Աստուծոյ զստորեւ ճանապարհն եւ ոչ զեկոյց հրշտակաց, զի խայտառակեսցէ զբանսարկուն ի ծածուկ, զի ոչ էր ժամանակ պատուոյ, այլ անարգութեան, զի մի ուսցին սպասաւորք նորա, զի զառ ի ստորինս զիջանելն ոչ գիտացին: Վասն այսորիկ զաստուստ ճանապարհն ի վեր ելանելն զարմանային, զի զսքանչելին,

որ եւ զարմանալի էր, ընդ սոսկալի իրս արտաքոյ բնութեան տեսանէին, զի մարմնով անդրաքայլէր ճոխութեամբ:

A թ. 230բ:
B թ. 213բ:

ԺԳ

Ապա զիա՞րդ ասէ Եսայի. «Տեսաք մեք զնա, եւ ոչ գոյր նորա տեսիլ եւ ոչ գեղեցկութիւն եւ ոչ փառք»[38], զի կամաւ կրեաց զապտակն, զամաւթն, զքաղցն, զծարաւն՝ միացեալ Աստուածութեամբն, զզրպարտութիւն, զհալածանս երբեմն ի Հրէաստան եւ երբեմն՝ ի Գալիլիա. մնաց ի չարչարանս անչարչարելի, ի թշնամանս՝ առանց թշնամաց, ի քաղցն ամենեցուն կերակրիչն, ի հալածանս փրկիչն[39] բոլորից, զի առեալ ի մէնջ զփշեղէն պսակն եղ ի գլուխ հաւատացելոց՝ պսակ լուսափայլ կազմեալ ձեռացն Աստուծոյ եւ յարուցեալ էր, եւ եցոյց Աստուածութիւն Իւր մարդկան եւ հրշտակաց, եւ յարութեան Իւր Ինքն եղեւ վկայ, զի սքանչելիք ի սքանչելիս խառնէին ծննդեամբն, այլ նորահրաշ եւ մեծ քան զծնունդն յարութեամբն եւ համբարձմամբն, որ Ինքն զԻնքն յարոյց, քանզի ասէր. «Քակեցէք զտաճարս զայս եւ ես երեքաւուրեա յարուցից զսա»[40]: Վկայէ մարգարէն. «Յաւուրն երրորդի յարիցուք եւ կացցուք առաջի նորա, եւ ինքն ելանէր եւ նաժիշտք իւր»[41], եւ ամենայն ձաղանաւք Աղամ զփառս ժառանգեաց:

A թ. 231աբ:
B թ. 213բ-214ա:

ԺԴ

Ո՜վ գեղեցիկ տիրական բանիւն, ո՜վ ճշմարտութիւն, որ Աստուծոյ միայն[42] վայելուչ գոլով զգործն ասէ, իսկ զպատիւն լռէ, քանզի ոչ ասաց թէ՝ Տէր եմ[43] ձեր, այլ ի գործոյն կամեցաւ զԻնքն ծանուցանել: «Վասն է՞ր կարմիր են ձորձք քո եւ հանդերձք քո որպէս հնձանահարի կոխելոյ»[44]: Կրկին է մարգարէութեան բանն. ոչ արիւն միայն եւ ոչ գինի սուրբ, այլ ի մէջ երկուցն յորդորէր զմարգարէն հարցանել, զի հնձանահարաց ձեւով զուրախութիւն գործոյն նշանակէր. արեան գունով երեւէր Քրիստոս նոցա, որպէս հայրապետն Յակոբ ասէր մարգարէական հոգով. «Լուացէ ի գինի զձորձս իւր եւ յարիւն խաղողոյ՝ զպատմուճանն իւր»[45]: Ասէ այնպիսի իմն երեւէր, թէ զբազումս կոտորել ելանէ յԵդովմայ, քանզի Եդովմ ի Բեդլահեմայ կոյսն կայ, քանզի հասեալ էր ի վերայ Եդովմայ աւր հատուցման Աստուծոյ, որում Տէր պատասխանի առնէ նոցա:

«Հնձան հարի»[46]. Այլ սքանչելի խորհուրդ եւ քննութեան մտաց զարմանալի, զի Տէր մեր զմարմին Իւր հնձան արար եւ զամենայն պտուղս մեղացն Ադամայ եւ իւրայոցն, հեշտութիւնք Տէր մեր ժողովեաց ի մի մարմին Իւր եւ ել ի նմա ի վերայ Խաչին, եւ «հնձան էհար» կոխեաց եւ ճնշեաց զմեղս մարդկան, ըստ առաքելոյ՝ «Խայտառակեաց զիշխանութիւնս»[47] եւ վասն մեր մեղք եւ անէծք ասացաւ, զի զերկնաւոր Հաւրն աւրհնութիւն հաստատեսցէ ի մեզ:

A թ. 231բ-232ա:
B թ. 214աբ:

ԺԵ

Քանզի ոչ Եսաես են այսոքիկ, այլ՝ Հոգւոյն Սրբոյ, որ ի նմա խաւսէր, գիտաց յառաջ Հոգւովն Սրբով, որ ի Քրիստոս կատարելոց էր, մարգարէութեամբ բանիւն պատշաճեաց վասն մարդկապէս կերպին տարակուսեալք[48], վասն զի ոչ գիտէին նոքա զոք մարմնով «թագաւոր փառաց», որ այնպիսի բուռն զաւրութեամբ մտանէր յերկինս: Բայց երկու պատճառք են անգիտանալոյ վերին Զաւրութեանց եւ Պետութեանց, մի զի յԱթոռ փառաց Հաւր տեսանէին, թէպէտ եւ յորովայն Կուսին լիով յերկրի բաւընդակ յերկինս: Եւ միւս եւս. զի յառաջին ձեռն հրշտակաց լինէր երեւումն կամ ազդումն[39] ինչ յԱստուծոյ առ մարդիկ՝ կամեցաւ Աստուած, որ մեք ոչ վերջանայաք ի հրշտակաց,

ծածկեաց զտնաւրէնութիւն ի նոցանէ, [զի] զայս զանճառելի զխորհուրդս ի մարդկանէ ուսցին:

A թ. 232ա:
B թ. 214բ:

ԺԶ

Քանզի Ինքն՝ Յիսուս իշխանութեամբ գնայր ի յերկինս յառաջանալով ի գերակայ բնակութիւն յանմտանելիս: Եւ նոքա տեսանէին իբրեւ զանմարմինն ի վերինն թեւակոխելով, վասն այնր սքանչանային, քանզի գիտէին նոքա, եթէ մարմինք վայրաբերք են բնութեամբ եւ ծանուցք:

A թ. 232բ:
B թ. 215ա:

ԺԷ

Եւ նստաւ ընդ աջմէ Հաւր ի բարձունս յԻւր սեփական Աթոռն, որ ոչ բնաւ էմուտ արարածական բնութիւն, որպէս ասէ Աստուածաբան, «Ուր Սուրբ Երրորդութիւն միայնակ ի Սրբութիւն Սրբութեան շրջի»[50]:

ԺԸ

Այլազգ հրէիցն երեւեցաւ եւ առաքելոցն եւ այլ՝ մարգարէիցն եւ այլազգ՝ կողոպեանցն եւ այլ յակոբեանցն ի լերինն Թափոր, եւ այլ՝ պետրոսեանցն, որ ասէր Յովհաննէս. «Տէր է այն», այլազգ՝ Թովմայի եւ այլ՝ յառաջագոյն Մարիամու, եւ այլազգ՝ յետ յարութեան, յորմէ թէ պարտիզպանն կարծեր, եւ մերթ Բաբունի կոչէր, եւ այլազգ՝ հրշտակաց: Որպէս Հայր Նորա, զի մերթ հրով երեւէր եւ մերթ իբրեւ զծեր հինաւուրցն, ըստ պատշաճ իրացն, որ առաջի կային եւ ոչ եթէ զբնութիւն փոխէին, քաւ լիցի: Նոյնպէս եւ Որդի ըստ պատշաճի տեսողացն փոխէ զկերպարանս եթէ այժմ ոք ցանկայ տեսանել զՔրիստոս, եւ ցաւագին է, որ ոչ էտես զՆա. վարս ուղիղս ցուցուք[51]. եւ հաւաստեաւ տեսանիցեմք զՆա, քանզի հանդերձ փառաւք գայ եւ մեծասքանչ զաւրութեամբ:

A թ. 233ա:
B թ. 215բ:

Ծ ա ն ո թ ա գ ր ու թ յ ու ն ն ե ր

1 Տե՛ս Ստեփաննոս Սիւնեցի, Մեկնութիւն Ծորից Աւետարանչաց, աշխ. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի, Երեւան, 1994: Նաև Վիգեն սրկ. Ղազարյանի կատարած աշխարհաբար թարգմանությունը (Ս. Էջմիածին, 1998): Ձեռագրերում առանձին ընդօրինակությամբ հանդիպում են նաև Քառավետարանի մեկնության մաս կազմող Ղուկասու և Հովհաննու մեկնությունները (տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. 5551, 1349, 1350, 2520, 9372):
2 Տե՛ս Եզնիկ բհ. Պետրոսյան, Երկու խոսք Սարգիս վրդ. Կունդի «Մեկնութիւն Ղուկասու» աշխատության մասին, «Էջմիածին», 1982, Ը-Թ, էջ 47:
3 Տե՛ս Փ.Ալթաբյան, «Տոնապատճառ» ժողովածուն, «Բանբեր Մատենադարանի», 10, էջ 121:
4 Տե՛ս Զաքարիա Կաթողիկոս Ջագեցի, Ճառք, աշխ. Հ. Պօղոս Անանեան, Վենետիկ, 1995, էջ 398 տող 339, էջ 399 տող 467:
5 Անդ, էջ 339 տ. 467 – էջ 400 տ. 505:
6 Անդ, էջ 402 տ. 533 – 546:
7 Անդ, էջ 403 տ. 567 – էջ 404 տ. 597:
8 Անդ, էջ 404 տ. 597 – էջ 408 տ. 687:
9 Տե՛ս Երանելւոյն Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վենետիկ, 1880, էջ 465:
10 Տե՛ս Աւետարանագիրն Մատթէոս, Գիրք երրորդ. թերի, Վենետիկ, 1826, էջ 141-142:
11 Սյունեցի, էջ 87. «...զի Պետրոս եւ Յակովբոս եւ Յովհաննէս արհամարհէին զերեւելիսս, անցեալ զաշխարհաւս ընդ Քրիստոսի ելանէին ի լեառն եւ հրաշափառագոյն եւ պատուականագոյն տեսանէին զԲանն»:
12 Հռոմ. ե 14:

13 Մարկ. ԺԳ 32:
14 Մատթ. ԺԷ 2, Մարկ. Թ 1, Ղուկ. Թ 29:
15 Ա Մուսիսի (այսպես և այլուր):
16 Ա անկամ:
17 Բ Եւ Քրիստոս այսպէս երոյց զաւրինակ գալստեանն փխ. Քրիստոս ասաց:
18 Մատթ. ԺԷ 2:
19 Սյունեցի, էջ 87. «Հանդերձն նշանակէ զաւետարանական եւ զառաքելական գիրսն աստուածաբանաւորին եւ մեկնողին զմիտս բառից նոցայ»:
20 Տե՛ս Գ Թագ. ԺԹ 11-12:
21 Բ երկու որք են:
22 Ղուկ. Թ 31:
23 Ա յայտ:
24 Ա յարութիւն:
25 Բ ի յերկինս վեր փխ. յերկինս... վեր:
26 Ա ամբն:
27 Եսայի Բ 2:
28 Ա Սինիայ:
29 Ա չիք ոչ պէտս ունելով... բացայայտէր:
30 Մատթ. ԻԸ 20:
31 Սյունեցի, էջ 110. «Եւ ահա ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի լրումն աշխարհի. Եւ երբ եղեւ ընդ առաքեալսն մինչեւ ի վախճան աշխարհի, զի անդէն վախճանեցաւ ամենեքեան: ԵՒս այս ասելի է. ոչ յանձինս առաքելոցն ասացեալ միայն, այլ եւ առ ամենայն բրիստոնեայս աշակերտեալս նոցայ:
32 Համմտ. Եփես. Գ 17:
33 Գործք. ԻԳ 11:
34 Յովհ. ԺՉ 20:
35 Զաքարիա ԺԳ 6:
36 Անդ:
37 Բ քան զի:
38 Եսայի ԾԳ 2:
39 Ա փրկչին:
40 Յովհ. Բ 19:
41 Նաւում Բ 7:
42 Բ միանայ:
43 Ա ես:
44 Եսայի ԿԳ 2:
45 Ծննդ. Խթ 11:
46 Եսայի ԿԳ 3:
47 Կողոս. Բ 15:
48 Ա տարակուսեալ:
49 Ա ասդումն:
50 Վկայությունը, որ մասն է Ս. Գրիգոր Աստուածաբանի «Խաղաղական» ճառաշարի «Արձակէ ինձ լեզու» ճառի, բերված է նաև «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ այլոց վարդապետաց՝ ի խորհուրդ եկեղեցւոյ» միավորում. ՄՄ, ձեռ. 2042, թ. 315բ-321ա:
51 Բ մեծահրաշ:

Майя Рапава
(Тбилиси)

ПОЛЕМИЧЕСКИЕ СОЧИНЕНИЯ ИЗ „ДОГМАТИКОНА„ АРСЕНА ИКАЛТОЕЛИ ОТНОСИТЕЛЬНО ОБРЯДОВОЙ ПРАКТИКИ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ

В религиозной жизни Грузии XI-XII вв. наряду с толерантностью царей-правителей активизируется разного характера полемика в защиту православных догматов и церковных обрядов. Помимо того, что эта полемика отражала существующие в Византии идеологические направления, она впитывала и специфические особенности, обусловленные интересами национальной грузинской церкви.

Основным показателем усиления интереса к догматико-полемическим сочинениям в эту эпоху является появление такого значительного и весьма популярного в последующих веках сборника, каким является "Догматикон". Составителем его и переводчиком входящих в него сочинений является известный писатель и теолог конца XI в. основатель Икалтойской академии, наставник царя Давида Строителя, Арсен Икалтоели.

Наряду с полемическими сочинениями, направленными против ислама и иудаизма, немалое место в "Догматиконе" занимают сочинения антимонофизитского характера, в частности армянского монофизитства.

Таких сочинений в "Догматиконе" – 8. Среди них выделяются 5 сочинений, которые, несмотря на различные названия, объединяет то, что все они являются переводами одного и того же греческого текста, известного в византийской литературе как Трактаты Исаака армянского католикоса.

В обширной научной литературе, созданной вокруг этих трактатов, до конца не установлено ни время их создания, ни имя реального автора[1], вследствие чего их принято называть *Псевдо-Исаакиевыми трактатами:* Oratio I, Oratio II, Oratio III. По словам И.Троицкого, эти трактаты в последующих веках испытали разного рода переработки: отдельные их части оформились в самостоятельные произведения[2].

Аналогичная картина наблюдается в "Догматиконе": 5 произведений, с различными заглавиями, являются составными частями этих трактатов. Нигде в грузинских переводах не упоминается имя Исаака католикоса Армении. Арсеном Икалтоели переведены все три трактата: некоторые – полностью, некоторые – фрагментарно.

1. Первое произведение, связанное с трактатами Псевдо-Исаака, называется в грузинском переводе "Тридцать глав ереси Армян".

Текст грузинского перевода издан З.Алексидзе[3]. Издателем высказана мысль, что грузинский текст, возможно, переведен с сочиненного в VIII в. на греческом языке антимонофизитского трактата. И действительно, как выяснилось[4], оригиналом для грузинского текста послужил II трактат Λόγος στηλιτευτικὸς τοῦ Ἰσαὰκ περὶ τῶν κακοδόξων Ἀρμενίων καὶ αἱρετικῶν.[5] Грузинский текст характеризуется значительными особенностями по сравнению с греческим оригиналом:

1. Различно заглавие текста.

2. В грузинском тексте отсутствует то обширное предисловие, которое имеется в греческом оригинале под названием: "Ответное слово к Армянам".

3. Греческий текст более пространен, чем грузинский.

Опираясь на эти особенности, можно заключить, что перевод сделан намного позже оригинала. Что это за особенности?

В греческом оригинале имеется некоторое несоответствие при указании дат праздников армянской церкви: Благовещение – 5 января (§ 11), другое Благовещение, "которое является большой ересью" – 9 января (§ 13), и Крещение – 12 января (§ 14).

В грузинском переводе (§ 9-14) повторяются эти даты, но в § 13, в отличие от греческого, названы другие даты: Благовещение – 6 апреля, 6 января вечером – Рождество, а утром – Крещение.

Эти последние соответствуют принятым в армянской церкви датам господних праздников. Исправление дат грузинским переводчиком в соответствии с обрядовой практикой армянской церкви, по нашему мнению, было возможно в XI-XII вв., когда армянская церковь начала активно защищать установленные ею даты. Имеющаяся же в греческом тексте картина является отзвуком той эпохи, когда обвинения относительно празднования дат господних праздников еще не были четко сформулированы.

В греческом тексте говорится, что армянская церковь отступила от 4-х апостольских церквей. В грузинском переводе, в отличие от греческого, названо 5 церквей. Это разногласие, очевидно, вызвано тем, что греческий оригинал армянскую церковь считает яковитской и этим самым причисляет ее к антиохийской церкви. В грузинском же переводе отображено более позднее положение (после XI в.), когда выяснилось, что армянская церковь не является яковитской, не относится к антиохийской церкви. Поэтому ей ставят в упрек отступление от 5-ти патриарших церквей.

Грузинский перевод по своим данным отображает конфессиональную ситуацию, существующую в армянской церковной практике в XI-XII вв., греческий же оригинал близок к VIII в. Изучение грузинского перевода и сопоставление его с греческим оригиналом имеет важное значение и для изучения армянского перевода данного произведения, в частности же для определения его архетипа, а также датировки.

2. "Толкование ересей Армян и их анафемствования"[6].

Л.Меликсет-Беком высказана мысль, что "Толкование ересей Армян..." переведено с I трактата Псевдо-Исаака. В действительности, выяснилось, что оно является компиляцией из всех трех трактатов: I часть (11 пунктов) взяты из I трактата, II часть (20 пунктов) является переводом II трактата, точнее, они взяты из "30 глав ереси Армян", переведенных, как было сказано выше, Арсеном Икалтоели, III часть насчитывает 6 пунктов и последняя – 5 пунктов. Источники этих последних частей не установлены.

Интересно, что в этих пунктах Армянам ставится в упрек следование некоторым мусульманским традициям. Подобные обвинения православие могло предъявить армянской церкви после разрыва с ней, т.е. после Маназкертского собора (726 г.), когда в политической жизни страны наметилась мусульманская ориентация вплоть до той поры, когда стало очевидным подобие обрядовой практики армянской церкви с практикой западной церкви. Это имело место в XI в. С XI в. восточное православие обвиняет Армян уже за близость с Латинами.

В нашем же тексте нет никакого упоминания об общности с Латинами, что дает повод думать, что источник, которым пользуется компилятор в III части, отображает идеологическую картину VIII-IX вв.

Учитывая вышесказанное, можно заключить, что "Толкование ересей Армян..." представляет компилятивное сочинение, созданное в более поздний период на основании ранних переводов А.Икалтоели и позднейшей вставки.

3. Третье произведение из "Догматикона" – "Анафемствования яковитов и всех исповедующих одну природу, к которым причисляются и Армяне" – представляет чин и порядок принятия еретиков в православную церковь. Оно делится на две части: 1. Описание ритуала: какие ступени должен пройти принимающий православие и, 2. Анафемствования. Произведение целиком аналогично тем произведениям из того же "Догматикона", которые касаются крещения Иудеев и Сарацинов. Разница в них лишь в том, что в нашем тексте в конце имеются анафемствования.

Известно несколько чинов принятия монофизитов в халкедонство[7]. Они заключают в себе несколько пунктов, обличающих их обряды. Число их менялось в соответствии с теми интересами, которые представлялись для православной церкви более или менее актуальными в ту или иную эпоху.

Наш текст по содержанию, в одной части, совпадает с III трактатом Псевдо-Исаака (Ἀπόταξις τῶν αἱρετικῶν Ἀρμενίων)[8].

Как выясняется, все имеющиеся в сборнике правила обращения в православие являются редакцией одного и того же оригинала. Этот оригинал, на наш взгляд, нужно искать в греческих евхологионах. Один такой евхологион сохранен в синайской рукописи XV в. N 980[9]. Интересующий нас текст ритуала является редакцией этого греческого евхологиона. Для перевода характерны некоторые особенности:

1. Во-первых, грузинский перевод не имеет канонизированного предисловия, наблюдающегося во всех знакомых нам чинах обращения, с требованием соблюдать пост, совершать молитвы, петь псалмы и т. д.

2. Заглавие сочинения в переводе: "Анафемствования яковитов и всех исповедующих одну природу" в греческом же евхологионе: "Чин правила для тех, кто от ереси обращаются".

3. Грузинские рукописи, содержащие текст "Анафемствований", выявляют две редакции: пространную, где налицо текст ритуала вместе с анафемами (рукописи раннего периода) и краткую, без текста ритуала (более поздние рукописи). Аналогичная картина засвидетельствована А.Дмитриевским в славянских рукописях[10]. Это положение дает право заключить, что разные редакции настоящего сочинения существовали в самой греческой традиции.

Грузинский перевод, выполненный Арсеном Икалтоели, будучи компиляцией, имеет два источника: III трактат Псевдо-Исаака и неизвестный нам евхологион.

Учитывая некоторые данные текста, можно утверждать, что сочинение написано в IX-XI вв. Каковы эти данные?

1. В тексте особо выделяется вопрос почитания икон. Он повторяется в 3-х пунктах. Далее, из семи вселенских соборов названы только шестой (против монофизитов) и седьмой (против иконоборчества). Вышесказанное указывает на то, что текст создан в непосредственно следуюший за этими событиями период, т. е. в IX-X вв.

2. Сравнительно затушеваны обвинения, активно выдвигаемые против монофизитов в XI-XII веках: это вопрос азимов и разбавления вина водой.

3. В грузинском переводе не упомянут пост Араджавор. Обвинение против соблюдения этого поста активно выдвигалось в разных сочинениях XI-XII вв. Л. Меликсет-Бек высказывает мысль, что пост Араджавор в ранний период в православных кругах не воспринимался как еретический. Он лишь позднее обрел характер памфлета[11].

Думаем, что текст "Анафемствований", не упоминая об Араджаворе, отображает положение раннего периода. По всей видимости, он создан до XI в. Границы создания нашего памятника умещаются в рамках IX-XI вв.

4. Максим к Армянам.

В одной из рукописей "Догматикона" – S-312 (XVI в.) значится краткое сочинение "Максим к Армянам", за ним следует другой текст без заглавия, имеется лишь надпись: "Его же".

Эти краткие тексты являются фрагментами, взятыми из I трактата Псевдо-Исаака[12]. По языково-лексическим данным переводы этих фрагментов представляют продукт более позднего времени, чем создание "Догматикона". Теологические термины "шеуцкобели" (несмешанное) и "танамоарсе" (сосуществующее) чужды литературе XI-XII вв. Неудивительно, что эти фрагменты встречаются лишь в позднем списке "Догматикона".

Из всего вышесказанного становится ясным, насколько широкий отклик получили Псевдо-Исаакиевские полемические трактаты в Грузии XI-XII вв. Они отражают дух полемики и дискуссии вокруг монофизитского вероисповедания. Помимо этого, они содержат весьма ценные сведения для изучения истории обрядовой практики армянской церкви довольно длительного периода, с VIII по XII век.

Примечания

1 См. **Л.М.Меликсет-Бек,** К вопросу о датировке Псевдо-Исааковых памфлетов в греко-византийской литературе, "Византийский Временник", т.VIII, 1956, с. 208-222.
2 См. **И.Троицкий,** Изложение веры армянской церкви, СПб, 1875, с. 248.
3 См. **З.Алексидзе**, Антимонофизитский трактат из "Догматикона" Арсена Вачесдзе и его отклик в древнеармянской литературе, "Мравалтави", 1, Тбилиси, 1971, с.133-158 (на груз. яз.).
4 См. **G.Garitte**, La Source Grecque de "Trente Articlee", Géorgiens centre les Arméniens, «Հանդէս ամսօրեայ», 1976, էջ 111-116:
5 **J.-P. Migne**, Patrologia Corsus Completus, Series graeca (MPG), 1732, col. 1217-1238.
6 Рукописи: S-312, 1387, 3727, 4614; Кут. 345, 410; А-1132.
7 См. **И.Троицкий,** ук. соч., с. 241-244.
8 MPG, 132, col. 1237-1266.
9 См. **А.Дмитриевский,** Описание литургических рукописей, хранящихся в библиотеках православного востока, ч. 11, Εὐχολόγια, Киев, 1901.
10 **Его же**, Богослужение в русской церкви в XVI в., ч. 1, с. 54-60.
11 **Л.Меликсет-Беков,** Грузинский извод сказания о посте "Араджавор", "Христианский Восток", 1916, т.V, вып. 2, с. 104-105.
12 MPG, 132, col. 1156-1165.

Лусик Степанян

АГИОГРАФИЧЕСКИЙ ПАМЯТНИК "ИСТОРИЯ РИПСИМЯНСКИХ СВЯТЫХ"

"История Рипсимянских святых"[1] (далее – ИРС) повествует о событиях, предваряющих крещение армян Григорием Просветителем. Она примыкает к группе памятников, посвященных путям проникновения христианства в догригорианскую Армению, таким, как "Сказание об Успении Богородицы", "Сказание о святом Фаддее", "Мученичество Воскянов" и т.д. К сожалению, многие памятники армянской агиографии, и в том числе ИРС, не стали еще предметом специального исследования в общей системе литературы, работа же по источниковедческому исследованию, фактически, велась при отсутствии критических текстов[2].

Вопрос об авторстве ИРС затрагивался чаще косвенно, в связи с датировкой и атрибуированием "Ответа на послание Саака"[3], приписываемого Мовсесу Хоренаци.

Ряд признаков, наводивших на мысль об авторстве Мовсеса Хоренаци (и это, кстати, выделяет ИРС среди ранних агиографических текстов, обычно анонимных), уже отмечался исследователями. Наиболее определенной представлялась связь ИРС с "Историей Армении" Хоренаци. Это зафиксировали уже те, кто вписывал его имя в заглавие рукописей. В тексте о Рипсимянских святых наблюдается ряд пассажей, отличающихся большей или меньшей близостью к "Истории", повествование несет на себе следы отработанной в "Истории" Хоренаци методики "отбора и организации материала", усвоенной автором ИРС, последовательное использование приемов историка.

Мы постарались выделить текстуальные, методические, сюжетные совпадения и расхождения между ИРС и рядом источников, и на этой основе определить место данного памятника в раннесредневековой армянской агиографии. Автор ИРС, стоящий, очевидно, у истоков жанра, во многом следует канонам, выработанным греческой и сирийской агиографической традицией. Однако, несмотря на многие необходимые для произведения агиографического плана детали (благородное происхождение, видения, борьба с идолами, исцеление больных и т.д.), текст ИРС все-таки нельзя назвать образчиком данного жанра; скорее его можно определить как агиографический сюжет, изложенный историографическим методом. Автор проявляет интерес к рассказу о жизни святых не столько как к идеальному образу подвижника, сколько как к историческому лицу, действующему в реальном пространстве. Он упоминает о своих литературных предшественниках – сочинениях греков из Аттики (бывших для Хоренаци "предметом исключительного поклонения"), труд неизвестного по иным источникам автора – Давида Римлянина и источниках, упущенных Агафангелом. Примечательно, что автор называет весьма неопределенные тексты, между тем, как в ИРС просматриваются аналогии с иными сочинениями, неназванными автором.

Рипсимэ и ее сподвижники – действующие лица некоторых эпизодов "Истории Армении" Мовсеса Хоренаци. Историк не представляет героинь, а упоминает об их

деяниях в связи с конкретными событиями[4], так как они, очевидно, известны по другим, устным и письменным источникам.

Хоренаци, в частности, называет Агафангела: сообщая аналогичные сведения, подтверждает их ссылкой на него (II, 80,83,86), констатируя краткость предшественника; при необходимости дополняет его (II, 74,79); прибегает к заимствованиям из Агафангела.

Автор ИРС придерживается предложенной Мовсесом Хоренаци модели: обещает дополнить сюжет за счет упущенных Агафангелом источников; сообщив необходимые для своего повествования сведения, о дальнейшей судьбе героев предлагает прочитать у Агафангела, заимствуя предложенный Мовсесом Хоренаци способ цитирования последнего. А кроме того, в ИРС обнаруживаются перифразы, реминисценции и узнаваемые цитаты из "Истории" Агафангела, без ссылки на источник, также как в "Истории" Хоренаци используется лексика Агафангела. Однако, повествуя об одних и тех же героях (Рипсимянские святые, Григорий Просветитель), Хоренаци и Агафангел обнаруживают различный подход к событиям и обстоятельствам утверждения христианства в Армении. Дошедшая до нас редакция Агафангела называет первым и единственным просветителем Армении Григория, подчеркивая малоазийский путь проникновения христианства в Армению[5], тогда как Хоренаци говорит о взаимодействии предшествующего сирийского или эдесского христианства с малоазийским, кесарийским[6]. Он замечает, что Григорий взошел на престол апостола Фаддея (II, 91)[7]. Слияние двух преданий отражено в легенде о зачатии Григория у могилы Фаддея (II, 74), завершившего "недоконченную апостолом духовную работу"[8]. Историк, признавая первичность эдесского влияния, органично сводит его с греческим, подчеркивая их преемственность и взаимопроникновение.

Автор ИРС сторонник той же точки зрения, которая обретает в его повествовании не меньшую определенность. Различая эти два пути распространения христианства, он соединяет их в деятельности своих героев. Завязка сюжета в ИРС об известных ромейских мученицах происходит на сирийской основе: герои отправляются в край, доставшийся для миссионерства Фаддею, искать занесенный туда образ Божьей Матери. Добравшись до Эдессы, они поклонились там образу Христа, присланному им Авгару, часть беглецов остается в церкви, построенной Авгаром, остальные же прибывают в Дараналию (Бузанд говорит о принадлежности Дараналии дому Просветителя)[9], а затем сразу оказываются в гаваре Бзнуник, и далее скитаются по югу Армении, по областям, как известно, воспринявшим первую волну миссионеров из Сирии, занесших туда христианство, которое, разумеется, не пустило там сразу корней, но насажденные очажки укреплялись в дальнейшем периодическим проповедничеством. Очевидно, такие малочисленные общины, подобные той, где хранился святой образ, встречают Рипсимянские святые в горах Кангуара в гаваре Мокк, в местечке Сурб Тикин и т.д. Автор ИРС определенно свидетельствует, что в Армении была жива память о первом сирийском христианстве, которое ромейские беглецы обновили, а Григорий, пришедший в некоторые пункты третьим – после сирийских миссионеров и Рипсимянских святых, утвердил.

Ряд сюжетных и лексических совпадений связывает ИРС с "Ответом на послание Сааку". В тексте "Ответа", однако, обнаруживаются анахронизмы, а также цитаты из переводов Евангелия Никодима и Псевдо-Дионисия, осуществленного в 712 г., что передвигает границы датировки также и ИРС, хотя цитаты такого порядка в текст ИРС не перешли. Общие для обоих текстов эпизоды (описание местности, где

хранился образ, эпизод с целебными водами и т.д.) можно рассматривать как заимствования из "Ответа на послание Сааку", другие же (борьба с идолами, упоминание о прокаженных) позволяют предположить, скажем, и наличие некоего связующего источника. Отголоски распространенных в Васпуракане преданий, где образ был особенно почитаем, проникая в произведения с аналогичной тематикой, обрастали затем самостоятельным сюжетом. Среди народов восточнохристианского круга был широко известен цикл легенд, связанных с именем эдесского царя Авгара, композиционно оформившийся в сирийский памятник, известный под названием "Учение Аддая", приписываемый Лабубне. "История Армении" Мовсеса Хоренаци – одно из немногих произведений, сохранивших ряд сюжетов, входивших в него легенд[10]. Частью "Учения"[11], вошедшей в памятник вскоре после создания, является "Легенда о Протонике", жене императора Клавдия, нашедшей в Иерусалиме животворящий крест, о которой упоминает автор ИРС.

Широко известный сюжет об обретении крестного древа был распространен и положен в основу нескольких произведений на эту тему. Первоначальная форма легенды – греческое предание об обретении креста – связывается с именем Елены, матери императора Константина, на основе которой позже на сирийской почве была создана легенда о вымышленной героине Протоникэ,[12] действие же было перенесено в I век; в результате хронологических перестановок, сходства характеристик действующих лиц в едином образе контаминировались черты двух героинь – Елены, матери Константина и Елены Адиабенской, современницы Клавдия, оставившей по себе добрую память в Иерусалиме, о чем пишет Иосиф Флавий[13].

Мовсесу Хоренаци была, вероятно, известна "Легенда о Протоникэ". Г.Мелконян уточняет, что историк знал и использовал именно армянскую версию "Учения Аддая"[14], по мнению Н.В.Пигулевской в армянский мир "Легенда о Протоникэ" вошла в составе этого сюжета"[15]. Однако сюжет и данные сказания об обретении креста оказываются за пределами интересов Хоренаци. Например, жену Авгара он называет Еленой (II, 35), а не Шхамат или Шалмат[16], как в "Легенде о Протоникэ", и сообщение о путешествии Елены в Иерусалим делает под влиянием Иосифа Флавия, описавшего благодеяния Елены Адиабенской в Святом граде (41-44 гг.). Очевидно, Хоренаци отклоняет "Легенду о Протоникэ" как источник и обращается к данным Лабубны в том случае, если они подтверждаются другими авторами, тогда как сведения, изложенные в "Легенде о Протоникэ", расходятся с известными ему фактами.

ИРС же упоминает о Протоникэ (в армянском тексте Патроникэ) как о женщине из рода Августа, по чьей просьбе Иаков отъял часть от животворящего древа, помазанного Господней кровью, перешедшего по праву духовного и родового наследования к Гаянэ и затем к Рипсимэ. Эти данные почерпнуты не из текста легенды, а из предваряющего его комментария[17], который отсылает нас к толкователю речи о кресте, т.е. к Панегирику, приписываемому Давиду Анахту[18]. Однако, текст Панегирика, вошедший в издание 1932 г., приведенных данных не содержит, а кроме того, в литературном тексте легенды ничего не говорится о наделенном силой и благодатью разбойничьем кресте. Истоки этих эпизодов следует искать, очевидно, в местных обработках предания, развившихся на основе органично вошедшего в армянскую литературу и ставшего популярным памятника сирийской литературы.

В число известных автору ИРС и использованных им источников входит и "История Армении" Фавстоса Бузанда. Связывая легенду о потопе с горами Кордука, он вводит в повествование довольно дробную географическую номенклатуру –

упоминая гору Солоп в гаваре Беркри[19], ссылаясь на сирийцев называет ее Сарарадской[20], близ местечка Тымнис. Он отказывается от сказания о Ксисутре, предложенного Мовсесом Хоренаци, и его локализации принявшей ковчег вершины (I, 6), однако, объяснение термина Тымнис говорит об усвоенном автором ИРС из "Истории Армении" Хоренаци принципе этимологического анализа топонимов. С Кордуэной связывают историю Ноя Фавстос Бузанд, Себеос и Товма Арцруни. Топоним же Сарарад встречается еще только у Бузанда ("... в горы Армянские, к горе Сарарад, в пределах Айраратских владений, в области Кордук")[21] в главе об Иакове Нисибинском, по замечанию К.Патканова[22], заимствованной из сирийских житий. В ИРС о паломничестве Иакова на Святую гору напоминает также появление целебных источников – первого на месте стоянки беглецов и второго – в Айоц гаваре, а также уединение и отшельничество святых в Тморике, в местечке Сурб Тикин и т.д. Присутствие в этих местах людей, нуждающихся в священниках, приходящих к причастию, хранящих образ Девы говорит о существовании христианских общин, пусть даже небольших и гонимых.

С монастырями Бет-Кардо связаны сирийские предания – это легенды цикла Евгена (Авгина, Маруге армянских источников) "отца всех монахов востока", как называют его сирийцы; это предание о Мар-Шаллите – основателе обители в стране Кардо, "учитель Кордукской страны", говорит о нем Бузанд[23], сообщение о "Мар-Иоханне – основателе области Камульской", "там, где остановился ковчег [Ноя]", также относится к северным областям Бет-Кардо. Кроме сирийской версии локализации Ноевой горы, в ИРС отразились отголоски известных преданий, подтверждающих, что проникшее в эти области с юга миссионерство насаждало здесь не только учение новой веры, но и монашество.

ИРС и сама явилась источником для популярных преданий о кресте, святом образе, миссионерстве. Б.Саркисян приводит цитаты из текста "Разъяснения Симеона – святого и избранного архимандрита"[24] и полагает, что автор "Разъяснений" – проповедник и полемист Симеон Аршамаци (Бетаршамский), трижды – между 500-ым и 506-ым гг. посетивший Армению, современник католикоса Бабкена, отстаивавший в Персии сирийское монофизитство против несторианства, хотя этот тезис еще требует доказательств (возможно, речь идет о Симеоне из Санаина или Ахпата, работавшем в Васпуракане в начале XI в.). Однако бесспорно, что приведенные пассажи обнаруживают связь с ИРС (например упоминание Евзои, зафиксированное только в этих двух произведениях), как, впрочем, и определенные расхождения (священники Исайя и Даниил действуют в названных текстах в различных ситуациях и пунктах: в ИРС святые прячут крест в мирной обстановке, у Симеона им был голос о смерти Рипсимэ, и они спешат к "вратам царицыным" и т.д.).

Н.Акинян называет ИРС в числе прочих источников "Жития святой Нунэ и истории святого Креста" Псевдо-Епифания Кипрского[25]. Он же указывает, что первую часть "Жития Нунэ" в Четьих-Минеях Григора Хлатеци составляет повествование о путешествии Рипсимянских святых, довольно подробно сообщающее об их перемещениях из пункта в пункт[26]. Рассказ о деяниях святых из автографного Синаксаря Григора Хлатеци[27] также связан с ИРС, а также рядом других мученичеств и житий.

Таким образом, анализ текста позволяет определить общность ИРС с несколькими нарративными источниками, знакомство автора с раннехристианскими легендами, относящимися к разряду апокрифов, локальными устными преданиями. Автор, освещающий определенный этап в жизни святых, прибегает к пересказу и контаминации нескольких сюжетных ветвей – бегство от Диоклетиана, поиски образа и

сокрытие в горах святой реликвии – части от древа.

Сюжетные и художественные приемы автора отвечают сформировавшимся в сирийской и византийской и отчасти усвоенным армянской литературой нормам жанра. Кроме книжных цитат, кое-где придающих тексту компилятивный характер, эпистолярных и нормативных оборотов, также вошедших литературным путем, в нем встречаются живые психологические штрихи, текст изобилует топонимическими и топографическими данными. ИРС можно считать результатом скрещивания и адаптации, воплотившихся в литературной форме и устном творчестве представлений об обращении Армении в христианство, являющихся выражением определенной концепции. Автор разворачивает действие на юге и юго-востоке Армении, сберегающем воспоминания о начальном христианстве, предания которого несомненно тяготеют к эдесским, о местных культовых представлениях, мифах о всемирном потопе, сирийском монашестве и, приемля просветительство Григория, приветствует "свет взошедший для святой страны Армянской с запада"[28].

* * *

ИСТОРИЯ РИПСИМЯНСКИХ СВЯТЫХ[29]

Исследовав множество греческих книг и познав смысл речей, что далеки от вымысла и полны истин[30] я поведал тебе в этом сочинении о различных краях, странствиях и жизнеописании Рипсимянских святых, что не были описаны в многочисленных велеречивых историях, чему, я думаю, не воспротивится ни один разумный [человек], но постарается разрушить суть сего повествования лишь тот, кто довольствуется вымыслом[31]. Читая в бытность [свою] в Аттике поучительные речи мудрых эллинов, я множество раз наталкивался на стиль писаний, который подошел бы истории, слагаемой нами. Весьма подходящим для нас явилось [сочинение], именуемое Церковной историей Давида Римлянина[32], которое [я] хотел перевести, но не успел, отложил до другого случая, или [оставил] другому книжнику[33]. Я же смертный, старый, болезненный и согбенный, исполненный робости, не ангел[34] и не сын всевышнего, как гласит Божье слово[35], кое-что пересказал из тех сочинений, что опустил Агафангел, искусный хартуларий[36], который и не смог бы свести воедино все речения и деяния[37], оставив и другим тоже.

Итак, в этих самых сочинениях говорится, что святая происходила из того же царского рода, что и император Август[38], родоначальник царей. Из того же рода была и Гаянэ, дочь добродетельных и дивных родителей. Имея рвение к апостольскому чину, пишет он, они и обликом были подобны им, недревняя слава и дела коих пришли в забвение, став обыденными и заброшенными[39], как [и] в наше время слабеет богопочитание, смолкает святость и насаждается грех. А мужи, подобные апостолам имели рвение к благу, и жены бодрствовали, имея ревность к Божьей Матери, [как бы] уподобляясь Матери Христа, как сказал один из отцов[40]. Таковыми были и родители святой Рипсимэ, крестницы святой [девы] Гаянэ, [принявшей] ее от купели, игуменьи дев монашествующих в Риме, в монастыре святого апостола Павла, отличившем в сем месте блаженную [Гаянэ], что была достойна и обязана, приняв повеление апостола молиться, что восприняли за ней и другие, коих было три сотны человек[41], соблюдавших это повеление апостола. И являясь в сем месте блюстительницей, Гаянэ наставляет между целомудрствующими девами по подобию своему и [деву] Рипсимэ, плод молений своих, что достигла возмужания и, видя в ней величие духа, нарекает ее [слу-



Мученичество Рипсимянских дев (фреска), Ани, церковь Св.Григория Просветителя (Тиграна Оненица).



Царь Трдат, Св.Григорий Просветитель в патриаршем облачении и Св.Рипсимэ, Хоргувь Св.Григория Просветителя, 1448 г. (шитье N 115 Эчмиадзинского собрания).

